ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆՅԱՆ

Է

ԿՊԿՆՄՐՈՒՄԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԵՐԿԵՐ

Է

ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա 96000

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2010

ՀՏԴ 800
ԳՄԴ 80
Մ 243

Մանանդյան Հ. Հ.

Մ 243 Երկեր, հատոր Է., Քաղաքացիական ուսումնասիրություններ. Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը. - Եր.: Երևանի պետ. համալս. հրատ., 2010. - 580 էջ + 1 ներդիր:

Հակոբ Մանանդյանի երկերի յոթներորդ հատորն ընդգրկում է ականավոր հայագետի քաղաքացիությանը նվիրված ուսումնասիրությունները: Քաղաքացիական արժեք են ներկայացնում հունաբան դպրոցին և դրա առանձին ներկայացուցիչներին նվիրված աշխատությունները:

Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

ՀՏԴ 800
ԳՄԴ 80

ISBN 978-5-8084-1232-3

© Հովհաննիսյան Պ. Հ., 2010 թ.
© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Խմբագրական հանձնաժողով

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Պ. Հ., ՄԱԴՈՅԱՆ Ա. Գ.
ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա. Ա., ՍՏԵՓԱՆՅԱՆ Պ. Գ.

Հատորը հրատարակության պատրաստեց
Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Ակնառվոր պատմաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանի ծննդյան 100-ամյակի առթիվ (1973 թ.) Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտն ակադեմիայի նախագահության հանձնարարությամբ ձեռնամուխ եղավ նրա աշխատությունների ամբողջական հրատարակության նախապատրաստմանը՝ ութ հատորով:

Խմբագրական հանձնաժողովը (Լ. Հ. Բարայան, Ս. Տ. Երեմյան, Վ. Ա. Հակոբյան, Ռ. Ի. Մաթևոսյան և Գ. Խ. Սարգսյան) 1977-1985 թվականների ընթացքում լույս ընծայեց Հ. Հ. Մանանդյանի երկերը վեց հատորով: 1-3-րդ հատորներում (1977, 1978) լույս տեսան հայ ժողովրդի քաղաքական պատմությանը նվիրված Հ. Մանանդյանի կապիտալ ուսումնասիրությունները («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», «Տիգրան Բ և Հռոմ» և մի քանի մանր հետազոտություններ): 4-րդ հատորն (1981) ամփոփում էր Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի լուսաբանմանը նվիրված աշխատությունները, իսկ 5-րդը (1984)՝ Հայաստանի պատմական աշխարհագրությանն ու տեղագրության հարցերին վերաբերող ուսումնասիրությունները:

Լույս տեսած վերջին՝ 6-րդ հատորում (1985) զետեղվել են Հին և Միջնադարյան Հայաստանի քաղաքների ու առևտրի պատմությանը և չափագիտությանն ու կշիռներին նվիրված ուսումնասիրությունները:

Յավոք, տարբեր պատճառներով նախատեսված յոթերորդ և ութերորդ հատորները լույս չտեսան: Հայտնի չէ անգամ, թե խմբագրական հանձնաժողովն այդ ուղղությամբ որևէ աշխատանք ձեռնարկել էր, թե ոչ: Ընդհատված աշխատանքն ինչ-որ չափով ավարտին հասցնելու և Հ. Մանանդյանի բանասիրական երկերն ընթերցող հանրությանը ներկայացնելու աղնիվ մտահոգությամբ, Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության (Լիսաբոն) Հայկական բաժանմունքի տնօրեն, անվանի հայագետ դոկտոր Ջավեն Եկավյանը սիրահոժար նախաձեռնեց այս հատորի լույս ընծայումը:

Հ. Հ. Մանանդյանի երկերի առյժ յոթներորդ հատորն ամփոփում է հայագետի բանասիրական հիմնական ուսումնասիրությունները: Այս բնագավառին վերաբերող նրա առանձին աշխատություններ չպատճառաբանված տեղ են գտել երկերի նախորդ հատորներում և, բնականաբար, չեն գետնվելու այստեղ: Ձեռ գետնվելու նաև Հ. Մանանդյանի աշխատասիրած բնագրերի հրատարակությունները, ինչպես օրինակ՝ Արխատոտելի, Հերմես Եռամեծի, Թեոն Աղեքսանդրացու, Ջենոն Ստոիկի և այլոց: Գերմաներեն և ռուսերեն հրատարակված աշխատությունները տրվում են հայերեն թարգմանություններով: Աշխատությունների ռուսերեն ու գերմաներեն հեղինակային ամփոփումները կամ համառոտ բովանդակությունը դրանց են առնված: Հատորում գետնված նյութերը հրատարակվում են նույնությամբ՝ միայն անհրաժեշտ ուղղագրական և կետադրական միջամտություններով: Աշխատությունները դասակարգված են ըստ գրության ժամանակագրության:

Բանասիրության հարցերին նվիրված Հ. Հ. Մանանդյանի ուսումնասիրությունները գրվել են չատ վաղուց և հայագետը, բնականաբար, երբեմն տուրք է տվել իր օրերում տիրապետող տեսակետներին, մասնավորապես Մովսես Խորենացու ժամանակաշրջանի վերաբերյալ: Այնուհանդերձ, դրանք ունեն ճանաչողական մեծ արժեք և կարևոր ներդրումներ են հայագիտության բնագավառում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՎՍԵՍ ՈՒՏԵՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ)

Բազմաթիվ հայ պատմիչներ ու ժամանակագիրներ մինչ այժմ նվազ չափով են ընդունության ենթարկվել արևմտյան գիտնականների կողմից: Դեռևս կան մի ամբողջ շարք կարևոր երկասիրություններ, ինչպես օրինակ Սեբեոսինը[1], Մովսես Կաղանկատվացունը և այլն, որոնք թարգմանվել են միայն ռուսերեն, իսկ արևմտաևվրոպական որևէ լեզվով՝ ոչ: Չնայած հայ պատմագրական երկերի պերակչիո մեծամասնությունը վերաբերում է հայրենական պատմությանը, սակայն դրանց շարքում կան նաև այնպիսիները, որոնք մեծագույն կարևորություն ունեն նաև հարևան բարբարոս ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Առաջին հերթին դրանց թվին է պատկանում Մովսես Կաղանկատվացու «Աղվանից (Աղվանքի) աշխարհի պատմությունը»: Այդ որոշ առումներով արժեքավոր աշխատության անտեսումը կարելի է բացատրել նրանով, որ այն հրատարակվել է միայն 1860 թվականին: XIII դարի հայ ժամանակագիրների միջոցով էր հայտնի դարձել, որ Մովսես Կաղանկատվացին գրել է Աղվանքի պատմությունը: Զգալի ջանքեր են գործադրվել հայտնաբերելու այդ հեղինակի ձեռագրերը: Հայր Մ. Ջամչյանը[2], հայր Սուքիաս Սոմալը[3] և Կ. Ֆ. Նոյմանը[4] հիշատակում էին Մովսես Կաղանկատվացուն՝ առանց կարողանալու նրան ավելի հանգամանալից

[1] Սեբեոսի երկասիրության եղրափակիչ մասը (գլ. 30–38) գերմաներեն է թարգմանվել Հ. Հյուբշմանի կողմից (H. Hübschmann, Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber aus d. Armen. des Sebēos):

[2] **Մ. Ջամչեան**, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1784–1786, հատ. Բ, էջ 1046:

[3] «Quadro della storia letteraria di Armenia», Venezia, 1829, p. 44.

[4] «Versuch einer Geschichte der armenischen Literatur», Leipzig, 1836, p. 103–104.



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

անդրադառնալ, քանի որ հեղինակի ձեռագրերն այն ժամանակ դեռ անհայտ էին: Դրանցից հնագույնը ներում է 1289 թվականից և հայտնաբերվել է Էջմիածնի մատենադարանում: Այն բանից հետո, երբ Էջմիածնի դրադարանավարը՝ հայտնի եպիսկոպոս Հ. Շահխաթունյանը, մի պատճեն պատրաստեց փրանսիացի դիտնական Էժեն Բյուրնի համար, որի ուշադրությունը ձեռագիրը գրավել էր նրա հայաստանյան հնագիտարշավության ժամանակ. Մովսես Կաղանկատվացին մատչելի դարձավ նաև եվրոպական ուսումնասիրողներին: Դրանից հետո հայտնաբերվել են նաև Կաղանկատվացու այլ տարբեր ձեռագրեր, որոնք, սակայն, մինչև ավելի ուշ չէջանի թվագրության:

1847 թվականին «Journal l'Institut» ամսագրում (Sc. hist., № 136, Avril, 1847)[1] լույս տեսավ Մովսես Կաղանկատվացու վերաբերյալ Էժեն Բյուրնի հոդվածը հետևյալ վերնագրով՝ «Հատված Մովսես Կաղանկատվացու „Ազվանից պատմության„-ից, թարգմանված Մ. Էժեն Բյուրնի կողմից հայերեն ձեռագրից»: Այդ հոդվածը աշխարհագետ Վիվիեն դը Սեն-Մարտենի մի քանի ծանոթագրություններով վերահրատարակվեց «Nouvelles Annales des voyages»-ում (Վիվիեն դը Սեն-Մարտենի խմբագրությամբ, հատ. II, Փարիզ, 1848, էջ 53-93): Է. Բյուրնն իր հոդվածում քննադատում է Մովսես Խորենացուն «Ազվանք» անունը կամայականորեն հայերեն «ապու» (ջրաղբ, հաճելի) բառից ածանցելու պատճառով, և հենց ինքն էլ մի մանրամասն քննության մեջ այդ բառի նմանատիպ մի թյուր բացատրություն է տալիս՝ այն բխեցնելով ari արմատից[2]: Նա այնուհետև ներկայացնում է մի համառոտ ակնարկ և մի քանի քաղվածքներ «Ազվանից պատմությունից» ու իրավացիորեն ավելացնում, որ Մովսես Կաղանկատվացին ոչ թե պատմագիր է, այլ միայն ժամանակագիր կամ, ավելի ճիշտ ասած՝ մի բանաքաղ է: «Մովսես Կաղանկատվացուն պատմագիր կոչելը մեծ պատիվ

---

[1] Նույն հոդվածն իսկ նրևայթին հրատարակվել է նաև «Université catholique» ամսագրում (Համմ. «Beiträge zur armen. Literatur» von K. F. Neumann, München, 1849, p. 4):

[2] Ա. Ժ. Սեն-Մարտենը հայերեն «Ազվանք» անվանումը համարում է հին հունական և լատինական հեղինակների կողմից «Ալբանիա»-ի վերաբառգրությունն, տե՛ս «Mémoires histor. et géogr. sur l'Arménie», t. 1, Paris, 1818, p. 215:

կլիներ նրա համար: Նա եղել է պարզապես ժամանակագիր, իսկ նրա ավելի ստույգ անունը՝ բանաքաղ» («Nouv. Annales», T. II, p. 60): Է. Բորնն սխալվում է, սակայն, Մովսես Կաղանկատվացու ժամանակի որոշակման հարցում, քանզի նրան տեղադրում է VIII դարում առանց իր տեսակետը ինչ-որ կերպ հիմնավորելու (մաս II, էջ 61): Սակայն ինչպես մենք հաջորդիվ կապացուցենք, Բորնի ենթադրությունն ամբողջովին հակասում է փաստերին: Կ. Ֆ. Նոյմանի հետազոտությունն իր «Beiträge zur armenischen Literatur»-ում (München, 1849, p. 1-16) [«Մովսես Կաղանկատունի. Պատմություն Աղվանից»] իրենից այլ բան չի ներկայացնում, քան Բորնի հոդվածի վերարտադրությունը:

Այնուհետև, 1851 թվականին Մ. Բրոսսեն ծանոթագրություններով Մովսեսից մի քանի նոր քաղվածքներ հրատարակեց «Additions et éclaircissements à l'histoire de la Géorgie»-ում (St.-Pétersb., 1851, p. 468-494) հետևյալ վերնագրի ներքո. «Հայերեն հատվածներ Մովսես Կաղանկատվացու „Աղվանից պատմությունից„»-ից: Մ. Բրոսսեն մեր հեղինակին տեղադրում է X դարում այն հիմնավորմամբ, որ աղվանական պատմության երրորդ դրքում հիշատակվող վերջին պատմական դրվագը, այն է ռուդիկների (ռուսներ) կողմից Պարտավ մայրաքաղաքի գրավումը, տեղի է ունեցել X դարում, և քանի որ աղվանից կաթողիկոսների ցուցակը, որը նա չի ցանկանում, ինչպես է. Բորնն, համարել հետագայում կատարված հավելում[1], չարունակվում է մոտավորապես մինչև X դարը («Ád. et écl.», p. 468 և 488):

Աղվանից պատմության բնագիրը, ինչպես վերևում հիշատակեցինք, հրատարակվել է 1860 թվականին, նախ Մոսկվայում Մ. Էմինի[2], այնուհետև նույն տարում նաև Փարիզում Կ. Շահնազարյանի կողմից[3]:

Կ. Շահնազարյանն իր հրատարակության ներածությունում քննարկում է Մովսեսի ժամանակի հարցը և կարծում է, որ նրան

---

[1] Համմտ. E. Boré, Nouv. Annales, T. II, p. 93: «Այս ցուցակը ժամանակային առումով չի համապատասխանում այն չրջանին, երբ Մովսես Կաղանկատվացին ավարտել է իր Պատմությունը: Այն համալրվել է այլ գրիչների կողմից»:

[2] Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860:

[3] Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ, Հատ. Ա-Բ, Փարիզ, 1860:

կարելի է վստահարար համարել VII դարի առաջին կեսի հեղինակ[1]: Ըստ նրա, երրորդ գիրքը պետք է լինի հետագայում կատարված հավելում: Որպես ժամանակի իր որոշարկման միակ հիմնավորում, նա վկայակոչում է այն հանգամանքը, որ Մովսես Կաղանկատվացին իր պատմության մի քանի տեղերում հանդես է գալիս որպես VII դարի պատմական իրադարձությունների ժամանակակից և ականատես: Մենք ստորև ցույց կտանք, սակայն, թե որքան երևրուն է այդ հիմնավորումը:

Այնուհետև կարելի է հիշատակել նաև «Աղվանից պատմության» Ք. Պատկանյանի կողմից կատարված ռուսերեն թարգմանությունը (Ս. Պետերբուրգ, 1861): Թեև նա մի համառոտ ներածությունում պարզաբանում է այն հիմնավորումները, ըստ որոնց Մովսեսը կարող էր VII դարին պատկանել, սակայն, չնայած դրան, նա նրան համարում է X դարի հեղինակ, քանի որ XIII դարի հայ ժամանակագիրները տեղյակ են Աղվանից պատմության բոլոր երեք գրքերի մասին: «Մենք կհամաձայնեինք, – գրում է նա,– հեղինակին համարել VII դարի մատենագիր, եթե հայ մատենագիրներից որևէ մեկը „Աղվանից պատմությունը„ հիշատակեր երկու գրքով, քանի որ երրորդ գիրքն անկասկած X հարյուրամյակի գործ է» (ռուսերեն թարգմանություն, ներածություն, էջ VIII-IX)[2]:

Կ. Շահնազարյանի տեսակետին է անդրադառնում նաև Գ. Զարպհանալյանը [«Հայկական հին դպրության պատմություն (Դ-ԺԳ դար)», Վիեննտիկ, 1886, էջ 422-435]: Նա նույնպես Մովսեսին VII դարի պատմագիրների շարքում է դասում, իսկ երրորդ գիրքը համարում է հետագայում կատարված չարունակություն: Երրորդ գիրքը մյուս երկու գրքերից զատելու հարցում նրա համար վճռորոշը լեզվական զանազանությունն է: Դա, սակայն, սկզբից ևեթ կարելի է մերժել, քանի որ մի բանաքաղի պարագայում, որն իր պատմագրական գործը տարբեր աղբ-

---

[1] Այդ նույն կարծիքին էր նաև հայր Ս. Սոմալը. «Նա, ով գրել է աղվանների՝ Հայաստանին սահմանակից այդ ժողովրդի պատմությունը, ըստ չատերի կարծիքի, ապրել է VII դարի վերջում» («Quadro della storia letteraria di Armenia», Venezia, 1829, p. 44):

[2] Իր հետագա գործերում Ք. Պատկանյանը մեր հեղինակին տեղադրում է մերթ VII, մերթ X դարում (հմմտ. «Geographie des Moses von Choren», 1877, p. XIV. «Bibliogr. Umriss», 1879, p. 36-37):

յուրներից է բաղում և ի մի բերում, ոճի դանազանությունն, անչուշտ, հասկանալի է։

Վերջերս Խ. վրդ. Դադյանի կողմից Մովսես Կաղանկատվացու էջմիածնում գտնվող ձեռագրերի մասին «Արարատ» ամսագրում հրատարակվեց ևս մի հոդված (1895 թ. հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր; 1896 թ. հունվար, փետրվար, մարտ, ապրիլ; 1897 թ. փետրվար)։ Այդ հոդվածը մեզ համար այն առումով է հետաքրքրություն ներկայացնում, որ, ըստ դրա, հիշատակված՝ 1289 թվականի հնագույն ձեռագրում, որը հանդիսանում է մեր կողմից լույս ընծայված բնագրերի հիմքը, մի քանի հատվածներ պակաս է կազմված լինեն։

II

«Աղվանից պատմությունը» թեև բաղկացած է երեք գրքերից, այնուհանդերձ, ամենևին չկա նյութի տրամաբանական դասակարգություն ու բաշխվածություն։

Գրքի հեղինակը՝ ըստ երևույթին մի աղվան հոգևորական[1] Ուտիք գավառից[2], որոշում է ըստ իրեն մատչելի պատմական երկերի, նամակների և այլ դրավոր նյութերի ներկայացնել իր երկրամասի պատմությունը, և միաժամանակ, ինքնին հասկանալի է, որ նա իր ժամանակին համապատասխան, հիմնական առանցքը դարձնում է նկեղեցապատմական իրադարձությունները։ Այն, ինչ նա մեզ առաջին գրքում իր երկրի հնագույն պատմության մասին կարող է պատմել, քաղել է հայտնի հայ մատենագիրների երկերից։ Դրան հակառակ երկրորդ գիրքը, որն ի միջի այլոց արժեքավոր, որևէ այլ բնագրում չհաղորդված տեղեկություններ է պարունակում խազարների, հոների, ապա նաև Հերակլ I կայսեր արշավանքների և աղվանական Միհրանյան իշխանական տան մասին, պատմաբանի համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում։

Հեղինակը մեզ ներկայացնում է միայն հում նյութը, որը հաճախ սոսկ տարերայնորեն է կապվում Աղվանից երկրի իրա-

---

[1] Ձեռագրերից մեկում «Աղվանից պատմության» վերնագիրը հետևյալ կերպ է ձևակերպված՝ «Գիրք պատմութեան Ադոնից Աչխարհին ի յերից հատորս բաժանեալ, չարադրեցեալ ի Մօսիսէ գերիմաստ վարդապետէ Կաղանկատուացւոյ, ի վաղնջուց ժամանակաց» (Էջմիածնի ձեռագիր, № 632, հմմտ. «Արարատ», սեպտեմբեր, 1895, էջ 333)։

[2] Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, գիրք Բ, գլ. ժա, էջ 107։

կան պատմության հետ: Նա կրկնում է միմիայն այն, ինչ գտնում է իր սկզբնաղբյուրներում, առանց այդ նյութերի մեջ համակարգված կերպով կամ գեթ քննական ոգով խորամուխ լինելու: Այն, որ մենք այստեղ գործ ունենք մի այնպիսի բանաքաղային երկասիրության հետ, ինչպիսին է նույն X դարին պատկանող Ուխտանես Եպիսկոպոսի երկը, կասկած չի կարող հարուցել, քանի որ գրքի մի զգալի մասի վերաբերմամբ մենք կարող ենք մատնանշել դեռևս գոյություն ունեցող աղբյուրները[1]: Գրքի այն հատվածների դեպքում, որոնց աղբյուրները մեզ անհայտ են, կարելի էր հապճեպ եզրակացնել, որ այստեղ առկա է Մովսեսի բուն աշխատանքը: Ավելի չուտ, սակայն, եթե նկատի առնենք նրա գրքի բանաքաղային բնույթը, հնարավոր, այո հավանական է դառնում, որ այդ հատվածները նույնպես փոխառված են այլ աղբյուրներից: Այդ իսկ պատճառով է. Բորևի, Կ. Շահնազարյանի և մյուսների սխալն այն է, որ նրանք առանց այլևայլի այդ հատվածները վերագրում են անձամբ Մովսես Կաղանկատվացուն: Մենք փորը-ինչ ավելի ուշ կտեսնենք, թե որպիսի ճակատագրական նշանակություն է ունեցել նման ենթադրությունը հեղինակի ժամանակի որոշարկման հարցում:

Մովսեսը, որը փոխառման ընթացքում իր աղբյուրների մանրամասն տեղեկությունները բաղմակիորեն կրճատել է, այդ կերպ է վարվում նաև նամակների հետ: Դրանում համոզվելու համար Բ գրքի խթ գլխում գետեղված «Պատասխանի թղթոյն Մխիթարայ՝ Ամարասայ Եպիսկոպոսի ի Հայոց» նամակը (Մոսկովյան

---

[1] Ք. Պատկանյանն ի մի է բերել մեր հեղինակի սկզբնաղբյուրներից չասերը (ոուս. թարգմ., ներածություն, էջ X–XII): Ըստ նրա, Մովսես Կաղանկատվացու կողմից օգտագործվել են հետևյալ սկզբնաղբյուրները. գիրք Ա, գլ. դ՝ վերցված Մովսես Խորենացուց: Ա., գլ. զ և է՝ «Վարք սրբոց», մաս XII, էջ 145; Ա., գլ. ը և թ՝ Մովսես Խորենացի և «Հայսմավուրք», մաս I, սեպտեմբերի 21; Ա, գլ. ժ՝ Եղիշե; Ա, գլ. ժը և ժզ՝ **Մովսես Խորենացի**; Ա, գլ. ժզ-ից մինչև ժը՝ «Վարք սրբոց» և «Հայսմավուրք», մաս VII, էջ 5–21, մաս I, սեպտ. 5, «Հայ եկեղեցու ժողովածու» (թիվ 84):... Համմ. «Mémoires histor. et géogr. sur l'Arménie», հատ. I, էջ 217: «Հայսմավուրք», մաս II, մարտ 16; Ա, գլ. ժԹ-ից մինչև իա՝ «Վարք սրբոց», մաս V, էջ 376, մաս VII, էջ 5–21; Ա, գլ. իը՝ «Վարք սրբոց», մաս III, էջ 421, մաս V, էջ 281; Գիրք Բ, գլ. ա՝ **Պետրոս Սյունեցի**; Բ, գլ. ը Եղիշե; Բ, գլ. գ՝ **Մովսես Խորենացի**; Բ, գլ. ժե՝ Վիբո, Ադվանից կաթողիկոս; Բ, գլ. ծ՝ «Վարք սրբոց»:

Հրատ., էջ 219) կարելի է համեմատել մեզ ավելի ընդարձակ ձևով ավանդված նամակի հետ, որը տպագրվել է «Արարատ»-ում (1896 թվական): Ինչպես երևում է, Մովսեսը նույն գործնականորեն է ցուցաբերել նաև մյուս նամակների դեպքում, որոնք միայն նրա կողմից են մեզ ավանդվել:

III

Վերոնշյալից պարզ է դառնում, որ բոլոր քննադատները, որոնք Մ. Բրոսսեից հետո զբաղվել են «Աղվանից պատմությամբ», առաջին երկու գրքերի չարադրումը վերագրում են VII դարին, իսկ երրորդ գիրքը համարում են հետագա չրջանում կատարված չարունակություն, և որ միայն Ք. Պատկանյանն է այդ գործը տարակուսով վերագրում X դարին, առանց, սակայն, հերքելու VII դարի օգտին կատարվող հիմնավորումները: Կ. Շահնազարյանը և նրանից հետո նաև մյուս ուսումնասիրողներն իրենց տեսակետի հիմնավորման համար ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ Աղվանից պատմության երկրորդ գրքում ի հայտ են գալիս հատվածներ, որոնցից կարելի է կռահել, որ պատմիչն այդ իրադարձությունները սեփական աչքերով է տեսել և նաև անձամբ մասնակցել դրանց: Աղվանից կաթողիկոս Վիրոյի պատվիրակության մեկնումը խազարների առաջնորդ Շաթի մոտ, սովը, որ այն ժամանակ բռնկվել էր Աղվանքում, աղվանից իշխան Ջվանշիրի հզորությունն ու մեծությունը, նրա իշխանության ներքո երկրի ծաղկումը և նաև որոշ այլ իրողություններ չարադրված են մեծ մանրամասնությամբ և ակնհայտորեն ականատեսի կողմից, ինչն արդեն Շահնազարյանը մատնանշել էր[1]:

Խազարական իշխան Շաթը՝ Ջերու Խաքանի որդին, 628 թվականին հարձակվում է Աղվանքի վրա, ավերում և

---

[1] Անչուշտ սխալմունք է, երբ Կ. Շահնազարյանը որպես ապացույց այն բանի, թե Մովսեսն ապրել է VII դարում, վկայակոչում է մատնահատության կեղծ ուսմունքի մասին հաղորդումից հետևյալ դարձվածը (Ներածություն, էջ 83). «տեսաք բաղումք» (Ա, գլ. ժը, էջ 144): Այս խոսքերն ասում է ոչ թե գրողը, այլ այն պատանին, որը նկարագրում է մատնահատումը: Այդ կեղծ ուսմունքը գոյություն է ունեցել Վաչագան Բարեպաշտի օրոք (V դար): Ուրեմն, ըստ այդմ, Շահնազարյանը պետք է Մովսեսին տեղադրեր V դարում, համմտ. Ք. Պատկանյան, ռուս. թարգմ., էջ VII, VIII:

կողոպտում է երկիրը, այնպես որ ազգաններն իրենց կաթողիկոս Վիրոյի հետ հարկադրված են եղել անջատվել պարսիկներից և հպատակվել Շաթ արքայորդու տիրապետությանը: Դրանից հետո կաթողիկոս Վիրոն, մի պատվիրակության գլուխ անցած, առատ ընծաներով գնում է Շաթի մոտ՝ նրան իր ժողովրդի հպատակությունը ծանուցելու և իր դպրավարների ու խորհրդականների հետ միասին նրան առատ ընծաներով խաղաղեցնելու համար: Պատվիրակները մտնում են Շաթի ճամրարը և նրա կողմից ընդունվում ողորմածարար: Այդ իսկ տեղում ներկայացվում է խաղարական հորդան և նկարագրվում է, թե պատվիրակությունն ինչպես ներկայացվեց արքայորդի Շաթին, ինչն անկասկած կարող էր պատվիրակության անդամի կողմից գրառվել: Հեղինակը որոշակի կերպով ասում է. «Անդ տեսաք զրաղմոցս նոցա ի գուճս ի վերայ ծնգած ըստ նմանութեան վաղանդայ ծաներարեան ուղտուց. իւրաքանչիւր կոնք մի լցեալ մսով յանսուրբ անասնոյ, ըստ նմին և սկտեղք, յորում թանային յուտեն իւրեանց յաղաջուր, և զրաժակս և զըմպելիս արծաթեղեն քանդակուն յոսկի համակեալս, զորս բերեալ էին յավարին Տփխեաց. ընդ նմին և զըմրոցս եղջիւրեղէն և զչորոմաձեւս վայտեղէնս մեծամեծս, որով զարգանակն լափէին. և նովին պարարտական սաղոյց անլուայ աղտիւքն՝ յարխոռն յանզգայս, ի մէոյ բաժակէ՝ երկու կամ երեք ի նոցանէ զանազակ զինեն, կամ՝ զկաթն ուղտուց և ձիոյ յանյագ որովայնս իւրեանց իւրև ի տիկս ուռուցիկս չափէին... Եւ իւրև մուծին զնոսա ի ներքո ըստ մի զոնապահս մինչև ցերկրորդն և զընծայս ողջունին բարձեալ ի բաղկաց մերոց զկնի կաթուղիկոսին, ապա ընթացան ընդ առաջի նորա և հրամայեցին ամենեցուն փոխել ոտն ոտն և երկրպագանել երից անգամ և այլն» (Բ, զլ. ժդ, էջ 125–126):

Մեջբերված հատվածները պարզորոշ ցույց են տալիս, որ նկարագրությունը կատարված է մի ականատեսի կամ Վիրո կաթողիկոսի պատվիրակության անդամներից մեկի կողմից, քանի որ այն անձամբ Վիրոյի կողմից, որին իրավացիորեն վերագրվում է հաջորդ գլուխը, չի կարող չարադրված լինել, ինչպես ենթադրում էր Պատկանյանը (Ներածություն, էջ XII), նաև, որովհետև այդ գլուխն ամենից առաջ վերաբերում է նրա արժանիքները և նրա հայրական հոգածությունն իր ժողովրդի նկատմամբ, և մեկը, անշուշտ, չենք կարող նրան ընդունակ համարել այն բանին, որ նա երբևէ դեմքով հեղինակել է իր

ինքնապաշտամունքը, և երկրորդ, որովհետև «և զընծայս ողջունին բարձնալ ի բազկաց մերոց զկնի կաթուղիկոսին» բառերն ակնհայտորեն պատկանում են ոչ թե անձամբ Վիրոյին, այլ նրա պատվիրակներից մեկին: Կ. Շահնազարյանը և Գ. Զարպհանալյանն ի դեմս խոսողի տեսնում են Մովսեսին և այդ պատճառով նրան դարձնում են Վիրոյի ժամանակակից:

Մեկ այլ հատված, որտեղ երևան է գալիս պատմողի անձը, որին քննադատները դարձյալ նույնացնում են հենց Կաղանկատվացու հետ, մենք ունենք նույն գրքի 28-րդ գլխում (Բ, գլ. իը, էջ 158-159): Մեծ, խիզախ իշխան Ջվանշիրը՝ Միհրանական տոհմից[1], որի սխրագործություններըը մեր երկում մանրամասնորեն հաղորդվում են, հրավիրում է մի ընդհանուր ժողով, որին ըստ երևույթին նաև պատմողն է մասնակցել: Ընդ որում թագավորական թռչունը և փիղը մեր պարզամիտ պատմողի երևակայության վրա առանձնահատուկ ուժեղ տպավորություն են գործել: Այստեղ մենք ներկայացնում ենք մի հատված նրա հաղորդումից. «յայնժամ լինէր անդ համաշխարհական ժողով, ուր տեսանէիք զնա ոչ միայն սովորական չափով, այլ առաւել եւս բազմապատիկ արքայական չքով պճնեալ պերեւետեալ. տեսանէիք եւս զարքայականն հաւ, որոյ տեսակն ցանկալի էր, զի ընդ դեղնագոյն փետուրսն փոքր ինչ կանաչութիւն համաւար խառնեալ արտաքս ճոճէր...» և այլն: Այստեղ նույնպես մենք այն համոզմանն ենք հանգում, որ ոչ միայն Վիրոյին վերաբերող հաղորդումները, այլև նրանք, որ վերաբերում են Ջվանշիր իշխանին, սերում են մի ժամանակակցից:

Երբ, սակայն, Շահնազարյանը և Զարպհանալյանը պնդում են, թե ըստ հղված հատվածների «անկասկածելիորեն» կարելի է ընդունել, որ Մովսես Կաղանկատվացին Վիրո կաթողիկոսի ժամանակ և Ջվանշիր իշխանի օրոք է ապրել, նրանք թույլ են տալիս մեթոդական սխալ, քանի որ, առանց որևէ հիմքի Մովսեսին համարում են անձամբ այդ արժեքավոր նկարագրությունների ուղղակի հեղինակ և ամենևին ուշադրություն չեն դարձնում փոխառման հնարավորության վրա: Մենք այլապես եւս ապացույցներ ունենք այն բանի, որ մեր հեղինակը, քանի որ հոգ չի տանում վերամշակելու իր սկզբնաղբյուրները, իր նրաչխավոր

[1] Միհրանը պետք է եղած լինի Սասանյան Խոսրով II (Փարվեզ) արքայի (590-628) ազգականը: Մովսես Կաղանկատվացի, Բ, գլ. ժէ, էջ 135:

անձանց անձնական դիտողություններն ուղղակիորեն ներառել է իր գործի մեջ[1], *և եթե, այսպիսով, երկրորդ գրքում այս ու այնտեղ ի հայտ են գալիս հատվածներ, որոնք առաջին հայացքից կարծես թե որպես պատմող մեր հեղինակին են ներկայացնում, ապա դրանք չեն կարող հուսալի վաստտարկ ծառայել իր՝ բանաբաղի ժամանակը որոշելու համար: Չի կարելի նաև առանց այլևայլի ենթադրել, թե Վիրո կաթողիկոսի պատվիրակը և Ջվանշիրի կողմից հրավիրված ժողովի մասնակիցը միևնույն անձն են, քանի որ մեր հեղինակը կարող է տվյալ դիտողները երկու տարբեր աղբյուրներից փոխառած լինել:*

Մենք հիմա կփորձենք ապացուցել, որ Հանգամանալից ուսումնասիրության դեպքում հարկադրաբար պետք է հանգել այն եզրակացության, որ Մովսեսը վերևում քննարկված՝ ժամանակակցի հաղորդումները փոխառել է այլ գրավոր աղբյուրներից, քանի որ երկրորդ գրքի մի քանի հատվածներ, որոնք մենք իրավունք չունենք համարել հետագայում կատարված հավելումներ, պարզորոշ կերպով մատնում են հետագա բանաքաղի՝ հեղինակ լինելը: Կաղանկատվացին ժէ դլխում (գիրք Բ)՝ «Վասն Միհրական տոհմին լինել ի Սասանեական Խոսրովու ցեղէն և լինել նախագահ տանս Ադուանից», ներածում է հետևյալ խոսքերով. «Ի ստոյգ և ի բուն պատմագրաց այսպէս ծանեաք, եթէ Բնդոյ և Վստամ եղբարք՝ աղգայինք Պարսից թագաւորին, յարևան ի վերայ Որմզդի արքայի Հօր Խոսրովու և սպանին զնա» (Բ, գլ. ժէ, էջ 134): Մարզապանները իրենց քեռորդի Խոսրով Փարվեզի հետ փախչում են բյուզանդական կայսր Մավրիկիոսի (582–602) մոտ: Խոսրովը նրա օգնությամբ հռչակվում է թագավոր: Մի քանի տարի անց նա կամենում է վրեժ լուծել իր հոր մահվան համար և կարգադրում է բոլոր վտանգավոր մարդկանց, որոնք սպանել են իր հորը, մահապատժի ենթարկել: Դրա հետևանքով նրա աղգական Միհրանը փախչում է Աղվանք և գալիս Պարտավ մեծ քաղաքը: Խոսրովն այնուհետև հաչտվում է նրա հետ և նրան նշանակում

---

[1] Համմտ. Ա, գլ. գ, էջ 92 – «Յառաջնում ամի հայրապետութեանն Արաասայ տեսի նա անարժանս Վեհիկ ի տեսլեան զայր մի անապատական ... և այլն»: Բ, գլ. ժև, էջ 130. «ես Վիրոյ՝ Ադուանից և Լփնաց և Զողայ կաթուղիկոս, թողում ասել զայլ ամենայն պէսպէս պատրաստ...»:

այդ երկրի տիրակալ: Մովսեսն այնուհետև մեղ է ավանդում Միհրական տան ծննդաբանությունը (Բ, պլ. ժէ, էջ 135-136). «Լինի սորա որդի Արմայէլ, որ ծնաւ զՎարդ. Վարդ ծնաւ զքաջն Վարդան, որ չինեաց զրերդն Գարդմանայ զերիս ամս... Սորա լինի որդի Վարդ, Վարդ ծնանի զՎարազման. զՇուչիկ տիկին և զՎարազ-Գրիգոր՝ զառաջին իշխանն Աղուանից, որ էառ զկրաւնութիւն ի Վիրոյէ Աղուանից կաթուղիկոսէ: Վարազ-Գրիգորի լինին որդիք չորք՝ Վարազ-Փերոժ, Ջուանչիր, Յեղուտ-Խոսրով և Վարազման»: Հիմա խիստ տարօրինակ է, որ մեր հեղինակը, որն իբրև թե Վիրոյի պատվիրակ (628 թ.) և Ջվանշիրի ժամանակակից է, իր ժամանակին այնքան մոտ այդպիսի իրազարձությունների մասին միայն «ճշմարիտ և իսկական պատմագրություններից» է տեղեկանում: Էլ ավելի արտառոց է, այո, պատմականորեն անհնարին, որ նա Միհրանից՝ Խոսրով Փարվեզի (590-628) ազգականից մինչև իշխան Ջվանշիրը (նա կառավարել է ըստ մեր հեղինակի 637 թվականից հետո)[1] հաջորդած վեց սերունդներին կառավարել է տալիս մի քանի տասնամյակում[2]: Ինչպե՞ս կարելի է դա համատեղել այն ենթադրության հետ, թե Մովսեսը ապրել է VII դարում: Անհնար է, որ մեկը, որը մեզ կենդանի նկարագրություններ է տալիս խազարների մոտ գնացած պատվիրակության մասին, միաժամանակ այդպիսի միանգամայն առասպելարանական տեղեկություններ չարադրի ազվանական իշխանական տան մասին: Դա, սակայն, X դարի մի բանաքաղ, անշուշտ, կարող էր անել:

Այդ գլուխը, որը չի կարող պատկանել ժամանակակից պատմագրի, մեկը չէ: Երկրորդ գրքի իթ և իդ գլուխներում մենք ունենք երկու պատմություններ Սուրբ Խարայել անձնավորության միջոցով Սուրբ Խաչի գտնվելու մասին: Նա պետք է ապրած լինի VII դարում, քանի որ հիշատակվում է որպես Հայոց կաթողիկոս Սահակ Գ Ձորափորեցու (677-703) և իշխան Գրիգոր Մամիկոնյանի ժամանակակից (Բ, պլ. լը, լսե): Նա պետք է,

---

[1] Համմ. Բ, պլ. ժթ, էջ 142 – «եւ ի քառներորդ ամի Յազկերտի (632/3-651/2) համօրէն ի բաց բառնայր ի միջոյ տէրութիւնն Պարսից. և այն երեսուն և մի ամ էր ամենաիշխանութեանն Հազարացւոց և տևառն իմոյ Ջիւանչիրի տան և հինգ ամ»:

[2] Համմ. M. Brosset, Additions et éclaircissements à l'histoire de la Géorgie, St. Pétersb., 1851, p. 475:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ուրևմն, Մովսես Կաղանկատվացու ժամանակ ապրած լինի: Եթե, սակայն, Մովսեսն իրոք արդեն 628 թվականին որպես պատվիրակ, այսինքն՝ որպես հասուն մարդ, ուղարկվել էր խազարների առաջնորդ Շաթի մոտ, ապա նա պետք է ավելի հասուն տարիք ունեցած լինի, քան Իսրայելը: Այդ դեպքում արդյոք աչքի չի՞ զարկում, որ նա Իսրայելի՝ իր կրտսեր ժամանակակցի միջոցով առասպելական գունավորում ունեցող մի պատմություն է մնջրներում և միաժամանակ նչում, որ այդ բանների մասին ճչմարիտ ավանդությունները չատ համառոտ են, և նա այդ պատճառով ի վիճակի չէ Սուրբ Իսրայելի ճգնավորական կյանքի սկզրի մասին ավելի որոչակի տեղեկություն հաղորդել (Համմտ. գիրք Բ, գլ. իթ, էջ 160): Բ գրքի լգ գլխում խոսքը վերաբերում է Աղվանից կաթողիկոս Եղիազարի ժամանակ Ուտի գավառի Գիս գյուղում սուրբ մասունքների և Փրկիչ Խաչի մի մասի հայտնարևրմանը: Դրան հակառակ, իթ գլխում (գիրք Բ) խոսվում է Աղվանից կաթողիկոս Ուխտաննսի՝ Եղիազարի նախորդի օրոք Մնծկողմանքի Ռոստակ գավառում, Տրտու գետի ափին, Զղախյան հովտում, Ապարիսական փոքրիկ դաչտում Սուրբ Խաչի գտնվելու մասին: Ենթադրվում էր, որ Սուրբ Մովսեսն ինքն է այդ սուրբ մասունքները նախկինում ըերել Աղվանք: Այն, որ գտածոյի մասին հաղորդումը պատմական ննթատեքստ ունի, կասկածի ննթակա չէ, քանի որ միաժամանակ տեղեկացվում է այն նամակի մասին, որը Դավիթ և Հովել Եպիսկոպոսներն այդ աստվածային ողորմածության պատճառով ուղարկեցին Ուխտաննս կաթողիկոսին և Ջվանչիր իշխանին, և նաև այն պատասխանի, որը նրանք դրանից հետո ստացան: Այդ երկու գլուխների խորագրերից նկատելի է, որ մեր հեղինակը երկու գտածոները նույնական է համարում: Եթե մենք իրոք այդ գլուխներում մեր առջև ուննենք միևնույն իրադարձությանը վերաբերող երկու միմյանցից տարբերվող ավանդություններ, ապա ակնհայտորեն այդ երկու հաղորդումներից մեկը պետք է սխալ լինի, առաջացած լինի սոսկ մի ավելի ուշ դարաշրջանում: Այդ դեպքում, սակայն, VII դարի հեղինակը չի կարող հին, անխառն ավանդությունը և միաժամանակ նրա հետագա փոխակերպումն օգտագործած լինել: Եթե, սակայն, այստեղ խոսքը վերաբերում է երկու տարբեր գտածոների, ինչը մեզ նաև հավանական է թվում, ապա ակնհայտ է դառնում, որ Կաղանկատվացին գլուխների վերնագրերում միմյանց հետ է չփոթում այնպիսի իրադար-

ձուլմյուններ, որոնք պետք է պատկաննեն իր ժամանակին: Այդ դեպքում պետք է ենթադրել, որ գլուխների վերնագրերն ամբողջությամբ միայն հետագայում են ավելացվել: Այստեղ նույնպես, ինչպես Միհրական տան ծագմանը վերաբերող պատմության դեպքում, պետք է նկատի առնել այն փաստը, որ մեր հեղինակը որոշակիորեն վկայում է, որ նա այդ տեղեկությունները փոխառել է այլ գրավոր աղբյուրներից[1], չնայած նա ինքը պետք է պատկանի այդ ժամանակին: Այն խոսքերը, որ նա միայն հակիրճ հաղորդումներ է գտել, ժամանակակցի դեպքում հասկանալի չեն, սակայն X դարի բանաքաղի դեպքում, անշուշտ, այո:

Այն ենթադրությանը, թե Մովսեսը VII դարում է ապրել, մի ակնհայտորեն հակասող փաստ առկա է Բ գրքի խը գլխի 219-րդ էջում: Այդ գլխում նշվում է Հայոց Եղիա Ա Արճիշեցի կաթողիկոսի մասին, որի կաթողիկոսական պաշտոնավարումը տեղի է ունեցել VIII դարի սկզբում[2]: Ինչպե՞ս պետք է VII դարի սկզբի դեպքերի ժամանակակիցը կարողանա չարադրել նաև VIII դարի իրադարձությունները: Մեզ հավանարար կպատասխանեն, որ Մովսեսն իր պատմությունը գրել է առաջացած տարիքում: Բայց դրան կարելի է առարկել նրանով, որ խազարների ներխուժման և Հզոր Իշխան Ջվանշիրի կառավարման չրջանի նկարագրությունները, որոնք լի են մանրամասներով, ժամանակակցի կողմից կատարված գրառումներ են երևում: Մի տեղում նաև հեղինակն ինքն է մեզ ասում, որ դեռ չարունակ համակված է բարբարոսների սոսկալի ներխուժումների երկյուղով ու սարսափով (հմմտ. Բ, գլ. թ, էջ 99): Դա ցույց է տալիս, որ գրառումը կատարվել է այդ դեպքերից կարճ ժամանակ անց: Երբ, սակայն, նույն Մովսեսը, որը VII դարի առաջին քառորդում որպես ականատես հաղորդում է խազարների ներխուժման մասին և

---

[1] Հմմտ. գիրք Բ, էջ 160 – «Զճշմարտախօս դրուագս բանից սակաւ ինչ նուազ գտի»:

[2] Հմմտ. Բ, գլ. խր, էջ 219 – «Ապա վասն տեառն Եղիայի խակազործութեան յերիցոյ վանս, յորժամ յԱղուանս երթայր՝ սակս այնր ոչ գրեցին ի **ծառայէ**, արկելին և նորա **զհոգևոր տէրն**»: Ստեփանոս Օրբելյանի մոտ դուգահեռ հատվածը (Մոսկ. հրատ., 1861, էջ 76-77) հետևյալ կերպ է ձևակերպված. «բայց վասն Եղիայի կաթողիկոսի խակազործութենանն յերիցու վանս (?) մինչ գնայր ի հնազանդել ղԱղուանս՝ ոչ գրեցին սորա ի ծառայէ և նորա՝ զհոգևոր տէրն»:

VIII դարի սկզբին կամենում է որպես ականատես նկարագրած լինել Հայոց Եղիա կաթողիկոսի ճանապարհորդությունը դեպի Աղվանք, ապա մենք ստիպված ենք նրան, ինչպես Մովսես Խորենացուն, ավելի քան հարյուր տարվա մի միանգամայն առասպելական տարիք վերագրել: Այս պարզաբանումները պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ մինչայժմյան գրեթե համընդհանուր կերպով տիրող այն տեսակետը, ըստ որի Մովսես Կաղանկատվացին VII դարի պատմիչ է, քննության չի կարող:

Այնուհանդերձ, կարող է ասվել, որ սխալ, առասպելական և ժամանակագրորեն անթույլատրելի հատվածները, որոնք առկա են Մովսեսի մոտ, մեկ այլ գրչի կողմից են ներմուծվել: Եթե մենք այժմյան բնագրում առկա հակասությունները ոչ մի այլ հնարավոր եղանակով չենք կարող բացատրել, ապա միայն մեթոդապես չարունակ տարակույսներ հարուցող՝ օտար ներմուծումների ենթադրության հետ կարող ենք համաձայնել: Նաև անպատճառ անհրաժեշտ չէ երրորդ գիրքը, որը «Աղվանից պատմությունը» չարունակում է մինչև X դարը, համարել մի հետագա չարունակողի գործը: Ընդունած միանգամայն ճիշտ է, որ այդ մասն ինչպես ձևով, այնպես էլ պատմական հետաքրքրականությամբ երկրորդ գրքին հապես զիջում է, բայց այնուամենայնիվ դա չի խանգարում երկու գրքերն էլ նույն հեղինակին վերագրել: Պատճառը հենց կարող է լինել այն, որ մեր բանաքաղն իր երկի VII դարին հաջորդող պատմության համար միայն աղքատիկ և անբավարար աղբյուրներ է գտել. մի ենթադրություն, որն անպատճառ համապատասխանում է այն ժամանակաշրջանի պատմական իրադրությանը:

Բոլոր երեք գրքերի միասնականությունը հաստատվում է նաև երրորդ գրքի նախավերջին գլխում գտնվող մի հատվածով: Մխիթարյան տան աղվանից տիրակալների համառոտ աղյուսակային պատկերման առաջին տողերում հեղինակը որոշակիորեն ասում է. «Զանուանս արքայիցն վերագոյն (= առաջին գրքում) գրեցաք ի քաջէն Վաչագանայ մինչև ցթարևպաչտն Վաչագան» (Գ, գլ. իգ, էջ 271): Դրանից հետևում է, որ երրորդ գրքի հեղինակը որոշակիորեն իրեն մատնանշում է նաև որպես նախորդների հեղինակ: Պետք է ուրեմն ընդունել, որ կարծեցյալ չարունակողը ոչ միայն չարունակել է Մովսեսի գիրքը, այլև դրա հետ մեկտեղ դիտավորյալ կերպով փորձել է ստեղծել այն թյուր

տպավորությունը, թե ինքն է առաջին երկու գրքերի հեղինակը, այսինքն՝ որ նա ուղղակի կեղծարար է. մի ննթադրություն, որն ամենևին հավանական չէ:

Եթե, սակայն, երրորդ գիրքը, որը եղրափակվում է ուղիկների կողմից Պարտավ մայրաքաղաքի գրավմամբ (944), սերում է Հենց Մովսես Կաղանկատվացուց, ապա մենք պետք է, իհարկե, ընդունենք, որ Հեղինակը Վիրոյի պատվիրակի նկարագրությունները և այն մարդու տեղեկությունները, որը մասնակցել է Ջվանչիրի կողմից հրավիրված ժողովին, նախկին հեղինակների գրառումներից է վերցրել և դրանք նույն կերպով, ինչպես Մովսես Խորենացու, Պետրոս Սյունեցու, Վիրոյի և բազմաթիվ ուրիշ գրավոր տեքստերից փոխառված հաղորդումները, ներառել է իր բանաքաղության մեջ:

Ի նպաստ մեր այդ տեսակետի է խոսում առանձնապես Հենց իր պատմագրի մի վկայությունը, որը մինչև այժմ տարօրինակ կերպով ամբողջովին անտեսվել է: Երկրորդ գիրքն ունի հետևյալ վերնագիրը՝ «Պատմութիւն ի դէպ դրոցս»[1]: Ըստ մեր բացատրության, դա նշանակում է «Պատմությունն ըստ իմ ձեռքի տակ գտնված աղբյուրների»: Վերնագրի այդօրինակ ընկալման ճշմարտացիությունը մեզ երաշխավորում են դրան հաջորդող երկրորդ գրքի առաջին խոսքերը, որոնք մենք ներկայացնում ենք ստորև. «Գտանին դրոյցք Արևելից կողմանց, որք ոչ են անկեալ ի գիրս հնագիր պատմագրաց, դորս պատչաճ վարկաք մակագրել ի տառս տողաչափութեան մերում» (Բ, գլ. ա, էջ 81): Այս խոսքերը հեղինակի պարզորոշ խոստովանությունն են այն մասին, որ նա երկրորդ գիրքը կազմել է մի շարք գրավոր աղբյուրներից, և ըստ այդմ մեր մինչայժմյան նկատառումները լավագույնս հիմնավորվում են:

Կաղանկատվացու ժամանակի մեր որոշարկման համար բացի շարադրված ներքին հիմնավորումներից նկատի են առնվում նաև հայ ժամանակագիրների վկայությունները: Մխիթար Այրիվանեցին XIII դարի մի հայ ժամանակագիր, պատմագիրների իր

---

[1] Այս վերնագիրը վերարերում է, ինչպես հավաստում է Շահնազարյանի հրատարակությունը, ամբողջ երկրորդ գրքին: Ֆ. Պատկանյանի թարգմանությունը՝ «Գրքի բովանդակության մեկնությունը», ակնհայտորեն սխալ է (Պատկ., ռուս. թարգմ., էջ 79):

ցուցակում «Մովսես Աղվանացուն» տեղադրում է Սեբեոսի (VII դար) և Ղևոնդ վարդապետի (VIII դար) միջև[1]: Հայր Շահնազարյանը և հայր Զարպհանալյանը հիշատակված նչման մեջ տեսնում են ապացույց իրենց այն ենթադրության համար, թե Մովսեսն ապրել է VII դարում: Այնուհանդերձ Մխիթար Այրիվանեցու այդ ցանկում պատմագիրների անունները խիստ ժամանակագրական կարգով տեղակայված չեն: Նույն ցանկում Թովմա վարդապետը (X դար) տեղակայված է Մովսես Խորենացուց, Ղազար Փարպեցուց և Եղիշեից առաջ: Սեբեոսը (VII դար) և Ղևոնդ վարդապետը (VIII դար) ի հայտ են գալիս միայն Շապուհ Բագրատունուց հետո (IX դար) և այլն: Նույն հեղինակի ժամանակագրական պատմական ցանկերում այդ նչումից չատ ավելի կարևոր մեկ այլ հատված, որտեղ «Աղվանից պատմագիր Մովսես Կաղանկատվացու և պատմագիր Ուխտանեսի» ստեղծագործական ծաղկուն շրջանը սահմանվում է 980–1000 թվականների միջև[2]: Այդ ճչգրիտ տվյալը հաղիվ թե կարելի լինի հորինված համարել: Այն ավելի չուտ անկասկածելիորեն ծագում է ավելի հին աղբյուրներից: XIII դարի մեկ այլ պատմագիր՝ Կիրակոս Գանձակեցին, որը հայ պատմագիրներին ներկայացնում է ժամանակագրական կարգով, նույնպես բանաքաղ Մովսես Կաղանկատվացուն հիշատակում է միայն Հովհաննես Կաթողիկոսից (X դարի սկզբից) հետո և Ուխտանես Եպիսկոպոսից (X դարի վերջ) առաջ[3]: Ուրեմն, մենք լիիրավ կերպով կարող ենք պնդել, որ հետագա պատմական տեղեկությունները միանգամայն համապատասխանում են մեր այն տեսակետին, ըստ որի Մովսեսը X դարի բանաքաղ է:

Եթե մենք հիմա կամենում ենք ճչգրիտ որոշել Աղվանից պատմության գրության ժամանակը, ապա պետք է նախ և առաջ քննության առնենք վերջին գրքի եղրափակիչ մասը: Վերջին դեպքը, որի մասին Մովսեսը մեզ հաղորդում է իր

---

[1] Հմմտ. **Մխիթար Այրիվանեցի**, Թարգմանությունը Մ. Բրոսսեի (Mém. de l'Acad. Imp., VII, 13, № 6), Ս. Պետերբուրգ, 1869, էջ 25:

[2] Հմմտ. **Մխիթար Այրիվանեցի** (Բրոսսե), էջ 88:

[3] Հմմտ. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Մոսկվա, 1858, էջ 9:

գրքում, ռուզիկների կողմից Պարտավ քաղաքի գրավումն է: Այդ փաստը, ըստ արաբական աղբյուրների, տեղի է ունեցել 944 թվականին[1]: Մովսեսի մոտ այնուհետև հաջորդում են Աղվանքի գահակալների և կաթողիկոսների երկու ցուցակներ, որոնք ձգվում են գրեթե մինչև X դարի վերջը (987 թ.): Գահակալների ցանկում որպես վերջինը հիշատակվում է Սևադայի որդի Հովհաննես-Սենեքերիմը՝ Դավիթ Մագիստրոսի (X դարի երկրորդ կես) ժամանակակիցը: Կաթողիկոսների ցանկում ձեռագրերը կաթողիկոս Տեր-Դավթից հետո (958-963), որը ձեռնադրվել է Հայոց Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի կողմից, հիշատակում են ևս երկու կաթողիկոսների՝ Տեր-Պետրոսին[2] (18 տարի) և Տեր-Մովսեսին (6 տարի): Ըստ այդմ երևում է, որ Մխիթար Այրիվանեցին, որը «Մովսես Աղվանացուն» տեղակայում է X դարի վերջին (980-1000), մեր բանաքաղի ժամանակը, ըստ էության, ճիշտ է որոշել:

Մեր այդ ենթադրության դեմ, անշուշտ, կարելի է առարկել՝ ասելով, որ դեռ Հայոց Անանիա Ա կաթողիկոսն (943-964) Աղվանից եկեղեցու վերաբերյալ իր գրության մեջ օգտվել է Մովսեսի Պատմությունից[3]: Այնուհանդերձ այդ տեսակետը, ինչպես մենք չուտով կտեսնենք, ակնհայտորեն սխալ է: Անանիայի գրության համար չարժառիթ դարձան Աղվանից եկեղեցու հետ տարաձայնությունները: Հենց ի վեր ընդունված կարգ էր, որ Աղվանից կաթողիկոսներն իրենց օծումն ստանային Գրիգոր Լուսավորչի հաջորդներից: Հայոց եկեղեցուց վրացական եկեղեցու բաժանումից հետո (VI դարի վերջին), սակայն աղվանները նույնպես փորձեցին իրենց եկեղեցին անկախ դարձնել,

---

[1] Մ. Բրոսսեն ռուսների ավազակային արշավանքը դեպի Պարտավ վերագրում է 914 թվականին: Այնուհանդերձ այն մասին, որ ռուսները 914 թվականին գրավել են Պարտավ քաղաքը, մենք ամենևին ոչինչ չգիտենք: Դրա փոխարեն արաբական պատմագիրներից մեզ հայտնի է, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 944 թվականին: Մովսեսի հաղորդումը նաև բնդհանուր առմամբ համապատասխանում է Իբն ալ-Աթիրի տեղեկություններին: Հմմտ. Dorn, Über die Einfälle der alten Russen in Tabaristan, p. 296. Mém. de l'Acad., VII, 23, St.-Pét., 1877):

[2] Ամենահին ձեռագրում Տեր-Պետրոսի փոխարեն գրված է Տեր-Պետրոս, հմմտ. «Արարատ», ապրիլ, 1896, էջ 178:

[3] Հմմտ. «Արարատ», 1896, հունվար, փետրվար, մարտ, ապրիլ:

և Հայաստանի քաղաքական միության ու նրա ևկեղեցու կազմալուծման չրջաններում ազվանից Հոգևորականության հաճախ հաջողվում էր իրականացնել բազմալի ինքնուրույնությունը: Սակայն նրր Հայաստանը դարձյալ հասնում էր քաղաքական հզորության առավել բարձր աստիճանի, հայ հոգևորականությունը նույնպես կարողանում էր Ազվանքի ևկեղեցական անկախություն կամ խաղաղ ճանապարհով կամ նաև բռնությամբ ճնշել. այդպես էր և Հայոց կաթողիկոս Եղիա Ա Արճիշեցու ժամանակ ութերորդ հարյուրամյակի սկզբին: Հայերի համար դժվար չէր ազվանական ինքնուրույնության ճնշումը, քանի որ Ազվանից ևկեղեցին մշակութապես չատ ավելի էր սերտաճել հայկականին, քան իրևրավրացականը: 949 թվականին Անանիա Ա Մոկացին ևկավ Ազվանք՝ կաթողիկոս Տեր-Գագիկին իր պաչտոնից հևռացնելու համար, քանի որ նա Հայոց կաթողիկոսի կողմից չէր ձևռնադրվել: Այս ու այնտեղ, սակայն, ինչպես Անանիան ինքն է իր գործության մեջ մեզ հաղորդում է («Արարատ», 1896, Հունվար, էջ 24), ազվաննևրը կամենում էին Հայոց ևկեղեցու գևրագույն իշխանությունն ու հեղինակությունը վիճարկել՝ պնդելով, թե ազվանական ևկեղեցին ավելի հին է, քան հայկականը: Այդ ժամանակ Անանիան, ինչպես ինքն է տեղևկացնում, պահանջևց նրանցից «Ազվանից պատմությունը»՝ նրանց լուսավորման սկզբնական չրջանի պատմությունն ուսումնասիրելու համար: «Եվ նրանք մեզ թույլ չտվեցին,— ասում է Անանիան,— այն տեսնել, քանզի այն ազվանից հոգևոր առաջնորդին ցույց էր տալիս որպես արքեպիսկոպոս, իսկ հայերի առաջնորդին՝ պատրիարք: Եվ քանի որ նրանք գիտեին, որ ավելի ցածր դիրքը (բառացի՝ նվաստության մասը) իրենց կողմում էր, գաղտնի պահեցին Ազվանից պատմությունը» (Հմմտ. «Արարատ», 1896, Հունվար, էջ 24): Ի վերջո, սակայն, պահանջված գիրքը ներկայացրեցին նրան, և այն, հաղորդում է Անանիան, «զոր սիրէաք, որ ունէր զայս ձև օրինակի, թէ...»[1]:

---

1 «Արարատ», 1896, Հունվար, էջ 25: Հմմտ. նաև Ստեփանոս Օրբելյան. «Այնուհետև, պատվումից ու մեծարումից հետո Գանձասարի ևկեղեցապանը վիչերային ժամերգության ժամանակ նրան ներկայացնում է մի գիրք, իբր թե Հովհան Ոսկերերանինը, և նրանք խնդրում են կաթողիկոսին (այն) կարդալ, և նա այն բացելով՝ տեսավ (դրա մեջ), ինչ փնտրում էր, քանի որ դա Ազվանից պատմությունն էր» (Մոսկվա, 1861, էջ 203):

«Ունկր դայս ձև օրինակի» բառերը մեզ թույլ են տալիս ենթադրել, որ Անանիայի քաղվածքները բառացիորեն վերցվել են իրենց աղբյուրից: Այնուհանդերձ, դրանք Մովսեսի զուգահեռ հատվածներից միանգամայն տարբերվում են ոչ միայն իրենց ձևով, այլև բուն իրենց բովանդակությամբ: Ըստ Անանիայի գրության, Մաւրիկիոս կայսրը Դվինում աթոռակալող Աբրահամ Ա Ադրաթանցի կաթողիկոսի 9-րդ տարում պետք է Հռոմեական Հայաստանի համար նշանակած լինի մի հատուկ կաթողիկոս Հովհաննեսին («Արարատ», 1896, փետրվար, էջ 69): Դրան հակառակ, նույն իրադարձությունը Մովսես Կաղանկատվացու կողմից վերագրվում է Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակին (Բ, գլ. խը, էջ 217): Հայոց եկեղեցուց բաժանված ազգականականը, ըստ Անանիայի, նրա հետ վերամիավորվել է Հայոց Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի միջոցով («Արարատ», 1896, մարտ, էջ 126): Մովսեսը, դրան հակառակ, միավորումը կատարել է տալիս Աբրահամ Ա կաթողիկոսի միջոցով (գիրք Բ, գլ. խը, էջ 217): Կոմիտաս կաթողիկոսը Մովսեսի մոտ բնավ չի հիշատակվում: Բացի այդ, մյուս տեղեկությունները նույնպես Անանիայի մոտ միանգամայն այլ կերպ են պատմվում, քան Մովսեսի, այնպես որ Խաչիկ վրդ. Դադյանի արտահայտած այն ենթադրությունը, թե իբր Անանիան օգտագործել է Մովսեսի աշխատությունը, անհիմն է («Արարատ», 1896): Անանիայի աշխատությունում՝ «Ազվանից պատմությունը» խորագրի ներքո գտնվող մասը, ուրեմն, չպետք է ընկալվի որպես Մովսեսինը: Այսպիսով, Անանիայի գրությունը չի հակասում մեր ստացած արդյունքին, ըստ որի Կաղանկատվացու պատմությունը գրվել է X դարի վերջին:

Մովսեսի ժամանակը չի կարելի տեղակայել X դարից հետո, քանի որ մենք միանգամայն որոշակիորեն կարող ենք ապացուցել, որ Ուխտանես Եպիսկոպոսը Հայոց Խաչիկ Ա Արշարունեցի կաթողիկոսի (972-991) ժամանակակիցը, օգտագործել է «Ազվանից պատմությունը»[1]: Որպես դրա ապացույց մենք հղում ենք մի հատված, որում Ուխտանեսն ազվանական պատմագիրներին մատնանշում է որպես իր աղբյուրը և միաժամանակ գրեթե բառացիորեն ընդօրինակում է Մովսեսի երկասիրությունը:

---

[1] Համմ. M. Brosset, Deux historiens arméniens. Kiracos de Gantzac, Oukhtanès d'Ourha. Sec. livr., 1871.

Համմտ. Ուխտանես, հատ. Բ, «Հայերից վրացիների բաժանման պատմությունը», Վաղարշապատ, 1871, Բ, 65, էջ 122-124:

«Լսելով դայս մեզ (ի) պատմագրացն Աղուանից գարդար և պրուն և զառաջին հաւատացն աչխարհին իւրեանց հաւատի մեզ պատմեալ. զի պատմութիւն ճշմարիտ է. և առաւել քան զնախնարհելն զԱռանայ ի Վաղարշակայ տանն Աղուանից, այլ ինչ (ոչ) գտաք՝ ասէ պատմութիւնն՝ մինչև զքաջն Վաչագան, որ միանգամայն տիրեաց կողմանցն Աղուանից»:

Համմտ. Մովսես Կաղանկատվացի, Մոսկվայի հրատ., 1861, Ա, գլ. գ, էջ 8:

«Պատմութիւն ճշմարիտ առաւել քան զնախապահիկն Առանայ ի Վաղարշակայ տանս Աղուանից այլ ինչ ոչ գտաք մինչև զքաջն Վաչագան, որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»:

Վերջապես, ինչ վերաբերում է հեղինակի անձին, ապա մենք ստիպված ենք ապավինել նրա աշխատությունում գտնվող մի նշումի, որտեղ հաղորդվում է հետևյալը[1]. «Իբրև իրագրած եղեն թշնամիքն եղելոցն՝ պնդեցան զհետ փախստեից և հասեալ ի մասն ինչ նոցա առ ստորոտով լերինն՝ որ է յանդիման գեղջն մեծի Կաղանկատուաց, որ ի նմին յիւտի գաւառի՝ յորմէ և ես...»:

Այս հատվածի մեկնաբանման դեպքում շատ ավելի բնական կլինի «յորմէ և ես»-ը կապել ոչ թե «գեղջն մեծի Կաղանկատուաց»-ի, այլ «ի նմին յիւտի գաւառի»-ի հետ: Այդ դեպքում այն ենթադրությունը, թե Մովսեսը ծնվել է Կաղանկատուք գյուղում, կթվա, ոչ ճիշտ: Քանի որ, սակայն, Մովսեսը հին ժամանակագիրների կիրակոս Գանձակեցու և Մխիթար Այրիվանեցու մոտ արդեն իսկ անվանվում է Կաղանկատվացի (այսինքն՝ ծնված Կաղանկատուքում), ապա մենք ստիպված ենք, եթե ճիշտ է վերոնշյալ բացատրությունը, թե Մովսեսը ապրում է Ուտիից, ընդունել, որ այդ ժամանակագիրները նրա ծննդավայրը որոշարկում են բացառապես հղված հատվածի մի ոչ ճշգրիտ մեկնաբանության հիման վրա:

[1] Համմտ. Մովսես Կաղանկատվացի, Բ, գլ. ժա, էջ 107:

ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Քրիստոնեության տարածումը Աղվանքում հետագայում առաջացած առասպելական ավանդություններ վերագրում է դեռ առաքելական ժամանակաշրջանին: Ըստ ավանդագրույցի՝ Սուրբ Թադեոս առաքյալն Արտազ գավառում սպանվել է Հայոց Թագավոր Սանատրուկի հրամանով: Նրա աշակերտը՝ Սուրբ Եղիշան, դրանից հետո վերադառնում է Երուսաղեմ, որտեղ նա դեկուցում է իր ուսուցչի նահատակության մասին: Այնտեղ նա սևեռ է ձեռնադրված լինի Քրիստի եղբայր Հակոբի՝ Երուսաղեմի առաջին պատրիարքի կողմից: Նա այնուհետև, հայերից խուսափելով, Պարսկաստանով գնում է մասագետների երկիրը[1] (ի Մադրութիա): Նա իր քարոզումը սկսում է Զոդում և այնտեղից երեք աշակերտների հետ գալիս է Ուտի գավառ՝ Սահատ քաղաքը: Այն բանից հետո, սակայն, երբ հեթանոսներն սպանում են նրա աշակերտներից մեկին, մյուս երկուսը լրում են իրենց ուսուցչին և հետևում են մարդասպաններին: Սուրբ Եղիշան ինքը դրանից հետո գնում է Գիա և այնտեղ կատուցում մի եկեղեցի: Ջերգունի վտրրիկ գաչատ հեթանոսական զոհամատուցման վայրի մոտ նա ատանում է նահատակության պսակը: Այդ սուրբ մարդու մասունքները հոմննքում նետում են հանցագործների մի գերեզմանափոսի մեջ, և դրանք այնտեղ մնում են, մինչև հետագայում տեսիլքով և հրաշքով հայտնի են դառնում բարեպաշտ մարդկանց և ամփովվում են Ուռկան գյուղում: Այնտեղից դրանք տեղափոխում են Ներսմիհրի սուրբ վանքը, որ հետագայում կոչվել է Ջրվեժիկ: Փոսի վրա՝ նահատակության վայրում, բարեպաշտ Վաչագանը (V դարի վերջ) պետք է մի կոթող կանգնեցրած լինի, որտեղ, ըստ ավանդության, որպես ճգնավոր մահացել է նրա սեննեկապետը:

Ինչպես Հայոց երկրի Գրիգոր Լուսավորիչն է, այդպես Մովսես Կաղանկատվացու ավանդագրույցի Սուրբ Եղիշային՝ Թադեոսի աշակերտին, համանման կերպով դարձնում է Աղվանից երկրի լուսավորիչ (Արևելեայցս Լուսաւորիչ): Արդեն ապացուցված է

[1] Հայ պատմագիրների մասագետները բնակվում էին Կասպից ծովի արևմտյան կողմում: Գիան Կասսիոսը (69, 15, 1) և Ամմիանոս Մարկելինոսը (XXIII, 5, 16) նույնպես հիշատակում են կովկասյան մասագետներին:

(Ա. Կարիեր, Արցախի առաքելը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Փարիզ, 1895), որ Թալեսի առաքելի պատմական արժեքը հավաստար է դրոյի: Նրա աշակերտ եղիշայի մասին ավանդությունն, անկասկած, ավելի ուշ շրջանի առաքելական գործունեության արդյունք է, քանի որ դրանում հիշատակվում է Ագվանից Թագավոր Վաչագան Բարեպաշտը (V դարի վերջ): Այնուամենայնիվ, այդ առաքելն ունի պատմական մեծ նշանակություն: Դրա միջոցով հավաստվում է ագվանական եկեղեցու իրրև ինքնուրույն առաքելական ծագումը, մի ուժեղ նպաստ եկեղեցական վարդապետների իշխանավորների համար, որոնք կամենում էին ազատվել Հայոց կաթողիկոսության հանդեպ ստորադասությունից:

Ագվանական եկեղեցու վերաբերյալ հնագույն պատմական վկայությունն ի հայտ է գալիս Ագվանքի Թագավոր Վաչեին՝ պարսից Պերոզ արքայի (484–487) քեռորդուն ուղղված Հայոց Գյուտ Եպիսկոպոսի մի նամակում[1]: Դրանում մեզ տեղեկացվում է, որ Ագվանից Թագավոր Ուռնայրը եկել է Հայաստան՝ Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի մոտ (III դարի վերջին և IV դարի սկզբին) և այնտեղ մկրտվել է իր բնակիչների ու զորքի հետ միասին: Այն ժամանակ հայերը պետք է Ագվանքի Թագավորի հետ մի Հռոմեացի Եպիսկոպոսի, որը Տրդատի հետ էր եկել Հայաստան, ուղարկած լինեն Ագվանք: Ի դեմս նրա, տեղեկագիրը նկատի ունի ոչ թե հարևան փոքրասիական մի գավառից սերող մի հույնի, այլ որոշակիորեն մատնանշում է. «այր մի երանելի ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հռոմ քաղաքէ»:

Այնուհետև զարձը Ագվանքում, ինչպես Հայաստանում, իրագործվել է վերևից ներքև կարգով, բայց և այնպես բնակիչների վայրենությունը, որը միայն երկար ժամանակ անց անհետացավ, և պարսից Թագավորների քաղաքական ազդեցությունն այստեղ հարյուրամյակներ չարունակ եղել են մեծագույն խոչընդոտներ քրիստոնեության ամրապնդման համար:

Ավանդությունը մեզ ասում է, որ աղվանական բարեպաշտ Թագավորները և Հայերի պատգամաբերները մինչև V դարի երկրորդ կեսը հարկադրված էին պայքարել աղվանական ժողովրդի հեթանոսական տարրերի դեմ:

IV դարի սկզբին Գրիգորիսը՝ Վրթանեսի ավագ որդին,

---

[1] Մովսես Կաղանկատվացի, Ա, գլ. ժա, էջ 14–22:

նշանակվեց վրացիների և աղվանների եպիսկոպոս: Նրա գործունեության վերաբերյալ Մովսես Կաղանկատվացու հաղորդումը կարևորագույն կետերում համապատասխանում է Փավստոս Բուզանդի տեղեկություններին հետ, որոնց պատմական հուսալիությունը կասկած չի հարուցում: Նրա ժամանակ Աղվանքում՝ Կուրից այն կողմ, դեռ ուժեղ հեթանոսության դեմ երիտասարդ քրիստոնեության պայքարը պետք է շատ աստիճ եղած լինի: Մովսեսն այդ մասին պատմում է հետևյալը. Յոի թագաքի մազդեզական կրոնի հետևորդ բնակիչները, որոնց Գրիգորիսը ցանկացել է նկեղեցի կառուցել, բմբոստացան Աղվանից թագավորի դեմ և սպանեցին քահանային՝ Գրիգորիսի աշակերտին, որին նա թողել էր նրանց քաղաքում: Խռովարարները պարսիկներից օգնություն են ստանում, և Արշակացիները գրավում են քաղաքը: Այս դեպքը պետք է պատահած լինի աղվանական թագավոր Վաչագան (Վաչե) Քաջի[1] ժամանակ: Երիտասարդ Գրիգորիսի ճակատագիրը շատ ողբերգական էր: Նա իր առաքելական գործունեությունը ծավալեց մինչև Աղվանից երկրի ամենահեռու սահմանային երկրամասերը, եկավ մասագետների թագավոր Սանատրուկի մոտ (Փավստոսի մոտ՝ Սանեսան), որն իրեն թե Արշակունիների տոհմից էր, և նրան ու իր բանակին քարոզեց Ավետարանը: Երբ, սակայն, նա նրանց կչտամբեց իրենց կռապաշտամունքության համար և նրանց հանձնարարեց խաղաղորեն ապրել, նրանք ասացին նրան. «Դա Հայոց թագավորի կնգծավոր խորամանկությունն է՝ մեզ Հայոց երկիրը կռապաստուց նա պահելու համար: Ինչո՞վ պետք է մենք ապրենք, եթե չկռապաստենք»: Դրանից հետո Գրիգորիսին կապեցին մի ձիու պոչից և քարշ տալով՝ սպանեցին: Սրբի դիակը նրա բնակիչները տարան Հարանդ գավառի Ամարաս գյուղը և այնտեղ ամփոփեցին նրա պապի կողմից կառուցված եկեղեցում: Մովսեսի այս ամբողջ հաղորդումն ուղղակի կամ անուղղակի կերպով փոխառված է Փավստոսից:

Աղբյուրների բացակայության հետևանքով Աղվանքի եկեղեցու՝ IV դարի երկրորդ կեսի պատմությունը մեզ ամբողջովին անհայտ է: Այդ դարի վերջին մենք Փավստոսի մոտ հանդիպում

[1] Թագավորների ցանկը Մովսեսի մոտ այնքան անճիշտ է, որ կարելի էր համարձակվել այս Վաչեին նույնացնել այնտեղ նշված համանուն իշխաններից մեկի հետ:

Ննք Աղվանից Ուռնայր թագավորին (Բ, պլ. դ), որը Հայոց Պապ թագավորի ժամանակ Շապուհ II-ի հետ դաշնակցած՝ կռվում է հայերի դեմ: Արդյոք նրա ժամանակ Աղվանքում Պարսկաստանի քաղաքական ազդեցության հետ միասին նաև կրոնականը չէ՞ր հաղթել:

*Աղվանական եկեղեցու համար մի նոր դարաշրջան է բացում հայկական, վրացական և աղվանական այբուբենները ստեղծող Մեսրոպ Մեծը (մահացած՝ 439 թվականին)՝ հայ ամենահանճարեղ հոգևորականներից մեկը: Աղվանական այբուբենի ստեղծումով նա, ինչպես ոչ որևէ մեկ ուրիշը, նպաստեց այդ երկրի հոգևոր զարգացմանը: Երկրի թագավոր Եսվաղնը (Արսվաղ, Արսվագն, Էսվաղնն) և սուրբ Եպիսկոպոս Երեմիան հրաման տվեցին հավաքել պատանիների և նրանց սովորեցնել կարդալու և գրելու արվեստը: Կորյունի վստահելի տեղեկության վկայության համաձայն այբուբենի ստեղծումից հետո չուտով Սուրբ Գիրքը թարգմանվեց աղվաներեն, «որի միջոցով,— ասում է Կորյունը,— Աղվանքի բիրտ, ծույլ և գաղանարարո բնակիչները ծանոթացան մարգարեներին, առաքյալներին և Ավետարանի ժառանգորդներին, և այլևս անտեղյակ չէին աստվածային բոլոր ավանդություններին: Այդ նույն ժամանակ «սատանայակիր և դիւամոլ ազգին» Աղվանքի աստվածավախ արքայի կողմից խստագույն հրաման է տրվում հնազանդվել Քրիստոսի ամենահնչեղ լծին (Համմս. **Կորյուն**, Վենետիկ, 1894, էջ 31): Մայրենի լեզվով դասավանդող դպրոցների հիմնադրմամբ և թարգմանական գործունեությամբ քրիստոնեությունն Աղվանքում արդեն կարող էր հասնել տևական ծաղկման ու նկրքին ամրապնդման, եթե նրա հաջողությունները չխոչընդոտվեին պարսից թագավոր Հազկերտ II-ի (438-457) կրոնական անհանդուրժողականությամբ: Դեռ նրա նախորդ Վռամ V-ի օրոք Հայաստանում թագավորությունը վերացվել էր, և երկիրը վերածվել էր պարսկական մի մարզի (429 թվականին), ինչը հռոմեացիները Հայաստանի իրենց մասի հետ արդեն վաղուց արել էին: Աղվանքը նույնպես, որի թագավորները պարսից թագավորների հետ ազգակցական կապ ունեին, գտնվում էր պարսկական գերիշխանության ներքո: Այդ երկու հարևան երկրների քաղաքական թուլությունը Հազկերտ II թագավորին հնարավորություն ընձեռնեց վճռականորեն հանդես գալ քրիստոնեության դեմ: Երկու երկրներին հրամայվեց մազդեզականություն հռչակել պաշտո-*

նական կրոն: Պարսկական զորքերը, որոնք դրանից կարճ ժամանակ առաջ Հոների երկրում պատերազմ էին մղել, այժմ մոգերի բազմությունների հետ չարժվեցին դեպի Ապվանք: Մովսես Կաղանկատվացու (Բ, գլ. ը)՝ Եղիշեից վերցված տեղեկության համաձայն[1], ապվանները մի պատվիրակություն ուղարկեցին հայերի մոտ նրանցից օգնություն խնդրելու համար: «Պարսից զորքը,— ասում են նրանք,— որը Հոների երկրում էր, վերադարձավ ու նկավ-մտավ մեր երկիրը. նաև մեծ քանակությամբ այլ այրուձի նկավ (պարսից) արքունիքից: Բացի այս երկուսից, երեք հարյուր կրոնասույցներ էլ են բերել իրենց հետ ու պատակատում են երկիրը՝ ոմանց իրենց կողմն են քաշել ու կամենում են նվաղեցնել ձեզ զրկել: Արքայի հրամանով բոլորի վրա ճնշում են գործադրում ասելով. «Եթե կամավոր կերպով ընդունեք մեր կրոնը, պարգևների ու պատիվների կարժանանաք արքայի կողմից, և պետական հարկը ձեզ կդիջվի: Իսկ եթե կամավոր կերպով չանեք այդ բանը, հրաման ունենք գյուղերում, կայվածքներում ատրուշաններ հիմնելու, վառվող կրակը ներսը դնելու և մոգեր ու մոգպետներ նշանակելու իբրև այս երկրի օրենսդիրներ: Իսկ եթե մեկնումեկը չենթարկվի, մահվան կդատապարտվի, և այդպիսիների կինն ու որդիները կտարագրվեն երկրից»: Հայերն իրենց զորքի մի մասը Վարդան Մամիկոնյանի զլխավորությամբ ուղարկեցին ապվաններին օգնության: Ըստ Եղիշեի և Մովսեսի, նրանք Խաղխաղ քաղաքի մոտ պարսկական զնդակչիկ ուժերի դեմ պետք է վայրկան հաղթանակ տարած լինեն (450-451): Պարսկական բանակը նրանց կողմից ետ մղվեց, մոգերը սպանվեցին, իսկ նրանց ատրուշաններն ավերվեցին: Քրիստոնյաների հաջողություններ, սակայն միայն ժամանակավոր էին: Անձնվեր հերոսականություններ, որով նրանք պայքարում էին իրենց կրոնի համար, բավարար չէր պարսիկներին տևական դիմադրություն ցույց տալու համար: 451 թվականին հայոց ապստամբությունը ճնշվեց: Այն երկպատակության ժամանակ, որը Հազկերտ II-ի մահից հետո (457) բռնկվեց նրա որդիներ Որմիզդ III-ի և Պերոզի միջև, բռնությամբ մագդեզականություն ընդունած Ապվանից Վաչե Թագավորը՝ մոր կողմից նշված երկու պարսիկ իշխանների ազգական, ապստամբեց պարսիկների դեմ,

[1] Եղիշեի վարդապետի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Վենետիկ, 1828, Գ:

մասագետներից և կովկասյան այլ լեռնարնակ ժողովուրդներից ստացավ օգնություն և զարձյալ ընդունեց քրիստոնեություն: Ըստ երևույթին, սակայն, այս ապստամբությունը նույնպես, որն բռնեց Եղիշեի տևել է մինչև Պերոզի հինգերորդ տարին (463 թ.), ի վերջո պարսիկների կողմից հաջողությամբ ճնշվել է: Վաչե Թագավորը հրաժարվեց գահից և իր կյանքի մնացած մասն անցկացրեց որպես ճգնավոր: Վաչեից մինչև նրա եղբորորդի Վաչագան Բարեպաշտը[1], որը պարսից Վաղարշ Թագավորի կողմից (484–488/9) բազմեցվեց ազվանական գահին, Ազվանքը մնացել էր առանց Թագավորի[2]: Այդ ժամանակամիջոցում երկիրն բռնեց երևույթին կառավարվում էր պարսիկ մարզպանների կողմից: Մաղդեզականությունն այդքն կարող էր երկրում ամրապնդվել (Համմմ. **Մովսես Կաղանկատվացի**, Ա. գլ. ժդ): Այնուհանդերձ Հեփթաղների կողմից Պերոզ Թագավորի սոսկալի պարտությունից հետո (484 թ.) Պարսկաստանն այնքան թուլացավ, որ Վաղարշի կողմից կառավարումն ստանձնելու ժամանակ ստիպված էր հաշտվել իր տիրապետության ներքո գտնվող քրիստոնյա երկրների տարածքից պարսկական պետական կրոնն ամրոջովին դուրս բերելու մտքի հետ: Բացի այդ, ազվանները զարձյալ ձեռք բերեցին իրենց քաղաքական ազատությունը և տեղական կառավարող տոհմից վերոնշյալ Վաչագան Բարեպաշտը՝ մի շատ ջերմեռանդ քրիստոնյա, զարձավ նրանց Թագավորը: Մովսեսը նրա մասին տեղեկացնում է, որ նա ջանում էր քրիստոնեությունից հեռացած ժողովրդին կրկին զարձի բերել և այն զարձնել երկրի ընդհանուր կրոնը: Նա խստորեն հետապնդում էր ժողովրդի մեջ առկա բոլոր հեթանոսական տարրերին, նախկին հեթանոս կրոնավորների երեխաների համար հիմնում էր դպրոցներ և կարգադրում նրանց ուսուցանել ուղղահավատության

---

[1] Վաչագան Բարեպաշտը Վաչեի եղբոր՝ Հաղկերտի որդին էր (Մովսես Կաղանկատվացի, Ա, գլ. ժէ):

[2] Ըստ Մովսեսի, Թագավորակերպ չրջանն Ազվանքում պետք է լ (=30) տարի տևած լինի: Այս տվյալն անհերևարար սխալ է, քանի որ գահից Վաչեի հրաժարումից հետո (մոտ 463 թվականին) մինչև Վաչագան Բարեպաշտի՝ գահ բարձրանալը (մոտ 484 թվականին) մոտավորապես 20 տարի պետք է անցած լինի: Գրիչները լ=30 և ի=20 տառերը հաճախ են չփոթում միմյանց հետ: Հավանարար պետք է ճշդրտման համար լ=30-ը փոխարինել ի=20-ով:

սկզբունքներով: 488 թվականին Աղվենում (Ուտի) նրա նախագահությամբ մի եկեղեցական ժողով գումարվեց, որը պետք է կարգավորեր ժողովրդի տարբեր դասերի փոխադարձ հարաբերությունները: Ժողովին մասնակցեցին հոգևորականներ և ազատներ: Ժողովի որոշումներին վերաբերող գրության մեջ (Ա, գլ. իզ) որպես գլխավոր հոգևորական հիշատակվում է Շուշվաղիչոն, որը կրում էր «Պարտավի արքեպիսկոպոս» կոչումը: Այն ժամանակ Աղվանից կաթողիկոսություն գոյություն չուներ, քանզի այն սկսվում է միայն VI դարից: Այդ ժողովի որոշումները մշակութապատմական առումով չատ հետաքրքիր են և թույլ են տալիս մեզ խոր հայացք նետել այն ժամանակ Աղվանքում տիրող բարքերի վրա:

Աղվանից եկեղեցու համար դարակազմիկ նշանակություն է ունենում Հայոց Բարկեն Ա Ողմանեցի կաթողիկոսի կողմից 491 թվականին Վաղարշապատում գումարված եկեղեցական ժողովը, որտեղ հայերը, աղվաններն ու վրացիները նզովեցին Քաղկեդոնի եկեղեցական ժողովը և Լևոնի նամակը (Բ, գլ. խէ, էջ 214): Դրանով երեք եկեղեցիները միացան միաբանակության, որն այն ժամանակ ըստ երևույթին հաղթանակել էր նաև Հռոմեական կայսրությունում, քանի որ կայսրեր Զենոնը (474-491) և Անաստասիոսը (491-518) քաղկեդոնականների կրքոտ հակառակորդներն էին:

Հաջորդ հարյուրամյակներում Աղվանից եկեղեցու զարգացման մասին Մովսեսից մեզ միայն կցկտուր տեղեկություններ են հաղորդվում:

Մինչեվ V դարում աղվանական եկեղեցին ղեկավարող հոգևորականներն եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի կոչումն էին կրում, ապա VI դարից նրանք անվանվում են «Աղվանքի կաթողիկոսներ»: «Աղվանքի, Լփինքի և Ջողի կաթողիկոս» բարձր կոչումը, ըստ Մովսեսի, հայերը պետք է սկզբում աղվանական գլխավոր հոգևորական Տեր-Արասին (VI դար) տված լինեին (Գ, գլ. իզ, էջ 275): Տեր-Արասին ուղղված հայոց կաթողիկոս Հովհաննես Բ Գարեղենացու մի նամակում նա նրան վաստաչիորեն անվանում է «Աղվանքի կաթողիկոս» (Բ, գլ. է): Գրությունն աղվանական հոգևորականությանը նախազգուշացնում է նեստորականներից «ոչխարի զգեստով գիշատիչ գայլերից», որոնք Պետրոսի վանքից գնացել էին Աղվանք՝ նեստորականության չար մոլախոտն անմեղների հոգիներում սերմա-

նելու համար, և բացի այդ պարունակում է Հայոց Եկեղեցու հավատո հանգանակը և երրորդությունը Դվինի Եկեղեցական ժողովից (Հայոց Ներսես Բ Բագրեւանդցի կաթողիկոսի ժամանակ) կցված հետևյալ բառերի հետ. «Դու խաչվել ես մեզ համար»: Տեր-Արասը նամակը ստանալուց հետո պետք է ուղղահավատությունից հեռացած վանականներ Թոմասին, Եղիային, Բնոտին և Իրասին երկրից վտարած լինի: Ազվանքի պատրիարքների աթոռը Հայոց ժամանակագրության սկզբում (552 թվականին) խաղարների ներխուժման պատճառով Ջողից տեղափոխվեց Պարտավ:

Ժամանակակից աղբյուրների սակավության և հետագա հայ պատմագիրների ու ժամանակագիրների՝ միմյանցից տարբերվող տեղեկությունների հետևանքով չատ դժվար է պարզորոշ ուրվագծել աղվանական Եկեղեցու՝ VI դարի երկրորդ կեսի և VII դարի սկզբի պատկերը: Երբ Հայոց Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակ Հռոմեական Հայաստանում նշանակվեց մի տեղական կաթողիկոս՝ Հովհաննես, ըստ Մովսես Կաղանկատվացու, աղվանական Եկեղեցին բաժանվեց հայկականից, և աղվանից կաթողիկոսները Գրիգոր Լուսավորչի հաջորդների կողմից իրենց ձեռնադրումն ստանալու փոխարեն ձեռնադրվում էին տեղական եպիսկոպոսների կողմից: Բաժանված երկու Եկեղեցիները Հայոց Աբրահամ կաթողիկոսի ժամանակ պետք է կրկին միավորված լինեն (Բ, գլ. խը, էջ 217): Այնուհանդերձ Անանիայի հաղորդումն ամբողջովին տարբերվում է Մովսեսի հաղորդումից (Համմտ. «Արարատ», 1897, մարտ, էջ 137): Ըստ նրա հաղորդման, Մավրիկիոս կայսրն Աբրահամի տասնիններորդ տարում, այսինքն՝ Հայոց Եկեղեցուց վրացականի բաժանումից հետո Հռոմեական Հայաստանի համար նշանակել է մի առանձին կաթողիկոս՝ Հովհաննես Գոգահոտցուն: Դրանից հետո աղվանական Եկեղեցին Կյուրիոնի հանդեպ տածած խանդից, որը վրացական Եկեղեցին անկախ էր դարձրել, պետք է հայկականից բաժանված լինի: Այնուհետև, սակայն, Հայոց Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի՝ Աբրահամի հաջորդի երրորդ տարում աղվանները դարձյալ ճանաչել են Հայոց կաթողիկոսության գերագույն իշխանությունը: Մովսես Կաղանկատվացու հաղորդմանը Հայոց Եկեղեցուն վերաբերող հատվածի Կոմբեֆիսի կողմից ընդօրինակված հունականը համապատասխանում է այն հարցում, որ նա Մավրիկիոսի կողմից հատուկ պատրիարք Հովհաննեսի նշանակումը նույնպես վերագրում է Մովսես կաթողիկոսի

ժամանակին և Աբրահամին դարձյալ միավորել է տալիս Հայոց Եկեղեցին: Անանիայի հաղորդման մեջ ամեն դեպքում հավաստի չէ այն տվյալը, որ Մաշտոցը Աբրահամի տասնիններորդ տարում է նշանակել Հովհաննեսին, քանի որ Մաշտոցն այդ ժամանակ վաղուց այլևս չէր կառավարում: Երկու հաղորդումները, սակայն, միմյանց համապատասխանում են այն կետում, որ Հայոց կաթողիկոսության բաժանումը հանգեցրել է Աղվանքի հետ պառակտման, քանի որ աղվանական հոգևորականությունն այլևս չէր կարող իմանալ, թե երկու կաթողիկոսներից որին պետք է ճանաչեր որպես Գրիգոր Լուսավորչի ճշմարիտ հաջորդի:

VII դարի վերջերին՝ Հայոց Սահակ Գ Զորավորեցի կաթողիկոսի ժամանակ (677–703), աղվանից եպիսկոպոս Իսրայելի կողմից հոները դարձի բերվեցին՝ ընդունելով քրիստոնեություն: Այդ կարևոր իրադարձության վերաբերյալ Մովսեսի մանրամասն հաղորդումն արժևորավոր է ինչպես աշխարհագրագետի, այնպես էլ պատմաբանի համար (Հմմտ. Բ, գլ. լթ–խէ, էջ 188–211): Դարձի բերումն սկզբնապես ուներ քաղաքական նպատակ: Աղվանական իշխանավորները վտրձում էին այդ անհանգիստ ժողովրդին, որը մշտապես հարձակումներ էր կատարում իրենց երկրի վրա, կրոնական կապով սանձահարել և հանգստացնել ու դարձնել խաղաղ դաչնակից: Աղվանական առաքելական պատվիրակությունը, որը գլխավորում էր Իսրայել եպիսկոպոսը, մի մեծ ճամփորդությունից հետո Լփինքով և ճիղրերի երկրով (Սիլվիոն)[1] հասավ Վարաչան՝ հոների երկրի մայրաքաղաքը, և այնտեղ ողորմածարար ընդունվեց երկրի իշխան Ալփ Իլթվերի կողմից: Հոները, որոնք այն ժամանակ դեռ հեթանոսներ էին, ըստ Մովսեսի, պաշտում էին կրակը և ջուրը, արեգակը և լուսինը և այնպիսի արարածների, որոնք նրանց զարմանահրաչ էին թվում: Բացի այդ նրանք պաշտում էին ճանապարհների աստվածություններին և մի հսկայի, որին անվանում էին Թանգրիթ խան («**Թանգրի խան աստուած, զոր Պարսիկք Ասպանդէատ կոչեն**», (Բ, գլ. խ, էջ 191): Նա ըստ երևույթին եղել է նրանց գլխավոր աստվածը: Կաղնիների առաջ, որոնք նվիրարերված էին նրան, զոհերը զոհաբերում էին ձիերին: Զոհաբերման ժամանակ նրանք

[1] «Rursus ad Albaniae confinio tota montium fronte gentes Silvorum ferae, et infra Lupeniorum, mox Diduri et Sodi», տե՛ս Plinius, N. H., VI, 29, Detlefsen.

զոհաբերվող կենդանու արյունը լցնում էին կաղնու տակ, իսկ մորթն ու գլուխը կախում էին ծառի ճյուղերից: Իսրայել Սպիսկոպոսն իշխանի և նրա բանակի առջև մեծ հաջողությամբ քարոզեց քրիստոնեական կրոնի սկզբունքները և նրանց դարձրեց ուղղահավատ: Նա ավերեց հեթանոսական տաճարները, արմատախիլ արեց սրբազան ծառերը և անհնազանդ քրմերին կարգադրեց այրել: Դրանից հետո իշխան Իլիթվերի ցանկությամբ Իսրայելը նշանակվեց Հոնների երկրի Սպիսկոպոս[1]:

---

[1] Այստեղ (բնագրի 31-րդ էջ) ավարտվում է Մովսես Կաղանկատվացուն նվիրված՝ Հ. Մանանդյանի ուսումնասիրության բուն տեքստը: 32-48-րդ էջերում դնտեղված են Կաղանկատվացու 2-րդ գրքի ա. («Պատմությունն ի դէպ գրոցս»), ժ. («Յառաջին ուխտատան նահանջէն սկիզբն պատմողարար»), ժա. («Վասն դումարելոյ Խոսրովու բնդդէմ արքային Յունաց և յաղթահարելոյ զնա զամս բազումս սրով և պերութեամբ աչխարհին Հոովմայեցւոց») և 1-ին գրքի իդ («Սահմանադրութիւն կանոնական ի Վաչագանայ՝ Աղուանից արքայէ եղեալ ի ժողովոյն, որ յԱղուէնն եղև») գլուխների վերնագրերն թարգմանությունը, որոնք պակաս են առկ – Թարգմ.):

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ – Александр Аннинский. Древние армянские историки, как исторические источники. Одесса, 1899, 133 стр.

Ալեքսանդր Աննինսկի. Հայոց հին պատմիչները որպես պատմության աղբյուր, Օդեսա, 1899:

Հայագիտության պատմական-բանասիրական ուսումնասիրությունների բաժինը մի նոր գրքով հարստացավ: Ալ. Աննինսկին իր աշխատասիրության մեջ քննում է մեր հնագույն պատմագիրների երկերը, և հռոմեական կամ բյուզանդական աղբյուրների համեմատությամբ՝ մեր ազգային ավանդության թերի և անվավերական գծերն է ցույց տալիս: Հեղինակի կարծիքով, Հայաստանի հնագույն պատմությունն ուսումնասիրելու համար, վստահելի աղբյուրներ են՝ սեպագիր արձանագրությունները, հունաց և հռոմայեցոց գրվածքները և Հայաստանի հնագիտական հիշատակարանները: Հայոց անցյալի նախնական չրջանը և Արշակունիների պատմությունը նախ պետք է օտար աղբյուրների օգնությամբ լուսաբանել, և միայն այդ աշխատանքից հետո՝ պիտի կարողանանք ազգային ավանդության արժանահավատ կետերը որոշել:

Այս կարծիքը բանասերների չրջանում այժմ՝ արդեն գրեթե ընդհանուր է: Նոր եղանակի աշխատանքները գուցե մոտ ապագայում մեր առջև բաց աննն հին հայոց քաղաքական կյանքի իսկական պատկերը:

Պարոն Ա. Աննինսկու ուսումնասիրած պատմագիրներն են՝ Մար Աբաս (կամ Իրաս) Կատինան, Ագաթանգեղոսը, Ջենոբ Գլակը, Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին:

Ժամանակակից բանասերների մեծ մասն այս երկի մեջ հիշված չեն. պետք է ենթադրել, որ նորագույն հետազոտությունները հեղինակին անծանոթ են: Այս թերությունը պատճառ է եղել, որ պր. Աննինսկին նորից առաջ է բերում այնպիսի խնդիրներ, որ արդեն արծարծված և մասամբ պարզված են: Հեղինակը Ագաթանգեղոսին և Փավստոսին ազգով հույն է կարծում, որ

ավելի քան կասկածելի է (տե՛ս, հայր **Հակ. Տաշյան,** Ուսումնասիրություն Ագաթանգեղեա գրոց, Վիեննա, 1891. H. Gelzer, Die Anfänge der armenischen Kirche. Ber. d. Sächs. Gesell. d. Wissen hist.-philol. Classe. 195, էջ 109: **Ստ. Մալխասյանց,** Ուսումն. Փավստոս Բուզանդի պատմութ., Վիեննա, 1896):

Պր. Աննինսկի ենթադրում է, որ Ագաթանգեղոսի այժմյան հայերեն օրինակը թարգմանություն է մի հին հունարեն բնագրից, որ հետո կորավել է (?), իսկ այժմյան հունարենը թարգմանված է հայերենից (տե՛ս, Հ. **Տաշյան,** Ագաթանգեղոս):

Ուսուցչապետ Գ-ր. Խալաթյանցի «Ձննոր Գլակ. Համեմատական ուսումնասիրություն, Վիեննա, 1893» աշխատասիրությունը նույնպես ծանոթ չէ հեղինակին: Ասորի եպիսկոպոսի «Պատմութիւն Տարօնոյ» գրվածքի գլխավոր մասը պր. Աննինսկին վավերական է համարում, իսկ սկիզբը և նամակները հետագա դարերի հավելված, սակայն պր. Խալաթյանցի ուսումնասիրությունից հետո՝ բանասերները համաձայն են, որ այդ երկը պատմական արժեք չունեցող վիպագրություն է:

Նորագույն հետազոտություններից դրեթե անկախ՝ պր. Աննինսկին հին պատմագիրների ժամանակը որոշում է այսպես՝ Մովսես Խորենացի VI դար (սկզ.), Ագաթանգեղոս IV դ. վր.– V դ. սկ., Փավստոս V դ., Ձննոր Գլակ IV դար:

Ուսուցչապետ Ա. Կարիերի փաստերը, որոնց վրա հիմնվելով բանասերների մի մասը Մովսես Խորենացուն VII–VIII դդ. պատմագիր են ընդունում, պր. Աննինսկին թերի է գտնում և ինքը Մովսես Խորենացուն VI դարի սկիզբն է դնում, իսկ Մար Արաս (Իբաս) Կատինայի պատմությունը IV կամ V դ. (Ք. Հ.) գրվածք է համարում: Սոզոմենոսը (III, 16) հիշում է Եփրեմ Ասորու Մարաս, Ավվաս անունով երևելի աշակերտներին և հեղինակը մի հանդուգն ենթադրություն է անում, թե գուցե սրանք Խորենացու Մար Արասի հետ մի որևէ կապ ունենան:

Պր. Աննինսկու աշխատության այն մասերը, ուր նա փորձում է պատմագիրների անձը, ժամանակը կամ պատմական արժեքը ստուգել, չատ քիչ նորություն են պարունակում: Սակայն գրքի այն հատվածները, որոնց մեջ հեղինակը, հոմնական կամ բյուզանդական աղբյուրների օգնությամբ, աշխատում է մեր պատմագիրների սխալները ուղղել և պատմական եղելությունը ճշտել, գիտական արժեք ունեն, և բանասերների ուշադրության արժանի են, թեպետ և հարուցված խնդիրները դրեթե բոլորն էլ

վիճելի են: Ըստ Խորենացու Տրդատ III-ը գահ է բարձրանում 287 թ. Ք. հ., որ Դիոկղետիանոսի կայսրության երրորդ տարին է. հեղինակը կարծում է, որ այս տեղեկությունը չի հաստատվում Ամմիանոսի. Մամերտինի, Եվսերիոսի և Սոզոմենոսի վկայություններով: Ըստ Աննինակու Տրդատ III-ի թագավորության ժամանակը չորրորդ դարի սկիզբն է, մոտավորապես՝ 302-344 (?), իսկ Հայոց դարձը 315 թ. հետո (?): Պրոբոս կայսրը (276-282) պարսիկների հետ հաշտության դաշինք չէ ունեցել. Խորենացին Պրոբոս կայսրին չփոթել է Սիկորիոս Պրոբոսի հետ, որին Դիոկղետիանոս 297 թ.՝ բանակցության համար ուղարկել էր պարսից Ներսեհ արքայի մոտ: Հեղինակին կարելի է առարկել, որ բանասերները Պրոբոս կայսրի դաշնագրության տույզ են համարել՝ Vopiscus-ի վկայության վրա հիմնվելով (Vopiscus, Probus, 17):

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ — Александр Аннинский. История армянской церкви (до XIX века). Кишинев, 1900, XI+ 306+VI стр.

Յուրաքանչյուր պատմական երկ քննելիս հարկավոր է, ամենից առաջ ուշադրության առնել փաստերի վավերական լինելը և ճշտությունը և ուսումնասիրության եղանակը՝ մեթոդը: XIX դարի գիտական և քննական ոգին պատմական հետազոտությունների մեջ նրանով արտահայտվեց, որ սկսեցին հին ավանդական պատմագրական հում նյութը՝ պատմական աղբյուրները, մանրակրկիտ կերպով քննել՝ աշխատելով դուրս ուղիղը սխալից, ղրույցը և առասպելը պատմական իրողությունից և հին պատմագիրների տգետ, կողմնապահ կամ միտումնավոր դատողություններն անաչառ, առարկայական (objektiv, объективный) վերաբերմունքից դեպի պատմական անցքերը: Այսպիսով նաև նորագույն հայագետ մասնագետները՝ նույն քննական ոգուն և ուղղությանը ենթարկվելով՝ իրենց բազմաթիվ ուսումնասիրություններով աշխատել են և աշխատում են դուրս, մաքրել և ճշտել հայոց անցյալի ավանդական առատ նյութը, որպեսզի հնարավոր լինի՝ ուղիղ փաստերի վրա հենվելով՝ չունչ տալ անկենդան պատմագրական փաստերի կույտերին, և պատմական նորագույն մեթոդների համաձայն՝ կարելի լինի որոշ գիտական սիստեմով մշակված և ճշտված փաստերի և աղբյուրների օգնությամբ ամփոփել և նկարագրել հայ ժողովրդի քաղաքական կամ եկեղեցական պատմությունը:

Թե՛ ուսումնասիրության եղանակի և թե՛ պատմագրական նյութի և փաստերի ճշտության տեսակետից՝ պր. Ա. Աննինսկու «Հայոց եկեղեցու պատմություն» ուսումնասիրության մեջ բացակայում է բանասիրական և պատմագիտական նորագույն քննական և արդարամիտ ոգին և ուղղությունը: Այս աշխատությունը մտնում երկարնակի միտումնավոր ուղղությամբ կազմված և մեծ մասամբ՝ սխալ ու թերի պատմագրական փաս-

տերի վրա հիմնված մի երկ է, և մի ապացույց է, որ ատավիզմը (հետադեմություն) գոյություն ունի նաև գիտական գրականության մեջ, որովհետև միջնադարյան նեղսիրտ, անարդար և մոլեռանդ ոգին և կրոնական անհանդուրժողականությունը ցույց են տալիս իրենց բնորոշ հետադարյան դեմքը սև տառերի և տողերի միջից. հիշեցնելով, որ իրենք դեռ գոյություն ունեն որոշ՝ իրը գիտական երկերում:

Դժբախտությունն այն է, որ բազմաթիվ անտեղյակ ընթերցողներ, որոնք Հայոց եկեղեցական պատմության վերաբերյալ նորագույն աշխատություններին և պատմական ստույգ հիշատակագրերին անծանոթ են, կարող են մոլորվել և ընդունել Աննինակու ադամադված միտումնավոր լուսաբանություններն իբրև իրական պատկեր Հայաստանյայց եկեղեցու անցյալի: Բարեբախտաբար, հնարավորություն ունենք մատնացույց անելու այս գրքի առաջաբանի վրա, ուր Հեղինակն ինքն որոշում է յուր պատմական մեթոդը. այնպես որ նույնիսկ անփորձ ընթերցողը Հեղինակի խոսքերից զգաստիար կկազմի այս ուսումնասիրության էական թերության մասին: Գրքի առաջաբանում՝ էջ 7, տող 24–29, պր. Ա. Աննինակին պարզապես չնշում է, որ «Նրա նպատակն է եղել ըստ կարելվույն հավաքել հայկական և ուրիշ աղբյուրներից Հայոց եկեղեցական պատմության վերաբերյալ ոչ-հայի համար բոլոր մատչելի տեղեկությունները և տալ հավաքած փաստերին յուր կարողության չափ լուսաբանություն և մեկնություն, դեկավարվելով **ուղղափառ հետազոտողի** խստիվ անաչառությամբ»: Իր այս սկզբունքին Հեղինակը հավատարիմ է մնացել. և որովհետև ուղղափառ հետազոտողի աչքում Հայ լուսավորչականները. Բագրևանդի ժողովից բաժանվելուց հետո, հերետիկոսներ և աղանդավորներ են պատմում՝ այդ պատճառով էլ բոլոր բարձրագույն Հայ Հոգևորականները և ընդհանրապես ամբողջ Հայաստանյայց եկեղեցին վատաբանված և սև գույներով է նկարագրված. մանավանդ պատմական այն չրջաններում՝ երբ Հայաստանյայց եկեղեցին համարձակ կերպով դիմադրում և հակառակում է բյուզանդական եկեղեցուն, ունենալով իր սեփական կարծիքը միարնակության և երկարնակության խնդիրների մասին: Հայ Հոգևորականների ինքնուրույն անկախ համոզմունքներն աստվածաբանական դավանական որոշ հարցերում չարունակ անհանգստացնում և վրդովեցնում են

այս գրքի «անաչառ» պատմաբանին, և պր. Աննինսկին դայրացած բացականչում է. «Հայ ժողովրդի մեծամասնությունը, աստվածաբանության ներքինությունը չհասկանալով՝ կուրորեն պաշտպանում էր յուր պապերի հավատը (էջ 137)»: Իսկ դուք պր. Աննինսկի, միթե կույր չե՞ք, որ a priori Ձեր դավանական հասկացողություններն անհերքելի նորոր ճշմարտություններ համարելով՝ ամեն մի ձեղանից տարբեր կերպ մտածող անհատ համարում եք «կույր», «փանատիկոս», «հերետիկոս», «տգետ», «ամբարտավան», «բամբասող», «խավարամիտ» և այլն: Ձեր աչքում՝ Հովհան Օձնեցին փանատիկոս է, որ «մտածում է հերետիկոսի նման», «Ստեփանոս Սյունեցին, թեպետ Հայոց եկեղեցում համարվում է սուրբ, սակայն ծայրահեղ միարնակ է», իսկ Գրիգոր Նարեկացին՝ որովհետև ձեր կարծիքով հույների կողմնակից էր (?), ուստի և նրա սրբությունն ակնհայտնի է: Իսկ եթե վաղը ձեզ ապացուցաննն, որ Գրիգոր Նարեկացին ևս հավատարիմ է եղել Հայաստանյայց եկեղեցու դավանական սկզբունքներին՝ իհարկե դուք նրան ևս կտեղափոխեք ձախ կողմը՝ համարելով նրան «կույր», «փանատիկոս», «հերետիկոս», «կեղծավոր» և այլն: Եթե պր. Աննինսկին Հայ հոգևորականների և Հայաստանյայց եկեղեցու թերությունները և պակասությունները մատնանիշ աներ՝ պատմագրական վավերական և ստույգ փաստերի վրա հենվելով և հարգելով մեր ազգային եկեղեցու դավանական ինքնուրույն հասկացողությունները, ինչպես այդ վայել է մի իսկապես անաչառ պատմաբանի՝ իհարկե նրա արդարամիտ հարձակումները կընդունեինք և կհամաձայնեինք նրա հետ. սակայն խղճի ազատության և ուրիշի համոզմունքները հարգելու նորոր զգուշավարներն օտար լինելով այս հեղինակին՝ նա Հայ հոգևորականներին մեծ մասամբ վատաբանում է միմիայն այն պատճառով, որ նոքա աստվածաբանական խնդիրների մի մասը չեն հասկանում և ըմբռնում այնպես, ինչպես ինքը:

Գրքի առաջարանում հիշված աղբյուրներից երևում է, որ այս հեղինակը միանգամայն անծանոթ է Հայոց եկեղեցու պատմության վերաբերյալ բազմաթիվ մասնագիտական հետազոտություններին, որոնք գրված են հայերեն կամ գերմաներեն: Այդ լեզուները պր. Աննինսկին երևի չգիտե, ուստի և Գուտշմիդի, Ֆեետերի, Գելցերի, Տաչյանի և ուրիշ հայ կամ գերմանացի մասնագետների նորագույն աշխատություններից չի կարողացել

օգտվել: Պր. Աննինսկու գլխավոր աղբյուրներն են երկու կամ կևս դար առաջ գրված Կղեմես Գալանոսի և Հայր Մ. Ջամչյանի Հայանի աշխատությունները, ֆրանսերենի կամ ռուսերենի թարգմանված հայ մատենագիրները և բյուզանդական պատմագիրների և ժամանակագիրների մի քանի տեղեկությունները Հայաստանյայց Եկեղեցու մասին:

Յուրաքանչյուր պատմաբանից կարելի է և պետք է պահանջել, որ նա բանասիրական նախապատրաստական աշխատություններից օգտված լինի: Հայագիտության և Հայոց եկեղեցական պատմության վերաբերյալ ամեն մի մասնագիտական ուսումնասիրություն մի բար է՝ պատմական ամփոփման մեծ չենքի համար պատրաստված: Պր. Աննինսկին չի օգտվել նման նախապատրաստական աշխատություններից և այդ պատճառով՝ նրա գրվածքում սովորական են սխալ լուսաբանություններ մեր եկեղեցու պատմական այնպիսի երևույթների, որոնք այս կամ այն մասնագիտական երկում կամ հոդվածում ստուգված և ճշտված են: Այս աշխատության բոլոր պատմագրական սխալները կամ հեղինակի անարդար, կամայական լուսաբանությունները մատնանիշ անելու և քննելու համար՝ հարկավոր կլիներ մի ամբողջ գիրք գրել: Մեր համառոտ մատենախոսականում կբավականանանք միմիայն առաջին էջերի քննությունով: Ամեն մի մասնագետ պր. Աննինսկու գրքին ծանոթանալով՝ անձամբ կկարողանա ստուգել, որ գրքի չարունակության մեջ համարյա ամեն մի էջում նույն թերությունները կրկնվում են:

Յուր աշխատասիրության հենց առաջին էջում պր. Ա. Աննինսկին Հայոց պատմության ընդհանրացումների ընդհանրացումն է անում, հայ ազգի պատմական դերը և նշանակությունը որոշելով: «Անկասկած,— գրում է նա,— հայերը հին ժողովուրդ են: Սակայն դատելով այն բանի հիման վրա, որ ոչ մի նկատելի հետք չի մնացել, որը ցույց տար հին Հայոց քաղաքական գործությունը կամ նրանց կուլտուրական նշանակությունը՝ պետք է կարծել, որ հայերը չեն ունեցել ոչ այն և ոչ մյուսը: Ըստ երևույթին հայ ազգը եղել է միշտ մի կիսավայրենի ցեղ»: Արդյոք հարգելի հեղինակը տրամաղիր չէ՞ հայ ազգը համեմատելու հոտնեատների կամ քուրդերի հետ: Իրավ որ Հայաստանը մի մեծ քաղաքական ուժ չի եղել, սակայն ո՞ր բարեխիղճ և արդարամիտ մատենագետն ընդունակ կլինի ուրանալու

այն ակնհայտ իրողություն, որ մեր նախնիները իրենց ժամանակվա քրիստոնեական կուլտուրան թե՛ յուրացրել և թե՛ տարածել են հյուսիսային ցեղերի և ընդհանրապես Հայաստանի սահմանակից մանր ազգությունների շրջաններում: Այն դատողություն, թե հայ ազգը կիսավայրենի մի ցեղ է եղել՝ չափազանց տարօրինակ է մանավանդ այնպիսի մի պատմարանի բերանում, որը հին հայոց հարուստ մատենագրության բնկորների և փչրանքների վրա հենվելով՝ Հայաստանյայց եկեղեցու պատմությունն է գրում: Չէ՞ որ այդ գրականություն քրիստոնեական որոչ կրթության և կուլտուրայի արդասիք է: Պ<արոն> Աննինսկու բանասիրական անբարեխղճություն և կամայականություն այնքան մեծ է, որ վերոհիշյալ անարդար դատողությունից մի քանի տող ներքև անդիտակցարար ինքն իր ասածը ջրում է՝ հայերի ամենահնագույն պատմության մասին մի խիստ նպաստավոր, բայց սխալ կարծիք հայտնելով:

«Ասորեստանի բևեռագիր արձանագրություններում,— ասում է պր. Աննինսկի,— Սալմանասար III-ի ժամանակից սկսյալ հայերը հայտնի են ուրարտի (урартя?) անունով»: Այստեղ հմուտ պատմարանը չվոթում է նախ այն, որ Ուրարտուն երկրի անուն է և ոչ թե ազգի. իսկ երկրորդ՝ եթե հղինակը հայերին Ուրարտու երկրի ազգն է համարում՝ ապա ուրեմն հայերն իրենց պատմության ամենահին շրջանում՝ Ասորեստանի և Բաբելոնի նման, նշանավոր հին քաղաքակրթություն են ունեցել և պետական հզոր կազմակերպություն:

Նույն առաջին էջում հին հայոց հեթանոսական կրոնը նկարագրելու համար՝ պր. Աննինսկին հիշում է իբրև աղբյուր միմիայն Մովսես Խորենացուն: Այն ինչ հայոց հեթանոսական կրոնի ուսումնասիրության համար գլխավոր աղբյուրն է Ագաթանգեղոսը. կարևոր են նաև մի քանի տեղեկություններ Անանիա Շիրակացու երկերում: H. Gelzer-ի «Zür armenischen Götterlehre» (Berichte des König. Sächs. Gesellschaft der Wissenschaften, 1895) և հ[այր] Ղ. Ալիշանի «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» (Վենետիկ, 1895) ընդարձակ աշխատություններ նույնպես հղինակին անծանոթ կամ ան-

մատչելի են նրան: Սակայն պր. Աննինսկին ամենայն համարձակությամբ՝ մինչեայն Մովսես Խորենացու և Ստրաբոնի վրա հիմնվելով, թերի կամ սխալ տեղեկություններ է հաղորդում հայոց հեթանոսական կրոնի մասին՝ ընդամենը մի քանի տասնյակ տող և պիտական աներևակայելի թեթևամտությամբ եզրակացնում է, որ հեթանոսական չրջանում հայերն անտարբեր են եղել դեպի իրենց կրոնը: «Ժողովուրդը», նրա ասելով, «այդ չրջանում քիչ էր հետաքրքրվում հին և նոր աստվածներով, այլ յուր անմիջապաչտությունների և նախապաչտամունքների մեջ էր ապրում»: Մարդ ուղղակի զարմանում է այն տաղանդի և սրամտության վրա, որոնց օգնությամբ այս պատմաբանը, հայոց հեթանոսական կրոնի մասին միմիայն մի քանի կիսատ տեղեկությունների ծանոթ լինելով՝ կարողանում է իրենից 16 դար առաջ ապրող հեթանոս հայ ժողովրդի կրոնական զգացմունքի աստիճանը որոշել:

Այս ամենագետ պատմաբանը, որ բանասիրական և պատմական ամեն մի մութ և կնճռոտ խնդրի համար պատրաստի երևակայական պատասխաններ ունի՝ հայոց հեթանոսական չրջանի կրոնի մասին մի ուրիշ նոր տեղեկություն էլ է հաղորդում, իբրև թե հայերն այդ չրջանում իրենց կրոնական հավատալիքների չարքում ոչ մի ինքնուրույն բան չեն ունեցել և չեն ստեղծել: Այս տեսակ կամայական և անբարեխիղճ ընդհանրացումների թերությունները ցույց տալը նույնիսկ ավելորդ է:

Հայոց հեթանոսական կրոնը համառոտ կերպով նկարագրելուց հետո՝ պր. Աննինսկին խոսում է Թաղեոս, Թաղեոս Ղեբեոս, Բարդուղիմեոս և Թումա առաքյալների մասին, որոնք ըստ հայոց ավանդության Հայաստանում քարոզել և քրիստոնեություն են տարածել: Հայ պատմագիրների հակասական և առասպելաբանական տեղեկություններն առաքյալների քարոզչության մասին Հայաստանում՝ հեղինակն անվստահելի է համարում: Այդ կետում բոլորովին իրավացի է: Սակայն պր. Աննինսկին պարտավոր էր հատուկ վաստերով ապացուցել, թե ինչո՞ւ հայ պատմագիրների վկայություններն այդ մասին մեծ մասամբ արժանահավատ չեն: Բանասիրության մեջ այդ խնդիրը բավական լուսաբանված է մանավանդ A. Carrière-ի, La légende

d'Abgar dans L'histoire d' Arménie de Moïse de Khoren (Paris, 1895) և H. Gelzer-ի, Geschichte der armenischen Kirche (տե՛ս Realencyklopädie für protestantische Theologie und Kirche, 3 Aufl., 1896, Bd. II) գրվածքներում: Սակայն, ինչպես ասացինք, պր. Աննինսկին նորագույն բանասիրական աշխատությունները համարյա ամենևին չի օգտվել: Առաջին դարերում՝ քրիստոնեության մուտք գործելը Հայաստանում հնդինակը խիստ հավանական է համարում, թեպետ III դարում հայտնի Մեհրուժան հայ եպիսկոպոսին ամենևին չի հիշում: Բայց մի քանի տող հետո (տրպիսի բանասիրական սրատեսություն) նույն այս պատմարանը անկասկած է համարում, որ IV դարում ամբողջ Հայաստանում ո՛չ մի քրիստոնեական համայնք և ոչ մի եպիսկոպոս չեն եղել (էջ 5):

Պարոն Աննինսկու այս աշխատության մասին ընթերցողներին մի որոշ պատկեր տալու համար՝ մեր մատենախոսականում միմիայն մատնանիշ արինք առաջին պատահած մի քանի խոչոր սխալներն սկզբի մի քանի էջերում: Պատմագրական երկրորդական անճշտություններ, պատմական անցքերի երևակայական թվականներ, հայ անունների սխալ տառադարձություններ անթիվ անհամար են այն երկում: Մյուս կողմից՝ հնդինակի պատմական ուսումնասիրության եղանակը՝ մեթոդը՝ ո՛չ գիտական է, ո՛չ էլ անաչառ: Որովհետև Հայաստանյայց եկեղեցին բաժանվել է Բյուզանդականից և դեմ է Քաղկեդոնի ժողովին և երկաբնակության՝ ուրեմն և այդ եկեղեցին իր պատմական անցյալում եղել է «հերետիկոս», «փանատիկոս» «տգետ», «ամբարտավան» և այլն: Ահա այս է պր. Աննինսկու պատմական անաչառությունը: Պր. Աննինսկու անարդար ամբաստանությունները և հայհոյանքները մեր եկեղեցու դեմ՝ ո՛չ մի վրդովմունք և անհանգստություն չեն կարող պատճառել Հայաստանյայց եկեղեցու բաղմատանջ համայնքին, որովհետև գիտական արդարամտությունը և ճշմարտասիրությունը, խղճի ազատության և կրոնական հանդուրժողականության լուսավոր լայն սկզբունքները հաղթել են և կհաղթեն պր. Աննինսկիների այն խավար սկզբունքները և հասկացողությունները, որոնք խոչընդոտ են անաչառության և գիտական արդարամտության: *C'est une grande folie de vouloir être sage tout seul* – մեծ անմտություն է, երբ մարդ կարծում է, թե միայն ինքն է իմաստուն:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԽՆԴԻՐԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԻԹ ՀԱՐՔԱՑԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ

§ 1. Դավթի մասին նախկին հետազոտությունները

Պորփյուրի Նկրածությանն և Արիստոտելի "Οργανον-ի թարգմանություններն ու մեկնություններն, ինչպես և Սահմանք իմաստասիրությանն համապիտ գրվածքը՝ հայոց մատենագրական ավանդություն վերագրում է Դավիթ Հարքացի փիլիսոփային: Մինչև այժմ հայ բանասերներից ոչ ոք չի դրազվել այդ երկերի մանրամասն ուսումնասիրության խնդրով: Իսկ օտարազգի հայագետ բանասերների աշխատություններից ինձ հայտնի են միմիայն C. F. Neumann-ի և F. C. Conybeare-ի հետևյալ հետազոտությունները՝ 1. C. F. Neumann, Mémoire sur la vie et les ouvrages de Davide, philosophe arménien ... «Journ. Asiat.», III, Paris, 1829, p. 46-86, 97-153. 2. C. F. Conybeare, Anecdota Oxoniensia, A collation with ancient Armenian Versions of the greek text of Aristotle's Categories etc. Oxford, 1892, 4⁰, pp. XXXVIII +182. Սույն աշխատության Առաջարանը հ[այր] Հ. Տաշյանի թարգմանությամբ՝ «Բանասիրական Հանդես Դաւթի Անյաղթի», Վիեննա, 1893, 8⁰, էջ 92:

§ 2. Ֆ. Կոնիբերի կարծիքը

Ուսուցչապետ Ֆ. Կոնիբեր «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» գրոց հայերեն մեկնությունները համարում է թարգմանություն հունարենից[1], բայց տարբեր հունարեն ἀπὸ φωνῆς Ἀβιὸ մեկնություններից[2]: Մեծարգո Ֆ. Կոնիբերի կարծիքով՝ այդ մեկնությունները չարագրված են եղել հատկապես հայ անձանց կրթության համար որևէ հայի ձեռքով, որը կարող էր

[1] Տե՛ս Anecd. Oxon., § 14, էջ XVIII-XIX:

[2] Տե՛ս նույնը, § 20, էջ XXII:

այդ մեկնությունները հունարեն գրած լինել և ապա հայերեն թարգմանած[1], և այդ հեղինակն ու թարգմանը համանուն Պրոհերեսիոս հայտնի հայ հռետորն է եղել[2]: Այս վերջին նեթադրությունը բոլորովին անընդունելի է նախ այն պատճառով, որ Պրոհերեսիոսի ժամանակ IV դարում հայերեն գիր և գրականություն գոյություն չունեն:

Սահմանք Իմաստասիրության գրվածքը[3] և Պորփյուրի Նեռածության մեկնությունը մեծապատիվ Ֆ. Կոնիբերը վերագրում է Դավիթ փիլիսոփային և համարում է թարգմանություն հունարենից: Արիստոտելի Վերլուծականքի հայերեն մեկնության 14-րդ գլուխ-հատվածը պր. Ֆ. Կոնիբեր ընդարձակ քննության չի ենթարկում, այլ հիշելով այդ երկը, առանց որոշ պատճառաբանությունների, ավելացնում է յուր կողմից միայն այսքանը, որ «այդ թարգմանությունը կատարված է հունարեն մի մեկնության բնագրից, որն ըստ երևույթին գրված է եղել նույն Դավթից IV կամ V դարում»[4]:

Երբ է ապրել Դավիթ փիլիսոփան, ո՞վ է հունարենից թարգմանել վերոհիշյալ երկերը՝ այդ մասին հարցերի ուսումնասիրությունները միայն ենթադրություններ է անում, բայց որևէ հաստատուն եզրակացության չի գալիս:

§ 3. Բանասիրական ուսումնասիրության ո՞ր եղանակով կարելի է հաստատուն եզրակացություններ ստանալ

Ինչպես Ֆ. Կոնիբերը, նույնպես և ուրիշ հայագետ բանասերներ՝ աշխատել են պարզել Դավթի և նրան վերագրած երկերի վերաբերյալ հարցերը, քննելով գլխավորապես հին մատենագիրների տված վկայությունները, պատմական ավանդությունը, էական գրքի հայտնի հիշատակարանը, երկերի ոճը և այլն, և ոչ ոք չի փորձել հարցերի լուծումը բնական ճանապարհով գտնելու, այն է՝ Դավթին վերագրած երկերի բովանդակության մանրադնին քննության միջոցով: Իսկ բանասիրական

[1] Տե՛ս Anecd. Oxon., § 16 և 17, էջ XX-XXI:

[2] Տե՛ս նույնը, § 18, էջ XXI-XXII:

[3] Հունարենի վերնագիրն է՝ Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας, ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου.

[4] Տե՛ս Anecd. Oxon., § 9, էջ VIII, § 30 և 31, էջ XXXVI, XXXVII:

ուսումնասիրության այդ ասպահով ճանապարհով ամենայն դյուրությամբ լուծվում են մի քանի մութ խնդիրներ, և այնպիսի հետևություններ են ստացվում, որոնք չատ կետերում միանգամայն տարբեր են տիրող ենթադրություններից: Դժբախտաբար՝ ձեռքի տակ չունենինք հունարեն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* մեկնությունները և *Προλεγόμενα*-ն, որոնց քննությունն ու համեմատությունը թերևս ավելի պարզեր Դավթի առեղծվածը:

§ 4. Սահմանք իմաստասիրութեանը, Պորփյուրի Ներածութեան մեկնությունը և Արիստոտելի Վերլուծականքի մեկնության հատվածը միևնույն հեղինակի՝ Դավիթ փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտելի «Ցաղագս մեկնութեան» և «Ստորոգութեանց» հայերեն մեկնությունները Դավթինը չեն

*Մեծապատիվ ուսուցչապետ Ֆ. Կոնիբերը յուր վերոհիշյալ աշխատասիրության մեջ արդեն ցույց է տվել, որ Յաղագս Մեկնութեան և Ստորոգութեանց հայերեն մեկնությունները տարբեր են հունարեն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* համապատասխան մեկնություններից, մինչդեռ Պորփյուրի Ներածութեան մեկնությունը նույնն է հունարեն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* համապատասխան մեկնության հետ: Այդ մասին կարևոր ենք համարում մեջ բերել մի քանի փաստեր ևս, որոնք ստացվում են այդ երկերի մանրամասն քննությունից: Ինչպես հայտնի է, Սահմանք Իմաստասիրութեան երկը և Պորփյուրի Ներածութեան ու Արիստոտելի Վերլուծականքի մեկնությունները բաժանված են ձեռագրերում պրակների և ամեն մի գլուխ սովորաբար սկսվում է «ընդ այսոսիկ **հանդերձ Աստուծով** և առաջիկայ պրակք (**կամ տնօրինութիւն**)» բառերով: Ուշադրության արժանի է այն, որ Պորփյուրի Ներածութեան մեկնությունը սկսվում է հետևյալ բառերով՝ «Հանդերձեալք **հանդերձ Աստուծով** սկիզբն առնել առաջիկայ չարադրութեանս» և նույն մեկնության մեջ պր. Զ, էջ 271 (Վենետիկ, 1833) կրկնվում է նույն ոճը՝ «Կատարելապէս **հանդերձ Աստուծով** ի Բնարանութիւնս Արիստոտէլի ուսցուք»: «**Հանդերձ Աստուծով**» այդ դարձվածքը Դավթի ոճի առանձնահատկությունն է, և որովհետև բացի վերնագրերից հանդիպում է նաև բնագրում, ուստի և հիշյալ վերնագրերն անպայման հեղինակինն են: Իսկ դրանից հետևում է, որ Սահմանք Իմաստասիրութեան երկը և Պորփյուրի Ներածութեան և Արիստոտելի*

Վերլուծականքի մեկնութիւնները, որոնց ամէն մի պրոխ վերոհիշեալ առանձնահատուկ վերնագիրն ունեն՝ ամենայն հավանութեամբ միևնոյն հեղինակի գործ են: Սակայն Արիստոտելի «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» գրվածքների վերաբերեալ հայերեն մեկնութիւնները պրակների այդ վերնագրերը չունեն և չեն կազմում մի անընդհատ ամբողջութիւն, այլ մաս մաս մեջ է բերված Արիստոտելի բնագրից մի պրակ, և բնագրի ամեն մի պրակին հետևում է նոյն պրակի մեկնութիւնը: Այդ արտաքին հանգամանքը ևս մի նշան է, որ Ստորոգութեանց և Յաղագս Մեկնութեան երկի հայերեն մեկնութիւնները Դավթինը չեն:

*Նոյն եզրակացութիւնն ստացվում է նաև Դավթին վերագրած այդ երկերի ներքին բովանդակութեան ուսումնասիրութիւնից: Մինչդեռ Դավիթ փիլիսոփայի՝ Սահմանք Իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները նորպլատոնական մեկնիչի գրվածք են, որ աշխատում էր հաշտեցնել պղատոնական և արիստոտելյան փիլիսոփայական զաղափարները՝ ընդհակառակը Ստորոգութեանց և Յաղագս Մեկնութեան գրվածքի հայերեն մեկնութիւնները արիստոտելյան մեկնիչի գրութիւններ են, որոնք Պղատոնին և պղատոնականներին հիշում են միայն հազվագյուտ դեպքերում և հակառակում ու հերքում են նրանց կարծիքները: Այսպես օրինակ՝ Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» երկի Անանուն մեկնիչը, էջ 507 (Վենետիկ, 1833) ասում է՝ «Ա՛ւ Պղատոնի ինձ թուի ի տեղոջս կոչ .... **բայց սուտ ասացեալն**»: Այդ տեսակետից իսկապես հետաքրքրական են այն հատվածները, որոնք փիլիսոփայական միևնոյն խնդիրների մասին լինելով, հիմնովին դանադանվում են իրարից Դավթի և Անանուն մեկնիչի գրվածքներում: Օրինակ՝ Դավիթ փիլիսոփան միակ և երկակ թվերն ընդունում է ոչ իբրև թիվ, այլ իբրև թվերի սկիզբ[1], իսկ Ստորոգութեանց Անանուն մեկնիչը միանգամայն հակառակ է պղատոնականների այդ կարծիքին և այդ մասին գրում է հետևյալը՝ «**Իսկ ոմանք ի պղատոնականացն կամին ասել, եթէ վասն դի հարկ է ընդունել զքանակն յամ. գոյացութիւնն ոչ ըստ չափոյ միայն՝ իբր թէ մեծ կամ փոքր, այլ յաւէտ ըստ թուոյ՝ դի կամ մի է կամ բազում: Ա՛ւ որս ասեմք, եթէ ձեզ իսկ հակաճառութիւնս կազմէք,** քանզի ըստ*

[1] Տե՛ս՝ Սահմանք Իմաստասիրութեան, էջ 187–188, Վենետիկ, 1833:

Պիթագորականացն ձևացնալ ասէր թէ մինն ո՛չ է թիւ, այլ յաւէտ սկիզբն թուոյ»[1]: Եվ ընդհանրապես՝ Դավթի և Անհայտ մեկնիչի փիլիսոփայական պատափարները ո՛չ միայն հաճախ նման չեն, այլ և նրանց կարծիքների արատահայտման եղանակը տարբեր է, և մինչդեռ Դավթիը չարունակ հմտորից վկայություններ է բերում Պղատոնից, Արիստոտելից և դանադան մեկնիչներից և մանրամասն քննադատում է իմաստասիրական այս կամ այն դպրոցի կարծիքները՝ Անանուն հեղինակի մեկնություններն ադբատ են այդպիսի վկայություններով ու տեղեկություններով, և Արիստոտելի Ստորոգութեանց և Յադագս Մեկնութեան երկի հայերեն մեկնություններում մեկնիչներից հիշվում են միայն մի ոմն Դեմոս[2], Ադեքսանդրոս Ափրոդիսեցի[3] և Ադեքսանդրոս, որ ամենայն հավանությամբ II դարի վերջում և III դարի սկզբում ապրող նույն Ափրոդիսեցին է[4]:

Հատկապես Ստորոգութեանց մեկնության վերաբերմամբ կարելի է մեջ բերել նաև մի ուրիշ ականհայտնի ապացույց, որ այդ մեկնությունը Դավթինը չէ: Պորփյուրի Ներածութեան մեկնության դանադան մասերում Դավթիը խոստանում է մի քանի հարևանցի մատնանիշ արված իմաստասիրական խնդիրներ մանրամասն քննելու յուր Ստորոգութեանց մեկնության մեջ: Այսպես, էջ 263 (Վենետիկ, 1833), «իսկ բանականն եթէ մասն է իմաստասիրութեան, և եթէ գործի, ի Ստորոգութիւնն Արիստոտէլի ուսցուք»— էջ 269, «Բայց եթէ դի ախորժեցին առնել դանհատաստութիւն, կատարելագոյն ի Ստորոգութիւնն Արիստոտէլի ուսանելոց եմք» — էջ 300, «Եւ արդ դի ո՛չ սեռ է և ո՛չ հոմանուն ձայն [էական], կատարելարար ի Ստորոգութիւնն Արիստոտէլի ուսցուք»: Արդ՝ Ստորոգութեանց հայերեն մեկնության մեջ ո՛չ միայն վերոհիշյալ իմաստասիրական խնդիրների

---

[1] Յադագս Քանակի, պրակ Ա, էջմիածնի Մատեն. ձեռ. թիվ 1810, Վենետիկյան հրատարակության մեջ Ստորոգութեանց մեկնության սկիզբը պակաս է:

[2] Տե՛ս Մեկնութիւն Պերիարմ. պրոյն, էջ 514, Վենետիկ, 1833:

[3] Ձեռագիր թիվ 1810, Մեկնութիւն Ստորոգութեանց, Յադագս Ստորոգութեանց, էջ 88b:

[4] Տե՛ս Ձեռ. թիվ 1810. Մեկնութ. Ստորոգ., էջ 106a = Յադագս գոյութեան, պր. ԺԴ, էջ 119a = Յադագս Քանակի, պրակ Ժ, էջ 126a = Յադագս. Առընչի, պր. Ե: Վենետիկի տպագրության մեջ այդ մասերը պակաս են: Ադեքսանդրոսը հիշվում է նաև Պերիարմ. պրոյ մեկնության մեջ, էջ 514, Վենետիկ, 1833:

մանրամասն պարզաբանությունները չկան, այլ նույնիսկ Անանուն մեկնիչի տրամաբանական հաստատությունները դանադան ուրիշ կետերում միանգամայն տարբեր են Դավիթի կարծիքներից: Այն, ինչ որ Դավիթը խոստանում է «կատարելապես ի Ստորոգութիւնն Արիստոտէլի» բացատրելու՝ պետք է որոնել հունարեն ἀπὸ φωνῆς Ձաբիճ Ստորոգութեանց մեկնության մեջ, և ո՛չ թե Անանուն մեկնիչի գրվածքում:

Մեր կարծիքով, վերոհիշյալ պատճառաբանությունների հիման վրա կարելի է վերջնականապես ապացուցված համարել, որ Արիստոտելի Ստորոգութեանց և Յաղագս Մեկնութեան երկի հայերեն մեկնությունները Դավթինը չեն, այլ մի անհայտ մեկնիչի գրվածքներ են, ուստի և այդ երկերի ներքին բովանդակության ուսումնասիրության հետևությունները, ինչպես Վարդանի հիշատակությունը և Հայ հորինողի կամ թարգմանչի ներքին նշանները[1], ամենևին առնչություն չունեն Դավթի և նրա երկերի խնդրի հետ: Վիեննայի Մխիթարյանց թիվ 112 ձեռագրում Ստորոգութեանց և Յաղագս Մեկնութեան երկի մեկնիչները համարվում են Ամիսսավոսյա և Անտոնիոս Էրմիա[2], որոնց մասին դեռ մանրամասն խոսելու ենք Դավթի և նրա երկերի խնդիրն ըստ կարելվույն պարզելուց հետո:

§ 6. Դավթի իմաստասիրական երկերը

Բացի Սահմանք Իմաստասիրութեան գրվածքից և Պորփյուրի Ներածութեան մեկնությունից, որոնց հունարենը հայտնի է ἀπὸ φωνῆς Ձաբիճ վերնագրով և որոնք հայերենի հետ նույնն են[3], անպայման Դավթինն է նաև Արիստոտելի Վերլուծականքի մեկնության 14-րդ գլուխ հատվածը: Բացի պրակների «ընդ

---

[1] Տե՛ս Anecd. Oxon., § 7, էջ VI և § 15, էջ XIX-XX:

[2] Տե՛ս հայր. Հ. Տաշյան, Յուցակ ..., էջ 389-395: Իմ կարծիքով, Անտոնիոս կարող է Ամմոնիոս անվան աղճատում համարվել. երկաթագիր ՄՄ անուշադրությամբ կարդացվել է ՆՏ: Իսկ էրմիա ո՛չ թե հունարեն ἑρμηνεὺς բառն է, այլ հատուկ անուն Ἑρμῆς, Ἑρμείας, Ἑρμέας: Եթե այս ենթադրությունը ճշտվի՝ Ստորոգութեանց մեկնության մնծագույն մասը Հերմիասի որդի Ամմոնիոսի համապատասխան մեկնության հայերեն թարգմանությունն է:

[3] Տե՛ս Anecd. Oxon., § 9, էջ VII և § 31, էջ XXXVI:

այսոսիկ հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակք» վերնագրերից, որոնք այդ մեկնության Դավթից հորինված լինելու նշաններ են[1] *ուշադրության արժանի է և այն, որ ո՛չ միայն տրամաբանական հասկացողությունները և դրանց մեկնության ու բացատրության եղանակն այդ գրվածքում նույնն են, ինչ որ Ներածութեան մեկնության և Սահմանք Իմաստասիրութեան Դավթի երկերում՝ այլև մի քանի հատվածներ այդ երեք գրվածքում գրեթե բառացի նման են: Բերենք մի քանի օրինակներ.*

Սահմանք Իմաստասիրութեան, էջ 214 (Վենետիկ, 1833)

«Արդ գիտնական գործութիւնն գործարարէ ի ձեռն տեսականին, իսկ կենդանականն ի ձեռն գործականին որպէս զի մի զսուտ գիտութիւն ի կարծեաց ընկալցուք, եւ մի չար ինչ գործեսցուք»:

Մեկնութիւն ի Վերլուծականքն, էջ 559 (Վենետիկ, 1833)

«Իսկ ապացուցական հաւատումն պիտանացու գոյ յամենայն իմաստասիրութեան ի տեսականն և ի գործականն ... որպէս զի մի զսուտ գիտութիւն ընկալցուք եւ մի չար ինչ գործեսցուք»:

Սահմանք Իմաստասիրութեան, էջ 191

*«Ի*անդի տեսականին *ամենայն գոյք աննիւթականին* առ ի գիտել, իսկ գործականին մարդկային *միայն* հոգիք... *վասն դի* կատարումն *տեսականին* ճշմարտութիւն է, իսկ կատարումն *գործականին* բարին»:

Մեկնութիւն ի Վերլուծականքն, էջ 565

«Արդ տեսականն *նիւթ ունի ամենայն գոյս* առ ի գիտել, իսկ կատարումն ճշմարիտն. իսկ գործականն *նիւթ ունի* ոմարդկային հոգիս, իսկ կատարումն զբարին»:

[1] Տե՛ս Anecd. Oxon., § 4:

Պորփ. Ներածութեան վերլուծութիւն, էջ 259	*Մեկնութիւն ի Վերլուծականքն, էջ 684*
«*Քանզի ասկն թէ* վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն չարժեն *և ասել՝* թէ ապա ուրեմն եւ ամենայն կենդանի զներքին կլափն չարժէ, *ոչ է ճշմարիտ. քանզի* կոկորդիլոս *գազանն* եւ փիւնիկն հաւ *ոչ չարժեն զներքին* կլափն, *այլ* զվերին»:	«*Որպէս՝* վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն չարժեն, *ոչ է հարկաւոր* թէ ապա ուրեմն եւ ամենայն կենդանի զներքին կլափն չարժեն, *որ ոչ է հարկաւոր* փիւնիկաթեւի եւ կոկորդիլոսի *և գուճողի, որք զվերին* կլափն չարժեն»:

Կարելի է ավելի օրինակներ բերել, բայց բավականանանք սրանցով, որովհետև այսքանն էլ արդեն ցույց է տալիս, որ Վերլուծականքի մեկնությունը պետք է Դավթին վերագրել: Որքան մեզ հայտնի է, Դավթի Վերլուծականքի մեկնության հունարենը նորագույն աշխատասիրություններում չկա հիշված: Եթե հունարեն բնագիրը կորած չէ, թերևս Դավթի երկերով հետաքրքրվողներից մեկին հաջողվի հայերենի օժանդակությամբ գտնել այդ մեկնությունը Արիստոտելի մեկնիչների Բեռլինի ընդարձակ հրատարակության մեջ[1]*:*

*Պորփյուրի Ներածութեան մեկնության մի հատվածից պարզ երևում է, որ Դավիթը գրած պետք է լինի նաև Արիստոտելի Բնաբանութեան մեկնությունը: Այդ մասին էջ 271 (Վեննետիկ, 1833) վկայում է ինքը՝ Դավիթը հետևյալ տողերում. «Վասն զի նիւթ թէպէտ մի ինչ է, այլ ոչ ըստ տեսակի. և զի ոչ ընդհանրական ինչ է նիւթ և ոչ մասնական, **կատարելապէս հանդերձ Աստուծով ի Բնաբանութիւնն Արիստոտէլի ուսցուք**»: Դավթի այս գրվածքն ևս պետք է որոնել Արիստոտելի մեկնիչների վերոհիշյալ ընդարձակ հրատարակության հատորներում, որ լույս են տեսնում Բեռլինում: Բայց եթե նույնիսկ Դավթի այդ մեկնությունը կորած համարվի՝ այնուամենայնիվ Արիս-*

[1] Արիստոտելի մեկնիչների այդ ընդարձակ հրատարակությամբ արդեն լույս են տեսել բազմաթիվ հատորներ: Բեռլինի Ակադեմիայի այդ հրատարակության մասին՝ տե՛ս Fr. Ueberweg, Grundriss, Berlin 1886, էջ 188 «Eine umfassende auf 35 Bde berechnete Ausgabe der griechischen Commentare zu Aristoteles wird Berl. seit 1882 «consilio et auctoritate Academiae litterarum regiae Borussicae» herausgegeben:

տոտելի մեկնիչներով զրադվողները պետք է ի նկատի առնեն այդ երկի գոյությունը, որովհետև Արիստոտելի Բնարանության Դավթի հորինած մեկնությունից կարող են քաղվածքներ լինել Դավթից հետո գրված դանազան մեկնություններում կամ ուրիշ երկերում:

Վերոհիշյալ եղրակացությունների հիման վրա ստացվում է Դավթի իմաստասիրական երկերի հետևյալ ցանկը.

1) Ընդհանուր առարկությանց չորից Պիհոռնի իմաստակի եւ՝ սահմանք եւ՝ տրամատություն իմաստասիրության: **Նույնը հունարեն.** *Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου:*

2) Վերլուծության Ներածության Պորփիրի: **Նույնը հունարեն ավելի ընդարձակ** *ἀπὸ φωνῆς Δαβὶδ (տե՛ս Anecd. Oxoniensia, § 31, էջ XXXVII):*

3) Մեկնության չորեքտասան գլխոց Արիստոտելի ի Վերլուծականն: Հունարենը հայտնի չէ:

4) Արիստոտելի Ստորոգության հունարեն մեկնությունը *ἀπὸ φωνῆς Δαβὶδ:* **Հայերենը չկա և հայտնի չէ, թե արդյո՞ք թարգմանված եղել է:**

5) Արիստոտելի «Յաղագս մեկնության» երկի հունարեն մեկնությունը *ἀπὸ φωνῆς Δαβὶδ:* **Հայերենը չկա և թարգմանված լինելու մասին տեղեկություն չունենք:**

6) Արիստոտելի Բնարանության մեկնությունը: **Հայտնի չէ ո՛չ հունարեն բնագիրը, ո՛չ էլ հայերեն թարգմանությունը:**

Շատ կարելի է, որ Դավիթը գրած է եղել և ուրիշ մեկնություններ և իմաստասիրական երկեր, սակայն այդ հարցը թերևս կարելի լինի ավելի պարզել *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* հունարեն բնագրերի և ընդհանրապես՝ հունարեն գրված Արիստոտելյան երկերի մեկնությունների մանրախույզ հետազոտությամբ, որ մեր աշխատության սահմաններից դուրս է: Դավթի ոչ-իմաստասիրական երկերով մենք դեռևս չենք զբաղվել, ուստի և այդ մասին կխուսափենք կարծիք հայտնելուց: Իսկ Գրիգոր Աստվածաբանի հինգ ճառերի Նոննոսին վերագրված մեկնությունների վերաբերմամբ որոշ հիմքեր կան ենթադրելու, որ այդ գրվածքը ևս նույն Դավթինն է, և այդ խնդրի մասին դեռ առանձին խոսելու ենք:

§ 6. Զանազան կարծիքներ Դավթի անձի մասին և դրցա քննությունը

*Դավթի անձնավորությունը մի առեղծված է եղել թե՛ բյուզանդագետների և թե՛ հայագետ բանասերների համար: Հայոց մատենագրության դեռ հնագույն շրջանում հայերի և հույների մեջ տարաձայնություններ են եղել Դավթի անձի մասին: Էջմիածնի մատենադարանի ձեռագրերում գտնվում է «Պատճառ Սահմանաց գրոց» մի հատված, ուր ի միջի այլոց ասված է. «Առնել զայս գիրք և ցուցանել թէ այսպիսի կարողութիւն ունին հայք և դուք ընդէ՞ր զայս անտես արարեալ էք և զհայս ամբաստանէք: Ոմանք ասեն թէ ի տեղն (... ի՛ Աթենքում) գրեաց և զօրինակն ի հետս երեր և կէսք թէ յերկիրս գրեաց և առաքեաց որպէս Ստեփանոս դիւր թուղթն: **Բայց Յոյնք ասեն ե գիրք ունել զԴաւթի եւ իւրեանց ազգէն:** Այլ յայտնի աչակերտ է Մովսիսի Քերթողի և ազգական և ի հարք զատաւ ի հերետիկն զեղջ և առ մեզ են ե գիրք սորա՝ ա. Բարձրացուցչին, բ. Սահմանացս, գ. Պետրն, գ. Մեկնութիւն Քերականին, ե. Մեկնիչն Արիստոտէլի...»*[1]*: Բանասիրական վիճելի ենթադրությունների այդ համեմատաբար հին հատվածը մեզ համար հետաքրքրական է միայն այն տեսակետից, որ հույները Դավթին իրանց ազգից են ընդունել:*

Բյուզանդական մատենագրության մեջ այս Դավթին չվոթել են IX դարի Niketas David Paphlagon-ի հետ[2] *(† մոտ. 890 թվին): Այս կարծիքը միանգամայն սխալ պետք է համարել, որովհետև Դավթի երկերի բովանդակությունից չատ հավանական է ենթադրել, որ նա ուսած պետք է լինի հին իմաստասիրական դպրոցներից մեկում, երբ այդ դպրոցները Հուստինիանոս I կայսեր կարգադրությամբ դեռևս չէին փակված, և բացի այդ՝ արդեն հայտնի է, որ IX դարից առաջ հայ մատենագիրներն օգտվել են Դավթի աշխատություններից*[3]*: Ինչպես «Պատճառ Սահմանաց գրոց» հատվածի հեղինակը, նույնպես և դրեթե բոլոր նորագույն*

---

[1] Տե՛ս Ձեռ. թիվ 1887=կարին. թ. 1845, թերթ 247 և 248:

[2] Karl Krumbacher, Gesch. der byz. Litter., Zw. Aufl., München, 1897, § 183, էջ 432.

[3] Գալուստ Տեր-Մկրտչյան, Պետրոս Սյունյաց եպիսկոպոս, «Արարատ», 1902, հունվար և փետրվար: Նույն հեղինակի, Անանիա Շիրակացի, «Արարատ», 1896, փետրվար և ապրիլ:

Հայ բանասերները Դավիթին համարում են հայ՝ Հարք զավառից և Հերևան գյուղից: Դավիթ Հարքացի հայ փիլիսոփայի մի որոշ հիշատակություն գտնում է Ասողիկան «Պատմութիւն տիեզերական» երկում, էջ 80. «Յայսմ ժամանակի Մամրէ եղբայր Մովսիսի, զորմէ ասեն երրորդ գտեալ ի փիլիսոփայս զառնայր ի Հայս և **Դաւիթ աշակերտ Մովսիսի ի Հարք զավառէ ի Հերևան գեղջէ** (Ս. Պետերբուրգ, 1885)»: Ասողիկը Դավիթ Հարքացուն համարում է ժամանակակից Գյուտ կաթողիկոսին և Հովհան Մանդակունուն: Բազմաթիվ մեր նայած Ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագրերում Սահմանայ զրոց և մեկնությունների վերնագրերը միակերպ չեն և այդ վերնագրերում Դավիթին անվանում է կամ «Անյաղթ փիլիսոփայ» կամ «Ներգինացի» և կամ միայն «փիլիսոփայ»: Հայր Գարեգին Զարպհանալյան այդ Ներգինացի մակդիրը բացատրում է այսպես. «Մովսիսի Խորենացվոյն բնորդի էր Դավիթ, Տարոնո մոտ Հարք զավառին Հերեթ կամ Հերյան գյուղեն, և կամ ըստ այլոց՝ **Ներգուն ավանեն, ուստի և Ներգինացի կոչված**»[1]: Այլ կերպ մեկնում է հայր Գալուստ Տեր-Մկրտչյան. «Դավիթ Հարքացին, որ կոչվում է նաև Հերտանացի կամ Հերևանացի՝ գյուղի անունով, **այլ և Ներգյունացի կամ Ներքինացի՝ Ներքնավանքի անունով, ուր թաղված է ըստ ավանդության**»[2]: Մի փոքր տարօրինակ է, որ մինույն Դավիթը երեք տեղերի անունով է կոչվում, սակայն այդ խնդրի լուծումը մեր նպատակից դուրս է, որովհետև մեր կարծիքով Սահմանը Իմաստասիրութեան երկի և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնությունների հեղինակը Դավիթ Հարքացին չէ: Հայոց մատենագրության մեջ նորպղատոնական մեկնիչ Դավիթը չփոթված է Դավիթ Հարքացու հետ, ինչպես և բյուզանդական մատենագրության չրջանում Nikctas David Paphlagon-ի հետ: Ս. Էջմիածնի մատենադարանի թիվ 102 ձեռագրում[3] գտնվում է Դավիթ Հարքացուց մի մնացորդ. «Դաւթի Հարքացւոյ եւ փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս», որը հրատարակեց հ[այր] Գալուստ Տեր-Մկրտչյան[4]: Դավիթ Հարքացու այդ մնացորդը ո՛չ մի հիմք չկա

---

[1] «Հայկական հին դպր. պատմ.», Վենետիկ, 1886, էջ 295:

[2] Տե՛ս «Դավիթ Հարքացի», Արարատ, 1902, սեպտեմբեր–հոկտեմբեր, էջ 937:

[3] Գևորգյան ցուցակ, երկաթագիր, գրված Հայոց Նի և Նէ թվին:

[4] Տե՛ս «Դավիթ Հարքացի», Արարատ, 1902, սեպտեմբեր–հոկտեմբեր, էջ 939–963:

անվավերական համարելու, մանավանդ որ այդ ընդարձակ իմաստասիրական գրվածքը պահված է պատկառելի հնությունն ունեցող 971-981 թվականների ձեռագրում: Արդ Հարքացու այդ մնացորդը թե՛ ոճով, թե՛ բովանդակությամբ և թե՛ փիլիսոփայական ուղղությամբ միանգամայն տարբեր է նորպղատոնական Դավիթ մեկնիչի երկերից: Վերցնենք Հարքացու հարցուպատասխանների հենց սկիզբը. «Հարցումն. Ջի՞նչ է մարդ: — Պատասխանի. Հոգի ի մարմնի կապեալ միջնորդաւ չնչոյ և ի նոյն երկուքն միաւորեալ. սա մարդ ասի և Աստուծոյ պատկեր»: Նորպղատոնական Դավիթ մեկնիչը նույնը կսահմաններ «ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց» և կպատասխաներ՝ «մարդ է՝ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ»: Այսպես և բոլոր հարցերն ու պատասխանները միանգամայն խորթ և անհամապատասխան են Դավիթ մեկնիչի իմաստասիրական հասկացողություններին: Հարքացու իմաստասիրական հարցվածների գրեթե ամեն մի էջում նկատելի են Փիլոնի ազդեցության հետքեր, ինչպես այդ ճիշտ նկատել է հ[այր] Գայուստ Տեր-Մկրտչյանը, իսկ նորպղատոնական Դավիթ մեկնիչի գրվածքներում Փիլոնի ազդեցության և ոչ մի նշան չկա: Դավիթ Հարքացու գրեթե ամեն մի հարց և պատասխանից երևում է նրա քրիստոնյա լինելը, մինչդեռ նորպղատոնական Դավիթ փիլիսոփայի գրվածքների միայն մանրախույզ և երկար քննությունից հետո հաջողվեց մեզ նրա քրիստոնյա լինելու մի փոքր հետք գտնել: Դավիթ Հարքացի հայ վավերական հեղինակը և նորպղատոնական Դավիթ փիլիսոփան տարբեր անձնավորություններ են: Այս բացասական եզրակացությամբ մեկնիչ Դավթի անձնավորության վերաբերյալ առեղծվածի լուծումն ավելի դժվարանում է, որովհետև՝ ինչպես ցույց տվինք՝ սա ո՛չ Նիկետաս Դավիթ Պափլագոնն է, ո՛չ էլ Դավիթ Հարքացին: Որովհետև թե՛ հայոց և թե՛ հունաց մատենագրական ծանոթ ավանդությունները մեկնիչ Դավթի անձնավորության որոշման համար անստույգ և խառնաշփոթ ենթադրություններ են, ուստի և այդ խնդրի որոշման համար մենք բերենք մի քանի ակնարկներ և տեղեկություններ հենց նույն Դավթի գրվածքներից:

§ 7. Սահմանք իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները թարգմանված են հունարենից

Հայոց մատենագրական ավանդության հետևությամբ՝ նորագույն հայ բանասերներից չատերը ևս չփոթել են նորպղատոնական Դավիթ մեկնիչին Դավիթ Հարքացու հետ և, ընդունելով Դավիթ մեկնիչին իբրև հայ հեղինակ՝ կարծել են, որ Դավթի վերոհիշյալ իմաստասիրական երկերը թարգմանություն չեն, այլ գրված են եղել հայերեն: Արդ՝ այդ կարծիքը միանգամայն սխալ է: Մեծարգո ուսուցչապետ Ֆ. Կոնիբերը համեմատել է Ներածութեան մեկնության հայերեն և հունարեն բնագրերը և եկել է այն եզրակացության, որ հայերենը «բառ առ բառ տառացի թարգմանություն է հունարենից»[1]: Ներածութեան մեկնության հունարեն բնագիրը, որ տպագրված է Արիստոտելի Բեռլինի հրատարակության 4-րդ հատորում[2] ավելի ընդարձակ է, քան հայերեն թարգմանությունը: Կոնիբերի կարծիքով՝ հայերենը մի ամփոփ ամբողջություն է կազմում, իսկ Ա. Բրանդիսի հրատարակած հունարեն բնագրի ընդարձակ մասերն առաջացել են քաղվածքներից և հավելումներից, որոնք բնագրում ներմուծված են ուրիշ դանազան մեկնիչների գրվածքներից[3]: Ձեռքի տակ չունենալով հունարեն բնագիրը՝ դժբախտաբար անկարող ենք որոշ կարծիք հայտնել պր. Ֆ. Կոնիբերի այս վերջին նեթադրության մասին:

Արդ՝ ընդունելով, որ Ներածութեան մեկնությունը թարգմանված է հունարենից, այն էլ գրեթե տառացի կերպով՝ ամենայն հավանությամբ կարելի է նաև եզրակացնել, որ Արիստոտելի Վերլուծականքի ԺԴ գլուխ — մեկնությունը և Սահմանք իմաստասիրութեան երկը, իբրև միևնույն հեղինակի՝ Դավիթ մեկնիչի՝ գրվածքներ, նույնպես թարգմանված են հունարենից: Անհավատի կլիներ կարծել, որ Դավիթ մեկնիչը յուր երկերից Ներածութեան մեկնությունը գրել է հունարեն, իսկ Սահմանք իմաստասիրութեան երկը և Վերլուծականքի մեկնությունը՝ հա-

---

[1] Anecd. Oxon., § 31, էջ XXXVII.

[2] Bd. IV: Scholia in Aristotelem, collegit Christ. Aug. Brandis, Berol., 1836.

[3] Anecd. Oxon., § 31, էջ XXXVII.

յներն: Այդպիսի մի ննթադրութիւն անհիմն կլիներ նախ այն պատճառով, որ Դավիթ մեկնիչի բոլոր երկերն էլ հայերենում նոյն խրթին և հարազատ ոճն ունեն՝ լեզուական նման առանձնահատկութիւններով, որոնք հունարենից թարգմանված լինելու պերճախոս և ակնհայտնի նշաններ են:

Ուշագրաւ է սակայն այն հանգամանքը, որ Սահմանաց և մեկնութիւնների թարգմանութիւնը տարբեր է Պորփյուրի Ներածութեան և Արիստոտելի *Ὀργανον*-ի բնագրի թարգմանութիւնից: Մինչդեռ մեկնվող բուն բնագիրը փոխադրված է հունարենից ո՛չ միայն բառացի, այլ վանկ առ վանկ տառացի նմանութեամբ՝ Սահմանք Իմաստասիրութեան երկը և մեկնութիւններն ըստ երևոյթին թարգմանված են փորր-ինչ ազատ, ո՛չ այնքան ծայրահեղ վանկական նոյնութեամբ: Փոխադրութեան վերաբերեալ այս ննթադրութիւնն անհրաժեշտ է ստուգել, համեմատելով Սահմանք Իմաստասիրութեան երկը *Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας* բնագրի հետ, որով թարգմանության խնդիրը հաստատուն և վերջնական լուծում կստանայ:

Շատ կփափագնինք, որ *Τὰ προλεγόμενα* հունարէն բնագիրն առձեռն ունեցող որևէ բանասեր հանձնառու լիներ այդ ուսումնասիրութեան: Համեմատութեան ժամանակ խիստ կարևոր կլիներ որոշել, թե արդյոք Պրոլեգոմենայի հունարէն բնագրում կա՞ն ստորև առաջ բերված այն հատվածները, որոնք Դավիթ մեկնիչի արևելցի և նույնիսկ հայ լինելու նշաններ են: Եթե այդ հատվածները ներմուծված չեն հայերէն բնագրում թարգմանչից՝ թերևս հնարավոր համարվի ընդունել, որ Դավիթ մեկնիչը հունարէն գրող մի հայ փիլիսոփա է, որին սակայն սխալ կլինի նույնացնել Դավիթ Հարքացու հետ[1]:

Սահմանք Իմաստասիրութեան, էջ 198 (Վենետիկ, 1833) հայերէն բնագրում հիշվում է ոմն Տիգրան, հավանորէն Տիգրան Մեծն:

> «Իսկ չարունակ քանակն ոչ կարէ անչփոթաբար տեսակս ընդունել զանազանս. վասն զի մոմ որ է չարունակ քանակ. **եթէ ոք ստեղծանիցէ զնա ըստ Տիգրանայ կերպարանին,** ոչ կարէ այլ կերպարան ընդունել՝ եթէ ոչ յառաջագոյն ի բաց նգանի. ապա եթէ ոչ՝ չփոթումն լինի»[2]:

---

[1] Anecd. Oxon., § 6.

[2] Էջմիածնի թիվ 1810 ձեռագիրը (= Կարեն. ցուց., թ. 1767) ունի հաճախ այնպիսի բնթերցվածներ, որոնք տեղ-տեղ ուղղում են Վենետիկում տպագրված

Տիգրանի հիշատակութիւնը ևեթ Հունարենում ևս գտնվի՝ մի որոշ վստահ կլինի Դավիթ մևկնիչի արևելյի և հավանարար նաև հայ ծագման:

Խիստ հետաքրքրական է նաև մի այլ հատված՝ Սահմանք իմաստասիրութեան, էջ 163 (Վենետիկ, 1833):

> *«Վասն որոյ մարմին կոչի, այս ինքն ընդարմ վասն զի ընդարմացուցանէ զհոգին և ընդարմանայի ի գերեզմանի»:*

Միայն հայերեն գրող մի հեղինակ կարող էր «մարմին» բառը բացատրել իբրև «ընդարմ», որովհետև այդ մեկնութիւնը մի տեսակ ռամկական ստուգաբանութիւն է, «մարմին» բառի հնչման վրա հիմնված: Կարծում ենք, որ Հունարենի հետ բաղդատութիւնը ցույց կտա, որ այդ կասկածելի կտորը ներմուծված է թարգմանութեան ժամանակ կամ յուսանդրի սովորական նկատողութիւններից: Այդ ենթադրութիւնը հիրավի անխուսափելի է, քանի որ շատ դորեղ են այն հիմքերը, որոնք նպաստավոր են Սահմանք իմաստասիրութեան երկի հունարեն լեզվով հորինման:

Ինձ թվում է, որ հայոց մատենագրութեան հին շրջանում համարյա թե անհնարին էր հորինել իմաստասիրական անթիվ նուրբ դարձվածքներով և բառերով այնպիսի հայերեն գրվածքներ, ինչպես Դավիթ մևկնիչի Սահմանքը և մեկնութիւնները: Ուշադրութեան պետք է առնել, որ այդ շրջանում չկային նման իմաստասիրական նախնագույն աշխատութիւններ և ո՛չ էլ իմաստասիրական մտքեր և զաղափարներ արտահայտող փոքր ի շատե ճկուն և հարուստ լեզու: Նույնիսկ խիստ դժվար պետք է լիներ իմաստասիրական երկերը զեղեցիկ և հասկանալի ոճով հունարենից փոխադրելը, մասամբ հենց այդ պատճառով էլ առաջացավ տառացի և գրեթե վանկ առ վանկ թարգմանելու եղանակը՝ արվեստական և խորթ բառակազմութիւնով և հունարեն դարձվածքներով:

բնագիրը, օրինակ՝ սույն հատվածում թիվ 1810 ձեռագիրն ունի յավագույն ընթերցված՝ «եթե ոչ յառաջագոյն ի բաց եղծանիցի. ապա թէ ոչ չփոթութիւն լիցի»: Եվ ընդհանրապես՝ Դավիթ մեկնիչի իմաստասիրական երկերի վենետիկյան հրատարակութիւնն անբավարար պետք է համարել: Հայերեն յավագույն ձեռագրերի և հունարենի բաղդատութիւնը շատ զգալի կերպով փոփոխված և սրբագրված մի նոր բնագիր կարելի է ստանալ:

§ 8. Նորպղատոնական Դավիթ մեկնիչը Աղեքսանդրիայում ուսած VI դարի մատենագիր է

Հայոց մատենագրական ուսումնասիրությունները, անկախ՝ ἀπὸ φωνῆς Δαβὶδ հունարեն բնագրի վկայությունների վրա հիմնվելով՝ բյուզանդագետները Դավիթ մեկնիչի վերաբերմամբ եկել են այն կարծիքին, որ նա Կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփայի աշակերտն է եղել: Իսկ Կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփայի մասին հայտնի է, որ նա Հերմիասի որդի Ամոնիոսի աշակերտներից է և VI դարի սկզբում Հուստինիանոս I կայսեր ժամանակ դասախոսել է Աղեքսանդրիայում, ինչպես և նրա ուսուցիչ Հերմիասի որդի Ամմոնիոսը:

Դավիթ մեկնիչի մասին հունարեն բնագրերի տեղեկություններից հետևյալ եղրակացության ամփոփումը գտնում ենք Կրումբախերի «Պատմություն բյուզանդական գրականության» երկում. «Olympiodoros muss als Verfasser des verlorenen Kommentars (zur Isagoge) angesehen werden, aus welchem die beiden uns erhaltenen Schriften seiner Schüler Elias (Helias) und David geflossen sind. Die Blütezeit des Elias, der, als er sein Werk abfasste, noch nicht dem christlichen Glauben angehörte, fällt in die Mitte des 6. Jahrhunderts. Bedeutend ferner steht seiner Quelle das unter dem Namen des David, auch Niketas David, erhaltene Werk. Wahrscheinlich ist diese griechische Schrift nur eine breitere Ausführung des von dem armenischen Philosophen David verfassten Kommentars und wohl aus Lehrvorträgen desselben hervorgegangen»[1]*:*

Բյուզանդագետների այս ուշագրավ տեղեկությունը համեմատաբար նորագույն ուսումնասիրությունների արդյունք է և երևի հայտնի չի եղել մեծարգո ուսուցչապետ Ֆ. Կոնիբերին, որը յուր ընդարձակ ուսումնասիրության մեջ խիստ բռնազբոսիկ և հակասական հետևություններ է անում Դավիթ մեկնիչի ժամանակի մասին[2]*: Բոլորովին ավելորդ և անօգուտ կլիներ քննության ենթարկելու նորպղատոնական Դավթի վերաբերյալ մատենագրական և բանասիրական անհիմն և անապացույց ենթադ-*

---

[1] K. Krumbacher, Gesch. der byz. Litter., zw. Aufl., München, 1897, էջ 432.

[2] Տե՛ս Anecd. Oxonien., §§ 7, 9, 12 և 18.

րութիւններն, ուստի և մեր ուսումնասիրութեան մէջ, թողնելով անտես այդ կարծիքները՝ քննութեան կանոններ միմիայն Դավթի երկերի ներքին բովանդակութեան հետազոտութենից ստացված դրական և հաստատուն այն վկայութիւնները, որոնք Դավթի առնչվածը յուսարանելու և պարզելու համար էական նշանակութիւն ունեն:

Սահմանք Իմաստասիրութեան գրվածքում երկու անգամ հիշվում է Օլիմպիոդորոս փիլիսոփան, և առաջ են բերվում նրա իմաստասիրական բնորոշ բացատրութիւնները՝ սահմանի բառական արտաբին կազմութեան մասին և թե՛ ինչպես պետք է հասկանալ Փեդոնի տրամաբանութեան մէջ Պղատոնի տված այն որոշումը, թե «իմաստասիրութիւն է խոկումն մահու»: Օլիմպիոդորոսին վերագրված կարծիքները հարկավ պետք է որոնել նրա մեկնական գրվածքներում: Բացի այդ, ընդունելով, որ Դավիթ մեկնիչը կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտն է՝ արդեն a priori իրաւ հավանական կլիներ կարծել, որ նոցա իմաստասիրական դասողութիւններն ու մեկնութիւնները մեծ մասամբ նման և համաձայն պետք է լինեն, ուստի և, այդ ևս աչքի առաջ ունենալով՝ հարկավոր է համեմատել և քննել նոցա երկերի ներքին բովանդակութիւնը:

Օլիմպիոդորոսի հիացական խոսքերը սահմանի արտաբին հորինվածութեան մասին գտնվում է Սահմանք Իմաստասիրութեան երկում, էջ 143, բայց որպեսզի հասկանալի լինեն այդ խոսքերը՝ հարկավոր է առաջ բերել նաև նախորդ տողերը.

> *Սահմանք Իմաստասիրութեան, 142–143 (Վենետիկ, 1833). «Եւ պարտ է գիտել, զի ի սահմանս հակակիրք միմեանց լինին բառք և իրք: Քանզի յորժամ սահման առաւելու բառիւք, նուազն իրք. որգոն, մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ, քերթող: Քանզի քերթողն յաւելումն եղեալ ի սահմանի՝ նուազեցոյց զիրն. վասն զի զքերթողն միայն սահմանեաց և ոչ զամենայն մարդ. քանզի ոչ ամենայն մարդ քերթող. ահա առաւելաւ ի բառսդ՝ և նուազութիւն եղև իրացդ: Իսկ յորժամ նուազն բառքդ՝ առաւելուն իրքդ. որգոն, մարդ կենդանի բանական. ահա նուազեցին բառք՝ և յաւելան իրքդ: Վասն զի ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ և հրեչտակք և զկք. **եւ որպէս ասէր Ոլոմպիադորոս փիլիսոփոս՝** եթէ Սբանչելի իմն հնարս եգիտ բնութիւնս.*

նուագութիւն հարատացնայ՝ և հարատութիւն կեղծաւորնայ դնուագութեանցն»:

Շատ նուրբ և խորհրդատ կերպով բացատրում է մեկնիչ Դավիթը Պղատոնի՝ իմաստասիրութեան և խոկումն մահու, որոշումը և կարծում է, որ «մահ պարտ է աստանօր իմանալ ոչ պրանաւորական մահն՝ այլ զգայարժականն, որով զմեռնելութիւն գործէ ախտից»: Յուր այդ մեկնութիւնը հաստատելու համար ի միջի այլոց հիշում է Օլիմպիոդորոսի հետեւեալ խոսքերը.

> *Սահմանք Իմաստասիրութեան, էջ 164 (Վենետիկ, 1833)*
> ***«Առ այսոսիկ ասաց Ողոմպիոդորոս փիլիսոփոս,*** *եթէ ոչ պղատոնական դիրն զիմս նահանջէր դյարձակումն, այն ինչ ահա տաժանարար լուծանէի դյորնաթախանձ կապ կենցաղոյս»:*

*Օլիմպիոդորոսից վկայութիւններ պարունակող վերոհիշյալ հատվածներում ուշադրութեան արժանի մի կետ կա: Դավիթ երկերին մոտ ծանոթանալուց հետո կարելի է նկատել, որ նա ուրիշ փիլիսոփաների վերաբերմամբ երբեք չի գրում **«ասէր»** և **«ասաց»**, այլ միշտ գործ է ածում նույն կամ այլ բայերի ներկա ժամանակը. օրինակ՝ **«ասէ Արիստոտէլ»**, **«յիշէ Պղատոն»**, **«Պղատոն կարծէ»**, **«յայտ առնէ Պղատոն ասելովն»** և այլն: **«Ասէր»** և **«ասաց»** ձևերի գործածության եղակի և բացառիկ սույն դեպքերը թողնում են մեզ վրա այն տպավորությունը, որ Դավիթ մեկնիչն ինքը լսել է կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփայի դասախոսությունները: Այսպիսով՝ թերևս կարելի լինի ենթադրել, որ բյուզանդագետների անկախ հետևությունը Դավիթ մեկնիչի կրտսեր Օլիմպիոդորոսի մոտ աշակերտած լինելու մասին մասամբ ճշտվում է նաև հայերեն բնագրի օգնությամբ:*

*Մենք ընդունում ենք, որ **«ասէր»** և **«ասաց»** ձևերի գործածության մասին տված մեր մեկնությունը կարող է չատերին երկբայելի թվալ. համենայն դեպս այդ միայն մի ենթադրություն է և ո՛չ թե հիմնավոր ապացույց:*

Սակայն բյուզանդագետների հաղորդած տեղեկություններից և վերոհիշյալ ենթադրություններից անկախ՝ Դավիթ մեկնիչի իմաստասիրական երկերի հայերեն բնագրում կան ավելի գործավոր և անհերքելի նշաններ, որոնք նույնպես ապացուցանում են Դավթի VI դարի հեղինակ լինելը և անուղղակի կերպով հաստատում են բյուզանդագետ բանասերների վկայության ստուգությունը:

*Որքան ինձ հայտնի է, Դավթի խնդրով գրագած բանաստեղծների ուշադրությունից վրիպել է այն ուշագրավ հանգամանքը, որ Դավիթ մեկնիչը բացի Օլիմպիոդորոս վիկիտուրայից հիշում է **Եվտոկիոս, Ամմոնիոս և Աղեքսանդրոս** մեկնիչներին, որոնց գրվածքներից առաջ են բերվում վկայություններ և քաղվածքներ: Դավթի հունարեն բնագրերին ծանոթ բանաստեղծները չեին կարող այդ նկատել, որովհետև այդ մեկնիչները հիշվում են Վերլուծականքի մեկնության հայերեն բնագրում, իսկ նույն մեկնության հունարեն բնագիրը նրանց ծանոթ չէ, այնպես որ կարող է և կորած լինել: Թեև անհերքելի է, որ հունարեն բնագիրը գոյություն ունեցել է, որովհետև հայերենը գրեթե բառացի թարգմանություն է հունարենից:*

Եվտոկիոս, Ամմոնիոս և Աղեքսանդրոս մեկնիչների հիշատակություններ և տողա երկերից առնված վկայություններն ու քաղվածքները, մեր կարծիքով, առաջնակարգ նշանակություն ունեն Դավթի ժամանակի խնդիրը լուսաբանելու համար: Այդ վկայություններն ու քաղվածքներն անհրաժեշտ ենք համարում ամբողջովին առաջ բերել, հուսալով, որ մեկնիչների հունարեն բնագրերին ծանոթ մասնագետներին թեւեւս հաջողվի գտնել հունարենում համապատասխան հատվածները:

Մեկնութիւն ի Վերլուծականք, պրակ Գ, էջ 564 (Վենետիկ, 1833).

*«Երրորդ եղել է մասն, և եղել մասնիկ իմաստասիրութեան բանականաս, **Եւտոկիոս սկիզբն առնելով յիշատակութեանն Պորփիւրի Ներածութեանցն խնդրէ. իսկ Աղեքսանդրոս զառաջիկայս յիշատակելով զիրողութիւն՝ լաւագոյն քան զնա արար.** քանզի խնդրէ, եթէ մասն է, և եթէ գործի իմաստասիրութեան բնականաս, կամ րստ հաւաքարանին միայն է, և կամ րստ բոլորին»:*

Մեկնութիւն ի Վերլուծականք, պրակ Թ, էջ 578 և 579 (Վենետիկ, 1833).

*«Բայց սահմանէ զամենայն հաւաքարանութիւն, զստորոգականն և կամ զստորագրականն՝ ոչ զայս և ոչ զայն: Քանզի բացատրեցեալդ սահման ամենայնում **հաւաքարանութեան պատշաճի: Իսկ Աղեքսանդրոս առյարակայիցս պատմիչ բանից,** ասէ՝ թէ Զստորոգականն միայն սահմանէ հաւաքարանութիւն, երկորումբք այսրիւք հաւատարմացուցանելով դրանդ: Միով և առաջնով. եթէ զստորոգական*

*առաջարկութիւն սահմանեաց միայն. իսկ ստորոգականք հաւաբարանութիւնք ի ստորոգականացն գան յառաջարկութեանց: Ասէ և երկրորդ պատճառ, եթէ դանագանութիւնս յարաղրէ, աւարտնոց և ոչնաւարտից հաւաբարանութեանց, իսկ աւարտեալն և անաւարտն՝ ստորոգականացն միայն գոյ հաւաբարանութեանց:... **Եւ արդ այսոքիկ առ Աղէքսանդրոս ասասցին»:***

3. Մեկնութիւն ի վերլուծականք, սլրակ է. էջ 574.

*«Վասն որոյ տարակուսանն, եթէ դիա՞րդ գարամարանականն հարցումն հակաւութեան ասէ. իսկ ի յաղագս մեկնութեան, մերոյ պատասխանոյ հարցումն, և կամ մերոյ մասին նորա: **Առ որ Ամմոնիոս ասէ լուծումն իմն այսպիսի,** եթէ երկոքեան ճչմարիտ գոն. զի և որ գրոյոր հակաւութեանց հարցանէ՝ տրամարանական է»:*

Այս բոլոր հատվածները խիստ կարևոր են այն տեսակետից ևս, որ պարզում են նորպղատոնական Դավթի ամենամոտ ազբյուրների խնդիրը: Բացի կրտսեր Օլիմպիոդորոսի մեկնություններից՝ Դավիթ մեկնիչն օգտվել է ուրեմն Եվտոկիոս, Ամմոնիոս և Աղեքսանդրոս մեկնիչների աշխատություններից: Բայց ո՞վ են այս մեկնիչները և ե՞րբ են ապրել:

*«**Եւտոկիոս սկիզբն առնելով յիչատակութենէն Պորփիւրի Ներածութենացն**» խոսքերից երևում է, որ Եվտոկիոս հավանաբար գրել է Պորփյուրի Ներածության մեկնությունը, և համենայն դեպս նրան պետք է որոնել Պորփյուրի ժամանակից հետո IV–VI դարի մեկնիչների շարքում: Ի նկատի առնելով, որ մեզ հասած Ներածության մեկնություններից հնագույնը վերագրվում է V–VI դարերի մեկնիչ՝ Հերմիասի որդու Ամմոնիոսին[1],– ուրեմն կարելի է հետևցնել, որ Եվտոկիոսը ո՛չ թե IV դարի, այլ ավելի հետին ժամանակների մեկնիչներից է: Եվ հիրավի՝ Եվտոկիոս անունով միայն մի մեկնիչ կա հայտնի՝ Եվտոկիոս Ասկալոնացի Ասորին, որ ապրել է V–VI դարում: Եվտոկիոս Ասկալոնացին թվարան և երկրաչափ մեկնիչներից է, յուր երկերը նվիրել է Ամոնիոսին և P. Tannery-ի կարծիքով ծնվել է ամենաուշը 480 թվին[2]: Որ Եվտոկիոս Ասկալոնացին բացի թվա-*

[1] Karl Krumbacher, Gesch. der byz. Litter., zw. Aufl., էջ 432:

[2] Տե՛ս K. Krumbacher, GBL, zw. Aufl., էջ 625 և Siegmund Günther, Abriss der Geschichte der Mathematik und der Naturwissenschaften im Alterthum, էջ 245, 257: Այս աշխատությունը լույս է տեսել իբրև հավելված Վ. Վինդելբանդի՝

բանական և երկրաչափական մեկնություններից կարող էր գրած լինել նաև իմաստասիրական մեկնություններ՝ այդ չատ հավանական է, քանի որ V–VI դարում թվաբանական և երկրաչափական նշանավոր երկերը մեկնում և ուսումնասիրում էին պլատոնական նորպլատոնական մեկնիչները. և այդ հավանալի է, որովհետև բուն Պլատոնի թվաբանությունն ու երկրաչափությունը և ընդհանրապես իմաստասիրության ուսումնական մասը համարվում էր բուն իմաստասիրության նախակրթություն: Եվտոկիոսն բուն երևույթին այդ նորպլատոնական մեկնիչներից է, և նրա աշխատասիրություններից հունարենում պահվել և մեզ են հասել միայն թվաբանական և երկրաչափական մեկնությունները, իսկ այժմ Դավիթ մեկնիչի վերոհիշյալ վկայությամբ հաստատվում է, որ Եվտոկիոսը գրել է նաև Պորփյուրի Ներածության մեկնություն: Ուրբան ինձ հայտնի է, այս վերջին տեղեկությունը մի նորություն է և միանգամայն անծանոթ մեկնիչների հույն բնագրերով դրաղվողներին: Վերլուծականքի մեկնության այդ նոր վկայությունը, մեր կարծիքով, լուսարանում է նաև այն խնդիրը, թե ինչո՞ւ Եվտոկիոս Ասկալոնացին յուր երկերը նվիրել էր Ամմոնիոսին, որ ակներև Եվտոկիոսին ժամանակակից Հերմիասի որդի նորպլատոնական մեկնիչն է: Այս Ամոնիոսը մեր ձեռքը հասած՝ Պորփյուրի Ներածության հնագույն մեկնության հեղինակն է և P. Tannery նրան համարում է նաև Թվարան[1], ուստի և վստահությամբ կարելի է հետևցնել, որ Ամմոնիոս նորպլատոնական մեկնիչը Եվտոկիոս Ասկալոնացու ուսուցիչն է և Եվտոկիոսի Ներածության մեկնության ամենահոտ աղբյուրն, անշուշտ, պետք է համարել յուր ուսուցչի Աղեքսանդրիայում ավանդած դասախոսությունները:

Իսկ եթե մեր այս հետևությունն ուղիղ է՝ պարզ է, որ Ամմոնիոսի աշակերտ՝ V–VI դարի մեկնիչ Եվտոկիոսին հիշող նորպլատոնական Դավիթն ինքը VI դարի մատենագիր պետք է լինի:

Բացի այդ Դավիթ մեկնիչի խնդիրը ստանում է նաև մի ուրիշ հետաքրքրական լուսարանություն: Ինչպես հայտնի է, Հերմիասի որդի Ամմոնիոսը կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփայի ուսուցիչն է եղել: Թեև Ամմոնիոսը Պրոկղի աշակերտներից էր և յուր սկզբնա-

---

«Հին փիլիսոփայության պատմության». W. Windelband, Geschichte der alten Philosophie, München, 1894, zw. Aufl.

[1] Տե՛ս S. Günther, Abriss.., էջ 245:

կան կրթություն ստացել էր Ամիսոսում, բայց նա հետո դասախոսում էր Ալեքսանդրիայում: Ահա այս չրջանում աշակերտել են նրա մոտ Ալեքսանդրիայում կրտսեր Օլիմպիոդորոսը և Եվտոկիոսը, և ինքնըստինքյան հասկանալի է, որ կրտսեր Օլիմպիոդորոս վիկիպեդիայի աշակերտ Դավիթն ամենից շատ Ամոնյան չրջանի մեկնիչներին ծանոթ պիտի լիներ և նույնիսկ նրանցից շատերին անձամբ ունսած էր, այնպես որ բացատրվում է Դավթի հիշատակած մեկնիչների գաղտնիքը: Դրանք բոլորն էլ Դավթին գրեթե ժամանակակից Ալեքսանդրյան դպրոցի նորպլատոնական մեկնիչներ են: Իսկ մյուս կողմից Ամիսոսի V-VI դարի հայտնի և ականավոր նորպլատոնական իմաստասերներից և ոչ մեկի անունը և հիշատակությունը չենք գտնում Դավթի մեկնիչի երկերում: Մի՞թե այս ուշագրավ հանգամանքը պատահական պետք է համարել: Իհարկե ո՛չ: Դավիթ Ալեքսանդրիայի մեկնիչներից է, մոտ ծանոթ յուր չրջանի ալեքսանդրյան մեկնիչներին, Ամիսոսում բնավ չի եղել և այդ մասին հայկական մատենագրական ավանդություն հետագա դարերում ստեղծված առասպել է: Ահա ա՛յս է, իմ կարծիքով՝ նորպլատոնական Դավթի մասին ամենահավանական հետևությունը, որ ստացվում է նրա երկերի ներքին բովանդակության ուսումնասիրությունից:

Վերլուծականի մեկնության մեջ հիշվող (էջ 564, Վենետիկ, 1833), Ալեքսանդրոս մեկնիչը նույնպես Դավթի չրջանի Ալեքսանդրյան դպրոցի մեկնիչներից պետք է լինի: «Եւտոկիոս ակիպրն առնելով յիշատակութենանն Պորփիրի Ներածութենանցն լանդիլ, **իսկ Աղեքսանդրոս զառաջիկայս յիշատակելով զիրողութիւն լաւագոյն քան զնա արար**» տողերից պարզ հետևում է, որ այս Ալեքսանդրոսը չի կարող Ալեքսանդրոս Ափրոդիսեցին լինել: «**Զառաջիկայս յիշատակելով զիրողութիւն**» բառացի թարգմանություն է մոտավորապես հունարեն «*τὴν προσκειμένην μνῆσας πραγματείαν*» խոսքերի և «*իրողութիւն*» = *πραγματεία* (tractatio) բառով ակնարկում է Եվտոկիոսի «Ներածութենան մասին» աշխատությունը, որին ծանոթ է եղել Ալեքսանդրոս մեկնիչը: Քանի որ Եվտոկիոս Ասկալոնացին Դավթի ուսուցիչ կրտսեր Օլիմպիոդորոսին ժամանակակից մեկնիչներից է՝ ուրեմն Եվտոկիոսի աշխատությունից օգտվող Ալեքսանդրոսն ավելի կրտսեր մեկնիչ է և նորպլատոնական Դավթին ժամանակակից: Այս բոլոր մեկնիչները ժամանակով

իրար այնքան մոտ են, որ միևնույն տեղի և միևնույն չրջանի մեկնիչներ միայն կարող են լինել: VI դարի սկզբի Աթենքի մեկնիչների ցրվին բոլորն էլ հայտնի են և նրանց չարքում Ագեքսանդրոս անունով մեկնիչ չի հիշվում: Դրա պատճառն իհարկե այն է, որ Ագեքսանդրոս մեկնիչն էլ, ինչպես և Ամմոնիոսը, Եվտոկիոսը, կրտսեր Օլիմպիոդորոսը, Հելիոսը և Դավիթը՝ Ագեքսանդրյան խմբի մեկնիչներ են:

Վերլուծականքի մեկնության է պրակում, ինչպես վերևում նկատեցինք, կա նաև Ամմոնիոս մեկնիչի հիշատակությունը (էջ 574, Վեննափիկ, 1833), բայց սրա մասին բացահայտ որևէ ցուցում չկա, որով կարողանայինք այս մեկնիչին ավելի մոտ որոշել: Միայն թե աչքի առաջ ունենալով, որ կրտսեր Օլիմպիոդորոսը և հավանարար նաև Եվտոկիոս Ասկալոնացին Հերմիասի որդու՝ Ամմոնիոսի մոտ Ագեքսանդրիայում աշակերտ են եղել՝ կարելի է ենթադրարար հավանականագույն համարել, որ Ագեքսանդրյան խմբի Օլիմպիոդորոս փիլիսոփայի աշակերտ Դավիթն ավելի շուտ այս Ամմոնիոսի երկերին ծանոթ պիտի լիներ, քան թե նույն անունը կրող Աթենքի հնագույն մյուս մեկնիչների: Ամմոնիոսի անձնավորության որոշումը մեր նպատակության համար այլևս այնքան էլ կարևոր չէ, որովհետև առանց այդ էլ մեր վերոհիշյալ հետևություններից երևում է, որ նորպղատոնական Դավիթն Աթենքում ուսում առած V դարի մեկնիչ չի կարելի ընդունել:

Սահմանք Իմաստասիրության երկի և Ներածության ու Վերլուծականքի մեկնությունների հայերեն բնագրի հետազոտությամբ, ինչպես տեսանք, հաստատվում է բյուզանդագետների այն ուշագրավ նկատողությունը, որ Դավիթ մեկնիչը կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփայի աշակերտ և ուրեմն VI դարի մատենագիր է:

Նորպղատոնական Դավթի մասին այս հետևությունն առիթ է տալիս մեզ մի ընդհանուր դիտողություն անելու: Իմ կարծիքով, Ագեքսանդրիան խիստ մեծ չափով նպաստել է Հայոց մատենագրության զարգացման, և ընդհանուր Առմամբ Արևելքի գիտական կենտրոններն են գլխավորապես Հայոց մատենագրությանը սնունդ տվող alma mater-ը, իսկ Արևմուտքի դերն այդ տեսակետից չափազանցված է: Պիտոյից գրքի հեղինակն է Aphthonios, որ Ագեքսանդրյան հռետոր է, Մովսես Խորենացուն վերագրված Աշխարհագրության բուն աղբյուրն է Ագեքսանդրյան Պապոսի աշխատությունը, Նոննոսը կամ ավելի

ճիչտ կեղծ-Նոննոսը նույնպես VI դարի Ագեքսանդրյան չրջանի մատենագիրներից պիտի լինի, չուտով հրատարակելու ենք Hermes Trismegistos-ի մի հատված, որի ծագումը ևս Ագեքսանդրիայից է, նորպղատոնական Դավիթը նույնպես VI դարի Ագեքսանդրյան պլրոցի մեկնիչ է՝ պարզ է, որ Ագեքսանդրիայի դերը հայոց մատենագրության վերաբերմամբ չատ մեծ պետք է համարել:

§ 9. Նորպղատոնական Դավիթ մեկնիչը քրիստոնյա է

Քանի որ Դավիթ մեկնիչը և Դավիթ Հարքացին, ինչպես ևնթադրում էինք, տարբեր անձնավորություններ են, և հետևաբար Դավթի մասին ընդունելություն գտած հայկական մատենագրական ավանդությունները կորցնում են իրենց նչանակությունը և համենայն դեպս չեն վերաբերում նորպղատոնական Դավթին, բնականաբար, կարող է հարց ծագել, թե արդյոք նորպղատոնական մեկնիչ Դավիթը քրիստոնյա էր, թե ո՛չ: Դավթի հետ Օլիմպիոդորոսի մոտ աչակերտող Էլիաս մեկնիչի մասին հաղորդվում է, որ նա յուր մեկնողական երկը գրելու ժամանակ դեռևս քրիստոնյա չէր[1]: Արդ՝ արդյոք կա՞ն բավարար հիմքեր ընդունելու, որ Սահմանք Իմաստասիրության երկի և Նեոպլատոնի ու Վերլուծականքի մեկնությունների հեղինակը քրիստոնյա էր: Իմ կարծիքով, այդ հարցին կարելի է տալ դրական պատասխան:

Որ նորպղատոնական Դավիթը քրիստոնյա է՝ այդ ամենից առաջ երևում է նրա Դավիթ անունից: Իսկ մեկնիչի անունն անպայման Դավիթ է եղել, որովհետև թե՛ հունարեն բնագրերն ունեն ἀπὸ φωνῆς Δαβὶδ վերնագիրը և թե՛ հայոց մատենագրության մեջ ըստ երևույթին մեկնիչի Դավիթ անունն է եղել նրան Դավիթ Հարքացու հետ չփոթելու պատճառներից մեկը:

Հունաց մատենագրական ավանդությունը նորպղատոնական Դավթին համարել է քրիստոնյա, որովհետև Սահմանք Իմաստասիրության երկի հունարենի վերնագիրն է՝ Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου: Սակայն ի նկատի առնելով, որ մեկնիչ

[1] K. Krumbacher, GBL, zw. Aufl., էջ 432:

Դավիթը հունական չրջանում ևս չփոթված է եղել Niketas David Paphlagon-ի հետ՝ թերևս առարկելն մեզ, որ «θεοφιλεστάτου καὶ θεόφρονος» մակդիրները չեն վերաբերում իսկական Դավթին:

Սակայն հունարեն այս վերնագրից և մեկնիչի Դավիթ անունից անկախ՝ կան և ուրիշ ավելի հաստատուն նշաններ, որոնք ապացուցանում են Դավիթ մեկնիչի քրիստոնյա լինելը: Ինչպես արդեն տեսանք (§ 4), Սահմանք Իմաստասիրութեան երկը և Նեոպատութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները բաժանված են պրակների և այդ պրակների «Հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակը (կամ տետրակն)» վերնագրերն անպայման հեղինակինն են: Արդ՝ ակներև է, որ չարունակ կրկնվող «Հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակը» խոսքերը կարող են հեղինակի քրիստոնյա լինելու նշաններ համարվել:

Սահմանք Իմաստասիրութեան երկում էջ 188 (Վենետիկ, 1833) գտնվում է հետևյալ հետաքրքրական հատվածը. «Արդ այսպէս և Աբեննա կոյս լսի. վասն զի ասէին արտաքինքն զԱբեննայէ, եթէ ի գլխոյն Արամազդայ ծնաւ»: «Արտաքինքն» բառով Դավիթ մեկնիչն այստեղ ակնարկում է երեի հեթանոս մատենագիրներին: Մյուս կողմից «արտաքինքն» հույն հեղինակների վերաբերմամբ գործածված լինելով, թերևս կարելի լինի այդ՝ մեկնիչ Դավթի արևելյի ծագման մի նշան համարել, ուստի և անհիմն չի լինի ենթադրել, որ Դավիթ մեկնիչը VI դարի քրիստոնյա և ո՛չ-հույն մատենագիրներից է, ինչպես և Գրիգոր Աստվածաբանի ճառերի՝ Նոննոս անունով հայտնի մեկնիչը:

§ 10. Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը Դավիթ մեկնիչը չէ

Նոննոսի հրատարակության առաջաբանում[1] մատնանիշ էի արել, որ էջմիածնի մատենադարանի թիվ 1775 (= Կար. ցուց., թիվ 1733) և 1808 (= Կար. ցուց., թիվ 1765) ձեռագրերը Գրիգոր Աստվածաբանի հինգ ճառերի առասպելաբանական մեկնութիւնների հեղինակ համարում են Դավիթ Անհաղթ փիլիսոփային: Թիվ 1775 ձեռագրում թեր. 150ե գտնվում է հետևյալ վերնագիրը. «Գիրքս իմաստասիրաց արտաքնոց առասպելաբա-

[1] Տե՛ս (Nonnos), Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz. Marburg, 1903, էջ 2. կամ նույնի՝ Zeitschrift für armenische Philologie, Erster Band, էջ 221:

նութեան արարեալ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի»: Այդ վերնագիրը թեև ձեռագրի գրչինը չի և գրված է ձեռագրի հետևի կողի վրա՝ բայց գրությունը հին է: Իսկ թիվ 1808 ձեռագիրը պարունակում է Նոննոսից միայն I–XII գլուխ, որ ընտրությամբ ծաղկաքաղ է արել Հովսեփ գրչը, և ծաղկաքաղի վերջում գտնվում է Հովսեփ գրչի հետևյալ հիշատակարանը. «Զայս քանի մի առաջնոց հեթանոսաց առասպելական պատմութէ, զոր արարեալ է Դաւիթ յանյաղթ փիլիսոփայի և ես պիտակ և վրիպակ Յովսէփս գպիտանացուան ընտրեցի և ծրեալ եղի ի վերջ գրոիս...» (թերթ 340b):

Ձեռագրերի հաղորդած այս տեղեկությունն ուշադրության արժանի էր, որովհետև հաստատ կերպով դեռ որոշված չէ, թե արդյոք հիշյալ առասպելարանական մեկնությունների հեղինակը արդա Նոննոսն է, թե մի ուրիշը: Բանասեր և բյուզանդագետ էդվին Պատցիգ, որ մասնագիտորեն քննել է Նոննոսին վերագրված բազմաթիվ հունարեն ձեռագրեր և ըստ կարելվույն լուսարանել է այդ մեկնությունների հորինման ժամանակի և հեղինակի անձնավորության վերաբերյալ խնդիրները՝ ցույց է տալիս, որ միմիայն տասներորդ դարից սկսած հիշվում է Նոննոսն իբրև մեկնությունների հեղինակ, իսկ տասներորդ դարից առաջ թեև բազմաթիվ մատենագիրներ օգտվել են առասպելաբանական մեկնություններից, բայց հեղինակի անունը չեն հիշում. իսկ XII դարում Tzetzes մատենագիրը նույն մեկնությունները վերագրել է ոմն Մաքսիմոսին[1]: Էդվին Պատցիգ սրամիտ և հիմնավոր փաստերով մատնանիշ է անում, որ Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնությունները գրված են իմաստասիրական հեթանոս դպրոցների փակումից առաջ՝ VI դարի սկզբում, իսկ մեկնությունների հեղինակի մասին կարծում է, որ անպայման արևելցի և հավանորեն ասորի քրիստոնյաներից է, ինչպես և Մալալասը[2]:

Ի նկատի առնելով էդվին Պատցիգի այդ հետևությունները՝ միանգամայն կարելի էր հնարավոր համարել, որ VI դարի քրիստոնյա և հավանարար արևելցի մեկնիչ Դավիթը հորինած լիներ Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնությունները, ինչպես այդ վկայում են էջմիածնի թիվ 1775 և 1808 ձեռագրերը: Սակայն Նոննոսի և մեկնիչ Դավթի երկերի ներքին

[1] Տե՛ս Dr. Edwin Patzig, De Nonnianis in IV orationes Gregorii Nazianzeni commentariis. Leipzig, 1890. էջ 24–26:

[2] Տե՛ս նույնը, էջ 26–30:

բովանդակության հետազոտությունից երևաց, որ առասպելաբանական մեկնությունների հեղինակը և նորպղատոնական Դավիթն անպայման տարբեր անձնավորություններ են:

Սահմանք Իմաստասիրութեան երկի և առասպելաբանական մեկնությունների հեղինակները, ինչպես կտեսնենք, խոսում են հաճախ մեկնության առասպելաբանական և իմաստասիրական նյութերի մասին, սակայն նոցա պատմածներն ու բացատրությունները երբեմն բովանդակությամբ այնքան զանազանվում են իրարից, որ ակներև տարբեր անձնավորություններից պետք է հորինված լինեն: Բովանդակության տարբերության, անշուշտ, ավելի մեծ կարևորություն պետք է տալ, քան լեզվական պատահական նմանություններին: Սակայն պետք է ի նկատի առնել և այն, որ վերոհիշյալ երկերի հայերեն թարգմանության մեջ լեզվական առանձնահատկությունները որոշ նշանակություն ունեն թարգմանության վերաբերյալ խնդիրները լուսաբանելու համար: Արդ՝ դեմ առ դեմ դնենք Սահմանք Իմաստասիրութեան երկի և առասպելաբանական մեկնությունների նման հատվածները, որպեսզի փաստորեն ցույց տանք այդ հատվածների տարբեր հեղինակներից հորինված լինելը: Լեզվական նմանությունները մենք ընդգծել ենք, թեև այդ նմանությունները համարում ենք միանգամայն պատահական: Բայց իհարկե համոզված ենք, որ լեզվական աննշան և պատահական նմանություններից լուրջ հետևություններ անող բանասերները կաչխատեն այլ կերպ մեկնել այն, ինչ որ մենք պատահական ենք ընդունում:

Սահմանք Իմաստասիրութեան, էջ 134[1]	***Նոննոս IV, ԼԳ, էջ 77 [296][2]***
«Եւ պարտ է գիտել՝ եթէ որք առասպելարանն ասեն, թէ **Պռիմիթեւս գողացաւ երկնէն յաստուածոցն հուր՝ եւ չնորհեաց մարդկան,** *որ է այլաբանութիւն»:*	**«Պռոմիթեւսս այս ասի, թէ գողացաւ զհուր յաստուածոցն եւ չնորհեաց մարդկան,** *և եթէ ի միւս գիտից պատրեաց զԱրամազդ, և ի բարկութիւն չարժեաց զնա կրկին»:*

[1] Տե՛ս Կորիւն վարդապետի, Մամբրէի վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

[2] Անկյունավոր փակագծում գրված թվերով նշանակում ենք «Հայագիտության հանդեսի» էջերը, հատոր I, Մարբուրգ, 1903:

Սահմանք Իմաստասիրութեան,
էջ 164

«Եւ պարտ է գիտել, եթէ ոմն Կղէոմբրոտոս ամբռակիացի կարծելով, *եթէ Պղատոն դրնաւորական մահուանէն հրամայէ խոկալ իմաստասիրին, ընկեցեալ զինքն ի պարսպէն վախճաննեցաւ»:*

Սահմանք Իմաստասիրութեան,
էջ 166.

«Որպէս և արար պիթագորուհին Տիմիփտայ, որ կոչեցաւ Թէանովն: *Քանզի նա անկեալ ի բուռն սիկիլացւոց բռնաւորին, և հարցեալ՝ թէ ընդէ՞ր ոչ ուտեն պիթագորականքն դմեծ ոլոռունս, ասէր՝ կերայց քան թէ ասացից: Եւ յասել բռնաւորին, թէ կե՛ր, ասէր. Ասացից քան թէ կերայց. և այնպէս* ծամելով զլեզուն *վախճաննեցաւ»:*

Սահմանք Իմաստասիրութեան,
էջ 188

«Արդ այսպէս և Աթենա կոյս լսի. վասն դի ասէին արտաքինն զԱթենայէ՝ եթէ ի գլխոյն Արամազդայ ծնաւ»:

Սահմանք Իմաստասիրութեան,
էջ 194

«Զորս առակելով քերթուքիւնն վասն Ոտոսի և Եփիաղտոսի, որք զՈսա զլեառն ի վերայ Ողիւմպիսի յօժարեցան դնել, *և ի վերայ Ոսայ զտերևաչարժն Բիրոսն, որպէս դի երկին ճնմարան եղիցի»:*

Նոննոս III, ԺԶ,
էջ 31 [250]

«Կլէոմբրատոս ամբրակացի էր ազգաւ... և կարծեցեալ, թէ յարի է հոգւոյ բաժանիլն ի մարմնոյ՝ ընկեց զինքն ի պարսպէն, որպէս դի հոգին ելեալ՝ բաժանեսցի ի մարմնոյն:

Նոննոս III, ԺԸ,
էջ 32 [251]

Կինս այս Թէանով *ի բռնաւորէ ըմբռնեալ՝ հարկաւորի ասել զանճառելիսն հայրենիս. իսկ նա պնդուն ծամեալ՝ ի բաց նետուբ, ոչ կամելով ի հարկէ ինչ ասել բռնաւորին, ի բաց խլելով գործարանին ձայնականի»:*

Նոննոս I, Դ,
էջ 7 [226]

... քանզի ասի թէ Աթենա ի գլխոյն Արամազդայ ծնաւ»:

Նոննոս II, ԺԶ,
էջ 21 [240]

«Սա [Մողոն] ունէր որդիս երկուս, առաջնոյն՝ Ովտոս *անուն և երկրորդին՝* Եփիաղտէս:...» *Արդ՝* զՈվս ի վերայ Աթովի խորհեցան դնել *և նորաւք յերկինս ելանել»:*

Սահմանք Իմաստասիրութեան, էջ 210

«Իսկ ի բազմականութենեան դանապան, դիտաւորութիւն և չարագրութիւն և մակագրութիւն. վասն դի Պղատոն եղակի **մակագրեաց՝ Զբազմականութիւն.** *իսկ Արիստոտէլէս յորնակի՝ Զբազմականութիւնք. վասն որոյ և դիտաւորութիւնն դանապան գոյ. բանդի Արիստոտէլ ասէ. թէ դիա՛րդ բազմաբաւարեցան առաջինքն. այս ինքն Արգիացիք և Բիսոտացիք. և այլք ամենայն Յոյնք. իսկ Պղատոն ասէ. թէ դիարդ պարտ է բազմաբաւարել»:*

Նոննոս III, ԿԸ, էջ 55 [274]

«Պղատոն իմաստասէր չարագրեաց չարագաստութիւն. զոր և **քաղաքավարութիւնս մակագրեաց:** *Յայսմ չարագրութեան ասէ, թէ որպիսի պարտ է լինել բազաքին և կամ յորքան արանց չարակայիւ. կամ որովք բարոյիւք կամ աւրինաւք բազաքաւարիլ: Այլ այնպիսի քազաք բանիւ միայն եղև նմա բազկացնալ և ոչ գործով. նաև ոչ քազաքաւարնալ...»:*

Համմտ. նաև Սահմանք Իմաստասիրութեան, էջ 199 և Նոննոս I, ԺԶ, էջ 11 [230], III, ԿԳ, էջ 51 [270]:

Դավիթ մեկնիչի և Նոննոսի[1] *այս հատվածներում աչքի են ընկնում բովանդակության հետևյալ տարբերությունները:*

Ըստ Դավիթ պիտագորուհի Թևանովին հարցնում է Սիկիլացվոց բռնավորը թե ***«ընդէ՞ր ոչ ուտեն պիտագորականքն զմեծ ղողունս»****, իսկ ըստ Նոննոսի բռնավորը ստիպում է Թևանովին* ***«ասել զանճառելիսն հայրենիս»:*** *Նորպղատոնական Դավթի ասելով՝ Թևանով չկամենալով պատասխանել բռնավորի հարցին՝* ***«ծամելով զլեզուն վախճանեցաւ»****, իսկ ըստ Նոննոսի՝* ***«զլեզուն ծամեալ ի բաց եթող ... ի բաց խլելով գործարանին ձայնականի»:***

Ոտոսի և Եվիպատոսի մասին մեկնիչ Դավիթը պատմում է, որ նորա ***«զՈսա զլեառն ի վերայ Ողիմպիոսի յօժարեցան դնել, եւ ի վերայ Ոսայ զտերեւաչարժն Բիրովն, որպէս զի երկին ճեմարան եղիցի»****. իսկ Նոննոսը բոլորովին այլ կերպ է պատմում նույնը.* ***«Արդ զՈվս ի վերայ Աթովի խորհեցան դնել եւ նոքունք յերկինս ելանել»:***

---

[1] Նոննոս անունը գործ ենք ածում միայն որոշ հարմարության համար թեև առասպելարանական մեկնություններն հեղինակը կարող է և մի ուրիշը լինել, ինչպես ճիշտ այդ նկատել է Էդվին Պատցիգ:

*Նորպղատոնական Դավիթը համոզված է, թե ինչո՛ւ քաղաքականության վերաբերյալ Պղատոնի և Արիստոտելի գրվածքների վերնագրերը տարբեր են – «Պղատոն եղակի մակագրեաց՝ **Զքաղաքականութիւն** [= Πολιτεία]», իսկ Արիստոտէլես յորնակի՝ Զքաղականութիւնք [= Πολιτεῖαι]», բայց Նոննոս այդ նրբութիւնը չգիտե և գրում է՝ «Պղատոն իմաստասէր չարագրեաց չարագաստութիւն, զոր և **քաղաքավարութիւնս** մակագրեաց»: Այս հատվածներում ուշագրավ է նաև այն, որ Πολιτεία բառը Սահմանք իմաստասիրութեան երկում թարգմանված է **քաղաքականութիւն**, իսկ առասպելաբանական մեկնություններում՝ **քաղաքավարութիւն:***

Իմ կարծիքով ավելի քան անհավանական է, որ միևնույն հեղինակը միևնույն նյութը պատմի և մեկնի այնքան տարբեր կերպով, ինչպես վերհիշյալ հատվածներում, և հետևաբար՝ առասպելաբանական մեկնությունների հեղինակը մեկնիչ Դավիթը չէ՝

*Նոննոսին վերագրված մեկնությունների բովանդակության հետազոտությամբ նույն այդ հետևությունը հաստատվում է նաև այլ փաստերով: Առասպելաբանական մեկնությունների հեղինակը, որ յուր աշխատությունը գրել է իմաստասիրական հեթանոս դպրոցների վակուումից առաջ՝ ըստ երևույթին իմաստասիրական խնդիրներում օգտվել է ժամանակակից նորպղատոնական մեկնիչների երկերից, սակայն իմաստասիրական հարցերում ինքը ո՛չ հմուտ մասնագետ է, ո՛չ էլ նորպղատոնական, ինչպես Դավիթը: Որ նորպղատոնական մեկնիչների երկերն առասպելաբանական մեկնությունների հեղինակին ծառայել են իբրև աղբյուր՝ այդ բոլորովին հաստատ է, որովհետև ինքը՝ հեղինակը խոստովանում է այդ. այսպես օրինակ՝ Նոննոս III, ԻԳ, էջ 34 [253]՝ **«Իսկ այդ մեկնիչքն Պղատոնի այսպէս ասեն...»**, կամ Նոննոս III, ԻԷ, էջ 37 [256]՝ **«Իսկ արդ այժմիկ մեկնողքն իմաստասիրացն ասեն»** և այլն: Մյուս կողմից՝ առասպելաբանական մեկնությունների հեղինակը չի կարող նորպղատոնական համարվել, և այդ երևում է Պղատոնի ազատության մասին նրա պատմածից. «Այլ ասէ աստուածայինն Գրիգորիոս, թէ վասն այսորիկ չոգաւ Պղատովն ի Սիկիղիայ, **զի վայելեսցէ պատուականութեամբ ճաչոցն Դիովնիսեայ: Եւ ստուգէ զասացեալսդ վաճառիչն նորա...»**[1]: Իմ կարծիքով, նեն*

[1] Տե՛ս Նոննոս, III, ԻԳ, էջ 34-35 [253-254]:

առաքելաբանական մեկնությունների հեղինակը նորպլատոնական լիներ՝ դժվար թե համաձայներ, որ Պղատոն Դիոնիսոսի մոտ էր գնացել նրա ճաչերը վայելելու համար: Այդ մեկնություններ դժվար թե Պղատոնին հարդողների շրջանում հավանություն գտներ, և նորպղատոնականները նույն Նոննոսի վկայությամբ այլ կերպ էին բացատրում իրենց ուսուցչի Սիկիլիա գնալը – «մի՝ դի պատմագրևացէ դհուրն որ յԵտնևայ ելանէ, և միւս՝ դի հաւանեցուսցէ դԴիոնիսոս իմաստասիրել»[1]:

Ինձ թվում է, որ վերհիշյալ առարկություններն աչքի առաջ ունենալով՝ կարելի է հաստատ կերպով եզրակացնել, որ էջմիածնի թիվ 1775 ձեռագրի «Գիրքս իմաստասիրաց արուաքնոց առաքելաբանութե՛ն արարեալ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» վերնագիրը, ինչպես և էջմիածնի թիվ 1808 ձեռագրի հիշատակարանում գտնվող այն տեղեկությունը, որ Դավիթ Անհաղթն է առաքելաբանական մեկնությունների հեղինակն՝ անհիմն և միանգամայն սխալ պետք է համարել: Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն և ուրիշ դեպքերում ևս կասկածանքով պետք է վերաբերվել ձեռագրական այն վերնագրերին, որոնց համաձայն այս կամ այն գրվածքը վերագրում են Դավիթ Անհաղթ փիլիսոփային:

[1] Տե՛ս **Նոննոս**, էջ 34 [253]:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՔՐՈՆԻԿՈՆԻՑ ՄԻ ՀԻՆ ՁԵՌԱԳՐՈՒՄ

Եվսերիոս Կեսարացու Քրոնիկոնի հայերեն ձեռագրերի մասին մանրամասն գրել է հանգուցյալ ուսուցչապետ Թեոդոր Մոմսենը (տե՛ս «Hermes», Dreissigster Band, էջ 322–338, «Die armenischen Handschriften der Chronik des Eusebius»): Հարկավի պետականն այդ հոդվածում մատնանիշ է անում, որ Պատմեցի Գևորգ Հովհաննիսյանի ընդօրինակութիւնը, որն ուղարկված էր Վիեննայի Մխիթարյաններին, ինչպես և Թոխաթի 1696 թվի ձեռագիրը՝ արտագրված են էջմիածնի թիվ 1724 ձեռագրից:

Ուրեմն՝ ապագայում Քրոնիկոնի հայերեն բնագիրը վերստին հրատարակելու ժամանակ՝ միանգամայն կարելի է անտես առնել վերոհիշյալ ընդօրինակութեան և Թոխաթի 1696 թվի ձեռագրի տարբեր ընթերցվածները, և ապագա հրատարակութեան հիմք ծառայելու է միայն էջմիածնի թիվ 1724 ձեռագիրը:

Ի նկատի առնելով, որ Քրոնիկոնի բնագիրը պատմական խիստ մեծ կարևորութեան ունի՝ անհրաժեշտ է լաւ կարելիւն վերականգնել մեր ձեռքը հասած էջմիածնի թիվ 1724 մայր ձեռագրի աղճատված ընթերցվածները առանձին հոգացողութեամբ, օգտվելով Քրոնիկոնից առնված այն քաղվածքներից, որոնք հանդիպում են գլխավորապես ձեռագրական ժողովածուներում:

Այդպիսի քաղվածքներ Եվսերիոսի Քրոնիկոնի առաջին մասից գտնվում են էջմիածնի թիվ 1775 ձեռագրում (= Կարինյան ցուցակ, թիվ 1733):

Այս ձեռագրի հիմնական մասը կազմում են Նոննոսին վերագրված առասպելարանական մեկնութիւնները, որ հրատարակել ենք «Zeitschrift für armenische Philologie» հանդեսում (Erster Band, էջ 220–300), նաև առանձին գրքույկով (Marburg, 1903): Նույն ձեռագիրը բացի Նոննոսից պարունակում է Ἡσυχιος-ի Πάτρια Κωνσταντινουπόλεως երկից մի մեծ կտոր (թերթ 108բ–117բ) հետևյալ վերնագրով՝ «Պատմութիւն ի սկզբանէ չինութեան հոյակապ եւ պանծալի քաղաքին Բիւզանտիոնի»[1]: Այս հատվածին անմիջապես հետևում են քաղվածքներ Եվսերիոսի Քրոնիկոնից և Պատճառաց Գրքից

[1] Տե՛ս նույնը Հ[այր] Արսեն Սուքրյանի հրատարակութեամբ «Բազմավեպ» հանդեսում, 1878, էջ 58–63, «Պատմութիւն ի սկզբանէ չինութեան հոյակապ

(թերթք 117ր - 127ր և 128ա - 158ր):

Թեև այս ձեռագիրը հիշատակարան չունի, սակայն կարծում ենք, որ մոտավորապես XIII դարում պետք է գրված լինի, որովհետև գիրն անցողական բոլորգիր է, իսկ այդպիսի հին գրություն XIV կամ հետագա դարերի ձեռագրերում ինձ գրեթե չի հանդիպել: Համենայն դեպս ձեռագիրը 1217 թվից հետո է գրված, որովհետև պարունակում է Պատճառաց Գրքից հատվածներ[1]:

Մեր այս ձեռագրի Քրոնիկոնից քաղված հատվածները խիստ հետաքրքրական են այն տեսակետից, որ գաղափար են տալիս էջմիածնի թիվ 1724 մայր ձեռագրի և հ[այր] Մ. Ավգերյանցի լույս ընծայած բնագրի թերությունների մասին:

Բոլոր քաղվածքները համապատասխանում են հ[այր] Մ. Ավգերյանցի հրատարակած բնագրի 250 տողին և այդ 250 տողում տալիս են 188 տարբեր ընթերցվածներ, որոնցից շատերը տպագրվածից լավագույնն են: Ուրեմն, եթե մեր ձեռքը հասած լիներ Եվսերիոսի Քրոնիկոնի մի հին անկախ այլ ձեռագիր, այժմյան հայերեն բնագիրը բազմաթիվ փոփոխություններ կկրեր:

Թե որքան ճիշտ է այս նկատողությունը՝ կկնդրենք ստուգել հիշյալ քաղվածքների ներքևում նշանակած տարբեր ընթերցվածներից:

Ուսուցչապետ Թ. Մոմգենի օրինակին հետևելով՝ նախ նշանակում ենք Alfred Schöne-ի լատիներեն թարգմանության էջերն ու տողերը և ապա հ[այր] Մ. Ավգերյանցի միածալ և քառածալ միևնույն հրատարակության էջերն ու տողերը և այդ տպագրության ընթերցվածները, իսկ դրանց համապատասխան էջմիածնի թիվ 1775 ձեռագրի տարբերությունները նշանակում ենք F տառով = Fragmentum:

քաղաքին եւ պանծալի Բիւզանդիոնի»: Էջմիածնի թիվ 1775 ձեռագրում չատ ընթերցվածներ լավագույն են, քան հ[այր] Արսեն Սուքրյանի հրատարակած բնագրում:

[1] Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1904, մայիս, էջ 144, ծանոթություն 4: Ն. Ակինյանի «Նոննոսի մեկնութիւնք Գրիգոր Աստուածաբանի հինգ ճառից» հոդվածում, ուր որոշված է Պատճառաց Գրքի ժամանակն ըստ հ[այր] Հ. Տաշյանի ցուցման:

Ա. ԷՋմիածնի ձեռագիրը, թիվ 1775, թերթք 117բ – 122ա (= Alfred Schoene, ԷՋ 11,21 – 17,17 = Ավգերյանց, ԷՋ 9,14 – 13,18 = 17,4 մինչև 26,9)

F վերնագիր՝ «ա ի Բազմավէպն Աղեքսանդրի գրոցն զՓաղդէացւոց մատենիցն»:

Alfred Schoene, 11,21[1] = Ավգերյանց, ԷՋ 9,11[2] = 17,1[3] Բերոսոս բայ, F. Բերով. Կոսբա: F-ն աղճատված է:

11,21 = 9,15 = 17,5 բարևդոնական, F. բարևդոնական:

11,22 = 9,16 = 17,6 Փիղիպեայ, F. Փիղիպպեա [= Φιλίππου]

11,23 = 9,17 = 17,7 ի Բարևդոնի, F. ի Բարևդոնի:

11,24 = 9,19 = 17,9 յերկերիւր, F. յերկրէ իւր: F. աղճատված է:

11,27 = 9,22 = 18,3 դնաժամակերտն արարչութենէ, F. դնաժամակերպն արարչութենէ, [Sync. περὶ ... πρωτογονίας]:

11,28-29 = 9,21-25 = 18,5-6 դնոցուն իրաց եւ դգործոց պատմէ, F. դնոցունց իրաց եւ դգործոց (պատմէ չէք), [Sync. περὶ ... τῶν κατ' αὐτοὺς πράξεων]: F-ի ընթերցուածը կարելի է լավագույն ընդունել. «պատմէ» հայերեն բնագրում միանգամայն ավելորդ է և հունարենում էլ չկա:

11,30 = 9,25 = 18,6 դնէ ասէ, F. ասէ (դնէ չէք): Ինչպես արդեն նկատել են հ[այր] Մ. Ավգերյանց եւ Alfred Schoene «դնէ» հայերեն բնագրում ավելորդ է: Համաձայն Թոխաթի ձեռագրին F. ևս չունի «դնէ»:

11,30 = 9,25 = 18,6 զրարիզացւոց, F. զրարելացւոց:

11,30 = 9,26 = 18,7 Հաստատել, F. Հաստատեալ: F. լավագույն է:

11,30 = 9,26 = 18,7 ի վերայ, F. ի վերա:

11,32 = 9,28 = 18,9 յինքն կեայ, F. ինքն կայ (?):

11,33 = 10,2 = 18,11 կնճիթ, F. կնճիթ:

11,37 = 10,5 = 19,3 զօրութիւն, F. զգաւրութիւն: F լավագույն:

---

[1] Alfred Schöene, Evsebi Chronicorum liber prior. Armeniam versionem latine factam ad libros manuscriptus recensuit H. Petermann. Berolini MDCCCLXXV.

[2] հ[այր] Մկրտիչ վարդապետ Մխիթարյան Ավգերյանց, Եվսերի Պամփիլյայ կեսարացվո ժամանակագրանք Երկմասնյա, մաս Ա, Վենետիկ, 1818, միաճալ:

[3] Նույնի՝ բառաճալ:

13,1 = 10,12 = 19,10 լեռնայինս, F. լեռնաինս:

13,1 = 10,13 = 19,11 ի բարելովնի, F. ի բարելովնի, [յուն. ἐν τῇ Βαβυλῶνι]:

13,6 = 10,15 = 19,13 բնակեալ, F. բնակել:

13,6 = 10,16 = 20,1 նոցա, F. նոցայ:

13,8 = 10,19 = 20,4 յառաջնումն, F. յառաջնում:

13,9 = 10,21 = 20,6 բարելացւոց, F. բարելայցոց:

13,10 = 10,22 = 20,7 որոյ, F. որոյ, F. **լուսանցքում՝** որում:

13,11 = 10,23 = 20,8 ապողոդորոս, F. ապողդողորոս [= Sync. Ἀπολλόδωρος]:

13,13 = 10,25 = 20,10 ձկանն, F. ձրկանն:

13,14 = 10,27 = 20,12 ի տատնն, F. ի տրտունն:

13,16 = 10,29 = 21,1 պահի, F. պատմի, [Sync. διαφυλάσσεσθαι]: F. **աղճատված է:**

13,17 = 11,1 = 21,2 ցկրկի, F. ցցկրկին, [Sync. τὴν μὲν ἡμέραν]: F. **լավագույն:**

13,18 = 11,3 = 21,4 չհալել, F. ոչ հալել:

13,20 = 11,4 = 21,5 զպրուֆինս, F. զպրուֆինս:

13,21 = 11,6 = 21,7 զձևս, F. և զձևս, [Sync. καὶ πόλεων συναχισμοὺς]: F. **լաւագոյն:**

13,21-22 = 11,6-7 = 21,7-8 զմեհենաց պատչաճուֆիւնս, F. զմէհանաց պատչաճուֆինս, [Sync. ἱερῶν ἱδρύσεις]: F. «**զմէհանաց**» **գուցե և աղճատված է:** Phl. mēhan նշանակում է «**բնակարան**», տե՛ս Horn, Grundriss der neupersischen Etymologie, էջ 227:

13,22 = 11,7 = 21,8 խնդամտուֆիւնս, F. խնդամտուֆինս:

13,22-23 = 11,8-9 = 21,9-10 և սահմանաց և բաժնից պայմանս, F. և զսահմանաց և զբաժնոց պայմանս: F. **լավագոյն է:**

13,27 = 11,13-14 = 21,11-15 յայնմ՝ ժամանակէ հետէ, F. յայնմ հետէ ժամանակէ:

13,29 = 11,16 = 21,17 ովանն զազանի, F. ովաննի զազան, [Sync. τὸ ζῷον τουτονὶ Ὠάννην]:

13,30 = 11,17-18 = 21,18-19 ի համատարած, F. ի համատած: F. **աղճատուած է:**

13,30 = 11,18 = 21,19 գկտևղկ, *F.* գևտևղկ:

13,31 = 11,19 = 21,20 երկևկկից, *F.* երկակևաց, *[Sync. ἀμφίβιον]:* **Եթէ «երկեկից» *[= ἀμφίβιον]* բառի գործածութեան համար ուրիշ վկայութիւններ չգտնվեն՝ պետք է դուրս ձգել Հայկազեան Բառգրքից, որովհետև ըստ երևոյթին այդ բառն աղճատված է «երկակեաց» ձևից:**

13,34 = 11,23 = 22,3 ասէ յայտ առնել, *F.* ասէ դյայտնևլն, *[Sync. φησι δηλώσειν]*

213,31 = 11,23 = 22,1 դյովանայն, *F.* գովանայն: *F.* **լավագույն է:**

13,39 = 11,26 = 22,7 **էր ասէ երբեմն,** *F.* **էր ասէ երբեմն** *ժամանակ, [Sync. Γενέσθαι φησὶ χρόνον]: F.* **լավագոյն է:** *Alfred Schöene* **թարգմանել է՝** *«(Tempus) aliquando erat ...,»,* **փակագծերն ավելորդ են:**

13,39 = 11,26 = 22,7 **մինչ,** *F.* **մինչեւ:**

15,3-4 = 11,31 = 22,12 **չորեքթևևևան,** *F.* **չորեքթևևևանս** *[= Sync. τετραπτέρους]:*

12,2 = 11,32 = 22,13 գլուխ, *F.* գլուխս *[= Sync.* **κεφαλὰς***]:*

15,5 = 11,33 = 22,14 առնիս, *F.* առնացիս, **էջմիածնի մայր ձեռագիրն ևս ունի՝** «առնացիս» *[= Sync. ἀνδρεῖαν]:*

15,5 = 11,34 = 22,15 բնութինս, *F.* բնութինս:

15,8 = 11,36 = 22,17 նղջիւրք, *F.* նղջևւրք: *F.* **լավագույն է:** *Տե՛ս* ***A. Meillet,*** *Observations sur la graphie de quelques anciens manuscrits de l'Evangile arménien. Extrait du numero Nov.-Déc. 1903, «Journal Asiatique».*

15,9 = 11,37-38 = 22,18-19 յետոյ կուսէ, *F.* յետոյ կուսէ, *F.* **լուսանցքում՝** յետուստ:

15,13 = 11,43 = 23,3 տտունս, *F.* տրտունս:

15,13 = 11,43 = 23,3 յետոյ կուսէ, *F.* յետուստ կուսէ:

15,14 = 11,44 = 23,4 չնապլուխս, *F.* չանապլուխս:

15,15 = 11,45 = 23,5 այլ եւս, *F.* այղ եւս:

15,16 = 12,1 = 23,6 մարդապատկերս, *F.* մարդապատկերս:

15,16 = 12,2 = 23,7 տանեաւ որս, F. տրտնաւ որս:

15,16 = 12,2 = 23,7 գձկունս, F. գձրկունս:

15,18 = 12,5 = 23,10 Երկս, F. Երնս: «Երկս» **տպագրած բնագրում երևի վրիպակ է:**

15,20 = 12,8 = 23,13 իկդայ, F. բնդա, [Sync. τοῦ Βῆλου]:

15,23 = 12,11 = 23,16 քաղղկեցներկն, F. քաղղկացներկն:

15,23 = 12,11 = 23,16 Թաղատթայ, F. Թաղատթ [= Sync. Θαλάτθ]:

15,23 = 12,12 = 23,17 յունաւրկն, F. յուններկն:

15,24 = 12,13 = 23,18 Թաղաղդայ, F. Թաղատտայ [Sync. θάλασσα]: **Տպագրված բնագրում «Թաղաղդայ» վրիպակ է, ինչպես այդ արդեն նկատել է** *Alfred Schöene:*

15,26 = 12,15-16 = 24,2-3 յարձակեալ ի վերայ իկդայ, F. յարձակել ի վերա բնդայ, [Sync. ἐπανελύντα Βῆλον]: **Տպագրված բնագիրը լավագույնն է:**

15,26 = 12,16 = 24,3 Հևրձու, F. Հևրձուլ [= Sync. σχίσαι]:

15,23 = 12,18 = 24,5 գաղանսն, F. գգաղանսն:

15,28-29 = 12,18-19 = 24,5-6 որ ի նմա կինն՝ սատակեալ, F. որ ի նմայ կին սատակել: F. **Հունարենին համապատասխան՝** *[Sync.* **καὶ τὰ ἐν αὐτῇ ζῶα ἀφανίσαι***]:*

15,33 = 12,25 = 24,12 ի նմանէ, F. ի նման:

15,34 = 12,26 = 24,13 գանգանել, F. գանկանել:

15,35 = 12,28 = 24,15 լինին, F. լինել [= Sync. **εἶναι***]:*

15,36 = 12,29 = 24,16 Հաղորդել, F. Հաղորել: F. **վրիպակ:**

17,1 = 12,30 = 25,1 գրկդայն, F. գրեղայն:
17,1 = 12,30 = 25,1 Հունարկն, F. Հուններկն:
17,3 = 12,32 = 25,3 ընդ մկջ կտրնաց, F. ընդ մկջ կորնաց: F. **վրիպակ:**

17,4 = 12,33 = 25,4 եւ զատանիլ, F. (եւ չիք) զատաննլ, [Sync. **καὶ διατάξαι***]:* **Ուղիղ ընթերցվածը կլինի՝** «եւ զատանել»:

17,5 = 12,35 = 25,6 զաղանաց ոչ ժուժել, F. զաղանացն չժուժալ:

17,5 = 13,1 = 25,7 գօրութեան, F. զաւրութեանն:

17,6 = 13,2 = 25,8 բկպայ, F. բեպայ:

17,9 = 13,4 = 25,10 Հատնալ [= Sync. ἀφελόντι], F. Հարնալ:

17,9 = 13,5 = 25,11 զանգանել, F. զանկանել:

17,10 = 13,7 = 25,13 այլ, F. այդ:

17,13 = 13,9 = 25,15 Հաստատել բկպայ, F. Հաստել բեպա:

17,14 = 13,12 = 26,3 բերուստս, F. բերուխուս [= Βηρωσσος]:

17,17 = 13,17 = 26,8 ի խ. բերս ամաց, F. քառասուն բեր ամաց:

Բ. Էջմիածնի թիվ 1775 ձեռագիրը, թերթք՝ 122ա – 125ա (= Alfred Schöene, Էջ 19,37 – 23,16 = Ավգերյանց, Էջ 16,1 18,22 = 31,11 մինչև 37,10)

F. վերնագիր՝ «Աղեքսանդրի Բազմավիպի»

*Alfred Schoene 19,37 = **Ավգերյանց** 16,1 = 31,11 կրոմն F. կրոնա:*

19,39 = 16,1 = 31,11 յայտնել, F. յայտնեալ:

19,37 = 16,2 = 31,12 Հայրն, F. Հայր:

19,38 = 16,2 = 31,12 արամադրայ, F. արամադրա:

19,40 = 16,3 = 31,13 ի հնգետասաներորդում, F. ի հինգետասաներկրորդում:

*19,40 = 16,4 = 32,1 դէ-լոս ամսեան [= Sync. μηνὸς Δαισίου], F. Գէ-սիոս ամսեան: F. **վրիպակ:***

19,41 = 16,5 = 32,2 ի ջրհեղեղն, F. ի ջրհեղեղ:

19,41 = 16,6 = 32,3 Հրաման տալ, F. Հրաման տալ նմա:

21,2 = 16,7 = 32,4 մատնից, F. մատնիցն:

21,3 = 16,9 = 32,6 սխալարացուց, F. սպարացուց:

21,5 = 16,12 = 33,2 ոսկիկս և ըմպելիս: F. ոսկիկ եւ ըմպելի:

21,7 = 16,14 = 33,4 կազմածովք, F. կազմածով:

21,8 = 16,16 = 33,6 թէ, F. եթե:

21,8 = 16,16 = 33,6 արդեօք, *F.* արդեւք:

21,10 = 16,19-20 = 33,9-10 չըս-առնպանէր, *F.* ոչ առնկանէր:

21,16-17 = 17,6 = 34,6 Թոչուն ինչ արձակել քահանայ [= Sync. τῶν ὄρνεων τινὰ τὸν Ξίσουθρον ἀφιέναι], *F.* Թոչուն ինչ քահանային արձակել:

21,17 = 17,7 = 34,7 չգտանել, *F.* ի չգտանել, *F.* **լավագույն է:**

21,18 = 17,8 = 34,8 եւ դադար, *F.* (եւ **չիք**) դադար:

21,17 = 17,9 = 34,9 գնաւա, *F.* գնա:

21,20-21 = 17,12 = 34,12 անդրէն, *F.* անդրեն:

21,21 = 7,11 = 34,11 բերեալ, *F.* բերել:

21,22 = 17,14 = 34,14 երրորդ [= Sync. τὸ δὲ τρίτον], *F.* երկրորդ: *F.* **աղճատված է:**

21,23 = 17,17 = 34,17 եթէ *F.* Թե:

21,24 = 17,18 = 34,18 քակել զկողմ, *F.* եւ քակել զկողմն [= Sync. διελόντα τε...]:

21,27 = 17,23 = 35,2 յերկրի. *F.* երկրի: *F.* **լավագույն է՝** «եւ երկիր-պագանել երկրի» [= Sync. προσκυνήσαντά τε τὴν γῆν]:

21,28 = 17,21 = 35,3 դից, *F.* դիցն:

21,29 = 17,25 = 35,4 այնուհետեւ չիք, *F.* անհետ եւ չիք: **Ինձ թվում է թե «անհետ եւ չիք յաչաց լինել» լավագույն ընթերցված է** [= Sync. γενέσθαι ... ἀφανῆ]:

21,29 = 17,26 = 35,5 ընդ նմա, *F.* ընդ նմայ:

21,30 = 17,28 = 35,7 մնային, *F.* մնային:

21,31 = 17,28 = 35,7 ընդ քահանայիցն [= Sync. τῶν περὶ τὸν Ξίσουθρον], *F.* ընդ քահանային: *F.* **աղճատված է:**

21,33 = 17,30 = 35,9 կոչէին, *F.* կոչել:

21,33 = 17,31 = 35,10 քահանայ, *F.* քահանային:

21,33 = 17,31 = 35,10 չերեւեալ այնուհետեւ նոցա, *F.* չերեւել այնուհետեւ նոցայ [= Sync. αὐτοῖς οὐκ ἔτι ὀφθῆναι]:

21,33 = 17,32 = 35,11 նոցա, *F.* նոցայ:

21,31 = 17,32 = 35,11 բարբառոյ, F. բարբառոյ:

21,31 = 17,33 = 35,12 յօդոցն [= Sync. ἐκ τοῦ ἀέρος], F. յանդոցն:

21,35 = 17,34 = 36,1 ևթև պարտ է, F. թև պարտ էր:

21,35 = 17,35 = 36,2 ևթև, F. թև:

21,36 = 17,36-37 = 36,3-4 ի բնակութիւն դիցն, F. ի բնակութիննա դիւցն:

21,37 = 17,37 = 36,4 կնոջն, F. կնոջն:

21,39 = 17,40 = 36,7 նոցա, F. սոցա:

21,39 = 18,1 = 36,8 բարիզոն, F. բարելոմն:

21,40 = 18,2 = 36,9 դիցն, F. ի դիցն:

23,2 = 18,5 = 36,12 ևթև, F. թև:

23,3 = 18,7 = 36,14 հայոց աշխարհն է, F. է հայոց աշխարհ:

23,4 = 18,8 = 36,15 նոցա, F. նոցայ:

23,4 = 18,9 = 36,16 զոհս դից մատուցանեն F. զոհս դից մատուցանել [= Sync. θῦσαι τε τοῖς θεοῖς]:

23,5 = 18,10 = 36,17 ի բարիզոն, F. ի բարելոն:

23,6 = 18,11 = 36,18 ուր (կամ որ), F. ուր:

23,8 = 18,13 = 37,1 ի կորդուացւոց լերինն F. ի կորդուացւոց լերինան:

23,10 = 18,15 = 37,3 բևրև ի ձևփածոյ, F. և բևրև ի ձևփոյ:

23,11 = 18,17 = 37,5 ցաւոց ինչ բժժանաց, F. աաւոց ինչ բժբժանաց: F. վրիպակ:

23,12 = 18,17 = 37,5 նոցա, F. նոցայ:

23,13 = 18,18 = 37,6 ի բարիզոն, F. ի բարեզովն:

23,14 = 18,19 = 37,7 դմատեանն, F. դմատեանան [= Sync. γράμματα]:

23,16 = 18,22 = 37,10 զբարիզոն, F. զբարելոն:

Գ. էջմիածնի թիվ 1775 ձեռագիր, թերթ՝ 125ս (= Alfred Schöene), էջ $23,_{22}$ – $23,_{31}$ = Ավգերյանց, էջ $18,_{30}$ – $19,_{10}$ = $38,_{3}$ – $39,_{10}$):

F. վերնագիր՝ «Բազմավիպին»:

$23,_{25}$ = $19,_{2}$ = $39,_{2}$ Հոգմ, F. Հոգմս [= Sync. ἀνέμους]:

$23,_{27}$ = $19,_{5}$ = $39,_{5}$ բարկոն, F. բարնգոն:

$23,_{28}$ = $19,_{7}$ = $39,_{7}$ պրոմկթիւս F. պրովմիթկիա:

$23,_{29}$ = $19,_{8}$ = $39,_{8}$ ընդ կրովնի, F. ընդ կրոնի:

Դ. էջմիածնի թիվ 1775 ձեռագիր, թերթք՝ 125բ – 126ա (= Alfred Schöene $33,_{26}$ – $35,_{1}$ = Ավգերյանց, $25,_{34}$ – $26,_{14}$ = $51,_{9}$ – $53,_{3}$ մինչև «բախէին»):

F. վերնագիր՝ «Աբիւդննա»:

$33,_{28}$ = $25,_{36}$ = $51,_{11}$ յուզացնալք, F. յուզացնալք:

$33,_{31}$ = $26,_{1}$ = $52,_{1}$ պրուրգնն, F. բուրգնն:

$33,_{31}$ = $26,_{2}$ = $52,_{2}$ որ այժմ՝ բարելոն կոչի: F. որոյ այժմ բարնգոնն կոչի:

*$33,_{33}$ = $26,_{4}$ = $52,_{4}$ Հոգմոց, F. Հոգմոց, F. **լուսանցքում՝** Հոգմովք:*

$33,_{31}$ = $26,_{6}$ = $52,_{6}$ գննքննաւոր գործն, F. գնքննայաւոր գործ:

$33,_{35}$ = $26,_{7}$ = $52,_{7}$ բարնգոն, F. բարնգովն:

$33,_{38}$ = $26,_{10}$ = $52,_{10}$ խրդուբրտիւն, F. խլուբրտիւն:

$33,_{39}$ = $26,_{12}$ = $53,_{1}$ կրովնն, F. կրոնն:

*$35,_{1}$ = $26,_{12}$ = $53,_{1}$ ի տիտանն, F. եւ տիտանն: Alfred Schöene «ի տիտանն» **արդէն ուղղել էր** «եւ տիտանն»:*

Ե. Էջմիածնի թիվ 1775 ձեռագիրը, թերթ՝ 126ա – 127ա (= Alfred Schöene $35_{,4}$ – $35_{,28}$ = Ավգերյանց $26_{,17}$ – $27_{,8}$ = $53_{,6}$ – $54_{,7}$ մինչև «Թագաւորէր»):

F. վերնագիրը՝ «Արիւղննա վն. Սննեքերիբա, Ավգերյանց՝ «Արիւղննայ վասն Սննեքերիմայ»:

$35_{,4}$ = $26_{,19}$ = $53_{,7}$ Յայնմ ժամանակի, F. Յայնմ ժամանակէ:

$35_{,4}$ = $26_{,15}$ = $53_{,8}$ սիննեքերիբ, F. սեննեքերիբ:

$35_{,6}$ = $26_{,15}$ = $53_{,10}$ դրաբևղոննն, F. դրաբևղոն:

$35_{,7}$ = $26_{,12}$ = $53_{,11}$ Հնազանդէր, F. Հնազանդէր, F. վրիպակ:

$35_{,8}$ = $26_{,14}$ = $53_{,12}$ կիսիկևցւոց, F. կիսիկևցւոց:

$35_{,8}$ = $26_{,13}$ = $53_{,12}$ զատրմիզ, F. զատրմիզ:

$35_{,8-9}$ = $26_{,14}$ = $53_{,13}$ նաւացն յունաց, F. նաւաց յունացն:

*$35_{,9}$ = $26_{,15}$ = $53_{,14}$ վկանդէր, F. զկանդեր: F. **վրիպակ:***

*$35_{,9}$ = $26_{,25}$ = $53_{,14}$ եւ չինէր, F. (եւ **չիք**) չինէր:*

$35_{,11}$ = $26_{,27}$ = $53_{,16}$ բայ, F. բա:

$35_{,12}$ = $26_{,27}$ = $53_{,16}$ դբաջուԹիւնան, F. դբաջուԹիւնն:

$35_{,13}$ = $26_{,28}$ = $53_{,17}$ զձև, F. ձև:

$35_{,14}$ = $26_{,29}$ = $53_{,18}$ բարխղոնի, F. բարևղովնի:

$35_{,15}$ = $26_{,30}$ = $53_{,19}$ կիւղնոս, F. կիղնոս:

$35_{,15}$ = $26_{,31}$ = $53_{,20}$ որպէս զունակ, F. ակն զունակ:

$35_{,16}$ = $26_{,32}$ = $53_{,21}$ բարխղոնի, F. բարևղովնի:

*$35_{,17}$ = $26_{,33}$ = $53_{,22}$ Եւ յետ նորա, F. (եւ **չիք**) յետ նորայ:*

$35_{,18}$ = $26_{,34}$ = $53_{,23}$ յորդւոյն, F. յորդւոյն:

$35_{,18}$ = $26_{,34}$ = $53_{,23}$ ազրամելեայ, F. արդամիզա:

$35_{,19}$ = $26_{,36}$ = $53_{,25}$ աբսերդիս, F. ասբերդիս:

*$35_{,22-23}$ = $26_{,39-40}$ = $53_{,28-29}$ վարձկանուԹիւնս օգնականուԹեան, F. վարձանս եւ Թիկունս աւգնականուԹեան: F. **լավագույն է: Վիճելի է նույնիսկ Թե արդյոք** «վարձկանուԹիւնս» **ոսկե-***

դարյան բառ է, թե ոչ:

35,25 = 27,3 = 54,2 ապսերդխան, F. ապսերդխան:

35,27 = 27,6 = 54,5 սարդանապաղդոան, F. սարդանապաւդդոան:

35,28 = 27,7 = 54,6 ասորևստաննաց, F. ասորևստաննայց:

Զ. Էջմիածնի թիվ 1775 ձեռագիրը, թերթք՝ 127ա – 128ա (= Alfred Schöene էջ 53,34 – 55,8 = Ավգերյանց 39,15– 40,12 = 81,7– 82,19):

F. վերնագիր՝ «ի կաստովրի համառաւտ մատենէ»:

53,35 = 39,15 = 81,9 ասէ, F. ասէ չիք:

53,35 = 39,15 = 81,9 ասորևստաննաց, F. ասորևստաննայց:

53,36 = 39,16 = 81,10 կիկդոսպայրն, F. կիկդովսպայրն:

53,37 = 39,17 = 82,1 չանիմ, F. չանդս, F. լուսանցքում՝ չանդիս:

53,36 = 39,18 = 82,2 արամադդայ, F. արամադդա:

53,36 = 39,19 = 82,3 տիտանացիան, F. տիտանացիան, F. լուսանցքում՝ տիտանան:

53,39 = 39,22 = 82,6 արքայ, F. արքա:

53,40 = 40,1 = 82,8 թէ, F. եթէ:

55,1 = 40,2 = 82,9 դօրավիգն, F. դաւրաւիգն:

55,1 = 40,3 = 82,10 Հևրակլի, F. Հևրակդի:

55,2 = 40,4 = 82,11 դիոնիսի, F. դիովնիսի:

55,3 = 40,5 = 82,12 բկդոս, F. բևդոս:

55,5 = 40,8 = 82,15 ասորևստաննաց, F. ասորևստաննայց:

55,7 = 40,10 = 82,17 ասորևստաննաց, F. ասորևստաննայց:

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Թիվ 1890, 14 Էջմիածնի մատ. = Մայր ցուցակ, թիվ 1848

Թուղթ՝ 123: – Մեծություն՝ 12,5 × 8,5 սմ.: – Տող՝ 19–20: – Նյութ՝ ոտորկ հաստ թուղթ: – Գիր՝ բոլորգիր: – Կազմ՝ կաշեպատ տախտակ, կազմի վրա կապիչների հետքեր: – Վիճակ՝ թուղթը խոնավությունից վնասված. սկիզբն ու քանի թերթ պակաս է եղել, թերի մասը հետո լրացրած բարակ թերթերի վրա բոլոր գրով (թ. 2 և 3): – Թվական՝ ՈՂԲ = 1243: – Գրիչ՝ Հովհաննես քահանա: – Ստացող՝ Պետրոս՝ սպասավոր սուրբ Նշանի Հայրատա: – Տեղ՝ «ընդ Հովաննաւ սուրբ Նշանիս Հայրատայ»:

Բովանդակություն

1. Դաւթի վիպիտովայի Ներգինացոյ առաջարանուի սկզնոյ իմաստասիրուն (էջ 2ա–119բ, պրակք Ա–ԻԳ):

էջ 119բ վերջք. *Արդ այսոցիկ այսպէս ելոյ չնորհևաց Ած զիմաստասիրութի ին զարդարելո զմարդկաինս հոգի: Այդ զդիտական զաւրութիս զարդարէ ի ձևոն տեսականին իսկ զկենդանականն ի ձևոն զործականին որպէս զի մի զսուտ զիտութի ի կարծեաց ընկալցուք եւ մի չար ինչ զործեսցուք:*

Ընդ այսոսիկ եւ առաջիկա բանք իմաստասիրութե:

Դաւթի մեծի եւ անյաղթ վիպիտովայի ընդդէմ առարկութեցն չորից Պիհռոնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատուիք իմաստասիրութե:

Հնագույն այս ձեռագրում՝ թե գլուխների բաժանումը և թե բնագիրը տեղ-տեղ տարբեր են 1833 թվին Վենետիկում հրատարակածից:

2. **էջ 119բ–121ա.** *Ամենայն չար տանջելի. ոչ ոք տանջեալ անապական ...*

Վերջ. *Եւ ընդ բամբասանաւք է սատանա ապա ուրեմն ոչ է աննդ:*

Այս գծած հանդիսաւոր խմբի յառաջագոյն տասից տրամախոհ իմաստասէր մակացու արանց ի Դաւիթ նոամնճ ննթադրեցաւ:

Ցիշատակագրութիւնք

1. **էջ 48բ** *ներբևի յուսանգրի վրա նոյն գրչե.*

Ջածաչնորհ եւ գպատուական վարդապետն Պետրոս յիշեցէք յաղաւթս ընդ ...:

2. **էջ 121ա–122բ** *ձեռագրի գլխաւոր հիշատակարան նոյն գրչե.*

Փառք ամենասք երրորդութեն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

ՋՍահմանաց գլխոս գոր արարեալ է մեծ վիլխաւոյն Դաւիթ ընդդէմ հակառակողացն որք կամեցան բառնալ գիմաստասիրութիւն Ակադիմեանցն Պիհոռնի եւ ձեմականացն խաղաղացոյց գնոսա ի խոռվութենէն եւ ասաց եթէ գոյ իմաստասիրութի եւ է եւ ճշմարիտ է եւ զաւրինակս առ մեզ հաստատեաց Հայաստանեայս:

Որոյ ես ծեր ոմն Պետրոս սպասաւոր սր. Նշանիս Հաղբատայ բազձանաւք սիրոյ նոտ գրել Յոհաննիսի կրաւնաւոր քահանաի իմով արդեամբք առ ի յուսումն մակացողաց:

Արդ որք աւգտիք ի սմանէ յիշեցէք ի սրբամատոյց յաղաւթս ձեր գիս գմեղաւորս Պետրոս եւ Ած գձեզ յիշեսցէ ի բարի եւ ի կատարման սորա ասացէք գերանի ում Թողութի եղեւ մեզաց եւ գԲո որպի Այ:

Գրեցաւ գիրքս ընդ Հովաննաւ սր Նշանիս Հաղրատայ, ի Թուիս ՈՂԲ եւ աւանդեցաւ սմա. մի ոք իշխեսցէ հանել գսա աստի:

Կազմեցաւ եւ ձեռամբ իմով Պետրոսի:

Թիվ 1943, 6 էջմիածնի մատ. = Մայր ցուցակ, թիվ 1901

Թուղթ՝ 251: – Գրութիւն՝ 13 × 8 սմ.: – Տողք՝ 21: – Նյութ՝ ողորկ հաստ. թուղթ: – Գիր՝ բոլորգիր. վերնագրերն ու սկզբնատառերը կարմիր թանաքով: – Լուսանցազարդք՝ էջ 1 ա՝ խորան ու զարդանկար, էջ 141 ա՝ զարդանկար: – Կազմ՝ կաշեպատ տախտակ. կապիչներից մնացել են միայն հետքեր կազմի վրա: – Մագաղաթյա պահպանակ՝ սկիզբն և վերջն երկկրկու թերթ. մագաղաթյա երկաթագիր Ավետարանի մնացորդ: – Հանգամանք՝ յավ: – Թվական՝ ՋԴ = 1255:

1. Էջ 1ա–139բ. Ստորոգութիւն Արիստոտէլի որ կոչի յունարէն կատիգորիա:

Արիստոտելի Ստորոգութեանց բնագրի ամեն մի հատուածին կամ պրակին հետևում է նույն հատուածի կամ պրակի մեկնությունը «մեկնիչ» վերնագրի տակ:

1833 թվի Վենետկյան հրատարակության մեջ Ստորոգութեանց մեկնութեան սկիզբը պակաս է: Տե՛ս էջ 409 ծանոթություն՝ «Զկիսամասնեայ մնացուած մեկնութեան Ստորոգութեանն Արիստոտելի ի միոյ ևեթ թերակատար օրինակէ, որ առձեռն գտաւ, յարեմք աստանօր կարօտք անթերի օրինակաց»: Սույն հնագույն անթերի օրինակում Վենետիկի տպագիր հրատարակության բաց թողած մասը կազմում է էջ 1ա–89ա:

Սկիզբ էջ 1ա. *Հոմանունք ասին՝ որոց անուանք միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն այլ. որպան՝ կենդանի՝ մարդն եւ գրնայն: Քանզի սոցա անուն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն այլ: Քանզի եթէ բացատրեսցէ ոք՝ զինչ է նոցա իւրաքանչիւր ուրուք կենդանին զոյ, յատուկ իւրաքանչիւր ումեք բան բացատրեսցէ: – Մեկնիչ:*

Հոմանունութիւն լինի ըստ երկուս յեղանակս՝ ըստ պատահման կամ մտածութեան. մտածութիւնն ըստ պատուոյ, ըստ յղինակի, ըստ յուսոյ, ըստ աղաւթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեան, իսկ միայն իրրև զարեգակն միանձն կամ ըստ լծորդին պակասութեան որպէս միաձորձ կամ որպէս նահատակ:

Վերջ՝ էջ 139բ. *Եւ այսուիկ եղիցի պյոլովից եւ զտարրերեցելոց ի միմեանց տեսակաց ստորոգեալ ունելս. որպէս զի եղիցի սեռ՝ ընդունելով զսահման սեռի. քանզի էր սահման սեռին որպէս ասացաւ. պյոլովից եւ զտարրերեցելոց տեսակաւ ի ներում զինչէին ստորոգեալ:*

Կատարեցաւ գիրք Ստորոգութեանցն ասացեալ նոամնծին Արիստոտէլի հաւատարիմ վարդապետի եւ ուղղափառ իմաստասիրի, զոր փցուն մատամբ գրեցի:

2. Էջ 141ա–251ա. Յաղագս մեկնութեան, որ կոչի Պերիարմենիաս, ասացեալ Արիստոտէլի:

Այս վերնագրի վրա նոտր գրով և ուրիշ թանաքով գրված կա մի այլ վերնագիր, որը սովորական է նորագույն ժամանակների օրինակներում:

Սկիզբն եւ նախադասութի (՞) գրոցն որ ասի ըստ յունաց Պերիարմէնիաս եւ Հայերէն՝ յղգս մեկնուն: Արտագրեալ, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթայ Ներգինացւոյ:

Սկիզբ էջ 141ա. *Նախ արժան է գնել, զի՞նչ է անուն եւ զի՞նչ բայ, ապա զի՞նչ է բացասութիւն, եւ ստորասութիւն, եւ բացներեւութիւն, եւ բան:*

Ճառեցաւ մեզ երբեմն, եթէ է ամենայն բանական իրողութենան այսորիկ ակնկալութիւն առ ապագուցական չարաբանութիւնն հասանել. այլ վս զի բազում պատրանք ըն չարաբանութիւնն լինի, հարկաւոր է զիւրաքանչիւր ոք նոցա գիտել:

«Յաղագս մեկնութեան» բնագրի ամեն մի պրակին հետեւում է նույն պրակի մեկնությունը:

Վեննտկի տպագիր հրատարակության մեջ պակաս է 15 գլուխ: Տե՛ս էջ 512 ծանոթություն. «Յօրինակին պակասեն թուղթք քսան եւ երեք»: Անթերի այս ձեռագրում Վեննտկյան տպագրի բաց թողած մասը բոնում է էջ 165ա–205 բ:

Հիշատակագրություն

1. էջ 251ա ձեռագրիս վերջում հիշատակարան նույն գրչէն.

Փառք սր Երրորդութենան կատարելոյ եւ միոյ. ԶԴ գրեցաւ ի թուականիս:

2. Հետեւյալ դատարկ երեսի վրա նոտր գրով այլ գրչէն.

Ի վայելումն Մելքիսէդ վդպին ի դառն եւ
ի նեղ ժմն Բելին:
Կնիք՝ Քի Ծո Գրիգոր վրդպտ ՌՄԼԳ:
Ի վայելումն Ղազար վրդպին եւ ի յիշատակ իմոյ անձին ի ՅՄՆԶ թուին եւ
յունվրի ժԵ-ին ի Կարին:

Թիվ 1889, 13 էջմիածնի մատ. = Մայր ցուցակ, թիվ 1847

Թուղթք՝ 315: – Գրութիւն՝ 14×10 սմ.: – Տողք՝ 25:– Նյութ՝ ողորկ հաստ թուղթ: – Գիր՝ բոլորգիր. լուսանցքների վրայ մեկնութիւններ նոտր գրով. նորոգված թերթերը 73 և 74 նույնպես նոտր գրով: Վերնագրերը, սկզբնատողերն ու սկզբնատառերը կարմիր թանաքով: – Լուսանցազարդք՝ խորաններն էջ 1ա, 75ա, 181ա խունացած: – Կազմ՝ կաչեպատ տախտակ առանց

կապիչների: – Մագաղաթյա պահպանակ՝ սկիզբն և վերջին մեկ մեկ թերթ. Մամբրե վերծանողի ճառից՝ ի մեծի աւուր պայտեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ: – Հանգամանք՝ տեղ-տեղ գրերն ավրված. 73 և 74 թերթերը կցված են ձեռագրին 1410 թվականին. նորոգված թերթերի վրա Հակոբ Ղրիմեցու ձեռքով գրված են Ներսես Շնորհալու «Ամենայն չար տանջելի» հատվածի մեկնության թերի մասերը: – Թվական՝ ՉԻԵ = 1276: – Գրիչ՝ Ստեփաննոս քահանա:

Բովանդակություն

1. Դաւթի փիլիսոփա Ներգինացոյ, Յառաջարանք Սահմանաց Իմաստասիրութեան (էջ 1ա–65ա, պրակք Ա–ԻԱ):

Սկիզբն է (էջ 1ա). *Որք միանգամ իմաստասիրութեան տենչան բանից եւ առ ի նմանէն [հնչո]ւթեանց ծայրիւ միայն մատին հանդիպին ճաչակեալք, ամենայն կենցաղական հոգ[ոց] բարեաւ մնալ ասացեալք, ողջախոհ իմն [մոու]թեամբ առ այսոսիկ վարեալք բերին:*

Վերջ (էջ 65ա). *Արդ զգլխական գաւրութիւն զարդարէ ի ձեռն տեսականին, իսկ զկենդանականսն ի ձեռն գործականին, որպէս զի զաւտ գիտութիւն ի կարեաց ընկալցուք, զի մի չար ինչ գործեսցուք:*

Ընդ այսոսիկ եւ առաջարանք իմաստասիրութեան: Դաւթի մեծի եւ անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիւտհոնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատութիւնք իմաստասիրութեան:

2. **էջ 65ա–65բ.** *Ամենայն չար տանջելի, ոչ ոք տանջեալ անապական, ոչ ոք ապականացու անեղ է. չար ապականացու. չար ուրեմն ոչ է անեղ եւն:* **Վերջ (65բ).** *Եւ ընդ բամբասանաւք է սատանայ, ապա ուրեմն՝ ոչ է անեղ:*

Այս գծածք հանդիսացիր խմբոց առաջնոցն տարից տրամախոհ իմաստասէր մակացու արանց ներբողեալ ի Դաւիթ Եռամեծ ննջեցեան:

3. **էջ 65բ–74 բ.** *Մեկնութիւն բանից Դաւթի փիլիսոփայի, որ է ի կատարումն նորին տարի որ վերին սահմանացն իմաստութեան, ասացեալ Ներսէսի եղբայր կաթողիկոս Հայոց Գրիգորիսի ուրումն՝ սիրողի իմաստութեան:*

Սկիզբ (էջ 65բ). *Զինդիր հոգեւորական հաւատով եւ սիրով*

Հայցողայ պարտ է տալ յաւժարութիւնամբ ըստ հրամանին Տն՝ թէ որ խնդրէ ի քէն տուր: **Վերջ (էջ 74բ).** *Այլ մեք պի ունիմք զայսորիկ չնորհեալ յԱյ զերազոյն քան զանմարմնոցն յառնել ի մեռելոյնէ հոգոյ խոստովանուր եւ ապաչխարուր եւ Քի Այ յուսոյն մերոյ եւ երկրպագի յաւիտեանս ամէն:*

4. **75ա–89ա.** *– Ներածութիւն Պորփիւրի իմաստասիրի.*

Լուսանցքների վրա. ծանոթություններ բոլոր գրով բայց այլ գրչէ: Սկիզբն է (էջ 75ա). Ելոյր Հարկաւորի, Քրիսաւորիէ, եւ յաոս Արիստոտէլի Ստորոգութեանցն վարդապետութի, գիտել՝ զի՞նչ սեռ եւ զի՞նչ տարբերութի, զի՞նչ տեսակ, զի՞նչ յատուկ եւ զի՞նչ պատահումն եւ ի սահմանացն բացատրութի...

Վերջ (էջ 89ա). *բայց են եւ այլք հասարակութիւք եւ յատկութիւք ասացկոցն. այլ չատ են եւ սոքայ ի մեկնութի նոցայ եւ ի հասարակութեան յանդիմակացութի:*

5. **էջ 98ա–157բ.** *Դաւթի փիլիսոփայի Ներգինեցոյ. Վերլուծութի ի Ներածութիւն Պորփիւրի (պրակք ա–իթ + Յաղագս Հանրականաց սեռից եւ տարբերութեանց):*

Լուսանցքների վրա նոտր գրով մեկնություններ և նկատողություններ:

Սկիզբն է (էջ 89ա). *Հանդերձեալք հանդերձ Ավ սկիզբն առնել առաջիկայ չարաղրութիս, զսովորականն պատմողաց խնդրել զգլուխս ը զոլ թուով խնդրեսցուք:*

Վերջ (էջ 157բ). *Եթէ յատուկն հակադարձի տեսակի, իսկ պատահումն ոչ երբեք:*

6. **էջ 158բ–175բ.** *Արիստոտելի իմաստասիրի թուղթ առ Աղէքսանդրոս Թգր, Պատմութիւն յաղագս աչխարհի:*

Սկիզբն է (էջ 158բ). *Իսկ բաղում անգամ ինձ ածային ինչ եւ բարերախտեալ ճչմարտապէս իր, ո՞վ Աղէքսանդրէ, զոլ թուեցայ իմաստասիրութիւն:* **Վերջ (էջ 175բ).** *Սակս իրաւացն պակասելոյ՝ յԱյ պատուհասին, նոյնպէս եւ որ հանդերձեալն է բարերաստիկ լինել եւ երանելի՝ ի նմանէ ընդունի զչնորհս:*

7. **էջ 175բ.** *Ստագիրացի էր Արիստ ի Թիւրակայ ի քաղկիթ զաւառ մերձ ի Յաւչինթոս, որդի հաւր Նիկոմաքոսի եւ մաւրն Պեոիսդիադայ[1]: Եւ ամրառնա ազգ նորա ի հաւրէ եւ ի մաւրէ յԱսկղեպիայ: Քանն ամս աչակերտեալ Պղատոնի ըստ որում թէ դէպ ուրեք լինէր չզալ նմա ի յարանն՝ զայսպիսս ազազակէր]*

[1] Լուսանցքում՝ Փեոիսդիադայ:

բանս Պղատոն. միտն չկէն այսր, ի բացնայ է սիրողն ճշմարտութեն, խուլ է լսարանս: Վաղճանի ի Քաղկիդ ամաց կ եւ Նից. առաքելարանի եթէ յոսկերս նորայ գ.դաւ պարս մեղուաց: Հանեալ զոսկերս նորա Ստազիրացւոցն ի Քաղկիդէայ՝ տարան թաղեցին ի տեղւոջն Արիստոտէլիկոսի:

Շարունակութիւնը էջ 18* ր. Սայ սկիզբն աշխարհի՝ տնսակ. նիւթ, պակասութի, տարերք գ եւ երրորդ արփի: Պղատոն ասէ՝ աշխարհս է յերկնէ եւ յերկրէ եւ որ ի նոսա բնութիւք բաղկացեալ. ի հրոյ եւ յերկրէ, յաւդոյ եւ ի ջրոյ եւ յասծոց եւ ի դիւաց եւ մարդկանէ եւ ի կենդանեաց եւ ի տնկոց եւ ի նիւթոյ: Մովսէս մարգարէ՝ զանդունդս եւ զխաւար եւ զջուր զոյ սկիզբն աշխարհի: Պիթագորաս Մննասարքայ որդին՝ դիւս եւ զչափաբերութիս եւ դյարմարութիս: Յաղագս մարդասիրութեն ասաց Հոմերոս. Ածքն աւտարաց նմաննալ այլաքաղաքացեաց չրջին ի մէջ մրդկն տեսանել զմդկան զրարի եւ դչար եւ յարկանել զաչխարհիս գործն:

Պիթագոր ասաց. իցէ՞ արդեաւք սիրելոյ այլ ոք ես (՞), քան թէ ինքն:

8. **էջ 176ա.–180ր.** *Արիստոտէլի Յաղագս առաքինութեց առ Աղեկս թգ:*

Սկիզբն է (էջ 176ա). *Գովելի են գեղեցիկքն եւ պարսաւելի գարշելիքն. քանզի բարեացն յառաջնալ լինին առաքինութիքն եւ գարշելեացն չարութիքն:*

Վերջ (էջ 180ր). *իսկ ընթհանուր չարութեան գործ եւ յատուկ եւ հետեւութի՝ ա ասացելոցդ ներհակքն՝ որք են ի պարսաւելեացն:*

էջ 180ր եւ 181ա – ներքեւի յուսանցքների վրա. *Ստորոգութիք – կատալօրիաս: Յաղագս մեկնութեան – ի սկզբ Երմէնիաս: Վերլուծական – անալատիկի: Ապացուցական – ապատիկտիկի: Շարաբանութի – դիալեկտիկի: Ստորասութի – կատաֆռասիս: Բացասութի – ապոփասիս: Բացերեւական – ապոփանսէս:*

9. **էջ 181ա–275ր.** *Ստորիւնք Արիստ ժ, որ կոչի յունարէն Կատիլօիա:*

Անթերի օրինակ Արիստոտելի Ստորոգութեանցն մեկնութեան: Լուսանցքների վրա բացատրություններ նոտր գրով:

Սկիզբն է (էջ 181ա). *Հոմանունութի լինի ըստ յերկուս յեղանակս՝ ըստ պատուոյ, ըստ յեղանակի, ըստ յուսոյ, ըստ աղաւթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեն եւն:*

Վերջ (էջ 275բ). *Քանզի էր սահման անոին, որպէս ասացաւ դյոլովից եւ գտարրևեցնոց տեսակաւ ի ներում դինչէն ստորոգեալ:*

10. **էջ 276ա–344բ.** *Սկիզբն եւ նախագրութի գրցն որ ասի ըստ Յունաց՝ Պերիարմէնիաս եւ Հայերէն՝ Յաղագս մեկնութեն: Արտագրեալ ի մեծ Հեկենացոց լմաստասիրէն Արիստոտէլէ. Թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ Փիլիսոփայէ Ներգինացո:*

Զեռագիրս պարունակում է նաեւ 1833 թվի Վենետկի տպագիր հրատարակութեան մեջ բաց թողած մասերը: Լուսանցքների վրա բացատրութիւններ նոտր գրով և այլ գրչե:

Սկիզբն է մեկնութեան (էջ 276ա). Ճառեցաւ մեզ երբեմն, եթէ է ա բանական իրաւդութեես այսորիկ ակնկալութի առ ապագուցական չարարանութիւնս հասանել: **Վերջ (էջ 344բ).** *Քնդի ա ուրեք սովորեաց լմաստասէրս յաղագս պիտանացուին գիտութի սերմանել իւրոց լսողացն:*

11. **էջ 345ա–բ.** *Աղիւսակ անկիւնաւոր թուերի:*

Հիշատակագրութիւնք

1. **էջ 88ա, 175բ, 188բ, 190ա, 260ա, 332ա** *նույն գրչե.*

88ա. գստ գծ յիչ [= գՍտեփանոս գծող յիշեցէք]:

175բ, 260ա. գգծ ստ յիչ [= գգծող Ստեփանոս յիշեցէք]

188բ. գստ գր յիչ [= գՍտեփանոս գրիչ յիշեցէք]:

190ա. գծաո ստ յիչ [=գծաոայ Ստեփանոս յիշեցէք]:

332. գգծ ստ յիչ ի տր [= գգծող Ստեփանոս յիշեցէք ի Տէր]:

2. Ներսես Շնորհալու «Ամենայն չար տանջելի» հատվածի մեկնութեան վերջում, նորոգված 74բ թերթի վրա, նոտր գրով տարբեր գրչե.

Զմեղուցէ Յակոբ վզպտս Ղրիմեցի աղաչեմ յիշել ի Տէր, ի թվիս ՊՄԹ [=1410]:

3. **էջ 157բ,** *Պորփյուրի Ներածութեան մեկնութեան վերջում, Ստեփանոս գրչե.*

Փառք ամենազաւր էին Այ որ ետ զօրութի յանգ հանել զսա:

4. Ներքևում նույն էջի վրա Ստեփանոս գրչե. Բնական կարգն արտաքին գրեանցս այս է. նախ Քերականն եւ ապա՝ Սահմանքն եւ Ամ չար տանջելին, ապա՝ Պորփիւրն եւ դկնի՝ Ստորոգութիքն եւ ապա՝ Պերիարմէնիասն եւ ապա՝ Աչխարհացն եւ դկնի՝ Առա-

բինութեցին: Իսկ աստ որ գհետ Պորփիւրիս Աչխարհացս է, եւ Առաբինութեցս կամ ի տգիտութենէ է կամ յաւրինակէն եւ կամ յերկուցն:

5. **էջ 175բ**, *«Ստագիրացէ էր ետն» հատուածից հետո, նոյն գրչէ.*

Զմոլորեալս յամենայնի եւ դանպիտանս բնաւից յերեսս անկեալ աղաչեմ յիշել ի մաքուր յաղաւթս ձեր եւ...

6. **էջ 275բ–276ա**, *Ներքեւի լուսանցքների վրա, նոյն գրչէ.*

Յայսմաւուրք գվախճաւտ առեալ Դպտա երկիրս կիլիկեցոց յանաւրէն բռնակալէն Իսմաէլոց, թւ ի Զիե:

7. **էջ 275բ**, *Ստորոգութեանց մեկնութեան վերջում, նոյն գրչէ՝ ԶՍտեփ ... վ.ին որ կորուսի գհայրենին ո ... քի նոյն վառս ... ին հայցեմ ժտել Թադծեալս անծին ... մաքրել գմեղաց (ս)պին դառնալ յեղեմ մեզ վերստին ... բնդ ձեզ իր ...ակ անձին գվառս յանվախճան յաւիտեան. թւ Զիե:*

Գրերը տեղ-տեղ ավրված. խոչորացույցի օգնութեամբ անգամ չյաջողվեց ինձ վերականգնել բնագիրը:

8. **էջ 322ա**, *Ներքեւի լուսանցքի վրա, նոտր գրով օտար գրչէ. Ո՞վ եղբայր, աստից ի հետ բանքս նուրբ են եւ տեսութիքս գժուարք եւ խրթինք. ի լուսանց գրոցս ոչ կարացի գրել լուծումն. դու լաւ հասկացողութիր կարդա:*

Լուսանցքների վրա ծանոթությունները ու մեկնությունները գրված են նույն գրչէ:

9. **էջ 344բ**, *Περὶ ἑρμηνείας երկի մեկնության վերջում, Ստեփանոս գրչէ.*

Աւրհնեալ է Քո լոյսն հայրական եւ վառաւորեալ է սր գալուստ նորայ որ իւրով գալստեամբ երաց մեզ գուռն կենաց եւ առաջնորդեաց մեզ քաղցրութեոյց վղթր իւրով գճանապարհն փրկութեն ոգոց մերոց որ թէպէտ քրտամբք եւ վաստակաւք հրամանաց Տրն մեր մեզ ջանալ յայսմ աչխարհի, այլ վս առաւել վառացն է այն եւ ի պսակացն է դի ի մարմնեղէն եւ ի ծուլածուփ հոգոց վերացուսցէ գմիտս մեր. մի՛ եւս բեւեռել ի սայ եւ մի՛ ի սէր սոցայ եւ մի՛ յուսումն սոցայ մա ...կենս ինքն լինելով մեզ աւրինակ բարի յամենայնի դի (*):

11. **էջ 345բ**, *Ձեռագրի վերջում, նույն գրչէ գլխավոր հիշատակարան. Յիշատակարան գրոցս. Մշտապայծառ եռաջահեան համարնութեն եւ եղական լոյսոյն անսկիզբն եւ անկատարած կերարնարար բարոյն, այնմ որ ի բնաւից եղելութեն առ յինքնէն*

յանմարմին իմանալեաց հոգեղինացն եւ նիւթական մահկանացու հոգեղինաց միչտ եւ յարաժամ նորա աւրհնութի վերառաքի փառք եւ պատիւ եւ գոհութի եւ երկրպագութի այժմ եւ...

Արդ ես սուտանուն քհ ըստ մանկական անհաստատ յածման խորհրդոց ըմբռնեցա ի ակր այսմ անպէտ եւ պիտանի գրոցս: Ապա թէ ըստ տեսութենց իւրոց անաւգուտ թուի այլ յածայինսնս աւգտակար: Այլ ապաչեմ զձեզ սր հարք եւ եղբարք, որք աւգտէք ինչ ի սմանէ կարդալով կ յաւրինակ՝ մի՛ ի զերեւ համարել բազում աշխատութիս իմ ի սմայ: Այլ ըստ ընդարձոյս բարի բարուց ձերոց յիշատակի առնել արժանի գրիւր պարտուց պարտականս ակրունի:

Գրչի վերջում[1]՝

էջ ա. *1. [մի]սով կանգնեցին: Եւ որք ի հաւ*
2. [ատ]ոյ գրտացեալք՝ զայս երկուս աւան
3. [զ]ութիենս մտաւք վերարկեսցեն, եթե
4. [ա]ծնէչն սիրովն ջեռնուն:
5. [ի]նկ աչակերտացն երկուս, վասն զի
6. [բ]ազում ունելով Յի զաչակերտսն, զվերին
7. [ա] չտիճաննան երկնագուսպար պարսն՝
8. զոր մեծն Պաւղոս չարագասկ. հրնչտակք
9. Եւ հրնչտակապետք, աթոռք եւ տրութիւնք
10. պետութիւնք եւ իշխանութիւնք,
11. սերովբէք եւ քերովբէք:

---

[1]Չմմտ. Մամբրէի վերծանողի ճառք, Վենետիկ, 1894. ի մեծի աւուր զալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ, էջ 61. «Եւ զարձեալ՝ եթէ սրովն պայթակղեսցի ոք, միսովն կանգնեսցի. եւ ի հաւատոց գրտացեալքն զայս երկուս աւանդութիենս մտօք վերարկեսցեն, եւ աստուածային ջեռնուն սիրովն: Իսկ յաչակերտացն երկուս, վասն զի բազում ունելով Յիսուսի զաչակերտսն, զվերին տիճաչտիճաննայ երկնագումար զպարսն՝ զոր **մեծն Պաւղոս** չարագասէ. հրնչտակք, հրնչտակապետք, աթոռք, տէրութիւնք, պետութիւնք, իշխանութիւնք, սերովբէք, քերովբէք»:

Էջ բ.[1] *1. ...նից ի սրովբեական ի կաոս:*
2. Զորձս իմանալի է, դմաբոյր վարդապե[ետ]
3. ութինս առաքելոցն. դի անդ ի սրովբ[է]
4. եական սրբարանութինան նատի են[է]
5. հանդչի, իսկ աստ յառաքելական քարո[զ]
6. ութեան նատի եւ բազում հրաչս կատարե[լ],
7. եւ ներատանակ վարդապետութեան ու[ղղէ]
8. յերկին երկնից սիրապէս:
9. Արդ հասարակաբար նատի միածին
10. յերկին ի վերայ քերովբէից, եւ ի յերկ:

Թիվ 1884, 8 Էջմիածնի մատ. = Մայր ցուցակ, թիվ 1842

Թուղթ՝ 116: — Գրութիւն՝ 13 × 8,5 սմ.: — Տողք՝ 19–24: — Նյութ՝ ոդորկ հաստ թուղթ: — Գիր՝ հին բոլորգիր վանդակրներն ու սկզբնատողերը կարմիր թանաքով: — Լուսանցագարդք՝ յուսանցապատկերներ սկզբնատառերին կից: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Հանգամանք՝ ձեռագիրս խիստ վնասված է եղել. ժԸ դարում նորոգած Մեսրոպ սարկավագի ձեռքով: Նորոգված թերթեր 1–6 և 13–19, որոնց վրա Մեսրոպ սարկավագը լրացրել է ձեռագրիս թերագատար մասերը: Սկիզբն և վերջին դատարկ թերթեր: — Նորոգման թվականը՝ ՌՃՁԲ = 1733: — Նորոգման տեղը՝ Էջմիածին: — Գրիչ՝ Հովհաննես: — Ստացող՝ Ստեփաննոս քահանա: — Թվական՝ չունի, ըստ երևույթին՝ ԺԲ–ԺԵ դար:

---

[1] Հմմտ. Մամբրէի վերծանողի ձառք, Վենետիկ, 1894. ի մեծի աւուր պայտեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ, էջ 63. «Իսկ ձորձոյն վերարկեցելոց ի նոյն կենդանատեսակացն՝ յորոց վերայ նատի նատեալն ճշմարտապէս յերկինս երկնից ի քրովբէական կառն: Զորձս իմանալի է դառաքելական վարդապետութինն. դի անդ ի սրբէական սրբութենան նատի եւ հանդչի, իսկ աստ յառաքելական քարոզութենան նատի եւ բազումս հրաշակերտէ, եւ ներատանակ վարդապետութենան ուղղէ յերկինս երկնից սիրապէս: Արդ հասարակաբար նստաւ միածինն յերկինս ի վերայ քերովբէից, եւ յերկրի ի նուս կենդանանայ»:

Բովանդակություն

1. Հին Ջուղայեցի Ստեփաննոս վրդապետի՝ յաչակերտէն առ Դաւիթ անյաղթ փիլիսոփայն Հայոց (տաղ): Ձեռագրի սկզբում. էջերը չեն գրված:

Սկիզբն է. *Ի յարմատոց բղխեալ ուշիղ գնդազարդ.*
Հարանց մեծաց եւ նրջանկաց մարգարտարդ:

Վերջ. *Սուրբ նրջանիկ Հայրդ աղաչեմք բարձրաձայն,*
Բարեխաւսեա՛ առ մարմնացեալ մեծ արքայն,
Յորժամ հընչէ փողն ահագին մեծաձայն,
Դասել ըզմեզ ուղղափառացն ամենայն:

2. **Էջ 1ա–109բ.** *Դաւթի փիլիսոփայի Ներբինացւոյ, Յաղագս սահմանց [պրակք Ա–ԻԱ]:*
Լուսանցքների վրա մեկնություններ հետնագույն ժամանակից:

Սկիզբն է (էջ 1ա). *Որք միանգամ իմաստութեան տենչան բանից՝ առ ի նմանէն հնչուեալնանց* **և այլն:**

Վերջ. *Արդ՝ զդիտական գաւրութիւնն զարդարէ ի ձեռն տեսականին, իսկ զկենդանականսն ի ձեռն գործականին, որպէս զի մի՛ զսուտ գիտութիւն ի կարծեաց ընկալցուք եւ մի՛ չար ինչ գործեսցուք:*
Մի տող քերված և ապա՝
Դաւթի մեծի եւ անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիւհոնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատութիւք իմաստասիրութեան:

3. **Էջ 109բ–110բ.** *Ամենայն չար տանջելի. ոչ ոք տանջեալ անապական. ոչ ոք ապականացու աննեղ է. չարն ապականացու, չար, ուրեմն ոչ է աննեղ* **և այլն:**

Վերջ (110բ). *Եւ ընդ բամբասանսդ է, ասասնայ. ապա ուրեմն՝ ոչ է աննեղ:*

Հիշատակագրություններ

1. **Էջ 110բ.** *Սահմանք իմաստասիրութեան երկի վերջում, հին բոլորգիր նույն գրչի.*
Փառք ամենասր երրորդութեանն որոց մի է ածութիւնն եւ բնութիւն յաւիտեանս:

Ջտէր Ստփոս զստացաւդ գրոցս մի մոռանայր որք վայելէք եւ երդիւնիք ի սմանէ. դի վն այդմ յուսոյ էր ստացեալ զսա: Ընդ նմին եւ զանպիտանս Յոհէս, դի բղում աչխատեցայ ի յուղղութի սր:

2. էջ 111ա, ձեռագրի վերջում, նոտր գրով Մեսրոպ սարկավագի հիչատակագրութիւնը.

Ես նուաստ եւ անպիտանս ամենայնի, Մեսրոպ սուտ անուամբ սարկաւագ, որ ոչ առնեն արժանի դիս մեղօք մածեալս աչակերտութի այսպիսի իմաստից, այլ ակնկալութիւնն իմ ոչ եթէ երկաւորիս էր, բայց միայն բանն տէրունեան թէ «Մի կոչէք երկրի ձեզ ուսուցիչս, այլ ուսուցիչն ձեր Քս է»: Քանզի իմ նայելով զայս գիրքս սահմանացն Դաւթի՝ ցրուեալ կայր իրր անպիտան, եւ ես բազում աչխատանօք իրար ձգեցի եւ պակասն գրեցի սակս վայելման անձին իմոյ:

Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ սիրադուն եղբարք իմ, որք Հանդիպիք սմա թէ ընթեռնուով, թէ օրինակեւով՝ մեծ Հայր մերոյիս վերոյ գրեցեալ զանտոհմս եւ հեգս յիչեցէք. եւ զուք յիչեալ լինիք ի քէ կրկնակի զալստեանն եւ աչխարհական աւետանն, ամէն: Գրեցաւ ՌՃՁԲ թուին Հայոց, ապրիլի ամսոյ ը ի Դրան մեծի վեհարանիս սր էջմիածնի:

3. Ձեռագրի սկզբում, դատարկ երեսներից մեկի վրա ներքեւում, նոտր գրով օտար գրչ.

Յամի Տն 1761, Հայոց ՌՄԺ, զգիրս զայս ըստացայ ի վայելումն յարեւելեցի Ղազար անիմաստ վրդպտիս, ամէն: Որքան Հանդիպիք եւ ընդհանուք՝ ասաջիք Տր ողորմի: Նոյեմբերի ժ գրեցաւ, պատրաստական ծառայ եմ ամենից:

Թիվ 1825, 6 էջմիածնի մատ. = Մայր ցուցակ, թիվ 1782

Թուղթք՝ 292: – Գրութիւն՝ 14 × 10 սմ:. – Տողք՝ 26: – Նյութ՝ հաստ ողորկ թուղթ: – Գիր՝ բոլորգիր. վերնագրերն ու սկզբնատառերը կարմիր թանաքով: – Լուսանցազարդք՝ էջ 2ա, 55ա, 67ա, 129ա, 212ա, 247բ, 289բ խորաններ, լուսանցքների վրա ղարդանկարներ: – Կազմ՝ կաչեպատ տախտակ. կազմի վրա կապիչների հետքեր: – Մագաղաթյա պահպանակ՝ սկզբնն ու վերջնն երկ-երկու թերթ: Ձեռագրի վերջում մագաղաթյա թերթերը պարունակում են երկաթագիր մի հատված՝ «Երանելոյն Յովհաննու Ոսկերերանի կոստանդնուպաւղսի Եպիսկոպոսի ի Մատթէոսի աւետարանէն»: – Հանգամանք՝ լավ: – Թվական՝

չունի, ըստ երևույթին՝ ԺԴ-ԺԵ դար: – Տեղ՝ «ընդ Հովաննաւ մօրս լուսոյ Ածածնիս որ կոչի Աւազ անապատ եւ սքանչելագործ սր Նչանիչ»: – Գրիչ՝ Ստեփանոս:

Բովանդակություն

1. **էջ 1ա.** *Դաւիթ ազգաւ հայ էր եւ Հայոց աշխարհէն եւ ուսաւ զգիրս Յունաց եւ վարժեցաւ. ապա անդ սիրեցաւ ի Թագաւորէն իւր ընկերաւքն եւ առաքեցան յԱթէնս ի մայրն իմաստութեան եւ ուսան զամենայն իմաստասիրութիւնս: Եւ ևկն յաշխարհն իւր նա զէտ ի ժամանակս մարզարէիցն յարեան սուտ մարզարէքն նմանապէս ի ժամանակս առաքելոցն սուտ առաքեալքն նաեւ ի ժամանակս իմաստասիրացն սուտ իմաստունքն յարեան եւ հակառակէին ընդ ճշմարիտ իմաստասիրութիւնն: Յորոց եւ մի էր Պիհռոն որ իւրաւքն հակառակէր եւ ասէր թէ ոչ է իմաստութիւն: Յաղագս այսորիկ հանդիսանա մեծ իմաստասէրն Դաւիթ եւ ցուցանէ իմաստասիրական յեղանակաւ թէ է իմաստասիրութիւն եւ որպէս ամենայն էքս որ էացեալ են յԱստուծոյ թէ կենդանի թէ անկենդան թէ բանական թէ անբան ամենեքեան սահման ունեն եւ առանց սահմանի ոչ գտանի էութիւն նա ցուցանել եւ իմաստութեանն սահման ապա յառաջագոյն զայն կամի ուսուցանել:*

2. **էջ 2ա–54ա.** *Սահմանք իմաստասիրութեան (պրակք Ա–ԻԱ):*

Վերջ (էջ 54ա). Դաւթի Նռամնծի եւ անյաղթ փիլիսոփայի ընդդէմ չորից առարկութեցն Պիհռոնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատուփի իմաստասիրութեն մինչեւ ցայս վայր:

3. **էջ 54ա–բ.** *Ընդ այսոսիկ եւ առաջիկա բան իմաստնոյս: Ամենայն չար տանջելի ոչ ոք տանջեալ անապական...:*

Վերջ (54բ). Եւ ընդ բամբասանաւք է սատանայ ապա ուրեմն ոչ է աննդ:

Այս գծածք հանդիսաղիր խմբից առաջնոցն տառից տրամախոհ իմաստասէր մակացու արանց ներբողեալ ի Դւթէ Նռամնծէ ննթադրեցաւ:

Ապա հետևեալ ծանոթութիւնը.

Զ Պորփիւրի նախերգանն ի մեկընչին ի գ ճառն տես:

4. **էջ 55ա–66բ.** *Ներածութի Պորփիւրի:*

5. **էջ 67ա–128ա.** *Դաւթի փիլիսոփայի Ներգինացւոյ, Վերլուծութի Ներածութեանն Պորփիւրի (պրակք Ա–ԻԹ + Յաղագս Հանրականաց սեռից եւ տարբերութեց ...):*

6. Էջ 128ա. – ա. Կատաղօրիաս, բ. Իպեոիամննիաս, գ. Անաբօտիկի, դ. Ապօղիկղիկի, ե. Դիալիֆտիկի, ա. Ստորասութի (՞), բ. Յղգս մեկնութե, գ. Վերլուծական, դ. Ապացուցական, ե. Շարադանութի, զ. Կատափասիս, է. Ապաւիշնեչն, ը. Ապօֆասիս, թ. Պրոֆասիս, զ. Ստորասութի, է. Բացասութի, ը. Բացերևական, թ. Նախադասութիւն:

7. Էջ 129ա–211բ. – Ստորոգութիք Արիստոտկլի ժ բան[1]:

Լուսանցքների վրա ծանոթություններ ու բացատրություններ, մեծ մասամբ, տարբեր գրչե:

Վերջ (Էջ 211բ). – *Կատարեցաւ սկսեալս ի մէնջ գրել ժ ստորոգութեն ասացեալ յեռամեծէն յԱրիստոտկլէ որ ասի ըստ յունարէն ձայնի Կատիգօրիաս, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ Ներգինացւոյ:*

8. Էջ 212ա–274ա. – Սկիզբն եւ նախադրութի գրոյն որ ասի ըստ յունաց Պերիարմննիաս եւ հայերէն Յղգս մեկնութե արտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտկլէ եւ թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ:

9. Էջ 274բ–289ա. – Արիստոտկլի իմաստասիրի թուխթ առ Աղեկսանդր թագաւոր, Պատմութի յաղագս աշխարհի:

10. Էջ 289բ–292ա. – Արիստոտկլի, Յաղագս առաքինութենց առ Աղեկսանդրոս թագաւոր:

Հիշատակագրություն.

1. Էջ 128ա. Պորփյուրի Ներածութեան մեկնութեան վերջում, նույն գրչե.

Փառք երբեակ անձին եւ միակ բնութեն յընդհանուր սերից եւ տեսակաց, ստորնայնոց եւ գերակայից, անտեսակին տեսակաց եւ բարձրակատար տեսակին, որ նա կարողութիւն հասանել յաւարտ իմաստասիրական տառիս այժմ եւ յանհուն յաւիտեանս ամէն:

2. Էջ 173բ, նույն գրչե.

Զգծողս յիշա՛:

3. Էջ 211բ. Ստորոգութեանց մեկնութեան վերջում, նույն գրչե.

Որ ոք հանդիպիք սմա ոպ գիարդ եւ իցէ թողութի մեզաց եւ

[1] «ժ բան» այլ գրչե:

ողորմութի ի Քէ հայցեցէք աւրինակի տուողին եւ գրողին եւ տկար գրչի մեղապարտի Ստեփի եւ բուն թարգմանողի սորա եւ մեկնողի եւ առատատուրն պարգեւաց Քս յի սրտիւ յիշողացդ եւ յիշելոցս ողորմեսցի եւ որ ամէն ասէ եւ Քի Այ մերոյ փառք ընդ Հօր եւ սր Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից ամէն:

4. էջ 274ա. Περὶ ἑρμηνείας երկի մեկնութեան վերջում, նույն գրչե.

Խիստ նեղացա՝ աղաչեմ չմեղադրել յուն ու ճանճն լափէ:

5. էջ 292ա–բ, ձեռագրի վերջում, գլխավոր հիշատակարան նույն գրչե:

Փառք ամենասր երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Փառք Հաւրն աննկի, անհասի, անբաւի եւ կացուցչի ամի: Փառք որդւոյ ծնելոյ եւ երեւոյ (՞) եւ ընդ իւր յարուցանելոյ դիւրայինսն ա: Փառք եւ պատիւ նլողի եւ ազատարար, աննիւազ, անուչարուրիչ սր Հոգւոյն: Փառք երկքերեւան երրորդական Ածութեն եւ անբաժանելի միութեն այժմ եւ միշտ դի յորմէ եւ նովաւ եւ ի նոյն ա նմա փառք յաւիտ. ամէն:

Արդ ես մեղաւոր Հոգս վիճուն գրիչ Ստեփա. առ ոտս ձեր անկեալ աղաչեմ որք հանդիպիք սմա թողութի արարէք ինձ վս սղալանացս որ ի սմա դի այսչափ էր կար մեր: Բայց գրեցի զսա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ա զարմից ի լաւ եւ յընտիր աւրինակէ:

Արդ որք աւգտնալ ի սմանէ չահեսցին յիշատակեսցեն առաջի ղննոյն Քի ... եւ զրարունապետն Գրիգոր որ զաւրինակն չնորհեաց եւ զամբարեալ իմաստութի մտաց իւրոց քաղցրութիր եւ հեղաւրէն արբուցանէ սպասաւորացն բանի զոր տացէ նմա Աստուած զտրիտուր վոխարինին նա եւ զԳէորգ վանական քՀնայ՝որ զօրինակն վղն իւր Հոյն (՞) երեւ. յիշեսջիք եւ զկուսակրաւն քՀն Հայրապետ որ աւգնական եղեւ մեզ ի թղթիս կոկելն: Այլ եւ զհամաւրէն համշիրակ եղբարքս, որք կան յընթերցումն Ածեղէն տառից եւ իմաստութե առ ոտս պատուական հանճարայեղց բարունապետիս Գրիգորի եւ աւգնական եղեն մեզ ի յուղղելն զսա: Եւ զտառապեալ անձն իմ զմեղսաներկ զնախասեալ զրողս եւ ծնօղսն իմ աղաչեմ յիշել եւ զամենեսեան որ աւգնական եղեն մեզ ի գրելն սորա նաեւ զառաջին իմաստասէր վարդապետս որ բաղում աչխատեցան ի սա:

Արդ գրեցաւ սա ընդ Հովաննաւ մօրս լուսոյ Ածածնիս որ կոչի Աւազ անապատ եւ սքանչելագործ սր Նչանիս:

Թիվ 1894, 18 ԷՋմիածնի մատ = Մեայր ցուցակ, Թիվ 1842

Թուղթ՝ 326: – Գրութիւն՝ 12 × 8 և 13 × 9 սմ.: – Տողք՝ 24-29: – Նյութ՝ հաստ ոդորկ թուղթ: – Գիր՝ բոլորգիր. վերնագրերն ու սկզբնատառերը կարմիր թանաքով: – Կազմ՝ կաշեպատ տախտակ: – Հանգամանք՝ բավարար: – Թվական՝ չունի, բայց երևույթին ԺԵ-ԺԶ դար: – Գրիչ՝ Գրիգոր և Տրիտուր:

Բովանդակութիւն.

1. **Էջ 2բ.** *– Յանկն Լ վասն այս արտաքին գրքիս այսմիկ: Նոտր գրով օտար գրչե:*

2. **Էջ 3ա–51բ.** *– Սահմանք իմաստասիրութեն: Սույն վերնագիրը հետո ուղղված է օտար գրչե այսպես. Դաւթի փիլիսոփայի Ներգինացույ յղգս Սահմանց իմաստասիրութեն (պրակք Ա-ԻԱ):*

Սկիզբն է (Էջ 3ա). *– Որք միանգամ իմաստասիրութեն տենչան բանից և առ ի նմանէ հնչուութենց ծայրիւ միայն մատին հանդիպին ճաչակնալք ...:* **Վերջ (Էջ 51բ).** *– Որպ դի մի՛ զսուտ դիտուութի ի կարծնաց ընկալցուք դի մի չար ինչ զործնացուք: Դաւթի Նոամնծի և անյաղթ փիլիսոփայի ընդդէմ չորից աւարկութենցն Պիհոռնի իմաստակի և սահմանք և տրամատուութի իմաստասիրութեն մինչև ցայս վայր:*

3. **Էջ 51բ–52ա.** *Ընդ այսոսիկ և առաջիկա բան իմաստնոյ: Ամ չար տանջելի. ոչ ոք տանջնալ անապական. ոչ ոք ապականացու աննդ ...:*

Վերջ (Էջ 52ա). *– Եւ ը բամբասանաւք Լ ստնյ, ապ ւր ո՛չ Լ աննդ:*

4. **Էջ 53ա–63բ.** *– Ներածութի Պորփիւրի:*

5. **Էջ 63բ–120բ.** *– Դաւթի փիլիսոփայի Ներգինացույ, Վերլուծութի Ներածութենն Պորփիւրի: (Պրակք Ա-ԻԹ + Յղգս Հասարակաց սեռից և տարբերութենց առջև տեսութի):*

6. **Էջ 121ա–130բ.** *– Մեկնութի բանից Դաւթի փիլիսոփայի, որ ի կատարումն նորին տառի որ վս սհմնաց իմաստութեն, ասացնալ Տն Ներսիսի կթկի Հայոց ի խնդրոյ ումնմն Ստեփաննոսի սիրոդի իմաստութեն:*

Սկիզբն է (Էջ 63բ). *– Զխնդիր հոգևորական հաւատով և սիրով հայցողաց պարտիմք տալ յօժարութիր ըստ հրամանի Տն ...:*

Վերջ (էջ 130բ). – *Այլ մեք պի ունիմք գայսոսիկ չնորհևալ յԱյ յառնել ի մեռևլութենէ հոգոյ խոստովանութիբ եւ արտասուօք՝ գոհութի չնորհողին մատուցուք եւ փառք այժմ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:*

7. **էջ 131բ.** – *Հունարէն իմաստասիրական* κατηγορία *և այլ բառերի թարգմանութիւնք օտար գրչի և մի հատված՝ «Զի՞նչ է պատճռ ուղղաձև գոլոյ մզոյս ...:*

ա. Կատալօրիաս. Իպեռիամէնիաս. Անալօտիկի. Ապօդիկտիկի. Դիալիփտիկի: Կատալօրիաս. Իպեռիամէնիաս. Անալօտիկի. Ապօդիկտիկի. Ստորոգութիբ. Յազգ մեկնութեն. Վերլուծական. Ապացուցական. Դիալիփտիկի. Կատաֆասիս. Ապովասէս. Ապոֆանսէս. Պրոտասիս]. Շարարանութի. Ստորաստութի. Բացատութի. Բացերևեական. Նէոդութի.:

բ. Զի՞նչ է պատճռ ուղղաձև գոլոյ մզոյս. յոդ տարակոյս երիւք լուծանի՝ կմ գրոց վկութբ կմ բնական քննութբ կ մտաց տեսութբ: Գիրք ասէ թէ ուղիղ է Տր Ած մեր եւս եւ թէ արար Ած զմդն ի պատկեր իւր՝ այսինքն ուղիղ. եւ ըստ բնականին պի լսող կննդանիքդ անհաւասար ունին զտարերքդ որպ թռչունք՝ գոդոյ մասն առաւել եւ ձկունք՝ գջուր եւ այլք գերկիր, իսկ մզ հաւասար ըստ Նիւսացոյն եւ գհրոյ մասն հոլով քան գայլոցդ դի նոքա պակաս ունին եւ հուրն վերաչարժ է որ միշտ ի վեր կու ձգտեցնէ եւ ուղիղ կազմէ ընդ իւր գայլ տարերսդ: Իսկ ըստ տեսութեն դի որպ կազդար որ գինչեւէ նիւթ ի վր իւր ձեւոյն կու կերպացնէ որպ եւ ինքն է նմանապ հոգին բանական որպ կազդար է եւ գնիւթ մրինն ի յարգանդ մօրն ի վր իւր կու անձնաւորէ ու տպացնէ որպ տեսանենդ ուղղակի եւ ի վրհայեաց. եւ օրինակ քեզ որ գինչ ախտ որ կրէ հոգին որ է կազդար նա կու ցուցանէ ի մրմինն որպ տրտմութի, բկութի, հպարթի, ցանկութի:

8. **էջ 132ա–217ա.** – *Ստորոգութիբ Արիստոտէլէ (**մեկնութիւն**):*

Սկիզբն մեկնութեան (էջ 132ա). – *Հոմանունութի լինի ըստ երկուս յեղանակս ըստ պատահման կամ մտածութեն. մտածութի ըստ պատուոյ, ըստ յիշատակի, ըստ յուսոյ, ըստ աղօթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեն:*

Վերջ (էջ 217ա). – *Գդի էր սահման սեռին որպ ասացաւ գյոլովից եւ գտարբերնեցնող տեսակաւ ի ներումդինչէն ստորոգեալ: Կատարեցաւ սկսեալս ի մէնջ գրել տասն ստորոգութիան ասացեալ յեռամեծէն Արիստոտէլէ, որ ասի ըստ յունարէն ձայնի Կա-*

տիւօրիաս, Թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւիթ Ներգինացւոյ:

9. **Էջ 217ա–280ա.** *– Սկիզբն եւ նախադրութիւն զրոցն որ ասի բստ Յունաց Պերիարմենիաս եւ Հայերէն Յղգս մեկնութիւն: Արտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ. Թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւիթ:*

Սկիզբն մեկնութեան (էջ 217ա). *– Ճառեցաւ մեզ նրբեմն, եթէ է ամենայն բանական իրողութեաս այսորիկ ակնկալութիւն առ ապագայական չարարանութիւնն հասանել:*

Վերջ (էջ 280ա). *– Քան ամենայն ուրեք սովորեց իմաստասէրս յղգս պիտանացին գիտութիւն սերմանել իւրոց լսողացն:*

10. **էջ 241ա–297բ.** *– Արիստոտէլի իմաստասիրի Թուխթ առ Ալէքսանդրոս Թագաւոր, Պատմութիւն յղգս աչխարհաց.*

11. **էջ 297բ–301բ.** *– Արիստոտէլի, Յղգս առաքինութեաց առ Ալէքսանդրոս Թագաւոր:*

12. **էջ 302ա.** *– Արիստոտէլէս արագիրացի էր ի Քամչկիթ գաւառ ևն (համմտ. թիւ 1889):*

13. **էջ 303բ.** *– Որք յանդիմանեսցէ ի ձէնջ վս մեղաց. գ մեղք են. ա. բնական. բ. մահուչափ. գ. նկական (?)...:*

Վերջ. *– Որպ սա մտէն թէ կամիմ դի ամ մդ կեցցէ եւ ի գիտութիւն ճչմարտութեն ևկեսցէ:*

14. **էջ 305ա–312բ.** *– Գիրք ի վեր բնութեն հանրական եւ մասնական, քհի ումեմն աչխատել Իշաւս անուն Յէսու:*

Սկիզբն է (էջ 305ա). *– Խնդիր վս բնութեն այսպիսի արասցուք: Յորժամ զոյացոյց Ած զէաս յոչէից՝ տնդի բնակութեն կազմեաց զաչխարհ ձեղուամբ նրկնից յօրինել:*

Վերջ (էջ 312բ). *– Եւ խելքն ի լ ամէն մինչեւ ի կ-ն, եւ անտի յառաջ պակասիկ սկսանի. եւ քի այ որ առնէ այս ի (?) կարդամբ փառք եւ:*

էջ 312բ. *– Նոյնպէ եւ այլոց կննդաննաց Նտ բնութին զպէտս պատչաճաւորս՝ գազանաց եւ թռչնոց, անասնոց եւ սողնոց:*

Վերջ (էջ 313ա). *– Եւ ինչ ոչ գտանի յարարածս՝ զոր ոչ խնամէ բնութին, բստ իւրչ իւր պիտոյից եւ զգուչութեն:*

15. **էջ 313ա.** *– Նորին ասացեալ վս համոց:*

Սկիզբն (էջ 313)ա. *– Յայտնի են է. ա. փոթորն, բ. թթուն, գ. քաղցրն, դ. դառն, ե. ապին, զ. կծուն, է. անկին եւ անհամն եւ զէրն:*

Վերջ (էջ 313ա). *– Խարտեաչ մարձն պտրգմոդս տեսանէ եւ հեծեալս:*

16. **էջ 313բ–322բ.** *– Դաւթի փիլիսոփայի, Գիրք Կատաց:*

Սկիզբն է (էջ 313բ). – *Ի քանիս բաժանի Լակն կամ յո՞րս: – Երկակի. ի գոյացութի եւ ի պատահումն:*

Վերջ (էջ 322բ). – *Եւ այլք այսպիսիք պնդի է բան անսահմանի ննջադատելով ճչդակչիս:*

17. էջ 322բ–324բ. – *Նկատումն Արիստոտէլի:*

Սկիզբ (էջ 322բ). – *Ուսուցանէ մեզ ի բանասութենէն այնոցիկ, որ հասարակաց բնականաց գոյանան են:*

Վերջ (էջ 324բ). – *Եւ այսք լսդր որք ոչ ումեք այլոց արարածոց բնատրեցաւ պատչաճիկ, բց միայն միայնում Այ, եւ նմա միայն տալ է պաշտօն Ֆի, եւ նմա վառք յաւիտեանս ամէն:*

18. էջ 324բ–326ա. – *Բնութի է գօրութի հրամանատուի յրնթանուր հոգւոյն...:*

Վերջ (էջ 326ա). – *Զի պատ հանճ ընդ բանականութիւնն է, որ է յէութենէ մդոյն:*

19. էջ 326բ. – *Հարցեր ու պատասխաններ իմաստասիրական բովանդակութեամբ: Գրերն ավրված ու դժվար ընթեռնելի:*

Հիշատակագրություն

1. էջ 58բ. *բնագրի գրչէ.*

Յիշէ զԳրիգոր գրող սորայ:

2. էջ 120բ. *Պորփյուրի Ներածութեան մեկնութեան վերջում, նույն գրչէ.*

Յիշեցիք զմեզ յաղօթս ձեր:

3. էջ 131բ. *Ներսես Շնորհալու՝ «Ամենայն չար տանջելի» հատվածի մեկնութեան վերջում, նույն գրչէ.*

Յիշ յաղօթս ձեր զմեղուցեալ անձ իմ զՏրիտուրն. Տրն տա որ չափով որ չափէք յոլովիւք առնուցուք զվոխարէնն ամէն:

4. էջ 131բ. *մի քանի տող ներքև, տարբեր գրչէ.*

Զ ... սարկաւաք յաղօթս յիշէ:

5. էջ 326բ. *ձեռագրի վերջում օտար գրչէ.*

Քս Ած ողորմի սր գրողին եւ գնօղին եւ կրպացողին եւ ամենայն հւացելոց կենդանեաց եւ մեռելոց ամէն:

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

§ 1. Հունաբան դպրոցի ու լեզվի խնդիրը մութ ու խրթին մի առեղծված է։ — *Մեր հին մատենագրության մութ ու խրթին առեղծվածն է կազմում հունաբան դպրոցի ու լեզվի ծագման և զարգացման խնդիրը։*

Մինչև այժմ, չնայած բանասերների գործադրած բոլոր ջանքերին, անհնար է եղել գոնե մոտավորապես որոշել, թե ե՛րբ, ո՛րտեղ և ինչպիսի պարագաներում ծնունդ է առել ու հետզհետե կազմակերպվել հունաբան ուղղությունը և լեզուն, որն իր հատուկ ու բնորոշ տեղն ունի հայոց հին մատենագրության մեջ։

Հայ մատենագրական ավանդությունը, որին երկար ժամանակ անվերապահորեն հետևում էր հայ բանասիրությունը, արտաբին զրոց հունարան թարգմանություններն ու մեկնությունները վերագրում էր Դավիթ Անհաղթ հայ փիլիսոփային, մասամբ նրա ընկերակիցներին, ընդունելով նրանց հինգերորդ դարի հեղինակներ, Սահակ-Մեսրոպի աշակերտներ։

Այդ ավանդությունը, ինչպես ցույց ենք տվել «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» մեր աշխատության մեջ[1]*, անհիմն ու անվավեր մի առասպել է, հետագա դարերում հերյուրված։*

«Արտաքին զրոց», այն է՝ իմաստասիրական, քերականական, ճարտասանական և այլ նման երկերի բովանդակությունը հայագետ հմուտ բանասերներն անգամ դժվար կարող են հասկանալ առանց այդ ուսմունքների մոտ ծանոթության, հունարեն լեզվի օգնության և մասնագիտական հարատև հետախուզման։ Այդ երկերի հունարան խրթին լեզուն այնքան արվեստական ու արտասովոր է, որ անմատչելի ու անհասկանալի է անգամ վարժ ու հմուտ գրաբարագետների համար։ Այդ է գուցե գլխավոր պատճառը, որ չատ քչերն են ձեռնամուխ եղել հետազոտելու այս

1 Վաղարշապատ, 1904, արտատպ. «Արարատ» ամսագրից, 1904, փետրվար, հունիս, հուլիս։

երկերը և սրանց վերաբերյալ բանասիրական ու լեզվական մթին հարցերը: Հայ բանասիրությունը զբաղվել է գրեթե բացառապես ոսկեդարյան անվանված մատենագրական երկերի քննությամբ, և միանգամայն աչքաթող արել հունարան ուղղության, լեզվի և «արտաքին գրոց» ուսումնասիրությունը:

Այդ ուսումնասիրությունը սակայն նախապայմանն է կազմում մեր հին մատենագրության ամենահիմնական խնդիրների պարզաբանման: Բացի այդ, հունարան ուղղությունն ու «արտաքին գրոց» ուսմունքը կարող են ամենալուրջ ուշադրության նաև իրենց ուրույն բովանդակության տեսակետից, որովհետև նրանք, լինելով առանձնահատուկ մի երևույթ մեր հնագույն մատենագրության, այնուհետև զարեր շարունակ մեծապես ազդել են թե՛ հայ մտքի և թե՛ ոգևկան մշակույթի վրա:

§ 2. **Հունաբան ուղղության ընդհանուր բնորոշումը:** *— Արդ՝ տեսնենք, թե որոնք են հունարան ուղղության առանձնահատկությունները, նրա գերն և նշանակությունը հայոց մատենագրության մեջ:*

Հունարան ուղղությունը, նախևառաջ, այն մեծ հեղաշրջումն է հին հայոց մատենագրության մեջ, որը հիմնահատակ է անում ու հեղափոխում թե՛ հայ գրական լեզուն, ոճը, գրելու եղանակն ու սովորությունը, և թե՛ հեղինակների գաղափարական ու գիտական պաշարն ու աշխարհայացքը: **Վեցերորդ դարից** *սկսած՝ հայ մատենագիրներից շատերը, հմուտ ու քաջ ծանոթ լինելով քերթողական, քերականական, ճարտասանական և իմաստասիրական «արուեստներին»՝ կոչվում են հռետոր, փիլիսոփա կամ քերդող, որ հունարեն ποιήτης բառի թարգմանությունն է:*

«Քերդող» մակդիրը հանդիպում է արդեն վեցերորդ դարի վերջում՝ «Փառաւորելոյ տերանց Վրթանէսի տերանց նուիրակի եւ վարդապետի Քէլկան որդւոյ, ի Սորմենայ ստրատելատէ եւ հայոց դաւրավարէ» թղթում կաթողիկոսական տեղապահ Վրթանեսն անվանվում է «քերդող»: «Զի ոմեք չէր իշխան, որպէս զրեցէքն, տեղապահդ ձեր Եկեղեցւոյդ առանց աթոռակցաց իւրոց ասել ընդ մեզ եւ կամ լսել, եւ **կամ որ ասէքդ քերդող,** *նստեալ ի Դունայ, աւերածին հաւատոյդ նոր կարապետդ, եւ յառաջընթաց նեռին, պաճուճեալ անափառութեամբ ի մէջ տիմար եւ մտամոլոր մարդկան, եւ ցուցանէ զանձն իւր թէ են իսկ իմ վարդապետութիւն, ապա պարտ է...» և այլն («Գիրք թղթոց», էջ 90):*

Ղազար Փարպեցին հիշում է Մովսես «փիլիսոփոս»-ին: Սան-

վանոս Ասողիկը «փիլիսոփայ» է անվանում Քրիստափոր կաթողիկոսին, իսկ Եղրաս Անգեղացուն համարում է «աչակերտ ճարտասանին Մովսիսի Նալիսկոպոսի Բագրեւանդ գավառի» և ասում, որ նա «զզաստ ճարտասանիցն բազմացուցանէր» («Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 81, 82):

Քերթողները և իմաստասերներն են եղել, ինչպես հայտնի է, այդ ժամանակվա հեղինակավոր գիտնականները: Վեցերորդ դարի կրոնական վեճերի ժամանակ սրանք են, գլխավորապես, հիմնավորել ու պատճառաբանել վիճելի հարցերը, և հանդես եկել եկեղեցական ժողովներում հակառակորդների դեմ: Սմբատ Վրկան մարզպանը վրաց Կյուրիոն կաթողիկոսին ուղղված իր թղթում գրում է.

«Կամէաք Նալիսկոպոսունս հանդերձ քերդողաւք արձակել, զկիրթսն գիտել զչարութիւն հերձուածոց, որ զձեզ ի վերայ հասուցանէին: Բայց ապա առ ժամս բաւական համարեցաք ի ձեռն ազատ արանցդ, նաև թղթով զկամս ձեր գիտել» («Գիրք թղթոց», էջ 169):

Եվ հիրավի, քրիստոնեության հեղինակման պատճառով՝ անկարելի էր հասկանալ կրոնա-դավանաբանական խնդիրների ու վեճերի իմաստն ու նրբությունները առանց ժամանակակից հեղեն գիտության ու իմաստասիրության վարժ ծանոթության:

Հունարան հայ դպրոցն էր, որ այդ հմտությունը պատվաստում ու տարածում էր հայ երկրում:

§ 3. «Արտաքին գրոց» թարգմանությունները և դրանց ազդեցությունը հայոց հին մատենագրության լեզվի, ոճի և բովանդակության վրա: — *Բովանդակության կողմից հայ մատենագրությունը հունարան շրջանում հարստանում է բազմաթիվ թարգմանություններով հունարենից՝ ո՛չ միայն կրոնական երկերի, այլև ո՛չ կրոնական, որոնց մեծագույն մասը հայտնի են «արտաքինք», «արտաքին գրեանք» և «գիրք արտաքնոց իմաստասիրաց» անունների տակ: Հունարան այս շրջանում միայն՝ հայ միտքը ծանոթանում է հելլենական — հնթանոս գիտությունների դանազան ճյուղերի հետ և Արիստոտելի տրամաբանական երկերի ու նորպղատոնական փիլիսոփայության ուսումնասիրությամբ վարժվում է վերացողական մտածողության: Բացի Արիստոտելի երկերից ու մեկնություններից՝ նույն այս շրջանում թարգմանված են «Պետոյից գիրքը», Դիոնիսիոս Թրակացու Քերականությունը, Նոննոսի «Ժողովարանք պատմութեանց*

առասպելացն» և ուրիշ երկեր հելլենական աչխարհիկ գրականությունից:

Թարգմանությունների մի մասը կատարված է տառացի բառ առ բառ փոխադրության միջոցով, որը վեցերորդ դարում գործածական է եղել Բյուզանդիայում: Ինչպես հայտնի է, նույն այդ եղանակով թարգմանված է Հունարենի՝ Հուստինիանոս կայսեր օրենքների ժողովածուն: Ըստ երևույթին, նյութական տառացի փոխադրության եղանակը հատուկ պահանջ է եղել այնպիսի հոչակավոր երկերի համար, որոնք բառ առ բառ քննության են ենթարկվել և մեկնվել ու ավանդվել դպրոցներում:

Հայոց մատենագրության մեջ թարգմանությանց այդ չարքին պատկանում են ամենից առաջ «Պիտոյից գրքի» տեսությունները, Դիոնիսիոս Թրակացու Քերականությունը, Պորփյուրի Նեբածությունը և Արիստոտելի Մտորոգությունքն ու Յաղագս Մեկնության գրվածքը:

Սույն երկերի տառացի փոխադրությամբ կազմվում են մեքենայորեն ու արվեստարար բաղմաթիվ նոր բառեր ու նորաձև բառակազմություններ, գլխավորապես, վերացական գաղափարների և իմաստասիրական ու գիտական եղրների համար, ինչպես օրինակ՝ ապացոյց = ἀπόδειξις, ենթակայ = ὑποκείμενον, ներհական = ἐνάντιος, չարունակ = συνέχης, առաստութիւն = προσηγορία, բաղկացական = συστατικός, բացատրութիւն = ἀπόδοσις, ընդունակ = διεκτικός և այլն:

Բացի այդ ուրույն բառակազմություններից, որոնցից չատերը հետզհետե գործածական են դառնում հայերենում, հունարան չրջանի գրական լեզուն ունի նաև որոչ քերականական առանձնահատկություններ, միանգամայն խորթ ու օտար՝ ոսկեդարյան մատենագրության, որ պետք է վերագրել մասամբ հունարենի աղդեցության, մասամբ լեզվի բնական զարգացման:

Վեցերորդ դարից սկսած հայ գրականության ոճի վրա ևս մեծ աղդեցություն են ունեցել քերականական ու հռետորական դասագրքերը: Որոչ հեղինակների նկատմամբ այդ աղդեցությունը պարզ երևում է նրանց երկասիրությունների չարահյուսման եղանակի ու ձևի վրա: Մ. Արեղյանը յուր «Հայ ժողովրդական առասպելները» (Վաղարշապատ, 1901) աչխատության մեջ մատնացույց է անում, որ Մովսես Խորենացին Տիգրան Ի-ի ներբողը գրել է, հետևելով «Հիւսումն Պիտոյից» աղբյուրի ճարտասանական պահանջներին: Նույն «Պիտոյից գրքի» հռետորական

կանոններին հետևել է նաև Խոսրովիկ Թարգմանիչն իր կրոնադավանաբանական հակաճառություններում[1]:

§ 4. Հելլենասեր ուղղությունը, որպես խթան աշխարհահայեցության ընդլայնման և աշխարհիկ գրականության զարգացման: *— Հելլենասեր ու հունարան ուղղությունը հայոց մատենագրության մեջ, ինչպես չատ ուղիղ նկատել է ուսուցչապետ Ն. Մառը[2], ընդլայնելով հայերի մտավոր հորիզոնը, առաջ է բերել հետաքրքրություն ո՛չ միայն դեպի հին հեթանոսական աշխարհը, այլև դեպի իրանց հնությունները, ժողովրդական առասպելները, և մեծ չափով նպաստել է նրանց ազգային գիտակցության ու քաղաքակրթության զարգացմանը: Սակայն ստեղծագործական այս բեղմնավոր աշխատանքի խաղաղ առաջադիմությանն արգելք են հանդիսացել արարական արշավանքներն ու արհավիրքները:*

Թեև յոթներորդ դարի արարական ավերիչ չրջանում անգամ հայ մատենագրությունը հունարան ուղղությամբ չարունակում էր, սակայն նա չէր ստանում այն թափն ու ուժը, որ կարող էր ստանալ այլ խաղաղ պայմաններում:

Հելլենասեր ուղղությունը հայ մատենագրության վրա ունեցել է մեծ ազդեցություն նաև այն տեսակետից, որ նա, ընդլայնելով հայոց հնագույն մատենագրության կրոնաեկեղեցական չրջանակները, մեծ զարկ է տվել աշխարհիկ բանաստեղծական գրականության ծագման: Թեև արարական արհավիրքների ու արտաքին աննպաստ պայմանների պատճառով գեղարվեստական գրականությունը մեծ ծավալ ու զարգացում չէ ստացել, սակայն Հելլենասեր հին հայ մատենագրության մեջ գեղարվեստական թարգմանական ու ինքնուրույն երկերի գոյությունն անտարակուսելի ու ակներև է: Գրիգոր Մագիստրոսը «Առ վարդապետն Սարգիս» գրած իր նամակում[3] հիշում է «զԿալիմաքոսի եւ զԱնդռօնիկևայն» բանաստեղծական երկերի հայերեն թարգմանությունը: «Գտեալ եմ, — գրում է Մագիստրոսը, — և զԿալիմաքոսի և զԱնդռօնիկևայլն ի հայ լեզու»: Քերականի Անանուն

---

[1] Տե՛ս **Գ. վրդ. Հովսեփյան**, Դավիթ Հարքացին և Պիտոյից գիրքը, «Արարատ», 1808, փետրվար, էջ 209-210:

[2] **Н. Марр**, Иоанн Петрицский, грузинский неоплатоник XI-XII века, СПб.,1909, էջ 12-13.

[3] Տե՛ս **Կ. Կոստանյանց**, Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 66:

մեկնիչը, որն, ինչպես կտեսնենք, Մովսեսի ու Դավթի Հարցմունքներում հիշատակված նրանց ընկերակից համարված Պողոսն է, ո՛չ միայն իր մեկնության մեջ հիշում է Դավթի «Քերթուխինը» Տիգրանի մասին, այլև առաջ է բերում նրանից մի հատված: Մեկնարանելով «գտաղն քաջոլորակի», նա Դավթի քերթության մասին հաղորդում է հետևյալը. «Իսկ քաջոլորակի տաղ ասի Դաւթեան քերթուխին (եւ) որ յաղագս Տիգրանայ, յորժամ երկար բառիւք եւ ոլորակաւք ի սկսմանէ մինչեւ յաւարտումն զմիտս առնալ բերիցէ, որպէս յորժամ ասէ.

Եւ արդ ներգործող ի միտս երեւիւր առ
խորհուրդս փողարին
Մեծոգւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի
Իւր ներածեալ կողաբաղ նաեւ ողջամիտ
աչխարհածուհի[1]**:**

§ 5. **«Արտաքին գրոց» բառապաշարն աշխարհաբար հայերենի մեջ և նրա ուսումնասիրության կարևորությունը հայոց լեզվի պատմական քերականության համար:** — *Հունարան դպրոցի արտադրությունների չարքում առանձնահատուկ տեղ են բռնում Արիստոտելի իմաստասիրական երկերի և նրանց մեկնությունների, նաև «Պիտոյից գրքի» ու Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանությունները: Այս երկերը դարեր շարունակ եղել են Հայաստանում դպրոցական դասավանդման առարկաներ, և սրանց լուսաբանությանը, ինչպես հայտնի է, նվիրված են բազմաթիվ մեկնություններ ու լուծմունքներ, որոնք զանազան ժամանակներում հորինված են եղել, իբրև դպրոցական ձեռնարկներ: Քերականական, ճարտասանական ու Արիստոտելի իմաստասիրական երկերի հարատև ու խոր ազդեցությունը համաչխարհային մտքի, լեզվի ու մատենագրության վրա համատարած մի երևույթ է եղել թե՛ Արևմուտքում և թե՛ Առաջավոր Ասիայում:*

Այն գիտական ու վերացական բառերի պաշարը, որ գործածական է ու սովորական այժմյան աշխարհաբար հայերենում, ինչպես և եվրոպական լեզուներում, ծագել է մասամբ վերոհիշյալ երկերի թարգմանություններից:

Հունարան գրաբարը, համարելով ոսկեդարյանի համեմատությամբ «ցնխագարյան», չպետք է այնուամենայնիվ մոռանալ, որ

[1] Տե՛ս Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ քերականի, Պետրոգրադ, 1915, էջ 128-129:

այդ լեզվի գիտական քննությամբ միայն կարող են պարզվել լեզվական մի չարք խնդիրներ, որ վերաբերվում են նրանից ծնունդ առած մի֊ջնադարյան և աչքսարհարար հայերենին: Հունարան այդ լեզվի ուսումնասիրությամբ է, որ հնարավոր պիտի լինի լուսաբանել մեր լեզվի հաջորդական զարգացումը: Գիտական այդպիսի ուսումնասիրություններ, դժբախտաբար, չատ քիչ կան, մինչդեռ դրանք են հիմք ծառայելու հայոց լեզվի պատմական քերականության՝ հայ լեզվագիտության հատուկ մի ճյուղի, որ դեռևս գոյություն իսկ չունի:

Թե որքան հետաքրքիր կարող են լինել և կարևոր լեզվագիտական այդ աշխատությունները՝ ցույց տանք մի օրինակով:

Հայերենում կան բարդ բառեր, որոնք տարբեր եղանակով են բարդված, ինչպես՝ մայրաքաղաք և քաղաքամայր, բանաստեղծություն և ստեղծարանություն, սիրագործ և գործասէր, սիրաբան և բանասէր, բանագովություն և գովաբանություն, վաճառաչահություն և չահավաճառություն և այլն: Մեծագույն մասն այս բառերի հունարան ծագում ունեն:

Արդ՝ հարց է առաջ գալիս, թե այդ բարդություններից որոնք են ավելի հարազատ հայոց լեզվի քերականությանն ու ոգուն: Ահա մի հարց, որը հայոց լեզվի պատմական քերականության խնդիրներից մեկն է լինելու, բայց ուշադրության արժանի չէ առնված:

Վերոհիշյալ օրինակներից «սիրագործ» բարդությունը, որ գործ է ածված Տիմոթեոս Կուզի Հակաճառություններն մեջ (էջ 325), ամենայն հավանությամբ, թարգմանություն է հունարեն φίλεργος բառի: Հունարան ուրիշ կրկնում նույն բառը, սովորաբար, թարգմանված է «գործասէր»: Շատ պարզ է, որ «գործասէր»-ն ավելի է համապատասխանում հայերեն լեզվի ոգուն, քան «սիրագործ»-ը: Սակայն կան դեպքեր, երբ հունարան բարդ բառերի հարազատությունն ու խորթությունն ավելի դժվար է լուծվում, քան վերև մատնանշված դեպքում: Օրինակ, «մայրաքաղաք» բառը, որ թարգմանություն է հունարեն μητρόπολις բառի, այժմ միանգամայն հարազատ է հնչում մեր ականջին: Բայց ուղի՞ղ է արդյոք մեր այդ ներքին զգացումը և վստահությունը: Քերականական ու լեզվաբանական տեսակետից, ինձ թվում է, որ հայոց լեզվի ոգուն ավելի է համապատասխանում ո՛չ թե սովորական դարձած «մայրաքաղաք»-ը, որն արդյունք է հունարան տառացի թարգմանության, այլ «քաղաքամայր» բառը:

Հատուկ ուսումնասիրության նյութ կարող է ծառայել Հունաբան բարդ բառերի հենց այս կարևոր խնդիրը, մանավանդ, եթե ի նկատի առնվեն Եվագրոս Պոնտացու երկերի հնագույն հայ թարգմանությունները, որոնք այդ տեսակետից ունեն հետաքրքիր առանձնահատկություններ:

Թե՛ այս և թե՛ ուրիշ նման լեզվական խնդիրներ կարող են և պետք է պարզվեն Հունաբան հայերենի ուսումնասիրությամբ:

§ 6. Հունաբան լեզվի ուսումնասիրությունը, որպես միջոց մատենագրական երկերի ժամանակագրական ու խմբակցական դասավորման: — *Հայտնի է արդեն, որ Հունաբան և ոսկեդարյան երկերը լեզվական ու քերականական տեսակետից այնքան միմյանցից տարբեր են, որ՝ առանց դժվարության զանազանվում ու բաժանվում են իրարից:*

Այս հանգամանքը վաղուց ի վեր օգտագործվել է իբրև կարևոր մի միջոց բանասիրական ու ժամանակագրական որոշ հետազոտությունների ու հետևությունների համար:

Ոսկեդարյան գրաբարի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ լեզուն, լինելով ըստ էության նույնը, ըստ իր ոճի ու կերպի բաժանվում է այլևայլ դասերի[1]: Որքան և առանձին դեպքերում դժվար ու վիճելի լինի այդ խմբերի ու նրանց առանձնահատկությունների որոշումը, սակայն դասերի ու խմբավորումների ընդհանուր փաստը միանգամայն հիմնավոր է ու անժխտելի:

Հունաբան գրաբարը մինչև այժմ դեռ ուսումնասիրված չի եղել համեմատական ու նույն մանրազնին եղանակով, ինչպես ոսկեդարյանը: Մինչդեռ, ինչպես կտեսնենք, այդ ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն լեզվական, այլև բանասիրական և մատենագրական-պատմական տեսակետից:

Ինքնության առնելով Հունարան հնագույն երկերի լեզուն, քերականությունը և բովանդակությունը, կարելի է ոչ միայն բաժանել այդ լեզուն տարբեր խմբերի և պարզել դրա զարգացման ընթացքը, այլև որոշել «արտաքին գրոց» առանձին խմբերի թարգմանման ժամանակաշրջանները, և նույնիսկ առանձին երկերի թարգմանման ժամանակագրական հաջորդականությունը:

Հունարան լեզուն իր բառամթերքով ու քերականական

---

[1] Տե՛ս Հ[այր] Ա. Այտընյան, Ինքնական քերականություն; Հ[այր] Թ. Թոռնյան, Հատնտիր ընթերցվածք, նաև՝ Ն. Բյուզանդացի, Կորյուն վարդապետ:

առանձնահատկություններով, ինչպես կտեսնենք, միևնույնը չի եղել «արտաքին գրոց» զանազան խմբերում, այլ նա կազմվել է աստիճանաբար ու հաջորդաբար, հետզհետե կրել է զգալի փոփոխություններ, և ունեցել իր զարգացման հատուկ ընթացքը:

Հունարան հնագույն թարգմանություններում լեզվական խմբագրումները չատ ավելի որոշ ու ակնհայտ են, քան ոսկեդարյան գրաբարում, որովհետև հիմնված են ո՛չ թե «ճաշի ու կերպի», այլ. գլխավորապես, քերականության ու արվեստական բառակազմության բացահայտ տարբերությունների վրա:

Համեմատական ուսումնասիրության եղանակով երևան են գալիս միանգամայն անհայտ նոր փաստեր, որոնք հիմնովին հեղաշրջում են ավանդական հին կարծիքները հունարան թարգմանությունների մասին: Պարզվում է, օրինակ, որ Դավիթ Անհաղթին վերագրված խմբագրական մեկնությունները ոչ միայն բոլո՛րն էլ թարգմանություն են հունարենից, այլև տարբե՛ր ուղղության և տարբե՛ր հեղինակների ու թարգմանների գործ են, և ծագել են դավանաբանական վեճերի ժամանակ կրոնական տարբեր միջավայրերում: Մի մասը նրանցից թարգմանված են միաբնակ հայերի, իսկ մյուս մասը՝ երկաբնակ հայերի միջավայրում:

Լուսաբանվում են ուրեմն թե՛ հունարան դպրոցի ծագման ու զարգացման մութ ու խրթին խնդիրը, և թե՛ վեցերորդ ու յոթերորդ դարերի գրական երկերի ժամանակագրությունը, որ մինչև այժմ եղել են անլուծելի մի առեղծված: Եթե նույն այս ուղղությամբ, որին հետևել ենք մենք, լինեն նոր հետազոտություններ, թվում է ինձ, որ վերջնականապես կպարզվի նաև վեցերորդ ու յոթերորդ դարերի կրոնա-եկեղեցական մատենագրության զարգացման ընթացքը, և մեր մատենագրության պատմությունը կդրվի վերջապես հաստատուն հիմքերի վրա:

§ 7. «Արտաքին գրոց» վերաբերյալ առաջիկա ուսումնասիրության բովանդակությունը և նպատակը: — *«Արտաքին գրոց» վերաբերյալ առաջիկա իմ ուսումնասիրությունը, որ լույս տեսավ նախ «Հանդես ամսօրյա»-ի էջերում, բաժանված է լինելու երկու գլխավոր մասերի՝*

ա. *Դավիթ Անհաղթին ու Էլիասին վերագրված մեկնությունների հեղինակները և*

բ. *Հունարան հնագույն թարգմանությունների երեք տարբեր չրջանները:*

Աշխատության կցված է լինելու իրեւ հավելված՝

գ. Էջմիածնի մատենադարանի իմաստասիրական հնագույն ձեռագրերների ցուցակը:

Ցուցակի հրատարակությունը կարեւոր համարելի, որովհետեւ ուսումնասիրության հիմք են ծառայել հաճախ ո՛չ թե Դավթի Երկերի Վենետիկում լույս տեսած բնագիրը, այլ Էջմիածնի մատենադարանի հնագույն ձեռագրները: Վենետիկի հրատարակությունը հնագույն այդ ձեռագրերի համեմատությամբ ունի պակաս մասեր և որոշ տարբերություններ:

Ուսումնասիրության առաջին մասը, որ վերաբերվում է իմաստասիրական մեկնությունների հեղինակների որոշմանը, կարեւոր է, գլխավորապես, բյուզանդական մատենագրության պատմության համար: Հեղինակների որոշման խնդրում հայերեն մեկնությունների ուսումնասիրությամբ ստացվում են եզրակացություններ, որոնք հիմնական մի քանի կետերում տարբերվում են տիրող կարծիքներից, որ ընդունելություն են գտած փիլիսոփայության պատմության մեջ:

Ուսումնասիրության երկրորդ՝ ավելի ընդարձակ ու հիմնական մասը՝ վերաբերվում է թե՛ այդ մեկնությունների և թե՛ հունարան հնագույն այլ թարգմանությունների ժամանակագրության, և կարեւոր է առանձնապես հայոց մատենագրության պատմության համար: Այս մասը, հույս ունեմ, որ յուր ուրույն բովանդակությամբ և յուր բազմաթիվ ուշագրավ ու անակնկալ եզրակացություններով նոր ընթացք և նոր ուղղություն պիտի տա հունարան մատենագրությանը վերաբերյալ լեզվագիտական ու բանասիրական հետագա ուսումնասիրություններին:

Ուսումնասիրության այս երկրորդ մասի մեջ, բացի Արիստոտելի երկերի ու նրանց վերաբերյալ հնագույն մեկնությունների թարգմանություններից, քննության են առնված նաև «արտաքին գրոց» մյուս թարգմանությունների ու երկերի քերականության թարգմանությունը, նույն քերականության հնագույն մեկնությունները, Փիլոնը, Պիտոյից գիրքը և Նոննոսը, իսկ կրոնական բովանդակությամբ երկերից՝ Իրենեոսը, Տիմոթեոս Կուղի Հակաճառությունը, և «Գիրք Թղթոցի» հունարան հնագույն թղթերը:

Եթե աշխատության հիմնական սկզբունքները և եզրակացությունները հավանություն գտնեն, թվում է ինձ, որ դժվար չպիտի լինի որոշել այնուհետև նաև կրոնական և այլ բովանդակությամբ հունարան մյուս հնագույն թարգմանությունների

խմբակցութիւնը և ժամանակը: Սրանք ևս, իմ կարծիքով, ինչպես Իրենեոսի ու Տիմոթեոս Կուղի թարգմանութիւնները և Մովսես Քերթողահոր ու Հովհաննու Եպիսկոպոսապետին վերագրված թղթերը, լեզվական իրենց առանձնահատկութիւններով միանալու են, հավանարար, մեր մատնացույց արած հունարան երեք խմբերից որևէ մեկի հետ, որոնց ժամանակը որոշված է սույն ուսումնասիրութեան մէջ:

Ուսումնասիրութեանս մէջ կան կետեր, որոնց լուսաբանութեան համար հարկավոր էր ձեռքի տակ ունենալ գրքեր և հրատարակութիւններ, որոնք, դժբախտաբար, ինձ մատչելի չեն եղել: Այդ կետերը, հույս ունեմ, կաշխատեն պարզել Եվրոպայում գտնվող բանասէրները, որոնք հնարավորութիւն ունեն օգտվելու Եվրոպական հարուստ գրադարաններից:

Բ. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻՆ ՈՒ ԷԼԻԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

§ 8. Արիստոտելի իմաստասիրական երկերի, Պորփյուրի Ներածութեան և դրանց վերաբերյալ մեկնութիւնների հայերեն թարգմանութիւնները: – *Արիստոտելի կամ նրան ընծայված երկերից թարգմանված են հայերեն և հրատարակված են Վենետիկում*[1]*:*

ա. *Ստորոգութիւնք (κατηγορίαι), էջ 359–408:*

բ. *Յաղագս մեկնութեան (περὶ ἑρμηνείας), էջ 461–486:*

գ. *Պատմութիւն յաղագս աշխարհի (περὶ κόσμου), էջ 603–628:*

դ. *Յաղագս առաքինութեանց (περὶ ἀρετῶν καὶ κακιῶν), էջ 629–635:*

Պորփյուրի երկերից թարգմանված է՝

ե. *Ներածութիւն (εἰσαγωγή), էջ 227–250, որը նորպղատոնական դպրոցներում կազմում էր "Οργανον -ի անհրաժեշտ ու անանջատ մասը, իբրև «Ներածութիւն ի Ստորոգութիւնսն Արիստոտելի»*[2]*:*

---

[1] Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դավիթ Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

[2] Վերոհիշյալ հինգ երկերի հայերեն թարգմանութիւնները Ֆր. Կոնիբերը համեմատել է հունարեն բնագրերի հետ: Բայց այդ նա Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան հայերեն բնագրերը նորից հրատարակել է 8 ձեռագրերի համեմատութեամբ, տե՛ս Anecdota Oxoniensia, Oxford, 1892:

Բացի այս բնագրերից թարգմանված են նաև վերոհիշյալ երկերին վերաբերվող հետևյալ մեկնությունները:

ա. *Վերլուծություն Ներածության Պորփիւրի՝ Դաւիթ փիլիսոփայի Ներգինացւոյ (Վենետիկ, 1833, էջ 251-356):*

Այս թարգմանության հունարեն բնագիրը պահպանվել է և հրատարակված է՝ տե՛ս Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentarium, edidit Adolfus Busse, Berlin, 1904, էջ 80-219. Հունարեն վերնագիրն է նրա՝ **Προλεγόμενα σὺν θεῷ τῆς Πορφυρίου εἰσαγωγῆς ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου**[1]*:*

բ. *Ստորագրություն Արիստոտելի թարգմանելոյ և մեկնելոյ ի Դաւիթ, Վենետիկ, 1833, էջ 409-458, հունարեն բնագիրը գտնված չէ:*

գ. *Պէրիարմենիաս Արիստոտէլի թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւիթ, Վենետիկ, 1833, էջ 487-553, հունարեն բնագիրը գտնված չէ:*

դ. *Դաւթի Անհաղթ փիլիսոփայի մեկնություն չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի Վերլուծականն, անդ էջ 557-598, հունարեն բնագիրը գտնված չէ:*

ե. *Մեկնություն Ստորոգութեանց Արիստոտէլի ընծայեալ Էլիասի Իմաստասիրի, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 1-137:*

Այս թարգմանության հունարեն բնագիրը պահպանվել է և հրատարակված է՝ տե՛ս Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis categorias commentaria, edidit A. Busse, Berolini, 1900, էջ 107-255, հունարեն վերնագիրն է՝ **Ἐξήγησις σὺν θεῷ τῶν δέκα κατηγοριῶν τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου φιλοσόφου:** *Հունարեն բոլոր ձեռագրերում Ստորոգութեանց այս մեկնությունը վերագրված է Դավիթ փիլիսոփային: Սակայն հունարեն բնագրի հրատարակիչն Ադոլֆ Բուսսեն, հիմնվելով որոշ փաստական տվյալների ու դիտողությունների վրա, հավանական է համարել, որ այս մեկնության հեղինակը ո՛չ թե Դավիթն է, այլ նրա ուսուցիչ Էլիասը:*

զ. *Հատված ինչ մեկնության Ստորոգութեանցն Արիստոտելի, տե՛ս Էլիասի Ստորոգութեանց մեկնության իմ հրատարակության վերջում, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 140-149. հունարեն բնագիրը գտնված չէ:*

[1] էջ 80-94, իսկ էջ 95-218 ունի վերնագիր՝ Σχόλια σὺν θεῷ εἰς τὴν εἰσαγαγὴν Πορφυρίου ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου.

Բացի վերոհիշյալ վեց մեկնություններից թարգմանված է նաև՝

Է. Դավիթ փիլիսոփայի Προλεγόμενα τῆς φιλοσοφίας երկը, որի հայերեն վերնագիրն է ըստ Վենետիկի հրատարակության (1833, էջ 120-216)՝ «Դաւթի նոամնծի եւ անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիհռոնի իմաստակի եւ սահմանի եւ տրամատուիչք իմաստասիրութեան»: Հնագույն հայ ձեռագրիների վերնագիրը մոտավորապես համապատասխան է հունարենին՝ «Դաւթի փիլիսոփայի Ներգինացւոյ՝ յառաջարանք սահմանաց իմաստասիրութեան»[1]:

Սույն թարգմանության հունարեն բնագիրը հրատարակված է՝ տե՛ս Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentarium, edidit Adolfus Busse, Berlin, 1904, էջ 1-79. հունարեն վերնագիրն է՝ Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου:

Դավիթ Անհաղթին վերագրված են նաև մի քանի իմաստասիրական-մեկնական մանր հատվածներ, ինչպես՝

ա. Նորին Դավթի փիլիսոփայի առածք հինգ, Վենետիկ, 1833, էջ 217-222:

բ. Նորին վասն բաժանման, անդ, էջ 223-224:

գ. Ընդ այսոսիկ և առաջիկայ բան իմաստնոյս, «Ամենայն չար տանջելի» և այլն, անդ, էջ 215-216:

Վերոհիշյալ բոլոր մեկնությունները, ինչպես ցույց եմ տվել «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» հետազոտությանս մեջ[2], թարգմանված են հունարենից: Այդ մեկնություններից նորպղատոնական Դավիթ մեկնիչի աշխատություններ են «Սահմանքը» կամ ավելի ճիշտ՝ «Յառաջարանքը» և Պորփյուրի Ներածությանն վերլուծությունը, իսկ մյուս մեկնությունների հեղինակներն անորոշ են ու վիճելի, ուստի և այդ խնդիրը կարոտ է ուսումնասիրության:

§ 9. Դավիթ Անհաղթի ու նրա երկերի մասին իմ նախկին եզրակացությունները: – *«Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» աշխատությանս մեջ հաջողվել էր ստանալ հետևյալ*

[1] Տե՛ս Էջմիածնի մատենադարանի թիվ 1889 և 1890 ձեռագրերը (= Կարին. ցուցակ, թիվ 1847 և 1848):

[2] Վաղարշապատ, 1904, առտատպ. «Արարատ» ամսագրից, 1904, փետրվար, հունիս, հուլիս:

Եղրակացություններր, որ միանգամայն տարբեր էին տիրող ենթադրություններից Դավիթ Անհաղթի մասին.

ա. Սահմանք Իմաստասիրութեան երկր, Պորփյուրի Ներածութեան մեկնությունը և Արիստոտելի Վերլուծականքի մեկնության հատվածը[1] *միևնույն հեղինակի՝ Դավիթ փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» և «Ստորոգութեանց» հայերեն մեկնությունները Դավթինր չեն:*

բ. Նորպղատոնական Դավիթ մեկնիչը հայոց մատենագրության մեջ չվոխված է Դավիթ Հարքացու հետ, ինչպես և Բյուզանդականում՝ Niketas David Paphlagon-ի հետ.

գ. Սահմանք իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնությունները թարգմանված են հունարենից.

դ. Նորպղատոնական Դավիթ մեկնիչը Ալեքսանդրիայում ուսած VI դարի մատենագիր է.

ե. Նորպղատոնական Դավիթ մեկնիչը քրիստոնյա է.

զ. Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնությունների հեղինակը Դավիթ մեկնիչը չէ:

Այս եղրակացությունները, ինչպես ինձ համոզել են հետագա իմ հետազոտությունները, ընդհանուր առմամբ, ուղիղ պիտի լինեն, բացի մի քանի կետերից, որոնց մասին առանձին խոսք կլինի ներքևում:

Դավիթ Անհաղթի մասին այնուհետև լույս էր տեսել Մ. Խոստիկյանի գերմաներեն աշխատությունը[2]*: Բոլոր գրեթե վերոհիշյալ կետերում Մ. Խոստիկյանի եղրակացությունները նույնն են, ինչ որ իմ աշխատության մեջ: Նա ևս Դավթին համարում է կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտ, վեցերորդ դարի հեղինակ, կարծում է միայն, որ Դավիթը, հավանաբար, ո՛չ թե քրիստոնյա մեկնիչ է, այլ հեթանոս: Ինչպես հայտնի է, Ա. Բուսսեն Դավթի քրիստոնյա լինելը նույնպես հավանական էր համարել, հիմնվելով հունարեն բնագրի որոշ հատվածների վրա*[3]*: Մ. Խոստիկյանը ենթադրում է, որ Դավթի թե՛ հունարեն և թե՛ հայերեն բնագրում այդ հատվածները կարող են լինել հետագա ժամանակների հավելումներ: Դավթի հեթանոս լինելու հավանական մի նշան*

[1] Վերլուծականքի մեկնության հատվածը կարող է Դավթինը չլինել, տե՛ս սույն աշխատության § 22-24:

[2] Dr. Missak Khostikian, David der Philosoph, Berner Studien zur Philosophie und ihrer Geschichte. Band LVIII, Bern, 1907:

[3] Տե՛ս A. Busse, Davidis Prolegomena և այլն, էջ 6:

Եղրակացութիւնները, որ միանգամայն տարբեր էին տիրող Աստուածաբանութիւնից Դավիթ Անհաղթի մասին.

ա. Սահմանք Իմաստասիրութեան երկը, Պորփյուրի Ներածութեան մեկնութիւնը և Արիստոտելի Վերլուծականքի մեկնութեան հատվածը[1] *միևնույն հեղինակի՝ Դավիթ փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» և «Աստուածաբանից» հայերեն մեկնութիւնները Դավիթինը չեն:*

բ. Նորպլատոնական Դավիթ մեկնիչը հայոց մատենագրութեան մեջ չվոխռված է Դավիթ Հարքացու հետ, ինչպես և Բյուզանդականում՝ Niketas David Paphlagon-ի հետ.

գ. Սահմանք իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները թարգմանված են հունարենից.

դ. Նորպլատոնական Դավիթ մեկնիչը Ադրբատանդրիայում ուսած VI դարի մատենագիր է.

ե. Նորպլատոնական Դավիթ մեկնիչը քրիստոնյա է.

զ. Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը Դավիթ մեկնիչը չէ:

Այս եղրակացութիւնները, ինչպես ինձ համոզել են հետագա իմ հետազոտութիւնները, ընդհանուր առմամբ, ուղիղ պիտի լինեն, բացի մի քանի կետերից, որոնց մասին առանձին խոսք կլինի ներքևում:

Դավիթ Անհաղթի մասին այնուհետև լույս էր տեսել Մ. Խոստիկյանի գերմաներեն աշխատութիւնը[2]*: Բոլոր գրեթե վերոհիշյալ կետերում Մ. Խոստիկյանի եղրակացութիւնները նույնն են, ինչ որ իմ աշխատութեան մեջ: Նա ևս Դավթին համարում է կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտ, վեցերորդ դարի հեղինակ, կարծում է միայն, որ Դավիթը, հավանաբար, ո՛չ թե քրիստոնյա մեկնիչ է, այլ հեթանոս: Ինչպես հայտնի է, Ա. Բուսսեն Դավթի քրիստոնյա լինելը նույնպես հավանական էր համարել, հիմնվելով հունարեն բնագրի որոշ հատվածների վրա*[3]*: Մ. Խոստիկյանը ենթադրում է, որ Դավթի թե՛ հունարեն և թե՛ հայերեն բնագրում այդ հատվածները կարող են լինել հետագա ժամանակների հավելումներ: Դավթի հեթանոս լինելու հավանական մի նշան*

[1] Վերլուծականքի մեկնութեան հատվածը կարող է Դավթինը չլինել, տե՛ս սույն աշխատութեան § 22–24:

[2] **Dr. Missak Khostikian,** David der Philosoph, Berner Studien zur Philosophie und ihrer Geschichte. Band LVIII, Bern, 1907:

[3] Տե՛ս **A. Busse,** Davidis Prolegomena և այլն, էջ 6:

նա համարում է նրա Ներածության մեկնության մեջ՝ σὺν εὐμενεία τοῦ χρείττονος, դարձվածքը (A. Busse, էջ 121, 21), որ հայերենում թարգմանված է «օգնականությամբ լաւագունին» (Վենետիկ, 1833, էջ 281): Ընդունելով հանդերձ, որ «լաւագունին» գործ է ածված այստեղ Աստծո փոխարեն Պղատոնի բարձրագույն «Իդէայի» իմաստով, թվում է ինձ այնուամենայնիվ, որ դրանով ապացուցվում է միայն Դավթի քրիստոնեության նորպլատոնական ու գնոստիկյան բնույթը: Դավթի քրիստոնյա լինելու նշանները, որ մատնացույց են արված Ա. Բուսսեի և իմ աշխատություններում, դժվար է առանց լուրջ հիմքերի մերժել. համարելով բոլորը միասին ուշար գրչի հավելվածներ: Մ. Խոստիկյանի առարկություններն այս կետում, իմ կարծիքով, համոզիչ չեն:

§ 10. **Էջմիածնի մատենադարանի թիվ 1939 ձեռագրում գտնված Ստորոգութեանց նոր մեկնությունները:** — *Վերոհիշյալ աշխատությունս հրատարակելուց հետո, Էջմիածնի մատենադարանի հնագույն ձեռագրերն ուսումնասիրելիս՝ անսպասելի կերպով գտնվեց Արիստոտելի Ստորոգութեանց մի նոր մեկնություն, որն անծանոթ ու կարևոր մի երկ էր հունարան դպրոցի:*

Այդ մեկնությունը պահպանվել է Էջմիածնի թիվ 1939 ձեռագրում (= կարին. ցուցակ, թիվ 1897): Նույն ձեռագիրը պարունակում է նաև հետաքրքիր մի հատված Արիստոտելի Ստորոգութեանց մի այլ մեկնության, որը համառոտ մի մնացորդ է ինչ որ անհայտ հին թարգմանության:

Նորագյուտ այդ մեկնությունների քննությունից երևաց, որ ընդարձակ մեկնությունը թարգմանություն է Ստորոգութեանց մեկնության հունարեն այն բնագրի, որը հրատարակել էր վերջերս գիտնական Ադոլֆ Բուսսեն, իրրև էլիաս Իմաստասերի աշխատություն[1]: Համառոտ հատվածի հունարեն բնագիրը, որքան ինձ հայտնի է, չկա Արիստոտելի Ստորոգութեանց տպագիր մեկնությունների մեջ, որ հրատարակել է Բեռլինի կայսերական ակադեմիան:

Հայերեն բնագիրը, թե այդ հատվածի և թե էլիասին վերագրված Ստորոգութեանց մեկնության, լույս է տեսել, ինչպես վերև հիշվեց, 1911 թվին Ս. Պետերբուրգում Գիտության կայսերական ակադեմիայի հրատարակությամբ[2]:

---

[1] Տե՛ս A. Busse, Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria, Berolini, 1900, էջ 108–200:

[2] «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի ընծայեալ Էլիասի իմաստասիրի», էջ 10–140 և «Հատուած ինչ մեկնութեան Ստորոգութեանցն Արիստոտելի», էջ 141–149:

Էլիասին վերագրված այդ մեկնության Հայերեն թարգմանության բնագիրը սկզբից և վերջից թերի է, ուստի և նրա Հայերեն վերնագիրը մնում է անորոշ: Հայերեն հրատարակության մեջ վերնագիրը դրված է հունարեն տպագրի վերնագրի համաձայն, որը սակայն, ինչպես կտեսնենք, ո՛չ թե հունարեն ձեռագիրներից է բխում, այլ ենթադրական մի վերնագիր է հիմնված հրատարակչի, Ադոլֆ Բուսսեի, բանասիրական հետախուզումների վրա:

Հայերեն հրատարակության առաջարանում ես արդեն մատնանիշ էի արել, որ Ա. Բուսսեի ենթադրությունը Ստորոգութենանց մեկնության հեղինակի մասին չէ համաձայնում հայ մատենագրության մեջ պահպանված վկայությունների հետ, որ իմ կարծիքով, վերաբերվում են հենց նույն այս մեկնության[1]: Մատենագրական այդ վկայություններից և Ստորոգութենանց մեկնության հայերեն բնագրի քննությունից երևում է, որ Ա. Բուսսեի եզրակացությունները դժվար է ընդունել, իբրև վերջնական ու անվիճելի: Այդ եզրակացությունները, որ հավանական են համարված բյուզանդական մատենագրության, ինչպես և փիլիսոփայության պատմության մեջ, կարող են, իմ կարծիքով, վերաբերություն հայկական տվյալների օգնությամբ: Իսկ այս տվյալները, ինչպես կտեսնենք, հիմք կարող են ծառայել նույն խնդրի մի նոր լուսաբանության և ուշագրավ նոր պիտոդությունների, որ ստորև առաջ ենք բերում:

§ 11. Ա. Բուսսեի կարծիքով, Ստորոգութենանց մեկնության հեղինակը Դավիթը չէ:— Բոլոր հունարեն ձեռագիրներ Էլիասին ընծայված Արիստոտելի Ստորոգութենանց մեկնության հեղինակ համարում են Դավիթ փիլիսոփային, ինչպես այդ երևում է ձեռագիրների վերնագրերից՝ «Ἐξήγησις σὺν θεῷ τῶν δεκα κατηγοριῶν τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου φιλοσόφου»:

Ադոլֆ Բուսսեն Էլիասի հունարեն բնագրի առաջարանում փորձում է ապացուցանել, որ այդ մեկնությունը ո՛չ թե Դավթինն է, այլ Էլիասին: Հունարեն ձեռագիրների վերնագրերը սխալ ենթադրելով, Բուսսեն ժխտում է Դավթի հեղինակ լինելը հետևյալ պատճառներով:

ա. Դավիթ փիլիսոփան Պորփյուրի Ներածութենան դ գլուխը վերջացնում է այս խոսքերով՝ «եւ գիտելի է՝ թէ ի բանական մասն իմաստասիրութենան վերաբերի առաջիկայ չարադրութիւնս: Իսկ բանականն՝ եթէ մասն է իմաստասիրութենան եւ եթէ գործի՝ ի Ստորոգութինն Արիստոտելի ուսցուք» (Վենետիկ, 1833, էջ 263):

[1] Տե՛ս «Մեկնութիւն Ստորոգութենանցն», էջ 2 և 3:

Հակառակ Դավիթ փիլիսոփայի այս խոստման էլիասին ընծայված «Մեկնութիւն Ստորոգութեանցն» երկում չենք գտնում այդ խնդրի քննությունը, ինչպես պետք է սպասել ըստ վերոհիշյալ խոստման:

Ա. Բուսսեի հրատարակած ու էլիասին վերագրված Պորփյուրի Ներածութեան մեկնության հեղինակը նույնպես խոստանում է ցույց տալ, որ բանականը գործի է իմաստասիրության, բայց ո՛չ Ստորոգութեանց մեկնության մեջ, այլ Արիստոտելի վերլուծականներում՝ «δειχθήσεται γὰρ σὺν θεῷ ἐν τοῖς Ἀναλυτικοῖς ὅτι ἡ λογικὴ οὐ μέρος τῆς φιλοσοφίας, ἀλλ᾽ ὄργανον» (Eliae in Porphyrii Isagogen և այլն, էջ 26):

բ. Դավիթ փիլիսոփան Պորփյուրի Ներածութեան մեկնության մեջ ճեմարանականների մասին ասում է՝ «իսկ ճեմական կոչեցաւ Արիստոտել, վասն զի Պղատոնի տակաւին, եւս կենդանի գոլով՝ ոչ իշխէր նստել եւ ուսուցանել, այլ ճեմէր. այլք ասեն ոչ, այլ հակառակէր Պղատոնի. զի նա նստեալ գոմլով՝ ինքն յոտն կացեալ: Որ զայդ ասեն, սուտ ասեն. այլ եւ պատուէր գնա եւ պաշտէր. որպէս եւ ուրեմն բազին կանգնեաց, եւ մակագրեաց այսպէս. «Բազինս այս Պղատոնի, զոր կանգնեաց Արիստոտել առն՝ զոր չարք եւ ոչ գովելոյ գնա արժանի են» (Վենետիկ, 1833, էջ 281):

Իսկ էլիասին ընծայված Ստորոգութեանց մեկնությունը ճեմականների անվան ծագման մասին տալիս է բոլորովին տարբեր ու հակառակ բացատրություն. «ճեմականք կոչեցան, ոչ նիհէ ի ճեմել ինչ ուսուցանիլին եւ ուսանիլին, այլ վասն զի յաջորդեցին զպարապարանն Պղատոնի միջնորդութեամբ Սպեւսիպոսի» (Մեկնութիւն Ստորոգութեանց, էջ 10):

գ. Որ էլիասին ընծայված Ստորոգութեանց մեկնության հեղինակը Դավիթ փիլիսոփան չէ, այդ ակնհայտ երևում է Դավթի ու նորագյուտ մեկնության նաև այն հատվածներից, որոնք նվիրված են խորթ չարագրածությանց խնդրի լուսաբանությանը (տե՛ս «Դաւթի Անյաղթի, Վերլուծութիւն Ներածութեան Պորփիւրի», էջ 252–253 և «Մեկնութիւն Ստորոգութեանցն», էջ 37–38): Այս ընդարձակ հատվածների համեմատությունը, Բուսսեի կարծիքով, պարզ ցույց է տալիս, որ դրանք չեն կարող համարվել միևնույն հեղինակի բացատրություններ:

Ա. Բուսսեի այս դիտողությունները, ինչպես տեսնում ենք, միանգամայն հիմնավոր են և ապացուցում են, անտարակույս, որ էլիասին ընծայված Ստորոգութեանց մեկնությունը Դավթի աշխատությունը չէ: Թեև Հունարեն ձեռագրերի վերնագրերը վերագրում են այդ մեկնությունը Դավիթ փիլիսոփային, սակայն այդ հանգամանքն այնքան էլ կարևոր չէ, որովհետև այդպիսի չվոթումներ Հունարեն ձեռագիրներում սովորական են և ուրիշ շատ դեպքերում, ինչպես ցույց է տվել Ա. Բուսսեն:

§ 12. Ա. Բուսսեի կարծիքով, Ներածութեան և Ստորոգութեանց վերոհիշյալ մեկնութիւնների հեղինակն էլիաս մեկնիչն է: — *Ա. Բուսսեն «Elias in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria» աշխատության առաջաբանում իր հրատարակած թե՛ Պորփյուրի Ներածութեան և թե՛ Ստորոգութեանց մեկնութիւնները վերագրում է էլիասին, որին համարում է Օլիմպիոդորոսի աշակերտ և վեցերորդ դարի մեկնիչ:*

Պորփյուրի Ներածութեան մեկնութիւնն էլիասին վերագրելու նրա գլխավոր հիմքը կազմում է Փիլոպոնոսի վկայությունը: Փիլոպոնոսը, հիշատակելով էլիաս մեկնիչին, որպես հեղինակ Պորփյուրի Ներածութեան մեկնութեան, բաղում է այդ մեկնութիւնից հետևյալ հատվածը, որը գտնվում է Ա. Բուսսեի էլիասին վերագրված Ներածութեան մեկնութեան բնագրում.

Brand, p. 11[b] 37

Ἡλίας δὲ ὁ ἐξηγητὴς τῶν ἑ φωνῶν ἑνὶ καὶ τῷ αὐτῷ ἀρκεῖται παραδείγματι, λέγων τὸν Ἀχιλλέα Πηλεΐδην μὲν δὶα τὸν προσεχῆ πατέρα τὸν Πηλέα, Αἰακίδην δὲ δὶα τὸν πόρρω Αἰακόν, καὶ Φθιώτην μὲν διὰ τῆν προσεχῆ πατρίδα τὴν Φθίαν, Θετταλὸν δὲ δὶα τὴν πόρρω πατρίδα τὴν Θετταλίαν.

Elias, p. 52

ἡμεῖς δὲ ἑνὶ καὶ τῷ αὐτῳ ἀρκεσθῶμεν παραδείγματι ἰδοὺ γὰρ ὁ Ἀχιλλεὺς Πηλεΐδης μὲν δὶα τὸν προσεχῆ πατέρα τὸν Πηλέα, Αἰακίδης δὲ δὶα τὸν πόρρω τὸν Αἰακόν, καὶ Φθιώτης δὶα τὴν προσεχῆ πατρίδα τὴν Φθίαν, καὶ Θετταλὸς δὶα τὴν πόρρω πατρίδα τὴν Θετταλίαν.

Նույն Ներածութեան մեկնութիւնից քաղված և էլիասին վերագրված նման հատվածներ գտնվում են նաև Հունարեն ձեռագրերում (տե՛ս A. Busse, Eliae in Porphyrii Isagogen և այլն, էջ 5 և 6): Ա. Բուսսեն, հիմնվելով իր այդ ուշագրավ ու ուղիղ դիտողութիւնների վրա, հաստատուն ու անտարակուսելի է համարում, որ Պորփյուրի Ներածութեան վերոհիշյալ մեկնութեան հեղինակն էլիասն է:

Ինչ վերաբերում է իր հրատարակած Ստորոգութեանց մեկնութեանը, Բուսսեն այդ մեկնութիւնը ևս վերագրում է էլիաս մեկնիչին, համարելով նրա բովանդակութիւնը, մեկնական եղանակն ու մտքերը նման ու համապատասխան Ներածութեան մեկնութեանը: Իր այդ ենթադրութիւնը նա փորձում է հիմնավորել, մատնացույց անելով Ստորոգութեանց մեկնութեան մեջ

Ներածութեան մեկնութեան առաջ բերված բառացի մի քաղվածք:

«Eundem autem auctorem,— ասում է Բուսսեն իր հրատարակութեան առաջարանում,— et Eliae in Isagogen commentarium et hunc in Categorias librum conscripsisse cum universo librorum consensu ex sententiarum ordine ac ratione dicendi conspicuo doccmur tum illo illustri loco (p. 116, 27), qui ad verbum cum eo qui laudatur (p. 33, 3) concinit» (A. Busse, Eliae in Porphyrii Isagogen ect. p. VIII):

Ա. Բուսսեի մատնանիշ արած քաղվածքը հետևյալն է[1].

Eliae in Porph. 33, 2

"διὰ δὲ τὸ οἰκονομικὸν γέγραπται αὐτῷ ὁ Οἰκονομικὸς τὸ σύνταγμα, ἐν ᾧ φησιν ἐκ τεσσάρων σχέσεων συγκεκροτῆσθαι τὸν οἶκον„ πατρὸς πρὸς τέκνα, ἀνδρὸς πρὸς γυναῖκα, δεσπότου πρὸς δούλνυς. εἰσιόντων πρὸς ἐξιόντα, ἵνα μήτε πλείονα τὰ εἰσιόντα τῶν ἐξιόντων (φειδωλία γὰρ τοῦτο καὶ ἀνελευθερία) μήτε πλείονα τὰ ἐξιόντα τῶν εἰσιόντων (ἀσωτία γὰρ τοῦτο), ἀλλ' ἐπίσης„.

Eliae in Categ. 116, 23

"ἀλλὰ μὴν καὶ οἰκονομικά εἰσιν αὐτῷ γεγραμμένα βιβλία, ὡς τὸ Οἰκονομικὸν σύνταγμα καὶ Περὶ συμβιώσεως ἀνδρὸς καὶ γυναικός, ἐν ᾧ λέγει ἐκ τεσσάρων σχέσεων συγκεκροτῆσθαι τὸν εὖ ἔχοντα οἶκον, πατρὸς πρὸς τέκνα, ἀνδρὸς πρὸς γυναῖκα, δεσπότου πρὸς δούλους, εἰσιόντων πρὸς ἐξιόντα, καὶ ὡς εἴρηται ἡμῖς ἐν τοῖς τῆς Πορφυρίου Εισαγωγῆς Προλεγομένοις„.

Ա. Բուսսեի մատնանշած Ստորոգութեանց մեկնութեան այս հատվածը հայերեն թարգմանութեան մեջ չկա: Հայերենը չունի ո՛չ վերոհիշյալ քաղվածքը, ո՛չ էլ «ὡς εἰρηται ἡμῖν ἐν τοῖς τῆς Πορφυρίου προλεγομένοις» վկայությունը, այլ ունի միայն սույն

[1] Համմ. նաև Դաւ. Սահմ., էջ 209. «Վասն պի Արիստոտէլ գրեաց գրարոյականն, յորում վասն բարուց ճառէ. եւ վասն տան՝ յորում վասն տնտեսականին ճառէ, յորում ասէ, թէ չորք են ընթացակիցք աո ի տան կարգաւորութիւն: Միամտութիւն առն եւ կնոջ աո միմեանս. եւ սէր յորդեաց վերայ. եւ երկիւղ ի վերայ ծառայից. եւ չափաւորութիւն ելս ամենից: Վասն դի երկաքանչիւրոցն անչափութիւն յոռեգոյն է, դի եթէ բազում են մուտք եւ դուռնաքեայ ելք, այնպիսին ընդ ազահս հայտի, իսկ եթէ դուռնաքեայ մուտք եւ առատ ելք, այնպիսին ընդ անառակս է»: Համմ. նաև հետևյալն բնագիրը՝ Davidis Prolegomena Philosophiae, ed. A. Busse, էջ 74:

Հատվածի առաջին տողերը. «Իսկ տնաբինականն՝ որպէս Տնաբինականք նորա գրեալ գիրք յետ տնաբինական չարաչարգութեան, յորում վասն կենակցութեան առն եւ կնոջ, յորում ասէ ի չորից ունակութեանց զրարեկարգութիւն տան» (Ստոր. Մեկն., էջ 16, 18-19):

Ինչպես երևում է ὡς εἴρηται ἡμῖν խոսքերից, այդ հատվածը, հավանաբար, ուսանող խմբագրողի խոսքերն են: Հայերեն թարգմանության մեջ այդ հատվածի բացակայությունը կարելի է թերևս բացատրել նրանով, որ հայերենը գրեթե ամբողջովին գրված է «ի ձայնէ» բուն մեկնիչի, նրա խոսքերով, և չունի ուսանող ունկնդրի հավելումները:

Հայերենի և հունարեն բնագրի խմբագրական այդ տարբերությունը երևում է նաև հետևյալ բաղդատություններից.

Ստորոգ. Մեկնութիւն	Eliae in Categor
1. 2, 16. «Եւ բարիոք ասացաք արանց եւ ոչ առն»:	*108, 23. «καὶ καλῶς εἶπεν 'ἀνδρῶν' καὶ οὐκ ἀνδρός».*
2. 2, 22. «Իսկ պիտոյ ասելով ասելով եւ զայդ բարիոք առաղբացաք»:	*108, 27. «τὸ δὲ 'ἀστείων' καὶ αὐτὸ καλῶς πρόσκειται».*
3. 14, 2-3. «Այլ. ով Աղեքսանդրէ, ասեմք առ նա»:	*115, 6. «ἀλλ', ὦ 'Αλέξανδρε, ἔστιν εἰπεῖν πρὸς αὐτόν»:*
4. 38, 24. «որպէս ասացաք»:	*128, 25. «ὡς εἴρηται».*
5. 40, 15-16. «Իսկ ես ասեմ, ձեր վարդապետս, մակագրեմ Ստորոգութիւնս»:	*133, 24. «ἐγὼ δέ, φησὶν ὁ ἡμέτερος, διδάσκαλος ἐπιγράφω ταῖς κατηγορίαις».*

Ստորոգութեանց մեկնության վերոհիշյալ հունարեն հատվածը, որ ըստ երևույթին Ներածութեան մեկնությունից է քաղված, ում էլ որ նա վերագրվելու լինի, բուն մեկնիչին թե խմբագրող ունկնդրին, համենայն դեպս, կարող էր, հիրավի, հիմք ծառայել Ա. Բուսսեին ենթադրելու, որ Ներածութեան ու Ստորոգութեանց հիշյալ մեկնությունները, հավանաբար, միևնույն մեկնիչի գործ են:

Միանգամայն ուղիղ է նաև Ա. Բուսսեի դիտողությունը, որ այդ մեկնություններին մեջ կրկնված են հաճախ միևնույն մտքերը գրեթե միևնույն բառերով: Այդ ևս կարևոր մի կողմն է հօդուտ Ա. Բուսսեի վերհիշյալ ենթադրության:

Արդ՝ տեսնենք, կարելի՞ չէ արդյոք Բուսսեի այդ ենթադրությունը, որ համապատասխան է թվում, հաշտեցնել հայ մատենագրության տարաձայն վկայությունների հետ:

§ 13. **Հայ մատենագրական ավանդությունն Էլիասին վերագրված Ստորոգութեանց մեկնության հեղինակ համարել է Օլիմպիոդորոս մեկնիչին:** *– Էլիասին վերագրված Ստորոգութեանց մեկնության հայերեն թարգմանությունը, ինչպես վերը հիշվեց, սկզբից ու վերջից թերի է: Էջմիածնի միակ ձեռագրի հայերեն բնագիրը, որ համապատասխան է Ա. Բուսսեի հրատարակած հունարեն բնագրի՝ էջ 108, 2. մինչև էջ 200, 8. չունի վերնագիր, ուստի և անհայտ է մնում, թե ո՛մ էր վերագրվում այդ երկն ըստ հայերեն վերնագրի:*

Կան սակայն կողմնակի ցուցումներ, որոնցից կարելի է հետևցնել, որ տասնմեկերորդ դարից սկսած նույն այդ գրվածքը համարվել է Օլիմպիոդորոս մեկնիչի աշխատություն:

Ինչպես հայտնի է, Հովհաննես Որոտնեցին և նրա աշակերտը Գրիգոր Տաթևացին ունեն Արիստոտելի գրած մի քանի երկերի մեկնություններ, որոնց թվում և Արիստոտելի Ստորոգութեանց մեկնությունը:

Էջմիածնի մատենադարանի թիվ 1834 ձեռագրում (= Կարինյան ցուցակ, թիվ 1791) Հովհաննես Որոտնեցու այդ մեկնությունն ունի հետևյալ վերնագիրը. «Եռամեծի Յովհաննու Հայոց փիլիսոփայի եւ վարդապետի ի հաւաքումն համառօտ վերծանութեան Ստորոգութեանցն Արիստոտէլի ի Գրիգորէ աշակերտէ»:

Հովհաննես Որոտնեցին իր այդ աշխատությունը կազմել է, օգտվելով, գլխավորապես, Ստորոգութեանց վերաբերյալ հնագույն մեկնություններից, որոնք հայտնի են եղել իրեն: Որոտնեցու Ստորոգութեանց լուծմունքի քննությունից երևում է, որ նրան, իբրև գլխավոր աղբյուր, ծառայել է Էլիասին ընծայված Ստորոգութեանց մեկնության հայերեն թարգմանությունը, որից նա քաղել է բազմաթիվ հատվածներ ու վկայություններ: Այդ քաղվածքները, սակայն մեջ են բերված ո՛չ թե իբրև Էլիասի, այլ իբրև Օլիմպիոդորոս մեկնիչի կարծիքներ:

Պարզ է ուրեմն, որ Ստորոգութեանց նույն մեկնութիւնը, որը Բուսսեն վերագրել է Էլիաս մեկնիչին, Հովհաննես Որոտնեցուն հայտնի է եղել, իբրև Օլիմպիոդորոս փիլիսոփայի աշխատութիւն:

§ 14. **Օլիմպիոդորոսին վերագրված հատվածները Որոտնեցու Ստորոգութեանց լուծմունքի մեջ:** — *Հովհաննես Որոտնեցու Ստորոգութեանց լուծմունքը, ինչպես ասացի, կիսով չափ կազմված է Օլիմպիոդորոսից առնված քաղվածքներից: Օլիմպիոդորոս մեկնիչը հիշվում է իբրև այդ քաղվածքների հեղինակ մոտ տասնհինգ անգամ:*

Ապացուցելու համար, որ Որոտնեցու լուծմունքի մեջ Օլիմպիոդորոսին վերագրված բոլոր հատվածները համապատասխան են և պրեմն նույնը Էլիասին վերագրված Ստորոգութեանց մեկնութեան հետ և որ Որոտնեցին այս վերջին մեկնութեան հայերեն թարգմանութիւնը համարել է Օլիմպիոդորոսի աշխատութիւն, բերենք մի քանի օրինակներ.

Հովհաննես Որոտնեցի[1]	**Էլիաս, էջ 15, 14-24**
«Ահա այս այսպէս պատասխանի Օլամբիադորոս՝ եթէ ամենայն գոյքս ինչ եւ իմ անուան եւ սահմանի է հաղորդեալ եւ ոչինչ է որ ոչ ունի զսոսա: Արդ՝ ի սոցանէ ոմանք անուամբ հաղորդին եւ լինին հոմանուն. եւ ոմանք իրաւք եւ լինին բազմանուն. եւ ոմանք անուամբ եւ իրաւք՝ եւ լինին վազանուն. իսկ ոմանք ոչ անուամբ եւ ոչ իրաւք հաղորդին եւ լինին այլանուն»... «ասելովն հոմանուն անուամբ մի եւ իրաւք այլ՝ նշանակեաց զբազմանունսն որք են իրաւք մի եւ անուամբ այլ, որպէս՝ սուսեր, նրան, զաւազր, վազակաւոր»:	*«Զոր եւ ցուցանեմք ի բաժանմանէ այսպէս. յամենայն ժամ երկուց իրաց առնիցկոյ. ունաւղայ անուն եւ սահման՝ հանդիպի նոցին կամ ըստ երկուց իրաց հաղորդիւ, եւ ըստ անուանում եւ ըստ սահմանում՝ եւ լինին վազանունք, եւ կամ ոչ ըստ սահմանում հաղորդին՝ եւ գոյանան այլանունքն, եւ կամ ըստ ումանն հաղորդին եւ ըստ ումանն դանագանին. եւ այս զարձեալ կամ ըստ անուան հաղորդին եւ ըստ իրաց դանագանին՝ եւ գոյանան հոմանունքն, եւ կամ ըստ իրաց հաղորդին եւ ըստ անուան դանագանին՝ եւ լինին բազմանունքն՝ որպէս խաղ, զաւազր, մարտագու, վազակաւոր, սուսեր, նրան»:*

[1] Տե՛ս էջմիածնի մատենադարանի ձեռագիր թիվ 1834, թերթ 46բ-79ա:

Հովհաննես Որոտնեցի[1]

Ելիաս, էջ 181, 14-27

«Ըստ Աւլաւմպիադորոս է այսպէս. յէակայն է ինչ որ ըստ գոյացութեան է եւ է որ ոչ է ըստ ինքեան: Իսկ ըստ ինքեանն է, որ ըստ բաժանման է եւ է որ ոչ է ըստ բաժանման: Արդ՝ որ ըստ ինքեան է ըստ բաժանման՝ առնէ զորակն, իսկ որ ոչ է ըստ ինքեան՝ կամ կալուածն միայն է կամ ըստ կալման այլոցն իմանի: Արդ՝ որ կալուածն միայն է առնէ զառինչն, եւ որ ըստ զառինչն, եւ որ ըստ կազման այլոցն են՝ առնեն զվնց ստորոգութիանան, որ է սոյնպէս. իգոյացութիննէն եւ ի քանակէն լինի ուրն եւ նրրն, ի գոյացութիննէն եւ յառնչէն լինի կալն եւ ունելն, ի գոյացութիննէն եւ ի յորակէն լինին առնելն եւ կրելն»:

Հովհաննես Որոտնեցի

Ելիաս, էջ 88, 25 և այլն

«Ասէ Աւլաւմպիադորոս թէ ստորոգութեան յեղանակք երեք են. է որ ըստ բնութեան եւ է որ ոչ է ըստ բնութեան եւ է որ ըստ պատահման» և այլն:

«Էականն կամ նիւթակայում է կամ ոչ նիւթակայում: Եւ եթէ ոչ նիւթակայում՝ առնէ զգոյացութիւն, իսկ եթէ նիւթակայում՝ կամ ըստ ինքեան է կամ ոչ ըստ ինքեան: Եւ եթէ ըստ ինքեան է՝ կամ բաժանելի է կամ անբաժանելի: Եւ եթէ բաժանելի է՝ առնէ զքանակն, իսկ եթէ անբաժանելի է՝ առնէ զորակն. քանզի թէպէտ եւ կարծի բաժանելի զոլ որակն, այլ սակայն վասն նիւթոյն է բաժանելի: Իսկ եթէ ոչ ըստ ինքեան՝ կամ կալուածն միայն է եւ առնէ զառինչսն, եւ կամ ըստ կալման այլոց իմանի՝ եւ լինին վնց ստորոգութիւնքն. քանզի չորից ելոց պարզ ստորոգութեանց՝ գոյացութեան, քանակի, որակի, առընչի՝ ի չարամանութիննէ սոցա այլ ստորոգութիւնքն ծնանին, յէութիննէ եւ ի քանակէ՝ ուր եւ նրրն, յէութիննէ եւ յորակութիննէ՝ առնելն եւ կրելն, յէութիննէ եւ յառընչէ՝ ունելն եւ կալն»:

Հովհաննես Որոտնեցի

Ելիաս, էջ 88, 25 և այլն

«Քանզի Ստորոգութիւն նոակի է կամ ըստ բնութեան կամ ոչ ըստ բնութեան կամ ըստ պատահման» **և այլն մինչև 89, 8:**

[1] Որոտնեցու բնագիրը տեղ-տեղ աղճատված է ու պակասավոր:

«Իսկ քանակն դի նախադաս եղեւ որակին, գնէ զպատճառ Աւլամպիադորոս» և այլն:

«Ընդէր յետ գոյացութեան դքանակէ բուռն ևհար: Եւ ասեմք, եթէ ըստ վեց պատճառաց» և այլն մինչև 116, 8:

Կարելի է առաջ բերել ուրիշ բազմաթիվ քաղվածքներ ևս, սակայն ավելորդ է այդ, որովհետև վերոհիշյալ հատվածների համեմատությունից իսկ պարզ երևում է, որ Հովհաննես Որոտնեցին օգտվել է Էլիասին ընծայված Ստորոգութեանց մեկնության հայերեն թարգմանությունից, վերագրելով այն ո՛չ թե Էլիասին, այլ Օլիմպիոդորոս մեկնիչին:

Արդ՝ հարց է ծագում, թե ինչ աղբյուրից է բղխում Որոտնեցու այդ վկայությունը: Անշուշտ՝ սխալ կլիներ կարծել, որ Որոտնեցու տեղեկությունը սոսկ մի ենթադրություն է, հիմնված բանասիրական համարձակ ու անհիմն հետախուզման վրա: Ամենից հավանականն է՝ ընդունել, որ հայերեն ձեռագիրը, որից օգտվել է Որոտնեցին, ունեցել է վերնագիր և այդ վերնագրում հիշված է եղել Օլիմպիոդորոս մեկնիչը՝ իբրև մեկնության հեղինակ:

§ 15. Գրիգոր Մագիստրոսի վկայությունը Օլիմպիոդորոսի ինչ-որ աշխատության հայերեն թարգմանության մասին: *— Հովհաննես Որոտնեցուց անկախ՝ Օլիմպիոդորոսի ինչ-որ երկի հնագույն հայերեն թարգմանության մասին հաղորդում է Գրիգոր Մագիստրոսը «առ վարդապետն Սարգիս» ուղղված իր նամակում: «Բայց եւ գտեալ մեր իակ ի հայ լեզու,- գրում է նա,- գրեալ թարգմանչացն՝ գիրս Ողոմպիոդորոսի, զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ աքանչելի եւ հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից»[1]:*

«Զգիրս Ողոմպիոդորոսի, զոր Դաւիթ յիշատակէ», կարծում ենք, որ Էլիասին ընծայված Ստորոգութեանց մեկնության հենց այն հայերեն թարգմանությունն է, որից քաղվածորեն օգտվել է Հովհաննես Որոտնեցին:

Մագիստրոսի հաղորդած տեղեկության մեջ ուշադրավ մի կետ կա: Օլիմպիոդորոսի գրվածքի հայերեն թարգմանությունը նա համարում է «թարգմանչաց» գործ: Ինչպես կտեսնենք, թարգմանության մասին այդ տեղեկությունը միանգամայն սխալ է, եթե «թարգմանչաց» տակ հասկանանք Սահակ-Մեսրոպի աշակերտներին:

Մագիստրոսի վկայության մեջ ուշադրության արժանի է սա-

[1] Տե՛ս **Կ. Կոստանյանց**, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ·66:

կայն նրա նկատողությունը, որ իր գտած թարգմանությունն այն Օլիմպիոդորոսի աշխատությունն է, որին հիշատակում է Դավիթ փիլիսոփան: Եվ, իրոք, նորպղատոնական Դավիթ մեկնիչը «Սահմանք իմաստասիրութեան» իր երկում երկու անգամ հիշում է «Ողոմպիոդորոս փիլիսոփոսին»[1] և իմաստասիրական մի քանի հարցերի մասին առաջ բերում նրա վկայությունները:

Արդ՝ Օլիմպիոդորոսի այդ վկայությունները, ինչպես կտեսնենք, գտնվում են հենց էլիասին ընծայված Ստորոգութենանց մեկնության մեջ, այն էլ՝ ո՛չ իրրև այլուստ առաջ բերված քաղվածքներ, այլ որպես սեփական հայացքներ մեկնության հեղինակի:

Շատ պարզ է, ուրեմն, որ Մագիստրոսի «զգիրս Ոլիմպիոդորոսի զոր Դաւիթ յիչատակէ» վկայությունը վերաբերվում է էլիասին ընծայված Ստորոգութենանց մեկնությանը: Միանգամայն պարզ է նաև այն, որ Գրիգոր Մագիստրոսը ևս, ինչպես և Հովհաննես Որոտնեցին, նույն այդ երկը համարել է ո՛չ թե էլիասի, այլ Օլիմպիոդորոսի աշխատություն:

Ինձ թվում է, որ Մովսես Խորենացու հիշած[2] Օլիմպիոդորոս փիլիսոփան ևս նույն այս Օլիմպիոդորոսն է: Խորենացու ասելով՝ Օլիմպիոդորոսն այն կատարելագույնն էր իմաստասերների մեջ, որոնց մոտ հայերը սովորում էին փիլիսոփայություն: Այս վկայությունը վերաբերվում է, իմ կարծիքով, ո՛չ թե հինգերորդ դարի պատմագիր Օլիմպիոդորոսին, այլ Աղեքսանդրիացի երկու Օլիմպիոդորոս փիլիսոփաններից մեկին:

Ավելի քան հավանական է, որ Խորենացու վկայությունը վերաբերվում է նորպղատոնական Դավիթ մեկնիչի ուսուցիչ՝ կրտսեր Օլիմպիոդորոսին: Սա է այն «կատարելագոյն», փիլիսոփան, որ մեծ հռչակ է ունեցել Հայաստանում: Սրա փիլիսոփայական դպրոցից են ծագում հայերեն թարգմանված իմաստասիրական երկերի մեծագույն մասը: Այդ երկերի թարգմանները կարող էին, իրոք, աչակերտած լինել կրտսեր Օլիմպիոդորոսի կամ նրա հաջորդների մոտ: Ὄργανον-ի երկերը և նրանց վերաբերյալ մեկնությունները թարգմանելու համար բավական չէր, անշուշտ, հունարեն լեզուն միայն իմանալ, այլ հարկավոր էր ուննալ փիլիսոփայական լուրջ նախապատրաստություն: Հունարան դպրոցի առաջին թարգմանիչները կարևոր այդ նախապատրաստությունը կարող էին ձեռք բերել իրենց ժամանակակից հունարեն դասավանդող իմաստասերների մոտ:

---

[1] Տե՛ս Վենետիկ, 1833, էջ 143 և 164:

[2] Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 2, 22, 25 և 212:

Փիլիսոփայության պատմությունից հայտնի է, որ դանադան ազգերի գրույցները հավաքել ու ույարանորեն մեկնել են, գլխավորապես, նորպղատոնական իմաստասերները: Խորենացու խոսքերը՝ «ոմանք այլազգարար եւ ոմանք այլարանարար գրոյցս մատենից տային», կարող են վերաբերվել ավելի շուտ նորպղատոնական մեկնիչ իմաստասերների միջավայրին, քան Օլիմպիոդորոս պատմագրին:

Խորենացու վկայության բոլոր ակնարկները, ինչպես տեսնում ենք, համապատասխան են ու հարմար Դավիթ մեկնիչի ուսուցիչ կրտսեր Օլիմպիոդորոսի համար՝ նույն Օլիմպիոդորոսի, որին հիշում են նաև Գրիգոր Մագիստրոսը և Հովհաննես Որոտնեցին:

§ 16. **Դավիթ մեկնիչի Էլիասին ընծայված Ներածութեան մեկնութիւնը հայտնի է եղել իբրև Օլիմպիոդորոսի աշխատութիւն:** *– Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Մագիստրոսի վկայություններն արժանի են խոր ուշադրության: Թեև Բուսանն Արիստոտելի Ստորոգութեանց վերհիշյալ մեկնության հեղինակ համարում է Էլիաս մեկնիչին, որին վերագրում է նաև իր լույս ընծայած Պորփյուրի Ներածութեան մեկնությունը, թեև նա իր այդ ենթադրությունը պատճառաբանում է լուրջ ու հիմնավոր փաստերով, սակայն, ինչպես տեսանք, կա ուշագրավ մի կռվան, նույն երկերը վերագրելու Օլիմպիոդորոս մեկնիչին՝ այն Օլիմպիոդորոսին, որը հիշվում է Դավթի Սահմանք իմաստասիրութեան երկում:*

Ըստ երևույթին, Որոտնեցու ու Մագիստրոսի տված տեղեկությունները, որ չեն համապատասխանում Ա. Բուսանի հունական աղբյուրներից հավաքած դիտողություններին, այնքան էլ անհիմն չեն:

Դավիթ մեկնիչն ինքն ևս օգտվել է Էլիասին ընծայված Պորփյուրի Ներածութեան մեկնությունից, բայց ոչ իբրև Էլիասի, այլ իբրև Օլիմպիոդորոսի աշխատությունից: Ապացույց դրան Սահմանք իմաստասիրութեան երկում Օլիմպիոդորոսից մեջբերած հատվածը, որ գտնվում է Էլիասին ընծայված Պորփյուրի Ներածութեան մեկնության մեջ՝ Προλεγόμενα τῆς φιλοσοφίας առաջարանում.

Սահմանք իմաստ., 1833, էջ 164	Eliae in Porph. Is., էջ 14
*«եւ պարտ է գիտել, եթէ ոմն կղէոմբրոտոս ամբռակիացի կարծելով. եթէ Պղատոն գրնաւորական մահուանէն հրամայէ խոկալ իմաստասիրին. ընկեցեալ գինքն ի պարսպէն վախճանեցաւ վասն որոյ ասէ Կալիմաքոս. «Ուրախա-	*Ἐβουλόμην δὲ τούτων τῶν λόγων ἀκοῦσαι Κλεόμβροτον οὗτος γὰρ περινοήσας τὸ ἐν Φαίδωνι ῥητὸν κκ, ὡς δηλοῖ τὸ εἰς αὐτὸν ἐπίγραμμα τοῦ Καλλιμάχου οὕτω λέγον Εἶπας «Ἥλιε χαῖρε Κλεόμβροτος Ἀμβρακιώτης ἦλατ᾽ ἀφ᾽ ὑψηλοῦ τείχεος εἰς*

յիր ո՛վ արեգակն, կղէոմրոտոս ամրոակիայի վաղնալ ի բարձրաբարերձ պարսպայ ի դժոխս, արժանի ինչ ոչ ուսնալ մահու, այլ չար դ Պղատոնի դյադագս հոգւոյ վիրն ընտրնալ»:

Ἀίδην ἄξιον οὔτι παθὼν θανάτον κακόν, ἀλλὰ Πλάτωνος ἓν τὸ περὶ ψυχῆς γράμμ' ἀναλεξάμενος.

Առ այսոսիկ ասայ Ոդոմպիոդորոս վիկիսոփոս. «Եթէ ոչ պղատոնական վիրն դիմս նահանջէր դյարձակումն, այն ինչ ահա տաժանարար լուծանէի դյդրնաթախանձ կապ կենցադոյս»[1]:

Ἐγὼ δὲ τάναντία ἐκείνῳ φημὶ ἔπη οὕτως εἰ μὴ γράμμα Πλάτωνος ἐμὴν ἐπέδησεν ἐρωήν, ἤδη λυγρὸν ἔλυσα βίου πολυκηδέα δεσμόν.

Ներածութեան մեկնութեանից առաջ բերված հունարէն այս հատվածում εἰ μὴ γράμμα *և այլն խոսքերը Հեղինակի սեփական դատողութեունն է, ինչպես այդ պարզ վկայում է ինքը մեկնիչը:*

Արդ՝ նույն այդ խոսքերը, ինչպես տեսնում ենք, Դավիթը վերագրում է ո՛չ թէ Էլիասին, այլ Օլիմպիոդորոս փիլիսոփային: Ուրեմն՝ Դավթի այս չատ որոշ վկայութեունից կարելի է եզրակացնել, որ նրան Ներածութեան մեկնութեունը հայտնի է եղել իբրև Օլիմպիոդորոսի երկ և ո՛չ Էլիասի:

Ա. Բուսսեն, միանգամայն հավատ ընծայելով Դավթի վկայութեանը և εἰ μὴ γράμμα *և այլն խոսքերը համարելով նույնպես Օլիմպիոդորոսինը, կարծում է, որ Ներածութեան մեկնութեան հունարէն ձեռագրի արտագրողը բաց է թողել* ἐγὼ δὲ τάναντία ἐκείνῳ φημὶ ἔπη οὕτως *հատվածում* ὡς φησιν Ὀλυμπιόδωρος *խոսքերը*[2]:

Սակայն այս բոնագրոսիկ սրբագրութեունը, որ խիստ վիճելի է ու կասկածելի, իմ կարծիքով, անհավանական ու անհիմն պետք է համարվի, որովհետև համապատասխան Դավթի վկայութեանը հայ մատենագիրները ևս, ինչպես տեսանք, մատնանշում են Օլիմպիոդորոս մեկնիչին, իբրև հեղինակ Էլիասին ընծայված Ստորոգութեանց մեկնութեան:

Ճիշտ է նրանց վկայութեունը վերաբերվում է միայն Ստորո-

---

[1] Տե՛ս նաև հունարէն բնագրից՝ Davidis Prolegomena, ed. Ad. Busse, էջ 31-32:

[2] Տե՛ս Ad. Busse, Eliae in Porph. Isag., էջ 7:

գութեանց մեկնութեանը, սակայն քանի որ Ներածութեան մեկնութիւնը ևս միևնույն հեղինակի գործ է և Դավիթն այս վերջինից օգտվել է իբրև Ոլիմպիոդորոսի աշխատությունից՝ ուրեմն և Որոտնեցու ու Մագիստրոսի վկայությունները կարող են կոված ծառայել Դավթի տեղեկության հիմնաւոր լինելուն, ինչպես և Դավթի ցուցումը կարող է ապացույց ընդունվել նրանց հաղորդած վկայությունների ճշտության:

Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» երկում առաջ է բերված նաև Ոլիմպիոդորոս փիլիսոփայի կարծիքը սահմանների որոշ առանձնահատկությունների մասին: Արդ՝ այդ հատվածը ևս, իմ կարծիքով, համապատասխանում է դարձյալ Սահմանքի նման յուսարանության, որ գտնվում է Էլիասին վերագրված Ներածութեան մեկնության մեջ:

Սահմանք իմաստ., էջ 143	Eliae in Porph. Is., էջ 6
«Իսկ յորժամ նուազն բառքդ՝ առաւելուն իրդ որդոն՝ մարդ կննդանի բանական. ահա նուազեցին բառք՝ և յաւելան իրդ: Վասն զի ոչ միայն մարդ է կննդանի բանաւոր. այլ եւ հրեշտակք եւ դևք. եւ որպէս ասէր Ոլոմպիադորոս փիլիսոփոս՝ եթէ սքանչելի իմն եղիտ բնութիւնս. նուազութիւն հարստացնել եւ հարստութիւն կնդծաւորեալ զնուազութեանցն»[1]:	*Καὶ θαυμαστὸς ὁ τῆς κακίας τῶν ὁρισμῶν τρόπος εἴ τε γὰρ ἐλλείψωσι τῇ λέξει τῷ πράγματι πλεονάζουσιν, εἴ τε πλεονάσωσι τῇ λέξει τῷ πράγματι, τῷ ὁριστῷ φημι, ἐλλείπουσιν οἷον ὡς ἵνα εἴπω 'ὁ ἄνθρωπος ζῷον' ἰδοὺ τῇ λέξει ἐνέλειπον, ἐπλεόνασα δὲ τῷ πράγματι συμπεριλαβὼν ἀγγέλους καὶ ἄλλα ζῷα.*

Ինձ թվում է, որ Դավթի վկայությունները և վերոհիշյալ բաղդատությունները այնքան պարզ են ու որոշ, որ կարող չեն բոնազբոսիկ ու վիճելի սրբագրությունների: Եթե ճիշտ են այս դիտողությունները, շատ պարզ է, որ Ներածութեան ու Ստորոգութեանց վերոհիշյալ մեկնությունները պետք է համարվեն Ոլիմպիոդորոս փիլիսոփայի աշխատություն:

§ 17. Հայ մատենագրական ավանդության և Ա. Բուսսեի եզրակացության հակասությունները կարելի է վերացնել, ենթադրելով Էլիաս-Ոլիմպիոդորոսին միևնույն անձը: – *Դավթի վև-*

[1] Տե՛ս նաև հունարեն բնագիրը՝ Davidis Prolegomena, ed. Ad. Busse, էջ 16:

բոհիչյալ վկայությունները, ինչպես և Հովհաննես Որոտնեցու ու Գրիգոր Մագիստրոսի պարզ ու որոշ տեղեկություններն անկարելի է առանց լուրջ հիմքերի ժխտել կամ անտես առնել: Մյուս կողմից՝ բավարար հիմք չունենք մերժելու նաև Ա. Բուսսեի եզրակացությունը, որը Ներածութեան ու Ստորոգութեանց մեկնությունները էլիաս մեկնիչին ընծայելու համար, ինչպես տեսանք, ունի ուշագրավ փաստեր ու կովաններ:

Կարծում եմ, որ հնարավորություն կա հաչտեցնելու հայկական ավանդության տվյալները Բուսսեի ներհակ ու անհամաձայն թվացող եզրակացության հետ հավանական մի նոր ենթադրությամբ, որը սակայն կարոտ է հատուկ քննության հունական աղբյուրների օգնությամբ:

Ա. Բուսսեի կարծիքով՝ էլիասը վերոհիչյալ իր մեկնությունները դրելու ժամանակ դեռևս քրիստոնեություն ընդունած չի եղել[1]: «Atque etiam Eliae, cum has scholas habebat, — ասում է նա,— fidei christianae non fuisse addictum, ex verbis (p. 66, 4) 'καὶ λέγομεν ὅτι οὐκ ἄτοπον τὸν θεὸν σῶμα εἶναι τά γάρ οὐράνια κατά Ἀριστοτέλην θεοὶ διὰ τὸ θέειν ἀεὶ καὶ κινεῖσθαι luculenter *apparet»[2]:*

Ի նկատի առնելով կարևոր այս հանգամանքը, կարելի է ենթադրել, որ էլիասի հեթանոսական անունը եղել է Օլիմպիոդորոս: Հովհաննես Փիլոպոնոսը, որ վեցերորդ դարի քրիստոնյա մեկնիչներից է, վերոհիշյալ իր վկայության մեջ գերազասություն է տվել, բնականաբար, նրա քրիստոնեական անվանը, իսկ հայ մատենագրության մեջ նույն էլիասի երկերը հայտնի են եղել, իբրև Օլիմպիոդորոսի աշխատություն: Դավիթ վկայությունները վերաբերվում են, ուրեմն, Օլիմպիոդորոս-էլիասին, որը նույն ինքն կրոսեր Օլիմպիոդորոսն է, Դավիթ մեկնիչի ուսուցիչը:

Այս ենթադրության դեմ կարող է լինել մի լուրջ առարկություն: Օլիմպիոդորոսի անունը կրող Ստորոգութեանց մի այլ մեկնություն գոյություն ունի արդեն և Ա. Բուսսեի հրատարակությամբ լույս է տեսել Բեռլինում 1902 թվին[3]: Այս դժվարությունը սակայն այնքան էլ անհաղթելի չէ:

Իմ կարծիքով, Օլիմպիոդորոսի այդ մեկնությունը, որ պահ-

[1] Տե՛ս նաև K. Krumbacher, Geschichte der byz. Literatur, 2. Auflage, München, 1897, էջ 432.

[2] Ad. Busse, Eliae in Porph. և այլն, էջ 10:

[3] Olympiodori Prolegomena et in Categorias Commentarium, ed. Ad. Busse, Berolini, 1902.

պանված է միայն մեկ ձեռագրում (Cod. Mutensis, 69), ապա է վերագրվի կամ մի այլ Օլիմպիոդորոսի, կամ մի այլ մեկնիչի, կամ կարող է լինել նույն այս Օլիմպիոդորոս-Էլիասի մեկնությունը, բայց դասավանդված նրա դպրոցական գործունեության մի այլ շրջանում: Ստորոգութենանց երկու այս մեկնություններն իրենց բովանդակությամբ ու մտքերի դասավորությամբ այնքան մոտ են իրար, որ անհնարին չէ ենթադրել, որ նրանք միևնույն դասախոսի մեկնություններ են, կարդացված ու գրի առնված ուսանողների կողմից տարբեր ժամանակ: Փիլիսոփայության պատմությունից հայտնի է, որ կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփան ունեցել է երկար կյանք և եղել է փիլիսոփայության ուսուցիչ մինչև VI դարի վերջին տասնամյակները: Շատ բնական է, որ նրա դասախոսությունների բովանդակությունը և ծավալը կարող էին նույնը չլինել նրա դպրոցական երկարատև գործունեության դանադան շրջաններում:

Էլիասին ընծայված Ստորոգութենանց մեկնությունը, լինելով իր բովանդակությամբ շատ ավելի ընդարձակ ու մանրազնին, քան Օլիմպիոդորոսի վերոհիշյալ մեկնությունը, կարող է թերևս համարվել միևնույն Օլիմպիոդորոս փիլիսոփայի մեկնություն, դասավանդված ու գրի առնված նրա դպրոցական գործունեության ավելի ուշ շրջանում:

§ 18. **Օլիմպիոդորոս-Էլիասին միևնույն անձն ընդունելով՝ հարթվում են մի շարք վիճելի խնդիրներ:** — Վերոհիշյալ ենթադրությունն ուշագրավ է այն տեսակետից, որ այդ ենթադրությամբ ո՛չ միայն վերանում են այն անբացատրելի հակասությունները, որ վերը մատնանիշ էինք արել, այլ հարթվում ու պարզվում են նաև մի քանի մութ ու վիճելի խնդիրներ Դավթի, Էլիասի ու Օլիմպիոդորոսի նկատմամբ:

Ինչպես հայտնի է, Ա. Բուսսեն, որ իր նախկին աշխատություններում Դավթին ու Էլիասին համարում էր ժամանակակից մեկնիչներ և Օլիմպիոդորոսի աշակերտներ, Դավթի երկերի հրատարակության իր առաջաբանում[1], նրանց երկերի մանրազնին քննությունից հետո, հարկադրված էր փոխելու իր նախկին կարծիքը և ենթադրելու, որ Օլիմպիոդորոսի աշակերտ եղել է Էլիասը, իսկ Դավիթը եղել է այս վերջինիս աշակերտը և ապրել վեցե-

[1] Ad. Busse, Davidis Prolegomena և այլն, էջ V–VI:

րորդ դարի վերջում և յոթերորդ դարի սկզբներում:

Դավիթ Անհաղթի մասին իմ աշխատության մեջ, ինչպես և Մ. Խոստիկյանը David der Philosoph իր քննաճառում, հակառակ Ա. Բուսանի այդ վերջին ենթադրության, հիմնվելով մի չարք այլ դիտողությունների վրա, ընդունել էինք Դավթին կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտ:

Արդ՝ այդ հակասական եզրակացություններն իրենք իրենց վերանում են ու վիճելի խնդիրը հեչտությամբ պարզվում, եթե հավանական համարվի Օլիմպիոդորոս-Էլիասի միևնույն անձ լինելը:

Բացի այդ, խիստ օտարոտի էր թվում, որ Փիլոպոնոսը, որը քաղվածքներ է անում ժամանակակից մեկնիչների երկերից և հիշում նրանց, կրտսեր Օլիմպիոդորոս մեկնիչին, որ ականավոր տեղ է բռնում մեկնիչների չարքում, ո՛չ հիշատակում է, ո՛չ էլ օգտվում նրա մեկնություններից:

Եթե Էլիասը քրիստոնեություն ընդունած նույն ինքն Օլիմպիոդորոսն է, այդ դեպքում շատ պարզ է, թե ինչո՛ւ Հովհաննես Փիլոպոնոսը, հիշելով Էլիասին, չի հիշում նաև Օլիմպիոդորոսին:

Օլիմպիոդորոսի Ներածութեան մեկնությունը համարվում է կորած: Արդ՝ եթե վերոհիշյալ մեր ենթադրությունը ճիշտ լինի՝ Էլիասին վերագրված Ներածութեան մեկնությունը պետք է ընդունել նույն ինքն Օլիմպիոդորոսի աշխատություն:

Վերջապես՝ Էլիաս-Օլիմպիոդորոսին միևնույն անձ ընդունելով, ինքնըստինքյան հասկանալի է դառնում, թե ինչու Էլիասը, և ո՛չ մի անգամ չի հիշատակում Օլիմպիոդորոսի անունն իր երկերում:

Օլիմպիոդորոս-Էլիասի միևնույն անձ լինելու մասին սույն ենթադրության վրա հրավիրում ենք այն բանասերների ուշադրությունը, որոնք հնարավորություն ունեն օգտվելու եվրոպական հարուստ գրադարանների նյութերից: Ի նկատի ունենալով վերոհիշյալ նոր ենթադրությունը, որ հիմնված է հայկական տեղեկությունների վրա, հարկավոր է, իմ կարծիքով, նորից քննության առնել հունաց մատենագրության տվյալները, որոնց մեջ կարող են թերևս գտնվել անուշադիր թողնված նոր վկայություններ կամ որոշ ակնարկներ, նպաստավոր այս խնդրի վերջնական լուծմանը:

§ 19. **Ստորոգութեանց մեկնութեան Հատվածը, որ տպագրված է Էլիասի հայերեն հրատարակութեան վերջում, անհայտ մեկնիչի աշխատութիւն է Օլիմպիոդորոս-Էլիասի դպրոցից:** — *Էջմիածնի մատենադարանի թիվ 1939 ձեռագրում (= Կարինյան ցուցակ, թիվ 1897), բացի Էլիասին վերագրված Ստորոգութեանց մեկնութենից, գտնվում է նաև, ինչպես վերը նշեցինք, Համառոտ մի հատված Արիստոտելի Ստորոգութեանց մի այլ մեկնութեյան, որը տպագրված է Էլիասի հայ հրատարակութեյան վերջում, էջ 140–149:*

Այս հատվածը, որ չունի վերնագիր և որևէ տեղեկութեյուն կամ ակնարկ հեղինակի մասին, խիստ նման է իր բովանդակութեյամբ, իսկ տեղ տեղ գրեթե բառացի համապատասխան է Էլիասի և Դավթի մեկնութեյուններին:

Նման տեղերն այնքան շատ են, որ ավելորդ եմ համարում դնեմ առ դնեմ նրանց բնագիրը, այլ նշանակում եմ միայն համապատասխան հատվածների էջերն ու տողերը.

1. Անանուն մեկնիչ, էջ 140, 15–22 = Էլ. 2, 13–3, 8: 2. Ան. 141, 1–9 = Էլ. 3, 9 են: 3. Ան. 141, 9–26 = Էլ. 6, 17–8, 8: 4. Ան. 141, 30–142, 3 = Էլ. 3, 19–21: 5. Ան. 142, 4–8 = Էլ. 4. 19–25: 6. Ան. 142, 8–14 = Էլ. 9, 14–18: 7. Ան. 142, 27–143, 4 = Դավ. 164, 5–12: 8. Ան. 143, 12–18 = Էլ. 8, 16–19: 9. Ան. 144, 11–145, 10 = Էլ. 4, 25–5, 18: 10. Ան. 145, 20–147, 1 = Էլ. 9, 14–10 15: 11. Ան. 147, 11–17 = Էլ. 30, 11–17: 12. Ան. 148, 8–149, 5 = Էլ. 37, 11–38, 20 և Դավ. 252, 14–253, 23:

Այս համեմատութեյունը պարզ ցույց է տալիս, որ Ստորոգութենանց մեկնութեյան սույն հատվածի մեկնիչը պատկանում է նույնպես Օլիմպիոդորոս-Էլիասի դպրոցին: Սակայն նույն այս հատվածի մեջ հանդիպում են քաղվածքներ ինչ-որ անհայտ աղբյուրներից և հիշատակվում են մատենագիրների և փիլիսոփաների անուններ, ինչպես Պասիլ, Փղվոս, Ազոնտես, որոնք չեն հիշվում Դավթի ու Էլիասի մեկնութեյուններում:

Ուշադրութեյան արժանի է, որ Սահմանք Իմաստասիրութենան երկում Կալիմաքոսից բերված հայտնի քաղվածքն Անանուն մեկնիչը վերագրում է ոմն Պասիլին[1]:

Փղվոսին Անանուն մեկնիչը հիշատակում է յոթնիկյան իմաստասերների՝ Եպիկուրոսի, Արիստիպպոսի և Կղեոմբրոտոսի՝ խմբում, և նրա յոթնիկյան լինելու ապացույց համարում է «Փղոս» անունը: «Եւ վասն դի Փղոս յոթնիկեան էր,— ասում է

[1] Տե՛ս էջ 143 և Դավիթ, Սահմանք, էջ 164:

նա,–յայտնէ անունն, դի ցանկութիւն ասէ. ուստի եւ Փղոս անուանեմք զտարփաւուղն» (էջ 143):

Անանուն մեկնիչը հիշում է և ոմն Ազոնտեսին, նույնպես անհայտ մի անուն, որի մասին նա հաղորդում է հետևյալը. «երրորդ ձեռնարկութիւնն՝ զոր Ազոնտէսն ասէ, թէ մինչ աստուածայինն ունի զանհոգ կեալն՝ առաւել մեզ պարտ է անհոգարար կեալ: Այլ ոչ զայդ ասէ Ազոնտէս, այլ եթէ աստուածայինն՝ զոր ինչ եւ կամի՝ անխափանարար եւ կատարէ, իսկ մարդիկ ո՛չ զամենայն՝ զոր ինչ եւ կամին՝ կատարել կարեն» (էջ 143):

Թե ինչ աղբյուրներից է քաղել Անանուն մեկնիչը Պասիլի, Փղոսի և Ազոնտեսի վերաբերյալ իր վերոհիշյալ տեղեկությունները՝ այդ կարող է առանձին քննության Արիստոտելյան իմաստասիրության հունական ձեռագրերի օգնությամբ:

Բացի վերոհիշյալ մի քանի անծանոթ հատվածներից, Անանունի մեկնությունը իմաստասիրական իր պաշարներով և մեկնական հատուկ իր եղանակով այնքան է նման Օլիմպիոդորոս-էլիասի ու Դավթի մեկնություններին, որ սրա խմբակցությունն այդ մեկնությունների հետ կարելի է համարել, իմ կարծիքով, միանգամայն անվերկրայելի:

§ 20. **Անանունի Ստորոգութեանց մեկնութեան հատվածը Դավթի աշխատություն չէ:** – Ի նկատի առնելով, որ նորպլատոնական Դավիթ մեկնիչի Ստորոգութեանց մեկնությունը կորած է համարվում, կարելի էր ենթադրել, որ հիշյալ հատվածն այդ աշխատության հայերեն թարգմանության մի կտորն է: Այդպիսի ենթադրության հիմք կարող են ծառայել, թե այդ հատվածի Օլիմպիոդորոս-էլիասի խմբին պատկանելը և թե նրա բովանդակության մերձավորությունը Դավթի մեկնությունների հետ:

Սակայն Դավթի երկերի և սույն հատվածի ուշադիր քննությամբ ստացվում է հակառակ եզրակացություն:

Նորպլատոնական Դավիթը և հատվածի Անանուն հեղինակը որոշ խնդիրներում այնքան են տարբերվում իրարից, որ այդ հատվածը Դավթին վերագրելը թվում է անհավանական ու անընդունելի:

Այդ անհաշտելի տարաձայնությունները պարզ երևում են հետևյալ համեմատություններից.

1. Դավիթն իր Սահմանք իմաստասիրութեան երկում «Ուրա-

խացի՛ր ոմ արեգական, կղեմմրոտոս Ամբռակեացի վազեալ ի բարձրարարչէ պարսպացի ի դժոխս» են խոսքերը (ՍահՄ., 164) վերադրում է Կալլիմախոսին, իսկ Անանուն մեկնիչը ոմն Պասիլին (էջ 143):

2. Դավիթը ճեմականների անվան ծագման մասին ասում է. «Իսկ ճեմական կոչեցաւ Արիստոտէլ, վասն զի Պղատոնի տաւկաւին եւս կենդանի զոլով՝ ոչ իշխէր նստել եւ ուսուցանել» (Պորփ., Ներած. վերլուծ., էջ 281), իսկ Անանուն մեկնիչը, նման էլիասին, կարծում է, թե «կոչին Արիստոտելականք Պեռիպատկականք, վասն զի ճեմելով առնէր դպրուցատրութիւնն բատ նմանութեան Պղատոնի, զի նա ճեմելով դպրուցատրութիւնն առնէր, խորհելով՝ մի միայն զհոգին վարժել, այլ եւ զմարմինն» (էջ 145):

3. Դավիթը «Խորհ չարագրածութեանց» խնդիրը լուսաբանում է Պորփյուրի Ներածութեան վերլուծության առաջին պրակում, իսկ Անանուն մեկնիչը, նման էլիասին, Ստորոգութեանց մեկնության առաջարանում (տե՛ս Պորփ., Ներած. վերլուծ., էջ 252, էլ. և Ան., էջ 37. 148):

«Խորհ չարագրածութեանց» վերաբերյալ այս հատվածների բովանդակության համեմատությունից ևս երևում է, որ Անանունը և Դավիթը տարբեր հեղինակներ են և որ Անանունի մեկնությունն ավելի համապատասխանում է Օլիմպիոդորոս-էլիասի մեկնությանը, քան Դավթի:

§ 21. Անանունը քրիստոնյա մեկնիչ է, տզետ ու թերուս իմաստասիրական հարցերում: *— Մեկնելով կյունիկյան դպրոցի անվան ծագումը՝ Անանուն մեկնիչը տալիս է, ի միջի այլոց, և հետևյալ լուսաբանությունը: «Դարձեալ՝ կինիկեցիք ասացան, զի պաշտէին զշուն՝ որպէս ի հելլենացւոց անշունչ զրաւչեալքն պաշտէին» (էջ 141): Այս բացատրությունը պարզ ցույց է տալիս, որ ինքը մեկնիչը հելլենացի չէր և ո՛չ էլ հեթանոս, ուրեմն՝ հավանական է ենթադրել, որ նա ևս, ինչպես և Դավիթն ու էլիասը, պատկանում էր Արիստոտելի իմաստասիրության քրիստոնյա մեկնիչների շարքին:*

Հետաքրքիր մի ակնարկ ևս կա Անանունի մեկնության հատվածում, որից թերևս կարելի լինի հետևցնել, որ Անանուն մեկնիչը եղել է Աթենքում: Խոսելով իմաստասիրական հերձվածների մասին, Անանունն ասում է. «Երրորդ յեղանակ՝ ի տեղացն, որպէս կոչեցան ակատեմացիք եւ ստոյիկեանք, եւ

գեղեցիկ է այս տեղի Աթենացեացն» (էջ 147)։ Այս խոսքերը կարող են մի նշան համարվել, որ Անանուն մեկնիչն Աթենք այցելած մի օտարական է, որի վրա ստոյիկյանների գեղեցիկ սրահը թողել է խոր տպավորություն։

Մյուս կողմից, նաև պարզ նկատվում է Անանունի մեկնության բովանդակությունից, որ նա բավարար չափով չի կարողացել ըմբռնել իմաստասիրական գիտությունը և երբեմն, աննկելի կերպով, չփոթում ու խեղաթյուրում է իմաստասիրական ամենատարրական փաստերն ու գաղափարները։

Անանուն մեկնիչի տգիտությանը պետք է վերագրել նրա հետևյալ վկայությունները Երակղիտոսի, Եփեկտիկյանների և Պտղոմեոսի մասին։

Ինչպես այս համեմատություններից տեսնում ենք՝ էլիասի

Անանուն (Էլիասի հրատ.), էջ 140, 7–10	Էլիաս, էջ 2, 17–19
«Եւ զոր ասեմս այս է՝ Երակղիտոս արտաւրեաց զամենայն ինչ անչարժ զոլ։ Եւ Եփեկտեանք հասարակապէս մտածեցին՝ ոչինչ զոլ անչարժ, որ եւ եռոտնեայք անուանին»։	«Վասն զի միոյ առն կարծիք զրութիւն լինի եւ ոչ հերձուած, որպէս Երակղիտեայն եթէ ամենայն ինչ չարժի. եւ կամ Պարմենիտեայն թէ նող է էակն եւ անչարժ»։
Անանուն, էջ 148	**Էլիաս, էջ 37**
«Եղեւ զարձեալ այլ թագաւորի Փիլադելփիւս, որ եւ նա վասփաղէր Պտղոմէի չարագրածացն եւ տայր բազում զանձս, որ բերէին նմա այսպիսի գիրս»։	«Քանզի Յովրատայ Լիւրէացւոց թագաւորն հաւաքեցելոյ զայնս, որք Պիւթագորին գոյին, իսկ Պտղոմիոսի՝ զայնս, որք Արիստոտելի»։

ճշգրիտ վկայությունները հիմնովին աղճատված են Անանունի մոտ։ Հերակլիտոսի πάντα ῥεῖ հանրածանոթ գրությունը, Անանուն մեկնիչի բացատրությամբ, դառել է «ամենայն ինչ անչարժ զոլ», իսկ «ոչինչ զոլ անչարժ» գրությունը վերագրված է Եփեկտիկյաններին։ Էլիասի տեղեկությունը Պտղոմեոսի մասին, իբր սա հավաքում էր Արիստոտելի երկերը, Անանուն մեկնիչն անհեթեթ կերպով խեղաթյուրել է, կարծելով, որ Փիլադելփոսը ցանկացել է հավաքել Պտղոմեոսի գրվածքները։

Այս կոպիտ ու անհեթեթ սխալները ևս մի նոր ապացույց են,

անշուշտ, որ Ստորոգութեանց համառոտ հատվածի հեղինակը Դավիթ փիլիսոփան չէ, այլ մի ուրիշ անվարժ ու կիսահմուտ մեկնիչ:

§ 22. **Նոր դիտողություններ Արիստոտելի Վերլուծականքի մեկնության ու նրա հեղինակի մասին:** — *«Դավիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» հետազոտության մեջ՝ «մեկնության չորեքտասան դլխոց Արիստոտելի ի վերլուծականն», հատվածը վերագրել էի Դավթին:*

Վերլուծականքի մեկնությունը նորպղատոնական Դավթի աշխատության էի համարել, դլխավորապես, այն պատճառով, որ այդ գրվածքում թե՛ տրամաբանական հասկացողությունները, և թե՛ դրանց մեկնության ու բացատրության եղանակը նույնն են, ինչ որ Դավթի Ներածութեան մեկնության և Սահմանք իմաստասիրութեան երկերում: Բացի այդ՝ մատնանշել էի նաև մի քանի հատվածներ, որոնք այդ գրվածքներում գրեթե բառացի նման են[1]:

Այդ եղրակացությունը թվում է ինձ այժմ կարոտ է վերաքննության: Դավթի մասին վերոհիշյալ հետազոտությունս գրելու ժամանակ՝ ես դեռևս ծանոթ չէի Էլիասին վերագրված Ստորոգութեանց մեկնությանը, ո՛չ էլ Անանունի Ստորոգութեանց մեկնության հատվածին:

Այս վերջին մեկնությունների քննությունը ցույց է տալիս, որ իմաստասիրական գաղափարների ու մտքերի նմանությունն Օլիմպիոդոր-Էլիասի խմբին պատկանող մեկնություններում, ու նույնիսկ ամբողջ հատվածների նույնությունը՝ չեն կարող, ընդհանրապես, կռվան ու հիմք ծառայել որոշելու նույն մեկնությունների հեղինակների խնդիրը:

Դրա պատճառը շատ պարզ է:

Ամմոնիոս-Օլիմպիոդորոսի խմբին պատկանել են դանազան մեկնիչներ, որոնք աշակերտելով մեկը մյուսին՝ գրի են առել նախ և առաջ իրենց ուսուցիչների դասախոսությունները, և երբեմն կցել այդ նյութին քաղվածքներ մյուս մեկնիչների գրվածքներից: Իմաստասիրական այս մեկնություններն ինքնուրույն ու անհատական ստեղծագործության արդյունք չեն: Նրանց մեջ, համեմատաբար, քիչ կան հատվածներ ու մտքեր, որոնք պատկանեին աշակերտ-մեկնիչի սեփական գրչին:

Լինելով մեկը մյուսի ազբյուր՝ այս մեկնությունները պա-

---

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, Դավիթ Անհաղթի խնդիրը, էջ 10–11:

րունակում են իրենց մեջ նման իմաստասիրական սկզբունքներ և բազմաթիվ նման հատվածներ, և սովորական այդ նմանությունները բնավ չեն որոշում այս կամ այն հատվածի անմիջական աղբյուրը, այլ միայն մատնանշում են դոքա Ամմոնիոս-Օլիմպիոդորյան խմբին պատկանելը:

§ 23. **Վերլուծականքի մեկնության համեմատությունը Դավթի, Ամմոնիոսի և Օլիմպիոդորոս-Էլիասի մեկնությունների հետ:** *— Վերլուծականքի մեկնության հայերեն թարգմանությունը՝ թե՛ իր բովանդակությամբ՝ և թե՛ իմաստասիրական մեկնական ուղղությամբ պատկանում է, անտարակույս, Ամմոնիոս-Օլիմպիոդորյան մեկնությունների խմբին: Իսկ թե այդ խմբին պատկանող ո՛ր մեկնիչի աշխատությունն է, այդ խնդիրն այսպես էլ հեշտ չի լուծվում, ինչպես կարծում էի վերոհիշյալ հետազոտությանս մեջ:*

Նման հատվածներ կան Վերլուծականքի մեկնության մեջ Դավթի, Ամմոնիոսի, Օլիմպիոդորոսի ու Էլիասի հետ: Այդ նման հատվածները, որ ներքև առաջ ենք բերում, ապացուցում են միայն Վերլուծականքի մեկնության Ամմոնիոս-Օլիմպիոդորյան խմբից լինելը, իսկ թե արդյոք այդ հատվածների անմիջական աղբյուրն ստորև հիշված մեկնիչների երկերն են, թե նույն խմբին պատկանող այլ մեկնություններ, այդ հարցն, ինչպես վերը բացատրեցինք, մնում է անորոշ:

Ի նկատի առնելով, որ Վերլուծականքի մեկնության հունարեն բնագիրը կորած է համարվում, և այդ տեսակետից, նրա հնդինական խնդիրն ունի առանձին կարևորություն, նշանակում եմ ներքև այդ մեկնության բոլոր, իմ նկատած, նմանություններն Ամմոնիոս-Օլիմպիոդորյան խմբի մյուս մեկնիչների հետ:

Մեկն. ի Վերլ., էջ 558	Ammonii in Anal., p. 2[1]
«Բայց ոմանք ասեն՝ եթէ երեք են տեսակք հաւաքման, ապացուցական տրամաբանական, իմաստական են»:	*Νῦν δὲ διάφορά ἐστιν εἴδη συλλογισμῶν οἱ μὲν γάρ εἰσιν ἀποδεικτικοί, οἱ δὲ διαλεκτικοί, οἱ δὲ σοφιστικοί.*

[1] Ammonii in Aristotelis Analyticorum priorum librum I commentarium. Ed. M. Wallies, Berol., 1890. Commentaria in Aristotelem graeca, vol. IV. pars VI.

Մեկն. ի Վերլ., էջ 558

«Բայց Վերլուծականք մակագրեցան եւ ոչ չարագրականք, վասն երկուց պատճառաց. նախ եւ առաջին, վասն զի սակաւագոյն է վերլուծութիւն քան զչարագրութիւն. զի որ վերլուծանելն կարող գոյ, նա եւ չարագրել. բայց ոչ որ չարագրելն գիտէ՝ նա եւ վերլուծանել»:

Ammonii in Anal., p. 6

Τί δήποτε οὐ Συνθετικὰ ἐπέγραψεν οὐδὲ Εὑρετικὰ ἀλλὰ Ἀναλυτικά, τίς ἡ ἀποκλήρωσις; καὶ λέγομεν ὅτι ἀπὸ τοῦ ἐπιστημονικωτέρου καὶ τοῦ τιμιωτέρου ὁ γὰρ εἰδὼς ἐπιστημονικῶς ἀναλῦσαι καὶ συνθεῖναι οἶδεν, οὐ πάντως δὲ ὁ εἰδὼς συνθεῖναι καὶ ἀναλῦσαι.

Մեկն. ի Վերլ., էջ 586

«Սակս սորին այսորիկ տարաձայնեցան առ միմեանս Մարսիմոս ուրհայեցի աշակերտ Ամիլիոսի եւ Թեմիստոս. քանզի եւ Թեմիստոս ոչ ունելով բաժանման հատարմանցն՝ զոման առարուն կոչէր, որք յառաջումն ձեւոյ, իսկ զոմանս անառարս որք յերկրորդումն եւ յերրորդումն: Իսկ Մարսիմոս ոչ ունելով սահմանումն ունողումն զանկարօտն զամենայն բաղհատարումն առարուն կոչէր: Եւ յաղագս այսորիկ առին զատաւոր զՈւլիանոս Թագաւոր՝ որ դյագրութիւնն իւր Մարսիմոսումն»:

Ammonii in Anal., p. 31

Τούτῳ ἠκολούθησεν Πορφύριος καὶ Ἰάμβλιχος, ἔτι μέντοι καὶ ὁ Μάξιμος, <ὃς> ἀκροατὴς ἦν Ἱερίου τοῦ Ἰαμβλίχου ἀκροατοῦ. Καὶ Θεμίστιος δὲ ὁ παραφραστὴς τῆς ἐναντίας ἐγένετο δόξης τῆς καὶ τῷ Ἀριστοτέλει δοκούσης, τούτοις οὖν τοῖς δύο, τῷ τε Μαξίμῳ καὶ τῷ Θεμιστίῳ, ἐναντία περὶ τούτου δοξάζουσιν καὶ κατασκευάζουσιν, ὡς ᾤοντο, τὸ δοκοῦν αὐτοῖς [καὶ] διῄτησεν αὐτὰ ὁ βασιλεὺς Ἰουλιανός, καὶ δέδωκεν τῆν ψῆφον Μαξίμῳ καὶ Ἰαμβλίχῳ καὶ Πορφυρίῳ καὶ Βοηθῷ.

Մեկն. ի Վերլ., էջ 564

«Ամենայն իրում պիտոյանայ արուեստ ինչ, եւ կամ մակացութիւն, եթէ ոչ է այլոյ արուեստի մասին, եւ կամ մասնիկ նորին. իսկ պիտացեալն մասն է. կամ մաս-

Olympiodori Prol., p. 14[1]

Πᾶν ᾧ κέχρηταί τις ἢ τέχνη ἢ ἐπιστήμη, ἐὰν μὴ ᾖ ἑτέρας τέχνης ἢ ἐπιστήμης <ἢ μέρος ἢ μόριον αὐτῆς τῆς κεχρημένης> ἢ μέρος ἢ μόριόν ἐστιν, οἷον ὡς ἐπὶ

[1] Olympiodori Prolegomena et in Categorias commentarium, ed. A. Busse, Berol., 1902. Commentaria in Aristotelem graeca, vol. XII, pars I.

նիկ. քանզի տաճականումն՝ պիտանանայ բժշկականութիւն, որ ոչ է այլոյ արհեստի մասն կամ մասնիկ, հարկ է նորին բժշկականութեան մասն գոլ եւ կամ մասնիկ» են մինչեւ, էջ 563, տ. 14:

παραδειγμάτων τῆς ἰατρικῆς τέχνης μέρος ἐστὶ τὸ διαιτητικόν, καὶ οὐδαμῶς ἑτέρας τέχνης ἢ ἐπισιήμης μέρος ἢ μόριον ἐστὶ τῆς ἰατρικῆς ἄρα τέχνης τὸ διαιτικὸν μέρος ἐστὶ, καὶ αὕτη μόνη κέχρηται αὐτῷ κτλ., p.18, 12[1].

Մեկն. ի Վերլ., էջ 568

«Քանզի ոչ կայաւ ակնոս Պղատոն ապացուցականումն Արիստոտէլի, այլ Արիստոտէլ Պղատոնումն, զի առցէ ի նմանէ սերմանիս, ոչ պիտացաւ եւ Հոմերոս յաղագս քերթողականումն Արիստոտէլի, այլ Արիստոտէլ Հոմերոսում, ոչ պիտացաւ եւ Դեմոսթենէս վիճաբանութեանց Հերմոգինէս, այլ Հերմոգինէս նմա»:

Olympiodori Prol., p. 18

Οὐδὲ γὰρ ἀποδεικνὺς ἐκεῖνος τῆς Ἀριστοτέλους ἀποδεικτικῆς μεθόδον ἐδεήθη ἀλλὰ τοὐναντίον Ἀριστοτέλης τῆς Πλάτωνος ἀποδείξεως οὕτω γοῦν καὶ Ὅμηρος καὶ Δημοσθένης οὐκ ἐδεήθησαν οὔτε τοῦ Περὶ ποιητικῆς Ἀριστοτέλους οὔτε τῆς Ἑρμογένους τέχνης. ἀλλὰ τοὐναντίον αὐτοὶ τούτων ἐδεήθησαν.

Մեկն. ի Վերլ., էջ 568

«Եւ պարտ է գիտել եթէ հինգ են տեսակք հաւաքմանց. ապացուցական, տրամարանական, ճարտասանական, իմաստական, քերթողական, որ եւ առաստպելախառնումն: Բայց հինգ են վասն այր պատճառի. որոյ անուն եւ դիմէն (?) կամ ամենեւին ճշմարտեն, եւ լինի ապացուցականն կամ ամենեւին ստեն, եւ լինի քերթողականն, եւ կամ է ինչ որ ճշմարիտ, եւ է ինչ որ սուտ: Եւ թէ հաւասարք են միմեանց ճշմարիտն եւ սուտն՝ լինի ճարտասանականն. եւ ճարտասանականումն միայնում ասին գոլ կացմունք եւ վէճք եւ

Էլիաս, Մեկն. Ստոր., էջ 17

«Քանզի հինգ են տեսակք չարարանութեան՝ այսինքն ապացուցի՝ ապացուցականն, տրամարանականն, ճարտասանականն, իմաստականն, քերդողականն: Եւ յիրաւի հինգ են, վասն զի նախադասութիւնքն ուստի լինին հինգ են, քանզի կամ ամենեւիմր ճշմարիտ են առաջարկութիւնքն եւ առնեն զապացուցականն. եւ կամ ամենեւիմր սուտ են եւ առնեն զքերդողականն զառաստպելուտն կամ է ինչ որ ճշմարիտ եւ է որ սուտ, եւ այս եռակի՝ կամ առաւել ունի զճշմարիտն եւ առնէ զառաջնոցն տրամարանականն, եւ կամ

[1] Համմ. նաև Ammonii in Anal., էջ 8, 15 – 11, 21.

անվէճք, առ ի նոցանէ միայն նպատանակիլիք: Իսկ եթէ առաւել է ճշմարիտն քան զսուտն՝ լինի տրամաբանականն. իսկ եթէ առաւել է սուտն քան զճշմարիտն՝ լինի իմաստականն»:

առաւել ունի զսուտն քան զճշմարիտն եւ առնէ զիմաստական ապացոյցն, եւ կամ հանդիպեսցէ միմիանց զսուտն եւ զճշմարիտն եւ առնէ զճարտասանականն: Ուստի կացմունք ճարտասանին միայն տեսանել ի վերայ հանդիպանալ միմեանց ճշմարտին եւ ստին»:

Մեկն. ի Վերլ., էջ 563

Նախ եւ առաջին՝ եթէ քառասուն գրոց գտելոց Հաւաքմանցն ի հին գրանոցսն չորք միայն այսոքիկ գիրք ընտրեցան զոյ Արիստոտէլի:

Elias in Cat., p. 133[1]

Τεσσαράκοντα γὰρ βιβλίων εὑρεθέντων ἐν παλαιαῖς βιβλιοθήκαις τῶν Ἀναλυτικῶν καὶ δύο τῶν Κατηγοριῶν τέσσρα μόνα τῷν Ἀναλυτικῶν ἐκκρίνουσι καὶ τῶν Κατηγοριῶν ἕν.

Մեկն. ի Վերլ., էջ 559, 1-21.
Մեկն. ի Վերլ., էջ 559, 30-35.
Մեկն. ի Վերլ., էջ 565, 15-18.
Մեկն. ի Վերլ., էջ 584, 1-17.

Սահմ. իմաստ., էջ 185,1 1-186, 5.
Սահմ. իմաստ., էջ 214, 29-32.
Սահմ. իմաստ., էջ 191, 21-28.
Դատ., Պորփ. Վերլ. էջ 259, 3-260,2.

§ 24. Վերլուծականքի մեկնութիւնն ավելի հավանական է ընդունել Օլիմպիոդորոս-Էլիասի աչխատութիւն, քան Դավթի: – *Բոլոր այս հատվածները, հաստատելով Վերլուծականքի մեկնության Ամմոնիոս-Օլիմպիոդորոսի խմբին պատկանելը, բնավ չեն պարզում, թե ո՛վ է այդ մեկնության հեղինակը:*

Այդ խնդիրը լուծելու համար հարկավոր են ուրիշ տվյալներ ու փաստեր, որ գրեթե չկան:

Բնորոշ է միայն ու ուշադրության արժանի, որ Վերլուծականքի մեկնությունը բաժանված է պրակների և ամեն մի պրակ սկսվում է «ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով եւ առաջիկայ պրակը» բառերով: Ճիշտ այնպես, ինչպես և նորպղատոնական

[1] Համմ. նաև Էլիասի Հայերեն թարգմանություններ, էջ 40 և Օլիմպիոդորի Prolegom., էջ 24, 14-16 «φασίν ὅτι εὑρέθησαν ἐν ταῖς βιβλιοθήκαις μετὰ τὴν τελευτὴν αὐτοῦ τῶν μὲν Ἀναλυτικῶν μ΄ καὶ β΄ βιβλία τῶν δὲ Κατηγοριῶν β΄»...

Դավթի ու Էլիասի մեկնությունները: Համապատասխան՝ ἐν οἷς σὺν θεῷ καὶ ἡ παροῦσα πρᾶξις վերնագրերը կան Դավթի ու Էլիասի և Հունարեն բնագրերում: Հերմիասի որդի Ամմոնիոսի Հունարեն մեկնությունները բաժանված չեն գլուխների, իսկ Օլիմպիոդորոսի Աստրոգութեանց մեկնության Հունարեն բնագիրը բաժանված է «տետրակների», այլ ոչ «պրակների»:

Անանուն մեկնիչի Աստրոգութեանց մեկնության Հայերեն հատվածը նմանապես բաժանված է «տետրակների»:

Ահա այս հանգամանքը թերևս մի նշան համարվի, որ Վերլուծականքի մեկնությունը Ամմոնիոս-Օլիմպիոդորյան խմբից լինելով, պատկանում է այդ խմբի Դավթի ու Էլիասի ճյուղին:

Սակայն Դավիթ մեկնիչին այդ մեկնությունը վերագրելը ինձ թվում է այժմ անհավանական հետևյալ պատճառով:

«Ներածութեան վերլուծութեանն» իր առաջաբանում (պրակ դ, էջ 263, 21-26) Դավիթը հարց է դնում, թե «յինչ մասն իմաստասիրութեան վերաբերի առաջիկայ չարագրութիւնը», այսինքն՝ Պորփյուրի Ներածութիւնը: «Եւ գիտելի է,— ասում է նա,— թէ ի բանական մասն իմաստասիրութեան վերաբերի առաջիկայ չարագրութիւնս: Իսկ բանականն, եթէ մասն է իմաստասիրութեան, եւ եթէ գործի, ի Աստրոգութիւնն Արիստոտելի ուսցուք»:

Նույն հարցը դնում է նաև Էլիասը, սակայն նա խոստանում է նաև խնդիրը քննել ո՛չ թե Աստրոգութեանց, այլ Վերլուծականքի մեկնության մեջ: Δειχθήσεται γὰρ σὺν θεῷ ἐν τοῖς Ἀναλυτικοῖς,— ասում է Էլիասը,— ὅτι ἡ λογικὴ οὐ μέρος τῆς φιλοσοφίας, ἀλλ' ὄργανον (Elias, in Porph. Is., էջ 26). նաև էջ 39. ἀνάγεται δὲ ὑπ' οὐδὲν μέρος τῆς φιλοσοφίας, ἀλλ' ὑπὸ τὸ ὄργανον αὐτῆς. φημὶ τὴν λογικήν, ὡς δειχθήσεται σὺν θεῷ ἐν τῇ Ἀποδεικτικῇ.

Արդ՝ բանականի մասին, թե արդյոք նա մա՞ն է թե գործի իմաստասիրության, ընդարձակ բացատրություն կա Վերլուծականքի մեկնության հայերեն թարգմանության մեջ՝ պրակք գ և դ, էջ 564-569: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ այդ մեկնությունն ավելի շուտ Էլիասին կարելի է վերագրել, քան Դավթին:

Սակայն միակ այդ փաստը, թեև որոշ կուան է Վերլուծականքի մեկնությունն Էլիասին վերագրելու, բայց այդ ենթադրությունը հաստատելու համար հարկավոր են և ուրիշ վկա-

յութիւններ, որ թերևս գտնվեն խմաստասիրական մեկնութիւնների հանական ձեռագրերում:

§ 25. **Դավիթ Անհաղթին վերագրվող Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոց մեկնութիւնները և դրանց վերնագրերը հնագույն ձեռագրերում:** — *«Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսարանութեամբ» աշխատութեան մեջ ցույց էի տվել, որ Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոց Դավիթ Անհաղթին վերագրվող մեկնութիւնները ո՛չ թե Դավթի, այլ անհայտ ինչ որ մեկնիչի աշխատութիւնն է:*

Վիեննայի Մխիթարյանների թիվ 112 ձեռագրում այդ մեկնութիւնները վերագրվում են Ամլեավոյս և Անտոնիոս էրմիա մեկնիչներին[1]: Ստորոգութեանց մեկնութեան սկիզբը մինչև «Յաղագս առնչի» համարվում է «լուծմունք ի Ամլեաւոյսի ասացեալ», իսկ առնչի մեկնութիւնից սկսած մինչև վերջը՝ Անտոնիոս էրմիա մեկնիչի աշխատութիւն: Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» գրոց մեկնութիւնը թիվ 112 ձեռագրում վերագրվում է նմանապես Ամլեաւոյսին և ունի հետևյալ վերնագիրը՝ «մեկնութիւն Ամլեաւոյսի ասացեալ»:

Այս վերնագրերը չեն կարող անշուշտ մտացածին լինել, այլ արտագրված են, ըստ երևույթին, հնագույն ձեռագրից և միանգամայն վավերական պետք է համարվեն: Վենետիկի հրատարակության մեջ, ինչպես և բազմաթիվ ձեռագրերում, նույն երկերի սովորական վերնագրերն են՝ «Ստորոգութիւնք Արիստոտէլի թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւիթ» (Վենետիկ, էջ 409) և Ստորոգութեանց մեկնութեան վերջում (էջ 458)՝ «Կատարեցաւ տաան Ստորոգութիւնան ասացեալ յեոամնծէն յԱրիստոտէլէ, որ ասի ըստ յունարէն ձայնի Կատեդորիաս, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւիթ Ներգինացւոյ», Պերիարմենիաս կամ Յաղագս մեկնութեան գրոց մեկնութեան սկզբում (էջ 487)՝ «Պերիարմենիաս Արիստոտէլի թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւիթ»:

Որ բոլոր այս վերնագրերը հետագա ժամանակներում են կազմված, այդ երևում է նույն մեկնութիւնների հնագույն հայ ձեռագրերից: Էջմիածնի մատենադարանի համար 1943 ձեռագրում, որը գրված է 1255 թվին՝ Ստորոգութեանց մեկնու-

[1] Տե՛ս Հ[այր] Հ. Տաչյան, Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, էջ 389–393:

թյունն ունի հետևյալ վերնագրերը. «Ստորոգութիւնք Արիստոտէլի որ կոչի յունարէն Կատիգորիա» (Լ 1ա), իսկ Պերիարմենիաս գրոց մեկնության վերնագիրն է՝ «Յաղագս մեկնութեան, որ կոչի Պերիարմենիաս, ասացեալ Արիստոտէլի» (Լ 141ա): Այս վերջին վերնագիրը պարզ կարդացվում է, սակայն մի նոր գրիչ հետագա ժամանակներում հին վերնագրի վրա նոտր գրով և ուրիշ թանաքով գրել է սովորական նորագույն վերնագիրը: «Սկիզբն եւ նախադասութիւն (?) գրոցն, որ ասի ըստ յունաց Պերիարմենիաս եւ հայերէն Յաղագս մեկնութեան, արտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթայ Ներգինացւոյ» (Լ 141ա): Էջմիածնի մատենադարանի 1275 թվի համար 1889 ձեռագիրը, համապատասխան վերոհիշյալ թիվ 1943 ձեռագրին՝ Ստորոգութեանց մեկնության վերնագրում նույնպես չի հիշատակում Դավթին, որպես մեկնության հեղինակ: Թիվ 1889 ձեռագիրն ունի Ստորոգութեանց մեկնության նույն վերնագիրը, ինչ որ թիվ 1943 ձեռագիրը. «Ստորոգութիւնք Արիստոտէլի. կոչի յունարէն Կատիգօրիա (?)» (Լ 181ա):

Էջմիածնի մատենադարանի թիվ 1889 և 1943 ձեռագրերը, որքան ինձ հայտնի է, Դավթին վերագրվող Ստորոգութեանց մեկնության հնագույն ձեռագրերն են, և խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ ձեռագրերի վերնագրում բնավ չի հիշվում Դավիթ Ներգինացու անունը, որը նորագույն ձեռագրերում միայն համարվում է «թարգման եւ մեկնիչ» Ստորոգութեանց ու Պերիարմենիասի:

Հովհաննես Որոտնեցին Ստորոգութեանց ու Պերիարմենիաս գրոց իր լուծմունքներում նույն մեկնություններից հաճախ օգտվում է ու ընդարձակ հատվածներ քաղում, բայց նա ևս այդ երկերը Դավիթ Ներգինացուն չի վերագրում, այլ համարում է անհայտ մեկնիչի աշխատություն, և անորոշ կերպով մատնացույց է անում իր աղբյուրը՝ «զոր Հայտնի մեկնիչն», «որպէս մեկնիչդ» և այլ նման դարձվածքներով (տե՛ս Էջմիածնի մատենադարանի թիվ 1834 ձեռագիրը):

Այս բոլորից երևում է, որ Ստորոգութեանց ու Պերիարմենիասի մեկնությունների Դավիթ Ներգինացուն վերագրելը պետք է համարել հետագա ժամանակների ենթադրություն:

§ 26. **Հովհաննես Որոտնեցու վկայությունները Նոմնլախոս մեկնիչի մասին:** — *Հովհաննես Որոտնեցու Արիստոտելի Ստորոգութեանց լուծմունքում*[1] *հիշվում է ոմն Նոմնլախոս մեկնիչը, որին վերագրվում են հետևյալ լուսաբանությունները փաղանուն և հարանուն խոսքերի մասին.*

ա. «Իսկ վասն էր դհոմանունս նախ դասէ քան զփաղանուն՝ այս վասն երեք պատճառի: Նախ զի ի թիւս միակն նախ է քան զերկնականն, իսկ հոմանուն նմանի միակի, զի միայն անուամբ է հաղորդեալ: Իսկ փաղանունն է երկակի, զի անուամբ եւ իրաւք է հաղորդեալ: Երկրորդ՝ զի հոմանունն առաւել պարզ է վասն միութեանն, իսկ փաղանունն է բազադրեալ. վասն որոյ երկրորդ դասեցաւ. այս ըստ Նոմնլախասւոյն...»:

բ. «Նախ զի հոմանունն, որ նմաննեցաւ միակին՝ առաջին եղաւ, իսկ փաղանունն, որ է երկեակ՝ երկրորդ եղաւ: Իսկ յարանունն է ըստ Օլոմպիոդորոսին ի չորից, որպէս ասացաք, եւ ըստ Նոմնլախասւոյն է յերից. յիրաւի ապա ի չետոյ դասեցաւ քան զնոսա»:

Այս հատվածներից առաջինը մեծ նմանություն ունի Ամնլախոսի Ստորոգութեանց լուծմունքի սկզբի հետևյալ տողերի հետ, որ Վիեննայի թիվ 112 ձեռագրից քաղվածորեն առաջ է բերել հ[այր] Հ. Տաշյանն իր հրատարակած Յուցակում, էջ 389. «Իսկ նախադասի հոմանութիւնն սակս պարզութեան, իսկ բազադրեալքն յերկրորդէն՝ յորոց բազադրին, ապա ուրեմն առաջինք են պարզքն բազադրեցելոցն մեկնակք»:

Երկրորդ հատվածի վկայությունը ևս համապատասխանում է Ամնլախոսի նույն Լուծմունքին, որովհետև իրավ որ Ամնլախոսը հարանվանությունը սահմանում էր երից, իբր «կցորդութիւն անուան եւ իրաց ըստ փոխաձեւութեան յանկական փաղաւորութեանցն»[2]*:*

Հովհաննես Որոտնեցու գրվածքում Նոմնլախոսին վերագրված վկայությունների աղբյուրն է ըստ երևույթին Ամնլախոսի Լուծմունքը և նրա հիշատակած Նոմնլախոս կամ Նոմնլախոս անունը պետք է ամենայն հավանությամբ ընդունել,

---

[1] «Եռամեծի Յովհաննու Հայոց փիլիսոփայի եւ վարդապետի ի հաւաքումն համառօտ վերծանութեան Ստորոգութեանցն Արիստոտէլի ի Գրիգորէ աշակերտէ» (էջմ. մատեն., ձեռագ. թիվ 1834):

[2] Տե՛ս «Մեկնութիւն Ստորոգութեանց», Վեննատիկ, 1833, էջ 415:

որպես Ամելախոս անվան համապատասխանող ադճատ ընթերցված:

Եթե մեր այս դիտողությունները Նոմելախոսի անձի մասին ուղիղ լինեն, այդ դեպքում պետք է եզրակացնել, որ Հովհաննես Որոտնեցին ևս, ինչպես Վիեննայի թիվ 112 ձեռագիրը, Դավիթ Ներգինացուն վերագրված Ստորոգութեանց մեկնությունը համարել է Ամելախոսի աշխատություն:

§ 27. **Դավիթ Անհաղթին վերագրվող Ստորոգութեանց և Ցաղագս մեկնութեան գրոց Հեղինակի «Ամելախոյս» անունը աղճատում է հունական Ἰάμβλιχος անվան:** – *Վերոհիշյալ դիտողությունները, ինչպես և այն պատճառաբանությունները, որոնք առաջ էի բերել «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» աշխատության մեջ, պարզ ու որոշ ցույց են տալիս, որ Արիստոտելի «Ցաղագս մեկնութեան» ու «Ստորոգութեանց» մեկնությունները, որոնք նորագույն ձեռագրերում վերագրվել են սխալ ենթադրությամբ Դավիթ Ներգինացուն, Ամելախոս և Անտոնիոս Էրմիս մեկնիչների աշխատություններն են:*

Մնում է այժմ պարզել, թե ո՛վքեր են այդ մեկնիչները, որոնք հիշատակված են Վիեննայի թիվ 112 ձեռագրում:

Ամելախոս անունը հանդիպում է հայ մատենագրության մեջ նաև «Լուծմունք Պրոկղի Դիադոխոսի անուաննեցելոյ աստուածաբանութենանց» երկում, որ 1248 թվին վրացերենից թարգմանել է հայերենի Սիմեոն կրոնավորը: Այդ Լուծմունքը վրացական ավանդությունը համարում է Հովհաննես Պետրիցոնելու գործ, իսկ հայ ձեռագրերի վերնագրի համաձայն նույն Լուծմունքը վերագրվում է ոմն «Ամելաւխաւս» իմաստասիրին: Սույն Լուծմունքի և Ստորոգութեանց ու Պերիարմենիաս գրոց մեկնիչները, ինչպես կտեսնենք տարբեր անձնավորություններ են, բայց հետաքրքիր է ու ուշադրության արժանի, որ այդ հեղինակների անունը միակերպ է աղճատված երկու դեպքումն էլ: Պրոկղի Լուծմունքի ձեռագրերում «Ամելաւխաւս» անվան համար կան և ուրիշ ընթերցվածներ՝ «Հոմելախոս, Յոմիլախոս, Ոմիլախոս, Ամելախոս, Յոմելախոս եւ Յամելախոս»[1]*:*

Ինչպես Վիեննայի թիվ 112 ձեռագրի «Ամելախոյս» կամ «Ամելաւխոյս» ընթերցվածը, նույնպես և բոլոր առաջ բերված ըն-

[1] Տե՛ս [Հայր] Հ. Տաչյան, Պրոկղի Դիատոխոսի չադկապք աստուածարանականք, էջ 33-34 և H. Марр, Иоанн Петрицкий, էջ 14 և 32:

թերցվածները, պարզապես սղհատումն են ինչ որ անվան, որն անսովոր և անծանոթ է եղել հայ գրիչների համար:

Հ(այր) Հ. Տաչյանը կարծում է, որ վերոհիշյալ ընթերցվածները պետք է ենթադրել հունական Ἰάμβλιχος կամ Ἀμφίλοχος անվան սղհատումներ: Ինձ թվում է՝ սակայն, որ այդ ընթերցվածները սղհատումն են, համանարար, Ἰάμβλιχος և ո՛չ Ἀμφίλοχος անվան, որովհետև ընթերցվածներից չատերն ունեն սկզբում Յ տառը և «Յոմնեպսոս», «Յոմիպսոս», «Յոմնեպսոս» և «Հոմնեպսոս» ընթերցվածներն անհամանական է ենթադրել Ἀμφίλοχος անվան, սղհատումներ:

Բացի այդ՝ Արիստոտելի մեկնիչների շարքում Ἀμφίλοχος անունով մեկնիչ ոչ մի տեղ չկա հիշատակված, իսկ Յամբղիքոս իմաստասերի մասին կտեսնենք, կան վկայություններ, որ նա հիրավի գրել է Պղատոնի ու Արիստոտելի երկերի մեկնություններ:

§ 28. **Յամբղիքոսի հիշատակությունը Դավթի ու Էլիասի մեկնություններում:** — Դավթի ու Էլիասի մեկնություններում ի թիվս այլ մեկնիչների հիշվում է նաև Յամբղիքոսը, որպես Արիստոտելի Ստորոգութենանց մեկնիչ:

Էլիասին ընծայված Ստորոգութենանց մեկնությունից դիտենք, որ Յամբղիքոսը՝ հակառակ Ադեքսանդրոս, Պորփյուրիոս և Հերմինոս մեկնիչների տեսությանց՝ պնդել է, որ Արիստոտելի «Ստորոգութիւնք» երկը վերաբերում է թե՛ ձայնից, թե՛ մտածությանց և թե՛ իրողությանց քննությանը[1]: Նույն կերպ նա բացատրում էր Հոմանոն, վիզանոն և Հարանոն իմաստասիրական դադափարների նշանակությունը, ինչպես երևում է Էլիասի հետևյալ հատվածից[2]:

«Յետ Հոմանոնց եւ վիզանոնցն եւ յարանոնցն, որոց իւրաքանչիւր ոք յայտ առնէր զՅամպղիքեան դիտաւորութիւնն յադազս ձայնից գոլ պարոլից՝ նշանակաւոր զպարտ իրողութենան ընդ մէջ պարոլից մտածութեանց՝ զայ Արիստոտէլ եւ ի նոյն ինքն ի Ստորոգութիւնսն»:

Նորպղատոնական Դավթի Ներածութեան մեկնությունը ևս

---

[1] Տե՛ս Elias, Ստորոգութենանց մեկնության հունարեն բնագիրը, էջ 129–130 և 136, 29–33, նաև Էլիասի հայերեն թարգմանությունը, էջ 43, 27–44, 10:

[2] Էլիաս, Մեկնութիւն Ստորոգութենանց, էջ 57, 4–8, հունարեն բնագիրը, էջ 144, 31 – 145, 3:

Յամբղիքոսի մասին ունի հետևյալ վկայությունը՝

«Ուսեալք յաղագս Պորփիւրի թէ ուստի՞, ուստի Յամբղիքոս, յաղագս որոյ ասացեալ Պլոթինոս, թէ աստուածային ասորին եւ բազմուսումն փիլիսիկեցին: Բազմուսումն փիլիսիկեցի զՊորփիւրիոս ասելով, եւ աստուածային ասորի զՅամբղիքոս, վասն զի աստուածարանութեան միշտ պարապէր»[1]:

Իսկ Արիստոտելի Վերլուծականքի մեկնության հայերեն թարգմանությունը վկայում է, որ Հովհաննոս կայսեր ժամանակակից Մաթսիմոս Ուռհայեցին աշակերտ էր «Ամբիքոսի»[2]:

Ինձ թվում է, որ Էլիասի Ստորոգութեանց մեկնության մեջ հիշված Յամբղիքոսը նույն հռչակավոր Յամբղիքոս ասորի փիլիսոփան է, որին Դավիթն անվանում է «աստուածային», իսկ Վերլուծականքի մեկնությունը համարում է Մաթսիմոս Ուռհայեցու ուսուցիչ:

Արիստոտելի Ստորոգութեանց և Պէրիարմենիաս գրոց մեկնությունների հեղինակ «Ամելախոսը», որի անունը, ինչպես ասացինք, աղճատումն է «Յամբղիքոս» անվան, կարծում եմ, որ նույնպես հռչակավոր այդ Յամբղիքոսն է, որն ըստ վերոհիշյալ վկայությունների, հայտնի է եղել, որպես ականավոր մեկնիչ Արիստոտելի երկերի: Էլիասը մատնանիշ է անում նույնիսկ նրա մեկնական ուղղության հիմնական թերությունը և պատվիրում իր աշակերտներին՝ «ո՛չ կրակից լինել հերձուածոյ ումեք, որպես Յամպղիքոսն եղեւ. քանզի սա կրակից եղեալ Պղատոնի՝ չնորհէ Արիստոտէլի ոչ ընդդէմ ասել Պղատոնի վասն տեսակացն, այլ մանաւանդ ձայնակցել»[3]:

§ 29. Որ «Ամելախոսը» և Էլիասի հիշատակած «Յամբղիքոսը» միևնույն անձն են, այդ երևում է նաև Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոց մեկնությունների բովանդակությունից: – *Վերոհիշյալ մեր ննջադրությունը, որ Էլիասի հիշատակած Յամբղիքոս մեկնիչը և Դավիթ Անհաղթին վերագրված Ստորոգութեանց ու Պերիարմենիաս գրոց մեկնությունների հեղինակ «Ամելախոսը» միևնույն անձնավորությունն են, հաստատվում է «Ամելախոսի» մեկնությունների բովանդակության քննությամբ:*

Յամբղիքոսը չէր ընդունում, ինչպես ասացինք, Աղեքսանդրոս

---

[1] Դաւիթ, Վերլուծութիւն Պորփյուրի, էջ 262:

[2] Մեկն. ի Վերլուծ., էջ 586:

[3] Մեկն. Ստոր., էջ 28:

Ափրոդիսեցու, Պորփյուրիոս և Հերմինոս մեկնիչների կարծիքը Արիստոտելի Ստորոգութեանց «դիտաւորութեան» մասին: Ագեքսանդրոսը Ստորոգութեանց «դիտաւորութիւնը» բացատրում էր, իրը «ձայնից» միայն քննություն, Պորփյուրիոսը՝ «մտածութեանց», իսկ Հերմինոսը՝ «իրողութեանց»: Յամբղիքոսը, հակառակ սրանց, կարծում էր, որ Ստորոգութեանց «դիտաւորութիւնն» է և «ձայնից» և «մտածութեանց» և «իրողութեանց» քննութիւնը[1]:

Այդ՝ «Ամելախոյսի» Ստորոգութեանց Լուծմունքը սկզբից մինչև վերջը հավատարիմ է մնում Յամբղիքոսի այդ սկզբունքին և «Ամելախոյսը» մեկնում է Արիստոտելի երկը, նկատի ունենալով հենց նույն այդ տեսակետը:

Դավթի ու Էլիասի երկերում բազմաթիվ վկայություններ կան թե՛ հին, և թե՛ իրենց ժամանակակից մեկնիչների երկերից, սակայն «Ամելախոյսի» Ստորոգութեանց և Պերիարմենիաս գրոց մեկնութիւններում հիշվում են միայն մի ոմն Դեմոս, որը հավանարար Սուիդասի հիշատակած քերական Եվդեմոսն է (երրորդ դարի հեղինակ Ք. Հ.) և հռչակավոր Ագեքսանդրոս Ափրոդիսեցին, որն ապրել է երկրորդ դարի վերջում և երրորդ դարի սկզբում Քրիստոսից հետո: «Ամելախոյսի» մեկնութիւններում չենք հանդիպում քաղվածքների ու վկայությունների Ագեքսանդրյան դպրոցի նորագույն մեկնիչների երկերից: Այս հանգամանքը կարող է անչուշտ նշան համարվել այդ մեկնութիւնների հնության: Եթե «Ամելախոյսը» Պորփյուրիոսի աշակերտ Յամբղիքոսն է, այդ դեպքում ինքնըստինքյան հասկանալի է, թե ինչու Ստորոգութեանց և Պերիարմենիաս գրոց մեկնութիւններում, որոնք գրված պիտի լինին չորրորդ դարի սկզբներում, չէին կարող հիշվել հինգերորդ դարի մեկնիչներ:

Նշանավոր Յամբղիքոս ասորին, որ Պորփյուրիոսի աշակերտն էր Հռոմում, շատ հավանական է, որ գրած լիներ արիստոտելյան երկերի մեկնութիւններ, ինչպես ենթադրում է Վ. Վինդելբանդը

---

[1] Փոխանակ «ձայնից, մտածութեանց եւ իրողութեանց» տերմինների Ամելախոսի թարգմանը գործ է ածում «ձայն, իմացումն եւ իր»: Լեզվի այս տարբերության խնդիրը հատուկ քննության ենք առնելու սույն աշխատության հաջորդ մասում:

Ափրոդիսեցու, Պորփյուրիոս և Հերմինոս մեկնիչների կարծիքը Արիստոտելի Ստորոգութեանց «դիտաւորութեան» մասին: Աղեքսանդրոսը Ստորոգութեանց «դիտաւորութիւնը» բացատրում էր, իբր «ձայնից» միայն բննութիւն, Պորփյուրիոսը՝ «մտածութեանց», իսկ Հերմինոսը՝ «իրողութեանց»: Յամբղիքոսը, հակառակ սրանց, կարծում էր, որ Ստորոգութեանց «դիտաւորութիւնն» է և «ձայնից» և «մտածութեանց» և «իրողութեանց» բննութիւնը[1]:

Արդ՝ «Ամելախոյսի» Ստորոգութեանց Լուծմունքը սկզբից մինչև վերջը հավատարիմ է մնում Յամբղիքոսի այդ սկզբունքին և «Ամելախոյսը» մեկնում է Արիստոտելի երկը, նկատի ունենալով հենց նույն այդ տեսակետը:

Դավթի ու Էլիասի երկերում բազմաթիվ վկայութիւններ կան թե՛ հին, և թե՛ իրենց ժամանակակից մեկնիչների երկերից, սակայն «Ամելախոյսի» Ստորոգութեանց և Պերիարմենիաս գրոց մեկնութիւններում հիշվում են միայն մի ոմն Դեմոս, որը հավանարար Սուիդասի հիշատակած քերական Եվդեմոսն է (երրորդ դարի հեղինակ Ք. հ.) և հռչակավոր Ափրոդիսեցին, որն ապրել է երկրորդ դարի վերջում և երրորդ դարի սկզբում Քրիստոսից հետո: «Ամելախոյսի» մեկնութիւններում չենք հանդիպում քաղվածքների ու վկայութիւնների Աղեքսանդրյան դպրոցի նորագույն մեկնիչների երկերից: Այս հանգամանքը կարող է անուշադ նկատի համարվել այդ մեկնութիւնների հնության: Եթե «Ամելախոյսը» Պորփյուրիոսի աշակերտ Յամբղիքոսն է, այդ դեպքում ինքնըստինքյան հասկանալի է, թե ինչու Ստորոգութեանց և Պերիարմենիաս գրոց մեկնութիւններում, որոնք գրված պիտի լինին չորրորդ դարի սկզբներում, չեն կարող հիշվել հինգերորդ դարի մեկնիչներ:

Նշանավոր Յամբղիքոս ասորին, որ Պորփյուրիոսի աշակերտն էր Հռոմում, շատ հավանական է, որ գրած լիներ արիստոտելյան երկերի մեկնութիւններ, ինչպես ենթադրում է Վ. Վինդելբանդը

---

[1] Փոխանակ «ձայնից, մտածութեանց եւ իրողութեանց» տերմինների Ամելախոսի թարգմանը գործ է ածում «ձայն, իմացումն եւ իր»: Լեզվի այս տարբերութեան խնդիրը հատուկ քննութեան ենք առնելու սույն աշխատութեան հաջորդ մասում:

իր «Հին փիլիսոփայության պատմության» մեջ[1]*:*

Urbinas 35 հունական ձեռագրում, որի մեջ հավաքված կան բազմածքներ դանագան մեկնիչների երկերից, գտնվում է մի հատված Յամբղիքոսից, որ հիշում է Ա. Բուսանն էլիասի հունարեն հրատարակության առաջարանում (էջ 21): «Maximam autem admirationem mihi movit,— ասում է Բուսանն,— Jamblichi nomen expositioni quae est de substantia praepositum (f. 28ᵛ): ἐκ τῶν ἰαμβλίχου. ἀπορήσειεν ἄν τις. πῶς οὐχὶ καὶ ἄλλοις πλείοσιν ὑπάρχει τοῦτο τὸ ἴδιον κτλ. Sed accuratius quaerenti mihi persuasum est illam notam omni fide carere. Nam quae sequitur interpretatio ex Simplicii commentario videtur excerpta esse eodemque ex fonte Jamblichi nomen haustum»:

Ա. Բուսանն այդ հատվածը վերագրում է Սիմպլիցիուսին, որովհետև, նրան անհայտ է եղել, նոր այս ենթադրությունը, որ Ստորոգութենանց և Պերիարմենիաս գրոց մեկնություններ կարող էր գրած լինել նաև Յամբղիքոսը: Սակայն «Ամելախոյս»-Յամբղիքոսի մասին վերոհիշյալ մեր դատողությունները, որոնք հիմնված են իմաստասիրական հայ ձեռագրերի վկայությունների վրա, կարող են նոր լուծում տալ Արիստոտելի մեկնիչների վերաբերյալ որոշ խնդիրների, ուստի անհրաժեշտ է քննության առնել նորից հունական ձեռագրերը, որոնք թերևս հնարավորություն տան վերջնականապես պարզելու մեր հարուցած խնդիրը:

Եթե Ստորոգութենանց և Պերիարմենիաս գրոց մեկնիչը Յամբղիքոս ասորին է, պարզ է, որ նրան չի կարելի նույնացնել Պրոկղի Դիադոխոսի լուծմունքի հեղինակ «Ամելիախաս»-ի հետ, որովհետև ինքը Պրոկղը հինգերորդ դարի հեղինակ է:

§ 30. **Մի քանի դիտողություններ «Ամելախոյս»-Յամբղիքոսի մեկնությունների բովանդակության մասին:** — *«Ամելախոյս»-Յամբղիքոսի Ստորոգութենանց և Պերիարմենիաս գրոց Լուծմունքները գրի առնված դասախոսություններ են, ինչպես և նորպղատոնական Դավթի ու էլիասի մեկնությունները: Այդ պարզ երևում է նույն լուծմունքների ներքին բովանդակությունից և գրի առնողի հաճախ կրկնվող խոսքերից, ինչպես՝ «ասացաւ մեզ*

[1] Տե՛ս W. Windelband, Geschichte der alten Philosophie, Zweite Auflage, München, 1894, էջ 223.

յառաջագոյն» (Մեկն. Ստոր., էջ 422), «յաղագս որոյ նայլս ճառելի է» (էջ 431), «ճառեցայի յիւրում տեղւոջ» (էջ 433), «ճառեցաւ մեզ» (Մեկն. Պերիար., էջ 487), «որպէս ունիմք ուսանել» (էջ 500), «յառաջագոյն ասացան մեզ պատճառք» (էջ 505), «որպէս ուսաք» (էջ 521) և այլն:

Լուծմունքների հեղինակը հիշում է Արիստոտելի մյուս երկերից՝ «Բնական լսաւդութիւնք» (Φυσικὴ ἀκρόασις), «Յետ բնականացն» (Μετὰ τὰ φυσικά), «Յաղագս անձին» (Περὶ ψυχῆς), «Բնական տեսութիւն» (Հավանաբար՝ Τὰ φυσικά), Տրամաբանականացն դիրք (Τὰ διαλογικά) և Ընտելական իրողութիւնք (?):

Ուշադրության արժանի է, որ «Ամելախոյս» - Յամրղիքոսը հակաճառում է երբեմն պղատոնական մեկնիչներին և Պղատոնին, ինչպես այդ երևում է հետևյալ հատվածներից:

Ստոր. Մեկն., Հաղագս քանակի, պր. ա[1]

Իսկ ոմանք ի Պղատոնականացն կամին ասել, եթէ վասն դի՝ հարկ է յամենայն գոյացութիւն ընդունել զքանակն ոչ ըստ չափոյ միայն, երբ թէ մեծ կամ փոքր, այլ յաւէտ ըստ թուոյ, դի կամ մի է կամ բազում: Ա՛ւ որս ասեմք, եթէ ձեզ իսկ հակաճառութիւնս կազմէք, քանզի ըստ Պիթագորականացն ձեւացեալք ասէք թէ մինն ոչ է թիւ, այլ յաւէտ սկիզբն թուոյ. իսկ զոր ոչ թիւ ասացիք՝ այժմ քանակ ասէք և թիւ նշանական, որպէս թէ ըստ ձերում բանակռուութեանդ եղիցի միակն միանգամայն թիւ և՝ ոչ թիւ որ է անհնար:

Մեկն. Պերիար., էջ 507 (Վենետիկ, 1833)

Ա՛ւ Պղատոնի ինձ թուի ի տեղւոջս կոխ, քանզի որպէս նա կամի՝ ընութեամբ բան ի մեզ է, վասն դի զործի է բանական զօրութեան. որպէս է ակն՝ տեսութեան զործի. և այլ ինչ զգայարան՝ իւրաքանչիւրոցն. բայց սուտ ասացեալն. քանզի առնու ներգործութեամբ և զօրութեամբ՝ իրրև զնոյն:

Այս հատվածները, որոնց մեջ արտահայտված են «Ամելախոյսի» ուրույն հայացքները, կարող են հատուկ քննության հունաց իմաստասիրական մատենագրության աղբյուրների օգնությամբ:

---

[1] Տե՛ս էջմիածնի մատենադարանի ձեռագր. թիվ 1889 կամ 1943:

§ 31. **Վիեննայի թիվ 112 ձեռագրում հիշված «Անտոնիոս էրմիսը», կարելի է ենթադրել, որ Յամբղիքոսի ուսուցիչ Անատոլիոսն է:** — *Վիեննայի Մխիթարյանց թիվ 112 ձեռագրում, ինչպես վերը հիշեցինք, Ստորոգութեանց մեկնության մեծագույն մասը, առնչի մեկնությունից սկսած մինչև վերջը, համարվում է «Անտոնիոս էրմիսի» աշխատություն: Այդ ձեռագրում «Յաղագս առնչի» մեկնությունն ունի վերնագիր՝ «Անտոնիոս էրմիս է ասացեալ դիալեկտիանոս», «Յաղագս որակի եւ որակութեան» մեկնության վերնագրում նույնպես հիշվում է, որ «Անտոնիոս էրմիս թարգմանէ»:*

«Թարգման» և «թարգմանել» պետք է հասկանալ ըստ երևույթին «մեկնիչ» և «մեկնել» իմաստով:

Արդ՝ եթե Ստորոգութեանց մեկնության վերոհիշյալ մասերի մեկնիչն «Անտոնիոս էրմիսն» է, հարց է ծագում, թե արդյոք չի՛ կարելի պարզել նրա անձնավորությունը, ի նկատի ունենալով, որ նա ևս պետք է լինի «Ամելախոյս»-Յամբղիքոսի ժամանակակից մեկնիչներից:

Որքան ինձ հայտնի է, Անտոնիոս անունով մեկնիչ իմաստասիրական մատենագրության մեջ ծանոթ չէ ո՛չ Յամբղիքոսի ժամանակ, ո՛չ էլ հետո: Աչքի առաջ ունենալով, որ Յամբղիքոս անունն աղճատվել է հայերենում և ստացվել «Ամելախոյս» աղճատ անունը, նույնը թերևս կարելի լինի ենթադրել և Անտոնիոս անվան նկատմամբ:

Այդ դեպքում, թույլ ենք տալիս մեզ ենթադրելու, որ Անտոնիոս կարող է հայերենում աղճատումն լինել Անատոլիոս անվան, իսկ Անատոլիոսը, ինչպես հայտնի է, Յամբղիքոս ասորու ուսուցիչն էր:

Այս ենթադրությունը կարող է թվալ համարձակ և կարոտ դրական ապացույցների:

Այդպիսի ապացույցներ մենք չունենք: Սակայն եթե ուղիղ համարվի մեր ենթադրությունը, որ «Ամելախոյսը» Յամբղիքոս ասորին է, այդ դեպքում՝ առանց այլ ապացույցների ևս ընդունելի պիտի լինի և մեր այս ենթադրությունը, որ Յամբղիքոսի ժամանակակից, միևնույն դպրոցի ու խմբի մեկնիչ, «Անտոնիոս էրմիսը» ամենայն հավանությամբ կարող է լինել հենց նրա ուսուցիչ Անատոլիոսը, որի անունն աղճատված է հայ ձեռագրերում:

Որևէ ուրիչ վկայության կամ ակնարկ այս խնդրի լուսաբանության համար պետք է որոնել եվրոպական գրադարան-

ներում գտնվող հունական փիլիսոփայության վերարերյալ ձեռագրերում: Եվ եթե գտնվի այդպիսի մի վկայություն ու հաստատվեն վերոհիշյալ մեր ենթադրություններն, այդ դեպքում լուծված կլինի Արիստոտելի մեկնիչների նկատմամբ կարևոր մի խնդիր և Դավիթ Անհաղթին վերագրված Ստորոգութեանց և Պերիարմենիաս գրոց մեկնությունները, որ թարգմանված են հունարենից, կկազմեն Անատոլիոս-Յամբղիքյան մեկնությունների հատուկ ու նոր մի խումբ՝ գրված չորրորդ դարում Ք. հ.:

Դրանց հայերեն թարգմանությունը, ինչպես տեսնում ենք միանգամայն տարբեր է Դավթի ու Էլիասի թարգմանություններից և արտադրություն է հունարան տարբեր ու առանձնահատուկ դպրոցի:

§ 32. **Նյութի դասավորությունը և մեկնության ձևն ու կարգն Ամելախոյս-Յամբղիքոսի մեկնություններում:** — *Ամելախոյս-Յամբղիքոսի մեկնություններում նյութի դասավորությունը և մեկնության ձևն ու կարգը բոլորովին այլ են, քան Էլիասի ու Դավթի մեկնություններում:*

Օլիմպիոդորոս-Էլիասի խմբի մեկնություններում Պորփյուրի ու Արիստոտելի բնագիրը մեկնվում է «պարաֆրազների» ձևով, այսինքն՝ բնագրից առաջ են բերվում առանձին նախադասություններ, որոնք կարոտ են բացատրության, և մեկնվում: Այս կարգի մեկնություններում շատ հաճախ դժվար է լինում որոշել, թե ո՛րտեղ է վերջանում Արիստոտելի բնագիրը և որտեղ սկսում բնագիրը: Այս ձևով կազմված են Ալֆարաբիի միջնադարյան մեկնությունները:

«Ամելախոյս»-Յամբղիքոսի լուծմունքները բոլորովին այլ ձևով են կազմված: Արիստոտելի բնագիրն այստեղ բաժանված է պրակների և ամեն մի պրակ առանձին առաջ է բերվում in extenso «բան» վերնագրի տակ, իսկ յուրաքանչյուր պրակի համապատասխան քննությունը, բաժանված Արիստոտելի բնագրից, առաջ է բերվում «մեկնության» վերնագրի տակ:

Մեկնական այս ձևը միջնադարյան մեկնիչներից գործ է ածել Իբն-Ռոչդը (Ավեռոես):

Էռնեստ Ռենանի կարծիքով[1], մեկնական այս վերջին ձևը գործածական է Ղուրանի մեկնիչների մոտ և իբր թե սրանցից է փոխ

[1] Տե՛ս «Жизи и произведении Аверроэса», §§ 43–44 (Собрание сочинений Э. Ренана. Том VIII, Киев, 1902).

առել այդ ձևը Իրն-Ռոչտը: Ինձ թվում է, որ է. Ռենանի այս ենթադրությունը հիմնավոր չէ: Մեկնական այդ ձևի գործածությունը «Ամելախաս»-Յամրղիքոսի լուծմունքներում պարզ մի ապացույց է, որ մեկնական այդ ձևը, հավանաբար, իրենք Ղուրանի մեկնիչները փոխ են առել Արիստոտելի հնագույն մեկնություններից:

Համենայն դեպս՝ Դավթի ու Էլիասի և «Ամելախոյս»-Յամրղիքոսի մեկնությունների արտաբին ձևն ու եղանակը, որ իրարից հիմնովին տարբեր են, պարզ մի նշան են դարձել, որ այդ մեկնություններն իմաստասիրական տարբեր դպրոցների ու հավանարար տարբեր ժամանակների գործ են:

Գ. ՀՈՒՆԱԲԱՆ ՀՆԱԳՈՒՑՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵՔ ՏԱՐԲԵՐ ՇՐՋԱՆՆԵՐԸ

§ 33. **Իմաստասիրական հնագույն մեկնությունները թարգմանված են հունարենից:** — *Հայոց մատենագրական ավանդությունը, ինչպես տեսանք, իմաստասիրական գրեթե բոլոր մեկնությունները համարել է Դավիթ Անհաղթ հայ փիլիսոփայի աշխատություն: Մատենագրական այդ ավանդությանը հետևելով, հայագետ բանասերները ևս ընդունում էին, որ այդ երկերը հինգերորդ դարում հայերեն գրված աշխատություններ են և ո՛չ թե թարգմանություն հունարենից:*

Այդ սխալ ու չափոք ենթադրությունը եղել է գլխավոր պատճառը, որ իմաստասիրական մեկնությունների հայերեն թարգմանության խնդիրը ո՛չ միայն չի ուսումնասիրվել, այլ նույն ինքն այդ խնդիրը երկար ժամանակ կասկածելի ու վիճելի համարվել ավանդապահ բանասերների կողմից:

Որ իմաստասիրական հնագույն հայ մեկնությունները բոլորն էլ թարգմանված են հունարենից, այդ այլևս վիճելի մի ենթադրություն չէ:

Դավիթ Անհաղթին վերարերյալ առասպելյալ ավանդությունը դրական փաստերով մերժվելուց հետո, այդ խնդիրը կարելի է համարել վերջնականապես ապացուցված ու լուծված:

Իմաստասիրական հնագույն մեկնությունները, ինչպես տեսանք, զանազան հեղինակների հունարեն գրված դասախոսություններ են: Այդ հեղինակներն են՝ Օլիմպիոդորոս-Էլիասը, նորպլատոնական Դավիթը, Յամրղիքոսը և հավանարար նաև Անատոլիոսը:

Ջննելով դրական և ճշգրիտ տեղեկություններ դրանց մեկ-

նությունների հայ թարգմանիչների մասին, հայ բանասիրությունն անկարող է գտնվել որոշելու ո՛չ միայն այդ երկերի թարգմանման ճիշտ տարեթիվը, այլ անգամ դարաշրջանը:

Այսքանը միայն պարզ է, որ Դավիթ ու Օլիմպիոդորոս-Էլիասի խմբի մեկնությունները չեն կարող հորինված, ուրեմն և թարգմանված լինել հինգերորդ դարում, ինչպես այդ վկայում է մեր մատենագրական ավանդությունը: Այդ պարզ ու անվիճելի է, որովհետև այդ մեկնությունները վե՛ցերորդ դարի մեկնիչների աշխատություն են:

§ 34. **Ուսումնասիրության ի՞նչ եղանակով հնարավոր պիտի լինի հետզհետե որոշել հունաբան հնագույն թարգմանությունների ժամանակը: —** *Հայ հնագույն մատենագրության հաջորդական զարգացման և ժամանակագրության հիմնական խնդիրը մինչև այժմ մնում է մութ ու անորոշ: Մինչև այժմ չի հաջողվել նաև որոշել հունարան հնագույն թարգմանությունների ժամանակը:*

Հայկական ավանդությանը հետևող բանասերները այդ թարգմանությունների ժամանակը համարում են հինգերորդ դարի վերջը, չատերը նույն թարգմանությունների ժամանակը տանում են մինչև ութերորդ, իսկ ոմանք՝ վեցերորդ կամ յոթներորդ դարը:

Մեծ մասամբ այդ ենթադրություններն ավելի անձնական տրամադրության ու քմահաճույքի վրա են հիմնված, քան լուրջ ու դրական հիմքերի: Հայ մատենագրական ավանդությունը, որ քննության է ենթարկել Դավիթ Անհաղթի խնդրին նվիրված աշխատության մեջ, բացի հետնադարյան առասպելախառն հերյուրանքներից, չունի հունարան մատենագրության մասին դրական ու հաստատուն ցուցումներ:

Հայ մատենագրության հիմնական այս խնդիրը լուսաբանելու համար անհրաժեշտ էր գտնել ուսումնասիրության ուրիշ ուղիներ:

Ինչպես կտեսնենք, այդպիսի հնարավորություններ կան, բայց պահանջում են հունարան թարգմանությունների բովանդակության, լեզվի և ոճականության մանրազնին քննություն և վարժ հմտություն: «Արտաքին գրոց» դանադան երկերի քննությունը լեզվական ու ոճականական տեսակետից պետք է կատարվի ո՛չ միայն ամեն մեկ երկ առանձին, այլև համեմատությամբ մեկը մյուսի հետ: Ուսումնասիրության այդ եղանակով ստացվում են մի շարք կարևոր ու հետաքրքիր հետևություններ, և եթե այդ

ուղղությամբ լինեն նոր և նոր աշխատողներ, կարծում եմ, որ Հունարան դպրոցի գաղտնիքը վերջնականապես կպարզվի:

Հունարան հնագույն թարգմանությունների ժամանակը որոշելու համար սույն աշխատության մեջ քննության եմ առել լեզվական ու բերականական տեսակետից ո՛չ միայն Արիստոտելի երկերի ու Պորփյուրի Ներածության մեկնությունները, այլև Փիլոնը, Պատոյից գիրքը, Դիոնիսիոս Թրակացու Քերականությունը, Նոննոսը, Իրեննեոսը, «Գիրք Թղթոց»-ի հնագույն մասի հունարան թղթերը և Տիմոթեոս Կուղի Հակաճառությունը:

Հարևանցի կերպով քննել եմ նաև Խոսրովիկ թարգմանչի և Անանիա Շիրակացու երկասիրությունները ապացուցանելու համար, որ իմաստասիրական երկերի, նեթե ո՛չ բոլորը, գոնե մեծագույն մասը՝ թարգմանված են նրանցից առաջ:

§ 35. **Իմաստասիրական թարգմանությունների հետքերը Խոսրովիկ թարգմանչի կրոնա-դավանաբանական գրվածքներում:** — *Ութերորդ դարի հայ մատենագիրներից Խոսրովիկ թարգմանչի կրոնա-դավանաբանական գրվածքները մեծ չափով կրում են հնդկական հելլենական կրթության և Արիստոտելյան իմաստասիրության ազդեցության հետքեր: Այդ ազդեցությունն այնքան ակնհայտ ու անվիճելի է, որ ավելորդ է երկար կանգ առնել այդ խնդրի վրա: Բավական է առաջ բերել բաղմաթիվ վկայություններից միայն մի քանիսը.*

Խոսրովիկ, էջ 39–40[1]

«Զի ընութեան հաւաքումն ի հասարակին ըստ զօրութեան եւեթ է, անուամբ միայն նշանակել, իսկ յատանձնականումն ոչ ըստ զօրութեան, այլ ըստ ներգործութեան եւ արդեամբք երեւել: Վասն որոյ եւ առաջին եւ իսկա-

Ստորոգ. Արիստ., էջ 363[2]

«Գոյացութիւն է, որ իսկական, եւ նախկին, եւ մանաւանդ ասի. որ ոչ զենթակայէ զումեքէ ասի,** եւ ոչ **ննենթակայոջ յումեք է»:

---

[1] «Խոսրովիկ թարգմանիչ և երկասիրությունք նորին», աշխատասիրությամբ Գարեգին վարդապետի Հովսեփյանի, Վաղարշապատ, 1903:

[2] Ստորոգութեանց ընագիրք, Վենետիկ, 1833:

զոյն եւ մանաւանդ զսա անուանեցին զոյացութիւն վկհապոյնքն, եւ յորոց մերքն ընկալան զրանակառնութենանն վարժողութիւն, զի ի սմա զտին եւ ծանեան որպէս զանունն հասարակին, նոյնպէս եւ զբանն»:

Խոսրովիկ, էջ 115–116

*«Զի ամենայն իրի սահման յերից յայսցանէ կատարի, ի մտածութենէ զոյին, եւ ի նոյն ինքն ի զոյին, եւ ի տեսութենէ եւ ի բառէն, որ սահմանէ զիրն, որպէս որ կամիցի զսահման մարդոյն բացայայտել, նախկին յարձակի մտօքն տեսանել զմարդն, եւ զնոյն մտացն տես եւ աչացն առաջի զնէ, եւ ասէ բանիւ զնոյն սահմանէ ասելով՝ **մարդ-կենդանի, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ»**[2]:*

Ստորոգ. մեկն. (Ամելախ.)[1]

«Յիրաւի ուրեմն զանհատ զոյացութիւնն իսկապէս եւ նախկին եւ մանաւանդ ասաց զոյ»:

Էլիաս., մեկն. Ստոր., էջ 83

«Զիա՞րդ ոչ է առաջին եւ իսկական եւ մանաւանդ զոյացութիւն»:

Սահմ. իմաստ., էջ 121

*«Իսկ զինչէն կամ անուամբ ճանաչի մեզ՝ եւ կամ սահմանաւ: Եւ անուամբ յորժամ տեսանելով ինչ ասեմք զի՞նչ է. ասեմք թէ մարդ է: Իսկ սահմանաւ՝ յորժամ ասեմք, **կենդանի բանաւոր մահկանացու՝ մտաց եւ հանճարոյ ընդունակ»:***

Վերոհիշյալ համեմատությունները չեն կարող հաստատել այն մտքով, որ Խոսրովիկն օգտվել է համեմատության առնված նրկերից: Արիստոտելյան իմաստասիրության այն մտքերը, որոնց հանդիպում ենք Խոսրովիկի երկերում, այնքան ընդհանուր ու սովորական են և այնքան հաճախ կրկնված Արիստոտելյան թարգմանություններում, որ սխալ կլիներ այս կամ այն գրվածքը կամ հատվածը համարել նրանց աղբյուր առանց որևէ լուրջ հիմքերի:

Վերոհիշյալ համեմատություններից կարելի է ընդհանուր կերպով միայն եզրակացնել, որ Արիստոտելյան հնագույն հայ թարգմանությունները Խոսրովիկի ժամանակ ուներորդ դարի

[1] Վենետիկի հրատարակության մեջ Ստոր. մեկնաբանի ակիզբը պակաս է: Այս հատվածը առել ենք էջմիածնի թիվ 1810 ձեռագրից:

[2] Համմ. նաև Նեսած. Պորփյուրի, էջ 242, 3–5:

սկզբում գոյություն են ունեցել և ծանոթ են եղել նրան:

§ 36. **Անանիա Շիրակացին օգտվել է Արիստոտելյան իմաստասիրության հնագույն հայ թարգմանություններից:** — *Յոթներորդ դարում ևս արիստոտելյան հնագույն հայ թարգմանություններից օգտվել է Անանիա Շիրակացին:*

Ինչպես մատնացույց էր արել Գալուստ Տեր-Մկրտչյանը[1]*, Անանիա Շիրակացին իր «Յաղագս չրջագայութեան երկնից» աշխատության համար ունեցել է որպես աղբյուր Արիստոտելի «Յաղագս աշխարհի» երկը, որի հետևությամբ նա կազմել է իր գրության ծրագիրը և որից քաղել է բազմաթիվ բացատրություններ ու գաղափարներ, տեղ-տեղ գրեթե բառացի՝ համաձայն Արիստոտելի երկի հայերեն թարգմանության: Անանիա Շիրակացու հիշյալ գրվածքը ծայրեծայր բաղդատելով «Յաղագս աշխարհի» գրության հայ թարգմանության հետ, Գալուստ Տեր-Մկրտչյանը եզրակացնում է, որ Արիստոտելի այս աշխատության հայ թարգմանությունը կատարված է Անանիա Շիրակացուց առաջ, ուրեմն՝ ոչ ավելի ուշ, քան յոթներորդ դարը:*

Որ Անանիա Շիրակացին ապրել է «արտաքին գրոց» հունարան հնագույն թարգմանություններից հետո՝ այդ երևում է նաև նրա հունարան լեզվից և «արտաքին գրոց» նյութական թարգմանություններին հատուկ հունարան բառերից, որ գործ է ածում իր երկերում Շիրակացին, ինչպես՝ առկայացեալ (էջ 14), վերադիր (էջ 21), տրամագիծ (էջ 36, 38), պարունակք (էջ 43), տարրերութիւն (էջ 63), չարահիւսակ (էջ 65), ներքսածութիւն (էջ 67), արտագրութիւն (էջ 67), բացբարձութիւն (էջ 67), առչնդապէս (էջ 68), տրամադրութիւն (էջ 70), չարաւոցլով (էջ 72), բաղկացեալ (էջ 72) և այլն[2]*:*

Խոսրովիկ թարգմանչի և Անանիա Շիրակացու երկերի բովանդակության ու լեզվի վերաբերյալ վերոհիշյալ դիտողությունները ցույց են տալիս, որ հունարան հնագույն թարգմանությունների ժամանակը պետք է ընդունել յոթներորդ դարի երկրորդ կեսից առաջ և ո՛չ թե ութերորդ դարում, ինչպես ենթադրել են հայագետ բանասերներից չատերը:

---

[1] «Անանիա Շիրակացի», Վաղարշապատ, 1896, էջ 35 (արտատպություն, 1896 թվի «Արարատ» ամսագրի փետրվար և ապրիլ համարներից):

[2] Տե՛ս «Անանիա Շիրակունւոյ մնացորդք բանից», ի լոյս ետծ Ք. Պ., Ս. Պետերբ., 1877:

§ 37. «Գիրք թղթոց»-ի հնագույն մասում Պետրոսի և Գրիգոր քերթողի թղթերը գրված են հունարեն լեզվով: — *Եթե հունարեն դպրոցի ծագումը որոշելու լիներ հին հայ մատենագրական երկերի լեզվական առանձնահատկություններով, այդ դեպքում նրա ծագումը և հնագույն հունարեն թարգմանությունների ժամանակը պետք է դներ և յոթներորդ դարից առաջ: «Գիրք թղթոցի» հնագույն մասում, բացի Մովսես Խորենացուց և Հովհան Սպիսկոպոսասեղծի թղթերից, որոնց մասին խոսելու ենք առանձին, կա և ուրիշ երկու թուղթ՝ «Հաւատարմագրոյն եւ յմաստնագունի եւ աստուածասիրագունի եղբարւ՝ ողորմելիս Պետրոս տերամբ խնդալ» («Գիրք թղթոց», էջ 99–107) և «Սրբասիրի տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի ի Գրիգորէ Նուաստէ քերդողէ» («Գիրք թղթոց», էջ 153–160), որոնք գրված են հունարեն լեզվով: Այս երկու գրություններն իրենց ոճով ու լեզվով տարբեր են նույն մասի մյուս թղթերից և պատկանում են, անտարակույս, հունարեն դպրոցի գրվածքների խմբին: Հունարեն բառերը, որ գործ են ածվում այդ թղթերում, կազմված պիտի լինեն հավանաբար, «արտաքին գրոց» նյութական թարգմանությունների ժամանակ: Այսպես՝ Պետրոսի թղթում հունարեն բառեր են՝ հարակայութեանց («Գիրք թղթոց», էջ 100), ներգործութիւնս (էջ 102), չարամանեցելոց (էջ 102), վերապրեսցի (էջ 103), արտաղրեցին (էջ 103), չաղկապաւ (էջ 106), և այլն, իսկ Գրիգոր քերթողի թղթում՝ ապարանութեան (էջ 153), առարկեալ (էջ 154), չարայարութեան (էջ 154), բացակայի (էջ 155), յարակցել (156), առասել (էջ 157), վերունակ (էջ 158), ներբարզաւճիցն (էջ 158) և այլն:*

Գրիգոր քերթողի թուղթը, որ ուղղված է Աբրահամ կաթողիկոսին, գրված պիտի լինի 607–610/611 թվականների ժամանակամիջում: Ինչ վերաբերում է Պետրոսի թղթին՝ նրա հեղինակի խնդիրը դեռևս պարզված չէ: Ենթադրում են նույնիսկ, որ այդ թուղթը կարող է թարգմանված լինել հունարենից[1]: Եթե անգամ այդ թուղթը համարենք հունարենից թարգմանված՝ նրա թարգմանության ժամանակը դարձյալ պետք է ենթադրենք

[1] Հայր] Ն. Ակինյանը այդ թուղթը վերագրել էր Պետրոս եպիսկոպոսին, որը հիշատակված է Ուխտանեսի մոտ («Հանդես ամսօրյա», 1904, էջ 110–111): Սակայն Նորայր Բյուզանդացին նույն թղթի հեղինակ համարում է Անտիոքի պատրիարք Պետրոս Թափիչին («Հանդես ամսօրյա», 1908, էջ 155–156): Հայր]

յոթներորդ դարից առաջ: Իսկ այդ մի հանգամանք է, որ իրավունք է տալիս մեզ, ի նկատի ունենալով Պետրոսի և Գրիգոր Քերթողի թղթերի ոճն ու լեզուն, եզրակացնել, որ Հունարան դպրոցի հնագույն թարգմանությունների ժամանակը պետք է ընդունել յոթներորդ դարից առաջ:

§ 38. **Տիմոթեոս Կուզի Հակաճառութիւնը թարգմանված է Հայրենի 552–564 թվականների ժամանակամիջոցում:—** *Հունարան հնագույն թարգմանությունների ժամանակը որոշելու խնդրում ամենամեծ խոչընդոտն այն է եղել, որ ո՛չ մի ստույգ վկայություն չէր հաջողվում գտնել «արտաքին գրոց» երկերի և ո՛չ մեկի թարգմանության ժամանակի մասին: Մինչդեռ եթե ունենայինք այդ երկերից որևէ մեկի թարգմանության մասին տեղեկություն, այդ տեղեկությունը կռվան կարող էր լինել որոշելու, գեթ մոտավոր կերպով, թե մյուս երկերի թարգմանության ժամանակը և թե՛ Հունարան դպրոցի ծագման դարաշրջանը:*

Այդպիսի մի կռվան, բարեբախտաբար, այժմ գտնված է:

Տիմոթեոս Կուզի Հակաճառութիւնը, որը հրատարակվեց էջմիածնում 1908 թվին[1] և որի թարգմանության ժամանակի մասին կան որոշ վկայություններ, Հնարավորություն է տալիս, ինչպես կտեսնենք, պարզելու Հունարան դպրոցի վերաբերյալ մի չարք կարևոր հարցեր, որոնք Հետզհետե բաց պիտի աննն վեցերորդ դարի հայ մատենագրության բազմազարյան գաղտնիքը:

Տիմոթեոս Կուզի Հակաճառութիւնը, թեև կրոնա-դավանաբանական գրվածք է, բայց նրա հայերեն թարգմանությունը կատարված է Հունարենից բա՛ռ առ բա՛ռ, ճիշտ այնպիսի եղանակով, որ հատուկ է ընդհանրապես «արտաքին գրոց» հնադո՛ւյն թարգմանություններին[2]:

Վրաց բաժանման չրջանում, վեցերորդ դարի վերջին և յոթնե-

Ն. Ակինյանը «Կյուրիոն կաթուղիկոս վրաց» հետագա իր աշխատության մեջ, հրաժարվելով իր նախկին կարծիքից, միանում է Ն. Բյուզանդացու ենթադրության («Հանդես ամսօրյա», 1909, էջ 332):

[1] **Տիմոթէոս եպիսկոպոսապետի Աղեքսանդրիայ,** Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի, ի լոյս ընծ. աշխատութեամբ Կարապետ Մ. վարդապետի և Երվանդ վարդապետի, էջմիածին, 1908:

[2] Տե՛ս հրատարակիչների առաջարանը, էջ 23 և հետագա) Ն. Ակինյանի «Տիմոթեոս Կուզ հայ մատենագրության մեջ» աշխատությունը («Հանդես ամսօրյա», 1908, էջ 296–298):

րորդի սկզբին, Հակաճառութեան հայերեն թարգմանութիւնը, ինչպես ցույց են տվել հրատարակիչները, արդեն իսկ ծանոթ է եղել ու գործածական[1]:

Հրատարակիչները, հիմնվելով Փոտ պատրիարքի Հայոց Զաքարյա կաթողիկոսին գրած թղթի պարզ որոշ մի վկայության վրա[2] *Հակաճառութիւնը թարգմանված են համարում հայերենի Ներսես Բ Կաթուղիկոսի ժամանակ: Հ[այր] Ն. Ակինյանը Փոտի այդ վկայության աղբյուր ենթադրում է De rebus Armeniae գրվածքի հետևյալ հատվածը*[3]. *(«Ներսես Աչտարակեցու օրով) ի Դվին ժողով մը գումարվեցավ, երբ նաև Քաղկեդոնի ժողովն իբրև Նեստորական, նզովեցին ըստ բանից Արդիշոյի, վասն զի նույն ժամանակ թարգմանեցին (ἑρμήνευσαν) Արդիշոյեն բերված գրութիւնները, այն գրութիւնները, որոնք հիշեցինք վերը, և որոնք Տիմոթեոս և Փիլոքսենիոս (παρὰ Φιλίκου) ասորիներեն գրված էին Քաղկեդոնի ժողովոյն և Բրիստոսի երկու բնութեանց դեմ»:*

Որքան դրական և որոշ է այս վկայությունը, այնուամենայնիվ՝ փորձ եղավ Հակաճառութեան հայերեն թարգմանության ժամանակը դնելու, հակառակ այս վկայության, հինգերորդ դարի վերջերում: Գալուստ Տեր-Մկրտչյան իր հոդվածների մեջ, տպված «Շողակաթ»-ում և «Արարատ» ամսագրում[4], *մատնանիշ է անում Հակաճառութեան մեջ հիշատակված Դիոսկորոսի մահվան ամսաթիվը և, հիմնվելով տոմարագիտական հաշիվների վրա, Հակաճառութիւնը թարգմանված է համարում հայերենի՝ 480–484 թվականների ժամանակամիջոցում: Դիոսկորոսի մահվան վերաբերյալ կարևոր հատվածն առաջ ենք բերում ամբողջությամբ, դեմ առ դեմ դնելով նաև «Կնիք Հաւատոյ» ժողովածուի համապատասխան վկայությունը, որ ուղղում է այդ*

---

[1] Տե՛ս նաև հ[այր] Ն. Ակինյանի հիշյալ աշխատությունը:

[2] Православный палестинский сборник, том XI, вып. I, СПб., 1892, էջ 180–181:

[3] Թարգմանությունը հ[այր] Ն. Ակինյանինն է. տե՛ս «Հանդես ամսօրյա», 1908, էջ 295, նաև De rebus Armeniae, Migne, P. gr. 132, 1244, 1245:

[4] **Գ. Տեր-Մկրտչյան,** Տիմոթեոս Կուղի Հակաճառութեան հայ թարգմանության ժամանակը և Ս. Գրքի երրորդ կամ նորարեր հայ թարգմանությունը, «Արարատ», 1908, էջ 564–589, նաև նույն հեղինակի «Հայ մատենագրության հնագույն թվականները», տե՛ս «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 154–163:

Հատվածի բնագրի աղճատումները.

Տիմոթէոս, էջ 335[1]	*Կնիք Հաւատոյ, էջ 337*
«Երանելոյն Հաւրն մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու եւ գրեցելոյ Թղթոյն ի Գանգրա յԱսորիս, ուր գաչակերտան կատարեաց ի Քրիստոս, Թուղթ է. երդ. սեպտեմբերի Բ. Հոռի վեցերորդն. առ միայնակեացն ի Հննատոն գրեցեալ Թղթոյ»:	*«Երանելոյն Դիոսկորոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու, ի գրեցելոյ առ Սեկենդոնան Թղթոյն Գանգրայ յաքսորիցն, ուր ղընթացան կատարեալ ի Քրիստոս. Թուղթ. Ե. սեպտեմբեր Բ. Հոռի Զ»:*

Այս համեմատությունից պարզ երևում է, ինչպես այդ ուղիղ նկատել է Գալուստ Տեր-Մկրտչյանը, որ սույն հատվածներում նշանակված է Դիոսկորոսի մահվան ամսաթիվն աղեքսանդրյան Թովթ (= thoth) ամսով, այլ ոչ թե տարեթիվը, ինչպես ենթադրել էր Հ[այր] Ն. Ակինյանը, ուղղելով Տիմոթեոսի բնագրում «Թուղթ եւթներորդ» բառերը «ինդիկտիոնի եւթներորդ»[2]*:*

Մի ինչ որ անհայտ աղբյուրից օգտվելով O. Bardenhewer-ը Դիոսկորոսի մահվան ամսաթիվը դնում է 454 թվի սեպտեմբերի 4-ին[3]*, որ համապատասխան է աղեքսանդրյան Թովթ 7-ին: Տիմոթեոսի Հակաճառությունը և «Կնիք Հաւատոյ» ժողովածուն, ինչպես տեսանք, Դիոսկորոսի մահվան օրը նշանակում են ո՛չ թե սեպտեմբեր 4-ին, այլ «սեպտեմբեր Բ»: Բայց սեպտեմբեր Բ-ի դիմաց նրանք ունեն թե Թովթ է. և թե՛ Թովթ Ե. ամսաթիվը = Գալուստ Տեր-Մկրտչյանը ենթադրում է, որ սկզբնական բնագրի Թովթ է-ն կարդացվելով Թովթ Ե, կարող էր սեպտեմբեր Բ-ն դրվել այս վերջինիս դիմաց, իբրև նրան համապատասխանող ամսաթիվ:*

Եթե այս ենթադրությունը հավանական ընդունենք, պետք է

---

[1] Համմտ. նաև **Տիմոթեոսի Հակաճառութեան**, էջ 277. «Երանելոյ Հաւր մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ եւ խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինան Թղթոյ ի Գանգրայ յաքսորացն, ուր ղընթացան կատարեաց ի Քրիստոս: Թուղթ եւթներորդ, սեպտեմբերի երկրորդ, Հոռի վեցերորդ»: Տե՛ս նույնը՝ «Կնիք Հաւատոյ», էջ 112:

[2] **«Հանդես ամսօրյա»**, էջ 296:

[3] **Patrologie**, p. 350.

ընտրենք երկու հնարավորություններից մեկը. Տիմոթեոսի հայերեն թարգմանության սկզբնական բնագրի ուղիղ ընթերցվածը պետք է լինի՝ կամ թուվը է., սեպտեմբեր Դ. և կամ թուվը ե., սեպտեմբեր Բ.:

Բայց ամենակարևոր հանգամանքն այն է, որ այդ ամսաթվի դիմաց Տիմոթեոսի հայերեն թարգմանության բնագրում տրված է նաև հայկական «հոռի Զ» ամսաթիվը:

Արդ՝ հայկական տոմարը լինելով չարժական, թուվը 5 = սեպտեմբեր 2 = հոռի 6 դուգավորություն հնարավոր է, ինչպես չատ ուղիղ նկատել է Գալուստ Տեր-Մկրտչյանը, 480-484 քառամյակում, և «հոռի» հավելումը կարող էր դրվել միայն այդ ժամանակ: Ուրեմն և Տիմոթեոսի թարգմանություն կատարված պիտի լինի նույն այս թվականներին:

Որքան և ուղիղ է տոմարական այս հաշիվը, սակայն թարգմանության այդ թվականը թվում է կասկածելի ու անհավանական դանադան տեսակետներով[1].

ա. Այդ եղրակացությունը հակասում է Փոտի և Անանուն գրական ու որոշ վկայություններին,

բ. Հիմնովին հեղաշրջում է հայ եկեղեցու կրոնա-դավանաբանական պատմության վերաբերյալ ժամանակագրությունը, որ արդյունք է բանասիրական նորագույն ուսումնասիրությունների,

գ. այդ թարգմանության և ոչ մի հետք չի հաջողվում գտնել կրոնա-դավանաբանական հայ գրվածքներում յոթներորդ դարի երկրորդ կեսից առաջ:

Ինձ թվում է, որ բոլոր այս հակասությունները ու առարկությունները հեշտությամբ վերանում են Դիոսկորոսի մահվան հայ ամսաթվի մի չատ պարզ ու ընդունելի սրբագրությամբ: Տիմոթեոսի հայերեն թարգմանության բնագրում, որ ազատ չէ աղճատումներից, կարծում եմ, որ «հոռի Զ» ամսաթիվն աղճատված է սկզբնական «հոռի ԻԶ» ընթերցվածից:

Այդ դեպքում՝ թուվը է = սեպտեմբեր Դ = հոռի ԻԶ դուգավորության հանդեպ կունենանք 552-556 թվականները, իսկ թուվը ե = սեպտեմբեր Բ = հոռի ԻԶ դուգավորության հանդեպ, 480-484 քառամյակի վոխարեն, կունենանք 560-564 թվականները:

Ուրեմն՝ առաջարկած սրբագրությամբ Տիմոթեոսի հակաճա-

---

1 Տե՛ս նաև Հ[այր] Ն. Ակինյան, «Հանդես ամսօրյա», 1908, էջ 296:

ոսթևան Հայերեն թարգմանության ժամանակը որոշվում է 552-564 թվականների ժամանակամիջոցում՝ միանգամայն համապատասխան Փոտ պատրիարքի և Անանունի վերոհիշյալ վկայություններին:

Տիմոթեոսի Հակաճառութիւնն առայժմ միակ երկն է Հունարան հնագույն թարգմանություններից, որի թարգմանության ժամանակը ճշտվում է: Ստացվում է ժամանակագրական հաստատուն մի թիվ, որի վրա հենվելով՝ կարելի է լուսաբանել Հունարան դպրոցի վերաբերյալ մի չարք ուրիշ խնդիրներ, և որոշել մոտավորապես մի խումբ հնագույն երկերի թարգմանության ժամանակը:

§ 39. **«Արտաքին դրոց» հնագույն երկերը թարգմանված են Հայերենի զանազան թարգմանների աշխատությամբ և տարբեր ժամանակաշրջաններում:** – *Հայոց մատենագրական ավանդությունը «արտաքին դրոց» բնականական, ճարտասանական և իմաստասիրական հնագույն երկերը վերագրելով Դավիթ Անհաղթ Հայ փիլիսոփային և նրա ընկերակիցներին, առիթ է տվել մի խոշոր թյուրիմացության: Այդ առասպելական ավանդության վրա հենվողները կարծել են, որ «արտաքին դրոց» երկերը ժամանակակից և ընկերակից հեղինակների աշխատություն են, և հորինված են գրեթե միաժամանակ՝ հինգերորդ դարի վերջերում:*

Արդ՝ ավանդական այդ ենթադրությունը միանգամայն սխալ է:

«Արտաքին դրոց» հնագույն երկերը, լինելով օտար հեղինակների երկասիրություններ, թարգմանված են Հայերենի ո՛չ միայն դանազան թարգմանների աշխատությամբ, այլև տարբեր ժամանակաշրջաններում: Այդ թարգմանությունների լեզվի, ոճի և բնականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք լեզվական իրենց առանձնահատկություններով բաժանվում են դանազան խմբերի: Հունարան լեզուն, որ դառել է հին և նոր Հայերենի կենդանի ու անանջատ մի մասը, ունեցել է իր կերպարանավորման և զարգացման հատուկ ընթացքը, որի ուսումնասիրությունը հիմնական ու կարևոր մի խնդիր է ո՛չ միայն հայ լեզվի ու քերականության պատմության, այլ նաև Հունարան թարգմանությունների ժամանակագրության որոշման համար: Թարգմանությունների լեզվի ու քերականության մանրազնին քննությամբ՝ հնարավոր կլինի բաժանել նրանց խմբերի, ու լուսաբանել մատենագրական մի չարք խնդիրներ,

որոնք մինչև այժմ մնացել են մութ ու անբնին:

Ցույց տալու համար, թե որքան իրարից տարբեր են հունարան թարգմանություններն իրենց բառամթերքով ու քերականական առանձնահատկություններով, բերենք մի քանի պարզ ու ակնբախ օրինակներ: Էլիասի ու Յամբղիքոսի Մատենագրութեանց մեկնություններում կան համապատասխան հատվածներ հետևյալ թարգմանությամբ.

Էլիաս, Մեկն. Մատթ., էջ 60

«Յետ բաժանման ասացելոցն գայ ի բաժանումն գոյից: Եւ երկուս առնու հակադրութիւնս, զմին՝ յասացելոցն եւ զմին՝ ի գոյից. յասացելոցն՝ զընդհանուրն եւ զմասնականն, իսկ ի գոյից՝ զգոյացութիւն եւ զպատահումն: Եւ չորս առնէ չարամանութիւնս՝ զընդհանուր գոյացութիւն եւ զընդհանուր պատահումն, զմասնական գոյացութիւն եւ զմասնական պատահումն»:

Էլիաս, Մեկն. Մատթ., էջ 64, 65

«Բայց են մետասան նշանակութիւնք յումեքն. կամ ի ժամանակում ...կամ ի տեղւոջ ...եւ կամ յամանում... եւ կամ բոլոր ի մասունս ... կամ որպէս մասունք ի բոլորում ... եւ կամ որպէս սեռ ի տեսակում ... եւ կամ որպէս տեսակ ի սեռում ... եւ կամ որպէս տեսակ ի նիւթում ... եւ կամ որպէս յարարչականումն ... կամ յիշխանականում ... կամ որպէս յաւարտականում ... եւ կամ որպէս ննթակայում»:

Յամբղիքոս, Մեկն. Մատթ.[1]

«Իսկ այժմ յերկուս միայն բաժանէ զամենայն էակս՝ ի գոյացութիւն եւ ի պատահումն՝ կատարելագոյն եւ ըմբռն իմաստութեամբ առնելով զայս տրամատութիւն: Այլ վասն դի հարկ է գիտել, որ ոչ ոչինչ կամ հասարակական գոյ կամ մասնաւոր, չորք աստանօր լինի չարամանութիւն հասարակական գոյացութիւն, հասարակական պատահումն, մասնաւոր գոյացութիւն, մասնաւոր պատահումն»:

Յամբղիքոս, Մեկն. Մատթ.[2]

«Այլ վասն դի նիմնեցդ բազմայեղանակի ասի՝ որպէս սեռ ըն տեսակի կամ տեսակ ըն սեռի եւ զարձեալ իւր մասն ըն բոլորի կամ բոլոր ըն մասունս... կամ ըն տեղւոջ կամ նամանակի... եւ եւս որպէս ըն կատարմանն... իւր նամանի եւ եւս իւր թէ տեսակ ի նիւթ ... եւ որպէս իշխանականք ըն իշխանի նոյնպէս եւ իշխան ըն իշխանականն»:

---

[1] Տե՛ս Էջմիածնի մատենադարանի ձեռագր. թիվ 1889, էջ 181–275ր և թիվ 1943, 1ա–139ր:

[2] Նույն տեղում, ձեռագր. թիվ 1886 և 1943:

Էլիասի և Յամբղիւրոսի համապատասխան այս հատվածներում գործ են ածված իմաստասիրական տարբեր, իսկ քերականական դարձվածքները. թեև երկու թարգմանության մեջ էլ հունարան են, սակայն հիմնովին տարբեր են իրարից: Հունարեն καθόλου բառը Էլիասի հատվածում թարգմանված է «ընդհանուր», իսկ Յամբղիւրոսի հատվածում՝ «հասարակական», հուն. μερικός՝ էլ. «մասնական», և Յամբղ. «մասնաւոր», ἐν τελικῷ՝ էլ. «յաւարտականում», Յամբղ. «ըն կատարման»: Ուշագրավ է նաև, որ «տրամատել, տրամատական, տրամատութիւն» հունարան սովորական բառերը, որ շատ հաճախ հանդիպում են Յամբղիւրոսի մեկնութիւններում, Էլիասի մեկնության մեջ չեն գործածված և ո՛չ մի անգամ: Հունարեն ἔν τιν, Էլիասի հատվածում թարգմանված է «յումեքն», իսկ Յամբղիւրոսի հատվածում «նիմեքդ», նմանապես և հունարեն ἐν τόπῳ, ἐν χρόνῳ, ἐν ἀγγείῳ և «յումեքի» հաջորդ նշանակութիւնները Էլիասի հատվածում թարգմանված են «ի տեղւոջ, ի ժամանակում, յամանում և այլն», իսկ Յամբղիւրոսի հատվածում՝ «նամանակի, ըն տեղւոջ, նամանի և այլն»: Այս տարբերութիւնները, որ ո՛չ մի դեպքում չեն կարող համարվել պատահական, ապացուցանում են, որ այդ թարգմանութիւնները ո՛չ միայն միևնույն թարգմանչի գործ չեն, այլև վերագրվելու են, հավանաբար, թարգմանչական հունարան տարբեր դպրոցների:

§ 40. **Թրակացու քերականութեան, Փիլոնի և Պիտոյից գրքի թարգմանութիւնները կազմում են հունաբան թարգմանութիւնների հնագույն չերտը:** — *«Արտաքին գրոց» թարգմանութիւնների հունարան լեզվի ուսումնասիրութեամբ հաջողվել է ինձ ստանալ լեզվական մի շարք ապացույցներ, որ Դիոնիսիոս Թրակացու քերականութիւնը, Փիլոնը և Պիտոյից գիրքը կազմում են հունարան թարգմանութիւնների հնագույն չերտը:*

Արդեն Հայկազյան լեզվի նոր բառգրքի աշխատակիցները Փիլոնի թարգմանութիւնները շատ ճիշտ բնորոշել են, իրրև «հելլենարան բոլորովին ըստ կազմութեան, այլ սքանչելի հայկարան ըստ ճոխութեանն բառից» (Հատոր Ա, էջ 20): Հայտնի է նաև, որ այդ թարգմանութիւններից օգտվել են ո՛չ միայն Մամբրեն ու Մովսես Խորենացին, այլև Եղիշեն[1]: Ըստ այդմ, Փիլոնի թարգմանության ժամանակը պետք է ենթադրել ո՛չ ուշ, քան VI դարը:

[1] Տե՛ս Հ[այր] Մկրտիչ Ավգերյանցի վկայութիւնները Փիլոն Երրայեցու 1822 և 1826 թվերի հրատարակութեանց ծանոթութիւններում:

Պիտոյից գրքի թարգմանության նկատմամբ առայժմ այսքանն է միայն հայտնի, որ այդ թարգմանությանը, հավանարար, ծանոթ են եղել Սերեոս պատմագիրը և Դավիթ Հարբացին[1]: Թե՛ Փիլոնի և թե՛ Պիտոյից գրքի թարգմանություններից օգտվել է, անտարակույս, նաև Մովսես Խորենացին, սակայն այս հանգամանքը չի պարզում սրանց թարգմանության ժամանակը, որովհետև անորոշ ու վիճելի է նաև Խորենացու ժամանակը:

Մատենագրական որևէ տեղեկություն չունենք և Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության մասին:

Վերոհիշյալ բոլոր թարգմանությունների ժամանակը, ինչպես տեսնում ենք դեռևս հաստատուն կերպով որոշված չէ: Մատենագրական որևէ ցուցումների բացակայության պատճառով, բնականաբար, դուրկ էր հնարավորությունից լուծել այս մութ խնդիրը: Այս հանգամանքը ստիպեց ինձ դիմել լեզվական ուսումնասիրության: Ուսումնասիրության այդ եղանակով ստացած իմ հետևությունները համարձակություն են տալիս ինձ պնդելու, որ վերոհիշյալ թարգմանությունները, իրենց բառամթերքով ու լեզվական առանձնահատկություններով, կազմում են հունարան թարգմանությունների հատուկ մի խումբ, և նրանց ժամանակը պետք է դնել Տիմոթեոս Կուղի Հակաճառության թարգմանությունից առաջ, որևէ ուշ, քան VI դարի առաջին կեսը: Այս եզրակացության հանգելու հիմք են ծառայել ինձ լեզվական հետևյալ համեմատությունները ու նկատառումները, որ թվում են ինձ ուշագրավ ու կարևոր.

ա. Թրակացու քերականության և, մանավանդ, Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանությունները, իրենց ինքնուրույն բառամթերքով, այնքան են իրար նման ու հարակից, և տարբեր հունարան մյուս թարգմանություններից, որ սրանք, որպես հատուկ ու անանջատ մի խումբ, պետք է համարվեն միևնույն դարաշրջանի գործ: Այդ բառերը հաճախ գործ են ածվել բացառապես այս երկերում:

Այսպիսի առանձնահատուկ բառեր են[2]. 1. աղաւտանամ Թր. 11, աղաւտ Փիլ. Լիս. 138 և Պիտ., 2. աղդք Թր. 10. Փիլ. լին. և քհ.,

[1] Տե՛ս A. Baumgartner, Über das Buch «Die Chrie», Leipzig, 1886 և Գ. Հովսեփյան, Դավիթ Հարբացին և Պիտոյից գիրքը («Արարատ», ամսագիր, 1908, փետրվար, էջ 203–216):

[2] Համեմատած բառերը տե՛ս հետևյալ հրատարակություններում: Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ քերականի, Պետրոգրադ, 1915: «Մովսէսի Խորենացւոյ մատե-

Պիտ. 504, 3. աւազական Թր. 33, աւազ, աւազումն Փիլ. լին., Պիտ., 4. Բաղայց Թր. 36, Փիլ. լին. 52, Պիտ., 5. բազդասութիւն Թր. 12, 30, Փիլ. նախ. և ժ բան, 6. Հաւանալ, Հաւացնալ Թր. 10, 11, 12, չարահաւ Փիլ. լին. 31, սկզբնահաւ կամ Հաւասկիզբն Փիլ. լին. 100, Պիտ. Հաւակ 394, Հաւնիմ Պիտ. 398, 7. վրդով Թր. 21, վրդովնիմ, վրդովում Փիլ. իմաս. և բազն., վրդովասէր Պիտ. 425, 8. վաստակական, վաստակարանական Թր. 17, 35, 36, Փիլ. լին. 262, վաստակարանիմ Փիլ. նախ., վաստակասէր Փիլ. լին. վաստակարանութիւն Պիտ. 407, 9. սարդնի Թր. 4, սարդ Փիլ. Լիւս., 10. բազմատրական Թր. 9, 45, 435, 11. նշուպանիմ Թր. 5, Պիտ., 12. րդջախտհ Թր. 18, րդջախտհութիւն Պիտ. 354, 13. մեծասուգ Թր. 19, Պիտ., 14. սգնմ Թր. 4, Պիտ. 397, 15. սերկ Թր. 31, սերկևան Պիտ., 16. նայ Թր. 8, 11, Պիտ. 564, 569, 17. կենցաղօգուտ Պիտ. 344, Փիլ. նախ. 107, Փիլ. ժ բան., 18. ջին Փիլ. նախ. 19, ջնիմ Պիտ. 343, 19. դերեւանամ Պիտ. 344, Փիլ. տեսակ., Փիլ. ժ բան, 20. նապարանութիւն Պիտ. 431, Փիլ. Սամփս. 554, 21. երկասիրութիւն Պիտ. 348, Փիլ. լին. և այլն, 22. անբաժ, անբաժանամ և այլն Պիտ. 358, Փիլ. լին., Լիւս., քհ. ժր, տեսակ., 23. արձանակիմ Պիտ. 359, Փիլ. իմաստ. և քհ. և, 24. վրիժակն Պիտ. 384, Փիլ. Լիւս. 159, Փիլ. քհ. ժր, վրիժակիմ Պիտ. 409, Փիլ. լին. 400, վրիժակաղէն Փիլ. այլար., 25. կնատ, կնատագոյն Պիտ. 385, 447, Փիլ. Սամփս. 26. ճակաճան Պիտ. 389, ճակաճանութիւն Փիլ. լին. 432, 27. բնղնատր և այլն Պիտ. 487, Փիլ. նախ. 45, լին., այլար., ժ բան, 28. ադու Պիտ. 397, Փիլ. Սամփս. 549 և լին., 29. վատչուէր Պիտ. 397, Փիլ. լին. 432, 30. առձևոնբնդել Պիտ. 400, Փիլ. նախ., 58, 31. ծմրիմ Պիտ. 410, Փիլ. իմաստ., 32. բառացի Պիտ. 419, Փիլ. տեսակ., բառացութիւն Պիտ. 492, 33. դժոխբմբրազոյն Պիտ. 422, Փիլ. տեսակ., 34. դնդչեցուցանիմ Պիտ. 430, դնդչիմ Փիլ. լին., 35. Հարստակող Պիտ. 430, Փիլ. այլար. և լին., 36. տօնուտ 432, Փիլ. նլ. և ժ բան 37. գործակ Պիտ. 436, Փիլ. նլ., այլար., ժ բան, 38. անբաժայնալ Պիտ. 437, Փիլ. լին., 39. դազ Պիտ. 446, Փիլ.

նապրութիւնք», Վենետիկ, 1843 (Յաղագս պիտոյից, էջ 341-581) և Փիլոնի երբայեցւոյ Հայր] Մ. Ավգերյանցի 1822 և 1826 թվերի Հրատարակութիւնները: 1892 թվին Վենետիկում լույս տեսած Փիլոնի ճառերի Հրատարակութիւնը չեմ կարողացել ձեռք բերել Անդրկովկասում, ուստի այդ ճառերի բառամթերքին ծանոթացել եմ օգտվելով Հայկազյան բառգրքից:

Սամփս. 549, 40. պտղեղ Պիտ. 448, Փիլ. լին. 6, 41. սանձակոծեմ Պիտ. 453, Փիլ. այլար., 42. ըմպահկեմ Պիտ. 453, Փիլ. Լիւս. 154, լին. 297, 43. ձևոնընդել Պիտ. 454, Փիլ. Լիւս. 150, լին. և ժ բան, 44. սուլումն Պիտ. 458, Փիլ. Լիւս. 151 և իմաստ., 45. արկած Պիտ. 459, Փիլ. Լիւս., նախ., լին. 84, 46. սղոխ Պիտ. 460. Փիլ. տեսակ., 47. բաժակեմ Պիտ. 466, Փիլ. լին. 12, Յովն. 48. ուղէչ Պիտ. 466, քաջուղէչ Փիլ. լին. 6, 49. անտած Պիտ. 472, Փիլ. նախ. 46, 50. անքոյթ Պիտ. 484, Փիլ. իմաստ., 51. կենդակ Պիտ. 489, Փիլ. կլ. և ք՛հ., 52. արուեստակեմ Պիտ. 489, Փիլ. նախ. 4, Սամփս. 520, ժ բան, 53. անկեղակարծ, անկեղակարծելի Պիտ. 506, Փիլ. կլ, կեղակարծելի Փիլ. նախ. 64 և ժ բան, 54. դեւադեւ Պիտ. 495, Փիլ. տեսակ., 55. կենդանասերութիւն Պիտ. 502, Փիլ. լին. 362, 56. բարառնութիւն Պիտ. 510, Փիլ. կլ. 525, 57. նախակրթակ Պիտ. 516, Փիլ. լին. 41, 58. տեսլասէր Պիտ. 568, Փիլ. լին., տեսլարան Փիլ. Լիւս 135. տեսլական Փիլ. ժ բան, և այլն և այլն:

Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանութիւններում այս յուրատեսակ բառապաշարը, որ Հայկազյան բառգրքի աշխատակիցներն անվանել են «սքանչելի ճոխութիւն հայկարան բառից», անչափ չատ կ[1]: Վերոհիշյալ օրինակները կազմում են այդ հարուստ բառապաշարի միայն մի փոքր մասը: Այդ երկերի լեզվի ու ոճի միութիւնն այնքան կ ակնհայտ, որ սրանք պետք կ համարվեն միևնույն դարաշրջանի և միևնույն թարգմանչական դպրոցի աշխատութիւն: Իսկ Թրակացու քերականութիւնը, որ թվում կ ինձ նույնպես նույն չրջանի թարգմանութիւն, թեև որոչ չափով տարբերվում կ նրանցից, սակայն այդ տարբերութեան գլխավոր պատճառն այն կ, որ Թրակացու երկը քերականական տեսութիւն կ և նրա թարգմանութիւնը, Պիտոյից գրքի տեսութիւնների նման, խիստ նյութական կ ու բառացի, մինչդեռ Փիլոնը և Պիտոյից գրքի հնագույն նախակրթութիւնները թարգմանված են ավելի ազատ ու ավելի համապատասխան Հին Հայերենի քերականութեան ու լեզվի կանոններին:

---

[1] Ուշադրութեան արժանի են նաև հետևյալ նմանութիւնները. Պիտ. 448՝ «դի դուր եւ ապիրատ մոլութեամբ զքաջուղէչ եւ զպատեղ զՅովարայն բոցակէզ հրդեհիւ տոչորէր անդաստան»: Փիլ. լին. 6՝ «դի երկու են ծառոց աւաքինութիւնք՝ քաջուղէչ զոյ եւ պատեղ». Պիտ. 446՝ «յոյժ զժոխականս ապուռ եւ զայլ բանիւքն վարէր»: Փիլ. Սամփս.՝ «նոյծ դնա պատիր՝ ապուռ եւ զայլ բանիւք»:

բ. Ինչպես հայտնի է, հունարան հայերենի հիմնական առանձնահատկությունն էր հունարան հատուկ բառակազմությունը, գլխավորապես, նախդիրների միջոցով, որ անհարազատ էր ոսկեդարյան կոչված հայերենի համար: Այդ խորթ բառակազմությունը, թվում է ինձ, որ վերոհիշյալ երկերում եղել է իր կերպավորման ու զարգացման առաջին շրջանում: Օտարոտի բարդված բառերում հունական ἀντι-, δια- և μετα- նախդիրները, որ հունարան հաջորդ շրջանների երկերում թարգմանված են հաճախ հակ-, տար- և փոխ-, այս թարգմանություններում նույն այս ձևով գրեթե չեն հանդիպում: Այս նախդիրներով բարդված բառերից գործ են ածվել միմիայն՝ հակատրևմ Փիլ. լին. 106, հակամիտևմ ἀντιῤῥέπω Պիտ. 451, հակամէտ ἀντιῤῥοπος Փիլ. այլար., փոխադրևմ Պիտ. 353, 420, փոխադրութիւն Փիլ. ժ բան և փոխահատոյց Պիտ. 468:

«Հակ» նախդրի փոխարեն Փիլոնը և Պիտոյից գիրքը գործ են ածել «հակառակ», որից «հակ» նախդիրը, ըստ երևույթին, ծագել է հետագայում կրճատման միջոցով: Այսպես՝ հակառակակիր ἀντιπαθής (= հակակիր) ունի Փիլ. Լիւս., հակառակամարտ ἀντίμαχος (= հակամարտ) Փիլ. լին. 115, Փիլ. Սամփս. 565 և Պիտ. հակառակակայ ἀντικείμενος (= հակակայ) Փիլ. Լիւս., հակառակամէտ ἀντιῤῥοπος (= հակամէտ) Փիլ. Հովն., հակառակադրութիւն ἀντίθεσις (= հակադրութիւն) Փիլ. լին. 210 և նախ. բ, հակառակադիր ἀντίθετος (= հակադիր) Փիլ. լին. 363, հակառակասէր Փիլ. լին. 197, Պիտ. և այլն: «Տար» նախդիրը գործ է ածվել կամ հունարևն παρα- նախդրի փոխարևն, ինչպես՝ տարբազմատ παρασυναπτικός Թր. 35 և 36, տարացոյց Փիլ. լին. 81, 161, 304, Սամփս. 563, Պիտ. 383, կամ ոսկեդարյան գրարարի հետևողությամբ, ինչպես տարագիր, տարագրևմ Փիլ. նախ. 16, Պիտ. 352, տարակարծ Փիլ. Ել. 448, Հովն. 593, Պիտ., տարամտութիւն Փիլ. նախ. 75, տարագարդ Փիլ. լիւս. 171 Պիտ. 396 և այլն:

Խիստ ուշագրավ է, որ այս երկերում հունարևն δια- նախադրությունը և ո՛չ մի անգամ չի թարգմանվել «տար» նախդրով, ինչպես այդ սովորական էր հետագա շրջանների հունարան թարգմանություններում: Թրակացու քերականության թարգմանը հունարևն διαζευκτικός բառը թարգմանել է անջատական (ՀՀ 35), διάκειμαι տրամակայիմ Թր. 37, διακρίνομαι ընտրիմ Թր. 28, διάστημα բացատ Թր. 3, բացատութիւն Փիլ. Ել.,

διαστολή տրտհութիւն Թր. 2, διΐστημι խտրոյնմ Թր. 36, մինչեւ Հետագա Թարգմանութիւններում նոյն բառերը Թարգմանված են՝ διαζευκτικός տարանջատական և տարայօրական Դաւ. Պորփ. 343 և Վերլուծ. 581, διάκειμαι տարակայանամ էլ. Ստ. 138, διάστημα տարակացութիւն ԴՍհմ. 196, էլ. Ստ. 74, διΐστημι, διεστώς տարակացեալ Տիմոթ. Հակառ. 114, Յամրդ. Ստ. 377, Պերիար. 541, էլ. Ստ. 137, կամ նաև տրամակայնմ Դաւ. Պորփ. 272, Յամրդ. Ստ. 386 և էլ. Ստ. 156, διακρίνομαι տարորոշնմ էլ. Ստ. 125, Դաւ. Պորփ. 253, Յամրդ. Պեր. 513, Վերլ. 574, կամ նաև տրամորոշնմ էլ. Ստ. 68: Ամենագործաւոր ասացուցչն է այս երկերի հնութեան հունարէն διαφέρω, διαφορά, διάφορος բառերի Թարգմանութիւնը: Թրակացու Թարգմանր διαφέρω Թարգմանում է առանձնանամ (էջ 3), διαφορά, զարմադանութիւն Թր. 16 և զանազանակ Թր. 23, διάφορος զանազան Թր. 19, մինչեւ Տիմոթեոս Կուղից սկսած այդ բառերը սովորաբար Թարգմանվել են «տարբերնմ, տարբերութիւն և տարբեր»: Փիլոնի և Պիտոյից գրքի Թարգմանութիւններում «տարբերնմ, տարբերութիւն և տարբեր» բառերը նոյնպես բնաւ չեն պատահում, ուստի կարելի է Թերևս եղրակացնել, որ այս բառերը կազմված ու գործածված պիտի լինեն հունարան լեզվի զարգացման հետագա չրջաններում[1]:

գ. Հունարէն ὑποκείμενος և συμβεβεκώς = ենթակա և պատահումն, որ իմաստասիրական ամենագործածական բառերն են, այս Թարգմանութիւններում դեռևս չեն հաստատված, որպես կայուն ու սովորական եղրեր: Թեև ենթակա բառն ունի Փիլ. նախ. 26, լինել. 66, ժ բան և Պիտ. 510, պատահումն ունեն Պիտ. 424 և Փիլ., սակայն նոյն բառերը Թարգմանված են նաև պատահ Թր. 19, Պիտ. 368, Փիլ. նախ. և իմաստ., ներքոկայ Պիտ. 341 և ստորակա Փիլ. լին. 26, Սամփս. 558, Պիտ. 357, 365 և 490:

Հունարէն φυσιολογία, φυσιολόγος և φυσιολογικός բառերն Արիստոտելյան երկերում Թարգմանված են բնաբանութիւն,

---

[1] Եթե յնդվական այս իմ դիտողութիւնն ուղիղ համարվի, այդ դեպքում պետք է նաև ենթադրել, որ Կյուրեղի Ալեքսանդրացվո «Գանձուց գրքեր», ինչպես և աստվածաբանական այն երկերը, որոնք Հայկազյան բառգրքի վկայութեամբ գործ են ածել նոյն այս «տարբերնմ» և այլն բառերը, հավանաբար Թարգմանված պիտի լինեն VI դարի առաջին կեսից հետո:

բնարանական ԴՍՀմ. 127, ԴՊորփ. 271, Էլ. Ստ. 24, Նոննոս 39, իսկ այս թարգմանութիւններում բնախոսութիւն և բնախոս Փիլ. նախ. 75, լին. 69, այլար. և Պիտ. 342: Փիլոնը և Պիտոյից գիրքը չունեն մակացութիւն և մակացու (= Հուն. ἐπιστημή և ἐπιστήμων) բառերը, որոնք առաջին անգամ գործ են ածված Տիմոթեոս Կուղի Հակաճառութեան մէջ, նմանապես և հունարէն ἐνάντιος բառը, որ Տիմոթեոս Կուղից սկսած հետագա երկերում թարգմանված է տառացի «ներհակ», հնագոյն այս երկերը թարգմանում են «ընդդիմակ»: Ներ-հակ = ἐν-άντιος չէր կարող կազմվել թարգմանչական այս շրջանում, որովհետև «հակ» նախդիրը, ինչպես տեսանք, դեռևս գործածական չէր:

Լեզվական այս բոլոր դիտողութիւնները, թվում է ինձ որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ վերոհիշյալ թարգմանութիւնները կազմում են հունարան թարգմանութիւնների հատուկ մի խումբ և թարգմանված են Տիմոթեոս Կուղի հակաճառութիւնից առաջ:

§ 41. Փիլոնը և Պիտոյից գիրքը թարգմանված են Թրակացու քերականութիւնից հետո: — *Փիլոնը և Պիտոյից գրքի հնագոյն մասերը*[1]*, որոնց խմբակից ու ժամանակակից լինելն ինձ համար կասկածից դուրս է, թվում է ինձ, որ թարգմանված պիտի լինեն Թրակացու քերականութիւնից հետո: Այս ենթադրութիւնը, որ ամենակարևոր նշանակութիւնն ունի հունարան թարգմանութիւնների ժամանակագրության համար, ավելի քան հավանական եմ համարում, հիմնվելով լեզվական հետևյալ նկատառումների վրա:*

---

[1] Պիտոյից գրքի հնագոյն մասերն են այդ գրքի տեսութիւնները և վարժութիւնների մեծագոյն մասը, որոնք իրենց բառապաշարով ու լեզվական առանձնահատկութիւններով կազմում են սերտ ու անքակտելի մի ամբողջութիւն: Հնագոյն մասի վարժութիւններ չեն ըստ իրենց լեզվի. ա. «յաղագս չան» վարժութիւնը, որ Գ. վրդ. Հովսեփյանը վերագրում է Դավիթ Հարքացուն: բ. «արուեստանութիւն միայնամարտութեան Դաւթի և Գողիաթու», որ էջմիածնի թիվ 920 ձեռագիրը համարում է Խորովիկ թարգմանչի գործ (տե՛ս «Արարատ», 1892, թիվ դ): գ. Լեզվական տեսակետից, կարծում եմ, որ կասկածելի են նաև մի քանի ուրիշ վարժութիւններ, ինչպես «պարսաւ որթոյ» (էջ 463–469), «պարսաւ նաւարկութեան» (էջ 470–475), «բաղդատութիւն Աբրահամու և Եղիայի» (477–483) և այլն:

ա. Թև՛ Փիլոնի և Թև՛ Պիտոյից գրքի թարգմանիչները ծանոթ են եղել քերականական այն բառապաշարին, որ առաջին անգամ կազմված պիտի լիներ Թրակացու քերականության թարգմանության ժամանակ: Ն. Ադոնցն իր «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ մեկնութիւնք նորին» աշխատության մեջ շատ ճիշտ դիտել է (էջ CLXXVI, ծանոթություն), որ Կյուրեղ Ալեքսանդրացուն վերագրված «մեկնութիւն Ս. Գրոց» թարգմանության մեջ քերականական բառերը բոլորովին տարբեր են Թրակացու քերականության բառերից: Այսպես՝ այս թարգմանությունն ունի անձայն = Թր. բաղաձայն, նշանագիր = Թր. տառ, արուսարար = Թր. արական, իգարար = Թր. իգական, միաւոր = Թր. եզական, բազմաւոր = Թր. յոգնական և բազմաւորական, վոխանակ-անուն = Թր. դերանուն: Եթե Փիլոնն ու Պիտոյից գիրքը թարգմանված լիներն Դիոնիսիոս Թրակացու քերականությունից առաջ, հավանական կլիներ սպասել, որ նրանց քերականական բառերը նույնքան տարբեր պետք է լիներն Թրակացու քերականության բառերից, ինչպես և մեկնություն Ս. Գրոց թարգմանության մեջ: Սակայն բոլորովին հակառակն ենք տեսնում: Փիլոնի և Պիտոյից գրքի քերականական բառերը միանգամայն համապատասխանում են Թրակացու քերականության բառերին: Այսպես՝ 1. συλλαβή վաղաւորութիւն ունեն Թր. 9, 10, Փիլ. Եկ. 540, 2. στοιχεῖον տառ Թր. 4, 9, Փիլ. Եկ. 540, իմաստ., Պիտ. 386, 3. πῶσις հոլով Թր. 13, 17 և այլն, Փիլ. Նախ. 83, 4. σύνταξις բաղդատութիւն Թր. 12, 30, Փիլ. Նախ. 9, 5. ἔπος տաղ Թր. 2. Փիլ. լին. 245, Փիլ. տեսակ., Պիտ. 359, 6. σύνδεσμος չաղկապ Թր. 12, 35, Փիլ. Նախ. 83, 7. τραγῳδία ողբերգութիւն Թր. 2, Փիլ. լին. 413, ժ բան, Պիտ. 369, 411, 8. κωμῳδία, κωμῳδός կատակերգութիւն, կատակերգակ Թր. 2, Պիտ. 366, 9. ῥαφῳδία հաղներգութիւն Թր. 4, Փիլ. Հնաս. 10,10. παρώνυμον յարանուն Թր. 13, 15, Պիտ. 456, հարանունակի Փիլ. լին. 440, Լիւս. 132, 11. συνώνυμον վաղանուն Թր. 17, 19, վաղանունարար Փիլ. այլար., բաղանունութիւն Փիլ. Եկ. 443, 12. ἐπώνυμον մականուն Թր. 17, 19, Փիլ. լին. 60, 20ք և տեսակ., 13. ἑνικός եզական Թր. 16, 17 ևն, Փիլ. լին. 12, 254 (եզակի), Պիտ., 14. πληθυντικός յոգնական Թր. 16, 17 և այլն, յոգնակի Փիլ. լին. 12, 229, Պիտ. 399, 15 ἀντωνυμία դերանուն Թր. 12, 30, դերանունութիւն Թր. 27, 28, Փիլ. լին. 70, 16. ἐνεστώς ներկայ Թր. 23, 24 և այլն, Փիլ. լին. 158, Պիտ. 511, 17, παρεληλυθώς անցեալ. Պիտ. 511, Փիլ. Թր. 23, 18. μέλλων ապառնի Թր. 23, 24 և այլն,

Պիտ. 511, 19. ἴάμβος մեծավերջ Թր. 43, մեծավերջական Պիտ. 369, 20. παράγωγον ածանց Թր. 13, 28 և այլն, Պիտ., 21. σύμφωνον բաղաձայն Թր. 6, 10, բաղաձայնակի Փիլ. Կլ. 446, բաղաձայնութիւն Փիլ. Կլ. 483, տեսակ., բաղաձայնական Պիտ. 537, 22. σύγκρισις բաղդատութիւն Թր. 15, Փիլ. յին. 68, 134, 215, Պիտ. 357, 456 և այլն, 23. ὑπόθεσις ստորագրութիւն Թր. 4, Փիլ. Նախ. 4. յին. 434, ժ բան[1]*:*

Փիլիսոփայական այս բառերը, մեծ մասամբ, կազմված պիտի լինին Թրակացու բներականութեան թարգմանութեան ժամանակ, և եթէ Փիլոն ու Պիտոյից գիրքը գործ են ածում միչտ Թրակացու բներականութեան համապատասխան միևնոյն բառերը, այդ հանգամանքն ըստ իս աւելի քան հաւանական մի ապացոյց է, որ նրանց թարգմանութիւնը պետք է դնել Թրակացուց հետո:

*բ. Թրակացու բներականութեան հունարան բառամթերքն ունի հետաքրքիր մի առանձնահատկութիւն: Հունարան բառակազմութիւնն այս երկում դեռևս հաստատուն չէ: Փիլիսոփայական միևնոյն եղրերը հայերենում շատ հաճախ թարգմանված են տարբեր բառերով և նոյն բազմազանութիւնը նկատելի է նաև հունական նախադրութիւնների թարգմանութեան ժամանակ: Օրինակ՝ 1. διάθεσις թարգմանված է հաստատագրութիւն Թր. 22 և տրամադրութիւն Թր. 22. 2. ἀποτελέω անպակաս կատարեմ Թր. 5, կատարեմ Թր. 5, բացակատարեմ Թր. 6. 3. ἐμπεριλαμβάνω ներպարառնալ Թր. 4 և ներբռնառնալ Թր. 14. 4. συλλαβή շաղաչար Թր. 5, 11, վիպաւորութիւն Թր. 9, 10 և վանդ Թր. 9, 10. 5. σύμφωνον բաղաձայն Թր. 6, 10, չարաձայն Թր. 6, ձայնակից Թր. 8, 10 և ձայնորդ Թր. 9, 10, 11 և այլն. 6. Հուն. παρα- նախադրութիւնը թարգմանված է **մատ-, յար-, տար-**, ինչպես*

---

[1] Ն. Ադոնցը նկատել է արդեն, որ ստոր- = κατα- Դիոնիսիոս Թրակացու բնբռնառնալ չի հանդիպում («Արուեստ Դիոնիսեայ», էջ CLXXXV): Նոյնը պետք է ասել և Փիլոնի ու Պիտոյից գրքի մասին: Այս երեք թարգմանութիւններում ստոր- նախդիրը, ինչպես ստորակայ ὑποκείμενος Փիլ. յին. 26, Սամփս. 558, Պիտ. 357, ստորակէտ ὑποστιγμή Թր. 3, ստորանկանիմ ὑποπίπτω Փիլ. յին. 33, 395, ստորագրեմ ὑπογράφω Փիլ. Նախ. 84, Լիւս. 170 և համապատասխան է հունարէն ὑπο- նախադրութեան, իսկ հետագայ թարգմանութիւնների ամենասովորական բառերը, ինչպես ստորոգութիւն κατηγορία, ստորոգեմ κατηγορέω, ստորասացութիւն κατάφασις և այլն, այս թարգմանութիւններում և ո՛չ մի անգամ չեն գործածված:

παρακέλευσις մատհրաման Թր. 34, παρακείμενος յարակայ Թր. 23, 24, 46, παρασυναπτικός տարրադիմատ Թր. 35, 36. 7. περι- = պար- և բակ-, ինչպես περιεκτικόν պարունակ Թր. 18, 21 և περιληπτικόν բակձաձական Թր. 18, 20. 8. συν = բաղ-, չաղ-, փաղ-, ջոկ-, չար-, -կից, ինչպես συγκριτικός բաղդատական Թր. 13, 14, 15, συνώνυμον փաղանուն Թր. 17, 19, σύνθεσμος չաղկապ Թր. 12, 35, συμπλεκτικός ջոկական Թր. 35, σύνθεσις չարադրութիւն Թր. 12, σύμφωνον ձայնակից Թր. 8, 10. 9. ὑπερ- = գեր- և առաւել-, ինչպես ὑπερσυντελικός գերակատար Թր. 24 և այլն, առաւելակատարական Թր. 48. և այլն. 10. δια- = տրամ- և հաստատ-, ինչպես διάθεσις տրամադրութիւն Թր. 22 և հաստատադրութիւն Թր. 22: Դիանիսիոս Թրակացու հայերեն բնագիրը, թեև բառացի թարգմանութեան է հունարենից, սակայն նույն աստիճան և նույն հետևողութեամբ վանկ առ վանկ թարգմանված չէ, ինչպես Պորփյուրի Ներածութիւնը և Արիստոտելի Յաղագս մեկնութեան և Սոփոգութիւնք երկերը: Նրա մեջ հունական բարդ բառերի նախադրություննները չատ հաճախ կամ բնավ չեն թարգմանված կամ թարգմանված են ոսկեդարյան գրաբարի հետևութեամբ: Օրինակ՝ 1. ἀναλογία համեմատութիւն Թր. 1 (էլ. Ստ. ունի վերաբանութիւն, էջ 50). 2. διαζευκτικός անջատական Թր. 35 (Դավ. Պորփ. տարալուծական 343, Վերլուծ. տարալծական 581). 3. διαιρέω, διαιρεθῆναι կտորիլ Թր. 21, διαιρεθέν զատուցեալ Թր. 21 (տրամատեմ, տրամատական և այլն, ՍՀմ. 204, Փիլ. լին. 366, 381. 403, Վերլ. 577 և Յամբլ. 453, 553 և այլն). 4. διακρίνομαι ընտրիմ Թր. 28 (տարորոշիմ Դ Պորփ. 253, Վերլ. 574, Արիս. Ստ. և Պէր. 372, 513 և այլն կամ տրամորոշիմ էլ. Ստ. 68). 5. διαστημα բացատ Թր. 3 (տարակացութիւն ԴՍՀմ. 196, էլ. Ստ. 74). 6. διαφέρω առանձնանամ Թր. 3, διαφορά զարմացանութիւն Թր. 16, զանազանակ Թր. 23, διάφορος զանազան Թր. 19 (տարբերութիւն, տարբեր Տիմոթ. Հակաճ. 262, Յամբդ. Ստ. և Պեր. 413, 496, Դավ. Պորփ. 254, Վերլ. 587 և այլն). 7. ἀπολείποντος պակասեցնելոյ Թր. 16, պակասելոյ Թր. 16 (էլ. Ստ. բացթողելոց 36). 8. παράγομαι ած- անցիմ Թր. 29 (յարածիմ էլ. Ստ. 25, Դավ. Առածք 218). 9. παρέπεται հետևին Թր. 13, 28, յարևին Թր. 26, 27 (յարահետևիմ Ար. Ստ. 384). 10. συζυγία լծորդ Թր. 22, լծորդութիւն Թր. 24, 25 (չարաժնիմ Ար. Աչխ. 617, Պետ. 356). 11. σύμφωνον ձայնակից Թր. 8, 10 և այլն:

Թրակացու քերականության լեզվական այս առանձնահատկությունները՝ հունարեն բարդ բառերի թարգմանությունը ոսկեդարյան դրաբարի բառերով կամ նրա կանոնների հետևողությամբ, թարգմանչի վարանումներն ու անվճռականությունը քերականական եզրերի ու նախդիրներով բարդված բառերի թարգմանության ժամանակ, նախդիրների թարգմանումը հայերեն տարրեր ու բազմազան նախադրություններով, այս բոլորը, իմ կարծիքով, Թրակացու թարգմանության հնության մի նշան է և բացատրվում է հունարան որոշ ու հաստատուն բառամթերքի բացակայությամբ: Մի քանի նախդիրներ, ինչպես խոն- = κατα-, բոլ- = ἀμφι-, հաստատ- = δια- և ջոկ- = συν-, գործ է ածել բացառապես մեմիայն Թրակացու քերականության թարգմանությունը: Այս նախդիրներն այնուհետև չեն հանդիպում նույնիսկ սրա խմբակից Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանություններում: Առանձին ուշադրության արժանի են պեր- = ἀντι- և չազ- = συν- նախադրությունները, որ գործ են ածված, գլխավորապես, Թրակացու և Փիլոնի երկերում և կազմված են, հավանորեն, թարգմանչական հնագույն այս շրջանում: Թե՛ Տիմոթեոս Կուզի Հակաճառությեան մեջ և թե՛ Արիստոտելյան երկերի ու դրանց մեկնությունների թարգմանություններում չազ- նախդրի փոխարեն գործ է ածվել միշտ չար- նախադրությունը, օրինակ՝ 1. σύλληψις չազառակ Թր. 37, իսկ հետագա թարգմանություններն ունեն συλλαμβάνω չարառնմ Տիմ. Հակաճ. 10, 56, Ներած. Պորփ. 237. 2. συμπλέκω, συμπλοκή չազապատում Փիլ. լին. 259, 369, Սամփս. 567, 568, չազամանություն Փիլ. լին. 160, իսկ հետագա թարգմանություններում՝ չարամանիմ և չարամանություն Տիմ. Հակ. 319, Յամբղ. Պեր. 491, Ար. Աչխ. 612, Էլ. Սոփր. 58, Ար. Սոփր. 359 (ունեն նաև Փիլ. լին. 332 և Պիտ. 529): Շազ- և պեր- նախադրություններով իմաստասիրական թարգմանություններն ունեն միմիայն երկու բառ՝ σύνθεσμος չազկապ Դաւ. Պորփ. 265, Յամբղ. Պեր. 489, Վերլուծ. 576, Ար. Աչխ. 622 և ἀντωνυμία պերանունություն Յամբղ. Պեր. 489: Այս երկու բառը, որպես Թրակացու քերականության գործածական ու ընդհանուր եզրեր, իմաստասիրական թարգմանությունները ժառանգել են, անտարակույս, հունարան հնագույն թարգմանությունների բառապաշարից, իսկ այս փաստը դարձյալ պարզ մի ակնարկ է, որ Թրակացու քերականությունը թարգմանված ու ընդհանրացած պիտի լիներ արիստոտելյան երկերի ու դրանց մեկնությունների թարգմանություններից առաջ:

գ. Թրակացու ու Փիլոնի Թարգմանութիւնների սերտ առնչութիւնը պարզ երևում է Հայկազեան բառգրքում Փիլոնի Այլաբանականքից քաղված մի հատվածից, որի բնրականական բառերը կատարելապես համապատասխանում են Թրակացու բնրականութեան բառերին: Այս հատվածը հետևեալն է.

Փիլ. Այլաբան. 109	*Թրակ. (Ն. Ադոնց), 38*
«Եւ դրարրառոյ սաստկութիւնս որոմանցն ևթն զոյ դէպ եղև չնչւո, բոթ, պարոյկ, թաւ, սոսկ, երկար, սուղ»:	*«Առոգանութիւնք են տասն. չնչւո. բոթ. պարոյկ. երկար. սուղ. թաւ, սոսկ, ապաթարց. ևնթամայն, առորաս»:*

Նոյնանման այս բառերը, լինելով բնրականական հատուկ եղրեր, կազմված են հունական բնրականութեան հետևողութեամբ, հավանորեն, Թրակացու Թարգմանութեան ժամանակ, ուստի պետք է ենթադրել, որ Փիլոնի Այլաբանականքի Թարգմանը շատ մոտ ծանոթ է եղել այդ բնրականութեան, որի բառապաշարից օգտվել է հիշյալ իր հատվածում: Փիլոնի Այլաբանականքը, որից, ինչպես հայտնի է, օգտվել էր Եղիշէ պատմագիրը, պատկանում էր, անշուշտ, Փիլոնի Թարգմանութիւնների հնագոյն խմբին[1]: Նրա կախումը Թրակացու բնրականութիւնից դարձյալ կարևոր մի փաստ է և ապացույց, որ Փիլոնի երկերը Թարգմանված պիտի լինեն Թրակացու բնրականութիւնից հետո:

Վերոհիշյալ լեզվական դիտողութիւնները, ևթե անգամ նրանցից որևէ մեկը հավանութիւն չգտնի, այնուամենայնիվ, իրենց ամրողջութեամբ, թվում է ինձ, որ միանգամայն բավարար կերպով լուծում են հունարան Թարգմանութիւնների ժամանակագրութեան ամենամոտ խնդիրներից մեկը և ապացուցանում, որ Դիոնիսիոս Թրակացու բնրականութիւնը Թարգմանված է Փիլոնից ու Պետրոյից դրքից առաջ և լեզվական իր առանձ-

[1] «Հանդես ամսօրյա»-ի մեջ (1906 թ., մայիս, էջ 148) «Եղիշէ. քննական ուսումնասիրութեան» հեղինակը կարծում է, որ «Փիլոնի հայ Թարգմանութեան վերջին խումբը (1892, տալ. Վենետիկ) բավական կատարելի առաջիններին (1822 և 1826)»: Փիլոնի 1892 թ. հրատարակութիւնը, ձեռքի տակ չունենալով, հնարավորութիւն չեմ ունեցել մանրամասնորեն ուսումնասիրել նրա հունարան լեզուն, սակայն այդ երկերի բառապաշարը ծանոթ է ինձ հայկազեան բառգրքից և ես որևէ հիմք չեմ տեսնում համարելու այդ Թարգմանութիւնը տարբեր առաջիններից:

նահատակություններով խմբակից է հնագույն այս թարգմանություններին:

§ 42. **Տիմոթեոս Կուզի Հականատութիւնը, Արիստոտելի Տաղագս մեկնութեան և Ստորոգութեանց թարգմանությունները, Յամբղիքոսի մեկնությունների հետ միասին, խմբակից են ու ժամանակակից և կազմում են հունաբան թարգմանությունների երկրորդ չերտը:** – *Հունարան թարգմանությունների երկրորդ չերտը կազմում են Տիմոթեոս Կուզի Հականատութիւնը, Արիստոտելի Տաղագս մեկնութեան ու Ստորոգութեանց թարգմանությունները և Յամբղիքոսի մեկնությունները, որոնք վերագրվել են սխալմամբ Դավիթ Անհաղթին:*

Յամբղիքոսի մեկնությունների ձևը, ինչպես գիտենք, տարբերվում է էլիասի ու Դավթի մեկնություններից նրանով, որ այս մեկնություններում Արիստոտելի Ստորոգութեանց և Տաղագս մեկնութեան գրոց ամբողջ բնագիրը բաժանված է պրակների և բնագրի յուրաքանչյուր պրակին հետևում է նրա համապատասխան մեկնությունը (տե՛ս § 32): Արդ՝ թե՛ Ստորոգութեանց և Տաղագս մեկնութեան կամ Պէրիարմէնիաս գրոց հայերեն բնագրում և թե՛ Յամբղիքոսի մեկնություններում՝ հունարան բառապաշարը և լեզվական առանձնահատկություններն այնքան մոտ են ու նման իրար[1]*, որ առանց վարանման ու վճռականորեն*

---

[1] Ուշադրության արժանի են մի չարք բառեր, որոնք հատուկ են այս թարգմանություններին և գրեթե գործածված չեն Դավթի ու էլիասի մեկնություններում, ինչպես՝ 1. διαιρέω, διαιρετικός, διαίρεσις, տրամատեմ, տրամատական, տրամատութիւն Յամր. Ստոր. 411, 412 (չատ հաճախ), Պէր. 493, 533 և այլն (= բաժանեմ, բաժանական, բաժանումն ԴՍՀմ. 127, 133, 189 և այլն. ԴՊորփ. 251, 258 և այլն էլ. Ստ. 21, 38, 74 և այլն), 2. ἐπιδιαίρεσις մակատրամատութիւն Ար. Ստ. 418 (= մակարաժանումն ԴՍՀմ. 189), 3. ἀντιδιαιρέω, ἀντιδιαίρεσις հակատրամատութիւն Յամբղ. Ստ. 417, Պեր. (= ընդդիմարաժանեմ ԴՍՀմ. 204, 128, ԴՊորփ. 298, հակարաժանեմ ԴՊորփ. 275 էլ. Ստ. 76), 4. συνάπτω չարամոտեմ Ար. Ստ. 372 (= չարամերձեմ ԴՍՀմ. 196, Վերլ. 558, էլ. Ստ. 118), 5. διακρίνομαι տրոհեմ Յամր. Պեր. 492 և այլն. Ստոր. յաճախ (= տրտմորոշեմ ԴՍՀմ. 197, էլ. Ստ. 68, տարորոշեմ 253, նաև Յամբղ. Պեր. 513), 6. πρωτότυπος, ἀρχέτυπος նախագաղափար Յամբղ. Ստ. 415 և այլն, Պեր. 490 և այլն (= նախատիպ ԴՍՀմ. 169, էլ. Ստ. 38): Յամբղիքոսի թարգմանության հատուկ բառեր են նաև՝ առնանի Յամբղ. Ստ. 448: Պեր. 519, ցուցութիւն Յամր. Ստ. 433, Պեր. 497, ննթացոյց Յամր. Ստ. 448, Պեր. 502, ասութիւն Յամր. Ստ. 443, Պեր. 505 և ուրիշ բառեր:

կարելի է այդ թարգմանությունները համարել միևնույն թարգմանչի աշխատություն, ինչպես այդ չատ ճիշտ դուշակել է Ֆ. Կոնիրեան իր «Anecdota Oxoniensia» աշխատության մեջ (Oxford, 1892, էջ XXII): Հունարան թարգմանությունների ժամանակագրության համար չատ կարևոր նշանակություն ունի մի այլ փաստ, որ պարզվեց ինձ համար Տիմոթեոս Կատի Հակաճառութեան և Յամրդիրոսի մեկնությունների հունարան բառապաչարի մանրադնին բաղդատությունից հետո: Այդ թարգմանությունները բոլոր իս խմբակից ու ժամանակակից են, և այս հանգամանքն ուշագրավ մի նորություն է, որով որոշվում է իմաստասիրական հնագոյն թարգմանությունների ժամանակը: Տիմոթեոս Կատի Հակաճառութիւնը, ինչպես տեսանք, թարգմանված է 552-564 թվականների ժամանակամիջոցում (տե՛ս § 38): Ուրեմն եթե ընդունվի այդ թարգմանության ու Յամրդիրոսի մեկնությունների լեզվական սերտ առնչությունը, չատ պարզ է, որ Արիստոտելի Ստորոգութեանց և Յադագս մեկնութեան դրոց և Յամրդիրոսի մեկնությունների թարգմանման ժամանակը ևս պետք է ննթադրվի վեցերորդ դարում և ո՛չ յոթներորդ կամ ութերորդ, ինչպես հայ բանասերներից ոմանք կարծել են:

ա. Հունարան այս երկերի լեզվական սերտ կապը, որ նչան է նրանց խմբակցության, հաստատում են նախ և առաջ հազվագյուտ ու առանձնահատուկ այն բառերը, որոնք գործ են ածված գրեթե բացառապես այս թարգմանություններում: Այդպիսի բառեր են. 1. Թուլութիւն Յամրդ. Պեր. 492, 493 և այլն, ՅՍտ. յաճախ, Տիմոթ. Հակաճ. 18, 20 և այլն. 2. կարուժիւն δύναμις ՅՊեր. 533, Տիմ. 78, 90, 168 և այլն. 3. իրակութիւն ՅՍտ. 369, իրակնմ Տիմ. 19. 4. իրաւորնմ Ար. Պեր. 470, Տիմ. 33. 5. ապուսնմ ՅՍտ. 431, Ար. Պեր. 475, Տիմ. 280. 6. արտառաչնորդական ՅՊեր. 514, արտառաչնորդութիւն Տիմ. 97. 7. առնչանակնմ Ար. Պեր. 473, ՅՊեր. 491 և այլն, Տիմ. 81. 8. բացևրևուցնմ՝ ՅՊեր. 497, Տիմ. 59. 9. Հետևութիւն ՅՍտ. 446, ՅՊեր. 527, Տիմ. 70. 10. իմացված ՅՊեր. 491. Տիմ. 75. 11. Հակաճառնմ ՅՊեր. 511, Տիմ. 18. 12. նոյնաբանութիւն ՅՊեր. 516, Տիմ. 217. 13. ներանձնաւոր ἔμφυχος ՅՊեր. 514, Տիմ. 31 (= չնչական ԴՍհմ. 206, ԴՊ. 259, ներչնչական ԴՊորփ. 348, ներչնչաւոր ԴՊորփ. 318, Էլ. Ստ. 48, ներանձնական ԴՊորփ. 258, Ներանձնաւոր Վերլ. 568)[1]. 14. վար- նախդիրը

[1] Տիմոթեոս-Յամրդիրոսի թարգմանությունները գործ են ածում, գլխավորապես, «ներանձնաւոր, բանաւոր, մասնաւոր» և այլն, մինչդեռ Դավթի ու Էլիասի

հանդիպում է միայն այս թարգմանություններում՝ փարարարձևմ ՅՍտ. 454, փարարրևմ, փարարրութիւն ՅՍտ. 452, 454, 457, փարարրաւդն Տիմ. 73. 15. այս թարգմանությունները գործ են ածում չարունակ «հետևանամ» բայը փոխանակ «հետևեմ»՝ ՅՍտ. 411 և այլն ՅՊևր. 488 և այլն, Տիմ. 9, 40, 78 և այլն:

բ. Հաջորդելով հունարան թարգմանությունների հնագույն խմբին, թարգմանական երկրորդ այս չերտը մեծ չափով գտնվում է նրանց բառապաչարի ու քերականական առանձնահատկությունների ազդեցության տակ: Բազմաթիվ բառեր, որ հանդիպում են հունարան այս երկերում, նման են ու համապատասխան Թրակացու քերականության, Փիլոնի ու Պիտոյից գրքի հատուկ բառամթերքին, բացակայում են Դավթի և Էլիասի մեկնություններում, որ կազմում են հունարան թարգմանությունների երրորդ չերտը: Այսպիսի բառեր են.

1. բաղաձայնիմ συμφωνέω ՅՍտ. 432. Տիմ. 53, 64, բաղաձայն, բաղաձայնութիւն և այլն Փիլ. Լլ. 483, Թր. 6, 10, Պիտ. 537, Տիմ. յաճախ (Էլ. Ստ. ԼՀ 119 ունի «բաղաձայն», որպես քերականական եղր, ընդհանրացած Թրակացու քերականության թարգմանություններից հետո). 2. վերծաննմ, վերծանութիւն, վերծաննլի ἀναγνώσκω, ἀνάγνωσις, ἀναγνωστέον ՅՊևր. 488, 508, Տիմ. 100, 241, Թր. 1, 2, 3. 3 տնսակագործնմ εἰδοποιέω ՅՊևր. 518, Տիմ. 195, Փիլ. նախ. 4 (= տնսակարարնմ ԴՍհմ. 178, ԴՊորփ. 320, Էլ. Ստ. 56 և այլն). 4. սերկ. սերկևան ՅՊևր. 496, Տիմ. 52, 77, 194, Թր. 31 (σήμερον), նաև Պիտ. 5. հարցափորձնմ. հարցափորձութիւն և այլն ՅՍտ. 427, ՅՊևր. 508 (հաճախ), Փիլ. նախ. 8, Պիտ. 6. զաղափար τύπος ՅՍտ. 362, 415, Տիմ. 20, Թր. 14, Փիլ. Նլ. և այլն, զաղափարիմ Տիմ. 201. 7. զերազանցնմ, զերազանցութիւն ՅՍտ. 417, 443, Տիմ. 55, Պիտ. 345, 501, Փիլ. Նլ. 451 և այլն. 8. հաւէտախաղաց ՅՊևր. 533, Տիմ. 7, 275, Պիտ. 359, Փիլ. լին. 293 և այլն. 9. ածանցուցնալ παρηγμένος Պևր. 504, ածանցուցնալ Թր. 16 և այլն, ածանցիմ Պիտ., (= հարածնմ παράγω Էլ. Ստ. 120, Դավ. Ա.ռ. 218). 10. ապաստութիւն ՅՍտ. 429, Թր. 33 (ἀπαγόρενσις) 11. յարատև Ար. Ստ. 386. Պիտ. 401. 12 գործառնութիւն ՅՊևր. 507, Պիտ. 367, Պիտ. 485 (գործավորութիւն ԴՊորփ. 348, ՍՀմ. 124, Էլ. Ստ. 26 և այլն = Հուն. πρᾶξις). 13. հաւ. հաւակ, հաւանամ, հաւնմ Թր. 10, 11, 12, Պիտ. 394, 398, 414, բարևհաւ Փիլ. Հովն. 586,

---

մեկնությունները գերազասում են «ներանձնական, բանական, մասնական» ձևերը:

չարահաւ, չարահաւանմ Փիլ. լին. 31, S. 13, ադդահաւ Փիլ. լին. 211, նախահաւանմ Տիմ. 163. 14. մակասատնմ Տիմ. 98, մակասատութիւն ἐπίτασις Թր. 15. 15. բառացի, բառացութիւն Տիմ. 66, Պետ. 419, 492, Փիլ. տեսակ. 16. տեսարան Տիմ. 315, Փիլ. Լիւս. 135 տեսլասկր Պետ. 568 և այլն. 17. ապարանմն, ապարանութիւն ἀπολογία, ἀπολογέω Տիմ. 16, Փիլ. նախ. 74, Լիւս. 161, լին. 47, 297. Սամ. 564, S. 225. 18. դրաւորական Տիմ. 219, 320, Պետ. 419, Փիլ. լին. 335, 336. 19. ներկենալ Տիմ. 230, ներկենութիւն Փ. իմաստ. 20. երգարանմն Տիմ. 160, 249, Պետ. 580. 21. վերադիտմն Տիմ. 58, Պետ. 445, 22. ջին Փիլ. նախ. 19, ջնմն S. 152, Պետ. 343. 23. պարման, պարմանի S. 299, Պետ. Փ. տեսակ.:

գ. Քերականական առանձնահատկութիւններով ևս այս թարգմանութիւնները հարում են թարգմանութիւնների հնագոյն խմբին և տարբերվում Դավթի ու Էլիասի մեկնութիւններից: Թրակացու քերականութեան մեջ հունարեն ἐν նախդիրը թարգմանված է հաճախ ըն. օրինակ՝ ἐν συγκρίσει ըն բաղդատութեան Թր. 15, ἐν συνθέσει καὶ συντάξει ըն բարդութեան և բաղդատութեան Թր. 30: Արդ՝ ըն նախդրի նույն այս գործածութիւնն ընդհանուր և սովորական է նաև Տիմոթեոսի Հակաճառութեան, Արիստոտելի Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոց, ինչպես և Յամբղիքոսի մեկնութիւններում՝ օրինակ՝ ներկինս S. 48. նըմեղ S. 54, 60, նըմարմնի S. 67 և այլն, ըն մարմնի Ար. Ստ. 360, 363, ըն գոյացութեան, ըն քանակի ՅՍտ. 410, ըն ճարտասանութեանն Ար. Պեր. 465, ըն լինելութեան ՅՊեր. և այլն: Դավթի ու Էլիասի մեկնութիւններում = ἐν նախդիրն այլևս գործածական չէր, բացի մի քանի հազվագյուտ բացառիկ դեպքերից, որ պետք է վերագրել նախընթաց թարգմանութիւնների ազդեցության:

դ. Որ Տիմոթեոս Կուղի Հակաճառութիւնը և Յամբղիքոսի մեկնութիւնները թարգմանված են Թրակացու քերականութիւնից և Փիլոնի ու Պետոյից գրքի թարգմանութիւններից հետո, այդ, իմ կարծիքով պարզ երևում է, բացի վերոհիշյալ նկատառումներից, նաև լեզվական հետևյալ դիտողութիւններից:

*1. Տիմոթեոս Կուղի Հակաճառութիւնը, ինչպես և Յամբղիքոսի մեկնութիւնները, ո՛չ **միայն** իրենց բառապաշարով ու քերականական առանձնահատկութիւններով հարում են հիշյալ թարգմանութիւնների հնագոյն խմբին, այլև գործ են ածում քերականական ու ճարտասանական նույն եղրարանութիւնը, որի մեծագույն մասը ստեղծվել էր, ամենայն հավանութեամբ, Թրակացու քերականության ու Պետոյից գրքի թարգմանության*

ժամանակ: Այդպիսի հատուկ նշրեր են. 1. Ներբողեան ἐγκώμιον Տիմ. 22, Պետ. 413, Փիլ. Սամփս. 554, Հովն. 607 և բազն. 2. փառաւորութիւն συλλαβή Տիմ. 155, 181, Ար. Ստ. 372, ՅՍտ. 415, Ար. Պեր. 464, ՅՊեր. 496, Թր. 9, 10, Փիլ. կլ. 540. 3. Ներկայ ἐνεστώς Տիմ. 282, ՅՊեր. 494, Պր. 23. 24, 45. Պետ. 344, 430, Փիլ. լին. 158. 4. ապառնի μέλλων ՅՊեր. 494, 538, Թր. 23, 24, 46, Պետ. 347. 5. ճոռոմաբանեմ Տիմ. 202, ճոռոմաբանութիւն Պետ. 397. 6. ներանոնութիւն ἀντωνυμία ՅՊեր. 489, Թր. 27, 28, Փիլ. լին. 70. 7. մակբայ ἐπίρρημα ՅՊեր. 489, Թր. 12, 31. 8. չաղկապ σύνδεσμος Ար. Պեր. 465, ՅՊեր. 489, Թր. 12, 35, Փիլ. նախ. 83. 9. նախդիր πρόθεσις ՅՊեր. 489, նախադրութիւն Թր. 12, 30. 10. ընդունելութիւն μετοχή ՅՊեր. 489, Թր. 12, 26. 11. Հոլով πτῶσις Ար. Ստ. 379, Ար. Պեր. 464, ՅՊեր. 494, 500, Թր. 13, 17, 27, 28, Փ. նախ. 83. 12. ուղղական ὀρθή ՅՊեր. 500, Թր. 17, 28. 13. սեռական γενική ՅՊեր. 500, Թր. 17. 14. տառ στοιχεῖον ԱՍտ. 404, ՅՊեր. 506, Թր. 4, 9, Պետ. 396, Փիլ. իմաստ. և այլն, 15. առաւութիւն πρ; σηγορία ԱՍտ. 368, ՅՍտ. 411, ՅՊեր. 497, Տիմ. 54, Թր. 12 և այլն:

2. Ն. Ագոնցը «Արուեստ Դիոնիսեայ փերականի» իր աշխատութեան մէջ (էջ CLXXXIX-CXC) չատ ուղիղ դիտել է, որ Հունարէն προοίμιον բառը, որ կազմուած է προ = նախ և οἶμος = չաւիղ, ճանապարհ բառերից, Պետոյից գրքում թարգմանուած է «Նախաչաւիղ» (էջ 399, 413, 445, 551), իսկ արիստոտելեան երկերի ու մեկնութիւնների թարգմանիչները, որոնք οἶμος = չաւիղ, չփոթել են οἶμη = երգ, բառի հետ, προοίμιον թարգմանել են սխալ «նախերգան» (Ար. Ստ. 404 նախերգութիւն, ՅՍտ. 448 նախերգան, Տիմ. 48, 283 նախերգան, նաև Դ Պորփ. 264, 281, Վերլուծ. 557, 569, 570, 578 և էլ. Ստ. 41, 131): Հենվելով իր այս դիտողութեան վրա, նա եզրակացրել էր, որ Պետոյից գրքի և իմաստասիրական երկերի թարգմանիչները եղել են տարբեր անձեր, թեև պատկանել են Հունարան միևնոյն դպրոցին: Ի նկատի ունենալով Հունարան դպրոցի հաջորդական զարգացման այն ընթացքը, որ վերը մատնանշեցինք, թվում է ինձ հավանական, որ «նախերգան» բառի սխալ թարգմանութիւնը պետք է վերագրել Հունարան թարգմանութիւնների երկրորդ այս խմբին[1], ինչպես և տարբեր, տարբերեմ, տարբերութիւն

[1] Պետոյից գրքում մի անգամ միայն «բաղդատութիւն ձիթենոյ ու արմաւենոյ» վարժութեան մէջ գործ է ածուած «նախերգարար» բառը Հետևյալ

(= διάφερος, διαφέρω. Տիմ. 262, Ար. Ստ. 367, 359, ՅՍտ. 413, Ար. Պեր. 471, ՅՊեր. 496 և այլն), ներհակ, ներհակություն և այլն (= ἐνάντιος, ἐναντιότης Ար. Ստ. 368, ՅՍտ. 413, 416, 417, Ար. Պեր. 466, 475, ՅՊեր. 517, Տիմ. 160), մակաբեկլի, մակացու, մակացություն (= ἐπιστητός, ἐπιστήμων, ἐπιστημή Ար. Ստ. 379, ՅՍտ. 422, Ար. Ստ. 360, ՅՍտ. 418, ՅՊեր. 515, Տիմ. 105) հանարան նորաստեղծ բառերը, որոնք բնավ չեն հանդիպում հնագույն թարգմանությունների առաջին խմբում:

Ե. Լեզվական այն սերտ առնչությունը, որ Տիմոթեոս Կուղի Հակաճառությեան հայերեն թարգմանությունն ունի Արիստոտելի Ստորոգությեանց, Յաղագս մեկնության գրոց թարգմանությունների, ինչպես և Յամրղիքոսի մեկնությունների հետ, խիստ կարևոր մի հանգամանք է, որ թույլ է տալիս իմաստասիրական հնագույն թարգմանությունների ծագման վրա: Ինչպես հայտնի է, Ներսես Բ Կաթուղիկոսի ժամանակ (548/549 – 556/557) Հայոց եկեղեցին, Հակասևերյան աստրական եկեղեցու հետ միացած, բացարձակ ու անհաշտ կռիվ էր սկսել Նեստորականության ու Քաղկեդոնականության դեմ: Այդ պայքարի սկզբներում, 552-564 թվականներին, թարգմանված էր, ինչպես տեսանք, Տիմոթեոս Կուղի Հակաճառությունը: Թե՛ միաբնակների և թե՛ երկաբնակների իրար դեմ պայքարող կուսակցությունները, հենց նույն այս վեցերորդ դարում, դավանական իրենց սկզբունքները հիմնավորելու համար օգտվում էին սովորաբար Արիստոտելյան իմաստասիրական երկերից: Փիլիսոփայական այս երկերի թարգմանության կարիքը, բնականաբար, զգացվելու էր նաև Հայաստանում, հավանաբար, դավանական վեճերի ու պառակտումների հենց այս չրջանում: Եվ հիրավի՝ լեզվական վերոհիշյալ մեր դիտողությունները ցույց են տալիս որ Արիստոտելի Ստորոգությունները, Յաղագս մեկնության գրվածքը և Յամրղիքոսի մեկնությունները, հավանաբար, թարգմանված

հատվածում՝ «և այնոցիկ սպասք յարդարապէսն ընձեռնոյց, յորոց նախնապարարն տածնեցաւ գիտութեանն հատուցմամբ» (էջ 508): «Նախնիգարար» բառը թվում է ինձ այս հատվածում անտեղի: Ձեռագրերից երկուսն ունեն «նախաներգարար» (տե՛ս էջ 508 ծանոթ.): Այս բառը կարող է աղճատված լինել, և սկզբնական ընթերցումն էլ, թող երևույթին «նախակարգարար, նախայարգարար» կամ նման մի բան:

պիտի լիներն միաբնակ կուսակցության նույն միջավայրում, որի ժեռներեցությամբ թարգմանված էր նաև Տիմոթեոս Կուղի Հակաճառությունը: «Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» իմ նախորդ աշխատության մեջ ես արդեն մատնանիշ էի արել, որ «Դավիթ փիլիսոփայի մեկնությունները նորպլատոնական մեկնիչի գրվածքներ են, որ աշխատում էր հաշտեցնել պղատոնական եւ արիստոտելյան փիլիսոփայական գաղափարները, իսկ Ստորոգութեանց եւ Յաղագս մեկնութեան գրոց հայերեն մեկնություններն արիստոտելյան մեկնիչի գրություններ են, որոնք Պղատոնին և պղատոնականներին հիշում է միայն հաղվագյուտ դեպքերում և հակառակում ու հերքում է նոցա կարծիքները» (էջ 7): Գուցեև պատահական չլինի այն ուշագրավ փաստը, որ Տիմոթեոս Կուղի Հակաճառութեան թարգմանության ժամանակաշրջանում, միաբնակ կուսակցության նույն միջավայրում, թարգմանվել են հատկապես արիստոտելյան ուղղությամբ Յամբղիքոսի մեկնությունները: Արիստոտելի փիլիսոփայական սկզբունքները թվում է, որ պետք է ավելի համապատասխան լինեին միաբնակների ուսմունքին, քան պղատոնական դուալիզմը: Եթե հիրավի գոյություն է ունեցել այդպիսի մի կապ դավանաբանական ու իմաստասիրական ուղղությունների մեջ, այդ դեպքում՝ անհավանական չպիտի համարվեր նաև այն, որ պղատոնական ուղղության հետևող Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի իմաստասիրական մեկնությունները թարգմանված պիտի լիներն հայերեն երկարնակների կուսակցության միջավայրում:

§ 43. **«Էակաց գրքի» հայտնի հիշատակարանը վերաբերում է Յամբղիքյան խմբի Արիստոտելի Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոց թարգմանությանը:** — *«Էակաց գրքի» հիշատակարանի վերջում, ինչպես հայտնի է, գտնվում է շատ հետաքրքիր մի տեղեկություն, որը շատ պարզ որոշում է «Էակաց գրքի», թարգմանության ժամանակը: Այդ հիշատակարանը տպված է Գարեգին վրդ. Սրվանձտյանցի «Հնոց և նորոց» աշխատության մեջ[1]: Կարևոր այդ վկայությունն ունի հետևյալ բովանդակությունը. «Բայց գարմանալի է ի նախնի յիշատակարանի գրոցս այսմիկ, եթէ գրեցաւ գիրքս այս Էակաց հրամանաւ Թարգ-*

[1] **Գ. Սրվանձտյանց,** Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 86–87, տե՛ս նաև «Հանդես ամսօրյա», 1903, էջ 153 և **Dr. M. Khostikian,** David der Philosoph, Bern, 1907, էջ 15:

*մաննալ ի Հունաց ի Հայս տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի Գարնեցւոյ ի ին. (Գ. Սրուանձ., իվ) Թուականութեան Հայոց. վկայ է այսմիկ Սարգիս արարչագործ ճշմարիտ վկայութեամբ»[1]: Արդ՝ ինչ է հասկացել այս հիշատակարանը «Էակաց գիրք» ասելով: Հայագետ բանասերները «Էակաց գիրք», սովորաբար, համարել են առասպելյալ այն Հայոնի պատմությունը Դավթի ու Մովսեսի մասին, որի վերնագիրն է «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկարնակ չարաչաւոն»[2]: Սակայն ձեռագրերում «Էակաց գիրք» վերնագիրը կրում է ո՛չ այս առասպելյալ պատմությունը, այլ իմաստասիրական մի հատված, որը նպատակ ունի հարց ու պատասխաններով դյուրացնելու Արիստոտելի իմաստասիրական երկերի ուսուցումը[3]: Սիմեոն Ջուղայեցու «Տրամարանութեան» վերջում, որ տպված է Կ. Պոլսում 1728 թվականին, նույն «Էակաց գիրքն» ունի հետևյալ վերնագիրը՝ «Գիրք Էակայ, հարցմամբ եւ պատասխանի» (էջ 254–266): Ինձ թվում է, որ վերոհիշյալ հիշատակարանը չի վերաբերվում այս հարց ու պատասխաններին, որոնք դպրոցական մի ձեռնարկ են, քաղվածոներն կազմված իմաստասիրական հայերեն թարգմանությունների զանազան հատվածներից Արիստոտելի *Ὄργανον*-ի ուսուցման համար: Մ. Խոստիկյանը կարծում է, որ հիշյալ վկայությունը, միանգամայն պատմական լինելով, վերաբերվում է Դավթի Սահմանք իմաստասիրութեան երկին: Դավթի այս աշխատությունը, Մ. Խոստիկյանի ենթադրությամբ, ունեցել է երկու*

---

[1] Տե՛ս M. Khostikian, David der Philosoph, էջ 15:

[2] Տե՛ս Էջմիածնի մատենադարանի թիվ 1897 և 2048 ձեռագրերը, նաև «Արարատ», 1879, ապրիլ-մայիս, Գարեգին վրդ. Սրվանձտյանց, Հնոց եւ նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 39–87 և Ֆ. Կոնիբեր, Մովսես Խորենացվո պատմության ժամանակին մասին, «Հանդես ամսօրյա», 1903, էջ 152–155:

[3] Ձեռագրերում «Էակաց գիրք» համարվող երկը բաղկացած է երկու մասից. նախ՝ հարց ու պատասխաններ, որոնք վերաբերում են ո՛չ միայն «Սահմանք իմաստասիրութեան» երկի բովանդակության, ինչպես սխալ ենթադրում է Մ. Խոստիկյանը («David der Philosoph», էջ 17–18), այլև ընդհանրապես *Ὄργανον*-ի մյուս մնկնությունները, և ապա՝ մի հատված Արիստոտելի «περὶ ἑρμηνείας» երկի հայերեն թարգմանությունից՝ «Արդ զոյ ինչն յորժամ է» և այլն (յաղագս բանի, պր. ԺԲ), տե՛ս էջմ. մատ., ձեռ. թիվ 1810, 1887:

վերնագիր՝ «Սահմանք» և «Հակաց գիրք», իսկ հիշյալ դասագիրքը կազմվելուց հետո, որը նույնպես «Հակաց գիրք» է կոչվել, Դավթի աշխատություններ դասագրքից տարբերելու համար՝ առավելության է տրվել «Սահմանք» վերնագրին: Այս ենթադրությունը հիմնավորելու համար նա հենվում է Կիրակոս Գանձակեցու վկայության վրա, որի համաձայն Դավիթ փիլիսոփան գրել է «զգիրս Սահմանաց եւ Հակաց» (Վենետիկ, 1865, էջ 15): Մոտ ծանոթ լինելով Դավթի երկերի հնագույն ձեռագրերին, մանագամայն սխալ եմ համարում Խոտիկյանի ենթադրությունը, իբր «Սահմանք» երկն ունեցել է նաև «Հակաց գիրք» վերնագիրը: Ըստ հնագույն ձեռագրերի Դավթի սույն աշխատության վերնագիրը ո՛չ «Սահմանք» է, ո՛չ էլ «Հակաց գիրք», այլ մոտավորապես համապատասխան է հունարեն τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας վերնագրին: Էջմիածնի մատենադարանի թիվ 1890 ձեռագրում (Մայր ցուցակ, թիվ 1848), որը գրված է ՈՂԲ թվին (= 1243 թիվ), «Սահմանք» երկի վերնագիրն է, ո՛չ թե «Սահմանք» կամ «Հակաց գիրք», այլ «Դաւթի փիլիսոփայի Ներգինացոյ առաջարանութիւն սահմանաց իմաստասիրութեանն»: Մոտավորապես նույն վերնագիրն ունի Էջմիածնի մատենադարանի թիվ. 1889 ձեռագիրը (= Մայր ցուցակ, թիվ 1847), որի թվականն է ՋԻԵ (= 1276)՝ «Դավթի փիլիսոփա Ներգինացոյ, Յառաջարանք սահմանաց իմաստասիրութեան»: Նույն երկի համար «Հակաց գիրք» վերնագիրը և ո՛չ մի տեղ չի հիշվում: Ինձ թվում է, որ ապարդյուն մի աշխատություն կլիներ որոնել մեր հին մատենագրության մեջ մի որոշ հատուկ երկ, թարգմանված հունարենից, «Հակաց գիրք» կամ «Հակք» վերնագրով: «Հակք» ո՛չ թե հատուկ վերնագիր է որևէ երկի, այլ իմաստասիրական համապատասխան երկի բովանդակության ակնարկումն ու որոշումն: Արդ ո՞րն է հնագույն մեր մատենագրության այն թարգմանությունը, որի բովանդակությանը համապատասխանում է «Հակք» կամ «Հակաց գիրք» անունը: Ինձ թվում է, որ այդ դժվար չէ որոշել: «Հակաց» կամ «զոյից» ուսումնասիրությանը նվիրված են ամբողջովին Արիստոտելի Ստորոգութիւնքը և Ստորոգութեանց մեկնությունները: Յամբղիքոսի Ստորոգութեանց մեկնության մեջ պարզ ասված է՝ «քանզի որ ինչ միանգամ հակ, արտաքոյ քան զտասն ստորոգութիւնս զտանել անհնար է» (պր. ժ, էջ 418): Նմանապես և Դավիթ փիլիսոփան «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի» իր

աշխատության մեջ ասում է՝ «Ստորոգութիւնքն Արիստոտէլի յամենայն իմաստասիրութիւնս պիտոյանան. վասն զի նեբածութիւնք են ամենայն իմաստասիրութեան, վասն զի նոքօք ուսանիմք զամենայն զգոյսս» (պր. գ, էջ 258): Ճիշտ է, Արիստոտելի "Οργανον-ը և նրա մեկնությունները՝ բոլորն էլ որևէ առնչություն ունեն «էակաց» կամ «գոյից» խնդրի հետ, սակայն բուն «էակաց գիրքն» էր ըստ իր բովանդակության նախնաւաջ Արիստոտելի Ստորոգութիւնքը: «Սահմանք իմաստասիրութեան» երկը և ո՛չ մի դեպքում չէր կարող անվանվել «էակաց գիրք», որովհետև նրա բովանդակությունը կազմում է, ինչպես երևում է և վերնագրից, ո՛չ թե էակաց խնդիրը, այլ իմաստասիրության էությունը, սահմանումը և բաժանումները:

Կիրակոս Գանձակեցու վկայությունը ևս չատ պարզ է: «Եվ Դաւիթ փիլիսոփայ,— ասում է նա — (չարագրեաց) զգիրս սահմանաց եւ զէակաց, եւ զմեկնութիւն Արիստոտէլի, եւ Նեբածութեանցն Պորփիւրի» և այլն:

Այս հատվածից ավելի քան պարզ երևում է, որ Կիրակոս Գանձակեցին, հիշատակելով առանձին Սահմանքը ու Պորփյուրի Նեբածութեան Արիստոտելի մեկնությունները, տարբեր է համարում այդ երկերից «էակքը», այսինքն՝ մատնանիշ արված երկերի թվում չհիշատակված Արիստոտելի Ստորոգութեանց և, հավանարար, նաև Յաղագս մեկնութեան գրոց թարգմանությունները: Կիրակոս Գանձակեցու միակ հիմնական սխալն այն է, որ նա, ինչպես և հայ մատենագրական ավանդությունը, Արիստոտելի բոլոր երկերի թարգմանությունները և նաև մեկնությունները վերագրում է առասպելական Դավիթ Անհաղթ փիլիսոփային:

Ինչպես տեսնում ենք, Կիրակոս Գանձակեցու և վերհիշյալ հիշատակարանի «էակաց գիրքը» ակնհայտնի կերպով միևնույն երկն են և ո՛չ այլ ինչ են, քան Յամբղիքոսի խմբի Արիստոտելի Ստորոգութեանց և, հավանարար, նաև Յաղագս մեկնութեան գրոց թարգմանությունները: Հիշատակարանի այն տեղեկությունը, որ Հովհաննես կաթողիկոս Գարեղենացու հրամանով թարգմանված է «էակաց գիրքը» 576 թվին, վերաբերում է ուրեմն ո՛չ թե «Սահմանք իմաստասիրութեան» երկին, այլ Յամբղիքոսի խմբի թարգմանություններին: Բոլորովին անկախ այս դրական ու որոշ վկայությունից, մենք արդեն հանգել էինք այն եզրակացության, որ Յամբղիքոսի խմբի թարգմանությունները, լինելով խմբակից ու ժամանակակից Տիմոթեոս Կուղի

Հակաճառութեան, թարգմանված պիտի լինեն վեցերորդ դարի երկրորդ կեսում: Լեզվական մեր դիտողությունները և հիշատակարանի պարզ վկայությունը, որ ոչ մի հիմք չունենք անվավեր կամ կասկածելի համարելու, իրար լրացնում ու հաստատում են վերջնական կերպով արիստոտելյան մի խումբ երկերի թարգմանման ժամանակը: Հունարան դպրոցի ժամանակագրության ամենամութ խնդիրներից մեկը ևս կարող ենք համարել վերջնականապես պարզված ու լուծված: 552-564 թվականների ժամանակամիջոցում թարգմանված էր, ինչպես տեսանք, Տիմոթեոս Կուղի Հակաճառութիւնը, իսկ նույն դարի յոթանասնական թվականներին[1] Հովհաննես կաթողիկոս Գաբեղենացու հրամանով թարգմանվել են Յամբղիքոսի խմբի երկերը, այն է՝ Արիստոտելի Ստորոգութիւնքը, Յաղագս մեկնութեան դրվածքը և նրանց մեկնությունները: Տիմոթեոս Կուղի Հակաճառութեան և Յամբղիքոսի խմբի թարգմանությունների այս ժամանակակցությամբ ինքնին պարզ ու հասկանալի են դառնում թե՛ նրանց լեզվական մերձավորությունը և թե՛ հունարան այն բոլոր նմանությունները, որոնք վերը մատնանիշ էինք արել (§ 42):

§ 44. Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի իմաստասիրական մեկնությունները թարգմանված պիտի լինեն հունաբան երկրորդ շերտի թարգմանություններից հետո: – *«Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» իմ նախորդ աշխատության մեջ, քննության առնելով նորպղատոնական Դավիթ մեկնիչի երկերը, ևս արդեն փորձել էի ցույց տալ, որ այս Դավիթն Ալեքսանդրիայում ուսած վեցերորդ դարի մատենագիր է (§ 8, էջ 20-30): Նույն 1904 թվին, երբ լույս էր տեսել իմ այդ աշխատությունը, Ա. Բուսսեն հրատարակել էր Բեռլինում Դավիթի երկերի հունարեն բնագիրը՝ Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentarium: Այդ հրատարակության Առաջաբանում Ա. Բուսսեն նորպղատոնական*

[1] Վերոհիշյալ հիշատակարանի վկայությամբ «Հակաց դիրքը» թարգմանված է հունարենից հրամանով «Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի Գաբեղինացւոյ ի ԻԵ (ԻԷ) թուականութեան Հայոց»: Հովհաննես Բ կաթողիկոսի մահվան տարեթիվը, սովորաբար, դնում են 573 թվին: Եթե այս վերջին տարեթիվն ուղիղ է և հիշատակարանի ԻԵ (ԻԷ) թվականն աղճատված չէ, պետք է ուրեմն ենթադրել, որ թարգմանությունը վերջացրած պիտի լինի կաթողիկոսի մահից հետո՝ 576 թվին:

Դավիթ մեկնիչի ժամանակը տանում է մինչև յոթներորդ դարը. համարելով նրան ո՛չ թե Օլիմպիոդորոս վիկիտուսյան աշակերտ, այլ Օլիմպիոդորոսի էլիաս աշակերտի աշակերտ: Եթե Ա. Բուասնի այս կարծիքն ուղիղ համարվի, Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի թարգմանություններր պետք է դրվեն ամենավաղը յոթներորդ դարում: Սակայն, ինչպես վերև տեսանք, Դավիթ մեկնիչի էլիասի աշակերտ լինելը դեռևս վիճելի է (տե՛ս § 10 – § 17): Բայց եթե անգամ հաստատվի, որ սույն Դավիթը վեցերորդ դարի մեկնիչ կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտն է, այդ դեպքում ևս նրա երկերը հայերեն թարգմանված պիտի լինեին ո՛չ ավելի շուտ, քան վեցերորդ դարի երկրորդ կեսում: Եվ հիրավի՝ այս ենթադրությունը հաստատվում է նաև լեզվական մեր դիտողություններով, որոնք ցույց են տալիս, որ Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի երկերը թարգմանված պիտի լինեն հայերեն ավելի ուշ, քան Յամբղիքոսի խմբի երկերը: Լեզվական այդ նկատառումները հետևյալներն են.

ա. Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի թարգմանությունները մեծ չափով օգտվել են Հունարան նախկին երկու խմբի թարգմանություններից, ուստի և նրանց մեջ թե՛ հունարան լեզուն ավելի մշակված է ու կադապարված և թե՛ հունարան բառապաշարը շատ ավելի հարուստ է ու ճոխ, քան նախորդ թարգմանություններում:

1. Թրակացու քերականության հատուկ եղրերը, մեծ մասամբ, նույնությամբ գործ են ածել և այս թարգմանությունները. օրինակ՝ 1. πνεῦμα հազագ. ԴՍահմ. 177, Թր. 38, Տիմ. 139. 2. τόνος ոլորակ ԴՍՀ. 177, Թր. 3, 38. 3. λέξις բառ ԴՍՀ. 137, ԴՊորփ. 253, Վերլ. 563, Էլ. Ստ. 30, Թր. 12, 22 և այլն, ՅՊեր. 488, Փ. տե՛ս 4. τὸ στοιχεῖον Էլ. Ստ. 21, Վերլ. 563, Թր. 4, 9, Ար. Ստ. 446, ՅՊեր. 506, Փիլ., Պետ. 5. ἐνεστώς, παρεληλυθώς, μέλλων, ներկայ, անցեալ, ապառնի, ԴՍՀմ. 207, Էլ. Ստ. 123, Թր. 23, ՅՊեր. 494, Պետ. 344, 347 և այլն, 6. σύνδεσμος չաղկապ ԴՊորփ. 265, Վերլ. 576, Թր. 12, 35, ՅՊեր. 489, Փիլ. նախ. 83. 7. συλλαβή վանկություն Էլ. Ստ. 42, 53, Վերլ. 563, Թր. 9, 10, ՅՍտ. 415, ՅՊեր. 496, Տիմ. 155, 181, Փիլ. Կլ. 540. 8. ὑρθή (πτῶσις) ուղղական (հոլով) Էլ. Ստ. 50, Թր. 17, 28, ՅՊեր. 500. 9. սեռական հոլով γενικὴ πτῶσις Էլ. Ստ. 50, Վերլ. 571, Թր. 17, 28, ՅՊեր. 500. 10. հայցական αἰτιατκη Վերլ. 571, Թր. 17, 29. 11. παροξύτονον, βαρύτονος յարաչնչտոլոր Էլ. Ստ. 47, Թր. 39. 12. ὁριστικὸν ῥῆμα սահմանական բայ Էլ. Ստ. 60, Թր. 22, 45. 13. ἀόριστον ῥῆμα անորոշ բայ Էլ. Ստ. 60, Թր. 49

և այլն. 14. σύμφωνον բաղաձայն էլ. Ստ. 119, Թր. 6, 10. 15. ἐνικός եղական էլ. Ստ. 45, Թր. 16, 17 և այլն, եղակի Վերլ. 581, ՅՊեր. 515, Փ. լին. 12. 16. πληθυντικός հոլնական, հոգնական էլ. Ստ. 45, Թր. 16, 17 և այլն, հոլնակի, հոգնակի Վերլ. 581, Պետ. 399, Փ. լին. 12. 17. ὑπερθετικόν գերադրական էլ. Ստ. 90, Թր. 13, 15. 18. προσηγορία առաստութիւն էլ. Ստ. 101, Վերլ. 581, Թր. 12, Տիմ. 54. Ար. Ստ. 368, ՅՍտ. և Պեր. 411, 497, Քերականական միայն երկու բառ Պորփյուրի Ներածութեան վերլուծության մեջ չեն համապատասխանում Թրակացու քերականության եղրերին, և այդ տարբերության պատճառը ևս հասկանալի է, որովհետև այդ եղրերը, հազվադեպ ու չատ քիչ գործածական լինելով, կարող էին ծանոթ չլինել Պորփյուրի վերլուծության թարգմանչին: Այդ եղրերն են.

1. Συμπλεκτικὸς σύνδεσμος բաղ-հյուսական չաղկապ Դ Պորփ. 343, ջոկման չաղկապ Թր. 35. 2. διαζευκτικὸς σύνδεσμος տարբերածական չաղկապ Դ Պորփ. 343, անջատական չաղկապ Թր. 35:

2. Թրակացու քերականության ազդեցությամբ՝ Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» երկում հանդիպում է «մեռանել» բայի խոնարհման արվեստորեն կազմված, չինծու ու բոնազբոսիկ այն ձևերից մեկը, որ քերականության հետնադարյան մի մեկնիչ, համարելով «բաջաղանք արտաբնոց», խստիվ դատապարտում էր և խորհուրդ տալիս քերականներին սանձահարել «զերիւար մտաց» և «առնուլ զնպատակն ճշմարտութեան»[1]: Շինծու այդ բառը գտնվում է հետևյալ հատվածում՝ «Յորոյ ձեռն ասէ, թէ արդարեւ տագնապին այնոքիկ, որք հանդիպին ուղղորդարար մերձեցեալք, իմաստասիրութիւն, մոռանալով զնոսին իսկ զինքեանս եւ զայլսն, ոչ այլ ինչ խոկալով, քան զմեռանելն եւ **զէմեռանելն**: Եւ բարւոք առկայանան երկոքեան՝ մեռանելն եւ **էմեռանելն**. քանզի ի ձեռն մեռանելոյն՝ զգործական իմաստասիրութիւնն մեկնեաց: Քանզի իմաստասէրն ի մեռանելն իւրում ունի զգործականն, քանզի յայնժամ մեռելութիւն բացագործել ախտից: Իսկ ասելով **էմէռանել**՝ զտեսականն յայտնեաց. քանզի **էմեռանելն** զանցեալ ժամանակն նչանակեաց. եւ իմաստասիրի յետ մեռանելոյն է տեսականն: Քանզի յետ մեռուցանելոյ զախտս եւ մաքրելոյ եւ սրբելոյ զհոգին՝ վարաձգի առ տեսութիւնն, եւ սկիզբն առնէ աստուածարանելոյ» (Սահմ., էջ

[1] Տե՛ս **Ն. Ադոնց**, Արուեստ Դիոնիսեայ, էջ 66:

160–161): Հունարեն բնագրում «մեռանել» ձևին համապատասխանում է θνήσκειν, իսկ «եմեռանել» ձևին՝ τεθνάναι (Infin. Perf.)[1]: Արդ՝ կատարելապես նույն այս եղանակով կազմված է Թրակացու բերականության վերջում «կոփել» բայից արվեստական ու չինծու «նկոփել» ձևը (= հուն. τετυφέναι)[2]:

3. Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունների վրա լեզվական մեծ ազդեցություն են ունեցել նաև Յամբղիքոսի խմբի թարգմանությունները: Օրինակ՝ էլիասին վերագրված Ստորոգութենանց մեկնության մեջ Արիստոտելի Ստորոգութենանց հայերեն թարգմանության բնագրին ամբողջովին բաղված է Յամբղիքոսի խմբի հնագույն թարգմանությունից մի քանի բնորոշ փոփոխություններով: Այսպես՝

Էլիաս, Ստ. մեկն., էջ 43	*Արիստ. Ստորոգ., էջ 359*[3]
«Հոմանունք ասին, որոց անուանքն միայն հասարակ»:	*«Հոմանունք ասին՝ որոց անուանքն միայն հասարակ»:*
Էլիաս, էջ 51	***Ար. Ստ., էջ 359***
«Փաղանունք ասին՝ որոց եւ անունն հասարակ եւ բան գոյացութենան նոյն»:	*«Եւ փաղանունք ասին, որոց անունն հասարակ, եւ ըստ անուանն բան գոյացութենանն նոյն»:*
Էլիաս, էջ 56	***Ար. Ստ., էջ 359***
«Զի եթէ բացատրեսցէ ոք, ինչ է նոցա երկաքանչիւր ումեք կեն-դանին գոլ յատուկ իւրաքանչիւր ումեք բան բացայտրեսցէ»:	*«Քանզի եթէ բացատրեսցէ ոք զերկաքանչիւր ուրուք գրանն, ինչ նոցա երկաքանչիւր ումեք կեն-դանին գոլ, զնոյն բան բացատրեսցէ»:*
Էլիաս, էջ 67	***Ար. Ստ., էջ 359***
«Յասիցկլոցն՝ է ինչ որ ըստ չարամանութեան ասի»:	*«Յասիցկլոցս, է ինչ որ ըստ չարամանութեան ասի»:*

[1] Տե՛ս A. Busse, Davidis Prolegomena և այլն, էջ 29:

[2] Տե՛ս **Ն. Ադոնց**, Արուեստ Դիոնիսեայ, էջ 49:

[3] Վենետիկ, 1833:

Էլիաս, էջ 63

«Ննջեցեալքն ասեմք որ յումեք ոչ իրր մասն գոյ»:

Էլիաս, էջ 70

«Յորժամ այլ գայլ ստորոգիցի իրր դննեցեալ»:

Էլիաս, էջ 74

«Յայլասեռից եւ ոչ ընդ միմեանմբք»:

Էլիաս, էջ 80

«Յայնցանէ, որք եւ ոչ ըստ միում չարամանութեան ասացեալ»:

Էլիաս, էջ 86

«Իսկ նննեցեալսն էակացն մակաւելեացն եւ ոչ անուն եւ ոչ բանն ստորոգեցի դննեցեալն»:

Էլիաս, էջ 88

«Ծանօթագոյն եւ ընտանեգոյն բացատրեցեալ գտեսակն քան զսեռն բացատրելով»:

Էլիաս, էջ 88

«Քանզի սա ուրոյն առաւել ուրումն մարդոյ»:

Էլիաս, էջ 91

«Եւ նոցա տեսակացն որք միանգամ ոչ են սեռք»:

Ար. Ստ., էջ 360

«Ննջեցեալսն ասեմ՝ որ նոքունքն ոչ իրր մասն՝ կոյ»:

Ար. Ստ., էջ 361

«Յորժամ այլ գայլմէ ստորոգիցի իրր դննեցեալ»:

Ար. Ստ., էջ 361

«Յայլոց սեռից եւ ոչ ընդ միմեանմբք»:

Ար. Ստ., էջ 362

«Իսկ յայնցանէ՝ որ եւ ոչ ըստ միում չարամանութեան ասացեալ են»:

Ար. Ստ., էջ 363

«Իսկ նննեցեալոջ էակացն մակաւելեաց՝ եւ ոչ անուն եւ ոչ բանն ստորոգեցի դննեցեալն»:

Ար. Ստ., էջ 364

«Ծանօթագոյն եւ ընտանեգոյն բացատրեցեալ գտեսակն բացատրելով քան զսեռն»:

Ար. Ստ., էջ 364

«Քանզի սա առաւել ուրոյն ուրումն մարդոյ»:

Ար. Ստ., էջ 365

«Եւ նոցա տեսակացն՝ որք միանգամ ոչ են սեռք»:

Եղիսե, Էջ 94

«Բայց ոչ ուրոյն է այս գոյացութեանն»:

Ար. Ստ., Էջ 366

«Այլ ոչ ուրոյն գոյացութեան է այս»:

Եղիսե, Էջ 110

«եւ մանաւանդ դի ուրոյն գոյացութեան որ մինւնոյն»:

Ար. Ստ., Էջ 369

«եւ մանաւանդ դի ուրոյն գոյացութեան թուի գոլ, որ մի եւ նոյն»:

Եղիսե, Էջ 114

«եւ քանակին՝ է ինչ որ տարրորոշ եւ է ինչ որ չարունակ»:

Ար. Ստ., Էջ 372

«եւ քանակին՝ է ինչ որ տարրորոշ է, եւ է ինչ որ չարունակ»:

Եղիսե, Էջ 124

«եւ առ այսոքիւք եւս ամանակ եւ տեղի»:

Ար. Ստ., Էջ 372

«եւ առ այսոքիւք եւս ամանակ եւ տեղի»:

Եղիսե, Էջ 125

«եւ ասեմ զնոյն ինքն որ ձայնիւն բանն լինի»:

Ար. Ստ., Էջ 372

«եւ ասեմ զնոյն զինքն որ ձայնիւն բան լինի»:

Եղիսե, Էջ 126

«Որգոն՝ հինգն նիւէ են տասանգն մասունք՝ առ ոչ մի հասարակ սահման չարամնրժին»:

Ար. Ստ., Էջ 372

«Հիւկէն հինգքն՝ տասանցն մասնկունք են եւ առ ոչ մի ինչ հասարակ սահման չարամօտին»:

Եղիսե, Էջ 126

«Քանզի մակարդակին մասնկունք առ ոմն հասարակ սահման չարամներժին»:

Ար. Ստ., Էջ 373

«Քանզի մակարդակին մասնկունքն առ մի իմն սահման չարամօտին»:

Եղիսե, Էջ 127

«Նմանապէս եւ ի վերայ մարմնոյ մարթի առնուլ հասարակ սահման զմակերեւութիւն, առ որ մարմնոյն մասնկունք չարամներժին»:

Ար. Ստ., Էջ 373

«Սոյնպէս եւ ի վերայ մարմնոյ զտցես առնուլ հասարակ սահման զգիծն, կամ զմակերեւութիւնն, առ որ մարմնոյն մասնկունքն յարեալ միաբանին»:

Էլիաս, էջ 128	*Ար. Ստ., էջ 373*
«Քանզի յեղանակաւ իմն ըզմարմնոյն մասնկունս ունի տեղի, որպ առ ոմն հաստարակ սահման չարամներձին. ապա եւ տեղւոյ մասնկունք, որպ ունին զիւրաքանչիւր ոք ի մասանց մարմնոյն՝ առ նոյն սահման չարամներձին, առ որ մարմնոյն մասնկունք»:	*«Քանզի տեղի իմն մարմնոյն մասնկունքն ունին, որպ առ հաստարակ իմն սահման չարամօտին. իսկ ապա եւ տեղւոյն մասնկունին, զորս ունին զիւրաքանչիւր ոք ի մարմնոյն մասնկանցն՝ առ նոյն սահման չարամօտին, առ որ եւ մարմնոյն մասնկունքն»:*

Այս համեմատութիւններից պարզ երևում է, որ Էլիասի Ստորոգութեանց մեկնութեան մեջ Արիստոտելի Ստորոգութեանց բնագրի թարգմանութիւնը կատարելապես համապատասխանում է Յամրդիքյան խմբի Ստորոգութեանց թարգմանութեանը: Սակայն կան մի քանի էական փոփոխութիւններ, որոնք դիտավորեալ են և նախամտածված: Այսպես՝ հունարէն συνάπτω բայը, որ Արիստոտելի Ստորոգութեանց մեջ թարգմանված է «չարամօտիմ» (էջ 372, 373 և այլն) Էլիասի մեջ փոփոխուած է բոլոր հատուածներում առանց բացառութեան «չարամներձիմ» (էջ 126, 128): «Շարամներձիմ, չարամներձութիւն, չարամներձական» (= συνάπτω, συναφεια, συναπτικός) հունարան բառերը գործ են ածվում առաջին անգամ ու հաճախակի Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանութիւններում, օրինակ՝ Սահմ. իմ. էջ 196, 197 և այլն, Մեկն. ի Վերլ. էջ 558, 581 և այլն: Ըստ երևոյթին, թարգմանութիւնների հունարան այս երրորդ շերտին են պատկանում Նոննոսի ու Արիստոտելի «Պատմութիւն յաղագս աշխարհի» հայերեն թարգմանութիւնները, որոնք եւս ունեն «չարամներձիմ, չարամներձութիւն» բառերը, տե՛ս Ար. Աշխ. 608, Նոննոս 59: Թրակացու քերականութեան մեջ συναπτικός թարգմանված է «բաղմատ» (էջ 35, 36), իսկ Տիմոթեոս Կուղի Հակաճառութեան մեջ՝ συνάπτω, συναφεια = «չարայարիմ, չարայարութիւն», էջ 51, 53 և այլն:

*Հունարէն ὁ ἔν τινι Արիստոտելի Ստորոգութեանց մեջ թարգմանված է «նումնքն» (էջ 360 և այլն), իսկ Էլիասի մեջ «յումնք» (պետք է լինի՝ «յումնքն»): Այս փոփոխութիւնը եւս թվում է նախամտածված: **Ն** և **ըն** նախդիրները (= հուն. ἐν), որ սովորական են հունարան առաջին և երկրորդ շերտերի մի շարք*

թարգմանութիւններում, այսպես՝ Թր. բեր., Լ 15, 30, Ստ. Ար., Լ 360, 363, 364, 366, 367 և այլն, Ար. Պեր. 487, 488, 490, 491 և այլն, Տիմ. Հակաճ. 38, 39, 48, 51, 52 և այլն, Դավիթ-Օլիմպիոդորոս յամրի թարգմանութիւններում գրեթէ գործածված չեն: Նախորդ հնագոյն թարգմանութիւնների ազդեցութեանը պետք է վերագրել, որ այդ նախդիրը այս վերջին թարգմանութիւններում պահպանվել է միմիայն Էլիսէի Վարդապետեանց մեկնութեան մէջ «ննեթակայում» դարձվածքում, Լ 62, 63, 66 և այլն: Պորփիւրի Ներածութիւնը ևս ունի «ննեթակայում», Լ 239 և «ներկոցունց» Լ 230, սակայն որոշ հիմքեր կան ենթադրելու, որ այս երկի թարգմանութիւնը, ըստ երևոյթին, սերտ առնչութիւն ունի հոնարան թարգմանութիւնների առաջին ու երկրորդ շերտերի հետ և, համապատասխան, աւելի հին է, քան Դավիթ-Օլիմպիոդորոս յամրի թարգմանութիւնները:

*Թրակացու բերականութեան մէջ **ն** և **ըն** նախդիրները համապատասխանում են հաճախ հոնարեան **ἐκ** և **ἀπὸ** նախդիրներին. այսպես՝ **նեցէ ἐξ** **ἑνός** Թր. 9, **ներկուց ἐκ** **δύο**, 16 և 20, **ըն տեղույր ἐκ** **τόπου** 32, **նոգւոյ** **ἀπὸ** **ψυχῆς** 18, **նիմնէ, ἀπὸ** **τινος** 19, **նորմէ** **ἀφ' οὗ** 23, **նիմոյ** **ἀπὸ** **τοῦ** **ἐμοῦ** 29 և այլն: **Ն** և **ըն** նախդիրների այդ իմաստով գործածութիւնը հատուկ է միայն Թրակացու բերականութեանը, իսկ հազվագեպ է Յամրդիքյան յամրի թարգմանութիւնների համար (Ար. Ստ. ունի «նորոց», Լ 383) և բոլորովին անգործածական Դավիթ-Օլիմպիոդորոսի յամրի թարգմանութիւններում:*

4. Դավիթ-Օլիմպիոդորոսի յամրի թարգմանիչները, ծանոթ լինելով Յամրդիքյան յամրի թարգմանութիւններին, մեծ չափերով օգտվել են այդ թարգմանութիւնների հոնարան հատուկ բառապաշարից: Արիստոտելի իմաստասիրութեան հատուկ գաղափարներն այս երկու խումբ թարգմանութիւններում արտահայտված են մեծ մասամբ միևնոյն բառերով և այդ հանգամանքը, բնականաբար, առիթ է ծառայել ենթադրելու, որ նրանք միևնոյն իմաստասիրական դպրոցի ու անգամ միևնոյն թարգմանչի աշխատութիւնն են: Սակայն հարևանցի ուսումնասիրութիւնն անգամ բավական է համոզվելու համար, որ այդ երկու խումբ թարգմանութիւնները լեզվական իրենց առանձնահատկութիւններով իրարից չատ տարբերվում են և ունեն միայն իմաստասիրական որոշ նոյնութիւն: Իմաստասիրական այդ բառերը, որ հատուկ են Յամրդիքյան յամրի թարգմանութիւն-

Ներին և գործ են ածված Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի թարգմանություններում, խիստ չատ են: Այդ ընդհանուր բառապաշարի բառերից են[1]*, օրինակ՝. 1.* **նախերգան** *προοίμιον Վևրլ. 557, էլ. 24,* **նախերգանութիւն** *Դ-Պորփ. 281. 2.* **տարբերութիւն** *διαφορά Ներ. Պորփ. 227, Դ-Պորփ. 254, Վևրլ. 587, Ար. Աչխ. 613, էլ. 96 (նաև Նոննոս ԼՂ 24). 3.* **ներհակ** *ἐνάντιος Ներ. Պորփ. 233, Ար. Աչխ. 611, էլ. 103,* **ներհական** *Ար. Աչխ. 616, էլ. 129,* **ներհակութիւն** *ἐνάντιότης էլ. 134,* **ներհակաբար** *Վևրլ. 595, («ներհակ» ունի նաև Նոննոսը՝ ԼՂ 64). 4.* **մակացու** *ἐπιστήμων ՍՀմ. 180, Ար. Աչխ. 604 (նաև Նոննոս ԼՂ 11),* **մակացութիւն** *ἐπιστημή Ներ. 233, Դ-Պորփ. 256, ՍՀմ. 120, Վևրլ. 564, էլ. 46,* **մակացուցանել** *ἐφιστάναι էլ. 100*[2]*. 5.* **ստորոգութիւն** *κατηγορία Ար. Ստ. 362, ՅՍտ 410, Պևր. 494, Ներ. Պորփ. 227, Դ-Պորփ. 254, Վևրլ. 561, էլ. 31, նույն այս խումբն ունի նաև՝* **ստորոգումն,** **ստորոգիլ** *և այլն. 6.* **արտունող** *Ար. Ստ. 373,* **արտունութիւն** *ὑπεροχή ՍՀմ. 156, արտունութիւն Ար. Աչխ. 621, 7.* **հակակայ** *ἀντικείμενος Ար. Պևր. 511, Ար. Ստ. 396, ՅՍտ. 426, Դ-Պորփ. 318, Ներ. Պորփ. 237,* **հակակայիմ** *ἀντικείμαι Ար. Պևր. 474, ՅՊևր. 512, ՅՍտ. 425, Ար. Աչխ. 619, Վևրլ. 576. 8.* **վերլուծական** *ἀναλυτικός Ար. Պևր. 474, ՅՊևր. 553, Դ-Պորփ. 258, Վևրլ. 557,* **վերլուծութիւն,** **վերլուծութիւնք** *ἀναλυτικά էլ. 17, Դ-Պորփ. 251,* **ἀնալուսիս** *Ար. Աչխ. 611,* **վերլուծանիմ** *ἀναλύω ՍՀմ. 138, Վևրլ. 563, Տիմ. 96. 9.* **իրողութիւն** *πραγμα, πραγματεία Ար. Պևր. 487, ՅՍտ. 425, Դ-Պորփ. 327, Ներ. Պորփ. 227, Վևրլ. 558, էլ. 24, 44, ՍՀմ. 195, 121 (նաև Նոննոս 37). 10.* **չարաբանութիւն** *συλλογισμός ՅՊևր. 511, Դ-Պ 305, էլ. 17, 21,* **չարաբանեմ** *συλλογίζω ՍՀմ. 122, (συλλογιστικοί բաղրանականք Թր. 35, 37). 11.* **չարաբառնամ** *συναναιρέω Ար. Ստ. 382, Ներ. Պորփ. 241, Դ-Պորփ. 299, էլ. 84,* **չարաբառնիմ՝** *συναναιροῦμαι Ներ. Պորփ. 241, Դ-Պորփ. 299, էլ. 84. 12.* **հակառութիւն** *ἀντίφασις Ար. Պևր. 472, ՅՊևր. 511, Վևրլ. 574, էլ. 62, նաև հակ նախադրութեամբ ուրիշ բառեր, ինչպես՝*

---

[1] Բացի Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբին պատկանող մեկնությունների թարգմանություններից, ներքևի օրինակներում մասնացույց են արված նաև Պորփյուրի Ներածութեան ու Արիստոտելի «Յաղագս աշխարհի» թարգմանությունները, որոնց թարգմանման ժամանակաշրջանի մասին խոսելու ենք առանձին (տե՛ս ներքև՝ § 47 և § 48):

[2] Վերոհիշյալ չորս բառը տե՛ս նաև վերը սույն աշխատութեան մեջ՝ § 42, տ. 2:

հակորոշեմ, հակորոշումն, հակաղարձութիւն, հակաղարձ, հակաղարձիմ և այլն:

*Արիստոտելի Ստորոգութեանց թարգմանութեան ազդեցութեանը պետք է վերագրել նաև Էլիասի Ստորոգութեանց մեկնութեան մեջ «մակ աւելեաց» խորհին հունարանութիւնը (= ἐπὶ πλείστων), էլ. էջ 85: Հունարէն ἐπί նախդիրը հայերէն թարգմանված է **մակ** միմիայն Յամրդիրյան խմբին պատկանող Արիստոտելի՝ Յաղագս մեկնութեան ու Ստորոգութեանց մեջ և պարզապես այս հնագոյն թարգմանութիւնից է քաղված Էլիասի համապատասխան դարձվածքը՝ էլ. 85, 17 = Ար. Ստ. 363, 2:*

5. Սահմանք իմաստասիրութեան երկում կա ուշագրաւ մի հատված, որին համապատասխանում է Պերիարմենիաս գրոց մեկնութեան մեջ գտնվող հետևյալ հատվածը՝

Սահմ. իմաստ., էջ 180	*Մեկն. Պեր. գրոց., էջ 515*
«Արդ ստորակայնացի ոմն Սիմոն արուեստիւ կարուակ իսկ բարուք բարի՝ արուեստիւ յոռի: Արդ ի վերայ սորա առանձնարար ասացեալքն ոչ կարող գոն միասնարար ակիլ. որգոն, յորժամ ասեմք Սիմոն կարուակ է, եւ Սիմոն բարի է: Արդ զայսոսիկ զառանձնարար զասացեալսս՝ ոչ կարող գոյ միանգամայն յարալերար ասել, եթէ Սիմոն կարուակ բարի է. վասն զի ըստ արուեստին փցուն զնա ստորագրեցաք»:	*«Իսկ կարուակն եթէ առանձինն ճշմարիտ, այլ եւ բարին գումնմէ առանձինն ճշմարիտ, ոչ եւս ի հարկէ բազադրեալք սոքա ճշմարտեսցեն: Քանզի Սիմոն սոկրատական եւ կարուակ ելով՝ ճշմարիտ, եւ բարի՝ զարձեալ ճշմարիտ՝ այլ ոչ եւս ճշմարիտ, Սիմոն կարուակ բարի. քանզի անխնամութիւն կարուակութեանն՝ ոչ եւս բարի, այլ յոչ բարի զարուեստն մակացոյց. իսկ բարի Սիմոն՝ ըստ խնամ տանելոյ իմաստասիրութեան»:*

Ն. Ադոնցն իր «Արուեստ Դիոնիսեայ քերականի» աշխատութեան մեջ (էջ CXCII) նկատել է այս հատվածների նմանութիւնը և ենթադրում է, որ Սիմոնի կարուակի այս օրինակը ցույց է տալիս թե՛ հեղինակների, և թե՛ թարգմանիչների սերտ մերձավորութիւնը: Այդ ենթադրութիւնը թվում է ինձ ոչ հիմնավոր: Սոկրատական Սիմոնի հիշատակութիւնը, որպես օրինակ վերոհիշյալ հատվածներում, ինչպես և, ընդհանրապես, որոշ հատվածների բովանդակության նմանութիւնները միևնույն կամ տարբեր դպրոցների իմաստասիրական երկերում, երբեք չեն կարող կռվան ծառայել հեղինակների մերձեցման, եթե չկան

որևէ այլ ծանրակշիռ հիմքեր այդպիսի մերձեցման համար: Սոկրատական Սիմոնի հիշատակությունը տարբեր հեղինակների վերհիշյալ հատվածներում կարելի է բացատրել այլ կերպ. կա՛մ նորպղատոնական Դավիթ մեկնիչը օգտված պիտի լինի Յամբղիքոսի περὶ ἑρμηνείας գրոց մեկնությունից կա՛մ պետք է ենթադրել, որ այդ նմանությունը ծագում է անկախ կերպով որևէ այլ սկզբնական ու ընդհանուր աղբյուրից: Ինչ վերաբերում է «կարուակ» բառին = հուն. σκυτεύς, որը գործ է ածված՝ Ար. Պեր. 477, ՅՊեր. 515, ՍՀմ. 180, կարուակութիւն ՅՊեր. 515, լեզվական այդ նմանությունը ևս չի կարող հիմք ծառայել թարգմանիչների մերձեցման: Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանիչները, ինչպես տեսանք, լայն չափով օգտվել են Յամբղիքյան հնագույն խմբի թարգմանություններից: Ուրեմն՝ «կարուակ» սակավագյուտ բառի գործածությունը Սահմանք իմաստասիրութեան երկում կարելի է վերագրել Յամբղիքյան խմբի թարգմանությունների աղդեցությանը: Նույն ձևով. մեծ մասամբ, պետք է բացատրել և ուրիշ հունարան հազվագյուտ բառերի հանդիպումը թարգմանական այս տարբեր խմբերում: Այդպիսի բառերիցն է, օրինակ, նաև եղջերուաքաղ τραγέλαφος բառը, Ար. Պեր. 493, ՍՀմ. 121, Դ. Պորփ. 270, Յ Պեր. 494:

6. Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանություններում, որ կազմում են հունարան թարգմանությունների երրորդ չերտը, բնականաբար, չարունակել են մշակել ու հարստացնել հունարան առանձնահատուկ լեզուն ու բառամթերքը: Այս թարգմանություններում կան մի խումբ հունարան բառեր, որոնք չեն հանդիպում նախկին թարգմանություններում և թվում են կազմված հունարան լեզվի զարգացման այս չրջանում: Եթե ճիշտ համարվի իմ տեսակետը, որ հունարան լեզուն մեր հնագույն մատենագրության մեջ ունեցել է իր զարգացման երեք առանձնահատուկ չրջանները, այդ դեպքում՝ պետք է հունարան լեզվի ուսումնասիրությունն ավելի ևս խորացնել և, եթե հնարավոր է, փորձել ամեն անգամ որոշելու հունարան դանազան խումբ բառերի ծագման ժամանակը: Լեզվական ուսումնասիրությունն այս ուղղությամբ կարող է որոշ նշանակություն ունենալ հայոց լեզվի պատմական քերականության համար, նաև կարող է կռվան ծառայել որոշելու հունարան այլևայլ աստվածարանական թարգմանությունների մոտավոր ժամանակաչրջանը: Որքան էլ հունարան բառերը համարվեն անհարա-

դատ ու խորհ, համեմատ դեպս, հայոց լեզվի պատմական քննականությունը չի կարող անտես առնել այդ բառապաշարը, որովհետև այս վերջինը, որպես գիտական եզրերի բառամթերք, դարերի ընթացքում ապացուցել է իր կենսունակությունը, կազմել է հայոց լեզվի անբակտելի մասը և այժմ էլ մուտք է գործել աշխարհաբար լեզվի մեջ ու դառել նրա գիտական բառապաշարի պատկառելի հիմքը:

*Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի թարգմանություններն ունեն, ինչպես ասացի, բազմաթիվ հունարան բառեր, որոնք չեն հանդիպում նախորդ թարգմանություններում: Թվում է ինձ, որ այս բառերի մեծագույն մասն առաջին անգամ կազմված ու գործածված պիտի լինեն հենց այս թարգմանությունների ժամանակաշրջանում: Այդպիսի առանձնահատուկ բառեր են, օրինակ՝ 1. **Բնաբանել** **φυσιολογεῖν** էլ. 24, 31 (նաև Նոննոս 36), **բնաբանական** **φυσιολογικός** ՍՀմ. 127 (նաև Նոննոս 39), **բնաբանականք** **τὰ φυσιολογικά** էլ. 24, **ի բնաբանութիւնն** **ἐν φυσικοῖς λόγοις** Դ-Պորփ. 271. DPorph. 109, 31, **բնաբանութիւն** **φυσιολογιά** էլ. 24[1]. (Հունարան թարգմանությունների առաջին շրջանում **φυσιόλογος**, **φυσιολογία** թարգմանված են՝ **բնախօս**, **բնախօսութիւն** Փիլ. լին. 96, Փիլ. Նախ. 75, Փիլ. այլար., Պիտ. 342). 2 **տեսակարարեմ** **εἰδοποιῶ** Ներ. Պորփ. 236, Դ-Պորփ. 320, ՍահՀմ. 178, Վերլ. 571, էլ. 56, **տեսակարարու** **εἰδοποιός** Ներ. Պորփ. 237, էլ. 68, **տեսակարար** **εἰδοποιός** Ներ. Պորփ. 233 (նախկին թարգմանություններում **εἰδοποιῶ** թարգմանված է՝ **տեսակագործեմ** ՅՊեր. 518, Փիլ. Նախ. 4, Տիմ. Հակաճ. 195, 20), 3. **յարատեմ** **παραδίδωμι** ՍՀմ. 135 ևն, էլ. ևն. 4. **կենդանարոյս** **ζῳόφυτον** ՍՀմ. 206, Դ-Պորփ. 296, 5. **երեւակայութիւն**[2] **φαντασία** ՍՀմ. 181, 185, Վերլ. 559, **երեւակայեմ** **φαντάζω** 193, 6. **եզրակացութիւն**[3] **συμπέρασμα** 185,*

---

[1] Բայց էլ. 31 ունի ի Բնաբանութիւնն = Հուն. ἐν τοῖς Φυσικοῖς El. 124, 12, նաև բնաբանական էլ. 38 = τὸ φυσικόν El. 128, 26:

[2] Φαντασίαν παρέχουσι (El. 172, 20) էլիասի Ստորոգութիւնից մեկնութեան մեջ թարգմանված է՝ «պրպուտմն իմն եւ կարծիս տան», էլ. 93:

[3] Եզրակացութիւն = συμπέρασμα թվում է ինձ ապհատված, հնագույն ձեռագրերում թերևս գտնվի այս բառի ուղիղ ընթերցվածը, որ պիտի լինի եզրակութիւն:

Դ-Պորփ. 267, Վերլ. 559 (նաև **բաղեզերումն, բաղեզերութիւն** *Վերլ. 562, 583),* **եզերակացութիւն, եզրակացութիւն** *էլ. 27, 28, 7. կորնըթարդ Սահմ. 144, կորընթի* **κυρτός** *էլ. 127, 8.* **համալսարան** **ἀκροατήριον** *Սհմ. 128 (նաև Նոննոս 35, 10), 9.* **ուղղորդագնաց** **ὀρθοπεριπατητικός** *Սհմ. 137, Առ. Հինգ 217, Դ-Պորփ. 291, 10.* **լայնեղունկն. πλατυώνυχος** *Սհմ. 137. Առ. Հինգ 217, Դ-Պորփ. 291, 11.* **մակամտածութիւն** **ἐπίνοια** *Սհմ. 193, Դ-Պորփ. 270, 12.* **բացայլինիմ** **ἀπογίνομαι** *Ներ. Պորփ. 239. Դ-Պորփ. 341. էլ. 95. 13.* **բացագործեմ** **ἀπεργάζομαι** *Սհմ. 160, Ար. Աչխ. 615, Դ-Պորփ., 14.* **հանուր** **καθόλου** *Սհմ. 126, Դ-Պորփ. 255, Վերլ. 572,* **հանրական** **καθολικός** *Սհմ. 159,* **հանրականք** **τὰ καθόλου** *էլ. 31 (ունին նաև ընդհանուր, ընդհանրական, ընթանրական), 15.* **յարաքարչեմ** **παρέλκω** *էլ. 115,* **ἀνθέλκω** *Դ-Պորփ. 264, 16.* **յարածեմ** **παράγω** *էլ. 23, Առ. Հինգ 218, 17.* **ենթալուանեայ** **ὑπὸ σελήνην** *էլ. 61, Դ-Պորփ. 265, 18.* **անհատել** **ἀτομοῦν** *Ներ. Պորփ. 240, Դ-Պորփ. 279, 322 ևն, 19.* **եոտոնիք** **τρίπους** *էլ. 4, Եոտոնեայք Անանուն՝ Հատուած ինչ Ստոր. մեկնութեան 140, Եոտանի Նոննոս 10 և այլն., 20.* **միայնագիրք** **μονόβιβλος** *էլ. 33,* **միայնագրում** *Վերլ. 587, 21.* **գրանոց** **βιβλιοθήκη** *էլ. 40, Վերլ. 563, 22.* **աներկրաչափ** **ἀγεωμέτρητος** *Սհմ. 128, էլ 21:*

§ 45. **Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի հայերեն մեկնութիւնները չեն կարող բոլորն էլ միասին համարվել միևնույն թարգմանչի աչխատութիւն:** – *Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերն են, ինչպես վերը հիչեցի՝ 1. Սահմանք իմաստասիրութեան: 2. Վերլուծութիւն Ներածութեան Պորփյուրի: 3. Առածք հինգ եւ վասն բաժանման: 4. Մեկնութիւն չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի Վերլուծականն: 5. Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի ընծայեալ իմաստասիրի: 6. Հատուած ինչ մեկնութեան Ստորոգութեանցն Արիստոտէլի*[1]*:*

1. Արդ՝ վերոհիչյալ երկերից կարող են միևնույն թարգմանչի աչխատութիւն համարվել առաջին երկուսը, որովհետև սրանց հունարան բառապաչարը գրեթե միևնույնն է, նաև նման հատ-

[1] Սույն երկերի մանրամասն վերնագրերը տե՛ս այս աչխատության մեջ՝ § 8:

վածներն այս երկերում թարգմանված են Հունարենից միակերպ: Այսպես՝

Սահմ. իմաստ., էջ 133	*Դ.Պորփ., էջ 264*
«եւ պարտ է դիտել, եթէ դասհման եւ դրաժանումն յիչէ Պղատոն: Զսահման առ ի Փեդոնի[1] տրամարանութեանն՝ ասելով, թէ Ով մանուկ դու, մի է սկիզբն զնդեցկարար խորհելոյն, դիտել յաղագս ո՛յր է մտածութիւնն. ապա թէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել»:	*«եւ ասի դիտաւորութիւն յարաքարչել զմեզ առ ինքն. վասն դի ըստ Պղատոնի ի մի է սկիզբն ճչմարիտ խորհելոյ՝ դիտել յաղագս ո՛յր է մտածութիւնն. ապա թէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել»:*

Սահմ. իմաստ., 133	*Դ.Պորփ., 302*
«Իսկ դրաժանումն յիչէ ի Սոփհստեայ տրամարանութեանն ասելով, թէ Ըստ բաժանական հնարս ոչինչ պանծասցի վախչել»:	*«եւ դի ախորժելի է Պղատոնի ոճով առնել դրաժանումն, ինքն իսկ յայտ արար ասելով: Զի ըստ բաժանականն, ասէ հնարս ոչինչ պանծասցի վախչել»:*

2. Վերլուծականքի մեկնության թարգմանությունը ևս Հունարան իր բառապաչարով չատ մոտ է վերոհիչյալ այս թարգմանություններին, սակայն կան և լեզվական որոչ տարբերություններ, ուստի դժվար է անվերապահորեն այս թարգմանությունը նույնպես վերագրել նորպղատոնական մեկնիչ Դավթի երկերի թարգմանչին: Ներքևում դնմ առ դնմ դրված են այս թարգմանությունների մեջ հանդիպող նման հատվածները, որոնք լեզվական տեսակետից կամ կատարելապես իրար համապատասխանում են կամ երբեմն տարբերվում.

Սահմ. իմաստ., 186	*Վերլ. մեկն. 559*
«Քանզի պարտ է դիտել զհինգ գիտական զօրութիւնս. զզգայութիւն, զներւակայութիւն, զկարծիս, զտրամախոհութիւն, զմիտս»:	*«Քանզի հինգ են ամենևքեան, որովք ճանաչեմք ինչ եւ գիտեմք. զզգայութիւն, ներւակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, միտք»:*

[1] Սխալ է, Հունարեն բնագրի համաձայն պետք է լինի ի Փետրոսի:

Սահմ. իմաստ., 185

«Որդոն՝ հոգի ինքնաչարժ, ինքնաչարժն մչտաչարժ, մչտաչարժն անմահ է»:

Սահմ. իմաստ., 214

«Որպէս զի մի զսուտ դիտութիւն ի կարծեաց ընկալցուք, եւ մի չար ինչ գործեսցուք»:

Դաւ. Պորփ., 258

«Իսկ հաւատալն եռակի գոյ, կամ ի հանրականացն զմասնականսն ցուցանել եւ հաւատարմացուցանել, կամ ի մասնականացն զհանրականսն, կամ ի դուզէն զզոյզն»:

Դաւ. Պորփ., 258

«Արդ յորժամ ի հանրականէն զմասնականսն ցուցանէ եւ հաւատարմացուցանէ, իսկապէս ապացուցական կոչի»:

Դաւ. Պորփ., 259

«Եւ յորժամ մասնականաւն զրնթանուրն հաւատարմացուցանիմք, այնպիսին մակածական կոչի. որպէս յորժամ կամելով զոք հաւատացուցանել՝ թէ ամենայն կենդանի զներքին կլափն չարժէ, ի մասնականացն զայսոսիկ ցուցանեմք ասելով՝ թէ վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն չարժեն, ապա ուրեմն ամենայն կենդանի զներքին կլափն չարժէ: .....
.....

Ո՛չ է ճշմարիտ. քանզի կոկորդիլոս զազանն եւ փիւնիկն հաւ ոչ չարժեն զներքին կլափն, այլ զվերինն»:

Վերլ. մեկն., 585

«Որդոն՝ անձն ինքնաչարժ, ինքնաչարժն մչտաչարժ, մչտաչարժն անմահ ապա ուրեմն անձն անմահ»:

Վերլ. մեկն. 559

«Որպէս զի մի զսուտ դիտութիւն ընկալցուք, եւ մի չար ինչ գործեսցուք»:

Վերլ. մեկն. 584

«Քանզի ամենայն հաւաստ՝ կամ ի հանգիտէն զհանգէտն յարղարէ, կամ ի նուազէն զմեծն, եւ կամ ի մեծէն զնուազն»:

Վերլ. մեկն. 584

«Իսկ որք ի մեծէն զնուազն հաւաստեցուցանեն, այնորիկ բազհաւաքումն ասին»:

Վերլ. մեկն. 584

«Իսկ որ ի նուազէն զմեծն յարդարէ, մակամտածութիւն ասի. որդոն՝ վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն չարժեն, որ ոչ է հարկաւոր փիւնիկաթեւի եւ կոկորդիլոսի եւ գուճողի (ուրիշ ընթերցուած՝ գոճայմի), որք զվերին կլափն չարժեն»:

Դաւ. Պորփ., 259

«Իսկ յորժամ Հաւասարեան դՀաւասարն ցուցաննմք, յայնժամ յարացոյց կոչի, որպէս յորժամ որ կամելով ոչ տալ Դիոնիսի մարմնապահս՝ ասելով. Արդ աթենացիք, ոչ տացուք Դիոնիսի թիկնապահս. վասն զի եւ Պիսիատրատոս առնալ բռնացաւ: .....
.....
Ո՛չ է ճշմարիտ. քանզի ոչ եթէ յորժամ Պիսիատրատոս բռնացաւ. եւ Դիոնէսիոս բռնացաւ»:

Վերլ. մեկն. 584

«Արդ որ ի հանգիստն դհանգչան յարդարել, ասի յարացոյց, որպէս՝ ոչ տացուք Դիոնէսիոսու թիկնապահ մարմնոյ. վասն զի եւ Պիսիատրատոս առնալ բռնացաւ: Քանզի ոչ հարկաւոր է՝ թէ Պիսիատրատոս բռնացաւ, եւ Դիոնէսիոս բռնանայ»:

3. Էլիասին ընծայված Սոփրոպոթեանց մեկնութեան մէջ ևս նրա հունարան բառամթերքը պատկանում է, մեծ մասամբ, Դավիթ մեկնիչի երկերի հայ թարգմանութեանց լեզվախմբին: Սակայն նրա մէջ կան և որոշ նշաններ, որոնք հիմք կարող են ծառայել ենթադրելու, որ այս մեկնութիւնը կարող է և չլինել միևնոյն թարգմանչի աշխատութիւն: Ամենաուշագրաւ նշանն այդ տեսակետից այն է, որ նրա հայերէն թարգմանութեան մէջ մի քանի տեղ հունարէն բնագիրը փոփոխված է և Սոկրատ վիպիսուհան փոխարինված է օրինակներում Դավիթ փիլիսոփայով: Այսպես՝

El. in Categ., էջ 169, 7-8

Ἀντὶ τοῦ εἰπεῖν 'κάλεσον τὸν Σωκράτην' λέγω 'κάλεσον τὸν φιλόσοφον,.

El. in Cat., էջ 170, 4-5

Ὥσπερ Σωκράτης καὶ Ἄργος ὁ κύων καὶ Ξάνθος ὁ ἵππος

El. in Cat., էջ 187, 27-30

Καὶ ὁ λόγος δὲ διωρισμένος ἐστίν, εἴγε πάντως μεταξὺ δύο συλλαβῶν ἐστι σιωπή, ἐν γὰρ τῷ φίλος τῆς φι συλλαβῆς ἡ ἐκφώνησις ἄλλη ἐστὶ παρὰ τὴν λος ἐκφώνησιν τῆς συλλαβῆς.

Էլ. Ստ. մեկն., 88, 14-15

«Փոխանակ ասելոյն "կոչեա' զԴաւիթ„' ասեմք "կոչեա' զփիլիսոփոսն„»:

Էլ. Ստ. մեկն., 89, 18

"Որպէս է Դաւիթ եւ Արգոս շուն եւ Եղիսարն ալիսակ ձի„:

Էլ. Ստ. մեկն., 119, 9-12

«Բայց եւ բան տարորոշեցեալ է, վասն զի ընդ մէջ ամենայն երկուց վաղաւորթեանց լուծիւն է, որպէս ի Դաւիթ անունն. քանզի ի "դա„ վաղաւորթեանն այլ արտաձայնութիւն է եւ ի "յիթ„ վաղաւորթեանն այլ արտաձայնութիւն»:

Այս փոփոխությունները, որ ըստ երևույթին, թարգմանչինն են և, ո՛չ հետագա ժամանակների ներմուծումներ, մի ակնարկ են, որ էլիասի Ստորոգութեանց մեկնությունը կարող է թարգմանված լինել Դավթի երկերի թարգմանություններից հետո, երբ նորպլատոնական Դավիթ մեկնիչն արդեն հռչակ էր ստացել հայ իմաստասիրական մատենագրության մեջ: Հավանորեն, Դավիթ վիկիտոփայի երկերը թարգմանելուց հետո միայն կարևոր է համարվել թարգմանել նաև նրա ուսուցիչ էլիաս-Օլիմպիոդորոսի Ստորոգութեանց մեկնությունը:

Նույն այդ ենթադրությունը կարծես թե հաստատվում է նաև այդ թարգմանությունների հունարան բառապաշարի մանրազնին քննությամբ: Թեև նրանց մեջ, մեծ մասամբ, միևնույն հունարան բառերն են գործածված, սակայն կան երբեմն և որոշ ուշագրավ տարբերություններ: Այսպես՝

1. *ἀντιπαράστασις* **հակայարակացութիւն** էլ. 133 12, 111 29, 112 26, 113 7, **նաև հակայարսաստութիւն** էլ. 135 2, **իսկ ընդդիմայարակայութիւն**[1] ՍՀմ. 124:

2. *ἔνστασις* **ներկացութիւն, ներակացութիւն**, էլ. 111 28, 133 13, **նաև ընդդիմակացութիւն** էլ. 116 15, **ներսաստութիւն**[2] էլ. 134 2, **իսկ ընդդիմակայութիւն** ՍահՀմ. 124.

3. *βάναυσοι τέχναι* **ձևոնարհնստականք** էլ. 20, **ձևոականք արհնստք** ՍՀմ. 184.

4. *ἀναλογία* **վերաբանութիւն** էլ. 49, 50, 87. Նախկին թարգմանություններում՝ **համեմատութիւն.**

5. *ἐν ροῇ καὶ ἀπορροῇ ἡ ὁσμὴ καὶ ἡ ὄρασις* ՍահՀմ. 125 32, 126 11, **ի ներհոսման եւ ի բացահոսման** էլ. 102 11: Բայի վերհիշյալ նկատառումներից՝ ուշագրավ է նաև այն, որ հունարեն միևնույն հատվածները թարգմանված են Դավթի ու էլիասի թարգմանություններում՝ երբեմն բառացի իրար նման, երբեմն էլ տարբեր: Եթե այդ թարգմանությունները, վերագրելու լիներք

---

[1] Թվում են աղճատված, պետք է լինի՝ ընդդիմայարակացութիւն, ընդդիմակացութիւն:

[2] «Ներսաստութիւն» և «հակայարսաստութիւն» սխալ թարգմանություն են: Ըստ երևույթին, թարգմանիչը հունարեն ընագրում ἀντιπαράστασις-ի ու ἔνστασις-ի փոխարեն ունեցել է աղճատված բառեր՝ ἀντιπαράτασις և ἔντασις: Համմտ. սաստկութիւն = ἐπίτασις Ներ. Պորփ. 236, սաստկութիւն և մակաստութիւն = ἐπίτασις Թր. 15 և 34:

դանադան Թարգմանիչների, համարելով Էլիասի մեկնութիւնը հետնագոյն Թարգմանութիւն, այդ դեպքում՝ պետք է նաև ընդունենք, որ Էլիասի Թարգմանութեան մէջ նման հատուածները քաղուած պիտի լինեն Դավթի Երկերի Թարգմանութիւնից: Նման ու համապատասխան այդ հատուածները հետևյալներն են.

Էլիաս, 36, 2-5

«Վասն դի ամենայն ինչ առ ի դիտաւորութիւն հայի, որպէս եւ Պղատոն ասէ. «Մի մանուկ, դու, մի է սկիզբն զեղեցկարարն խորհելոյ. գիտելն յաղագս ո՛յր է մտածութիւնն. ապա եթէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել»:

Սահմ., 133, 19-23

«Եւ պարտ է գիտել, եթէ գսահման եւ զրաժանումն չիշէ Պղատոն. գսահման ի Փեդրոսի տրամաբանութենանն ասելով, թէ „Մի մանուկ դու, մի է սկիզբն զեղեցկարար խորհելոյն. գիտել յաղագս ո՛յր է մտածութիւնն. ապա թէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել" »:

Էլիաս, 6, 3-6

«Զոր առանձինն յանդիմանէ Պղատոն զերկաբանչիւրան՝ եթէ Որպէս հասեալք ասէք ոչ զոլ հասումն, եթէ որպէս ոչ հասեալք: Եթէ որպէս հասեալք՝ ահա՛ է հասումն, ապա եթէ որպէս ոչ հասեալք՝ ոչ հաւանիմք ձեզ ոչ հասելոյդ, եթէ է անհասութիւն»:

Սահմ., 132, 10-17

«Ահ որա հանդիպի Պղատոն ախտացեալ առ առացեալս նոցա ոչ զոլ հասումն, ասելով՝ եթէ գիա՞րդ ասէք ոչ զոլ հասումն. որպէս հասեա՞լք, եթէ որպէս ոչ հասեալք: Եւ եթէ որպէս հասեալք, յայտ է թէ հասէք, եւ է հասումն: Իսկ եթէ որպէս ոչ հասեալք, ո՞վ հաւատասցէ ձեզ յասելդ զայդ, ոչ յասելոցդ եւ ոչ գիտացելոցն»:

Էլիաս, 19, 3-4

«Քանզի „ անմաքուր ի մաքուրն հալել ոչ իրաւ" ըստ Պղատոնի»:

Սահմ., 161, 8-9

«Վասն դի ըստ Պղատոնի՝ անսուրբն ի սուրբ հալիլ ո՛չ բարւոք եւ իրաւ»:

Էլիաս, 63, 13-14

«Քանզի ըստ բաժանական հնարն ոչինչ պանձասցի փախչել»:

Սահմ., 133, 34

«Ըստ բաժանական հնարս ոչինչ պանձասցի փախչիլ»:

Էլիաս, 46, 11-12

«Քանզի անուն լծակցէ սահմանին. քանզի անուն է սահման ամփոփեալ, իսկ սահման է անուն տարածեալ»:

Սահմ., 136, 30.. 32

«Քանզի ասեն, թէ անուն է սահման կարճառօտ. իսկ սահման է անուն ծաւալեալ»:

Էլիաս, 17, 14-17

«Քանզի հինգ են տեսակք չարաբարանութեան, այսինքն ապաշյուցի՝ ապաշյուցականն, տրամաբանականն, հարատասանականն, իմաստականն, քերդողականն»:

Վերլ., 558, 16-19

«Եւ պարտ է գիտել եթէ հինգ են տեսակք հատւածմանց՝ ապացուցական, տրամաբանական, ճարտասանական, իմաստական, քերթողական, որ եւ առասպելախառնումն»[1]:

Էլիաս, 21, 13-18

«Զորոյ գաւրութիւն եւ ինքն նոյն երրորդ ասելով ի Սոփիստէս տրամաբանութեան այսպէս. կրթեա՛ զքեզ ինքն կոչեցեալովքն առ ի յորմանջ թախանձութեամբ, տակաւին եւս նոր զոլով համբակ, ապա եթէ ո՛չ՝ վախիցէ ի քէն ճշմարիտն. թախանձութիւն կոչեաց զհետապնդութիւն իրացն՝ այսինքն զրանականն»:

Վերլ., 567, 38. 568. 6

«Դարձեալ յայտ արար յիւրում չարաղրութեանն, յորում ասելով. եթէ կրթեա՛ զքեզ յինքեան կոչեցեալովն առ ի բաղմաց թախանձութիւն, մինչ տակաւին եւս նորադոյնդ ես, ապա եթէ ոչ՝ վախցիցէ ի քէն: Ճշմարտաթախանձութիւն կոչեցեալ զրացագունութիւն իրացն, իսկ կրթութիւն զդիտութիւն զոյիցն»:

4. Դավիթ-Օլիմպիոդորոսի իմաստասիրական դպրոցի երկերի խմբին պատկանում է, անտարակոյս, նաև «Հատուած ինչ մեկնութեան Ստորոգութեանցն Արիստոտելի», որ տպագրված է Էլիասի Ստորոգութեանց մեկնութեան վերջում (էջ 140-149): Ինչպես վերհիշյալ թարգմանությունները, նույնպես և այս հատվածի թարգմանությունը, ընդհանուր առմամբ, ունին Հունարան բառապաշարի ու լեզվական առանձնահատկությունների նմանություններ, որովհետև Հունարան դպրոցի գործածման մեւնույն երթուղի շերտի արտացրություններ են: Սակայն ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ Անանունի մեկնիչի հատվածի թարգմանությունը հազիվ թե կարելի լինի վերագրել Դավթի Սահմանքի կամ Էլիասի Ստորոգութեանց մեկնության թարգմանիչներին: Այս ենթադրությանը հիմք են ծառայում, ամենից առաջ, Հունարեն նման հատվածների տարբեր թարգմանությունները հիշյալ երկերում: Այսպես՝

[1] Մսծածոչ թարգմանված է Վ-ում առասպելախառնում, իսկ Էլ-ում՝ առասպելաւտ, էլ. 17, 20:

Անան. մեկն., էջ 142–143

*«Արդ են Իդդոնիկեցիք՝ Արիստիպպոս եւ Կղէոմբրոտոս, որոյ ընթերցեալ զՊղատոնական գիրսն, որ վասն խոհման մահուն, եւ ոչ իմացեալ զասացեալսն՝ ընկեց զինքն ի պարապն: Վասն որոյ ասացեալն է ի Պասիկ. **Բերկրեսջիր**. Կղէոմբրոտոս Ամբրակիացի վազեալ ի բարձր պարապն ի գետին, **արժանի ոչինչ զործեաց** մահու, այլ զՊղատոնի, որ վասն հոգոյ գրէր՝ ընտրեալ»:*

Սահմ., էջ 164

*«Եւ պարտ է գիտել, եթէ ոմն Կղէոմբրոտոս Ամբրակիացի կարծելով, եթէ Պղատոն գրեաւրական մահուանէն հրամայէ խոհել իմաստասիրին, ընկեցեալ զինքն ի պարապն վախճանեցաւ. վասն որոյ ասէ Կալիմաքոս, **Ուրախացիր ո՛վ արիզական**, Կղէոմբրոտոս Ամբրակիացի վազեալ ի **բարձրաբերձ** պարապաց ի **դժոխս**, արժանի ինչ ոչ **ուսեալ** մահու, այլ չար զՊղատոնի դյազագս հոգւոյ գիրն ընտրեալ»:*

Անան. մեկն., էջ 147, 9–17

*«Եթէ ոչ վասն Թշնամութեան Պղատոնի չինեաց Արիստոտէլէս զԼիկիոնն. Աթենացիք դարձեալ կոչէին զնա՝ ասաց, եթէ Քաւ լիցի ինձ զայ յայն քաղաք, ուր նախանձ **ի նախանձու վերայ ծերանայ եւ զրպարտութիւնն ի զրպարտութեան վերայ**[1]: Այսուիկ յայտնեաց զրպարտութիւն զրպարտողացն. զրպարտողս զնոսա կոչեաց վասն Սոկրատայ, զի նոքա նմա ի բանդին զկոնիոնն»:*

Եղիաս, 30, 11–17

*«Քանզի յետ մահուն Սոկրատայ, եկեալ յԱթենից՝ տաճիկք ի Քաղաքիդում, եւ վերստին կոչելով որ յԱթենս եւ ոչ հաւանեալ՝ զրեաց այսպէս. Ոչ հաւանեցուիդ զԱթենացիս երկիցս մեղանչիլ զիմաստասիրութիւն, այո որս **խոզատանձ ի վերայ խոզատանձի ծերանայ եւ թուղ ի վերայ թղոյ**[1]: Թուղ ի վերայ թղոյ, գրելով՝ զզրպարտողսն նշանակեաց»:*

Համմտ. նաև Հետևյալ նման հատվածները՝ Անան. մեկն. 144 30–145 2, էլ. 5 3–6 և Սահմ. 132 10–17, Անան. մեկն. 148 6–7, էլ. 53 13–14 և Սահմ. 133 34:

Ուշադրության արժանի են նաև Անանուն մեկնիչի ու Էլիասի Ստորոգութեանց մեկնութիւնների մեջ լեզվական հետևյալ տարբերությունները.

1. Հունական իմաստասիրական զպրոցների անուններն

[1] Էլիասի հունարեն բնագիրն ունի՝ «ὄχνῃ ἐπ' ὀχνῃ γηράσκει, σῦκον δ'ἐπὶ σύκῳ»:

էլիասի թարգմանը միչտ հայացնում է, իսկ Անանուն մեկնիչի թարգմանը գործ է ածում նրանց հունական անուններըը: Այսպես՝

ա. Ἐφεκικός Արգելական էլ. 5 24, 6 12, 11 3, Եփեսկիական Անան. 140, 142, 144, 145, 147, բ. Ἡδονικός Հեչտական էլ. 8, 11, Իդոնիկեան Անան. 141, 142, 143, գ. Κυνικός Շնական էլ. 4, 6, 11, Կինիկեցի Անան. 141, «Կինիկեցիք, այսինքն՝ Շնականք» Անան. 147, դ. Περιπατητικός Ճնմական էլ. 1, 9, 10 եև, Պեոիպատիտկեանք Անան. 145, 146, 147, «Արիստոտէլականք, այսինքն՝ Ճնմականք» Անան. 142[1]:

2. Թեև Անանուն մեկնիչի Ստորոգութեանց մեկնութեան հատվածի հունարեն բնագիրը գտնված չէ, բայց թվում է ինձ, որ ներքև առաջ բերված օրինակները ևս պետք է լինեն հունարեն միևնույն բառերի ու նախադասությունների տարբեր թարգմանությունները: Այսպես՝

ա. αἱρεσιάρχης Հերձուածապետ էլ. 3, սկզբնատոր Հերձուածին Անան. 141, նաև Հերձուածապետ Անան, 147, բ. ἀπὸ τῆς πατρίδος (El. 108 36, 113 12) ի Հայրենեաց էլ. 3, 10, ի գաւառն Անան. 141, 147, գ. ἀπὸ τοῦ τρόπου τῆς ζωῆς (El. 111 2) ի յեղանակէ վարուցն էլ. 6, ի յեղանակէ կենացն Անան. 141, 147, դ. ἀπὸ τινος συμβεβηκότος (El. 112 18) յումեմնէ պատահմանէ էլ. 9, յմեմնէ պատահմանէ Անան. 142, ե. διττὴ γὰμ ἡ ἀναίδεια ἡ μὲν χείρων τῆς αἰδοῦς ἡ δὲ κρείττων (El. 111 14) «քանզի երկակի է անպատկառութիւն՝ մին յոռեզոյն քան զամաւթ եւ մին է լաւագոյն» էլ. 7 11–13, իսկ Անան. 141 11-12՝ «անամաւթութիւնն կրկին է՝ կամ ի վհատոյնն կամ ի վատթարագոյնն», զ. δι εὐγνωμοσύνην μαθητῶν (El. 128 1) յաղագս բարեմտութեան աշակերտաց էլ. 37 12-13, վասն բարերարութեան աշակերտացն Անան. 148 22-23, է. ποιητής բառը, որ Թրակացու բնականութենից սկսած հունարան բոլոր չերտերի երկերում թարգմանված է «ըերդող», Անանունի Ստորոգութեանց մեկնութեան հատվածի մեջ թարգմանված է «արարիչ»՝ էջ 144 6՝ «իբրու թէ յարարչէն իսկ ասացեալ՝ միչտ յարաևրաևանալ յաղագս Հիւրուց եւ բարեկամաց եյամտից»:

5. Սույն աչխատության առաջին մասում ցույց տրվեց արդեն, որ Արիստոտելի իմաստասիրության վերաբերյալ հնագույն հա-

[1] Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մյուս երկերում նույն բառերը թարգմանված են՝ Շնականք Սահմ. 166. ԴՊ. 272, Ճնմականք Սահմ. 167, ԴՊորփ. 280. 307, 325, 326, «Եփեսկիոսացն փիլիսոփայից» Վերլ. մեկն. 579:

յերեն երկերը, որոնք վերագրված են Եղիշ. մեծ մասամբ. Դավիթ Անհաղթ վիպասփյային, թարգմանված են հունարենից և դասագան հեղինակների աշխատություն են: Իսկ այժմ՝ Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբին պատկանող հայերեն թարգմանությունների մանրազնին քննությամբ լուսաբանում է և մի այլ կարևոր խնդիր,– որ հունարան երրորդ շերտի այս թարգմանությունները ո՛չ միայն տարբեր են հունարան առաջին և երկրորդ շերտերի թարգմանություններից, այլև իրենք իսկ, լինելով յեղվական տեսակետից խմբակից, չեն կարող համարվել միևնույն թարգմանչի աշխատություն: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, կատարելապես սխալ է դրվում խմաստասիրական երկերի թարգմանության վերաբերյալ խնդիրը, երբ բանասիրական այս կամ այն աշխատության մեջ խոսք է լինում չարունակ արիստոտելյան երկերի ու մեկնությունների **Հայ թարգմանչի** մասին:

§ 46. **Հունարեն համանման հատվածների թարգմանությունը հունարան զանազան շրջանների թարգմանություններում:** – Հունարան հնագույն թարգմանությունները ծագել են, ինչպես տեսանք, ո՛չ թե միաժամանակ ու միաժամանակ վեցերորդ, յոթներորդ կամ ութերորդ դարում, այլ զանազան ժամանակաշրջաններում, և բաժանվում են երեք տարբեր շերտերի: Արդ՝ այս հիմնական եզրակացությանը հանգելուց հետո, կարծում եմ, որ դժվար չէ բացատրել նրանց մեջ հանդիպող համանման հատվածների թարգմանության այն կապն ու առնչությունը, որ նկատված են մասամբ բանասիրական նորագույն աշխատություններում: Համանման այդ հատվածներն են.

1. Սահմ., 165, 16-19	*Պիտ., 360, 20-21*
«Որպէս եւ Թէոդնիս յայտ առնէ ցոմն Սկիւռնոս ասելով՝ թէ պարտ է յաղթատ թենէ փախչել եւ ի միջակիտեղն անկանել ծովն, եւ ի վիմաց. Սկիւռնէ, հոսիլ յարեզակնակոս»[1]:	«Արժանի է յաղթատութենէ փախչել, եւ ի մեծն անկանել՝ ծով եւ կամ ի վիմայ հոսիլ ի բարանց»:

[1] Սույն հատվածի հունարեն բնագիրը տե՛ս Dav. Prolegoin., էջ 32 19-23՝
"Ὡς καὶ ὁ Θέογνις τοῦτο δηλοῖ πρὸς Κύρνον τινά οὕτω λέγων.
Χρὴ πενίην φεύγοντα καὶ ἐς μεγακήτεα πόντον
Ῥίπτειν καὶ πετρῶν, Κύρνε, κατ' ἠλιβάτων„.

Եթե չեմ սխալվում հունարեն համանման այս հատվածների տարբեր թարգմանությունը մատնանշված է Ագ. Բաումգարտենի «Über das Buch „Die Chrie„» ուսումնասիրության մեջ[1]: Դժբախտաբար, այդ աշխատությունը չունեմ այժմ ձեռքիս տակ: Ամենաուշագրավն է այս հատվածներում հունարեն ἡλίβατος բառի տարբեր թարգմանությունը՝ արևգակնակոխ և բարձր: Ἡλίβατος այս բառը, ինչպես հայտնի է, հասկացվել է հունարենում երկու տարբեր իմաստով՝ կամ իբրև ἡλίτο-βατος = «անմատչելի, խիստ բարձր» և կամ իբրև ἡλιό-βατος = «արևգակնաճեմ, արևգակնա-կոխ»[2]: Արդ՝ «Յաղագս Պիտոյից» երկի թարգմանն այդ բառը հասկացել է առաջին իմաստով, իսկ Սահմանքի թարգմանը՝ երկրորդ իմաստով: Ավելի քան պարզ է, որ այդ թարգմանությունները պետք է լինեն տարբեր անձնավորություններ: Արդ՝ քանի որ սույն իմ աշխատության մեջ ցույց է տրված արդեն, որ «Յաղագս Պիտոյից» գրվածքը հունարեն առաջին չերտի թարգմանություն է, իսկ Սահմանքը՝ երրորդ չերտի, և որ այդ թարգմանությունները ծագել են տարբեր ժամանակաշրջաններում, շատ պարզ ու հասկանալի է այժմ՝ թե այդ թարգմանությունների և թե դրանց թարգմանիչների իրարից տարբեր լինելը, և այդ խնդիրը պետք է համարել ըստ իս վերջնականապես լուսաբանված ու լուծված:

2. Մի ուրիշ նույնքան հետաքրքրաշարժ հատված մատնացույց է արել Ն. Ադոնցն իր «Արուեստ Դիոնիսեայ քերականի» աշխատության մեջ.

Սահմ., էջ 182, 9–11	*Թրակ., էջ 42, 15–18*
«Արհեստ է՝ բազկացութիւն ի հասարակութենէ ներհմտութեամբ նախակրթեալ առ ի պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղումս»[3]:	«Արհեստ է՝ բազկացութիւն ի հոգմանէ նախակրթեալ առ ի պիտանացու ինչ իրս, որ ի կենցաղում»:

[1] Տե՛ս Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, 1886, էջ 457–515:

[2] Տե՛ս Dr. W. Papes Griechisch-Deutsches Handwörterbuch, Bd. I, 1888, էջ 1161:

[3] Հունարեն բնագիրը տե՛ս Dav. Proleg., էջ 144 5–6. «τέχνη ἐστὶ σύστημα ἐκ καταλήψεων ἐμπειριῴ συγγεγομνασμένη πρός τι τέλος εὔχρηστον τῶν ἐν τῷ βίῳ».

Իսկապես՝ այս հատվածը ո՛չ թե Թրակացու քերականության հայերեն բնագրի մեջ է գտնվում, այլ Դավթի փիլիսոփայի Քերականի մեկնության մեջ[1], սակայն Նիկ. Ադոնցը կարծում է, որ նույն հատվածը եղած պիտի լինի Թրակացու քերականության հավելվածում, որտեղից և, հավանարար, քաղել է Դավթի փիլիսոփան: Արդ՝ այս հատվածում ուշադրության արժանի է, ամենից առաջ, ինչպես չատ ուրիշ դիտել է Նիկ. Ադոնցը, κατάληψις հունարեն բառի տարբեր թարգմանությունը՝ հատուցություն և թողում: Սահմանքի թարգմանը κατάλεψις բառը հասկացել է καταλαμβάνειν = հասկանալ, հասու լինել բայից, իսկ մյուս թարգմանը՝ καταλείπειν = թողուլ բայից: Միանգամայն պարզ է, ինչպես և ճիշտ նկատում է Նիկ. Ադոնցը, որ այս հատվածների թարգմանները պետք է լինեն տարբեր անձնավորություններ: Սակայն Նիկ. Ադոնցը ենթադրում է միևնույն ժամանակ, որ այդ թարգմանությունները մնացած մյուս մասերում այնքան են իրար համապատասխան, որ կարող են լինել միևնույն գրական դպրոցի արտադրություն: Այս ենթադրությունն ըստ իս պետք է համարել այժմ անընդունելի, քանի որ գիտենք արդեն, որ Սահմանքը և Թրակացու քերականությունը տարբեր ժամանակի ու հունարան տարբեր դպրոցների թարգմանություններ են:

3. Էլիասը ևս իր Ստորոգութեանց մեկնության մեջ ունի երկու հատված, որոնք գտնվում են նաև Թրակացու քերականության մեջ:

Էլիաս, 66, 2-6	*Թրակ., 15, 23–16, 6*
«Եւ ոչ զբերդոցս պարտ է ընդունել, որք հակորոշեն զայրանունսն անուանականաց եւ բայականաց: Քանզի է Փափկանէս ի փափկութենէ եւ Աստուածանէս յաստուծոյ. իսկ բայականք՝ ի սիրելոյ սիրեմ եւ յիմանալոյ իմաստուն. զոր պարտ է զամենայնս յարանունս կոչել. իսկ նոքա զոմանս անուանականս կոչեն եւ զոմանս բայականս»:	*«Յարանուն է որ յար յանուն ինչ բերդոցեալ է, որպիսի Տիրհան, Խրախճան:* *Բայածական է որ ի բայէ ածանցոցեալ է, հիւրար սիրուն, իմաստուն, մարթուն»:*

[1] Նիկ. Ադոնց, Արուեստ Դիոնիսիայ քերականի, էջ 80:

Էլիաս, 61, 21-24	*Թրակ., 19, 9-12*
«Եւ կամ բան իրաց հաղորդին եւ բան անուան զանազանին, եւ լինին բազմանունքն՝ որպէս խազ. դալապր, մարտացու, վազակատար, սուսեր, նրան»[1]*:*	*«Փազանուն է որ ի զանազան անուանս զնոյն ցուցանէ. որպէս՝ խազ, դալապր, մարտացու, վազակատար, սուսեր նրան»:*

Նիկ. Ագոնցը, որ վերոհիշյալ իր աշխատության մեջ քննության է առել այս հատվածները (էջ CLXX-CLXXII), մատնանիշ է անում, որ Հունարեն Θέων և Τρύφων անուններն Էլիասի մեկնության մեջ թարգմանված են՝ Աստուածանէս և Փափկանէս, իսկ Թրակացու քերականության մեջ՝ Տիրիճան և Խրախճան: Բայց Հունարեն ξίφος, μάχαιρα, σπάθη, ἄορ և φάσγανον բառերը թարգմանված են թե՛ Էլիասի և թե՛ Թրակացու նույն երկկուսում միատեսակ՝ դալապր, մարտացու, սուսեր, խազ և նրան: Նիկ. Ագոնցի կարծիքով, երկրորդ հատվածում բառացի այդ նմանությունը կարելի է բացատրել երկու կերպ՝ կամ թարգմանությունները մեկնության անձի աշխատություն են և կամ Էլիասի թարգմանը օգտված պիտի լինի Թրակացու քերականության հայերեն թարգմանությունից: Ինչ վերաբերվում է Θέων և Τρύφων անունների տարբեր թարգմանության, Նիկ. Ագոնցը հնարավոր է համարում, որ մեկնության թարգմանը նույն անունները կարող էր թարգմանել մի դեպքում՝ Տիրիճան ու Խրախճան, կամենալով հայացնել Հունական այդ անունները, իսկ մի այլ դեպքում՝ Աստուածանէս և Փափկանէս, աշխատելով պահել նույն անուններն անփոփոխ՝ համապատասխան Հունարեն բնագրին: Կարևոր այս խնդրի վերջնական լուծումը նա թողնում է անորոշ, մինչև որ նրևան կգան նոր փաստեր ու տվյալներ, որոնք ցույց կտան Էլիասի թարգմանչի կախումը Թրակացու քերականության թարգմանությունից:

Քանի որ սույն իմ աշխատության մեջ ցույց տրվեց արդեն, որ Թրակացու քերականությունը Հունարան առաջին չերտի թարգմանություններից ամենահինն է, մինչդեռ Էլիասի Ստորոգութենանց մեկնությունը որոշվեց, որպես Հունարան դպրոցի երրորդ չերտի աշխատություն, թարգմանված շատ ավելի ուշ՝ մի այլ ժամանակաշրջանում, ուստի խոսք անգամ չի կարող լինել, որ

[1] Տե՛ս նաև Էլիաս, 55, 1:

Թրակացու քերականության ու Էլիասի Ստորոգութեանց մեկնության թարգմանները լինեն միևնույն անձը:

*Ըստ երևույթին, բազմանուն կամ վազանուն դատավարի սահմանման համար ընդհանուր ընդունված բացատրություն է համարվել, Թրակացու քերականության աղբևցությամբ, «խաղ, զալարը, մարտացու, վազակատար, սուսեր, նրան» վերոհիշյալ օրինակը: Նույն այդ օրինակը ծանոթ է եղել նաև Περὶ ἑρμηνείας գրոց մեկնության թարգմանչին, որը խոսելով բազմազանության մասին, ասում է՝ «Իսկ ի բազմազանութենէ, որպէս և **սուսերն** և **նրան** միևնոյն երով՝ զանազան զամանէ ստորոգին անուանք» (էջ 498, 9-11): Այս ընդհանուր օրինակը ցույց է տալիս միայն, որ հունարան երկրորդ և երրորդ չրջանների թարգմանիչները ծանոթ են եղել Թրակացու քերականության հնագույն թարգմանության, և նրանք, ինչպես տեսանք, գործ են ածել հաճախ նրա քերականական հատուկ եղրերը:*

*Կարևորը սակայն Էլիասի մեկնության մեջ ո՛չ թե այդ նմանություններն են, այլ նրա հունարան լեզվի ու քերականության վերը նչված այն էական առանձնահատկությունները, որոնք տարբերում են նրան Թրակացու քերականության և մյուս հնագույն թարգմանություններից: Այդ ակնհայտ տարբերությունները նկատելի են նույնիսկ վերոհիշյալ հատվածներում: Այսպես՝ ῥηματικός եղրը թարգմանված է Էլիասի մեկնության մեջ՝ բայական, իսկ Թրակացու քերականության մեջ՝ բայածական. նմանապես՝ **հակ** նախադրությունը հակորոշել բայի մեջ (Էլ. 55, 2) հատուկ է, ինչպես գիտենք, հունարան երկրորդ և երրորդ չրջանների թարգմանություններին, իսկ Թրակացու քերականության մեջ, ինչպես և հունարան առաջին չրջանի թարգմանություններում, այդ նախադրությունը դեռևս գործածական չէր: Ինձ թվում է, որ Թրակացու և Էլիասի թարգմանության խնդիրը ևս վերջնականապես լուծված պիտի համարենք այն իմաստով, որ այդ թարգմանությունները տարբեր ժամանակաչրջանների ու տարբեր թարգմանիչների աշխատություն են:*

4. Էլիասի Ստորոգութեանց մեկնության մեջ, ինչպես տեսանք (§ 44, 3), Արիստոտելի Ստորոգութեանց հայերեն թարգմանության բնագիրն ամրողջովին քաղված էր Յամբղիքյան խմբի հնագույն թարգմանությունից: Նույն մեկնության հայերեն բնագրի քննությունը ցույց է տալիս, որ Էլիասի թարգմանը ծանոթ է եղել նաև յամբղիքյան խմբի Արիստոտելի՝ «Յաղագս մեկնութեան»

դրոց հայերեն թարգմանության, որից նա քաղել է հետևյալ հատվածը.

Էլիաս, 126, 8-11	*Յաղ. մեկն., 464, 16-17*
«Իսկ ներում Յաղագս մեկնութեան բան առնու զչարաղիցեալն եւ զնշանականն. քանզի սահմանելով ասէ, եթէ բան է ձայն նշանական, որոյ մասանցն իմն նշանակ է զատ»:	***«Բան է ձայն նշանական, որոյ մասանցն իմն նշանական է զատ»:***

Արիստոտելի Վերլուծականքի մեկնության թարգմանը ևս ունի Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» գրուածքից հատվածներ, սակայն այդ հատվածները համապատասխան չեն յամբղիքյան խմբի թարգմանության:

Վերլ. մեկն., 574, 21-24	*Յաղ. մեկն., 476, 29-31*
«Քանզի Յաղագս մեկնութեան ասէ, թէ Այսոքիկ՝ որպէս ի վերլուծականն զոն ասացեալ, նոյնպէս դասեցին»:	*«Արդ այսոքիկ՝ որպէս ի Վերլուծականս ասի, այսպէս դասեալ է»*

Վերլ. մեկն., 574, 21-24	*Յաղ. մեկն., 476, 29-31*
«Իսկ Յաղագս մեկնութեան այսպէս սահմանէ զնա ասելով, տրամարանական է՝ հարցումն պատասխանւոյ միոյ նախադասութեան, կամ միոյ մասնական հակասութեան»:	*«Արդ եթէ հարցումն տրամաբանական ըն պատասխանատուութեան է խնդիր. կամ առարկելոյն, եւ կամ միւսոյ մասին հակասութեան»:*

Ուշադրության արժանի են այս հատվածներում, զլսավորապես, «նախադասութեան» և «առարկելոյն» բառերը, որոնք հունարեն միևնույն πρότασις բառի թարգմանություններն են: Առարկություն բառը նախադասության իմաստով գործ է ածվել նաև Περὶ ἑρμηνείας գրոց մեկնության թարգմանության մեջ, տե՛ս 486, 19-20՝ «առանց նախադասութեանց կամ առարկութեանց»:

§ 47. **Պորփյուրի Ներածութեան բնագրի հայերեն թարգմանությունը թվում է թե ավելի հին է, քան Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունները:** *– Հունարան թարգմանությունների ու նրանց թարգմանիչների խնդիրը, ինչպես տեսանում ենք, չատ*

ավելի բարդ ու խրթին է, քան ննթադրել է մեր մատենագրական ավանդությունը: Այդ տեսակետից, առանձին ուշադրության է արժանի Պորփյուրի Ներածութենան թարգմանությունը, որն այդ բարդ հարցերից թվում է ինձ ամենադժվարը:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ այդ թարգմանությունը վերագրվելու է նույն անձին, որը թարգմանել է Դավիթ մեկնիչի նույն այդ Ներածութենան Վերլուծութիւնը: Վերլուծութենան թարգմանը Ներածութենան բնագրի բոլոր մեկնելի հատվածները բառացի ու գրեթե անփոփոխ թողել է հենց այդ թարգմանությունից, և այն վերջինների հունարան բառապաշարը, բնականարար, ազդել է և Վերլուծութենան լեզվի վրա: Հնագույն ձեռագրերում այս երկու թարգմանությունները գտնվում են իրար կից՝ նախ՝ Ներածութենան բնագիրը և ապա՝ Դավիթ մեկնիչի Վերլուծութիւնը: Այս բոլոր նշանները, միասին առնված, տպավորություն են ստեղծում, իբր նրանք միևնույն թարգմանչի գործ են: Սակայն այս չտապ ու դյուրին ննթադրության դեմ ծագում են մի չարք ծանրակչիռ կասկածներ, որ դիմում ենք նրանց հունարան լեզվի ու քերականության մանրախույզ ու մանրամասն քննության: Ուսումնասիրության ընթացքում երևան են գալիս սրանց հունարան բառամթերքի ու քերականական առանձնահատկությունների մեջ լեզվա-քերականական բնորոշ խոտորումներ ու տարաձայնություններ, որոնք հազիվ թե որևէ այլ կերպ բացատրվեն, քան նրանց թարգմանման ժամանակի ու թարգմանների տարբերությամբ: Ներքև առաջ եմ բերում լեզվա-քերականական այդ չեղումներից մի չարք օրինակներ, որոնք հատուկ են Պորփյուրի Ներածության թարգմանությանը:

1. Ուշադրության արժանի են, ամենից առաջ, Պորփյուրի Ներածութենան թարգմանության մեջ հունարան այն առանձնահատուկ բառերը, որոնք, տարբերվելով Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի միևնույն նշանակություններ ունեցող բառերից, համապատասխանում են, մեծ մասամբ, նախկին հնագույն թարգմանությունների ուրույն բառապաշարին: Այդ կարգի բառերից են. ա. *ὑπερβεβηκὸς γένος* վերանցյալ սեռ Ներ. 231, 4, 232, 14, իսկ գերազանցյալ սեռ Դ-Պորփ. 284, 26 և այլն, 289, (= DPorph. 131, 13 և այլն, 137 9), վերանցյալ **ունի** Տիմ. Հակ, 86 21: բ. *ὑποβεβηκὸς εἶδος* վայրանցյալ տեսակ Ներ. 231, 6, **իսկ** ի ներքոյ տեսակ Դ-Պորփ. 295, 19, 296, 7 (= DPorph. 147, 10, 148, 5), Տիմ. Հակ. **ունի** «ըի վայ-

բանցնալն ի ստորագոյն մասունս երկրի ինքն է եւ վերանցնալն գներ դամննայն երկինս» 176, 28-30, վայրանցութիւն 177, 34[1]. գ. *σχέσις կալումն Ներ. 228, 7, բաղադանութիւն Դ Պորփ. 273, 35, 295, 26 և (= DPorph. 111, 31, 32, 147, 15 ևն), Սահմ. 196, 11, 197, 12, (= DProl. 60, 27, 61, 20), սակայն կալումն Դ Պորփ. 331, 18, կալք Թր. 32, 7, σχετικός ըստ կալման էլ. 84, 17, 18, 101, 25. 28 (= El. 167, 3. 5, 177, 16. 18).* դ. *περιληπτικόν բագձաձական Ներ. 233, 17, բակձաձական Թր. 18, 4, բակձաձելով Իրևն. Ընդ. Հերմ. 168, 5, ե. τὸ ἄνω, τὸ κάτω վերին, վայրին Ներ. 233, 22. 35, քայց վերին, ներքին էլ. 135, 8 ևն (= էլ. 197, 15), πρὸς τὰ ἄνω, πρὸς τὰ κάτω առ վերագոյնն, առ ստորնագոյնն Դ Պորփ. 295, 28. 30, 296, 1 (= DPorph. 147, 16. 17. 18).* զ. *ἀναγκαῖος Հարկաւոր Ներ. 227, 3, իսկ կարեւոր Դ Պորփ. 267, ὄντος ἀναγκαίου Ելոյր Հարկաւորի Ներ. 227, 3, գոլով կարեւոր Դ Պորփ. 267, 7*[2]. է. *παράστασις յանդիմանակացութիւն Ներ. 250, 23, իսկ παρίστημι յարկացոյցեմ Դ Պորփ. 309, 16, էլ. 39, 2, նաև Թր. 22, 14.* ը. *παράδοσις ընձեռութիւն Ներ. 227, 9, գործ է ածված, գլխաւորապես, առաջին և երկրորդ չրջանի հունարան թարգմանութիւններում՝ Փիլ. Լին. էջ 412, Փիլ. էլ. 444, Իրևն. Ընդդեմ Հերմ. 37, ընձեռեմ Պիտ. 341, Ար. Ստ. 364, ՅՍտ. 411, ՅՊեր. 522, Տիմ. Հակ. 236, 237, իսկ παραδίδωμι յարատրեմ Սահմ. 135, 23 (= DProl. 11, 5), էլ. 71, 3 (= El. 153, 10), աւանդեմ, աւանդութիւն էլ. 103, 120 (= El. 178, 188).* թ. *ἡμίονος իշակէս Ներ. 246, 20. 23, իսկ կիսէշ Սահմ. 140, 36 (= Prol. 14, 36).* ժ. *τέμνω,*

---

[1] Վայր նախադրության գործածությունը սովորական է Տիմոթեոսի Հակաճառության թարգմանության մեջ, օրինակ՝ վայրարուսեալ 143. 17, վայրանկեալ 176, 15, վայրնկեալ 213, 17, վայրներթեալ 311, 21, վայրատուեալ 304, 12, վայրբերեմ 198, 27, վայրիջութիւն 9, 20, 132, 33 և այլն. մյուս թարգմանություններում վայր նախադրության գործածությունը հազվադեպ է, տե՛ս՝ վայրարերութիւն Պիտ. 424, 9, վայրարերեալ Պիտ. 517, 20, վայրիջութիւն Մենն. ի Վերլ. 588, 15, «վերակնել կամ վայրակնել» ՅՊեր. 513, 30:

[2] Ներածութեան մեջ «ելոյր Հարկաւորի» թարգմանությունը, ըստ երևույթին, խորթ է թվացել Դավթի Վերլուծութեան թարգմանչին, «Հարկաւոր» բառի փոխարեն նա գերադասել է գործածել «կարեւոր» բառը, իսկ «ել» բայի փոխարեն՝ «գոյ» Դ Պորփ. 267: Ուշադրության արժանի է նաև հետևյալ դարձվածքը՝ «կարեւորապէս որ ընդ մէջն կտրի՝ վախճանի, այսինքն Հարկաւորապէս» Դ Պորփ. 267, 27-28:

διαιρέω, τομή, τμῆμα, διαίρεσις Ներ. կոտորիմ 231, 20, 236, 35, 241, 22, կոտորումն 233, 20, διαιρεθῆναι կոտորիլ Թր. 21, 14, իսկ Հատանիմ, Հատած, Հատումն, բաժանումն և այլն Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում. ժա. εἷς, μία, ἕν մու Ներ. 233, 15, գործ է ածված հունարան առաջին և երկրորդ չերտերի թարգմանություններում՝ Թր. 8, 15, 21, 29, Փիլ. Լին. 332, Պետ. 398, 501, 503, 527, Տիմ. Հակաճ. 65, 68, 176, 201 և այլն հաճախ, Ար. Պեր. 464, 468, մում 468, 17, մոյր 476, 32 և այլն, ՅՊեր. 533, 547 և այլն, իսկ Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում այլևս չի հանդիպում:

2. Ելեվական այս նկատառումներից անկախ ավելի ևս մեծ կարևորություն ունեն Ներածության թարգմանության բերականական առանձնահատկությունները, որոնք ունեն հնության պարզ նշաններ, բնորոշ են, մասամբ, միայն այս թարգմանության համար և գործածական չեն այլևս Դավթի Վերլուծության մեջ, ինչպես և Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մյուս թարգմանություններում:

ա. Այդ տեսակետից ուշադրության արժանի է, ամենից առաջ, սեռական հոլովի վերջավորության ը տառը, որ գործ է ածված միայն Ներածության բնագրում. օրինակ՝ ելոյը էջ 227, կոչեցելոյը, սեռոյը, ասացելոյը 228, Սոկրատոյը, Պղատոնոյը, մարդոյը, միայնոյը, մարդոցըն 229, և նույն վերջավորությունները կրկնվում են չարունակ ամբողջ երկում: Դավթի Վերլուծության թարգմանության մեջ այդ վերջավորությունները հանդիպում են միայն տեղ-տեղ՝ Ներածության բնագրից քաղված հատվածներում, բայց ո՛չ բուն մեկնության մեջ. չկան նրանք և Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մյուս թարգմանություններում: Թեև հունարան երկերի հրատարակությունները դեռևս գիտական բնույթ չունեն և համեմատության չեն առնված ձեռագրական բոլոր տարբեր ընթերցվածները, բայց որքան ևս ծանոթ եմ հնագույն ձեռագրերին՝ նրանց մեջ ևս սեռականի արտասովոր այդ վերջավորությունները գտնվում են միմիայն Ներածության բնագրում: Դժվար է ենթադրել, որ դրանք խմբագրված ու փոփոխված լինեն հետագա ժամանակներում հատկապես Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում, ուստի հավանական է թվում ինձ, որ վերոհիշյալ թարգմանությունները համարվելու են սարերի թարգմանիչների աշխատություն:

բ. Ներածության թարգմանության հատուկ է նաև հետևյալ

տառայի դարձվածքը՝ ἐν τῷ τί ἐστι թարգմանված է «ի ներում պինչէն» եւ ἐν τῷ ὁποῖόν τί ἐστὶ «ի ներում որպիսինչէն» Ներ. 229, 230; 244 ևն: Դավթի Վերլուծութեան թարգմանը, քաղելով տառրատի այդ հունարանութիւնները Ներածութեան բնագրից, ինքը երբեմն փոփոխում է այդ խրթնարանութիւնները և նոյն եղրերը թարգմանում՝ «ի ներ պինչէումն» և «ի ներ որպիսինչէումն» Դ-Պորփ. 256, 288 և այլն, իսկ Սահմանաց թարգմանն ավելի ևս հայացված ձևով ունի «ի պինչէումն» Սահմ. 122, նաև Դ-Պորփ. 356: «Ներում» և «ի ներում» հունարանութիւնները մյուս թարգմանութիւններից և ո՛չ մեկում գործածական չեն, մի անգամ միայն Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» բնագրում պատահում է «ներում բարւոյն» աստղաւածքը, որ թվում է աղճատված կամ կասկածելի (տե՛ս Fr. C. Conybeare, Anecdota Oxoniensia, էջ 50):

գ. Ինչպես վերև հիշեցի (§ 44, 3), Ներածութեան թարգմանը հունարէն ἐν նախդրի դիմաց երկու անգամ միայն գործ է ածել նաև «ն» նախդիրը, որ սովորական էր հունարան առաջին և երկրորդ չերտերի թարգմանութիւններում: Թվում է, որ Ներածութեան բնագիրը, ունենալով քերականական յատահատուկ կերտումներ, դերծ չէ եղել հնագոյն թարգմանութիւնների անմիջական ազդեցութիւնից՝ ո՛չ միայն իր բառապաշարի (§ 47, 1), այլև քերականութեան մեջ: Դրանց փոխատարձ առնչութեան հատկանիշներ կարող են համարվել նաև արվեստական հունարանութիւնների ու քերականական անհարազատ ձևերի հետևյալ օրինակները. 1. οἱ κατὰ μέρος ըստմասնայքն Ներ. 233, 12, 233, 14, 245, 29, դրստմասնէգն Ներ. 240, 13. 14, ի մասնէքն Իրեն. Ընդ. Հերմ. 31, մերստմիջէց Ներ. 244, 30, Փիլ. Լին. 74, ըստ միջէքն Տիմ. Հակ. 182, 5, ըստ միջէգն Տիմ. 6, 3, ըստ բոլորէցն Ար. Պեր. 466, 24, զայլմէց Ար. Պեր. 463, 18. 22 ևն. 2. οἱ καθ' ἕκαστον ըստ իւրաքանչիւրքն Ներ. 233, 13, Ար. Ստոր. 394, իսկ իւրաքանչիւրն Դ-Պորփ. 290, 11. 12 (= DPorph. 138, 26. 27). 3. τὰ ὑπάλληλα ընդմիմեանմբքն Ներ. 232, 18. 22, 234, 3. 4, Դ-Պորփ. 294, 37, 297, 27, էլ. 77, 26, 79, Ար. Ստ. 361, 7. 4. καθ' αὑτό ըստինքեան Ներ. 235, 35. 36, դրստնքեանն Տիմ. Հակ. 114, 1, էլ. 81. 5. մասինցն, առաջինցն Ներ. 234, 19, 262, 37, «երկնայինց եւ աստուածայից»՝ Փիլ. Լին. էջ 416, անձինցն Ար. Պեր. 461 և այլն:

3. Ներածութեան հայերեն բնագրի լեզվա-քերականական հե-

տագոտությունն անհրաժեշտ է ավելի ևս խորացնել, համեմատելով հայերենը հունարեն բնագրի հետ[1]: Բայց, կարծում եմ, որ վերոհիշյալ դիտողություններն անգամ հիմք են տալիս ենթադրելու, որ այս գրվածքը թարգմանված պիտի լինի Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերից առաջ, հավանաբար, հունարան երկրորդ չերտի թարգմանությունների ժամանակաշրջանում: Դավթի Վերլուծութեան թարգմանը ո՛չ թե ինքն է թարգմանել այդ բնագիրը, այլ, ըստ երևույթին, օգտվել է արդեն գոյություն ունեցող նախնագույն թարգմանությունից: Նույնը տեղի է ունեցել և Թրակացու Քերականության հետ, որի թարգմանությունը հունարան առաջին շրջանի աշխատություն է, մինչդեռ Դավիթ քերականի մեկնությունը, ինչպես տեսանք, ավելի ուշ ժամանակի և հունարան այլ չերտի արտադրություն է:

§ 48. **Արիստոտելի «Պատմութիւն յաղագս աշխարհի» գրվածքի հայերեն թարգմանության ժամանակաշրջանը:** — *Արիստոտելին վերագրված Περὶ κόσμου և Περὶ ἀρετῶν գրվածքների թարգմանությունները հայերենում ունեն մի փոքր տարբեր վերնագրեր՝ «Արիստոտէլի իմաստասիրի թուղթ առ Աղեքսանդրոս Թագաւոր՝ պատմութիւն յաղագս աշխարհի» և «Արիստոտէլի յաղագս առաքինութեանց առ Աղեքսանդրոս Թագաւոր»:*

Այս թարգմանությունները տպագրված են Վենետիկում Դավթի Անհաղթի մատենագրության չարքում (Վենետիկ, 1833, էջ 603–628 և 629–635), սակայն առանց որևէ բավարար բացատրության, ըստ երևույթին, թյուրիմացարար: Որքան ինձ հայտնի է, դրանց թարգմանչի մասին չկա և ո՛չ մի վկայություն հայոց մատենագրական ավանդության մեջ, ո՛չ էլ որևէ ակնարկ հնագույն ձեռագրերի վերնագրերի մեջ: Հրատարակիչների այս սխալն ունեցել է անսպասելի հետևանքներ: Համակերպվելով հրատարակիչներին, Դավիթ Անհաղթի խնդրով զբաղվող բանասերները ևս համարել են այդ թարգմանությունները, Արիստոտելի երկերի մյուս թարգմանությունների ու մեկնությունների հետ միասին, միևնույն հեղինակի ու միևնույն մեկնիչի աշխատություն[2]: Սա-

---

[1] Հունարեն հրատարակությունն իրերիս հետ թալանվեց Բագվի ավերածությունների ժամանակ, և այժմ, դժբախտաբար, չունենի ձեռքիս խնդրի վերջնական լուսաբանության համար:

[2] Տե՛ս **Գալուստ Տեր-Մկրտչյան,** Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1896, էջ 35:

կայն հարևանցի իսկ ծանոթությունն այս թարգմանությունների հետ պետք է համոզեր բանասերներին, որ սրանք, թեև հունարան, բայց ընթերցանության մատչելի թարգմանություններ են, ազատ լեզվական ու քերականական այն բոլոր խժդժություններից, որ հատուկ են, գլխավորապես, Արիստոտելի մյուս բնագրերի թարգմանություններին: Լեզվական այդ տարբերությունը նկատած են եղել Հայկազյան բառգրքի աշխատակիցները, որոնք նույն թարգմանությունների լեզուն համարել են՝ «ըստ բաւականին հայկարան և ընտիր. իսկ Ստորոգութիւնքն, Պերիարմենիաս, և որ ի սոցին սակի, են անպէտ եւ անչուք հելլենարանութիւն նիւթական» (Հատոր առաջին, էջ 10): Պրոֆ. Ֆ. Կոնիրերը, որ համեմատել է հայերեն թարգմանություններն Արիստոտելի հունարեն բնագրերի հետ, ուշադրության առնելով սրանց ուրույն ոճը, բաժանում է այս գրվածքները Դավիթ Անհաղթին վերագրված երկերի խմբից ու նրանց թարգմանման ժամանակը հետ տանում մինչև ութերորդ կամ իններորդ դար (Anecd. Oxon., էջ XXXII): Վերև մենք տեսանք, որ մատենագրական հայ ավանդությունը մեծ չափումների տեղիք է տվել, վերագրելով հունարան հնագույն երկերի մեծագույն մասը Դավիթ Անհաղթ հայ փիլիսոփային, մինչդեռ այդ գրվածքները տարբեր թարգմանիչների աշխատություն են եւ թարգմանված են դանազան ժամանակաշրջաններում, սկսած, հավանարար, հինգերորդ դարի վերջերից և կամ վեցերորդ դարի սկզբներից: Այս եղրակացության հանգելուց հետո՝ պետք է այսուհետև անտես առնել առասպելյալ ավանդությունը Դավիթ Անհաղթի մասին, և հունարան ամեն մի գրվածքի թարգմանչի ու թարգմանման ժամանակաշրջանի խնդիրը որոշել համաձայն այդ նոր եղրակացության, հիմնվելով լեզվական ու մատենագրական տարբեր կարգի փաստերի վրա: Այդ տեսակետից, «Յաղագս աշխարհի» թարգմանությունը, ազատ լինելով հունարան մյուս թարգմանությունների լեզվա-քերականական խրթին անհարթություններից, թեև համեմատաբար քիչ նյութ է տալիս բաղդատությունների համար, սակայն, այնուամենայնիվ, թվում է ինձ, որ նրա թարգմանման ժամանակը մոտավորապես որոշվում է: Ինչպես արդեն գիտենք, Գալուստ Տեր-Մկրտչյանը վերահիշյալ «Անանիա Շիրակացի» ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ այս թարգմանությունը ծառայել է Շիրակացուն, որպես գլխավոր աղբյուր

«Յաղագս չրջագայութեան երկնից» աշխատութեան համար (տե՛ս վերև § 36): Պարզ է ուրեմն՝ որ այս գրվածքը թարգմանված պիտի լինի յորերորդ կամ վեցերորդ դարում, բայց ո՛չ ավելի ուշ: Թարգմանութիւնը չի կարող լինել Շիրակացունը, անհավանական է նաև, որ լինի նրան ժամանակակից, որովհետև, ինչպես ճիշտ դիտել է Գալուստ Տեր-Մկրտչյանը, Անանիա Շիրակացին անհրաժեշտ է համարել փոփոխել կամ բաց թողնել նրա հունարան դժվարիմաց բառերը և աշխատել է պատմել քաղվածքները հայերեն ավելի ևս մատչելի լեզվով: Ուրեմն՝ չատ հավանական է, որ այդ թարգմանութիւնը պետք է լիներ նախնագույն ժամանակաշրջանի աշխատութիւն: Ճիշտ այդ եզրակացութիւնը ստացվում է նաև նրա լեզվական առանձնահատկութիւնների քննութեամբ: Առաջ եմ բերում լեզվական իմ դիտողութիւններից ամենակարևորները:

1. «Յաղագս աշխարհի» թարգմանութիւնն ունի գործածած Թրակացու բերականութեան հատուկ բառերը, ինչպես՝ ա. ἐνεστῶς ներկայ Ար. Աշխ. 628, 14, Թր. 22, 23, բ. παρεληλυθώς անցեալ Ար. Աշխ. 628, 13, Թր. 23, 26, գ. μέλλων ապառնի Ար. Աշխ. 628, 14, Թր. 23, 26, 24, 5 ևն, դ. σύνδεσμος չաղկապ Թր. 12, 16, 35, Ար. Աշխ. 622, 6, չաղկապումն Ար. Աշխ. 624, 27, չաղկապեմ Ար. Աշխ. 624, 31, ե. ποιητής քերդող Թր. 1, 5, 2, 29, Ար. Աշխ. քերթող 619, 25, 627, 2. 17, զ. γραμματική քերականութիւն Ար. Աշխ. 617, 1, Թր. 1, է. ἐμμελῶς ներդաշնակապէս Ար. Աշխ. 622, 35, 626, 34, Թր. 2, 25: Ուրեմն՝ նրա թարգմանութեան ժամանակը պետք է դնել Թրակացու քերականութենից հետո:

2. Նույն թարգմանութիւնն ունեն այն բառերն ու նախադրութիւնները, որոնք, ինչպես տեսանք, գործ են ածվել առաջին անգամ երկրորդ չերտի հունարան թարգմանութիւններում (տե՛ս § 40 բ, 42 դ): Այդ կարգի բառերից են. ա. տարբերութիւն διαφορά Ար. Աշխ. 613, 36, ԱՍտ. 361, 8, ՅՊետ. 496, 16, Տիմ. Հակ. 262, 31. բ. մակացու ἐπιστήμων Ար. Աշխ. 604, 13, ՅՍտ. 422, 12, մակացութիւն Ար. Ստ. 379, 4, ՅՍտ. 418, 7, Տիմ. Հակ. 105, 27. գ. ներհակ ἐνάντιος Ար. Աշխ. 611, 38, 616, 13. 19. 25, 617, 9. 17, Ար. Ստ. 369, 21, ՅՍտ. 413, 18, Ար. Պեր. 475, 22, ՅՊեր. 528, Տիմ. Հակ. 160, 5. դ. հակակայիլ ἀντικεῖσθαι Ար. Աշխ. 619, 1, Ար. Ստ. 396, 4, ՅՍտ. 425, 13, Ար. Պեր. 474, 12 ևն, հակակայութիւն Ար. Աշխ. 617, 22. ե. արտօնութիւն ἐξοχή Ար. Աշխ. 621, 10, արտոնող Ար. Ստ. 373, 20 և այլն:

Այս բառերի գործածությունը «Յաղագս աչխարհի» թարգմանության մեջ պարզ մի նշան է թատ իս, որ սրա թարգմանման ժամանակը չի կարելի իջեցնել դարձ հունարան թարգմանությունների առաջին չրջանը:

3. Ուշադրության արժանի են նաև հետևյալ սակավագյուտ բառերը. ա. դերհիսկական ἀνταρκτικός *Ար. Աչխ. 605, 17,* ἀντι *նախադրության այս թարգմանությունն առանձնահատուկ է հնագույն թարգմանություններին հետևյալ բառերում՝* ἀντωνυμία *դերանուն Թր. 12, 15, 30, 1, դերանունութիւն Թր. 27, 28, 1, Փիլ. լին. 70 (Թրակացու քերականության ազդեցությամբ նաև Ար. Պեր. 489, 11),* ἀνταποδοτικόν *Թր. 18, 4, 20, 18,* αντίχριστος *դերաքրիստոս Տիմ. Հակ. 37, 40, 41 ևն. ր.* ζῶδιον *կենդանատնսակ Ար. Աչխ. 605, 27, նաև Շիր., Մամբ. Սահ. կք. արմատ., կենդանակերպ Շիր., Տիմ.. իսկ կենդանակ Փիլ. Եվ. 521, կենդակ Փիլ. Եվ. 520, Պետ. 489, 16, Փիլ. քհ., ղ.* παθητός, παθητικός *Ար. Աչխ. կրական 606, 31, Ար. Սատ. 388, 6, Յատ. 410, 11, կրաւորական Թր. 47 և այլն:*

Վերհիչյալ բոլոր դիտողությունները ի մի բերելով, կարծում եմ, որ «Յաղագս աչխարհի» թարգմանության ժամանակը պետք է դնել վեցերորդ դարի երկրորդ կեսում կամ յոթներորդ դարի սկզբներում՝ Տիմոթեոսի Հակաճառութեան և յամբղիքյան խմբի թարգմանությունների ժամանակաչրջանից սկսած մինչև Անանիա Շիրակացու ժամանակը: Այս եղրակացությամբ հիչյալ թարգմանության ժամանակի վերաբերմամբ ստացվում են որոչ ու հաստատուն սահմաններ, մինչդեռ առաջ այդ սահմանները մնում էին այնքան անորոչ, որ պրոֆ. Ֆ. Կոնիրերը հնարավոր էր համարել հետ տանել այդ թարգմանությունը մինչև ութերորդ կամ անգամ իններորդ դար:

§ 49. Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունների թարգմանության մոտավոր ժամանակաչրջանը: — *Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունները, թեև որոչ չափով նման են իրար հունարան իրենց բառապաչարով, սակայն, ինչպես գիտենք, չեն կարող բոլորն էլ միասին լինել միևնույն թարգմանչի աչխատություն: Ուրեմն՝ նրանց թարգմանման ժամանակը որոչելիս՝ պետք է աչքի առաջ ունենալ, որ կարող են նրանք ևս թարգմանված լինել տարբեր ժամանակներում: Մինչ այժմ՝ արված դիտողություններից սրանց թարգմանման ժամանակի նկատմամբ պարզվեց միայն հետևյալը՝ որ մեկնությունների այս*

ամրողջ խումբը, առանց բացառության, թարգմանված պիտի լինի հունարեն երկրորդ չերտի թարգմանություններից հետո, ուրեմն՝ ո՛չ ավելի վաղ, քան վեցերորդ դարի վերջերը: Բայց մինչև ո՛ր ժամանակը կամ դարաշրջանը պետք է տանել առանձին թարգմանությունները, այդ խնդիրը մնում է մութ ու անորոշ: Հայ բանասերներից ոմանք աշխատել են պարզաբանել այս հարցը, որոնելով սույն թարգմանություններից առնված քաղվածքներ կամ որոշ հետքեր յոթներորդ կամ ութերորդ դարերի մատենագրական երկերում: Սակայն ստացված արդյունքները դեռևս գոհացուցիչ չեն:

Գալուստ Տեր-Մկրտչյանը, իր «Պետրոս Սյունյաց Եպիսկոպոս» աշխատության մեջ (Վաղարշապատ, 1902), մատնացույց էր արել, որ «Հարցմունք յաղագս մարմնաւորութենանն Տեառն դանագանք՝ Վաչագանի Ադուանից իշխանի ըստ Պետրոսի Սիւնեաց Եպիսկոպոսի եւ իմաստասիրի» գրվածքը ծայրեծայր ներչնչված է արիստոտելյան փիլիսոփայությամբ: Բազդատություններից պարզ երևում է, որ այս գրվածքի հեղինակին ծանոթ են եղել հատկապես Դավթի Սահմանաց գիրքը և Պորփյուրի Վերլուծութիւնը: Սակայն Վաչագանի հարցումները, ինչպես երևում է Գալուստ Տեր-Մկրտչյանի ուսումնասիրությունից ո՛չ մի դեպքում չեն կարող վերագրվել Պետրոս Սյունյաց Եպիսկոպոսին, այլ, հավանարար, ծագած պիտի լինեն հայ և աղվան կրոնական վեճերի ժամանակ VIII-X դարերում: Սահմանաց և Պորփյուրի Վերլուծութեան ակնարկ հետքերը հարցումներում՝ նրանց թարգմանման ժամանակաշրջանի վերաբերմամբ՝ չատ փիչ բան են ավելացնում մեր գիտացածին: Արդեն իսկ հայտնի էր, որ Գրիգոր Մագիստրոսի «առ վարդապետն Սարգիս» գրված թղթում հիշված կան և Դավիթ փիլիսոփան և Օլիմպիոդորոսի գրվածքը, որի թարգմանությունը նա վերագրել է «Թարգմանչացն»[1]:

Էջմիածնայ մատենադարանի թիվ 596 ձեռագրում (= Մայր ցուցակ, թիվ 582) Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման եւ լուծման» գրվածքը, ինչպես նկատել է դարձյալ Գալուստ Տեր-Մկրտչյանը[2], ունի հետևյալ առաջաբանը, որ գրեթե բառացի քաղված է Պորփյուրի Ներածութեան բնագրից.

---

[1] Տե՛ս Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 66:

[2] Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1896, էջ 11-12:

Ներած. Պորփ., 227	Ձեռ. թիվ 596, էջ 185a
«Զամենայնին] ասաց իմաստունն], թէպէտեւ սակաւ ի բազմաց, նթէ դինչ ընդունելութիւնն, դինչ բազմապատիկ եւ բոլորովին յաղագս բաժանմանց եւ ապացուցից՝ սիտանացու կոյր սոցայցն տեսութեանց: Համառաւտ քեզ ընձեռութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւուց՝ իւր ներածութեան չեղանակի՝ զառ ծերունեացն անցանելով բանիւ, ի խորագունից ի բաց կալ ի խնդրոց եւ պարզագունից չափաւորապէն հանդիպելով: Արդ աստէն իսկ վազվազակի յաղագս հարցման եւ լուծման...»:	«Ելոյր Հարկաւորի, Քրիսաւորիէ, եւ յ'առ'ս Արիստոտէլի ստորոգութեանցն վարդապետութիւն, դիտել՝ դինչ սեռ եւ դինչ տարբերութիւն եւ դինչ տեսակ, դինչ յատուկ եւ դինչ պատահումն ի սահմանացն բացատրութիւն, եւ բոլորովին յաղագս բաժանման եւ ապացուցի սիտանացու ելոյ սոցայցն տեսութիւն, Համառօտ քեզ ընձեռութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւուց իւր ներածութեան չեղանակի զառ ծերունեացն անցանել բանիւ, ի խորագունից ի բաց կալ ի խնդրոց՝ եւ պարզագունից չափաւորապէս հանդիպելով: Արդ աստէն իսկ վազվազակի յաղագս սեռի եւ տեսակի...»:

Այս ամբողջ հատվածը չունի սակայն Էջմիածնի մատենադարանի Գևորգյան ցուցակի թիվ 267 ձեռագիրը, որը սկսվում է ուղղակի հարցումներից: Գալուստ Տեր-Մկրտչյանը վավերական է համարում այս վերջին ձեռագրի սկզբնավորությունը և ենթադրում, որ ո՛չ ինքը Անանիա Շիրակացին, այլ մի ուրիշը՝ Պորփյուրի Ներածության վերոհիշյալ հատվածը կամեցել է հարմարեցնել հարցումներին, իրրև առաջաբան: Լինելով հետագա ժամանակների հավելված, այս քաղվածքը չի կարող, ուրեմն, Ներածության թարգմանման ժամանակի համար ունենալ որևէ նշանակություն:

Պորփյուրի Ներածության նույն հատվածից, թվում է ինձ, որ օգտված պիտի լինի Դավիթ Հարքացին դավանաբանական փոքրիկ իր գրություններից մեկում, որը հրատարակել էր «Արարատ» ամսագրում Գարեգին վրդ. Հովսեփյանը (1906, մարտ, էջ 261-272):

Այս գրությունը, ինչպես երևում է նրա վերնագրից, գրված է Անաստաս կաթողիկոսի (661-666) հրամանով և ունի սկզբում

*Հետևյալ հատվածը՝ «**Բայց նախ արդէն իսկ համառօտ ընձեռութիւն առնելով**, դի ոչինչ իմ նախ քան զմիչտ Լակն իմացեալ» և այլն (ԼՀ 269): Ներածական բնորոշ այս դարձվածքը հիշեցնում է Պորփյուրի Ներածութեան հատուկ առաջարանը և կարծում եմ, որ նմանութիւնը կարող է պատահական չլինել, այլ վերագրվելու է Ներածութեան բնագրի ազդեցութեանը: Եթե այս ենթադրութիւնն ընդունելի համարվի, այդ դեպքում՝ Պորփյուրի Ներածութեան բնագրի ծագման ամենավերջին սահմանը դրվելու է յոթներորդ դարի վաթսունական թվականներին:*

Պորփյուրի Ներածութիւնը կարող է լինել, ինչպես տեսանք, հունարան հնագույն չրջանի թարգմանութիւն: Հետևաբար՝ նրա թարգմանման ժամանակի որոշումը չի պարդում նույն խնդիրը նաև Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնութիւնների նկատմամբ: Եվ այս վերջին խնդիրը մնում է նորից ուսումնասիրութեան ու լուսաբանութեան կարոտ:

Խոսրովիկ թարգմանչի երկասիրութիւնները ևս, ինչպես գիտենք (տե՛ս վերև § 35), ունեն արիստոտելյան երկերի ազդեցութեան բազմաթիվ հետքեր: Այդ ազդեցութիւնը լուսաբանող վերոհիշյալ օրինակներին կարելի է ավելացնել նաև հետևյալ ընդարձակ հատվածը, որ, ըստ երևույթին, Խոսրովիկը քաղել է Պորփյուրի Ներածութեան հայերեն բնագրից.

Խոսրովիկ, էջ 19	***Ներած. Պորփ., 242[1]***
«Զի բնութիւն պարունակող է պարունակելոյն ի նմանէ եւ ոչ ի նոցանէ պարունակեալ, դի թէ ի բաց բարձցես դյատուկն, հանուրն ոչ լինի բաց բարձեալ, իսկ հանուրն չարաբառնալով, բառնանի ընդ նմին եւ ումն» և այլն:	*«Իսկ տեսակքն պարունակին եւ ոչ պարունակեն զսեռն. քանզի յոլով սեռն քան զտեսակն է... եւ յաոաջագոյնք բնութեամբք սեռքն եւ չարաբառնան, այլ ոչ չարաբառնին» և այլն:*

Խոսրովիկի թե այս և թե մյուս հատվածներում պարզ նկատելի են, գլխավորապես, Պորփյուրի Ներածութեան ու յամբղիքյան խմբի թարգմանութիւնների ազդեցության հետքերը, իսկ ինչ վերաբերում է Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնութիւններին,

---

[1] Համմտ. նաև Ներած. 243, 24-28, 241, 25-32, 246, 11-12. Դ-Պորփ. 299, 3-19:

նրանց հետքերը Խորովիկի երկասիրություններում չատ անորոշ են ու վիճելի:

Ինչպես տեսանում ենք, Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունների համար դեռևս չի հաջողվել գտնել հաստատուն մի կռան, որով կարելի լիներ որոշել նրանց ծագման ճշգրիտ ժամանակաշրջանը: Առայժմ պարզ է միայն այսքանը, որ դրանք թարգմանված են ո՛չ ավելի վաղ, քան վեցերորդ դարի վերջերում, բայց, անկասկած, Վաչագանի հարցումներից առաջ, որոնք, Գալուստ Տեր-Մկրտչյանի կարծիքով, հորինված պիտի լինեն VIII-X դարում: Այս սահմանները չատ են ընդարձակ ու անորոշ: Սակայն մի խիստ կարևոր հանգամանք, որ սերտ առնչություն ունի մեկնությունների այս խմբի ծագման հետ, թվում է ինձ, որ մոտավոր կերպով որոշում է նրանց թարգմանման ժամանակաշրջանը:

§ 50. **Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունները թարգմանված են, ըստ երևույթին, երկաբնակ հայերի միջավայրում և, ամենայն հավանականությամբ, ութերորդ դարից առաջ: —** *Վերև թռուցիկ կերպով չոշափված էր խիստ կարևոր մի խնդիր (տե՛ս § 42 և), որ յամբղիչյան խմբի իմաստասիրական երկերը թարգմանված պիտի լինեն Տիմոթեոս Կուղի Հակաճառության թարգմանման ժամանակաշրջանում, հավանարար, միարնակ կուսակցության միջավայրում: Իսկ Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունները, լինելով իմաստասիրական մի այլ դպրոցի և ուրիշ հեղինակների գրվածքներ, կարող են թարգմանված լինել երկարնակ կուսակցության միջավայրում: Այս խնդրի վրա արժե մի փոքր երկար կանգ առնել, որովհետև, եթե այս ենթադրությունը հաստատվի, մատենագրական մի չարք հարցերի համար կբացվեն բոլորովին նոր հեռանկարներ: Կորոշվի մոտավոր կերպով Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունների դարաշրջանը, Դավիթ Անհաղթի մասին հորինված առասպելական պատմությունը կստանա բոլորովին նոր լուսաբանություն, վերջապես՝ այս նոր ենթադրությունը կարող է որևէ կերպ առնչություն ունենալ և Խորենացու խնդրի հետ:*

Արդ՝ կա՞ արդյոք Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում որևէ մի նշան, որով հաստատվեր նրանց ծագումը երկարնակ հայերի միջավայրում: Ինձ թվում է, որ այդպիսի մի նշան կարող է համարվել Դավթին վերագրված «Առաջք Հինգ» գրությունը (տե՛ս Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ

217–222)։ Այս գրութիւնը, թէ՛ իմաստասիրական դաղափարների իր սահմանումներով և թէ՛ հունարան ամբողջ իր բառապաշարով, այնքան մոտ է ու համապատասխան Դավթի Սահմանք իմաստասիրութեան և վերլուծութիւն Պորփյուրի թարգմանութիւններին, որ ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ նա խմբակից է այս վերջին թարգմանութիւններին։ Կարող է միայն հարց լինել, թե արդյո՞ք սրա հեղինակը նորպղատոնական Դավիթ մեկնիչն է, թե մի այլ հեղինակ։ Բայց այդ հարցը որևէ նշանակութիւն չունի այն խնդրի նկատմամբ, որ այժմ քննվելու է։

Վերոհիշյալ գրութիւնը նպատակ ունի ըստ իս բացատրելու արիստոտելյան իմաստասիրութեան տեսակետից՝ «բնութեանց» այն չարաբաստիկ խնդիրը, որ մոլոռանդ թշնամութեան և քրիստոնեական եկեղեցու պատակտման գլխավոր պատճառը դառավ։ Առաջին երեք առածները, ըստ երևույթին, նախապատրաստական տեսութիւններ են, որպեսզի հասկանալի լինեն վերջին գլուխները, որոնց վերնագրերից իսկ պարզ երևում է գրութեան բուն նպատակը։ Այս վերջին, չորրորդ ու հինգերորդ գլուխների վերնագրերն են. «Զի՞նչ մի իցէ գոյացութեան եւ բնութեանն, եւ ո՞յք այնոքիկ, որք միով ասին գոյացութեան եւ բնութեան» (էջ 220–221) և «Թէ կարող գո՞յ իւրաքանչիւր որ յանհատից մի բնութիւն գոլ եւ ասել» (էջ 222)։

Չորրորդ գլուխում՝ մի բնութիւն է վերագրվում ընդհանուր բնավորական սահմանին, թե այն դեպքում՝ երբ այս վերջինը պարզ իրի սահման է, և թե այն՝ երբ նա դորութեամբ չարաղրական է։ Այս բացատրութիւնը, որ հատուկ է արիստոտելյան իմաստասիրութեան, «բնութեանց» դավանաբանական վեճերի տեսակետից անքան էլ կարևոր չէ։ Սակայն նույն գրութեան վերջին գլուխը վերաբերում է ամբողջովին «բնութեանց» կրոնադավանական բուն հարցին։ Այդ չափազանց նշանավոր հատվածը, որ ուշադրութեան չի առնվել հայ բանասերների կողմից, անհրաժեշտ եմ համարում առաջ բերել առանց կրճատումների.

«Թէ կարող գո՞յ իւրաքանչիւր ոք յանհատից մի բնութիւն գոլ եւ ասել.

Արդ անհատից ըստ նմանութեան միաբանութեան, ոմանք պարզականք բնաւորեցան գոլ, եւ ոմանք չարաղրականք։ Արդ պարզականացն անհատից յասպաղումն կալցի բանս, դի ոչ է առաջնիկայիս դիտաւորութեան, իսկ վասն չարաղրականացն ասասցուք, եթե ոչ արարողք գոն մի բնութիւն ասել եւ գոլ։ Նախ

դի մի բնութիւն ասացաք ընդհանուր բնաւորական սահման. իսկ անհատն՝ ոչ ընդհանուր, այլ մասնական:

Երկրորդ՝ ո՞չ ապաքէն ցուցաք յառաջագոյն զանհատսն միոյ ասիկ բնութեան հանդերձ այլովք անհատիւք, նոյն եւ մի գոլ ասի բնութիւն: Իսկ երրորդ զայն ասասցուք զամենայն չարաղրական մի բնութիւն, նոյն արարող գոլ բնաւորիկ. իսկ զանհատն ոչ նոյն արարող, այլ նոյն եղեալ հանդերձ այլովք անհատիւք. արդ դիա՞րդ ասի գոլ մի բնութիւն: Զորրորդ՝ առ այսոքիւք ամենայն չարաղրական մի բնութիւն զօրութեամբ ունել բնաւորեցաւ զանազանութիւնս տեսակաց, իսկ անհատն արդեամբք, որպէս Պաւղոս անհատ գոլով զհոգին եւ զմարմին: Հինգերորդ՝ ամենայն մի բնութիւն տեսակ բնաւորեցաւ գոլ, եւ ըստ յոլովից բերիլ թուով զանազանելոց. իսկ անհատն դիա՞րդ արդեօք լինիցի տեսակ, եւ ըստ յոլովից բերիցի: Արդ ոչ գոյ կարող մի բնութիւն ասիլ եւ գոլ. դի առաջաւ իսկ վաղ ուրեմն, թէ որք միանգամ ոչ ունին զմի սահման, այնպէսիկն եւ ոչ նոյնք ասին գոլ երբէք ուրեք» (էջ 222):

Բովանդակութիւնն այս հատուածի, կարծում եմ, որ չատ պարզ է: Մի բնութիւն կարելի է ասել ընդհանուր գաղափարների վերաբերմամբ՝ սեռի, տեսակի, նաև բնաւորական սահմանի, երբ նա չարաղրական է զօրութեամբ, ինչպես մարդ ընդհանուր գաղափարը, բայց անհատների նկատմամբ՝ Պողոս, Պետրոս և այլն, մի բնութիւն չի կարելի ասել:

*Նույն այս խնդիրը քննութեան է առնված ութերորդ դարում հակաքաղկեդոնական հայ իմաստասերների գրվածքներում, սակայն եղրակացութիւնն այնտեղ ուրիչ է: Օրինակ՝ Ստեփանոս Սյունեցին «Առ Տէր Գերմանոս» գրած իր թղթում նույն հարցի առթիվ ասում է[1]. «Զի թէ զթիւ բնութեանցդ առցես ի վերայ Քրիստոսի, հարկաւորապէս մղիք յայսոսիկ, կամ երկուս ասել բնութիւնս, կամ ի ներքոյ անկանել յառաջասացելոցդ աստուածամարտից, եւ կամ փոփոխելի ասել. ապա թէ ոչ հաւանիլ պարտիք ձերոց ճարտարաց, զի ի կննդանոյն գայլութեամբ զանազանելոն տարբերապէս՝ սեռս եւ տեսակս անուանեցին, եւ զսեռն հասարակ մի բնութիւն. եւ անհատքն թուով ի բազումս կոտորեալ: **Իսկ ոմն յերկուց անձնաւորեալ, մի ասացաւ բնութիւն,** որ-*

[1] Տե՛ս նաև «Խոսրովիկ Թարգմանիչ և երկասիրությունք նորին», էջ 38–40 և «Գիրք Թղթոց», Սահակայ Հայոց կաթողիկոսի ընդդէմ երկարնակաց նեստորականացն, էջ 434:

պէս մեկնէ Յիւրիպիդէս Ափննացի, պարզուն անուանն զանազանական յարմարուելէ, ասացնալ եղջերուաբարս ի Սոփոկլեայն, ո՛չ միայն ի վերայ պարզիցն ասէ, այլ եւ դչադաչարարար կապակցեալ մի աւելի բնութիւն» եւ այլն («Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 383-384):

Այս հատուածում, «Առածք հնգի» հակառակ, «յումն յերկուց անձնաւորեալ», այսինքն՝ ոմն մարդիկ կամ անհատները, Պողոս, Պետրոս են, որ աղդմամբ չարաղրական են, համարում են մի բնութիւն ունեցող: «Առածք հնգի» հեղինակը և Ստեփանոս Սյունեցին, ինչպես տեսնում ենք, «բնութեանց» միևնոյն խնդիրը մեկնում են բոլորովին այլ կերպ. առաջինը՝ համապատասխան քաղկեդոնական երկարնակ դավանութեան, իսկ երկրորդը՝ հակաքաղկեդոնական միարնակ ուսման համաձայն:

«Առածք հինգ» գրութեան այդ բնույթն այնքան պարզ է, որ կարոտ չէ երկար լուսարանութեան. պետք է միայն դարմանալ, որ նա հետագա դարերում վրիպել է հակաքաղկեդոնական հայ եկեղեցականների ուշադրութիւնից և պահպանվել, գրեթե անսադարտ, Դավիթ Անհաղթի բազմաթիվ ձեռագրերում: Ըստ երևութին, հայ եկեղեցականները չեն հասկացել նրա բուն իմաստը, որովհետև գրվածքն արտաքուստ վիպաուսեայական է և ո՛չ դավանաբանական:

Վերոհիշյալ նոր լուսարանութիւնն արժանի է ամենալուրջ ուշադրութեան, որովհետև, ինչպես տեսանք, նոր այս վաստի հետ սերտ կապված են մատենագրական մի չարք ուրիչ հարցեր:

Ի նկատի առնելով այս նոր բացատրութիւնը, թվում է ինձ, կարելի է ենթադրել, որ «Հինգ առածքը», ինչպես և նրան խմբակից Դավիթ-Օլիմպիոդորոսի մեկնութիւնները, թարգմանված կարող են լինել VI-VII դարերում, կրոնա-դավանական մեծ կռիվների ու պատակաումների ժամանակ, վեցերորդ դարի վերջերից ո՛չ առաջ և, ամենայն հավանականութեամբ, մինչև յոթներորդ դարի վերջերը:

Ընդգծված այդ ժամանակաշրջանում նրանք թարգմանված պիտի լինեն, ինչպես տեսանք, տարբեր ժամանակ և վերադրվելու են տարբեր թարգմանիչների: Հունարան թարգմանութիւնների այս երրորդ չերտի մեջ հնագույն են, ըստ երևութին, Դավթի Սահմանքը և Ներածութեան Վերլուծութիւնը, իսկ նորագույն՝ Էլիսէի Ստորոգութեանց մեկնութիւնը: Ուրեմն՝ մոտավոր կերպով որոշվում է և այս խմբի թարգմանման ժամանա-

կաչրջանը, թեև ո՛չ այնքան հաստատ, որքան մյուս խմբերինը, բայց անհամեմատ ավելի հիմնավորված, քան մինչև այժմ: Բացի թարգմանման դարաշրջանի մոտավոր այս որոշման, կարծում եմ, որ պարզվում է այժմ, թե ինչո՛ւ սրանց ծագման ու հեղինակի մասին ստեղծվել են հետզհետե մտացածին դանադան ավանդություններ, որոնք հավաքված ու ամփոփված են «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկարնակ չարափառսն» հայտնի գրվածքում: Ծագած լինելով երկարնակ հայերի միջավայրում, շատ բնական է, որ նրանք չէին կարող ընդունելի ու հանդուրժելի լինել հակաքաղկեդոնական հայերի շրջաններում: Հարկավոր էր անհաճո այդ փաստը մոռացության տալ, և հետագայում, գիտակցարար կամ թերևս անգիտակցաբար, հնարվում է հեքիաթանման մի նոր ավանդություն, որը բոլոր այդ երկերը վերագրում է Սահակ-Մաշտոցի աշակերտ՝ Դավիթ Անհաղթ հայ վիկիսոփային: Կրոնական տեսակետից այդ թարգմանությունները չէին կարող այլևս անհանդուրժելի համարվել, որովհետև վերոհիշյալ Հարցմունքներում Դավիթ Անհաղթը և նրա ընկերակից Մովսես Քերթողահայրը, լինելով պաշտպան ու ջատագով հակաքաղկեդոնական դավանության, բանակռիվ են մղում հեղինակավոր երկարնակ նկեղեցականների հետ և նրանց բոլոր ասածները հաջողությամբ հերքում: Շեշտելով առանձին Դավիթ Անհաղթի ուղղափառ ու հակաքաղկեդոնական լինելը, Հարցմունքները կարծես թե հատուկ նպատակ ունեն իսպառ ժխտելու թարգմանությունների ծագման իրական փաստը:

Առասպելական պատմությունը Դավիթ Անհաղթի մասին, ինչպես տեսնում ենք, ստանում է ուշագրավ մի նոր բացատրություն և լուծվում հայոց մատենագրության բազմադարյան դաշտնիքներից մեկը, որի հետ սերտ կապված է և Մովսես Քերթողահոր խնդիրը: Հույս ունեմ, որ այս ուղղությամբ կլինեն նոր ուսումնասիրություններ, որոնք, թվում է ինձ, վերջնականապես պիտի հաստատեն կարևոր այս եղրակացությունը:

§ 51. Թրակացու քերականության Դավթի ու Անանունի մեկնությունները, նրանց հեղինակները և ծագման դարաշրջանը: — *Թրակացու քերականության հնագույն մեկնություններն են Դավթի ու Անանունի երկերը, որոնք գիտական ամենամեծ խնամքով ու համառությամբ ուսումնասիրել ու հրատարակել էր Նիկ. Ադոնցն իր «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ Հայ մեկ-*

նութինք նորին» աշխատութեան մէջ: Այս մեկնութիւններն ուսումնասիրելիս՝ Ն. Ադոնցը հարց էր հարուցել, թե արդյոք այս գրվածքներից Դավթի մեկնութիւնը թարգմանված չէ՞ հունարենից, ինչպես արիստոտելյան մեկնութիւնները: Իր դիտողութիւնների ամփոփման մէջ նա տրամադիր է ենթադրելու[1], որ սրա հեղինակը, հավանարար, հայ է եղել, որը մեծ չափով օգտվել է Թրակացու քերականութեան հունական մեկնութիւններից: Այդ ենթադրութիւնը թվում է ինձ հիմնավոր: Բացի Ն. Ադոնցի նկատած նշաններից կան ուրիշ ևս ուշագրավ տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ Դավթի մեկնութիւնը հայ հեղինակի գրվածք է և ո՛չ թարգմանութիւն: Թրակացու քերականութեան հունարէն բնագիրը, ինչպես հայտնի է, հայերենի մէջ մի քանի տեղ սխալ է թարգմանված, այսպես՝ **κατάληψις**, *որ նշանակում է «հասողութիւն», թարգմանված է «թողումն» (Թր., էջ 42, 16),* **ποιότης** *«որակութիւն» թարգմանված է «բերդութիւն» (Թր., էջ 31, 22): Արդ՝ այս սխալները տեղ են գտել Դավթի քերականութեան մէջ և առիթ դառել նաև հետևյալ սխալ մեկնութիւնների. Դավ. փիլ. մեկն. քերականին, էջ 81, 3-5՝ «Իսկ ի թողմանէ նախակրթեալն՝ որպիսի ինչ. դի զոր ինչ եղիտ որ կրթելով, եւ յայլմէն եւս մնացելովք, զկնի իւր եթող* ***ապագայիցն***», *Դավ. մեկն. քերականին, էջ 119, 21 — 120, 3՝ «Եւ քերդութենէն, որպիսի մուրցածի, ծղացի, աթացիդ՝ յայտնի է. իսկ ողկուզաւրէնդ եւ տարմարար՝* ***զոր քերդեալ ի խտութենէ պատերազմիկ զաւրուն երթալոյ,*** *իբր թէ տարմարար երթային եւ ողկուզաւրէն»: Եթե Դավիթ փիլիսոփայի քերականութեան մեկնութիւնը թարգմանված լիներ հունարենից, պարզ է, որ Թրակացու բնագրի թարգմանութեան սխալները չէին կարող կրկնված լինել այդ մեկնութեան մէջ:*

Ընդունելով այս գրվածքը հայ հեղինակի աշխատութիւն, կարող ենք եզրակացնել, որ Դավիթ փիլիսոփան, որը գրել է քերականի այդ մեկնութիւնը, ամենայն հավանականութեամբ, հայ հեղինակ է: Ուրեմն՝ որոշվում է հունարան դպրոցի հայ մատենագիրներից զոնե մեկը, որն ըստ երևույթին, այդ դպրոցի հայտնի դեմքերից է, ձեռագրերում էլ անվանվում է հաճախ «եւսամնծն Դավիթ փիլիսոփայ» (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», էջ 79, ծանոթ.):

Անանուն հեղինակի մեկնութիւնը ևս, ինչպես երևում է նրա բովանդակութիւնից, հայերեն գրված աշխատութիւն է և ո՛չ

[1] Տե՛ս Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ, էջ CLXXXIII:

թարգմանություն հունարենից: Ն. Ադոնցը տրամադիր է կարծելու, որ այս մեկնությունը կարելի է վերագրել Մամբրե Վերծանողին, որին մատենագրական ավանդությունը հիշում է, որպես ընկերակից Դավթի ու Մովսեսի (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», էջ CXIII-CXIV): Սակայն առասպելյալ ավանդության մեջ Դավթի ու Մովսեսի ընկերակից են համարվել բացի Մամբրեից նաև «Հուտորն Աբրահամ եւ սոցին նմանակիցն Պօղոս»[1], ուրեմն՝ Անանունի մեկնությունը հնարավոր է վերագրել նաև սրանց: Այս խնդիրը, ինչպես տեսնում ենք, մնում է անորոշ և չի կարող, իհարկե, լուծվել առանց որևէ դրական վկայության:

Այդպիսի մի վկայություն, ավելի ճիշտ մի ակնարկ, կարծես թե կա Համամ Արևելցու քերականի մեկնության հետևյալ հատվածում. «Նախզիրս ծննդագործէ բան եւ զծնելոցն չափան ներառնու եւ ինքնագիր առածութեամբ զարդարեալ ունի զկամաւզն խոկաց: Այսոքիկ եղիցի ի մեզ առոգմանս գործի եւ քննութեանց զէն եւ քերդողութեանց զգեստ եւ նախակրթութեանցն սեղան եւ խոկացն բաժակ եւ կարողացն ճոխութիւն եւ ճեմականացն իմացական սանձ եւ սիովնականացն հետեւումն աղնիւ եւ եկեղեցականաց վանգ լիարոյր սեղանականաւք եւ աստուածարանականացն մեկնոց փոքր եւ համրականացն վայելուչ զարդ եւ մեզ **ստորագայծառ պատմուճանք անգին ի Դաւթէ եւ ի Պաւղոսէ հրաշացան** եւ որ ի տերունական ի պսակ ի Քրիստոսէ ունիմք զվնցսն յանճառից» («Արուեստ Դիոնիսեայ», էջ 270): Համամ Արևելցին յուրահատուկ ձևով բացատրում է այս հատվածում նախադրությունների կարևորությունը: Հատվածի վերջում նախադրությունները նա անվանում է «ստորագայծառ պատմուճանք անգին», որ «ի Դաւթէ եւ ի Պաւղոսէ հրաշացան»: Արդ՝ ո՞ւմ է վերաբերում Համամ Արևելցու այս ակնարկը, Դավիթ մարգարեին ու Պողոս առաքյալի՞ն, թե քերականության հնադույն մեկնիչներին: Երկրորդ ենթադրությունը կարծես թե ավելի մոտ է հատվածի իմաստին, որովհետև դժվար է հասկանալ, թե ինչ կապ կարող են ունենալ նախադրությունների հետ Դավիթ մարգարեն և Պողոս առաքյալը: Այս նոր լուսաբանությամբ՝ վերը հիշատակված Դավիթը, ըստ երևույթին, քերականի մեկնության հեղինակ «եռամեծն Դաւիթ փիլիսոփան» է, իսկ Պողոսը, ամենայն հավանականությամբ, հեղինակն է մյուս հնա-

[1] Տե՛ս **Գ. Սրվանձտյանց**, Հնոց և նորոց, էջ 45:

գույն մեկնության: Եթե այս ենթադրությունն ուղիղ համարվի, Անանունի մեկնությունը հավանական կլինի վերագրել ո՛չ թե Մամբրե Վերծանողին, այլ Պողոս մեկնիչին, որը Մովսեսի ու Դավթի հարցմունքներում հիշվում է, իբրև «նմանակից» Դավթի փիլիսոփայի, Մովսես Խերթողահոր, Աբրահամ հռետորի և Մամբրե իմաստասերի:

Ն. Ադոնցն իր ուսումնասիրության մեջ աշխատել է որոշել այս մեկնությունների ծագման ժամանակը և իր եզրակացություններին ընդհանուր ամփոփման մեջ կարծում է, որ Դավթի ու Անանունի մեկնությունները, լինելով ավելի հին, քան Ստեփանոս Սյունեցու և Մովսես Խերթողի համապատասխան մեկնությունները, գրված պիտի լինեն, ըստ նրևույթին, յոթներորդ դարում (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», էջ CXCIII): Հունարան դպրոցի զարգացման ընթացքը և հունարան երկերի երևք տարբեր շերտերը պարզելուց հետո, թվում է ինձ, որ Դավթի փիլիսոփայի ու Անանունի ժամանակը հնարավոր է այժմ որոշել ավելի հիմնավոր ու հաստատուն կերպով, քան այդ արված էր բանասիրական նախորդ ուսումնասիրություններում:

Դավթի փիլիսոփայի քերականի մեկնության մեջ կան հետևյալ հատվածները, որոնք քաղված են յամրղիկյան խմբի երկերից.

Դաւիթ փիլ., էջ 102, 8-10

«Իսկ Արիստոտելէս զատորոգութիւն եւ զրացաստութիւն եւ զրացներեւութիւն ընդ անուան եւ ընդ բայի ասաց հինգ գոլ»:

Արիստ. Պերիարմ., էջ 461

«Նախ արժան է դնել, դի՞նչ է անուն, եւ դի՞նչ է բայ. ապա դի՞նչ է բացաստութիւն, եւ ստորոգութիւն, եւ բացներեւութիւն, եւ բան»:

Դաւիթ փիլ., էջ 109, 11-15

«Եւ հոմանուն լինի ըստ պատահման եւ ըստ մտածութեան. պատահմամբ՝ յորժամ երկուց իրաց նոյն դիպեսցի անուն տիրական եւ առաջական, արծուի՝ թռչուն եւ արծուի՝ չինուած փայտից, իսկ մտածութեամբ՝ ըստ պատուոյ, ըստ յուսոյ, ըստ ազգութիւ եւ այլոցն նմա»:

Յամել. Ստոր.[1]

«Հոմանունութիւն լինի ըստ երկուս յեղանակս՝ ըստ պատահման կամ մտածութեան ըստ պատուոյ, ըստ յիշատակի, ըստ ազգութիւն, ըստ կերպարանի ըստ նմանութեան»:

[1] Տե՛ս էջմ. մատեն., ձեռ. թիվ 1894 = Մայր ցուցակ, թիվ 1852:

Դաւիթ փիլ., 80, 10-12	ՅՍտոր., Հեռ. Թիվ 1894
«Բայց ի հարցման ուրուք զսահմանն արուեստի, զոր աւրինակ եթէ ասիցէ զի, զինչ է մարդ, լիով պատասխանեալ առէ. «կենդանի բանաւոր մահկանացու»:	«Իբր թէ ասիցէ որ զմարդ կենդանի բանաւոր մահկանացու» (գլ. ղ'), նաեւ յաղ. գոյաց. ժ. «մարդ գոյացութիւն իմն նշանակէ ոչ վայրապար, այլ գոյացութիւն՝ կենդանի բանաւոր մահկանացու»[1]:

Համարելով այս հատուածներից առաջինը քաղված Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» թարգմանութիւնից, Ն. Ադոնցը կարծում է, որ Դավիթ փիլիսոփայի մեկնութեան մեջ այդ հատուածը կարող է լինել ընդմիջարկութիւն[2]: Սակայն, ինչպես տեսնում ենք, կան և ուրիշ հատուածներ, որոնք կապ ունեն Յամբղիքոսի Ստորոգութեանց մեկնութեան հետ: Ուստի՝ անհաւանական է ինձ թվում, որ վերոհիշյալ հատուածը Դավթի մեկնութեան մեջ լինի ընդմիջարկութիւն, այլ պետք է ենթադրել, որ Դավիթ փիլիսոփան, ծանոթ լինելով յամբղիքյան խմբի թարգմանութիւններին, օգտվել է նրանցից իր մեկնութեան այն մասերում, որոնք որոշ առնչութիւն են ունեցել արիստոտելյան իմաստասիրութեան հետ:

Այս ենթադրութիւնը խիստ կարևոր է Դավիթ փիլիսոփայի ժամանակի որոշման համար: Յամբղիքյան խմբի երկերը, ինչպես գիտենք, հունարան երկրորդ շերտի թարգմանութիւններ են և թարգմանված են 576 թվին: Եթե ընդունենք, որ քերականի մեկնիչ Դավիթ փիլիսոփան օգտվել է այդ թարգմանութիւններից, կարող ենք վստահորեն եզրակացնել, որ նրա մեկնութեան ժամանակը պետք է դնել հունարան երկրորդ շերտի թարգմանութիւններից և այդ թվից հետո: Թրակացու քերականութիւնը, ինչպես տեսանք, պատկանում է հունարան թարգմանութիւնների առաջին խմբին և թարգմանված պիտի լինի Պլոտոյից գրքից ու Փիլոնի երկերից առաջ, ուրեմն՝ ամենաուշը վեցերորդ դարի առաջին կեսում: Դավիթ փիլիսոփայի մեկնութիւնը և Թրակացու քերականութեան թարգմանութիւնը, ինչպես տեսանում ենք, ծագել են հունարան դպրոցի զարգացման տարբեր շրջան-

---

[1] Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում մարդու սահմանումն ավելի մանրամասն է՝ «կենդանի բանաւոր մահկանացու մտաց եւ հանճարոյ ընդունակ» (Սահմ. իմ., էջ 136, Առածք հինգ, էջ 217 և այլն):

[2] Տե՛ս Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ, էջ CLXIII:

ներում: Իսկ այս վկայից բղխում է ինքնին, որ քերականի մեկնիչ Դավիթ փիլիսոփան չի կարող լինել Թրակացու քերականության թարգմանը: Ն. Ադոնցի ուսումնասիրությունից ևս երևում է, որ այս եղրակացությունը հաստատվում է նաև Դավթի մեկնության բովանդակության քննությամբ (տե՛ս «Արուեստ Դիոնիսիայ», CLVIII, CLXVIII, CLXXVI): Այսպես՝ Թրակացու քերականության մեջ վանդ և վատաւութիւն բառերը, որ միևնույն συλλαβή բառի թարգմանություններն են, Դավիթը հասկացել է, որպես քերականական տարբեր եղրեր. դերանուն բառը, որ հունարեն ἀντωνυμία բառի թարգմանությունն է, Դավիթը հնարավոր է համարել մեկնել, որպես թերանուն: Այս օրինակներից իսկ երևում է, որ նա Թրակացու թարգմանը չէ: Ընդունելով Թրակացու քերականությունը հունարան դպրոցի հնագույն թարգմանություններից մեկը, հավանական կլինի նաև ենթադրել, որ այդ թարգմանության հետ միասին կարող էին լինել և քերականի հնագույն մեկնություններ: Անհնարին չէ, որ Դավիթ փիլիսոփան և Անանուն կամ Պողոս մեկնիչը օգտվել են ո՛չ այնքան քերականության հունարան մեկնություններից, որքան այդ հայերեն մեկնություններից, որոնք գոյություն են ունեցել նրանց ժամանակ, սակայն մեր ձեռքը չեն հասել:

Ն. Ադոնցն իր ուսումնասիրության մեջ կանգ է առնում նաև մի ուրիշ կարևոր հարցի վրա, թե արդյոք կարո՞ղ է քերականի մեկնիչ Դավիթ փիլիսոփան լինել Սահմանք իմաստասիրության երկի հեղինակը կամ թարգմանը: Դավթի մեկնության ու Սահմանքի առնչությունը պարզելու համար նա մատնացույց է անում այդ երկերում ճարտասանության բաժանմանը վերաբերյալ հետևյալ հատվածը.

Դաւ. քեր. մեկն., 84, 14-17	Սահմ., 207, 1-3
«Քանզի տեսակք ճարտասանականին երիւք այսոքիւք կատարին եւ վարին՝ առնականաւն եւ բաղխոհականաւն եւ կացրդականաւն, զուգահաւասար հատեալք ի սեռէ»:	«Դարձեալ ընդդէմ դնելով ասեն, թէ ահա ճարտասանականն սեռ զոյով՝ չերիս բաժանի ի տեսակս յառնականն, ի բաղխոհականն, ի կացրդականն»:

Սահմանքի մեջ ճարտասանության այս բաժանումը համարում է «ո՛չ բարւոք», մինչդեռ Դավիթ քերականը կողմնակից է այդ բաժանման: Կարծիքների տարբերության այս տարբերու-

թյունը Դավթի մեկնության ու Սահմանքի մեջ Ն. Ադոնցը համարում է պարզ մի նչան, որ Դավիթը չի կարող լինել Սահմանքի հեղինակը (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», էջ CXXXII, CLXXXIII)[1]: Ն. Ադոնցի այս դիտողությանը պետք է ավելացնել նաև այն, որ Դավիթ քերականի թե՛ ամբողջ մեկնությունն ըստ իր բովանդակության, և թե՛ իմաստասիրական առանձին դատողություններր չունեն այն հմտության ու դիտության որակնիչները, որոնք առանձնահատուկ են Սահմանքի հեղինակ Դավիթ մեկնիչին: Եթե Դավիթ քերականը լիներ Օլիմպիոդորոսի դպրոցի նորպղատոնական Դավիթ փիլիսոփան, պարզ է, որ նրա իմաստասիրական դատողությունները պետք է համապատասխաններին այս դպրոցում մշակված տեսություններին, մինչդեռ նրա մեկնության մեջ արիստոտելյան իմաստասիրության մուրացածոյ և աղքատիկ զաղափարները քաղված են ինչպես տեսանք, յամրղիքյան խմբի հայերեն թարգմանություններից:

Եթե Դավիթ քերականը Սահմանքի հեղինակը չէ, հարց է ծագում, թե արդյոք չի՞ կարելի նրան վերագրել Սահմանքի թարգմանությունը: Այս խնդրի նկատմամբ Ն. Ադոնցը մատնացույց է անում, որ արվեստի սահմանման մեջ (տե՛ս վերև § 4.1, 2) Սահմանքի թարգմանը κατάληψις բառը թարգմանել է «հասողություն», մինչդեռ Դավիթ քերականն իր մեկնության մեջ κατάληψις բառի այդ ուղիղ իմաստը չգիտե և ենթադրում է նրա իմաստը «թողումն» καταλείπω բայից: Ն. Ադոնցն անհնարին է համարում, որ միևնույն անձը կարևորագույն այդ եղրը Սահմանքի մեջ թարգմանած լինի ուղիղ, իսկ քերականի մեկնության մեջ մեկնած լինի բոլորովին սխալ, ուստի և եզրակացնում է, որ Սահմանքի թարգմանը և Դավիթ քերականը պետք է լինեն տարբեր անձնավորություններ (տե՛ս «Արուեստ Դիոնիսեայ», էջ CLXXXVIII): Կան և ուրիշ դեպքեր, երբ ամենասովորական եզրերն իսկ չեն համապատասխանում իրար Դավիթ քերականի ու Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում: Այդ տեսակետից ուշադրության է արժանի Դավթի մեկնության մեջ հետևյալ հատվածը. էջ 81, 8-11՝ «Արդ հարկաւորարար բանական արուես-

---

[1] Ն. Ադոնցը հիմնավոր չի ընդունում Ն. Ադոնցի այս դիտողությունը և ենթադրում է, որ Դավիթը ժամանակի ընթացքում կարող էր իր կարծիքը փոխել. տե՛ս «Դիտողություններ Ն. Ադոնցի նոր գրքի վրա», «Արարատ», 1919, հունվար-դեկտեմբեր, էջ 68:

տիս առաջարկութիւն հնգիւրս այսոքիւք կատարի. դիտաւորութեամբ, հարազատութեամբ, վերագրաւն, վարպետականաւն եւ ըստ մասին բաժանմամբ, յորում եւ աւգտակարն»: Այս հատվածում «վերագիրն» և «աւգտակարն» համապատասխանում են հունարեն ἡ ἐπιγραφή և τὸ χρήσιμον եզրերին, իսկ Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերում նույն եզրերը թարգմանված են «մակագրութիւն» և «պիտանացու» (ԴՊոփր., էջ 250, Մնկն. ի Վերլ., էջ 560, 562, էլ. Ստ., էջ 36, 40): Սահմանքի թարգմանութիւնը, ինչպես երևում է լեզվական այս դիտողություններից, դժվար է վերագրել Դավիթ բերականին: Հակառակն ապացուցելու համար անհրաժեշտ են դրական ու որոշ փաստեր: Պետք է ասել, որ ժամանակագրական տեսակետից միանգամայն հնարավոր է Սահմանքի թարգմանութիւնը վերագրել բերականի մեկնիչ «Նոամեծն Դավիթ փիլիսոփային», որովհետև նրանց երկուսի ժամանակն էլ դրվելու է, ինչպես տեսանք, հունարան երկրորդ շերտի թարգմանութիւններից հետո:

Անանունի մեկնութիւնը, որ վերը մենք վերագրեցինք Պողոս մեկնիչին, գրված պիտի լինի, ինչպես երևում է նրա բովանդակութիւնից, Դավիթի մեկնութիւնից հետո յոթներորդ դարում: Այդ մեկնութեան մեջ հիշվում է Դավիթ անունով մի հայ մատենագիր հետևյալ հատվածներում՝ 1. «Իսկ քաջլորակի տաղ ասի դաւթեան քերթուխիւն (եւ) որ յաղագս Տիգրանայ», տե՛ս «Արուեստ Դիոնիսիայ», էջ 128, 21 — 129, 1, 2. «Իսկ բան չարադրութիւն է բառի, յորժամ չարադրէ ոք զԴաւիթն զչարադրեացն եւ զպատերազմն եւ զմարացն եւ զհայոցն եւ ասիցէ յարապէս եթէ Դաւիթ չարադրեաց զպատերազմն մարաց եւ հայոց, որ է բան», տե՛ս նույնը, էջ 138, 4-8[1]: Արդ՝ հարց է ծագում, թե ո՞վ է հռչակավոր այս Դավիթը, որը չարունակ հիշվում է Անանունի մեկնութեան մեջ: Որովհետև Անանունի ժամանակը դրվելու է, հավանարար, անմիջապես Դավթից հետո և նա կարող է լինել այս վերջինի աշակերտը, ո՛չ միայն հնարավոր, այլև հավանական է թվում, որ Անանունի հիշատակած Դավիթ քերթողը լինի քերականի մեկնութեան հեղինակ Դավիթ փիլիսոփան: Այս հարցի լուծումն առանձին կարևորություն ունի, որովհետև Խորենացին Տիգրան Մեծի պատմության համար

[1] Դավիթ անունը հաճախ հիշատակվում է նաև օրինակների մեջ, էջ 127, 137, 145:

ունեցել է որպես աղբյուր, բանաստեղծական մի գրվածք, որը նա պարզ հիշատակում է և անվանում «Ջորս Հաղներզութիւնք, զարգասատորին ի բանս եւ զիմաստոյն իակ եւ ի մէջ իմաստոց իմաստնագունին»[1]*: Անանունի հիշած «Դաւթեան քերթուխիւնը որ յաղագս Տիգրանայ» և Դավթի չարաղրությունը Հայոց ու մարաց պատերազմի մասին թերևս կապ ունենան «Ջորս Հաղներզութեանց» հետ, որի «արգասատոր» և «ի մէջ իմաստոց իմաստնագոյն» հեղինակը ևս գուցե առնչություն ունենա վերհիշյալ Դավիթների հետ: Ինչպես տեսնում ենք, յոթներորդ դարի հայոց մատենագրության պատմությունը պետք է առաջին հերթին լուծի մի չարք Դավիթ անունով հեղինակների խնդիրը, որոնցից հայտնի են արդեն՝ Դավիթ Հարքացին, Դավիթ Տարոնացին, Դավիթ Բագրեւանդցին, քերականի մեկնիչ Դավիթ փիլիսոփան և, ըստ երևույթին, նաև Անանունի հիշած հռչակավոր Դավիթ քերթողը: Սրանցից մի քանիսը կարող են միևնույն հեղինակը լինել, բայց այդ խնդիրը մնում է դեռ սևորոշ ու կարուտ հատուկ լուսաբանության:*

Վերհիշյալ մեր դիտողությունները Թրակացու քերականության ու նրա հնագույն մեկնիչների մասին, ինչպես և նրանց ծագման ժամանակաշրջանների որոշումը, կարծում եմ, որ բավական նպաստելու են այս խնդիրների պարզաբանման, և բանասերների հավաքական ջանքերով հունարան շրջանի մեր մատենագրության համար ստեղծվելու են հետզհետե ամուր ու հաստատուն հիմքեր:

§ 52. Հունարան դպրոցի զարգացման հարատև ընթացքը հաստատվում է հայոց մատենագրության մի չարք կողմնակի վկայություններով: *— Հունարան դպրոցի իմաստասիրական, ճարտասանական ու քերականական երկերը բաժանվում են, ինչպես տեսանք, երկք տարբեր խմբերի, որոնք զանազան ժամանակաշրջանների աշխատություններ են և ծագել են հաջորդաբար, մոտ երկու հարյուր տարվա ընթացքում, սկսած վեցերորդ դարի սկզբներից կամ հինգերորդ դարի վերջերից, ուրեմն, գլխավորապես, վեցերորդ և յոթներորդ դարերում: Եթե անտես առնենք Դավիթ Անհաղթի ու նրա ընկերակիցների մասին*

[1] Տե՛ս Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 65. նաև Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1901, էջ 413 և այլն:

Հետին դարերում հերյուրված առասպելանման ավանդությունը, որը դարերի ընթացքում խճճել ու մեծապես դժվարացրել էր այս խնդիրների լուծումը, հայոց մատենագրության մեջ կան նաև ուրիշ կողմնակի վկայություններ ու ակնարկներ, որոնք կատարելապես հաստատում են հունարան դպրոցի այն երկարատև զարգացման ընթացքը, որ սույն ուսումնասիրության մեջ մանրազնին կերպով քննված ու լուսաբանված է:

Հայոց մատենագրության մեջ, ինչպես հայտնի է, հունարան դպրոցի ականավոր ներկայացուցիչները, մեծ մասամբ, անվանվում են փիլիսոփա կամ իմաստասեր, ճարտասան և քերթող: Արդ՝ հինգերորդ դարի վերջերից սկսած հայոց մատենագրության մեջ հիշատակված կան մի չարք հայ մատենագիրներ, որոնք կրում են վերոհիշյալ այս մականունները: Հնագույնը սրանից Ղազար Փարպեցու Թղթի մեջ հիշված «Մովսէս փիլիսոփան» է, որն ապրած պիտի լինի հինգերորդ դարի վերջերում: Որ այս Մովսեսը հունարան դպրոցի հեղինակ է, այդ կարելի է ենթադրել նրա գրվածքների մասին Փարպեցու ծանոթ վկայությունից, նաև նրա «փիլիսոփոս» մականվան հունական վերջավորությունից: Ասորիների վկայությամբ, վեցերորդ դարի առաջին կեսում հաջորդել է Սահակ կաթուղիկոսին «Տէր Քրիստաւոր փիլիսոփան ի գաւառն Բագրեւանդայ եւ գեղջէն Տիրառճայ» (Ս. Պետերբուրգ, 1885, էջ 81): Նույն պատմիչի ասելով, դարձյալ վեցերորդ դարի առաջին կեսում «Եղրաս Անզեղացի, աշակերտ ճարտասանին Մովսիսի Եպիսկոպոսի Բագրեւանդ գաւառի՝ ղղաս ճարտասանիցն բազմացուցանէր» (էջ 82): «Քերթող» և «իմաստասէր» է անվանվում 554 թվին Դվինի Բ ժողովին մասնակցող Պետրոս Սյունյաց եպիսկոպոսը[1]: Մովսես Կաղանկատվացին ևս վեցերորդ դարի երկրորդ կեսում հիշում է Կարնո եպիսկոպոս Թեոդորոսին, որին կոչում էին «փիլիսոփայապետ». «ընդ երկուանալն հայրապետութեան հայոց,— ասում է Կաղանկատուացին,— էր մեծ մարտ ընդ Մովսէս եւ ընդ Թէոդորոս Կարնոյ եպիսկոպոս, զոր փիլիսոփայապետն կոչէին. եւ ուղղափառքն ազարտէին զՀոռոմոց դամենայն կրօնսն» (տե՛ս Բ, գլուխ ԽՋ): Վեցերորդ դարի վերջերում և յոթներորդ դարի սկզբում նկե-

---

[1] Տե՛ս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 83. նաև Գալուստ Տեր-Մկրտչյան, Պետրոս Սյունյաց եպիսկոպոս, Վաղարշապատ, 1902:

դեցական նշանավոր գործիչ էր և հռչակավոր մատենագիր Վրթանես վարդապետը, որի մականունն էր դարձյալ «քերդող»: Նույն այս շրջանում հունարան դպրոցի մատենագիրներից էր Գրիգոր քերդողը, որի Աբրահամ կաթողիկոսին գրված թուղթը տպված է «Գիրք թղթոցում» (էջ 99–107, տե՛ս նաև վերև սույն ուսումնասիրության § 37-ը): Սերևոսի վկայությամբ, Կոստանդ կայսրը հայերի հետ կրոնական միություն հաստատելու համար Հայաստան էր ուղարկել «այր մի ի Բագրատեան գեղջէ՝ որ էր ուսեալ զարուեստ փիլիսոփայութեան, եւ անուն նորա Դաւիթ» (գլուխ ԼԳ): Այս Դավիթը 648–649 թվին ներկա է եղել Ներսես կաթողիկոսի գումարած Դվինի ժողովում: Ստեփանոս Ասողիկը հաղորդում է նույնպես, որ նա «ի Բագրեւանդ գաւառէ ի Բագրատեան գեղջէ» էր և «էր ուսեալ զարուեստ փիլիսոփայութենան» (Ս. Պետերբուրգ, 1885, էջ 91): Վերև մենք տեսանք, որ Դավիթ-Օլիմպիոդորոսի մեկնությունները վերագրվելու են երկաբնակ հայերի միջավայրին: Միանգամայն հնարավոր է, ուրեմն, նույնիսկ հավանական, որ հենց այս Դավիթը, իբրև ականավոր պարագլուխ երկաբնակ հայերի, կարող էր որոշ կապ ունենալ Դավիթ-Օլիմպիոդորոսյան իմաստասիրական դպրոցի հետ:

Մի այլ Դավիթ, որ թարգմանել է Բարսեղ Կեսարացու «ի ծնունդն Փրկչին» ճառը, անվանվում է նույն ճառի հիշատակարանում «Դաւիթ Թարգման Տարաւնացի»: Գարեգին Եպ. Հովսեփյանն այս Դավիթին նույնացնում է Դավիթ Հարքացի հռչակավոր փիլիսոփայի հետ, որը ժամանակակից էր Անաստաս կաթողիկոսին (661–665) և Աչոտ պատրիկին (685–690)[1]: VII դարում կան և ուրիշ հայտնի մատենագիրներ, որոնք անվանվում են «փիլիսոփայ» կամ «քերթող»:

Ինչպես տեսնում ենք, VI–VII դարերում հայտնի են մի չարք հեղինակներ հայոց մատենագրության մեջ, որոնք անվանվում են «փիլիսոփայ», «իմաստասէր», «քերթող», «ճարտասան», «թարգման» և բոլորն էլ, ամենայն հավանականությամբ, պատկանում են հունարան դպրոցի մատենագիրների խմբին:

Մատենագրական վերոհիշյալ վկայությունները բոլորովին նման չեն առասպելական ավանդության հետնաղարյան հերյուրանքներին, ստույգ ու վավերական են, և պարզ ցույց են տալիս, որ հունարան դպրոցն ունեցել է հաջորդական ու հարատև զար-

[1] Տե՛ս **«Արարատ»**, 1907, հունվար և մարտ:

գացում, սկսած հինգերորդ դարի վերջերից: Ուրևմն՝ իմ նպատակացությունները, որ մանրադնին քննությամբ յուսարանված են այս աշխատության մեջ, ո՛չ միայն չեն հակասում, այլ կատարելապես համապատասխանում են մատենագրական այդ ստույգ ու հավաստի տեղեկություններին:

Ուշադրության է արժանի, որ բացի Պետրոս Սյունեցուց բոլոր վերհիշյալ «փիլիսոփա», «բերթող» և «ճարտասան» հեղինակները, որոնց ծննդավայրը կամ գործունեության տեղը հիշատակված են, ծնվել են Բագրևանդում կամ Տարոնում, իսկ երկուսը Բագրևանդի ու Կարնո եպիսկոպոսներ են:

Ն. Ադոնցը «Դիտողություններ Ն. Ադոնցի նոր գրքի վրա» հոդվածում[1] փորձ էր արել որոշելու Թրակացու բերականության թարգմանության տեղը: Նրա կարծիքով, բերականության թարգմանիչը հայն բնագրի օրինակների փոխարեն բերում է համարյա օրինակներ, առնված իր անմիջական միջավայրից: Ի նկատի առնելով այդ օրինակները՝ Ն. Ադոնցը գուշակում է, որ Թրակացու թարգմանիչնապրել է մի երկրում, ուր կա ձյան հյուս, որթ, ընկուզենիներ, այգիներ: Օրինակների մեջ հիշվում են նաև Տարոնն ու Յրոնքը, Մամիկոնյան տան անունները: Այս ամենը հիմք է ծառայում նրան ենթադրելու, որ Թրակացու բերականությունը թարգմանված պիտի լինի Տարոնում: Այս սրամիտ ենթադրությունը, որ թվում է ինձ բավականաչափ հիմնավորված, կարևոր ու հետաքրքիր է այն տեսակետից, որ թարգմանության տեղի որոշմամբ որոշվում է նաև թարգմանության բարբառախոսական բնույթ կրող լեզվական առանձնահատկությունների միջավայրը: Ի նկատի ունենալով, որ վերհիշյալ վկայությունները ևս հունարան հնագույն հեղինակների ծննդավայրը կամ գործունեության միջավայրը որոշում են Բագրևանդում, Տարոնում և Կարինում, կարելի է թևրևս ենթադրել, որ հունարան դպրոցի գլխավոր կենդրոնները եղել են, հավանարար, Հայաստանի արևմտյան կողմերում, որոնք գտնվել են հունական մշակույթի անմիջական ազդեցության տակ: Ըստ երևույթին, արևմտահայեր պետք է լինեն նաև այն քաղկեդոնականները, որոնց չրջանում թարգմանված պիտի լիներն, ինչպես ենթադրեցինք, Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի երկերը:

---

[1] «Արարատ», 1919, հունվար-դեկտեմբեր, էջ 70-71:

§ 53. **Իրենեոսի «Յոյցք առաքելական քարոզութեանն» և «Ընդդէմ հերձուածոց» երկերը թարգմանված են հունարան թարգմանութիւնների առաջին շրջանում:** — *Իրենեոսի «Ընդդէմ հերձուածոց» գրուածքի հրատարակութեան առաջաբանում կաթողիկոս Տեր-Մկրտչեանն ու Երվանդ Տեր-Մինասյանը ենթադրում են, որ Իրենեոսի այս գրվածքն ու Յոյցերը թարգմանված են Հայերենի 650–750 թվականների միջև*[1]*: Ֆր. Կոնիբերը, «Յուշարձանում» տպված հոդվածում, հրատարակիչների այդ կարծիքը համարում է բացարձակապես սխալ և Իրենեոսի թարգմանութիւնները դնում է հինգերորդ դարի առաջին կեսում*[2]*: Համեմատելով Իրենեոսի և Փիլոնի թարգմանութիւնների լեզուն, պրոֆ. Կոնիբերը մատնացույց է անում լեզվական բաղմաթիվ նմանութիւններ և եզրակացնում, որ այդ թարգմանութիւնները պետք է համարվեն միևնույն թարգմանչի աշխատութիւն: Թարգմանութեան ժամանակի վերոհիշյալ որոշումը նա հիմնում է հենց թարգմանիչների այդ նույնութեան վրա: Ընդունելով, որ Փիլոնի երկերը թարգմանված են հինգերորդ դարի առաջին կեսում, նա նույն եզրակացութիւնն է անում նաև Իրենեոսի թարգմանութիւնների նկատմամբ:*

Պրոֆ. Կոնիբերի այս վերջին ենթադրութիւնը, որի մեկ հիմքը նրա հայտնի եզրակացութիւններն են Խորենացու ժամանակի վերաբերմամբ, ավելի քան անհավանական է ու կասկածելի: Սակայն նրա դիտողութիւնը Փիլոնի ու Իրենեոսի թարգմանիչների նույնութեան մասին, որ նա փաստարանում է լեզվական մանրաղնին ու կարևոր համեմատութիւններով, միանգամայն հիմնավոր է ու համոզիչ:

Նույն այս խնդրի առթիվ վերջերս լույս տեսավ «Հանդես Ամսօրյա» ուսումնաթերթում Հ[այր] Արիստակես Վարդանյանի ուշագրավ մի հոդվածը՝ «Լեզվական նմանութիւններ Փիլոնի և Իրենեոսի հայ թարգմանութիւններու մէջ» (1921 թ., սեպտ.–հոկտ., էջ 450–458): Ա. Վարդանյանը, քննութեան առնելով այդ թարգմանութիւնների լեզվական առանձնահատկութիւնները,

---

[1] Տե՛ս Irenäus, Gegen die Häretiker, Leipzig, 1910, էջ IV–V. Նաև Des heiligen Irenäus Schrift zum Erweise der Apostolischen Verkündigung, Leipzig, 1907, էջ IV–V:

[2] The age of the old Armenian Version of Irenaeus, «Յուշարձան», պրակ ժոդովածու, Վիեննա, 1911, էջ 193–202:

հաստատում է նոր օրինակներով նրանց բառամթերքի նույնությունը, ցույց է տալիս այդ թարգմանությունների մեջ սովորական բառերի այլևայլ կիրարկման նմանությունները, մատնանշում է Ս. Գրոց թարգմանության համանման մի չարք հատվածներ և, հիմնվելով լեզվական այս դիտողությունների վրա, Ֆր. Կոնիբերի ենթադրությունը գտնում է հիմնավոր և Փիլոնի ու Իրենեոսի թարգմանիչների նույնությունը համարում է վերջնականապես ապացուցված:

Պրոֆ. Կոնիբերից ու հ[այր] Ա. Վարդանյանից առաջ Իրենեոսի թարգմանության խնդիրը փորձել էր լուսաբանել հ[այր] Ն. Ակինյանը (տե՛ս «Ս. Իրենեոս հայ մատենագրության մեջ», «Հանդես ամսօրյա», 1910, հուլիս, էջ 200–208):

Հ[այր] Ակինյանը իր հոդվածում ցույց է տվել , որ Իրենեոսի հայերեն թարգմանությունները կատարված են ո՛չ թե ասորերեն կամ լատիներեն, այլ հունարեն բնագրից: Գալով թարգմանության ժամանակին, նա ենթադրել էր, որ Իրենեոսի գրվածքները թարգմանված են հայերենի 604 թվից առաջ, որովհետև թարգմանության հետքերը պարզ նկատելի են Վրթանես քերթողի թղթերից մեկում, որ վերջինս գրել է Սուրմեն ստրատելատին: Նույն հոդվածում հ[այր] Ակինյանը մատնացույց էր արել, որ բացի Վրթանես քերթողից «Ընդդէմ հերձուածոց» հայերեն թարգմանությունից օգտվել է նաև վեցերորդ դարի հեղինակ «Յոհան Կարնոյ քաղաքացին»: Հ[այր] Ակինյանի վերոհիշյալ եղրակացությունները հիմնավորված են փաստական ապացույցներով և խիստ կարևոր էին այն տեսակետից, որ Իրենեոսի թարգմանության ժամանակն իջեցնում էին վեցերորդ դար: Սակայն անհավանական էր հ[այր] Ակինյանի մի ուրիշ ենթադրությունը, իբր թե Իրենեոսի թարգմանիչն է Վրթանես քերթողը և որ թարգմանությունը կատարված է վեցերորդ դարի վերջին տասնամյակին: Այս ենթադրությունը, ավելի ճիշտ գուշակությունը, որ հիմնավորված չէ բավարար ու գոհացուցիչ ապացույցներով, կարելի է այժմ անտես առնել, որովհետև Իրենեոսի թարգմանության ժամանակը, ինչպես և կտեսնենք, դրվելու է վեցերորդ դարի երկրորդ կեսից առաջ:

Վերոհիշյալ հոդվածներում Իրենեոսի թարգմանության խնդիրը թվում է ինձ մեծ չափով պարզված: Ֆր. Կոնիբերի ու հ[այր] Վարդանյանի լեզվական լուրջ ու հիմնավոր դիտողություններից հետո՝ պետք է վերջնականապես ապացուցված հա-

մարել, որ Իրենեոսի հայերեն թարգմանությունները ժամանակակից են Փիլոնի թարգմանություններին: Իրենեոսի «Ընդդէմ հերձուածոց» թարգմանությունից օգտվել են, ինչպես ցույց է տվել հ[այր] Ն. Ակինյանը, Վրթանես քերթողը և Յոհան Կարնո քաղաքացին: Կարևոր այս վկայությունը դարձյալ աննկրայելի մի նոր ապացույց է, որ Իրենեոսի թարգմանությունները չատ ավելի հին են, քան կարծել էին հրատարակիչներն իրենց առաջարանում:

Աչքի առաջ ունենալով այս ակներև եղրակացությունները, նաև հունարան դպրոցի հաջորդական զարգացման այն ընթացքը, որ լուսարանված է սույն իմ ուսումնասիրության մեջ, կարծում եմ, որ Իրենեոսի թարգմանությունների ժամանակը հնարավոր է որոշել ավելի ճշգրիտ կերպով, քան այդ արված է վերոհիշյալ հոդվածներում:

Փիլոնի երկերը, ինչպես պարզել էինք վերև, կազմում են Թրակացու քերականության ու Պիտոյից գրքի հետ միասին հունարան թարգմանությունների հնագույն չերտը և թարգմանված պիտի լինեն Տիմոթեոս Կուղի Հակաճառությունից առաջ, ուրեմն՝ ո՛չ ուշ, քան վեցերորդ դարի առաջին կեսը: Իրենեոսի երկերի հայերեն թարգմանությունները, ժամանակակից լինելով Փիլոնի թարգմանություններին, պարզ է, որ հետ են տարվելու նույն ժամանակաշրջանը, ուստի նրանց թարգմանման terminus post quem non կամ վերջին եղրը պետք է ընդունել ո՛չ թե 604 թիվը, ինչպես կարծել էր հ[այր] Ակինյանը, այլ 552–564 տարեթվերը, երբ թարգմանված էր Տիմոթեոս Կուղի Հակաճառությունը: Իրենեոսի և Փիլոնի թարգմանիչների նույնացումը կամ ժամանակակցությունը մատենագրական այնքան կարևոր մի փաստ է, որ ավելորդ չեմ համարում Ֆր. Կոնիբերի և հ[այր] Վարդանյանի լեզվական վերոհիշյալ համեմատություններին ավելացնել նաև լեզվական իմ դիտողությունները, որ ունեն բոլորովին տարբեր բնույթ և լուսարանում են հունարան լեզվի զարգացման հաջորդական ընթացքը:

Վերև խոսելով Փիլոնի, Պիտոյից գրքի և Թրակացու քերականության լեզվական առանձնահատկությունների մասին (տե՛ս § 40բ), ես մատնացույց էի արել, որ այս հնագույն թարգմանությունները գրեթե չեն գործածել **հակ-**, **տար-** և **փոխ-** նախադրությունները, որպես թարգմանություն հունական ἀντι-, διա-, և μετα- նախադրությունների: Արդ՝ իմ այդ դիտո-

դուքյունը կատարելապես հաստատում են այժմ և Իրննոսի թարգմանությունները: Այդ թարգմանությունները ևս չունեն ամննեին **փոխ-** *նախադրությունը,* **տար-** *նախադրությունը նրանց մեջ և ո՛չ մի անգամ չի համապատասխանում հունարեն* **διά-** *նախադրության, այլ գործ է ածված Ոսկեղարյան գրաբարի հետևությամբ, ինչպես տարապանմ, տարակարծ, տարաժամ և այլն, իսկ* **հակ-** *նախդրի փոխարեն գործ է ածված հակառակ*[1]*, ինչպես այդ առանձնահատուկ էր նաև Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանություններին:*

Վերև մենք տեսանք (§ 42, Դ 2), որ մի չարք հունարան բառեր, ինչպես «տարրեր, տարրևրեմ, տարրևրութիւն, ներհակ, ներհակութիւն, մակացու, մակացութիւն», առաջին անգամ գործ են ածվել հունարան թարգմանությունների երկրորդ խմբում: Լեզվական կարևոր այդ դիտողությունը հաստատվում է այժմ և Իրննոսի բառապաշարի քննությամբ: Ինչպես Փիլոնի, Պիտոյից գրքի և Թրակացու քերականության մեջ, նույնպես և Իրննոսի թարգմանություններում, հունարան այդ բառերից ո՛չ մեկը գործածված չէ:

Ինչպես հայտնի է, հունարան թարգմանություններից մի քանիսում փորձ է արված ստեղծելու իգական սեռի դերանունական հատուկ ձևեր՝ **Սէ** *և* **Նէ,** *որոնք գործ են ածված հետևյալ թարգմանություններում՝ Փիլ. Այլար. 156, Փիլ. Հնոս. 6, Պիտ. 375, 377, 380, 381, 383, 384, Ներա Պիտ. 377, Սէ Տիմ. Հակ. 33, 42, դէ Տիմ. 26, 236, դնէ Տիմ. 35, 219, Նէրա, Նէրայ Տիմ. 222, 226, 283, 292, Սէրայ 194, Նէմա, Նեմա, Նէմայ, Նեմայ Տիմ. 15, 31, 95, 195, 196, 222, 292, Նէրում 105 և այլն: Թրակացու քերականությունը չունի իգական սեռի այդ հատուկ ձևերը, որովհետև իգական սեռի այդ դերանունները չկան նաև հունարեն բնագրում: Սակայն Իրննոսի երկերում այդ դերանունները հանդիպում են մի քանի անգամ «Ընդդէմ Հերձուածոց» թարգմանության մեջ՝ Նէ Իր. Հերձ. 91 և Սէ Իր. Հերձ. 140, 85:*

Ն. Ադոնցն իր «Արուեստ Դիոնիսեայ» աշխատության մեջ ենթադրում է, որ հիշյալ երկերը, որոնք գործ են ածում Սէ ու Նէ

---

[1] Հակառակագծեմ Իր. Հերձ. 37, Հակառակագրութիւն Իր. Հերձ. 137, Հակառակարանութիւն Իր. Հերձ. 151, Հակաճառութիւն Իր. Հերձ. 234, բայց Հակաճառութիւն Իր. Հերձ. 151 և անհակաճառ Իր. Հերձ. 23: Նախնական ձեռագիրը, թվում է ինձ, որ ունեցել է՝ «Հակառակաճառութիւն» և «անհակառակաճառ»:

իտական դերանունները, գուցե ավելի ուշ ժամանակի թարգմանություն լիներ, քան այն թարգմանությունները, որոնց մեջ այդ դերանունները գործածված չեն (ԼՂ CLXXVI-CLXXVII): Այս խնդիրը ստանում է այժմ բոլորովին հակառակ լուծում: Սև և Նէ իտական դերանունները գործ են ածված, ինչպես տեսնում ենք, Հունարան առաջին չերտի թարգմանություններում, նաև Տիմոթեոս Կուղի Հակաճառութեան մեջ, որ Հունարան երկրորդ չերտի հնագույն թարգմանությունն է: Իսկ հետագա թարգմանիչները խորթ ու անսովոր այդ ձևերը, ըստ երևույթին, անընդունելի են համարել և այլևս չեն գործածել: Այն հանգամանքը, որ այդ դերանունները, բացի հնագույն չրջանի որոչ թարգմանություններից, խիստ հաճախ ու բազմազան ձևերով գործ են ածված նաև Տիմոթեոս Կուղի Հակաճառութեան մեջ, կարող է թերևս մի նչան համարվել, որ այս վերջին թարգմանության ժամանակը բավական մոտ եղած պիտի լիներ հնագույն թարգմանությունների ժամանակաչրջանին: Եթե հետագայում հնարավոր լինի իմ այս դիտողությանն ավելացնել և ուրիշ նման փաստեր, այդ դեպքում՝ Փիլոնի խմբի թարգմանությունները դժվար պիտի լինի հետ տանել հինգերորդ դար, այլ նրանց ժամանակը որոչվելու է վեցերորդ դարի առաջին կեսի սահմաններում:

Ինչ վերաբերում է Իրեննեոսի թարգմանություններին, նրանց հնությունը կարծում եմ, որ կարելի է համարել վերջնականապես ապացուցված: Եթե անգամ Փիլոնի ու Իրեննեոսի թարգմանիչների նույնացման դեմ լիներ որևէ առարկություններ, համենայն դեպս՝ այդ թարգմանությունների խմբակցությունն ու ժամանակակցությունն այնքան պարզ է ու անվիճելի, որ այլևս ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ Իրեննեոսի թարգմանությունների ժամանակը պետք է դնել Տիմոթեոս Կուղի Հակաճառութիւնից առաջ, հավանաբար, վեցերորդ դարի առաջին կեսում:

§ 54. Նոննոսի մեկնությունների հայերեն թարգմանության ժամանակաչրջանը: — Նոննոսին վերագրված մեկնությունների նկատմամբ նախ կարևոր եմ համարում այստեղ հիշատակել, որ 1904 թվին, Նոննոսի հայերեն բնագիրը հրատարակելուց հետո[1], ինձ հաջողվել էր էջմիածնի մատենադարանում գտնել մեկնությունների մի նոր ընտիր օրինակ, որ մինչև այժմ մնացած է ան-

[1] H. Manandian, Nonnos. Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz. Marburg. 1903.

հայտ: Այդ նոր ձեռագրի այժմյան համարն է թիվ 579 (= Մայր ցուցակ թիվ 565): Հ. Կարենյանցի ցուցակում այդ ձեռագիրը մանրամասն նկարագրված չէ, այլ նշանակված է միայն, որ ձեռագիրը ժողովածու է «ումեմն բոլորագիր ի Ստեփան վարդապետէ ի Թուին Հայոց ՌՃԲ, ունի հիչատակարան»: Սակայն այս համառոտ տեղեկությունն անգամ սխալ է՝ ՌՃԲ թուականի փոխարեն պետք է լինի ՋՃԲ (1303 թ.): Ինչպես տեսնում ենք, նոր ձեռագիրը բավական պատկառելի է իր հնությամբ և, որքան հիշում եմ, ունի մեծ թվով ընտիր ու նոր ընթերցվածներ:

Նոննոսի մեկնությունների հայերեն թարգմանության ժամանակը մինչև այժմ մնում է դեռ անորոշ: Հայկազյան Բառգրքի աշխատակիցները համարում են նրա լեզուն «հին եւ ընտիր»: Այնուհետև, թե՛ այս և թե՛ Հունարան դպրոցի մյուս երկերը վերագրվել են, սովորաբար հինգերորդ դարի Կրտսեր թարգմանչաց խմբին[1]: Խորենացու խնդրի հետ միասին ավանդական այս տեսակետը, բնականաբար, խիստ քննադատության ենթարկվեց: 1904 թվին «Հանդես ամսօրյա» ուսումնաթերթում լույս տեսավ հ[այր] Ն. Ակինյանի ընդարձակ մի հոդվածը, որի մեջ հեղինակը, նորից քննելով այս խնդիրը, ենթադրում է, որ մեկնությունները թարգմանված պիտի լինեն 490 թվից հետո և յոթներորդ դարից առաջ[2]: «Մեկնությանցս լեզուն,- ասում է հ[այր] Ակինյանը,- շատ կնմանի Փիլոնի, Կալիսթենես գրոց թարգմանության լեզվին և ոչին. և այս կդրդե զմեզ ընդունելու թե կամ նույն անձր, որ զանոնք հեղած է ի հայ — և որ դժվարին է — և կամ ւսնոր ընկերակիցներեն մին թարգմանած է միևնույն ատենն»[3]: Ն. Ակինյանի դիտողությունն ուղիղ է միայն այն չափով, որ Նոննոսի թարգմանության մեջ հանդիպում են հաճախ Փիլոնյան խմբի հատուկ բառեր, սակայն այս ընդհանուր նմանությունները չեն կարող հիմք ծառայել Փիլոնի ու Նոննոսի թարգմանիչների նույնացման կամ ընկերակցման: Նույն կարգի լեզվական նմանություններ նկատելի են, ինչպես տեսանք, Հունարան նաև մյուս

---

[1] P. Sukias Somal, Quadro delle opere di vari autori, Venezia, 1825, էջ 18. Հ[այր] Գ. Զարպհանալյան, Մատենադարան հայկական թարգմանության նախնյաց, Վիեննա, 1889, էջ Իե, և այլն:

[2] Նոննոսի մեկնությունք Գրիգոր Աստվածաբանի հինգ ճառից: «Հանդես ամսօրյա», 1904, մայիս, էջ 139-146 և հունիս, էջ 165-173:

[3] Նույնը, էջ 166:

Թարգմանություններում (տե՛ս §§ 42, 44) և բացատրվում են նրանով, որ Հունարան թարգմանությունների երկրորդ ու երրորդ չերտերը ննթարկվել են մեծ կամ փոքր չափով հնագույն թարգմանությունների ազդեցությանը: Հունարան թարգմանությունների խմբավորումները որոշելու համար կարևոր են ո՛չ այնքան նրանց հատուկ բառապաշարի մասնակի նմանությունները, այլ նրանց լեզվական ու քերականական առանձնահատկությունների այն բնորոշ ու ուշագրավ տարբերությունները, որ մատնացույց են արված սույն ուսումնասիրության մեջ[1]*:*

Մոտենալով խնդրին այս տեսակետից, կարծում եմ, որ դժվար չէ, ապացուցել, որ Նոննոսի մեկնությունները թարգմանված պիտի լինեն կամ Հունարան երկրորդ չերտի թարգմանությունների ժամանակ կամ նրանցից հետո, ուրեմն նրա թարգմանման terminus ante quem non կլինի ո՛չ թե 490 թիվը, ինչպես կարծել է Հ[այր] Ակինյանը, այլ վեցերորդ դարի երկրորդ կեսը:

Այս եզրակացությունը հիմնավորելու համար ինձ կարևոր են թվում լեզվական հետևյալ դիտողությունները:

1. Նոննոսի թարգմանության մեջ գործ են ածված Հունարան բոլոր այն բառերը և նախադրությունները, որոնք հանդիպում են միայն Հունարան երկրորդ ու երրորդ չերտի թարգմանություններում, ինչպես օրինակ՝ մակացու Նոնն. 11, 7, ներհակ 64, 4, տարբերութիւն 24, 18, արտունանկնալք 49, 7, փոխակերպիմ 43, 23, փոխարկեմ 74, 10, 80, 6, փոխարերութիւն 12, 21, 35, 18, հակատփոթ 26, 23, 78, 15, հակադարձիմ 46, 15, հակակայիմ 69, 5 և այլն:

Վերը մենք մատնացույց էինք արել, որ այս բառերը կազմված պիտի լինեն Հունաբան թարգմանությունների երկրորդ չրջանում (տե՛ս վերև § 42 Դ, 2): Թրակացու քերականության, Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանությունների ժամանակ, ըստ երևույթին, դրանք դեռևս գոյություն չեն ունեցել (տե՛ս վերև § 40բ և գ):

---

[1] Իրենոսի ու Փիլոնի թարգմանություններում ո՛չ միայն ավելի բազմաթիվ էին ու պայծառ նրանց բառապաշարի նմանությունները, այլև նմանությունները նկատելի էին նաև նրանց ոճի, դարձվածքների, բառերի այլիմաստ գործածության, Ս. Գրքից առնված հատվածների և քերականական ձևերի մեջ: Բացի այն նրանց մեջ ես չեմ նկատել լեզվական ու քերականական այն հատուկ տարբերությունները, որ իսկույն աչքի են ընկնում, երբ համեմատության են առնվում Հունարան թարգմանությունների տարբեր խմբերը:

Լեզվական այս դիտողությունը կատարելապես ճշտվեց նաև Իրենոսի թարգմանությունների վրա՝ որոնք, ինչպես տեսանք, ժամանակակից են Փիղոնի թարգմանություններին (տե՛ս վերև § 53): Եթե Նոննոսի թարգմանությունը ևս լիներ համրակից հնագույն թարգմանություններին, պարզ է, որ նրա մեջ չէին կարող գործածված լինել վերոհիշյալ նոր բառերն ու նախադրությունները: Իսկ քանի որ այդ բառերը հանդիպում են Նոննոսի թարգմանության մեջ, կարծում եմ, որ կարող ենք եզրակացնել, որ այս մեկնությունները ժամանակակից չեն հնագույն թարգմանություններին և թարգմանված են, ամենայն հավանականությամբ, ավելի ուշ:

2. Այս ենթադրությունն անելուց հետո այնուհետև հավանական է դառնում, որ Նոննոսի թարգմանիչը ևս, ինչպես և հունարան դպրոցի երկրորդ ու երրորդ չրջանի թարգմանիչները, ըստ երևույթին, ծանոթ է եղել Թրակացու քերականության ու Պիտոյից գրքին, և քերականական ու ճարտասանական հատուկ բառերը մեկնություններին մեջ ծագում են, հավանարար, հնագույն այս թարգմանություններից:

Այս տեսակետից հետաքրքիր է Նոննոսի թարգմանության մեջ արձանականի վերաբերյալ մեկնությունը, որը գրեթե համապատասխանում է Պիտոյից գրքի «Յաղագս պարսաւի» տեսությանն:

Նոննոս, էջ 24, 14-17	***Պիտ., էջ 445, 10-14***[1]
«Արձանականն բան պարսաւ է Յուլիանոսի գործոցն. այլ զանազանի ի պարսաւ է արձանականն, քանզի է պարսաւն ի ձևոն ներբողական պլխոցն. որգան՝ յաղդէ. ի վարժից, ի գործոց, ի բաղդատութենէ: Այլ արձանականն ի ձևոն գործոցն միայն է, եւ թէ պատա է՝ ի բաղդատութենէ»:	*«Պարսաւ եւ արժան է ի պարսաւելն նախաչաւիղ առնել, որպէս ի ներբողեանս: Ի վերայ ածել եւ զազգն: Նմանապէս եւ զանունն՝ զովութեանց հատասար: Եւ ապա զգործսն դնել: Եւ զբաղդատութիւնն: Եւ զի վերայ բանին՝ պատճառին ձայնակցեալ»:*

Թրակացու քերականության ու Պիտոյից գրքի ազդեցության հետքեր կարող են համարվել նաև՝ քերականական ու ճարտասանական հետևյալ բառերը.

---

[1] Տե՛ս *Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք*, Վենետիկ, 1843:

ա. ἐνεστώς ներկայ Նոն. 10, 16, Թր. 23, 24, 45 և այլն, բ. παρεληλυθώ անցեալ Նոն. 10, 16, Թր. 23 ևն, գ. μέλλων ապառնի Նոն. 10, 16, Թր. 23, 24, 46 և այլն, դ. ἐτυμολογια ստուգաբանութիւն Թր. 1, ստուգաբանեմ Նոն. 51, 8, ե. ἐπώνυμον մականուն Թր. 17, 19, ἐπωνυμία մականունութիւն Նոն. 32, 18, 41, 3, զ. παράγομαι ածանցիմ Թր. 16, 29, Նոն. 51, 9 **տպված է՝** «աստուած անցեալ է», **պետք է լինի՝** «ածանցեալ է», է. գովասանութիւն Նոն. 16, 9, գովասանական Պիտ. 580, 17, բ. ἐκφωνέω արտասանմ Նոն. 23, 6, Պիտ. 529, 15 և այլն, Թ. ἴαμβος մնծավերջ Նոն. 36, 20, Թր. 43, 17, մնծավերջական Պիտ. 369, 14: Ըստ հ[այր] Ակինյանի Նոննոսի «սղավերջ» բառը (էջ 4, 3) թարգմանութիւն է Հունարէն πυρρίχιος բառի (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1904, էջ 171): Ուշադրութեան արժանի է, որ Հունարէն նոյն բառը Թրակացու քերականութեան մէջ թարգմանված է «անզայտ» և ո՛չ «սղավերջ»:

3. Ն. Ադոնցն իր «Արուեստ Դիոնիսեայ» աշխատութեան մէջ նկատել էր, որ Թրակացու քերականութեան թարգմանը Հունարէն δαφνίνη բառը հասկացել է իբրև «սարդննի» (էջ 4, 8), իսկ Նոննոսի մեկնութիւնների մէջ նոյն δάφνη բառը թարգմանված է «մուրտ» (էջ 71, 10): Ն. Ադոնցի կարծիքով, այս բառի տարբեր թարգմանութիւնը ուշագրաւ մի ապացոյց է, որ Թրակացու ու Նոննոսի թարգմանիչները չեն կարող լինել միևնոյն անձը: Այս նկատողութիւնը, որ միանգամայն ճիշտ է, հաստատվում է նաև իմ վերոհիշյալ լեզվական դիտողութիւններով: Նոննոսը և Թրակացու քերականութիւնը, ինչպես տեսանք, թարգմանված են հիրավի տարբեր ժամանակաշրջաններում և, բնականաբար, չեն կարող համարվել միևնոյն թարգմանչի աշխատութիւն:

4. Նոննոսի թարգմանութիւնը լեզվական իր առանձնահատկութիւններով թվում է ինձ ամենից մոտ ո՛չ թե Փլոնի, այլ Արիստոտելի «Յաղագս աշխարհի» թարգմանութեան: Այս երկու թարգմանութիւնն էլ գրված են Հունարան մատչելի ու հասկանալի լեզվով: Սրանք երկուսն էլ գործ են ածում հաճախ օտար բառեր, մինչդեռ Հունարան մյուս թարգմանութիւնները Հունարէն բառերը, սովորաբար, աշխատել են փոխադրել Հայերէնի: Օրինակ՝ ա. αἰθήρ եթեր Նոն. 39, 23, Ար. Աշխ. 606, 15, 625, 19, եթերային Ար. Աշխ. 606, 22, **բայց** արփի Փիլ. նախ. 11, Պիտ. արփային Փիլ. լին., լիլց և այլն, բ. ἄμπωτις ամպոտ Նոն. 46, 6. 8. 12. 69, 4. 9, Ար. Աշխ. 616, 5. գ. -θέατρον թէատրոն Նոն. 74, 1,

բայց տեսլարան Փիլ. Լիւս. 136, Տիմ. Հակ. 315, 10, դ. ῥήτωρ Հռետոր Նոն. 14, 4, 19, 22, բայց ճարտասան Փիլ. տես., Պիտ. 356, 26, ՅՍտ. 422, 13, Դ-ՍՀմ. 177, 27, Դ-Պորփ. 254, 26, Վերլ. 581, 26, ևն, և. σοφιστής սովփհստէս Նոն. 14, 4, բայց իմաստակ Փիլ. նախ. Լ9 9, լին. 205, Պիտ. 347, 25, Իրևն. Ընդդ. հերձ. 11, 201, σοφιστικός իմաստական Վերլ. 561, 21, ԷյՍտ. 32, 10, դ. ἱπποκένταυρος Իպպաւկենդրոս Նոն. 18, 8, բայց ձիացու Փիլ. ժրան և այլն, Լ. ἀνδριάς անդրի, անդրիանդ Նոն. 24, 9, 70, 15. 18. 71, 5. 6, բայց առնապատկեր Փիլ. նախ. Լ9 34, այրաձև Ներ. Պորփ. 238, 3, ը. εἰμαρμένη իմարմինէ Ար. Աչխ. 628, 10, և ուրիշ նման բառեր:

Ուշադրության են արժանի այս թարգմանությունների մեջ նաև մի չարք համանման բառեր, որոնք հունարան մյուս թարգմանություններում կամ բոլորովին չեն գործածված կամ խիստ հազվագյուտ են. օրինակ՝ ա. ἀνταρκτικός դևրհիւսիսային Նոն. 19, 18, դևրհիւսիսական Ար. Աչխ. 605, 17, ը. ἀνάδοσις վերատրութիւն Ար. Աչխ. 612, 29, ἀναδιδωμι վերատրեմ Նոն. 44, 7, գ. յառաջխոսս Նոն. 72, 11. 15, Ար. Աչխ. 603, 26, դ. πυροειδής հրատեսակ Նոն. 44, 7, Ար. Աչխ. 606, 24, և. Դիւթանալ Նոն. 70, 11, Ար. Աչխ. 614, 33, զ. χρησμῳδία հրամանատրութիւն Նոն. 64, 2. 3 և այլն, Ար. Աչխ. 614, 35, Լ. κοίλωμα փորոն Նոն. 69, 8, Ար. Աչխ. 615, 5, ը. զովասանութիւն Նոն. 16, 9, Ար. Աչխ. 617, 30, Թ. κεραυνός ամպահարութիւն Նոն. 56, 5 ևն, Ար. Աչխ. 618, 10, ժ. ἔξοχή արտօնութիւն Ար. Աչխ. 621, 10, արտունանկնալք Նոն. 49, 5. 7, արտունութիւն ὑπεροχή Դ-ՍՀմ. 154, 6, արտունող ԱՍտ. 373, 20 ևն. ժա. յաւգաւորութիւն Նոն. 48, 25, Ար. Աչխ. 616, 37, 617, 9, 622, 35, ժր. դիւրափոփոխ Նոն. 69, 12, Ար. Աչխ. 625, 24, ժգ, զևտօրչն Նոն. 44, 6, 10, Ար. Աչխ. 614, 26, տե՛ս նաև զլսօրչն Ար. Աչխ. 610, 11, զծօրչն Ար. Աչխ. 613, 21:

Վերև մենք տեսանք, որ թե՛ Նոննոսի մեկնությունները և թե՛ Արիստոտելի «Յաղագս աչխարհի» գրվածքը չեն կարող թարգմանված լինել հունարան երկրորդ չերտի թարգմանություններից առաջ և նրանց թարգմանման terminus ante quem non պետք է ընդունել վեցերորդ դարի երկրորդ կեսը: Ժամանակագրական կարևոր այս եղրակացությունը, ինչպես և նույն թարգմանությունների վերը մատնանչված լեզվական նմանությունները, կարծում եմ, որ ուշագրավ ու հավանական նչաններ են, որ Նոննոսի մեկնությունները խմբակից ու ժամանակակից են ո՛չ թե Փիլոնի, այլ «Յաղագս աչխարհի» թարգմանության:

*Նոննոսի թարգմանության terminus post quem non սահմանը որոշելու համար հ[այր] Ն. Ակինյանը Դավիթ փիլիսոփայի քերականի մեկնության մեջ մատնացույց էր արել[1] հետևյալ հատվածը. «Իսկ ողբերգութիւն նոխազերգութիւն ասի ըստ յունականին առ ի պաչտաւն առնալ Դիոնիսեայ ումման տուողի որթոյ, **որ է պատմութիւն յայտնի**»[2]: Հ[այր] Ակինյանի կարծիքով, «**որ է պատմութիւն յայտնի**» խոսքերով Դավիթ փիլիսոփան, ըստ երևույթին, ակնարկում է Նոննոսի մեկնությունների **Գ** ճառի **կա** գլուխը (էջ 50):*

Ինձ թվում է, որ անկախ նույնիսկ Դավիթ փիլիսոփայի վերոհիշյալ վկայությունից, որ կարող է վիճելի համարվել, Նոննոսի մեկնությունները և Արիստոտելի «Յաղագս աչխարհի» գրվածքը թարգմանված պիտի լինեն, հավանաբար, վեցերորդ դարի երկրորդ կեսում կամ ամենաուշը՝ յոթներորդ դարի սկզբներում:

§ 55. **Մովսես Քերթողահոր թուղթը և Հովհաննու եպիսկոպոսապետի Ասացոյցը գրված են հունաբան երկրորդ չերտի թարգմանություններից հետո:** *– «Գիրք Թղթոցում» տպված են կրոնադավանաբանական երկու թուղթ՝ «Երանելի մեծի Քերդողահաւրն Մովսէսի Խորենացի եպիսկոպոսի»[3] (էջ 22–28) և «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի, Ասացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն եւ կամ մի բնութիւն» (էջ 29–40): Այս թղթերի հեղինակների ու ժամանակի խնդիրը, թեև հաճախ քննության նյութ է եղել բանասիրական նորագույն աշխատություններում, բայց մինչև այժմ դեռ որոշված ու պարզված չէ:*

*Հ[այր] Ն. Ակինյանը «Տիմոթեոս Կուղ հայ մատենագրության մեջ» իր հոդվածում այս երկու թուղթը համարում է տարբեր դարաշրջանների և իրարից անկախ գրություններ (տե՛ս «**Հանդես ամսօրյա**», 1908, սեպտեմբեր, էջ 261 և հոկտեմբեր, էջ 302): Հովհաննու եպիսկոպոսապետի Ասացոյցը նա ենթադրում է հունարենից թարգմանված վեցերորդ դարի առաջին քառորդին, իսկ Մովսես Քերթողահոր գրությունը, որը Տիմոթեոս Կուղի թարգմանությունից ունի Երկթեոսի հատվածը, նա համարում է ինք-*

[1] «**Հանդես ամսօրյա**», 1904, էջ 167:

[2] Տե՛ս **Ն. Ադոնց**, Արուեստ Դիոնիսեայ, էջ 89:

[3] Տե՛ս նաև **Ա. Տեր-Մկրտչյան**, Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք, Վաղարշապատ, 1893, էջ 255–261: Նույն գրության վերնագիրն է այստեղ՝ «Երանելոյն մեծի Քերթողահօրն Մովսէսի եպիսկոպոսի» (էջ 255):

նուրույն Հայերեն աշխատություն, գրված Տիմոթեոս Կուղի Թարգմանությունից հետո, ուստի և այս գրության terminus ante quem non նա ընդունում է վեցերորդ դարի երկրորդ կեսը:

*Ենթադրելով Հովհաննու Եպիսկոպոսապետի Ապացույցը հունարենից թարգմանված, հ[այր] Ակինյանը, ըստ երևույթին, այդ գրությունը չի համարում հայոց Եպիսկոպոսապետի աշխատություն: «Պատճառք Դ ժողովոյն երկարնականց» գրվածքում, որ նա վերագրում է Վրթանես քերթողին, կա նույնպես Հովհաննու Եպիսկոպոսապետի ինչ-որ մի թղթի հիշատակություն և Ապացույցը, նրա կարծիքով, նույնացվելու է հենց այս թղթի հետ: Կարևոր այդ հիշատակությունը գտնվում է Պատճառքի հետևյալ հատվածում՝ «Եւ որ յանդիմանեն եւ նզովեն զժողովն եւ զտումարն՝ Թուղթն Զենոնի ուղղափառ թագաւորի, որ կոչի Հենատիկոն եւ Թուղթն Նրանելոյ Անաստասայ թագաւորի, եւ գիրք Տիմոթէոսի Աղեքսանդրացւոյ, եւ **Թուղթ Յովհաննու եպիսկոպոսապետի**, եւ Թուղթն Պետրոսի Անտիոքացւոյ, եւ պատճառն իսկ, եւ այլ բազում Թուղթք ուղղափառաց» (տե՛ս **«Գիրք Թղթոց»**, էջ 126):*

*Հ[այր] Ակինյանը կարող էր իր կարծիքն ավելի ևս հիմնավորել, եթե մատնացույց աներ Անաստասիոս կայսեր Թղթում հետևյալ հատվածը՝ «Զայս սահման ընկալան եւ սուրբ Հարքն ՃՄ-քն որ ի Կոստանդինուպաւլիս ժողովեցան վասն Սրբոյ Հոգւոյն: Ըստ նմին եւ Նրանելի ժողովն որ յԵփեսոս ժողովեցան եւ նզովեցին զՆեստորիոս հերձուածող եւ զամենայն որ ըստ նմա խորհին եւ հաւատան, որպէս եւ Թուղթն որ կոչի Հենատիկոն Զենոնի ուղղափառ թագաւորի, նոյնպէս եւ **Թուղթն Նրանելոյն Յովհաննու եպիսկոպոսապետին Աղեքսանդրի**[1] որ գուցանեն այսպէս. յորում նզովէ զտումարն Լեւոնի եւ զժողովն Քաղկեդովնի, որ անգին ընդ նոյն սահման, եւ երկուս բնութիւնս զկնի միաւորութեանն սահմանեցին վասն Քրիստոսի»[2] (տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 277): Անաստասի այս Թղթում Հովհաննես Եպիսկոպոսապետը, թվում է ինձ, որ նույն անձն է, որ հիշված է վերև Վրթանես քերթողի Պատճառքում: Բայց այս վերջին վկայությունը խիստ կարևոր է*

---

[1] «Կնիք Հաւատոյ» ժողովածուի առաջարանում Կարապետ Եպիսկոպոսը նշում է, որ այս վկայության մեջ ակնարկված է նրևի Հովհաննես Բ-ի Սևերոսին գրած Թուղթը (513-515), էջ LXVII:

[2] «Կնիք Հաւատոյ» ժողովածուի մեջ նույն այս հատվածն առաջ է բերված տարբեր խմբագրությամբ՝ «Որպէս Թուղթն, որ կոչի Հենատիկոն՝ Զենոնի ուղղա-

այն տեսակետից, որ Հովհաննեան անվանված է այստեղ «եպիսկոպոսապետ Աղեքսանդրի»: Եթե Ապացոյցը վերագրվի «Յովհաննու եպիսկոպոսապետին Աղեքսանդրի», պարզ է, որ այդ գրութիւնը չի կարող լինել Հովհաննու հայոց եպիսկոպոսապետի աշխատութիւն, այլ պետք է համարվի թարգմանութիւն, ինչպես ենթադրել է հ[այր] Ն. Ակինեանը: Սակայն Հովհաննու եպիսկոպոսապետի խնդիրը շատ ավելի բարդ է, քան կարելի էր ենթադրել: Հ[այր] Ակինեանի վերոհիշեալ եզրակացութիւնների դեմ եղան մի չարք առարկութիւններ:

*1913 թվին «Շողակաթ» հայագիտական ժողովածուի մեջ լոյս տեսաւ Գ. Տեր-Մկրտչեանի հոդվածը՝ «Հայ մատենագրութեան հնագոյն թվականները» (տե՛ս «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 154–163): Այս հոդվածում Գ. Տեր-Մկրտչեանը մատնացոյց է անում, որ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ մի մեծ հատված է բերված Հովհաննու եպիսկոպոսապետի Ապացոյցից այսպիսի վերնագրով՝ «Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Կաթուղիկոսի՝ ի հականճառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց» («Կնիք հաւ.», էջ 130, համմտ. «Գիրք թղթոց», էջ 33): Հենվելով այս վերջին վկայութեան վրա և ընդունելով Տիմոթեոս Կուղի հականճառութիւնը թարգմանված 480–484 թուականին, Գ. Տեր-Մկրտչեանը եզրակացնում է, որ Մովսես Քերթողահայրը պիտի լինի Փարպեցուց հայտնի Մովսես վիպասովսը, իսկ Ապացոյցի հեղինակ Հովհաննես Հայոց եպիսկոպոսապետը պիտի համարվի Բարկեն Կաթուղիկոսի նախորդը՝ Հովհան Մանդակունին: «Կնիք հաւատոյ» հրատարակութեան իր առաջաբանում Կարապետ եպիսկոպոսը համաձայնութեամբ պաշտպանում է Գ. Տեր-Մկրտչեանի այս տեսակետը և ավելացնում նաև իր կողմից, «որ Յովհաննու եպիսկոպոսապետի գրութիւնը գործ է ածում Տիմոթեոսի հականճառութեան միայն հատուկ բառեր ու դարձվածներ (այլ ոմն գՅիսուսն գոլով **արտակրելի**, եւ այլ գՔրիստոսն՝ **անախտ** եւ անչարչարելի, **զուգաճանապարհութիւն, ախտակիր, աստուածվայելչաբար, անբաժ, տնտեսութիւն** և այլն) և գաղափարներով էլ պատվում է նորա դավանաբանական ըմբռնմանց չրջանակի մեջ» (էջ LIX):*

վատ թագաւորի, նոյնպէս եւ **թուղթն Յովհաննու եպիսկոպոսապետին Աղեքսանդրի**՝ այն, որ ցուցանէ այսպէս, յորում նզովէ զսուրբն Լեւոնի եւ զայլ անցին ըստ նոյն սահման եւ երկուս բնութիւնս ղկնի միաւորութեանն սահմանեցին ի վերայ միոյն Քրիստոսի», էջմիածին, 1914, էջ 128:

Հ[այր] Գ. Տեր-Մկրտչյանի և Կարապետ Եպիսկոպոսի վերոհիշյալ եղրակացությունը, ինչպես տեսնում ենք, հիմնված է, գլխավորապես, Տիմոթեոս Կուղի Թարգմանության թվականի վրա: Նրանց ապացույցները երկսայրի են այն տեսակետից, որ, Կուղի թվականի փոփոխմամբ, այդ ապացույցներն իսկույն պիտի դառնան իրենց դեմ, որովհետև երկուսն էլ ընդունում են ու պնդում, որ Մովսես Խերթողահայրը օգտվել է Հակաճառությանն հայերեն Թարգմանությունից, իսկ Կարապետ Եպիսկոպոսը մատնացույց է արել Տիմոթեոսի Թարգմանության հատուկ բառերը նաև Ագաթոյգի մեջ: Արդ՝ աչքի առաջ ունենալով վերոհիշյալ մեր լեզվական և այլ դիտողությունները, կարծում եմ, որ Տիմոթեոսի Թարգմանության ժամանակը կարելի է համարել վերջնականապես պարզված (տե՛ս վերև §§ 38, 42 և այլն): Տիմոթեոսի Հակաճառությունը թարգմանված է ո՛չ թե 480-484 թառամյակին, այլ 552-564 թվականների ժամանակամիջոցում: Պարզ է ուրեմն՝ որ Հ[այր] Գ. Տեր-Մկրտչյանի ու Կարապետ Եպիսկոպոսի վերոհիշյալ պնդումները սխալ են համարվեն սխալ: Մովսես Խերթողահոր և Հովհաննու Եպիսկոպոսապետի Թղթերը, եթե նրանք օգտվել են Հակաճառությունից, չեն կարող հետ տարվել ո՛չ հինգերորդ դար, ո՛չ էլ անգամ վեցերորդ դարի առաջին կեսը: Սխալ է նույնպես Հ[այր] Ն. Ակինյանի կարծիքը. իբր թե կրոնա-դավանական այս Թղթերը դանազան ժամանակաշրջանների գրվածքներ են: Հ[այր] Գալուստ Տեր-Մկրտչյանը վերոհիշյալ իր հոդվածում ցույց է տվել, որ այդ գրությունները դժվար է բաժանել միմյանցից: Մովսես Խերթողահոր Թուղթը ուղղված է, նրա կարծիքով, Հովհաննես Եպիսկոպոսապետին, և այս վերջինս յուր Ագաթոյգը գրելիս աչքի առաջ է ունեցել Խերթողահոր գրությունը: Գալուստ Տեր-Մկրտչյանի այս եղրակացությունը, որ հիմնված է փաստական մի շարք դիտողությունների վրա (տե՛ս «Շողակաթ», էջ 159), հաստատվում է ըստ իս այդ գրությունների դավանաբանական ընդհանուր բովանդակության, հատուկ մտքերի, նաև լեզվի ու ոճի ակներև մերձակցությամբ: Շատ ճիշտ է ուրեմն Գ. Տեր-Մկրտչյանի առարկությունը, որ չի կարելի Հովհաննու Եպիսկոպոսապետի գրությունը թարգմանված համարել վեցերորդ դարի սկզբներին, իսկ Խերթողահոր Թղթի ժամանակը հետ տանել վեցերորդ դարի երկրորդ կեսը կամ յոթներորդ դար: Այս Թղթերը, ինչպես տեսնում ենք, ժամանակակից երկեր են, բայց ո՛չ Մովսես

փիլիսոփոսի և Հովհան Մանդակունու գրվածքներ, ինչպես ենթադրել է Գ. Տեր-Մկրտչյանը:

*Որ այդ երկերը չեն կարող լինել հինգերորդ դարի գրվածքներ, այդ երևում է ըստ իս նաև նրանց բովանդակությունից ու նրանց հունարան լեզվի առանձնահատկություններից: Ուշադրության արժանի է ամենից առաջ, որ Մովսես Խորենացուց վերագրված թուղթը դավանաբանական իր մեկնությունները հիմնավորում է հաճախ արիստոտելյան իմաստության գաղափարներով: Նույն թղթի մեջ հիշվում է նույնիսկ «փիլիսոփայական Ստորոգութիւնք» ինչ-որ երկ հետևյալ հատվածում. «Վասն որոյ ի դէպ եւ յոյժ ճահողագոյն թուի խոստովանողաց մի բնութիւն ասելով. զի եւ յաջմէ նստանալ համեմատութեամբ մի Տէր քարոզի: Ապեթէ հակառակս ինչ վարկանիցին ոմանք զպատասխանելոյդ անկարելի համարելով, որպէս թէ երկուս բնութիւնս պատչաճիցէ ասել՝ զիտասցեն զի զնոյն զանհնարութիւն եւ ի մարդումն գոյ նկատելով ճանաչի[1] ո՛չ միայն **ի փիլիսոփայական ստորոգութիւնսն,** այլեւ սուրբ գիրք աստուածաչունչք» («Գիրք թղթոց», էջ 23–24): «Փիլիսոփայական Ստորոգութիւնք» երկը և «Ստորոգութիւնք» հունարան հատուկ բառը, որ հիշատակված է այս հատվածում, մի նշան է, որ Խորենացուց վերագրված թղթի ծագումը պետք է դնել Արիստոտելի Ստորոգութեանց թարգմանությունից հետո, ուրեմն՝ վեցերորդ դարի վերջին քառորդին կամ ավելի ուշ: Նմանապես և «Ապացոյցի» հեղինակը, թվում է ինձ, որ ծանոթ է Արիստոտելի իմաստասիրության և նրա քննության մասին ունի հետևյալ ուշագրավ ակնարկությունը. «Բայց կամիմ փոքր ի չատէ անցանել բանիւ յաղագս ճառի բնութեանցն, զոր ոմանք չարաչար ի կիր առեալ վարեցան, զամպաստանութիւնսն ի վայելչապէս ճառատոն կամելով թափել: Բայց նախ ճանաչել պարտ է, զի ոչ յիշատակեցաւ բնութեանցդ անուն՝ ի դէմս՝ Քրիստոսասէր ուղղափառաց, այլ չարաչարն պատառմամբ խոստովանողաց. զորս անվրէպ գոյ ասել, քան զբնաւս անաւրինագոյնս եւ տարագրեալս յոխտէ աւետեացն, **որք ըստ գոյացութեանց իմն բնախաւսելով, զէակս քննել առնին ի կիր,** զերկրիս խորհելով ընդ նոյն չաղևալք, ի խլրդենի կուրութեան հաղրս» («Գիրք թղթոց», էջ 3):

Այս հատվածում ***«որք ըստ գոյացութեանց իմն բնախաւսելով, զէակս քննել առին ի կիր»*** *խոսքերով ակնարկվում են ըստ իս Արիստոտելի իմաստասիրական-տրամաբանական երկերը, որով-*

[1] Սամուել Անեցի, էջ 257, ունի՝ «եւ ի մարդոն գոյ Հնար նկատելով ճանաչել»:

Հետև այդ երկերն էին քննում Կակաց խնդիրը «ըստ գոյացութեանց բնախառնելով»: Հատվածի յովանդակությունից երևում է, որ կրոնա-դավանական վեճերը Քրիստոսի բնությանց մասին սերտ կապված են եղել արիստոտելյան իմաստասիրության հետ և այդ վեճերը հարուցված են եղել Կակաց քննության ազդեցությամբ: Ինչպես վերև տեսանք, «Կակաց» և «գոյացութեանց» խնդիրը քննված է, գլխավորապես, Արիստոտելի Ստորոգութեանց երկում:

Արդ՝ եթե «Ապացոյցը» համարվի հայ հեղինակի աշխատություն, թվում է ինձ, անհավանական չի լինի ենթադրել, որ նրա ժամանակը, դրվելու է արիստոտելյան հնագույն թարգմանություններից հետո և նրա երկը ևս, ինչպես և Քերթողահոր վերագրված թուղթը, հորինված պիտի լինի Արիստոտելի Ստորոգութեանց թարգմանությունից հետո:

Եթե վերոհիշյալ թղթերը թարգմանված համարվեն հունարենից, նրանց թարգմանման ժամանակը դարձյալ դրվելու է հունարան երկրորդ շերտի թարգմանություններից հետո, ուրեմն՝ վեցերորդ դարի վերջերին կամ ավելի ուշ: «Ստորոգութիւնք» հունարան բառը, որ հանդիպում է Քերթողահոր թղթում, չեմ կարծում, որ գոյություն ուներ Արիստոտելի Ստորոգութեանց թարգմանությունից՝ 576 թվից առաջ: Բացի այդ՝ նույն թղթերում գործ են ածված վերոհիշյալ այն բառերը, նախադրությունները, որոնք, ինչպես տեսանք (§ 40բ և գ, § 42 դ, 2, § 53 և այլն), կազմված պիտի լինեն հունարան թարգմանությունների երկրորդ շրջանում, ինչպես օրինակ՝ աննևրհական, էջ 23, 3, տարբերութիւն 24, 6, 30, 33, 35, 21, վոխադրկի 38, 6: Եթե լեզվական այս դիտողություններին ավելացնենք նաև այն, որ այս թղթերում, ինչպես վերև ասվեց, հանդիպում են հաճախ Տիմոթեոսի Հակաճառութեան հատուկ բառեր և դարձվածներ, կարծում եմ, դժվար չի լինի համոզվել, որ այս թղթերի հորինման կամ թարգմանման terminus ante quem non որոշվելու է վեցերորդ դարի վերջին քառորդը: Թեև չունենք որոշ վկայություններ կամ տվյալներ նաև սրանց terminus post quem non-ը որոշվելու համար, բայց նրանց յովանդակությունը և հունարան լեզվի հնության մի քանի նշանները հիմք են տալիս ինձ ենթադրելու, որ այս թղթերի ժամանակը դժվար թե կարելի լինի տանել մինչև ութերորդ դարը, այլ նրանց մոտավոր ժամանակը հավանական է ընդունել կամ վեցերորդ կամ ամենաուշը՝ յոթներորդ դարի սկզբներում:

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ա. «Աչխարհացոյց»-ը և Մովսես Խորենացին

Բ. Խորենացու առեղծվածի լուծումը

ԱՌԱՋԱԲԱՆ

Ձեռնամուխ լինելով սույն ուսումնասիրության (1932 թվի մայիս ամսին)՝ մեզ դրաղեցնող խնդիրն է եղել ո՛չ թե Մովսես Խորենացու Պատմությունը, այլ «Աչխարհացոյց»-ի համառոտ ու ընդարձակ խմբագրությունների համեմատական քննությունը: Աչխատանքի առաջին չրջանում իմ մտքով անգամ չէր անցնում, որ «Աչխարհացոյց»-ի ուսումնասիրության ընթացքում ստացվելու են հետաքրքիր կարևոր ու ծանրակչիռ հետևություններ, որոնք ուղեցույց են լինելու Խորենացու առեղծվածի լուծման: Այդ հետևությունները, չափազանց զորավոր և աղաղակող, իրենք էին այնուհետև թելադրում մեր ուսումնասիրության նորակերպ ծրագիրը: Եվ հենց այս հանգամանքն է հիմնական պատճառը ուսումնասիրված նյութի այն հատուկ դասավորության, որ կարող է թվալ խառնակ ու անհարդալ:

Ինձ համար միանգամայն պարզ էր ու անվիճելի, որ «Աչխարհացոյց»-ը Խորենացու աչխատությունն է և գրված է իններորդ դարում: Անհրաժեչտ էր, ուրեմն, հետազոտել ու լուսաբանել Խորենացու ամբողջ խնդիրն այս նոր հայեցակետով: Ինքնըստինքյան հասկանալի էր մեզ ուչադրությամբ կանգ առնել ո՛չ միայն Խորենացու Պատմության, այլև այն հակասող փաստերի վրա, որոնք կարող էին հիմք ծառայել տարակուսանքների ու առարկությունների: Նման հակասող փաստ էր, օրինակ, Խորենացու Պատմության կապն Աղեքսանդրի վեպի և «Պիտոյից գրքի» հետ, որոնք վերագրվել են Խորենացուն և համարվել մատենագրական հնագույն չրջանի երկեր:

Այս վերջին խնդիրները, ինչպես կտեսնն ընթերցողը, չեն կարող ընավ խոչընդոտ լինել Պատմության ժամանակի մեր առաջադրած որոչման: Ընդհակառակը՝ վերոհիչյալ երկերի նոր ուսումնասիրությունը համոզեց մեզ, որ Աղեքսանդրի վարքը, ինչպես և «Պիտոյից գրքի» վերջաբանը, իրենք ևս գրված են իններորդ դարում և կարող են, հետևաբար, վերագրվել Պատ-

մութեան հեղինակին: Խորենացու մութ ու խրթին առեղծվածը լուծվում էր այսպիսով ո՛չ միայն «Աշխարհացոյց»-ի, այլև Աղեքսանդրի վեպի ու «Պիտոյից գրքի» վերջաբանի ընթերցմամբ:

Իրրև առարկութիւն իմ եզրակացութեան դեմ կարող էր մեջբերվել, անշուշտ, «Ողբ»-ի լռությունը: Սակայն այդ հարցը ևս քննութեան է առնված սույն ուսումնասիրության մեջ և մանրամասն կերպով ցույց է տրված, որ Խորենացու «Ողբ»-ի որոշ ակնարկները հասկանալի են Բուզայի արշավանքից հետո և վերաբերվում են, գլխավորապես, քաղաքական ու նկեղեցական այն անցքերին, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում հենց նույն իններորդ դարում: Հատկապես Բուզայի արշավանքից հետո բնական ու հասկանալի է դարձյալ Խորենացու հունասեր ուղղութիւնը, որ առանձնապես չնչտվել է Խորենացու քննադատների կողմից:

Մեր ուսումնասիրության մեջ հատուկ հավելվածում մանրամասն քննված է նույնպես Խորենացու Պատմութեան լեզուն: Պատմութեան բառապաշարի մեջ մենք մատնանշել ենք բազմաթիվ բառեր ո՛չ միայն հունարան թարգմանութիւնների, այլև անգամ մերձին հայերենի:

Խորենացու ժամանակի որոշման համար, ինչպես տեսնում ենք, ապացույցները բազմաթիվ են ու համոզիչ: Հաստատվում է ուրեմն, որ Խորենացու Պատմութիւնը, ինչպես այդ ճիշտ դիտել է ու մատնանշել Յո. Մարկվարտը, հորինված է եղել իշխանաց իշխան Աշոտի ժամանակ, «իրրև հայելի» հայկական նոր թագավորութեան, որ ստեղծվելու էր իններորդ դարում:

Խորենացու պատմութեան քաղաքական այդ բնույթը մենք պարզելու ենք մի նոր հոդվածում, որի մեջ ի նկատի ենք առնելու Պատմութեան այն փաստական տվյալները, որոնք պարզ ու որոշ ապացուցում են Խորենացու հատուկ միտումները:

Հ. Մ.

Ծանոթ. — Պրոֆ. Հ. Մանանդյանն իր այս ուսումնասիրությունը զեկուցել է Կուլտուրայի պատմության ինստիտուտի պատմության սեկտորում 1933 թվին: Զեկուցումից հետո տեղի ունեցավ մարերի վոխանակություն:

Հրատարակելով պրոֆ. Հ. Մանանդյանի այս չահևկան ուսումնասիրությունը, ինստիտուտն առաջիկայում կանդրադառնա Մովսես Խորենացու «Հայոց պատմության» խնդրին, լույս ընծայելով առանձին գրքով նիստերին տված ունեցած մտքերի փոխանակությունը:

ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտ

Ա. «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ը ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

1. **«Աշխարհացոյց»-ի հրատարակությունները և դրանց թերությունները:** — *Մովսես Խորենացուն վերագրված «Աշխարհացոյց»-ը, որ կարող է օգտագործվել իբրև աղբյուր Հին Հայաստանի և Առաջավոր Ասիայի ներքին ու տնտեսական կյանքի ուսումնասիրության, թեև լույս է տեսել մի քանի հրատարակությամբ, սակայն այդ հրատարակությունները, ինչպես կտեսնենք, չեն կարող բավարար համարվել. ուստի և անհրաժեշտ է ձեռնարկել կարևոր այդ երկի քննական հրատարակության ներքև մատնանշված նոր հիմունքներով, որոնք անտես են առնված նաև հրատարակություններում:*

Որքան ինձ հայտնի է, «Աշխարհացոյց»-ն ունեցել է մինչև այժմ տասը հրատարակություն:

Առաջին տպագրությունը լույս է տեսել «Գիրք աշխարհաց և առասպելաբանութենանց, որ է Ադուէսագիրք» ժողովածուի մեջ «Յամսթէլօտամում», 1668 թվականին:

Երկրորդ տպագրությունը լույս է տեսել «Ադուէսագրքի» Մարսիլիայի արտատպության մեջ 1683 թվականին[1]:

Երրորդ հրատարակությունը եղել է դարձյալ «Ադուէսագրքի» նոր արտատպության մեջ 1698 թվականին: Ֆ. Պատկանյանը և Կ. Կրումբախերը երրորդ այս հրատարակության տեղը ննթադրում են էջմիածնում[2], որ անշուշտ, սխալ է: Իսկ Զարպհանալյանի ասելով՝ «Թևպետ տպագրության քաղաքը չնչանակվիր, սակայն հավանականաբար կամ ի Լիվոռնո եղած է[3] և կամ

---

[1] «Ադուէսագիրք»-ը, բուռ երևույթին, հրատարակված է Մարսիլիայում նաև 1776 թվին, տե՛ս H. Марр, Сборники притч Вардана, I, СПб., 1899, էջ 99:

[2] Տե՛ս К. Патканов, Из нового списка географии, приписываемой Моисею Хоренскому, ЖМНПр., СПб., 1883, июнь, 226, էջ 21, նաև K. Krumbacher, Geschichte der byzantinischen Litteratur, München, 1897, էջ 411:

[3] Հրատարակված է, իրոք, Լիվոռնոյում, տե՛ս H. Марр, Сборники притч Вардана, I, СПб., 1899, էջ 101:

ի Կոստանդնուպոլիս» (տե՛ս «Հայկական մատենագրություն», Վենետիկ, 1883, էջ 273):

Չորրորդ տպագրությունը լույս է տեսել Խորենացու պատմության հետ միասին 1736 թվականին Վիստոն եղբայրների ձեռով, որոնք «Աշխարհացոյց»-ի հայերեն բնագրին կից տվել են նաև նրա լատիներեն թարգմանությունը: Լոնդոնի այս հրատարակության մեջ արժեքավոր են առանձնապես Վիստոն եղբայրների ծանոթությունները և բնագրի մի քանի մութ հատվածների լուսաբանումները հույն աշխարհագիրների երկերի օգնությամբ: Չորրորդ այս հրատարակությունն անփոփոխ արտատպված է վերոհիշյալ Մարսկլիայի տպագրից:

Հինգերորդ հրատարակությունը տպագրված է նույնպես Խորենացու Պատմության հետ միասին 1752 թվականին Վենետիկում: Առաջաբանի մեջ ասված է՝ «կամեցաք ի միասին տպել և զհամառօտ Աշխարհացոյցն՝ արարեալ... Մովսիսի Խորենացւոյ... Եւ յաղագս չունելոյ մեր աստ զձեռագիր գաղափար, միայն ի Յամստելօդամ տպագրեցելոյն օրինակեցաք»:

Վեցերորդ տպագրության հրատարակիչը, ֆրանսիացի հայտնի հայագետ Ա. Սեն-Մարտենը, հայտնում է նույնպես, որ Մարսկլիայի և Լոնդոնի տպագրություններից հետո ուրիշ ձեռագիր չի ունեցել, ուստի հարկադրված է եղել արտատպել նույն այդ բնագիրը, ուղղելով ականևս վրիպակները: Սեն-Մարտենի այս հրատարակությունը հայերեն բնագրի հետ դույգ ունի ֆրանսերեն թարգմանություն, բազմաթիվ կարևոր ծանոթություններով (տե՛ս «Mémoires historiques et géographiques sur l'Arménie», II, Paris, 1819, էջ 301-394):

Վերոհիշյալ վեց տպագրությունները, ինչպես տեսնում ենք, արտատպված են մեկը մյուսից և ծագում են, անտարակույս, սեպագրից, որն ունեցել է արտագրողների կողմից ներմուծված հավելումներ և ընդմիջարկություններ:

Ի նկատի ունենալով հետագայ այս հրատարակությունների թերությունները Վենետիկի Մխիթարյաններն անհրաժեշտ էին համարել տալ «Աշխարհացոյց»-ի ուղղված բնագիրը մի քանի ձեռագրերի համեմատությամբ:

«Ի համեմատութենէ վեցից գրչագիր օրինակացս, — ասված է այս յոթերորդ հրատարակության առաջաբանում, — ընտրեալ զհարազատ ընթերցուածսն ուր բազումք միաբանէին և կամ ընտիրքն և հինք, զայս ի կարևորաց խնամով ի տորևս ամփո-

վեցանք» (էջ 8)։ Սակայն այդ վեց անթվական ձեռագրերի համարները, դժբախտաբար, չեն նշանակված և տարբեր ընթերցվածները դրված են ծանոթություններում անորոշ ձևով՝ «մի օրինակ, երկու օրինակ» և այլն։ «Աչխարհացոյց»-ի ճշտված բնագրի այս կարևոր հրատարակությունը լույս է տեսել Վենետիկում 1843 թվականին «Մովսես Խորենացւոյ մատենագրութիւնք» ընդհանուր վերնագրի տակ, որի մեջ բացի Խորենացու պատմությունից մտնում են նաև նրան վերագրված մյուս երկերը։

Ութերորդ տպագրությունը եղել է դարձյալ Վենետիկում 1865 թվականին։ Այս հրատարակությունն անփոփոխ արտատպված է «Մատենագրութիւնք» նախորդ տպագրից։

Վենետիկի 1843 թվականի տպագրությունը հիմք է ծառայել Ք. Պատկանյանի իններորդ հրատարակության (տե՛ս Армянская география VII века», СПб., 1877)։ Պատկանյանը մի քանի տեղ հաջող կերպով ուղղագրել է բնագիրը և դրել ներքևում կարևոր ծանոթագրություններ։ Ուշագրավ են և առանձնապես արժեքավոր Պատկանյանի բացատրական այն ծանոթագրությունները, որ զետեղված են «Աչխարհացոյց»-ի ռուսերեն նրա թարգմանության ներքևում։

«Աչխարհացոյց»-ի առաջին հինգ հրատարակությունները, նաև յոթներորդն ու ութերորդը, ունեն ձեռագրերի համաձայն հետևյալ վերնագիրը՝ «Աչխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ»։ Սակայն Սեն-Մարտենը և Պատկանյանը, ենթադրելով Խորենացուն հինգերորդ դարի մատենագիր և համարելով «Աչխարհացոյց»-ը հետագա դարերի աշխատություն, իրենց հրատարակությունների մեջ փոխել են այդ վերնագիրը և դրել նոր վերնագիր։ Սեն-Մարտենի հրատարակության մեջ «Աչխարհացոյց»-ի վերնագիրն է՝ «Աչխարհացոյց ստոյ Մովսիսի Խորենացւոյ», իսկ Պատկանյանի հրատարակության մեջ «Աչխարհացոյց է դարու»։ Շատ պարզ է, որ նրանք «Աչխարհացոյց»-ի ավանդական վերնագիրը ենթարկել են կամայական փոփոխության իրենց ենթադրական կռահումների համեմատ։ Նախնական բնագրի քմահաճ ու լռելյայն այս փոփոխությունը, որ կարող է մոլորեցնել ընթերցողին և առիթ ծառայել թյուրիմացությունների, անտեղի է, անչուշտ, և միանգամայն անհույսարելի։ Ներքև մենք կտեսնենք, որ հավանական են և ընդունելի ո՛չ թե փոփոխված այս վերնագրերը, այլ ձեռագրերի մեջ մնացած հենց հին վերնագիրը, որը հաստատվում է ըստ իս նոր

տվյալներով, որ մանրամասն քննության ենք առնելու սույն ուսումնասիրության մեջ:

«Աշխարհացոյց»-ի տասերորդ տպագրությունը լույս է տեսել Վենետիկում 1881 թվականին Ա. Սուքրյանի ձեռով: Հայերեն բնագրի հետ միասին Սուքրյանը տպել է նաև նրա ֆրանսերեն թարգմանությունը: Հրատարակությունը կատարված է բոլորովին նոր ձեռագրից, որ մեծ տարբերություններ ունի նախկին տպագրություններից: Նոր այս ձեռագրում «Աշխարհացոյց»-ի բնագիրը շատ ավելի ընդարձակ է, քան առաջին իններ հրատարակություններում, որ կազմում են նախնական բնագրի համառոտ խմբագրությունը: Ընդարձակ այս խմբագրությունն անհրաժեշտ էր, անշուշտ, համեմատել համառոտի հետ, ուղղել երկուսի վրիպակները և աղճատված ընթերցվածները, նաև քննել «Աշխարհացոյց»-ի այն սկզբնական բնագրի կամ բնագրերի հարցը, որոնցից ծագել են այժմյան խմբագրությունները: Այդ աշխատությունը, որ կարևոր նշանակություն ունի «Աշխարհացոյց»-ի բնագրի վերականգնման համար, մինչ այժմ դեռ չի կատարված: Իսկ առանց այդ աշխատության՝ «Աշխարհացոյց»-ի այժմյան հրատարակությունները, որ փոխադարձաբար իրար ուղղում և լրացնում են, չեն կարող, բնականաբար, համարվել բավարար և գոհացուցիչ:

2. **«Աշխարհացոյց»-ի նախնական բնագիրը, որից ծագել են վերոհիշյալ խմբագրությունները:** *– Պրոֆ. Յո. Մարկվարտն իր «Ēranšahr» աշխատության մեջ (Berlin, 1901, էջ 4) ենթադրում է, որ Սուքրյանի հրատարակությունն «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրն է, իսկ նախկին տպագրությունները, որ ծանոթ էին առաջ, նույն այդ բնագրի աղքատիկ ու վատ համառոտություններն են: Այս կարծիքի նա հանգել է, բաղդատելով իրար հետ ընդարձակ ու համառոտ խմբագրությունների Իրանի վերաբերյալ հատվածները: «Der Abschnitt über Iran würde allein zu dem Beweise genügen, – ասում է նա, – dass die vollständigere Rezension (A) den ursprünglichen Text des Werkchens enthält,... wogegen die abgekürzte Rezension (B) ein dürftiger und schlechter Auszug daraus ist (էջ 4)»: Յո. Մարկվարտի կարծիքն ըստ իս ճիշտ չէ[1]: Նա բոլորովին այլ եզրակացության կհանգեր,*

[1] Հետագա իր աշխատություններում Յո. Մարկվարտը հրաժարվել է վերոհիշյալ իր ենթադրությունից և հանգել է ճիշտ եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ի այժմյան խմբագրությունները համառոտված են իրարից անկախ նախ-

Եթե համեմատենք իրար հետ ո՛չ թե Իրանի վերաբերյալ համապատասխան հատվածները, որոնց մեջ նկատելի են հետագայում կատարված փոփոխություններ, այլ «Աչխարհացոյց»-ի այն մասերը, որոնք չենն ենթարկվել նման փոփոխության:

Ա. Սուքրյանի հրատարակած բնագրի համեմատությունը համառոտի հետ պարզ ցույց է տալիս, որ տպագրված երկու հրատարակություններն էլ համառոտված են «Աչխարհացոյց»-ի նախնական ընդարձակ բնագրերից, որոնք ծագում են հնագույն մայր բնագրից: Ավելի քան հավանական է, ուրեմն, որ «Աչխարհացոյց»-ի սկզբնական բնագիրը, որ մեր ձեռքը չի հասել, շատ ավելի ընդարձակ եղած պիտի լիներ, քան այժմյան տպագրությունները: Այդ եզրակացության հանգելու հիմք են ծառայել ինձ հետևյալ նկատառումները, որոնք թվում են ինձ ուշագրավ և կարևոր:

ա. Վենետիկում տպագրված «Աչխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը (համաձայն Յո. Մարկվարտի համառոտագրության անվանելու ենք V) ունի հատվածներ և լրացումներ, որոնք չեն կարող ընդմիջարկություններ լինել, քաղված են, անտարակույս, նախնական բնագրից և պակասում են Սուքրյանի հրատարակած բնագրում (համաձայն Մարկվարտի համառոտագրության անվանելու ենք S): Այդպիսի հավելումներ ու լրացումներ են, օրինակ, V-ի մեջ հետևյալ հատվածները.

1. V 587,15 — 588,5. *«Որպէս Պտղոմէոս Կղաւդէոս չափեալ աստղարիզօք... այլ ըստ յարարարձր լերանց տեսութեանց».*

2. V 594, 3-8. *«յորում [Իբևնիայում] գետք հզօրք վեչտասան և աղգք բազումք: Իսկ անուն արևելեան կղզւոյն [Բրիտանացւոցն] Ալուիոն, որ է մեծ քան զնա, և է տղրակաձև բազմաճիւղ. յորում գետք հզօրք քսանևմի, և յոյժ մեծածաւ անտառս. և չուրջ զկղզեաւն մանունք կղզիք քառասունևևերկու, և Թուլիս մեծ կղզի»*[1].

S 14 20-22. *«Գետք հզօրք վեչտասան եւ աղգք յոլով:*

նական ընդարձակ բնագրից, տե՛ս K. Mlaker, Zur Geschichte des Ps. Moses Chorenatsi, Armeniaca, II, 1927, էջ 122, համմտ Jo. Markwart, Изв. Рус. Арх. Инст. в Конст., 15 (1911), էջ 15, ծան. 2:

[1] Ընդարձակ S խմբագրությունը չունի V-ի ցրիվ տպված կարևոր հատվածները, որ քաղված են նախնական բնագրից:

Անուն մի[ւս]ոյ կղզւոյն Ալլիոն: Եւ ի մէջ երկուց կղզեացն փոքունք կղզիք չորս»:

3. V 594, 11-16. *«Եւ բաժանի Գադդիա յաչխարհս երիս. յորում լերինք մեծամեծք երկու և գետք հղօրք քսանևինն, և կղզիք չուրջ դիւրեւ — երկտասան: Ունի քաղաքս և ազգս բազումս և հղօրս, և զազգն Փռանգաց: Լինի ի նման գոմէշ սպիտակ և սպանող».*

S 14, 35–15, 2. *«Եւ են ի Գալիուս լերինք մեծամեծք եւ գետք քսանևինն. զոմի ի Յունաց ծովն արձակէ եւ դքսանեւ մի յՈվկիանոս. լինի ի նմա սպիտակ և սպանող գոմէշ: Եւ ունի, զհղօր ազգն Փռանկաց, որոց հասարակն ի Գալիուս եւ հասարակն ի Գերմանիա բնակեն»:*

4. V 594, 19-22. *«Ունի [Գերմանիա] ազգս եւթն, յորոց մին Գուղք: Ունի լերինս անուանիս երիս եւ գետս հղօրս մետասան, և կղզիս ինն, և անտառս մեծածառս յոյժ, և յերկաթակտարուքիւնս».*

S 15, 5-8. *«բայց ունի լերինս անուանիս երիս եւ գետս հղօրս մետասան. զերկուսն ի Դանոր արձակէ. ունի և անտառս չորս, յոյժ մեծածառք. ունի եւ զՍատրարէն դաչտն եւ զԻլիմացւոց անապատն. ունի եւ ձի վայրի»:*

V-ի մէջ նման հավելումները, որ քաղված են, մեծ մասամբ, նախնական բնագրից, խիստ չատ են: Սակայն մնջրերված այս բաղդատություններն իսկ ցույց են տալիս, որ V խմբագրությունը, ինչպես և S ընդարձակ խմբագրությունը, համառոտություններ են նախնական մեզ անհայտ բնագրի: Հավելվածների մի մասը կարող են, իհարկե, ներմուծված լինել V և S համառոտությունների մէջ խմբագրողների կամ ընդօրինակողների կողմից, սակայն այդպիսի ընդմիջարկությունները, ինձ թվում է, համեմատաբար չատ չեն, և հավելվածների մեծագույն մասը ծագում են, հավանորեն, «Աչխարհացոյց»-ի սկզբնական ընդարձակ բնագրից:

բ. «Աչխարհացոյց»-ի Ասիայի վերաբերյալ մասում S ընդարձակ խմբագրության մէջ պակասում են մի չարք երկրների մասին ամբողջ հատվածներ, մինչդեռ այդ հատվածները պահպանվել են V համառոտ խմբագրության մէջ: Հավանական է, որ V-ի խմբագրողն այդ հատվածներն ևս քաղել է սկզբնական ընդարձակ բնագրից:

S ընդարձակ խմբագրության մէջ չկան, ինչպես հայտնի է, V

Համառոտ խմբագրության հետևյալ գլուխները.

1) Զ. Ոնորիա — ԼՂ 601, 8-13. 2) Ժ. Պամփիլիա — ԼՂ 601, 27— 602, 3. 3) ԺԳ. Կապադովկիա երկրորդ — ԼՂ 602, 14-17. 4) Ի. Առաջին Հայք — ԼՂ 603, 19-22. 5) ԻԱ. Երրորդ Հայք — ԼՂ 603, 23-26. 6) ԻԲ. Պոնտոս Կապադովկիոյ — ԼՂ 603, 27-604, 2. 7) Իէ. Փայտակարան և Ուտի — ԼՂ 609, 20-610, 9. 8) ԼԳ. Անապատ Արաբիա — ԼՂ 612, 9-12. 9) ԼԶ. Արուաստան — ԼՂ 613, 7-9:

գ. Որ «Աչխարհացոյց»-ի սկզբնական բնագիրը չատ ավելի ընդարձակ է եղել, քան այժմյան նրա V և S համառոտությունները, այդ երևում է բացի վերոհիչյալ նկատառումներից նաև V և S խմբագրությունների հետևյալ ուշագրավ ակնարկներից: Սպանիայի վերաբերյալ գլխում V և S խմբագրությունների մեջ կան հետևյալ հատվածները, որոնք քաղված են որոչ փոփոխումներով նախնական ընդարձակ բնագրից.

V 593, 27-31. *«Եւ ոչ միայն զգաւառս և զքաղաքս, այլ և խորհեցաք միայն զրել զլերինս անուանիս և զգետս հզօրս և զքաղաքս հոյակապս, և եթէ այլ ինչ նչանաւոր իցէ, թողլով ի բաց զթիւս և զչափս և զմանրամասնարար պատմութիւնս».*

S 14, 13-15. *«Բայց զրեմք զգետս միայն անուանիս և զքաղաքս հոյակապս, զանց արարեալ զաննչանօքն»:*

Ուշագրավ է սակայն, որ հակառակ այս վկայությունների V խմբագրության մեջ Սպանիայի քաղաքներից և գետերից և ո՛չ մեկը չի հիչատակված, իսկ S խմբագրության մեջ հիչատակված չեն Սպանիայի քաղաքները: Հավանական է թվում ինձ, որ Սպանիայի քաղաքների և գետերի մասին նախնական ընդարձակ բնագրում կարող էին հաղորդված լինել որոչ տեղեկություններ, որ բաց են թողնված V և S համառոտ խմբագրություններում:

գ. Ներքև մենք կտեսնենք, որ Խորենացու պատմության կարևոր աղբյուրներից մեկը եղել է «Աչխարհացոյց»-ը և որ հենց ինքը Խորենացին համարվելու է, հավանորեն, «Աչխարհացոյց»-ի հեղինակը: Արդ՝ ինչպես հայտնի է, Խորենացին իր Պատմության մեջ ունի հետևյալ հատվածը, որի աղբյուրը, անտարակույս, «Աչխարհացոյց»-ն է՝

I, 30, Տփղիս, 1913, էջ 83-84. «զոր պատմեն՝ որք բազմաչրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք զրնակութիւնս մարդկան չափեցին, այլ և մասն ինչ գծով և զանրնակս յայրեցածէն մինչև գՓիմիւռոն».

Համմտ. V 589, 19-20[1]. «Բայց Պտղոմէոս, որոյ արք բազմաչրջութեամբ զամենայն չափեցին» (տե՛ս նաև S 7, 28-29).

V 587, 15-22[2]. «Որպէս Պտղոմէոս Կղաւդէոս չափեալ ասպարիզօք զամենայն բնակութիւն մարդկան երկայնութեամբ՝ յարևմտից սկիզբն արարեալ, որ է ծով անծանօթ Ովկիանոս ... և յայնութեան սկիզբն արարեալ յայրեալ զօտւոյն» (տե՛ս նաև «Այրեցած» V 585, 20 և S 5, 14):

Խորենացու վկայության մեջ ասված է, որ Պտղոմեոսի հրամանով չափել են «զրնակութիւն մարդկան» «յայրեցածէն մինչև գՓիմիւռոն», մինչդեռ V և S խմբագրությունների մեջ «Փիմիւռոն»-ի մասին չկա և ո՛չ մի հիշատակություն. Խորենացու հատվածում կարևոր այս չեղումն «Աշխարհացոյց»-ի այժմյան բնագրերից բացատրվում է, իմ կարծիքով, նրանով, որ Խորենացին օգտվել է «Աշխարհացոյց»-ի ո՛չ թե այժմյան, այլ նախնական ընդարձակ բնագրից, որի մեջ եղել է, հավանորեն, նաև «Փիմիւռոն»-ի վերաբերյալ համապատասխան մի վկայություն:

Մեր այս դիտողություններից երևում է, որ «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրն իր բովանդակությամբ եղել է ավելի ընդարձակ, քան անգամ այժմյան S ընդարձակ բնագիրը, որը՝ համառոտված լինելով նախնական ընդարձակից, ունի կարևոր կրճատումներ, որոնք հայտնի են մեզ այժմյան V խմբագրությունից: Հարևանցի իսկ քննությունը ցույց է տալիս, որ V համառոտ բնագրի այդ հավելվածները քաղված են, մեծ մասամբ, նախնական բնագրից և չեն կարող լինել հետագա ընդմիջարկություններ:

Նոր այս եղրակացություններից ինքնին արդեն հետևում է, որ միանգամայն անհնարին է վերականգնել «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագիրը նախկին իր լրիվ ծավալով: Սակայն V և S

[1] V խմբագրության տույն հատվածները մատնանշել է իրեն Խորենացու Պատմության ռուսերեն Գր. Խալաթյանցը, տե՛ս «Армянский эпос», Москва, 1896, I, էջ 191-192 և II, էջ 49:

[2] Տե՛ս ծան. 1:

խմբագրությունների մանրամասն բաղդատությամբ կարելի է, անշուշտ, տալ «Աչխարհացոյց»-ի համեմատական մի նոր ընդարձակ բնագիր, որն ավելի մոտ կլինի նախնական բնագրին, քան նրա այժմյան V և S համառոտությունները:

3. **«Աչխարհացոյց»-ի նախնական բնագիրը կազմված է եղել քաղվածորեն զանազան աղբյուրներից:** — *«Աչխարհացոյց»-ի նախնական բնագիրը ինչպես երևում է այժմյան V և S խմբագրությունների բովանդակության քննությունից, կազմված է նրել դանազան աղբյուրներից, որոնք, մեծ մասամբ, հիչատակված են V և S համառոտություններում: Հայերեն «Աչխարհացոյց»-ի հենց սկզբում հեղինակը պարզ ասում է, որ «յԱստուածաչունչ գիրս ոչ գտանի կատարեալ գիտութիւն աչխարհաց», ուստի հարկադրված է ինքը «ձեռնարկել յարտաքինսն» (տե՛ս S 5 2-4, հմմտ. նաև V 585, 3-7): V և S խմբագրություններում մի քանի անգամ որոչակի հիչատակված է նաև «Աչխարհացոյց»-ի հիմք ծառայած գլխավոր «արտաքին» աղբյուրը հետևյալ հատվածներում.*

> *ա.* V 587, 29– 588, 3. *«Յորոյ [Պտղոմեոսի] ինքնագիր բոլորակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Աղեքսանդրացւոյ համաոտարար երկրագրութեամբ, յորմէ մեր ծայրաբաղ արարեալ զրեցաք զմեծամեծսն և զնչանաւորսն միայն».*
>
> *S ընդարձակ խմբագրության մեջ այս հատվածը պակասում է:*
>
> *բ.* V 590, 26-28. *«Արդ սկսցուք ըստ Պապայ Աղեքսանդրացւոյ երկրագրութեանն որ ըստ ինքնագիր բոլորակին Կղաւդեայ Պտղոմէի տիեզերագրութեանցն չափուց».*
>
> *Նույնն ունի նաև S էջ 9, 19-21:*
>
> *գ.* V 593, 14-18. *«Եւ արդ որովհետև բովանդակեցաք զհասարակաբոսութիւնն, այսուհետև սկսցուք պատմել աչխարհ աչխարհ առանձինն ըստ զրից տեղագրութեանց Պապայ Աղեքսանդրացւոյ, սկիզբն արարեալ յարեմտեայ յՈվկիանոսէ ի ծայրէն Սպանիոյ աչխարհին».*
>
> *Հմմտ. նաև S 13, 30-14, 4:*

Պապոս Աղեքսանդրացին, որ վերոհիչյալ վկայություններում մատնանչված է իբրև «Աչխարհացոյց»-ի հիմնական աղբյուր, ապրել է, ինչպես վկայում է Suidas-ը, IV դարի վերջում՝

Թեոդոս Մեծի (379-395) ժամանակ և գրել է ընդհանուր աշխարհագրություն՝ Χωρογραφία οἰκουμενική: Հիմնվելով սակայն մի քանի նոր ցուցումների և վկայությունների վրա՝ հավանական են համարում այժմ, որ Պապոսի ժամանակը պետք է ենթադրել ո՛չ թե Թեոդոս Մեծի, այլ Դիոկղետիանոսի կայսրության ժամանակ (284-305)[1]:

Ա. Սեն-Մարտենի կարծիքով («Mémoires», II, էջ 304-305)՝ «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը, թեև հիշատակում է հաճախ Պտղոմեոսին, սակայն Պտղոմեոսի Աշխարհագրության հատվածները նա քաղել է ո՛չ թե անմիջապես սրա երկից, այլ Պապոսի Χωρογραφία-յից, որն «Աշխարհացոյց»-ի մեջ ևս անվանված է «երկրագրութիւն»: Նույնպես և Ֆ. Պատկանյանը, որ մանրամասն համեմատել է «Աշխարհացոյց»-ի համապատասխան հատվածները Պտղոմեոսի վկայությունների հետ, ընդունում է Սեն-Մարտենի այս կարծիքը և ենթադրում, որ հայ հեղինակը թե իր ներածության մեջ և թե մի քանի այլ մասերում («Աշխարհ Եւրոպայ», «Աշխարհ Լիբիայ», մասամբ և «Աշխարհք ընդհանուր Ասիոյ») համառոտել է Պապոսի երկրագրությունը, որն իր հերթին համառոտություն է Պտղոմեոսի Աշխարհագրության (տե՛ս «Армянская география», էջ 4-5): Իսկ որ Պապոսի երկրագրությունը համառոտված է եղել Պտղոմեոսի երկից՝ այդ պարզ երևում է հայ հեղինակի վերոհիշյալ վկայությունից, որի մեջ ասված է՝ «յորոյ [Պտղոմեոսի] ինքնագիր բոլորակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Աղեքսանդրացւոյ **համառօտաբար երկրագրութեամբ**» (V 587, 29-588, 2):

Ա. Սեն-Մարտենի և Ֆ. Պատկանյանի եղրակացությունները հիմնավոր լինելով՝ սխալ է, անշուշտ, Սուքրյանի հակառակ ենթադրությունը, որ իբրև թե «Աշխարհացոյց»-ը համառոտված է և ո՛չ միայն Պապոսի, այլ և Պտղոմեոսի աշխարհագրական երկերից (տե՛ս Սուքրյանի ֆրանսերեն թարգմանության առաջաբանը՝ էջ 3-5): Այս թարգմանության մեջ անընդունելի են նույնպես վակագծերի մեջ գրված «d'après Ptolémée» վերնագրերը («Géographie de Moïse Corène d'après Ptolémée», Venise, 1881, էջ 1, 16, 18, 23, 29 և 57), որոնք կարող են առիթ դառնալ որոշ թյուրիմացությունների:

«Աշխարհացոյց»-ի երկրորդ հիմնական աղբյուրն է Կոնա-

[1] Տե՛ս Christ, Geschichte der griechischen Litteratur II, էջ 906 (München, 1906):

տանդին Անտիոքացու «Քրիստոնէական տեղագրութիւն»-ը, որը հիշատակված է V և S խմբագրությունների հետևյալ հատվածներում՝

1. V 589, 16-18. «զոր և Կոստանդինոս Անտիոքացի ի Քրիստոնէական տեղագրութեան ասէ» և այլն.

Տե՛ս նույնը նաև S 7, 26-27.

2. S 8, 9-10. «Որում և Կոստանդին Անտիոքացի հանդիպի վիճել ընդ ընկերս իւր...»

V խմբագրության մեջ այս հատվածը պակասում է:

Կոստանդին Անտիոքացին, ինչպես պարզել է Ք. Պատկանյանը («Армянская географія», էջ X-XII), Կոսմաս Հնդկաչու հայտնի աշխարհագրագետն է, որն ապրել է վեցերորդ դարում: Ըստ Կ. Կրումբախերի՝ նրա «Քրիստոնէական տեղագրութիւն» աշխարհագրական երկը գրված է Հուստինիանոս I կայսեր ժամանակ՝ մոտավորապես 547-549 թվականներին (տե՛ս «Geschichte der byzant. Lit.», II հրատ., էջ 412):

Բացի աշխարհագրական այս երկերից «Աշխարհացոյց»-ի հեղինակն օգտվել է, ինչպես այդ նկատել են Սեն-Մարտենը, Պատկանյանը և Մարկվարտը, նաև ինչ որ անհայտ աղբյուրներից Ասիայի վերաբերյալ մասում, գլխավորապես այն հատվածներում, որոնք վերաբերվում են Սարմատիային, Վրաստանին, Ալբանիային և Պարսկաստանին: Այս հատվածներում հանդիպում են հաճախ ուշագրավ տեղեկություններ, որոնք արժեքավոր են ու խիստ կարևոր պատմական-աշխարհագրական տեսակետից: «Աշխարհացոյց»-ի Պարսկաստանի մասը հիմք է ծառայել, ինչպես հայտնի է, Մարկվարտի մեծահատոր «Ērānschahr» աշխատության:

Բացի այդ՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակին միջանկյալ կերպով իրրև աղբյուր են ծառայել «Արիմենոյ» վկայությունը, «Աղեքսանդրի գիրք»-ը (տե՛ս Սուբր. հրատ., էջ 45), Հովհաննես Մալալասի ժամանակագրությունը (տե՛ս Պատկանյանի «Армянская географія», էջ 29, ծան. 105, էջ 30, ծան. 113 և էջ 32, ծան. 124), Karnamak-ը (տե՛ս «Ērānschahr», էջ 5) և, հավանորեն, նաև Նոննոսին վերագրված առասպելաբանական մեկնությունները (տե՛ս S 17, 34 և 36, 18 և Nonnos, Marburg, 1903, էջ 39՝ «յաղագս Արիստոտելի և Եւրիպոսի» և էջ 10՝ «յաղագս կաստաղևան ըմպելոյն»):

«Արիւթիւնայ» վկայութիւնը (տե՛ս S, էջ 38, 16-24) քաղված է ըստ իս Եվսերիոս Կեսարացու ժամանակագրության հայերեն թարգմանությունից, իսկ «Աղեքսանդրի գիրք»-ը Կեղծ-Կալիսթենեսի հայտնի վեպի հայերեն թարգմանությունն է, որի սովորական վերնագիրն է՝ «Պատմութիւն մեծի աչխարհակալին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»:

«Աչխարհացոյց»-ի կարևորագույն մասերից մեկն է Հայաստանի աչխարհագրական նկարագրությունը: Պատկանյանի կարծիքով, Հայաստանի բաժանումը 15 աչխարհների և 189 գավառների հայ հեղինակը քաղել է, հավանորեն, պաչտոնական հին աղբյուրից («Армянская география», էջ 42, ծան. 150): «Թեև այդ 204 անունների մեծագույն մասը,— ասում է Պատկանյանը,— հանդիպում են զանազան հայ հեղինակների մոտ, սակայն ո՛չ բոլորը, ուստի և հեղինակը չէր կարող քաղել հայկական գրական աղբյուրներից Հայաստանի վարչական լիակատար այդ բաժանումն այն սահմաններում, որ նա ունեցել է Արչակունիների հարստության ծաղկման շրջանում»: Պատկանյանի այս ենթադրությունը դժվար է ընդունել, որովհետև հայ հեղինակը պարզ վկայում է, որ Հայաստանի վերարերյալ մասը կազմել է ինքը, աչխատելով «ի գիր և ի քարտէս»: «Արդ կամիմ,— ասում է նա,— զդոսա [«զփոքր աչխարհս Հնդևտասան»] մանրամասնաբար պատմել, թէ և սակաւ ինչ աչխատիցիմ ի գիր և ի քարտէս» (տե՛ս V, 607, 8-10): Շատ պարզ է, ուրեմն, որ Հայաստանի աչխարհագրական նկարագրությունը պատկանում է, անտարակույս, «Աչխարհացոյց»-ի հայ հեղինակին:

«Աչխարհացոյց»-ի այս մասի գիտական մեծ արժեքը չեչտել է Յո. Մարկվարտն իր «Südarmenien und die Tigrisquellen» (Wien, 1930, էջ 56*-57*) աչխատության մեջ, ենթադրելով որ «Աչխարհացոյց»-ի հեղինակն է Անանիա Շիրակացին՝ Յո. Մարկվարտն այս վերջինին համարում է իսկական գիտնական, որը Հայաստանի բաժանումից 300 տարի հետո ապչնցուցիչ ճչտությամբ տվել է Հայաստանի աչխարհագրությունը բաժանումից առաջ: Որքան մեծ կլիներ հանգուցյալ Յո. Մարկվարտի դարմանքը, եթե նա ծանոթ լիներ մեր այս ուսումնասիրության նոր տվյալների հետ, որոնցից հետևում է ըստ իս, որ «Աչխարհացոյց»-ի հայ հեղինակը կամ խմբագրողը, իրապես, ո՛չ թե Անանիա Շիրակացին է, այլ Մովսես Խորենացին, որին նա այնքան արհամարհում էր:

«Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը, ինչպես տեսնում ենք, քաղվածորեն օգտվել է բազմաթիվ աղբյուրներից, իսկ Հայաստանի մասը կազմել է ինքը լուրջ ու համոզիչ քննությամբ:

4. Յո. Սենտ-Կրուայի և Ա. Սեն-Մարտենի կարծիքով՝ **«Աշխարհացոյց»-ի հեղինակը Մովսես Խորենացին չէ:** *– «Աշխարհացոյց»-ի առաջին հինգ հրատարակությունները լույս էին տեսել, ինչպես վերև ասացինք, XVII և XVIII դարերում և համաձայն ավանդական վերնագրի համարվում էին, բնականաբար, Մովսես Խորենացու աշխատություն:*

Այս կարծիքը երկար ժամանակ միակ տիրապետողն էր: Սակայն XVIII դարի վերջերից սկսած գրականության մեջ կասկած ծագեց և հետզհետե մտավ մի նոր հայացք, որ այս աշխատությունն անկարելի է վերագրել հինգերորդ դարի մատենագիր Մովսես Խորենացուն:

1789 թվականին ֆրանսիացի գիտնական Baron J. de Sainte-Croix համառոտ մի նկատողություն էր տպել «Journal des Savants» հանդեսի ապրիլի համարում («Sur la Géographie de Moyse de Chorène», Paris, 1789, էջ 217), որի մեջ նա մատնանշել էր, որ «Աշխարհացոյց»-ի մեջ հիշատակված Բասրա քաղաքը հիմնված է Օմար խալիֆի հրամանով հիջրայի 14-րդ թվին, այսինքն՝ 635 թվականին Քրիստոսից հետո: «Աշխարհացոյց»-ի մեջ ասված է, որ «է Պասրա ամենալից վաճառօք, և ելք նաւաց ի Հնդկաց և յամենայն կողմանց արևելից» (տե՛ս V 612, 6, 8)[1]: «Հետևաբար,– ասում է Սենտ-Կրուան,– աշխարհագրական այս համառոտության հեղինակը ո՛չ մի դեպքում չի կարող լինել, ինչպես մինչև այժմ ընդունել են, Մովսես Խորենացին, որն ապրել է հինգերորդ դարում: Այս գրությունը կարող է կազմված լինել միայն VII դարի սկզբում, երբ Բասրան դտնվում էր ծաղկած վիճակում»:

Նույն այս խնդիրն ավելի մանրամասն քննել է Սեն-Մարտենը, որն «Աշխարհացոյց»-ի իր հրատարակության և ֆրանսերեն թարգմանության սկզբում դետեղել էր ընդարձակ մի առաջարան՝ «Mémoire sur l'époque de la composition de la Géographie, attribuée à Moyse de Khoren» (տե՛ս «Mémoires», II, էջ 301–317), որի մեջ «Աշխարհացոյց»-ի հորինման ժամանակը նա ենթադ-

[1] Բասրան աշխարհամասի իմաստով հիշատակված է նաև ընդարձակ խմբագրության մեջ՝ S 41, 5–7 «Աշխարհ Ասիո Ելիմայոցն է, որ է Խուժաստան, որում Յոյնք Շուշանիկ կոչեն, յաղագս Շօշան քաղաքի, և Տաճիկք՝ Բծրա»:

րում է IX դարի վերջերում կամ X դարի կեսում (մոտավորապես 950 թվականին):

Յույց տալու համար, որ այս երկը Խորենացունը չէ՝ Սեն-Մարտենը մատնացույց է արել հայ հեղինակի այն հավելումները, որոնք չէին կարող գրված լինել V դարում: Զանց առնելով այն պարզ ընդմիջարկությունները՝ ինչպես «Յօդու Ռուսաց», «Խրիմ», «Շադախ», որ Սեն-Մարտենի սխալաչատ բնագրում ներմուծված են արտագրողների կողմից՝ մենք մնջ ենք բերում միայն այն հավելումները, որոնք հանդիպում են նաև V և S հրատարակություններում:

1. Իբրև Գադղիայի բնակիչներ հիշատակված են «Աշխարհացոյց»-ի մնջ ֆրանկները, որոնք անվանված են «հզօր ազգ» (տե՛ս «Mémoires», II, էջ 336, V, էջ 594 և S, էջ 14–15): Սեն-Մարտենի կարծիքով՝ V դարում ֆրանկները դեռևս հզոր ազգ չէին և նրանց անունը դժվար թե հայտնի լիներ Խորենացուն: Բացի այդ՝ ֆրանկների բնակության տեղն այդ ժամանակ, գլխավորապես, Գերմանիայում էր և ո՛չ Գադղիայում:

2. «Աշխարհացոյց»-ի բոլոր հրատարակություններն էլ վկայում են, որ «Քեսոն ցամաք կղզին» պատկանել է քրիստոնյաներին (տե՛ս «Mémoires», II, էջ 338, V, էջ 596 և S, էջ 16): Հիմնվելով այս վկայության վրա՝ Սեն-Մարտենը հնարավոր է համարում եղրակացնել, որ «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն ապրել է X դարում, երբ ռուսներն ընդունել էին քրիստոնեություն:

Ա. Սեն-Մարտենի այս ենթադրությունը, անշուշտ, ճիշտ չէ: Քեսոնը, ինչպես հայտնի է, քրիստոնեական խոշոր կենտրոն էր արդեն IV և V դարերում, և հատկապես Քեսոն քաղաքում գտնված են նկեղեցիների ավերակներ, որոնցից հնագույնը կառուցված է եղել դեռևս IV դարում:

3. Խոսելով Սարմատիայի բնակչության մասին՝ «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը Կովկասյան լեռներում հիշում է, ի միջի այլոց, «Շրուանք» անունով մի ազգ (տե՛ս «Mémoires», II, էջ 356. «Շրունաք», V էջ 604, «Շրունաք», S էջ 27, «Շրւան ազգ»): Այդ՝ Սեն-Մարտենի ասելով, արևելյան բոլոր մատենագիրները և մասնավորապես, Մասուդին՝ վկայում են, որ Schirwan անունն առաջին անգամ գործ էածվել Խոսրով Նուշիրվանի թագավորության ժամանակ՝ VI դարի կեսում: «Շրուանք» բառը չէր կարող, ուրեմն, հայտնի լինել Մովսես Խորենացուն, որ V դարի մատենագիր է:

4. «Աչխարհացոյց»-ի հայ հեղինակը վկայում է, որ Ապառաժ Արաբիան «ունի փոքր աչխարհս երկու՝ զՏաճկաստան և զՓառնիտիս ուր զՏունն Աբրահամու բաջաղեն լինել» (տե՛ս V, էջ 611, համմտ. «Mémoires», II, էջ 368): Սեն-Մարտենը կարծում է, որ այս վկայության մեջ «տունն Աբրահամու» պետք է լինի Մեքքան և որ այս ավանդությունը կարող էր հայտնի լինել Հայաստանում մահմեդականության տարածվելուց հետո՝ արաբական աչխարհակալության ժամանակ: Որ Սեն-Մարտենի այս ենթադրությունը հավանական է, այդ երևում է S հրատարակության ընդարձակ բնագրից, որի մեջ վերոհիչյալ վկայությունը մեջ է բերված հետևյալ խմբագրությամբ՝ «եւ զՓառանիտէ՝ յորում Փառան աւան, զոր կարծեմ ի Տաճկաց Մաքա կոչել» (S էջ 37):

5. Ա. Սեն-Մարտենի կարծիքով՝ «Աչխարհացոյց»-ի մեջ հիշատակված Կողա աչխարհը (տե՛ս «Mémoires», II, էջ 368 և V էջ 612 «Ակողա») արաբական Koufah-ն է, որն ասորիներն անվանում էին Akoula: Արդ՝ հայտնի է, որ Koufah քաղաքը հիմնված էր հիջրայի 17 թվականին, այսինքն՝ 638 թվականին Ք. հ.: Պարզ է, ուրեմն, որ այդ քաղաքի անունը չէր կարող հայտնի լինել V դարի մատենագիր Մովսես Խորենացուն: Սեն-Մարտենի այս դիտողությունը ևս հաստատվում է «Աչխարհացոյց»-ի S խմբագրության հետևյալ վկայությամբ՝ «եւ միւսն ասի Քուֆայիր. որք յիրեարս եկեալ անցանեն յելից Ակաղաղի բնակեալ բանակի Տաճկաց» (S էջ 38): Համմտ. նաև «Պատմութիւն Ղևոնդեայ» (Ս. Պետերբուրգ, 1887), իէ, էջ 126՝ «և զամենայն զօրս զոր միանգամ առաքէր Մրուան ընդդէմ նոցա՝ խորտակեալ ջախջախէին, և ցմեծ բանակատեղն Տաճկաց Ակողա զամենասեան հնազանդէին»:

Ա. Սեն-Մարտենի թե՛ առանձին դիտողությունները և թե՛ ընդհանուր եզրակացությունն ամենախիստ քննադատության ենթարկվեցին Վենետիկի Մխիթարյանների կողմից, որոնք չարունակում էին պնդել, որ «Աչխարհացոյց»-ը Խորենացու աչխատություն է և գրված է V դարում: Հակաճառելով Սեն-Մարտենին՝ Ղ. Ինճիճյանը փորձեց իր «Հնախօսութեան» մեջ (Վենետիկ, 1836, III, էջ 304–314) ապացուցել, որ Սեն-Մարտենի մատնանչած օտարոտի խորթություննները, մեծ մասամբ, Խորենացու գրածը չեն և չկան «Աչխարհացոյց»-ի ընտիր ձեռագրերում, իսկ մի քանիսը սխալ են մեկնված Սեն-Մարտենի առա-

ջարանում: Այս վեճն ունեցավ այն դրական արդյունքը, որ Վենետիկի Մխիթարյանները, ի նկատի ունենալով Սեն-Մարտենի հրատարակած բնագրի ընդմիջարկություններն ու ազճատումները, վեց ձեռագրի բաղդատությամբ տվին «Աչխարհացոյց»-ի քննական մի նոր հրատարակություն, որը Խորենացուն վերագրված մյուս երկերի հետ միասին տպագրված է Վենետիկում 1843 թվականին: Քննական այս հրատարակությունից երևաց սակայն, որ Սեն-Մարտենի մատենանչած աչխարհագրական մի քանի անունները հանդիպում են համառոտ այս խմբագրության բոլոր ձեռագրերում: Նրանք գտնվում են, ինչպես վերև տեսանք, նաև Սուքրյանի հրատարակած «Աչխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ: Շատ պարզ է, ուրեմն, որ Սեն-Մարտենի հիմնական եղրակացությունը՝ թե «Աչխարհացոյց»-ը գրված պետք է լինի ո՛չ թե V դարում, այլ չատ ավելի ուչ՝ միանգամայն հավանական է ու իրավացի:

Ջնայած Սենտ-Կրուայի և Սեն-Մարտենի վերոհիչյալ ցուցմունքներին, Ա. Գուտչմիդը Խորենացու մասին գրած առաջին իր հոդվածում («Kleine Schriften», III, էջ 278, ծան. 1), նաև աչխարհագիր Հ. Կիպերտը հատուկ իր դեկուցման մեջ («Ueber die Zeit der Abfassung des dem Moses von Chorni zugeschriebenen geogr. Kompendiums», տե՛ս «Monatsberichte der Königl. Preuss. Akademie der Wissenschaften zu Berlin», 1873, էջ 593 և հտ.), ենթադրում էին «Աչխարհացոյց»-ը դարձյալ Խորենացու աչխատություն է գրված V դարում: Կիպերտի կարծիքով, «Աչխարհացոյց»-ը կարելի է վերագրել Խորենացուն, բացառությամբ որոչ հատվածների և մի քանի նկամուտ աննչան հավելվածների:

5. **Ք. Պատկանյանը Խորենացուն վերագրված «Աչխարհացոյց»-ը համարում է Անանիա Շիրակացու աչխատություն:** – *Ինչպես վերև տեսանք, 1877 թվականին «Աչխարհացոյց»-ը նորից հրատարակել էր Ք. Պատկանյանը ռուսերեն թարգմանության հետ միասին և մանրամասն ծանոթություններով ու ընդարձակ առաջարանով:*

Ք. Պատկանյանը, ընդունելով Սեն-Մարտենի հիմնական եղրակացությունը, որ «Աչխարհացոյց»-ը չի կարող լինել Խորենացու աչխատություն, համաձայն չի սակայն նրա այն կարծիքին, որ իրը թե «Աչխարհացոյց»-ը գրված է IX դարի վերջում կամ X դարի կեսում: Իրրև նոր ապացույց, որ «Աչխարհացոյց»-ը Խորենացու հեղինակություն չէ՝ Պատկանյանը բե-

րում է նաև իր նոր դիտողությունները VI դարի մատենագիր Կոստանդին-Կոսմաս Հնդկաչուի մասին, որից քաղվածքներ է արել «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը: Պատկանյանի կարծիքով, «Աշխարհացոյց»-ը լեզվի կողմից ևս չունի և ո՛չ մի նմանություն Խորենացուն:

Համարելով «Աշխարհացոյց»-ը ավելի նոր ժամանակի գործ, Պատկանյանն ինքն է գալիս այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ի գրության ժամանակը դրվելու է VII դարի առաջին կեսում, և կարծում է, որ հենց այս դարաշրջանում բնական են ու հասկանալի այն կասկած հարուցանող փաստերը, որոնք հիշված են Սեն-Մարտենի մոտ և մի առ մի քննության են ենթարկված նաև ռուսերեն իր առաջարանում:

Միաժամանակ նա ենթադրում է, որ VII դարում գրված այս «Աշխարհացոյց»-ը, որի թարգմանման ու հորինման համար անհրաժեշտ էր ո՛չ միայն իմանալ հունարեն, այլև ուննալ որոշ պատրաստություն, հատկապես, մաթեմատիկական դիտություններում, հավանական է վերագրել Անանիա Շիրակացուն, որն ապրել է հենց VII դարում, և որը հունարեն մատենագիր է ու հայտնի մաթեմատիկոս:

«Աշխարհացոյց»-ի ժամանակի ու հեղինակի մասին այս ենթադրությունը, ինչպես տեսանում ենք, սոսկ մի կռահում է, որը ո՛չ միայն հիմնավորված չէ բավարար ու գոհացուցիչ ապացույցներով, այլև հակասում է Սենտ-Կրուայի և Սեն-Մարտենի վերոհիշյալ դիտողություններին, մասնավորապես, «Պասրա» և «Ակոզա» քաղաքների մասին, որոնք հիշատակված են «Աշխարհացոյց»-ի և՛ համառոտ, և՛ ընդարձակ խմբագրություններում: Ք. Պատկանյանի առարկությունը, որ Բասրան և Կուֆան կարող էին իրրև խոշոր առևտրական կենտրոններ գոյություն ունեցած լինել արաբներից առաջ և կարող էին, հետևապես, հիշատակված լինել «Աշխարհացոյց»-ում VII դարի կեսերին, բռնազրոսիկ է, անշուշտ, և ավելի քան անհավանական: Ինձ թվում է, չատ ճիշտ է նկատել Սենտ-Կրուան, որ «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ տեղեկությունը Բասրայի մասին չէր կարող գրված լինել VIII դարից կամ VII դարի վերջերից առաջ:

«Աշխարհացոյց»-ի գրվելու ժամանակը ենթադրում է VII դարում նաև Գուտշմիդը: Խորենացու մասին «Բրիտանական հանրագիտական բառարանում» դնտեղված իր երկրորդ հոդվածում նա փորձել է ցույց տալ, որ Խորենացու Պատմությունը

գրված է 634–642 թվականների մեջ («Kleine Schriften», III. էջ 332–338): Ենթադրելով Խորենացուն. VII դարի հեղինակ. նա հիմնվում է, ի միջի այլոց, նաև «Աշխարհացոյց»-ի վրա, որը համարում է միևնույն հեղինակի աշխատություն, գրված նույն VII դարում:

Ք. Պատկանյանից և Ա. Գուտշմիդից հետո «Աշխարհացոյց»-ի մասին, ինչպես հայտնի է, կարծիք են հայտնել անցողակի կամ մանրամասն ուսումնասիրությունների մեջ նաև ուրիշ գիտնականներ: Բոլոր այս կարծիքների մեջ միակ տիրապետողն է սակայն Ք. Պատկանյանի ենթադրությունը, ուստի և «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարվել է սովորաբար Անանիա Շիրակացին (տե՛ս **Հ. Տաշյան**, *Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895;* **Гр. Халатьянц**, *Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896, էջ 18; Jo. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 56*, 14, 39, 58 և այլն):*

Ներքևում մենք կտեսնենք, որ այս կարծիքը, որը հետզհետե ընդհանրացել է ու համարվել ընդունելի, ո՛չ միայն անհիմն է, այլ և բացարձակապես սխալ:

6. **«Աշխարհացոյց»-ի և Խորենացու Պատմության կարևոր նմանությունները, որ ցույց են տրված Գր. Խալաթյանցի և Յո. Մարկվարտի աշխատություններում:** *– «Աշխարհացոյց»-ի և Խորենացու Պատմության մեջ որոշ ակնբախ նմանություններ նկատած են եղել, ինչպես հայտնի է, «Աշխարհացոյց»-ի հրատարակիչները: Սակայն այս խնդիրը հանգամանորեն քննության են առել Գր. Խալաթյանցը և Յո. Մարկվարտը: Սրանք մատնացույց են արել նաև նոր կարևոր հատվածներ, որոնք նույն երկու գրվածքում կամ կատարելապես նման են և կամ համեմատաբար նման են ու համապատասխան իրենց բովանդակությամբ:*

Կարևոր այդ հատվածները մենք բերում, դնելով միմյանց հետևից Խորենացու Պատմության և «Աշխարհացոյց»-ի բնագրերը:

> *ա. Խորենացի I, 14, էջ 46–47 (Տփղիս, 1913)՝*
> *«Բայց հրաման տայ [Արամ] բնակչաց աշխարհին՝ ուսանել դպրոցս և դլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պաւտին*

Արմենիան, որ Թարգմանի Առաջին Հայք: Եւ ղպաստակերտն, զոր չիննաց յանուն իւր Մչակ կողմնապետն Արամայ փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աչխարհին՝ Մաժաք, որպես ոչ կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն չիննալ՝ անուաննցաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցրուն իւր սահմանսն, զբազում անրնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուաննցան Հայք, այլ և Զորրորդ: Այս է առաջին և ճչմարիտ պատճառն վասն անուաննլոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Զորրորդ Հայք»:

V, էջ 603, 19-22.

«Առաջին Հայք յելից կալով առաջին կապադովկիոյ առ երի Երկրորդ Հայոց, և սահմանի յելից Եփրատայ. և լեառն ունի զԱրզևոս, և գետ երևսուն՝ զԱլիս և այլ մանունս»:

Դեռևս Ք. Պատկանյանը ռուսերեն Թարգմանության իր ծանոթություններում ուշադրություն էր դարձրել (տե՛ս էջ 33-35, ծան. 132 և էջ 43-44, ծան. 152), որ «Առաջին, Երկրորդ, Երրորդ և Զորրորդ Հայք» կոչումները հանդիպում են թե՛ Խորենացու Պատմության և թե՛ «Աչխարհացոյց»-ի մեջ և որ «Առաջին Հայք» կոչվում է նրանց մեջ կապադովկիայի այն մասը, որի մեջ գտնվում էին Արզևոս լեռը և Կեսարիա քաղաքը: Այս նմանությունը Ք. Պատկանյանն ուշադրության արժանի էր համարել, որովհետև հռոմեական և հունական աղբյուրները կապադովկիայի այդ չրջանը չեն անվանել Առաջին Հայք կամ Հայք:

Ք. Պատկանյանի մատնանչած այս փաստից կարևոր հետևություններ արել են Գուտչմիդը և Խալաթյանցը: Գուտչմիդը, որը Խորենացու Պատմությունը և «Աչխարհացոյց»-ը համարում էր միևնույն հեղինակի և VII դարի գործ, հիմնվել է ի միջի այլոց նաև այս նմանության վրա (տե՛ս «Kleine Schriften», III, էջ 335, 336): Իսկ Գր. Խալաթյանցը, որը համաձայն չէր Գուտչմիդի այս կարծիքին, ենթադրում է, որ Անանիա Շիրակացու «Աչխարհացոյց»-ը աղբյուր է ծառայել Խորենացու Պատմության (տե՛ս "Армянский эпос", էջ 18 և 133):

ը. Խոր. I, 30, էջ 83-84 (Տփղիս, 1913)՝
«Բայց գնալասացնալ կինն Անոյչ բնակեցուցանէ [Տիգրան] որդւովք իւրովք յանդորրութեան սպառուածի

վլաճին մնծի լերինն: (Զորմէ լնալ ասեն յահագին իմն չարժմանէ. զոր պատմեն՝ որք բազմաչրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք զրնակութիւնս մարդկան չափեցին, այլ և մասն ինչ գծով և զանրնակս յայրեցածէն մինչև ցՖիմիւռոն»).

V, էջ 587, 15–16.

«Որպէս Պտղոմէոս Կղաւդէոս չափեալ ասպարիզօք զամենայն բնակութիւն մարդկան» և այլն.

V, էջ 589, 19–20.

«Բայց Պտղոմէոս, որոյ արք բազմաչրջութեամբ զամենայն չափեցին».

Համմտ. նաև S, էջ 7, 28–29. «Այրեցած», տե՛ս V, էջ 585, 20 և S, էջ 5, 14:

«Աշխարհացոյց»-ի այս հատվածները, որ գրեթե բառացի կերպով պատահում են և Խորենացու մոտ, մատնացույց է արել Գ-ր. Խալաթյանցն իր "Армянский эпос", ուսումնասիրության մէջ (տե՛ս I, էջ 191–192 և II, էջ 49–50):

զ. Խորենացի II, 12, էջ 123 (Տփղիս 1913)՝
«Բայց Արտաչիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զրոյր արևմուտս: Քանզի մեծ յոյզ խռովութենանց եղեալ ի Հռոմ՝ ոչ որ ընդդիմանայ նմա հզօրապէս: Այլ ոչ գիտեմ ասել յո՛րպիսի ազդմանէ, ահագին իմն աղմուկ լեալ չվոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ Արտաչէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն, թագաւորեալ ամս քսան և հինգ».

Խորենացի II, 13, էջ 124.

«և յառաջ քան յԱսիայ հասանելն՝ յԱտտիկէ դղեկին քարոզեցաւ».

S, էջ 17, 29–34.

«Եւթիւ մեծ կղզի, եւ Ատալանդ փոքրիկ կղզեակ ի մէջն. զոր ասեն գտեալ զօրացն Արտաչեսի Հայոց արքայի, զի մի՛ նաւք ոտնկացն յամիցեն, մինչև պաշարեալն էր զղզեակն Զարմանալի. զի ջուրք յանպատճառս այսր անդր հոսէին. եւ ասեն անդ մեռեալ Արտաչեսի. և Արիստոտէլ անդ եղև խորասոյզ. Եւռոպոս է անուն նորա»:

Այս հատվածները, ըստ երևույթին, արձագանք են ժողովրդական խառնաչփոթ ու աղոտ հիշողությունների և վերաբերվում են, հավանորեն, պատմական այն մեծ անցքերին, որ տեղի էին ունեցել 88-86 թվականներին (Ք. ա.) Միհրդատ Պոնտացու և Սուլլայի ժամանակ (համմտ. Th. Reinach, Mithridate Eupator, էջ 154 և հտ.): Ուշագրավ է սակայն, որ Խորենացու Պատմության, ինչպես և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ, Միհրդատ Պոնտացու արևմտյան մեծ արշավանքը վերագրված է Հայոց Արտաշես թագավորին:

Այդ նմանությունն առաջին անգամ մատնացույց է արել Ա. Սուքրյանը (տե՛ս «Géographie de Moïse de Corène», էջ VI և 22): Յո. Մարկվարտն իր «Ērānšahr» աշխատության մեջ (Berlin, 1901, էջ 4-6), թե՛ այս և թե՛ իր նկատած մյուս նմանությունները բացատրում է, ինչպես և Սուքրյանը, Խորենացու Պատմության և «Աշխարհացոյց»-ի հեղինակների նույնությամբ: Նա ենթադրում է սակայն, որ այդ հեղինակն ապրել է ո՛չ թե V դարում, այլ ամենականուխը VII դարի վերջում: Հետագա իր ուսումնասիրություններում Մարկվարտը հարել էր, ինչպես վերը տեսանք, Պատկանյանի տեսակետին և «Աշխարհացոյց»-ը վերագրել հայտնապես Անանիա Շիրակացուն:

Վերոհիշյալ հատվածները քննության են առնված նաև Գր. Խալաթյանցի "Армянские Аршакиды", աշխատության մեջ (Москва, 1903, էջ 46, 48, 50), որն «Աշխարհացոյց»-ի նման վկայությունները համարում է աղբյուր Խորենացու Պատմության:

> *գ. Խորենացի II, 6, էջ 109 (Տփղիս, 1913)՝*
> *«Եւ ինքն [Վաղարշակ] արձակեալ զարևմտեայ բազմութիւնն՝ իջանէ ի տեղիս խոստաւէտս մերձ ի սահմանն Շարայի. զոր հինքն Անփայտ և վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածի Վղընդուր Բուլղարայ Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցաւ Վանանդ. և անուանք չինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչև ցայժմ».*

S, էջ 25, 21-25.

«Որ ըստ հիւսիսոյ են ազգ Թուրքաց եւ Բուլղարաց. ըստ անուանց զետոցդ կոչեցեալ՝ Կուփի Բուլղար, Դուչի Բուլկար, Ողխոնտոր Բլկար նկն, Ջղար Բուլկար. օտար այժմ

ի Պտղոմէականէն են այս անուանք: Եւ ի Զիական լեառնէն վասնեաւ որդին Խուդրադրայ...»:

Համմտ. նաև S, էջ 17, 4–7 և Խորենացի II, 9, էջ 119:

Որ Խորենացու հատվածի «Վղընդուր Բուլղար»-ը համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության «Ողխոնտոր Բլկար»-ին՝ այդ նկատել է առաջին անգամ դարձյալ Սուբրյանը (տե՛ս «Géographie de Moïse de Corène», էջ VI): Պատկանյանն ուշադրություն է դարձրել, որ «Աշխարհացոյց»-ի մեջ ասված է՝ «Ողխոնտոր Բլկար նկն», ուստի և կարծում է, որ բուլղարների գաղթի մասին Խորենացու վկայությունը հայտնի է եղել «Աշխարհացոյց»-ի հեղինակին (տե՛ս "Из нового списка Географии, приписываемой Моисею Хоренскому", ЖМНПр, 1883, 226, էջ 24): Նույն այս խնդիրն ավելի մանրամասն քննված է Խալաթյանցի և Մարկվարտի աշխատություններում (տե՛ս "Армянские Аршакиды", էջ 29–33 և «Streifzüge», էջ 57 և այլն.):

Ե. Խորենացի II, 52, էջ 182 (Տփղիս, 1913)՝

«Զի յետ այնչափ արուեստանց՝ օգնական եղեօր Սաթինական յաշխարհն Ալանաց հանդերձ զօրու երթայ [Սմբատ] հրամանաւ Արտաշիսի: Քանզի մնաւ հայր Սաթինական, և այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանաց, և հալածէր զեղբայրն Սաթինական. զոր վաննալ հերձէ Սմբատ, և տիրացուցանէ ի վերայ ազգին զեղբայրն Սաթինական, և զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի սաստիկ յԱրտաշատ: Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զրնիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն ուստի զերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի».

Խորենացի II, 58, էջ 187 (Տփղիս, 1913)՝

«Ի սորա [Արտաշեսի] աւուրս և Առաւելեանքդ, յազգէ Ալանաց, մերձաւորք Սաթինական, զհետ նորա ևկեալք՝ կարգեցան յազգ և ի նախարարութիւն աշխարհիս Հայոց, որպէս հարազատք թագուհւոյն մնծի. և ի ժամանակս Խոսրովու հօրն Տրդատայ խնամեցեալ ընդ ումեմն քաջի Բասղացն ևկեալ հատուածի».

Համմտ. նաև Խորենացի II, 53, էջ 183.

S. էջ 26, 24–31.

«Եւ ԵՒն ի Սարմատիոյ համարևալ, այսպէս, սկսևալ ի մտից յևս կոյս. նախ ազգ Աղուանաց, Աչտիզոր որ ըստ Հարաւոյ. համարևակ նոցա Խերուրք եւ Քուբևտք եւ Արգուևլ եւ Մարդոյլ, եւ Թակոյր. եւ Ալանք ԵՒն յետ Դիւրորին, յԱրդող աշխարհի Կաւկասին լերանցն, ուստի Հոսի գետն Արմնայ, եւ գնալով ընդ Հիւսիսի՝ ընդ դաչտ անբաւս, խառնի յԱթլ. եւ ի նոյն լերինն՝ յետ Արդողևան ազգին բնակևն ԵՒն».

Ք. Պատկանյանն առաջինն է նկատել, որ «Աշխարհացոյց»-ի «Արդող աշխարհ»-ը, որը գտնվում էր Կովկասյան լեռներում, հիշեցնում է Խորենացու վերոհիշյալ վկայությունն Արտազ գավառի մասին (տե՛ս "Из нового списка Географии", էջ 30, ծան. 1): Յո. Մարկվարտի կարծիքով, Վասպուրականի Արտազ գավառի անունը չատ հին է և հիշատակված է, հավանորեն, Ստրաբոնի մոտ (Ἀρξατα կամ Ἀρζατα): Իսկ Խորենացու բացատրությունը նրա սովորական ստուգաբանական մեկնություններից մեկն է, որ հիմնված է պարզապես «Աշխարհացոյց»-ի Արդող և հայկական Արտազ անունների նմանության վրա (տե՛ս «Ērānšchahr», էջ 4, «Streifzüge», էջ 171 և «Genealogie der Bagratiden», Caucasica, 1930, Fasc. 6, 2 Teil, էջ 24–30): Մարկվարտը ենթադրում է նույնպես, որ Խորենացին՝ հիմնվելով դարձյալ «Աշխարհացոյց»-ի «Արգուևլ» անվան վրա, «Առուեղևան»-ներին կամ «Առաւեղևան»-ներին համարել է «յազգէ ալանաց» և «մերձաւորք Սաթինկան» (տե՛ս «Ērānšchahr», էջ 5 և «Streifzüge», էջ 171):

ղ. Խորենացի II, 65, էջ 200 (Տփղիս, 1913)՝

«Վասն դի ի սորա [Վաղարչի] աւուրս միաբանևալ ամբոխութիւն հիւսիսականաց, դԽազրաց ասեմ և զԲասլաց, արտաքս քան զդուռն Ճորայ ելանևն, առաջնորդ և թագաւոր ունևլով ինքևանց զվնասևպ ոմն Սուրհապ. որք անցևալ վտարին այսր զԿուր գետով».

Հմմտ. նաև Խորենացի II, 58, էջ 187 և II, 85, էջ 230.

S. 26, 14–19.

«որոյ [Աթլ գետի] մէջն է կղզի, յոր մտևալ ամրանալ Բասլաց ազգն, ի հզօր ազգէն Խազրաց և Բուչխաց, ճարակևլոց յևլից և ի մտից, ևկևլոց անդ ի ձմերոց. եւ կոչևն Սև կղզի. զի յաղագս բազմութիևանն ազգին Բասլաց՝ մարդոյ և անասնոյ անդ մտևլոցն՝ սև Երևի. զօր Պտղոմևոս

Գոաւ կղզի կոչէ».

V. 605, 6-8.

«և թագաւորն հիւսիսոյ է Խաբանն՝ որ է տէր Խաղրաց, և դշխոյն թագուհի կին Խաբանայ ի Բասլաց ազգէն»:

Խազարների և բասիլների հիշատակութիւնը Վաղարշի ու Տրդատ Մեծի ժամանակ Խալաթեանցն իրավացի կերպով համարում է ակներև մի ժամանակավրիպում (анахронизм), որը ցոյց է տալիս՝ որ Խորենացու Պատմութիւնը գրված պիտի լինի ավելի ուշ ժամանակում (տե՛ս "Армянские Аршакиды", էջ 33-34, 110 և 149): Յո. Մարկվարտը, որ իր «Streifzüge», աշխատութեան մէջ մանրամասն ուսումնասիրել է խազարներին ու բասիլներին վերաբերվող մատենագրական հին տեղեկութիւնները, ենթադրում է, որ «Կեղծ Մովսեսին», որը Պատմութեան և «Աշխարհացոյց»-ի հեղինակն է, բասիլները, ինչպես և մյուս հիւսիսային ցեղերը, կարող էին հայտնի լինել, գլխավորապես, VI դարի աղբյուրներից (տե՛ս «Streifzüge», էջ 57, 58 և այլն, նաև «Ērānšahr», էջ 4):

Է. Խորենացի II, 81, էջ 223 (Տփղիս, 1913)՝

«Սքանչելի է և աշխարհն [ճննաց] առատութեամբ ամենայն պտղոց, և զեղեցիկ բուսովք զարդարեալ, քրմաւէտ և սիրամարգաչատ և բազմամետաքս, անբաւութիւն, յամուրաց և հրեշից, և որ էչայծնմունազ անուանն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս՝ դիմասեան և զպոր, և այլք այսպիսիք».

S. 46, 6-11՝

«Եւ լինի անդ [ի ճննաց աշխարհին] դարիճննիկ և կասիմոն, ի Կասիա լեռնէ, եւ սկիւթիկոն՝ որ է ատրազոյն ինքնեղ. և ունի հրէշ, եւ մուշկ, եւ չիրամարգ չատ, եւ այլ հաւս պիտանիս, եւ քրքումս անբաւս. մինչ դի հնծնալ ոք ի սպիտակ զերդակ ձիով, սպիտակ բաղէիս երթնալ յորս՝ զառնալ զեղնացեալ ամենևին: Լինի ապրիշում չատ եւ աղնիւ քան զամենայն երկիր»:

Համմ. նաև V. 616, 12-18:

Նմանութիւնն այս հատվածների մատնացույց է արել Պատկանյանն «Աշխարհացոյց»-ի հայերեն իր հրատարակութեյան ծանոթութիւններից մեկում (էջ 25, ծան. 2): Գր. Խալաթեանցը, քննութեյան առնելով այս նմանութիւնը, ենթադրում է դարձյալ,

որ Խորենացին ճննաստանի մասին իր տեղեկությունները քաղել է գլխավորապես, «Աչխարհացոյց»-ից (տե՛ս "Армянские Аршакиды", I, էջ 152 և II, էջ 54):

Վերև մեջբերված նմանությունները, եթե անգամ նրանցից որևէ մեկը հավանություն չգտնի, այնուամենայնիվ իրենց ամբողջությամբ ցույց են տալիս, որ Խորենացու Պատմության աչխարհագրական վերոհիշյալ վկայություններն անհրաժեշտ կապ ունեն «Աչխարհացոյց»-ի հետ: Այս կապը, ինչպես տեսնում ենք, ընդունում են բոլոր բանասերները: Սակայն նրանք տալիս են այդ կապի մասին տարբեր բացատրություններ:

ա. Վենետիկի Մխիթարյանները՝ Ինճիճյան, Սուքրյան և ուրիշները՝ այդ համերաչխությունը բնական ու հասկանալի են գտնում, որովհետև Պատմությունը և «Աչխարհացոյց»-ը նրանք վերագրում են V դարի մատենագիր Մովսես Խորենացուն:

բ. Պատկանյանը, թեև մատնանշում է այդ կապը, սակայն խուսափում է բացատրություններ տալուց: Որովհետև Խորենացու V դարի հեղինակ լինելը համարվում էր նրա ժամանակ անկասկածելի մի փաստ, ուստի և նա չէր կարող պնդել, որ Խորենացու Պատմության համապատասխան վկայությունները քաղված են «Աչխարհացոյց»-ից, որը նա վերագրում էր Անանիա Շիրակացուն:

գ. Գուտչմիդը բացատրում է Խորենացու նմանությունները նրանով, որ Պատմությունը և «Աչխարհացոյց»-ը միևնույն հեղինակի՝ Կղզ-Մովսեսի աչխատություններն են՝ գրված VII դարի կեսերին:

դ. Նույն կարծիքին էր Մարկվարտն իր հնագույն Ērānšahr ուսումնասիրության մեջ՝ այն տարբերությամբ միայն, որ «Աչխարհացոյց»-ի գրության ժամանակը նա ենթադրում է ամենականուխը VII դարի վերջերում:

ե. Հիշյալ կարծիքներից տարբեր է Խալաթյանցի տեսակետը: Այս բանասերը, որ մանրամասն քննել ու մատնացույց է արել Խորենացու Պատմության աղբյուրները, ենթադրում է, որ Պատմության հեղինակն օգտվել է Անանիա Շիրակացու «Աչխարհացոյց»-ից, որը գրված է եղել Պատմությունից առաջ:

Ինչպես հայտնի է, այս կարծիքներից և ո՛չ մեկը վերջնական

կերպով ընդունված չէ և «Աշխարհացոյց»-ի խնդիրը ո՛չ միայն մնացել է մինչ այժմ առկախ, այլև հանգամանքների անհիմն կերպով ընդհանրացել է Պատկանյանի վերոհիշյալ սխալ կարծիքը, որ իբր թե այդ երկը պատկանում է Անանիա Շիրակացուն: Ներկա մենք նոր ու ուշագրավ փաստերով ցույց կտանք, որ Խորենացու Պատմությունը, ինչպես և «Աշխարհացոյց»-ը, միևնույն հեղինակի՝ «Մովսես Բերքոդ»-ի աշխատություններն են, որն ապրել է IX դարում: «Աշխարհացոյց»-ի խնդրի լուծումը, ինչպես կտեսնենք, հնարավորություն է տալիս վերջնականապես պարզելու նաև Խորենացու չարաբաստիկ առեղծվածը, որի մասին անթիվ քննադատություններ են լույս տեսել ու թեր և դեմ կարծիքներ արծարծվել դանադան լեզուներով:

7. **«Աշխարհացոյց»-ի և Խորենացու Պատմության աննմանությունները, որոնք ցույց են տրված Հ. Հյուբշմանի մոտ, խիստ բռնաձիգ են ու միանգամայն անհավանական:** — «Աշխարհացոյց»-ի և Խորենացու Պատմության համերաշխության խնդիրը քննության է առել նաև Հյուբշմանը «Հին Հայոց տեղվո անունները» իր աշխատության մեջ (տե՛ս Թարգմանություն Հ<այր> Բ. Պլեղիկճյանի, էջ 262–267, «Հավելված ը. Մ. Խորենացի և հայկական աշխարհագրությունը»): Այս խնդիրը քննելիս՝ Հյուբշմանն ի նկատի է ունեցել «Աշխարհացոյց»-ի այն մասը, որ վերաբերվում է Հայաստանի աշխարհագրության:

> «Եթե ապացուցվի,— ասում է Հյուբշմանը,— որ այս մասը Պատմության հեղինակն է, այն ատեն մնացյալ մասն ալ՝ որ յուր մեջը կը բովանդակե Սուքրյանի և Մարկվարտի (Երանչ., էջ 4) դիտած աղերսներն Պատմության հետ, նո՛ւյն հեղինակն պիտի ըլլա, և այս պարագային երկուքն ալ՝ Պատմությունն ու Աշխարհագրությունն՝ ընծայվելու են կա՛մ Սուքրյանի հետ՝ ե դարուն (որ անկարելի է), կամ Մարկվարտի հետ՝ է-ը դարուն: Իսկ եթե ցուցվի, որ Հայաստանի աշխարհագրության վրա խոսող հատվածը՝ Պատմության հեղինակն տարբեր հեղինակ մ'ունի, այն ժամանակ ստիպված ենք ընդունելու որ կա՛մ Պատմության հեղինակն օտար աղգաց աշխարհագրությունը գրած է և հետևագույն անձ մը նույն աշխարհագրության մեջ՝ Հայաստանի հատվածն ավելցուցած մուծած է, որ հավանական չէ, կա՛մ այս երկու երկերն՝ որչափ ալ ինչ-ինչ

կետերու մէջ իրարու հետ աղերս ալ ունենան – այս կետերը հասարակաց աղբիւրն մը բխած պիտի ըլլան – տարբեր հեղինակներն են, այնպես որ Պատմութեան հորինման ժամանակը կրնա վճռվիլ՝ առանց աչխարհագրութիւնը նկատողութեան առնելու» (տե՛ս էջ 263-264):

Համեմատելով այս տեսակետից վերոհիչյալ երկերի աչխարհագրական տեղեկութիւնները՝ Հյուրչմանը նրանց մէջ մատնացույց է անում որոչ անճշտութիւններ և եզրակացութիւն է հանում, որ Խորենացուն վերագրված Պատմութիւնն «աչխարհագրական տեսութիւններով ու անուններով» ավելի Փավստոսին է մոտ, քան «Աչխարհացոյց»-ին: Այս եզրակացութիւնը, իմ կարծիքով, ճիչտ չէ: Ներքև մենք կտեսնենք, որ հարգելի ուսուցչապետի դիտողութիւնները կամ ոչինչ չեն ապացուցանում և կամ ակներև թյուրիմացութիւններ են:

Մատնանչված անճշտութիւնները, որ կետ առ կետ մէջ ենք բերում, հետևյալներն են:

> *1) Հյուրչմանի կարծիքով՝ Խորենացու Պատմութիւնը, Փավստոսի նման, Բարձր Հայք, Տուրուբերան, Կորճայք, Պարսկահայք, Փայտակարան, Ուտի և Այրարատ նահանգները չգիտե որպես նահանգ, սակայն, «Աչխարհացոյց»-ի նման, գիտե որպես նահանգ՝ Ջորրորդ Հայքը և Վասպուրականը, որոնք գոյութիւն չունեին տակավին Փավստոսի ժամանակ:*

Այս դիտողութիւնն ըստ իս ավելի քան վիճելի է: Եթե Խորենացու մոտ վերոհիչյալ երկրները չեն հիչատակված որպես նահանգ՝ այդ բացատրվում է, հավանորեն, նրանով, որ Պատմութեան մէջ կարիք չի եղել հիչելու Հայաստանի բոլոր չրջանները: Շատ պարզ է, որ պատահական նման համեմատութիւններից հնարավոր չէ եզրակացնել, որ իրր թե վերոհիչյալ չրջանները (իրրև այդպիսի) հայտնի չեն եղել Խորենացուն:

> *2) Իրրև ուչադրութեան արժանի անճշտութիւններ՝ Հյուրչմանի մոտ նչանակված են աչխարհագրական անունների և անգամ նրանց ուղղագրութեան հետևյալ տարբերութիւնները՝ ա. Խոր., III, 15, էջ 274 – Անձիտ, իսկ V, 607, 21 –Հանձիթ, S. 30, 14 – Անձիթ. բ. Խոր., II, 8 – Կողբ,*

Ձոր, Մոր, իսկ V. 610, 11 – Կոդրովոր, Ձորովոր, Մորովոր. գ. Խոր., I, 12, էջ 39 – «Ոան Արագածոյ», իսկ V. 610, 24 – Արագածոան և S. 34, 9 – Արագածոան. դ. Խոր., III, 23, էջ 283 և III, 37, էջ 305 – Կոգայովիտ, իսկ V. 610, 25 և S. 32, 24. 29 – Կոգովիտ:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս մի երկու աննմանությունները առանձին կարևորություն չունեն, որովհետև ավելի աչքի ընկնող ու ավելի չատ տարբերություններ ստացվում են «Աշխարհացոյց»-ի համառոտ ու ընդարձակ խմբագրությունների համեմատությունից, որոնք, ինչպես տեսանք, ծագում են նախնական միևնույն ընագրից:

3) Հյուրչմանն աննմանություններ է համարում նաև այն, որ Դևգիք և Գորևք գավառների անունները պակասում են Փավստոսի և Խորենացու մոտ, բայց հիշատակված են Գևորգիոս Կիպրացու մոտ (տե՛ս Georgii Cyprii, Descriptio orbis Romani, Lipsiae, 1890, էջ 49 – Κλίμα Διγησινῆς և κλίμα Γαρινῆς) ու նաև «Աշխարհացոյց»-ում (V. 607, 21 Դևգիք, Դորևք և S. 30, 15. 17 Դևգիկ, Գաւրէգ): Սրան հակառակ՝ հին Անգեղտուն գավառը, որը ծանոթ էր Փավստոսից սկսած մինչև Խորենացու Պատմությունը (տե՛ս I, 23, էջ 71 և II, 8, էջ 114) անհետացած էր թե՛ Գևորգիոս Կիպրացու և թե՛ «Աշխարհացոյց»-ի ժամանակ:

Սխալ են, անչուշտ, և անընդունելի նաև այս դիտողությունները: Ինչպես հայտնի է, Խորենացու մոտ նույնպես չեն հիշված Մընձուր, Արչամունիք, Մարդաղի, Ծաղկոտն և ուրիշ գավառներ: Կարելի՞ է միթե դրանից եզրակացնել, որ այդ գավառները հայտնի չէին Խորենացուն: Իսկ Անգեղտունը, որը մնջ է բերված Խորենացու քով իբրև «Տուրք Անգեղեայ» տոհմի անուն (II, 8, էջ 114)՝ չէր կարող, բնականաբար հիշված լինել «Աշխարհացոյց»-ի մեջ, որովհետև VI դարում, ինչպես վկայում է հենց ինքը՝ Հյուրչմանը (տե՛ս «Հին Հայոց տեղւոյ անունները», էջ 157), այդ գավառը ձուլված է եղել ուրիշ գավառի հետ:

4) Հյուրչմանի ասելով՝ Խորենացին Մեծ Ծովք գավառի անունը (= Sophanene) դիտե իբրև Ծովք, մինչդեռ այդ գավառը, որ 591 թվականին տրվել էր Բյուզանդիային և միացվել Աղձնիքի հետ, անվանվել է այնուհետև Նփրկերտ

քաղաքի անունով Նփրկկրտ գավառ: Բացի այդ՝ Խորենացին, ըստ երևույթին, տեղեկություն չունի Մեծ Մոփքն Աղձնիքին միացվելու մասին, որովհետև Աղձնիք ասելով (II, 8, էջ 116) նա հասկանում է՝ «զԱրձն և որ չուրջ զնովաւ, և զլեառն Տաւրոս, որ և Սիմ, և զկղեսուրն ամենայն»՝ այսինքն՝ Արձն երկիրը, Սիմ լեռը և Բաղեշի կիրճը, առանց Մոփք գավառի: Հակառակ Խորենացուն՝ «Աշխարհացոյց»-ը գիտե Նփրկկրտ գավառը և Արձն ու Նփրկկրտը համարում է Աղձնիքի գավառներ (տե՛ս V. 607, 25-26 և S. 30, 26-27):

Հյուրշմանի այս դիտողությունը ևս ըստ իս թյուրիմացություն է: Խորենացին իր Պատմությունը գրելիս՝ օգտվել է հնագույն աղբյուրներից և միանգամայն իրավացի կերպով հին Sophanene գավառն անվանում է Մոփք և համարում Ջորրորդ Հայքի մաս (II, 8, էջ 115): Որ նա չի իմացել այդ գավառի հետագա անունը և միացումն Աղձնիքի հետ՝ այդ, անշուշտ, ավելի քան վիճելի մի եզրակացություն է, որ չի բղխում բնավ նրա վերոհիշյալ վկայություններից:

> *5) «Փավստոսի մոտ,— ասում է Հյուրշմանը,— Տմորիք երկիրը զանազանվում է Կորդուքից և Կորդիքից (Կողրիք, Կորդրիք), բայց «Աշխարհացոյց»-ում այևս սրանց հետ չի հիշվում. Խորենացին հիշում է դեռ, բայց նույնացնում է մի տեղ Տմորիքը Կորդիքի հետ և Տմորիքը համարում է սխալմամբ Կորդիքի հնագույն անունը»:*

Հյուրշմանի այս դիտողությունը ո՛չ միայն ոչինչ չի ապացուցում, այլև, ընդհակառակը, ցույց է տալիս, որ Խորենացին, ինչպես և «Աշխարհացոյց»-ը, Տմորիքը չեն համարել առանձին գավառ: Խորենացին Տմորիքի մասին ունի հետևյալ վկայությունը՝ «Հրամանաւ Արտաշիսի բնակէ [Սմբատ] ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱլկի նստուցեալ զրազմութիւն գերւոյն» (II, 53, էջ 183): Հասկանալի է, ուրեմն, թե ինչու «Աշխարհացոյց»-ի մեջ Տմորիքի փոխարեն հիշատակված է միայն Կորդիքը (տե՛ս V. 608, 12-13 — «զԿորդրիս Վերին, զԿորդրիս Միջին, զԿորդրիս Ներքին», S. 32, 10-11 — «զԿորդիս Վերի, զԿորդիս Միջի, զԿորդիս Ներքի»): Տմորիքի այս նույնացման մասին Կորդիքի հետ տե՛ս J. Marquart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 352-354:

6) «Աչխարհացոյց»-ն,— ասում է Հյուրչմանը,— Աչոցը գավառը, որը գտնվում էր Գուգարքի և Այրարատի սահմանի վրա, գնում է Այրարատում, իսկ Խորենացին նույն գավառը գնում է Գուգարքում Ջորոյ և Տաչիրի միջև»:

Այս աննմանությունը կարող էր, անշուշտ, որոշ նշանակություն ունենալ, եթե նա ճիշտ լիներ: Խորենացու վկայության ուշադիր ընթերցումը համոզում է սակայն, որ այս աննմանությունն արդյունք է Խորենացու համապատասխան վկայության սխալ լուսաբանման: Խորենացու մոտ «Աչոցայ տէրութիւն»-ը հիշատակված է հետևյալ հատվածում (II, 8, էջ 113–114)՝

«Իսկ Գուչարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք. և զկէս մասինն Ջաւախայ, զԿողբ, զԾոր, զՋոր, մինչև ցամուրն Հնարակերտ: Բայց զտէրութիւնն Աչոցայ՝ և սնպհականութիւնն Տաչրայ կարգէ Վաղարշակ ի գաւակացն Գուչարայ Հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմնծ և զհզօր աղգն, և նահապետութեանն անուն կարդայ բդեաշխն Գուգարացւոց, որ էր լեալ ի գաւակէ Միհրդատայ, Դարևհի նախարարի»:

Այս հատվածից դժվար ու անհավանական է, անշուշտ, հետևցնել, որ Խորենացու մոտ Աչոցը հիշատակված է Գուգարաց գավառների մեջ: Պարզ է ուրեմն, որ Հյուրչմանի վերոհիշյալ դիտողությունը դարձյալ ակներև մի թյուրիմացություն է և ոչինչ չի ապացուցում:

7) «Ըստ Խորենացու,— ասում է Հյուրչմանը,— Արտաչատը գտնվում էր այն տեղում, ուր Երասխ ու Մնծամոր իրար հետ կը խառնվէին, իսկ ըստ «Աչխարհացոյց»-ի — «ուր յառաջին ժամանակն խառնուրդք Մնծամաւրի, իսկ այժմն փոխեալ ղղնացան Մնծամաւրայ՝ խառնի ի մտից կուսէ»:

Խորենացու և «Աչխարհացոյց»-ի կարևոր այս հատվածները, որոնք Արտաչատի հին տեղը ցույց են տալիս Արաքսի ու Մնծամոր, իսկ նոր տեղը՝ Արաքսի ու Ազատ գետի՝ միացման կետերի մոտ[1], մեջ ենք բերում առանց կրճատումների.

---

[1] Արտաչատի տեղը որոշելու համար այս վկայությունները կարող են, անշուշտ, կրվան ծառայել պետական արչավախմբերին:

Խորենացի, II, 49, էջ 176 (Տփղիս, 1913)՝

«Երթևալ Արտաչիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մնծամօր, և հաճևալ ընդ բլուրն՝ չինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաչատ».

S. 34, 16-22՝

«Եւ ապա յելից նորա [Մնծամօրի] գետն Ազատ, և արդարև ազատ. որոյ ակունքն բխեն ի Գնօղ լճառնէ, ի Սախուրակ տեղոյ, որ իջանելով ընդ Դուին, արբուցանէ զամենայն Ոստանն Հայոց, եւ անցեալ ընդ հարաւ անկանի յԵրասխ. յորոց ի մէջ չինեալ է Արտաչատ քաղաք, ուր յառաջին ժամանակս խառնուրդք Մնծամօրի, իսկ այժմ փոխեալ զգնացսն Մնծամօրայ՝ խառնի ի մտից կուսէ»:

Հյուրչմանի կարծիքով՝ այս վկայությունները վերագրվելու են տարբեր հեղինակների: Իսկ իրապես՝ վերոհիշյալ վկայությունները ո՛չ միայն իրար հակասող աննմանություններ չեն, այլև միմյանց հետ կատարելապես համերաշխ են: Նույն վկայությունները, թվում է ինձ, կարող են անգամ բացատրվել հեղինակի նույնությամբ, որովհետև «Աշխարհացոյց»-ի հեղինակին ևս հայտնի է Արտաչատի հին տեղը, որ մատնանշված է Պատմության մեջ:

Հյուրչմանը, վերոհիշյալ իր դիտողությունների վրա հիմնվելով, եկել է հետևյալ եզրակացության՝

> *«Թեև Խորենացվո Պատմության և «Աշխարհացոյց»-ի խոսքերուն մեջ տեսնված այս տարբերություններն և ո՛չ մին ինքյան այնչափ զորավոր է, որուն վրա յենցնալ վճռվի Աշխարհագրության աղերսն՝ նկատմամբ Պատմության, բայց այս տարբերությանց ամրողջությունը կարծեմ թե — եթե նույն իսկ այս տարբերութիւններն քանի մը հատը մեկնությամբ մ'ալ վերցվի — կ'ապացուցանեն որ աշխարհագրության Հայաստանով զբաղող մասն և ըստ այսմ ամրողջ գրությունը պատմության հեղինակն չէ» (տե՛ս Թարգմ. Պլեղիկճյանի, էջ 266):*

Հակառակ այս եզրակացության՝ մեր քննությունից պարզ երևում է սակայն, որ մեկնությամբ վերանում են ո՛չ միայն մի քանիսը վերոհիշյալ տարբերություններից, այլև բոլոր տարբերություններն առանց բացառության: Պարզ է ուրեմն, որ այդ եզրակացությունը կարող ենք կատարականապես մերժել:

8. **Ընդհանրացված այն կարծիքը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն Անանիա Շիրակացին է՝ ճիշտ չէ։** *– Վերը մենք տեսանք, որ բանասերներից չատերը, հիմնվելով Ք. Պատկանյանի եղրակացության վրա, «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարում են Անանիա Շիրակացուն։ Սակայն այդ եղրակացությունը դուրկ է, ինչպես ասացինք, փաստական հիմնավորումից։*

Որ այս կարծիքը բոլորովին անընդունելի է, այդ երևում է ըստ իս «Աշխարհացոյց»-ի և Անանիա Շիրակացու երկերի բովանդակության համեմատությունից։ Շիրակացու աշխարհագրական որոշ տերմինները, ինչպես և նրա աշխարհագրական հատուկ հայացքները, այնքան տարբեր են «Աշխարհացոյց»-ի համապատասխան տերմիններից ու հայացքներից, որ ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ «Աշխարհացոյց»-ը Շիրակացուն վերագրելը միանգամայն անհաջող մի կռահում է։

Թողնելով մի քանի մանր աննմանությունները, որոնք կարող են վիճելի համարվել, մենք ներ բերում միայն այն խոշոր տարբերությունները, որոնք անհերքելի կերպով ապացուցում են նոր այս եղրակացությունը։

1) «Աշխարհացոյց»-ի ռուսերեն թարգմանության ձեռագրություններից մեկում (տե՛ս էջ 9, ծան. 17) հենց ինքը Ք. Պատկանյանը շատ ճիշտ նկատել է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը «միջօրեական դիծ» է անվանում ո՛չ միայն միջօրեականը, այլև հասարակածը։ Ք. Պատկանյանը սակայն անուշադիր է թողել, որ Անանիա Շիրակացին, որին նա վերագրում է «Աշխարհացոյց»-ը, գիտե «հասարակած» և «հասարակօրեայ» տերմինները (տե՛ս «Անանիա Շիրակունւոյ մնացորդք բանից», հրատ. Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1877, էջ 57, 59, 68), որոնք ծանոթ չեն «Աշխարհացոյց»-ի հեղինակին։

2) Անանիա Շիրակացին ճշտիվ տարբերում է իրարից «ծով» և «ծովակ» աշխարհագրական զաղափարները և «ծովակ» է անվանում «Աս փալդէս»-ը՝ «որ մօտ յաշխարհն Հրէաստանի է»՝ և Հայաստանում «Բզնունեաց ծով»-ը, իսկ «Աշխարհացոյց»-ի մեջ թե՛ ծովերը և թե՛ այդ ծովակները կոչվում են, մեծ մասամբ, անխտիր ծով։ Կարևոր այդ տարբերությունը պարզ երևում է Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հետևյալ վկայություններից.

Անանիա Շիրակացի, Մնացորդք բանից, «յազագս ծովու», էջ 41՝

«Սակայն ոչ է պարտ զծովական ծովս կոչել. ոչ զԱփալղէս ծովակ որ մօտ յաչխարհն Հրէաստանի է, և ոչ զՍերբինիդիս ծովակ որ է ընդ եգիպտոս և ընդ Պաղեստինէ ի միջի, և գայ հասանէ յաչխարհն Արարացւոց: Եւ ոչ մեր աշխարհիս ծովակս զոր կոչեմք Բղնունեաց, և ոչ այլք որ յարևելս են որ կոչին նոյնանմանք, զի սոքա զոր ասացաք՝ ծովակք են և ոչ ծովք».

S. 36, 25 և 31, 23՝

«եւ զԱսփաղտիտէս որ է Մեռեալ ծովն».

«եւ ծովն Բղնունեաց յերկայնն հարիւր մղոն է, և լայնն վաթսուն».

V. 608, 1-2՝

«Ունի [Տուրուբերան] և ծով զԲղնունեացն»:

3) Անանիա Շիրակացին իրարից տարբեր է համարում թյուրիմացաբար «Հիւրկանիա» և «Ասպիս» (=ըստ Երևույթին՝ Κασπίς) ծովերը, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակը գիտե, որ այդ երկու անունն էլ վերաբերվում են Կասպից ծովին:

Շիրակացի, Մնացորդք բանից, «յաղագս ծովու», էջ 41՝

«Թէպէտ և ասեն ոմանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, և զնորուն ընկերէ որ կոչի Ասպիս, եթէ զատեալ մեկնեալ են ի բուն ծովէն, այլ որ վոյթ յանձին կալան զաշխարհ ամենայն ի գիր առնուլ, որպէս յառաջն ասացի, ասեն թէ ծակք են ի միմեանս ծովքն, և երթան կցին ի միմեանս ներքոյ երկրի».

S. 8, 4-6 և S. 11, 29՝

«եւ զերից ծովուցն՝ զՀնդկացն եւ զՅունացն եւ զԿասբից որ է Վրկանի, բնակութիւն մարդկան ասէ լինել չուրջ զնոքօք».

«Երրորդ ծով՝ Վրկանին է՝ որ կոչի Կասբից».

Համմտ. նաև V. 589, 26-30 և 592, 11:

Ուշագրավ է, այս հատվածներում նաև այն, որ Կասպից ծովն անվանված է Շիրակացու մոտ «Հիւրկանիա», իսկ «Աշխարհացոյց»-ի մեջ՝ «Վրկան»:

4) Շիրակացին և «Աշխարհացոյց»-ի հեղինակը միանգամայն տարբեր հասկացողություններ ունեն երկրի ձևի մասին: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, համաձայն Պտղոմեոսի

տեսութեան՝ երկիրը համարում է գնդաձև, իսկ Անանիա Շիրակացին, որ կանգնած է քրիստոնեական մեկնիչների տեսակետի վրա՝ ենթադրում է երկիրը «չորեքկուսի»: Տարաձայն լինելով այս հիմնական խնդրում՝ շատ բնական է, որոնք նրանք տարբեր կերպ են բացատրում «ընդ-ղէմերկրի» ու հակոտնյանների աչխարհագրական հարցը:

Անանիա Շիրակացի, Մնացորդք բանից, «Յաղագս երկրի», էջ 37՝

«Եւ քանզի երկիր չորեքկուսի ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ թոյլ տայ սմա երկին իւրով երագութեամբն ի ներքին կիսագունտն խոնարհել».

Նույնը, «Յաղագս արեգական», էջ 60՝

«եւ արեգակն միայն միով անձամբ յորժամ երեւիցի գամենայն սահմանս աչխարհի լուսաւորէ».

Նույնը, «Յաղագս երկրի», էջ 39՝

«Ասեն արտաքինքն զրնակութիւն կենդանեաց աստի և անտի, եթէ գոն ի ներքոյ երկրի մարդիկ, և այլ կենդանիք որք ընդդիմոտունք են մեզ. որպէս ճանճք զխնձորով պատեալ, նոյնպէս մարդիկ զերկրաւ. և յամառեալ պնդին՝ ասելով. Եթէ ոչ էին ընդդիմոտունք, ո՞ւմ արդեօք արեգակն տայր լոյս զկէս օրն, յորժամ ստուերաւն զմեզ դիչերուցանէ: Զի անօգուտ արեգական զընթացս իւր ծախել անհնար է: Այս են անմտութիւնք մեծ, և աւելի թուին ինձ ի սոցանէ ասացեալքն. Թողում ասել դյանդիմանութիւնն որ յաստուածային գրոց».

S. 6, 18-21՝

«Յորս նախ առնելի է զտիեզերաց ստորագրութիւն նմանութեամբ գնդականաց պատկերին. եւ ապա ձեւել ըստ նորին նմանութեանն, երկրորդ գնդաւն աստեղականաւ, զմեծ կէս չրջանակին, ունելով հարիւր ութսուն բնակութիւն մարդկան».

S. 7, 19-23՝

«Եւ աստի անտի նորա Ովկիանոս ընդմիջելով գնա ի բնակութենէս եւ ի հարաւային կիսագնդէն, զոր ընդդէմ-երկիր կոչեցին բնակեցելոյ երկրիս մեծութեամբ ոչ ըստ սմա՝ այլ ըստ հիւսիսային կիսագնդին, զոր կոչեն գօսացեալ. քանզի նմա ասեն վոքրագոյն գծագրիլ, վասն անձուկ գոլոյ բոլորակին».

Համմտ. նաև V. 587, 6-11 և 589, 7-13:

5) «Աշխարհացոյց»-ի հեղինակը և Անանիա Շիրակացին տարբեր կարծիքի են նաև արեգակի մեծության մասին, ինչպես այդ պարզ երևում է հետևյալ հատվածներից.

Շիրակացի. Մնացորդք բանից, «յաղագս արեգական», էջ 60՝

«Եւ յայսմ ամենայնէ յայտ է թէ մեծ է արեգակն, ըստ աստուածային գրոց վկայութեան. որում և արտաքնոցն բարեաց ի ճահ պատահեն վկայութիւնք: Քանզի ասեն թէ մեծութիւն լուսնոյ է ըստ չափոյ երկրի. և արեգականն առաւել է քան զնա՝ ըստ աստուածային գրոց».

S. 7, 15-18՝

«Վասն որոյ ասացին զարեգակն չատ փոքր քան զերկիր. քանզի վաթսուն և վեց մասն ասեն զարեգակն, զերկուս նահանգս ասելով գրովանդակութիւն արեգական, այսինքն՝ օթևանս քառասուն».

V. 589, 1-5՝

«Վասն որոյ ասացին զարեգակն չատ փոքրագոյն քան զերկիրս դայս լինել. քանզի վեցներորդ վաթսներորդ լինել չափ արեգական, զերկուս նահանգսն ասելով բովանդակութիւն արեգական, այսինքն է օթևանս քառասուն»:

Զանց ննք առնում մնջ բերել նաև ուրիշ վկայություններ, որոնք միմյանց աննման են ո՛չ միայն աշխարհագրական անուններով կամ տերմիններով, այլև աշխարհագրական հիմնական բացատրություններով: Ինձ թվում է՝ վերը բերված համեմատությունները էլ բավական են համոզելու, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակի մասին տիրող ու ընդհանրացած կարծիքը պարզ մի թյուրիմացություն է և որ այդ երկը չի կարող համարվել Անանիա Շիրակացու աշխատություն:

9. **Աշխարհագրական տեղեկությունների նմանությունները, որ նկատվում են Խորենացու Պատմության և «Աշխարհացոյց»-ի մեջ:** — *Վերև մենք տեսանք, որ Հյուբշմանի մատնանշած աննմանությունները և չեղումները Խորենացու Պատմության ու «Աշխարհացոյց»-ի մեջ զուրկ են կարևորությունից և վերանում են ուշադիր քննությամբ: Ինձ թվում է՝ իրավացի են, ընդհակառակը, Վենետիկի Մխիթարյանները և վերոհիշյալ մյուս լանասերները, որոնք նույն այս երկերի մեջ մատնացույց են արել որոշ համերաշխություններ աշխարհագրական հայացքների և տեղեկությունների:*

Բացի վերև հիշված դիտողություններից՝ Առաջին Հայքի տեղագրության, Վանանդ գավառի անվան ծագման, «Արդոդ»-ի ու «Արտագի», «Արգուել»-ի ու «Առաւեղեան»-ների մասին՝ նախորդ ուսումնասիրություններում ցույց են տրված նաև հետևյալ նմանությունները.

ա. Խորենացու Պատմության (II, 2, էջ 102), ինչպես և «Աշխարհացոյց»-ի մեջ (S. էջ 41), Քուչանաց երկրի մայրաքաղաքն անվանված է «Բահլ Առաւօտին» (= Bahlibamik, տե՛ս Jo. Marquart, Ērānšchahr, էջ 87, 147 և Гр. Халатьянц, Армянские Аршакиды, էջ 14 և 16), որ էմինը Խորենացու Պատմության ռուսերեն իր թարգմանության ծանոթություններից մեկում մեկնում է «Բահլ Արևելյան» (տե՛ս «История Армении Моисея Хоренского», Москва, 1893, էջ 240–241, ծան. 124): «Աշխարհացոյց»-ի և Պատմության այդ վկայությունները նման են իրար նաև այն տեսակետից, որ «Պահլաւ» և «Պարթև» անունների ծագումը ակնարկված է նրանց մեջ Բահլ արքայանիստ քաղաքի ու համանուն գավառի անունից:

Խորենացի II, 68, էջ 204 (Տփղիս, 1913)՝

«Եւ ինքն [Արշակ Մեծ] չուեալ ի Բահլ՝ հաստատեաց զթագաւորութիւնն իւր ամս յիսուն և յերիս. վասն որոյ զարմք նորա Պահլաւք անուանեցան, որպէս և եղբօրն Վաղարշակայ ի նախնւոյն անուն՝ Արշակունիք».

Նույնը, II, 74, էջ 211՝

«Խոստանայր [Արտաշիր] գրուն տունն դարձուցանել ի նոսա, որ Պահլաւն կոչէր զարքայանիստ քաղաքն Բահլ, և զամենայն աշխարհն Քուչանաց».

V. 614, 3-8՝

«և աշխարհք են Արեաց այսոքիկ... Բահլ որ են Պարթևք.»

S. 41, 29-31՝

«որոյ ի հիւսիսոյ Պարթևաց աշխարհն, ասէ Պտղոմէոս՝ ընդ մեջ ցուրտ կրմանայ և վրկանի. բայց Պարսիկք կոչեն այժմ յաղագս Բահլ քաղաքի զնա Բահլի-բամիկք, որ է Բահլ-առաւօտին».

բ. Գր. Խալաթյանցի ասելով՝ ինչպես Պատմության (I, 8, 9, էջ 28 և 30) նույնպես և «Աշխարհացոյց»-ի մեջ (V. 613,

9 և S. 38, 1), հիշատակված է «Նինուէ» քաղաքը, որը՝ համաձայն Սերեոսի վկայությունների՝ Սասանյան վերջին թագավորների ժամանակ դառել էր նորից կենտրոնական խոշոր քաղաք («Армянские Аршакиды». էջ 25, 26 և 376):

դ. Նույն բանասերի ասելով՝ թե՛ Պատմության և թե՛ «Աշխարհացոյց»-ի մեջ ճանիւք գավառը (Մալալասի ժամանակագրության մեջ՝ Τζαννιχῆ) նույնացված է Խաղտիքի հետ («Армянские Аршакиды». էջ 129):

Խորենացի II, 76, էջ 215 (Տփղիս, 1913)՝

«Իսկ Արտաչիր հասեալ ի Տակիտոս՝ ի փախուստ դարձուցանէ, որ և սպանաւ ի յիւրոցն ի ճանիւս Պոնտացւոց, որ են Խաղտիք».

V. 605, 11-13՝

«Եւ ունի եգեր վիրքր աշխարհս չորս ... դճաննէթ որք են Խաղտիք».

S. 27, 27-28՝

«եւ ի ճանիւս որ են Խաղտիք»:

Ուշադրության արժանի է այս վկայություններում, որ Պատմության և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ գավառն անվանված է «ճանիւս»:

Այս նմանությունների վրա ավելացնելու է նաև մեր նկատած հետևյալ կարևոր նմանությունները.

ա. «Աշխարհացոյց»-ի մեջ Պարսից աշխարհը բաժանված է չորս երկրամասերի՝ Մարք, Խուժաստան, Պարսք և Արիք: Այս ստորաբաժանումն ուրույն է ու անսովոր այն տնտեսակետից, որ Պարսկաստանի արևելյան չրջանը՝ Խորասանը՝ անվանված է Արիք (տե՛ս V. 614, 1 և S. 40, 13 և 41, 25): Արդ՝ առանձնապես ուշագրավ է, որ Խորենացու Պատմության վկայություններից մեկում (II, 57, էջ 187) աշխարհագրական Արիք անունը հիշատակված է նույն այս նեղ ու առանձնահատուկ նշանակությամբ, որը ծանոթ չէ հին հայոց մատենագրության մյուս աղբյուրներին:

բ. Ըստ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության՝ Արիք-Խորասանում է գտնվել Ահմադան գավառը (տե՛ս S. 40, 14): Ինձ թվում է՝ Ահմադանի տեղադրության մասին նույն օտարոտի ու արտասովոր տեղեկությունը կրկնված է

նաև Խորենացու Պատմության հետևյալ հատվածում.

Խորենացի II, 57, էջ 187 (Տփղիս, 1913)՝

«Յաւուրս սորա [Արտաշեսի] ասեն եկեալ զազգն Ամատունեաց ի կողմանցն արևելից Արևաց աշխարհին... Տարեալք են նոքա ի յԱրչակայ առաջին ի Պարթևաց թագաւորեցելոյն. և յառաջադիմութեամբ անդէն յԱրևաց աշխարհին ի պատիւ հասեալք ի կողմանս Ահմատանի: Բայց թէ յինչ պատճառաց զալուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ. այլ պատուին յԱրտաշիսէ զեղիւք և դաստակերտօք, և անուանին Ամատունիք, որպէս թէ եկք»:

Եթե ճիշտ է իմ այս մեկնությունը՝ այդ դեպքում սխալ պետք է համարել Ն. Ադոնցի կարծիքն Ամատունիների ծագման մասին, որոնց սկզբնական հայրենիքը նա ենթադրում է Ատրպատականի սահմաններում (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», СПб., 1908, էջ 321):

գ. «Աշխարհացոյց»-ի մեջ Հայաստանին սահմանակից հարավարևմտյան չրջանը, որի մեջ գտնվում էին Ուտհան և Մծբինը, անվանված է Միջագետք, իսկ հարավարևելյան չրջանը, որի մեջ էր «Նինուէ»-ն՝ «Արուաստան, որ կոչի Ասորեստան» (տե՛ս V. էջ 611 և 613): «Աշխարհացոյց»-ի այս տեղեկությունը հիմնովին տարբեր է Ագաթանգեղոսի, Փավստոսի և Սեբեոսի վկայություններից, որոնց մեջ «Արուաստան» է կոչված Մծբնի չուրջը և արևմտակողմը գտնվող երկիրը: Ուշադրության արժանի է ըստ իս, որ Խորենացու Պատմության մեջ՝ համապատասխան «Աշխարհացոյց»-ի տեղեկության՝ Միջագետք են անվանվում Մծբնի և Ուտհայի չրջանները, իսկ Ասորեստան՝ վերոհիշյալ «Արուաստան-Ասորեստան»-ը:

դ. Խորենացին Փոքր Ասիան անվանում է Միջերկրայք (I, 8, էջ 28. II, 14, էջ 127 և այլն): Նույն անունը գործ է ածված և «Աշխարհացոյց»-ի մեջ (տե՛ս S. 21, 29 և V. 600, 5):

ե. Ուշադրության է արժանի նաև այն, որ թե՛ Պատմության և թե «Աշխարհացոյց»-ի մեջ աշխարհագրական անունները գրված են հաճախ նման ու անսովոր ուղղագրությամբ:

1. Ալիւս կամ Ալիս = Halys՝ Խորեն. II, 13, էջ 124 և 125. Ալիս — S. 24, 14. 25, 5 և V. 603, 2.22.

2. Գալիլեայ, ծան. Գալիլիայ = Galilaia, Galilaca՝ Խոր. II,

21, էջ 136. Գալիկիա = S. 36, 24 և V. 611, 17.

3. Գաղղիուս, ծան. Գալլիուս՝ Խոր. II, 88, էջ 237. Գաղղիուս V. 594, 9. Գալիուս S. 14, 23, 25, նաև Գաղղիա V. 594, 12.

4. Գութք – Խոր. II, 79, էջ 218. Գուղք – V. 591, 28. 594, 20. 596, 11. S. 11, 2. 16, 30.

5. Ելլադա, ծանոթ. Եղղադա՝ Խոր. II, 12, էջ 123. II, 13, էջ 126. III, 62, էջ 346. Ելլադա – V. 596, 20. S. 17, 18.

6. Վերիայ - Խորեն. II, 8, էջ 114. «Վեռիա, այս ինքն է Վիրք» – V. 605, 16:

Այս բազմաթիվ համեմատությունները մի կողմից Խորենացու Պատմության և մյուս կողմից «Աշխարհացոյց»-ի մեջ չեն կարող ըստ իս պատահական զուգադիպություն լինել: Սույն ուսումնասիրության չարունակության մեջ մենք պարզորոշ կտեսնենք, որ բոլոր այդ նմանությունները բացատրվում են նրանց հեղինակի նույնությամբ: Հենվելով ուրիշ՝ ավելի հաստատուն փաստերի վրա, մենք ցույց կտանք, որ «Աշխարհացոյց» -ի հեղինակը նույն ինքն Խորենացին է, որ մեծ չափով օգտվել է այս աշխատությունից իր Պատմության աշխարհագրական մասերում:

10. **Որ «Աշխարհացոյց»-ն անպայման Խորենացունն է՝ այդ երևում է նրա ոճից, բազմաթիվ զարձվածքներից ու մատենագրելու բնորոշ ձևից, որ հատուկ են միայն Խորենացուն: –** *Վերև հիշեցինք, որ Ֆ. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի լեզուն բոլորովին տարբեր է համարում Խորենացու Պատմության լեզվից: Նրա կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակի ո՛չ լեզուն, ո՛չ մատենագրելու ձևը, ո՛չ էլ հունարեն լեզվի հմտության աստիճանը բնավ թույլ չեն տալիս վերագրելու այդ երկը Խորենացուն: Վենետիկի Մխիթարյանները և, մասնավորապես, Սուքրյանը՝ պնդում էին, ընդհակառակը, որ «Աշխարհացոյց»-ի լեզուն միանգամայն նման է Խորենացու լեզվին. ուստի և այդ աշխատությունը ննթադրում էին Խորենացու գործ: Հակասական և անհաշտելի այս կարծիքները ցույց են տալիս, թե ո՛րքան դժվար է եղրակացություններ անել հին մատենագիրների լեզվի ու ոճի առանձնահատկություններից:*

Բանասիրական նորագույն ուսումնասիրություններում մատենագրական հին երկերի փոխադարձ կապը և առնչությունը, ինչպես և այդ երկերի հեղինակների նույնության հարցը,

վճռում են հաճախ բառամթերքի ու առանձնահատուկ բառերի համեմատությամբ: «Աչխարհացույց»-ի և Խորենացու Պատմության մեջ ևս մատնացույց են արված հազվագյուտ ու նման բառեր, որոնք չատ քիչ են հանդիպում կամ բնավ չկան ուրիշ երկերում. օրինակ՝ «տափաքիթ» — Խոր. II, 8, էջ 114 և V. 615, 6. «հաւք ճարակատուրք» — Խոր. III, 59, էջ 338 և S. 30, 4. «բազմաշրջութիւն» — Խոր. I, 30, էջ 83 և V. 589, 20. S. 7, 29. «Այրեցած» — Խոր. I, 30, էջ 84 և V. 585, 20. S. 5, 14. «Հրէշ» — Խոր. II, 81, էջ 223 և V. 616, 14. S. 46, 7, և ուրիշ նման բառեր: Այդ բառերի վրա մենք երկար կանգ չենք առնում, որովհետև զգուշանում ենք լուրջ հետևություններ անել առանձին բառերի նմանություններից, որ պատահական են հաճախ և ավելի քան վիճելի:

Բառարանական համեմատություններից մենք չատ ավելի կարևոր ենք համարում «Աչխարհացույց»-ի և Պատմության մեջ լեզվական մի այլ երևույթ, որ նկատված չի եղել և քննության չի ենթարկվել նախորդ ուսումնասիրություններում:

Խորենացին իրրև պատմագիր ունի, ինչպես հայտնի է, հետաքրքիր առանձնահատկություններ, որոնցից դուրկ են մյուս հայ պատմագիրները: Խորենացին հիշում ու քննադատում է, սովորաբար, իր գործածած աղբյուրները: Պատմական անցքեր նկարագրելիս նա անտարբեր արձանագրող չէ, այլ նաև այդ անցքերը լուսաբանող ու գնահատող: Նրա այս առանձնահատկություններին համապատասխանում են, բնականաբար, նրա մատենագրելու ձևը և ոճը:

Խորենացու պատմության մեջ սովորական են բնորոշ դարձվածքներ, ինչպես՝ — «գիտեմ», «ոչ գիտեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ոչ հաւատամ», «ճշմարիտ է», «մեզ անհաւատալի է»՝ — որոնք գրեթե չեն հանդիպում մյուս մատենագիրների մոտ: Հետաքրքիր է արդ և ուշագրավ, որ նույն այս դարձվածքները հանդիպում են չարունակ և «Աչխարհացույց»-ի մեջ:

Կարևոր այս փաստը դորավոր մի ապացույց է, անշուշտ, «Աչխարհացույց»-ի և Պատմության հեղինակի նույնության, ուստի և ներքև մենք ենք բերում մեր համեմատություններն ամբողջությամբ ու առանց կրճատումների.

«Գիտեմ». Խոր. II, 7, էջ 111 — «Գիտեմ և զԳնունիսդ զինի ունիս». I, 19, էջ 57 — «այսպէս հաւաստեաւ զիտասցուք զկարդ բանից». II, 7, էջ 112 — «ոչ գիտեմ թէ վասն սպա-

ոևւո՞յ աղգին առաջնոյ»:
= S. 31 – «Ասեն թէ նհանգ կայ յԱրածանի, որպէս յեփրատ, դոր հաւաստի գիտեմք, կենդանի քարքաչամ դուգնալ...» S. 37 – «ունի [Միջագետք] լերինս երկու, ասէ Պտղոմէոս, դմինն կոչէ Սկպաոոս. դոր ոչ գիտեմ ո՛վ է».
S. 37 – «զայս երկու գնտս գիտեմ Միջագետաց Ասորաց».
S. 42 – «զի այժմ այլազգ ոչ գիտեմք»:

«Կարծեմ». *Խոր. I, 6, էջ 22 – «որում ոչ դոր ընդդիմանալ կարծեմ ի միտս ունողացն». I, 3, էջ 12 – «սակայն և ի նոցանէ՝ դոր ինչ հավաստին կարծեմք, առնուլ»:*
= S. 12 – «առ մուտս Տառայ գնտոյ, դոր կարծեմ եմաթ է». S. 19 – «որ կոչի Ռաւանիտեննիա, դոր կարծեմ զՄարեայ լիճն լինել». S. 37 — «զմիւսն կոչէ Ֆարաոոն, դոր կարծեմ Խարոր լինել». S. 8 – «ընդ որով թագեալ կարծեմ դարեգային». Համմտ. նաև S. 20, 38, 45.

«Ինձ թուի». *Խոր. I, 3, էջ 11 – «Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստաննայցս լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց». I, 4, էջ 16 – «ինձ թուի՝ հանգուցանելն զադարեցուցանել է». I, 18, էջ 56 – «այլ հաւաստի մեզ թուեցաւ». I, 6, էջ 12 – «որ ինձ թուին Սեմ, Ֆամ և Յարեթ»:*
= S. 13 – «ինձ թուի Սեմայ, Ֆամայ և Յարեթի». S. 12 – «ինձ թուի՝ Մրու եւ Մրվոոտ», S. 41 – «եւ աստուածային գիրն զամենայն Արեաց աշխարհն Պարթեւք կոչէ. ինձ թուի վասն թագաւորութեան ի նոցանէ լինելոյ». Համմտ. նաև S. 42, 5.11:

«Հաւանեալ եմ», «ոչ հաւատամ». *Խոր. I, 6, էջ 24 – «բայց որպէս ես հաւանեալ եմ, բազում ինչ ճշմարիտ է». I, 13, էջ 43 – «հաւաննցաք անցանել սակաւուք և ընդ կարգ բանից պատերազմացն որ ի Հայկեանն Արամայ». I, 15, էջ 48 – «որպէս հաւանեալ եմ». II, 67, էջ 203 – «բայց ես հաւանեալ եմ ձիգ և յերկար առնել զպատմութիւն ժամանակիս այսորիկ». II, 88, էջ 238 – «բայց այս մեզ անհաւատալի է»:*
=V. 590 – «Այլ հաւանեալ եմ Պտղոմեայ պատմութեանն». V. 592 – «բայց ես ոչ հաւատամ». S. 13 – «բայց ոչ հավանիմ». S. 11 – «եւ որ զնմանէ զրոյցք, անհաւատալիք». S. 39 – «որում ոչ հաւատացաք»:

«Ճչմարիտ է». *Խոր. I, 5, էջ 20 – «եւ է ճչմարիտ, եւ մի՛ ոք յերկուասցի. քանզի պատմէ մեզ զայսոսիկ ի յոյժ իրս հաւատարիմն Արիւդննոս»:*

=V. 589 – «և երկիր բնակութիւն մարդկան ասէ չուրջ լինել զնոքօք. և է ճչմարիտ». S. 8 – «բնակութիւն մարդկան ասէ լինել չուրջ զնոքօք. եւ ճչմարիտ է»:

«Ասեմ», «ասացաք», «ասասցուք». *Խոր. II, 7, էջ 111 – «Ասեմ և զՍպանդունիսդ ի վերայ զննարանաց». I, 19, էջ 57 – «եւ ասեմք լինել արդարարան ի պատմութեանս յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան եւ ուղղամտութեյան». I, 12, էջ 42 – «որպէս ասացաք». II, 68, էջ 204 – «Սորա լինին որդիք երեք և դուստր մի, որպէս յառաջագոյն ասացի». II, 67, էջ 202 – «որպէս ասացաք, ի վաղարչայ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորին». I, 21, էջ 64 – «ասասցուք որ ինչ հարկաւորն է». II, 69, էջ 205 – «բայց մեք ասասցուք ի մատենէն». Համմտ. նաև II, 8, էջ 114. II, 49, էջ 176, ևն:*

= S. 39 – «բայց ասեմ թէ ըստ դիպուածոյ անցանէ անդ պասկուճ հաւ». S. 40 – «այսինքն զոր ասեմ». S. 9 – «եւ յաղագս ովկիանոսի՝ որպէս յառաջագոյն ասացի, է զկողմամբ Զեփիւռոս հողմոյ». S. 10 – «արդ որպէս ասացաք ցվաթսուն մասն ովկիանոս նկնալ զաղարէ». S. 12 – «զոր նախն ասացաք». S. 29 – «բայց մեք ասասցուք զրուն աշխարհն Աղուանից»:

«Գրեմ», «գրեմք». *Խոր. II, էջ 101 – «գրեմ քեզ այժմ և որ ինչ առանձին մերոյ աշխարհիս գործք». II, 1, էջ 101 – «բայց գրեմ կարճ ի կարճոյ». I, 5, էջ 21 – «սկսաք գրել»:*

= V. 690 – «մեք որպէս անհաս նղնալ մնծութեան լռեմք և գրեմք զայս միայն». V. 588 – «յորմէ մեր ծայրաքաղ արարեալ գրեցաք զմնծամնծան և զնչանաւորսն միայն». S. 14 – «բայց գրեմք զգետս միայն անուանիս»:

«Սկսայց», «սկսցուք». *Խոր. I, 3, էջ 12 – «բայց սակայն սկսայց, թէպէտ և ջանիւ». I, 3, էջ 12 – «և սկսայց յորոց և այլքն». I, 7, էջ 28 – «այլ սկսեալ ցուցից քեզ զմեռն, թէ ուստի՛ և ո՛րպէս»:*

= V. 590 – «արդ սկսցուք ըստ Պապայ Աղեքսանդրացւոյ երկրագրութեանն». V. 593 – «այսուհետև սկսցուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն»... S. 13 – «սկսանիմք

պատմել դառանձնութիւն նոցա ըստ դրից Պապայ Ագեքսանդրացւոյ»:

Նշանակելու է, մանավանդ, նաև հետևյալ դարձվածքները, որոնք հատուկ են Խորենացուն՝

Խոր. II, 88, էջ 238 – «Բայց այս մեղ անհաւատալի է, այլոց՝ որպէս կամք իցեն».

Խոր. I, 14, էջ 47 – «Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանեն՝ մեղ ոչ է հաճոյ. այլոց որչափ կամք իցեն».

Խոր. I, 6, էջ 24 – «Արդ՝ դայսոսիկ այլ ոք թէպէտ առասպելս, թէպէտ ճշմարտութիւն հաչունալ համարեսցի՝ բայց որպէս ես հաւանիլ եմ, բազում ինչ ճշմարիտ է»:

= S. 46, 23-24 – «ինձ անհաւատալիք, այլոց որպէս կամք իցեն».

S. 23, 9 – «մեծ առասպել է եւ մեծ ճշմարիտ ոչ գիտեմ»:

Գրելու միևնույն սովորությունը, միևնույն դարձվածքները, որ գործ են ածված վերոհիշյալ համեմատություններում, անկարելի է, իհարկե, համարել պատահական: Պարզ է, որ մատենագրելու այս հատուկ ձևը բացատրվում է այդ երկերի հեղինակների նույնությամբ:

Ի նկատի ունենալով Խորենացու խնդրի բացառիկ կարևորությունը՝ ավելորդ չեմ գտնում մեջ բերել մի նոր փաստ ևս, որով հաստատվում է դարձյալ միևնույն եղրակացությունը:

Ինչպես հայտնի է, Խորենացու առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա ժողովրդական հին առասպելները համարում էր այլաբանություն և կարծում, որ նրանք «զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքնանս ունին թաքուցեալ» (տե՛ս I, «Հավելված Ա», էջ 90): Այդ առասպելներին Պատմության մեջ նա աշխատել է տալ բնական որևէ բացատրություն: Պատահական չէ, անշուշտ, որ առասպելների մասին միևնույն հայացքը մենք գտնում ենք նաև «Աշխարհացոյց»-ի մեջ:

Այդ տեսակետից ուշադրության են արժանի Պատմության ու «Աշխարհացոյց»-ի հետևյալ վկայությունները.

Խոր. I, 7, էջ 27՝

«Եւ ընդէ՞ր սա գտակ հրոյ, և կամ Պրոմեթէոս գողացեալ առ ի յաստուածոցն զհուր և չնորհեալ մարդկան,– որ է

այլաբանութիւն,— ոչ բերէ ասել կարգ բանիս».

Նույնը, I, 30, էջ 84՝

«յորս չարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յիշելով այլաբանարար և զդարմիցն Աժդահակայ, վիշապաղունս զնոսա կոչելով. զի Աժդահակն՝ ի մեր լեզուս է վիշապ».

Նույնը, II, 49, էջ 176՝

«Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վիպասանացն, բայց յիշատակեցուք և մեք կարճառօտիւք, և զայլաբանութիւնն ճշմարտեսցուք».

S. 20, 13-15՝

«զոր ասեն թէ զնաց Զոսիմոս միայնակեացն. բայց կարծեմ թէ զրոյցն այլաբանութիւն է, զոր պատմեն զնմանէ».

S. 45, 22-29՝

«Իսկ ի հարաւ կոյս դաչտք են փղոյց ճարակք. եւ ասեն թէ մին ազգն էգք են բնակիչք աշխարհին, եւ ի փղոյ կուսէ ժամանակ ինչ ի տարւոջն չունք անցանին, եւ խառնակին ընդ կանայսն, եւ յղացեալ ծնանին երկուորիս, զմիւսն կորիւն եւ զմիւսն աղջիկ. եւ կորիւնք անցանեն ընդ գետն առ Հարսն. եւ աղջկացն մնալով առ մարսն. բայց ես այլաբանութիւն կարծեմ. որպէս վասն Ամազոնացն պատմի յԱղեքսանդրի գիրսն, զոր Թւրասլաց ազգ են այլաբանեալ»:

Ինչպես տեսնում ենք, «Աշխարհացոյց»-ի և Պատմութեան մէջ նման են ու համեմատաչափ ո՛չ միայն աշխարհագրական վերոհիշեալ տեղեկութիւնները, այլև մատենագրելու այն հատուկ ձևը և անգամ որոշ հայացքները, որոնք հայոց մատենագրութեան մէջ առանձնահատուկ են եղել բացառապես Խորենացուն:

Արդ՝ նոր այս դիտողութիւններն այնքան կարևոր են ու ծանրակշիռ, որ կարող ենք, ինձ թվում է, «Աշխարհացոյց»-ի հեղինակի խնդիրը համարել վերջնականապես պարզված: «Աշխարհացոյց»-ի հեղինակն է, անտարակույս, Մովսես Խորենացին, և Վենետիկի Մխիթարյաններն այդ կետում կատարելապես իրավացի են: Միանգամայն ճիշտ է, ուրեմն, և Հեռագիրների ավանդական վերնագիրը, որի մէջ Մովսես Խորենացին պարզ ու որոշ հիշված է՝ իբրև «Աշխարհացոյց»-ի հեղինակ:

Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն, մեր այս ուսումնասիրութեան մէջ, որի հիմնական նպատակն է լուծել Խորենացու առեղծ-

վածը, մեզ կարող է կռվան ծառայել ո՛չ միայն Խորենացու Պատմությունը, այլև նրա «Աշխարհացոյց»-ը:

11. **Խորենացու Պատմության և «Աշխարհացոյց»-ի վերնագրերը:** — *Որ «Աշխարհացոյց»-ը և Խորենացու Պատմությունը միևնույն հեղինակի գործ են՝ այդ երևում է նաև ուրիշ ցուցումներից, որ վրիպել են բանասերների ուշադրությունից:*

Հետաքրքիր է նաև, որ օտարազգի աղբյուրները, որոնցից միջանկյալ կերպով օգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը, հենց նույն այն հայտնի մատենագիրներն են, որոնք աղբյուր են ծառայել նաև Խորենացու Պատմության: Այսպիսի ընդհանուր աղբյուրներ են՝ Կեղծ-Կալիսթենեսի Ալեքսանդրի վեպը (տե՛ս վերև § 3 և **Հ. Տաշյան,** *Ուսումնասիրություններ Ստոյն-Կալիսթենեսայ), Եվսերիոս Կեսարացու ժամանակագրությունը (տե՛ս վերև § 3), Հովհաննես Մալալասի ժամանակագրությունը (տե՛ս վերև § 3 և* **Ա. Կարիեր,** *Նորագույն աղբերք Մովսիսի Խորենացւոյ), հավելված, էջ 7–31, և, իմ կարծիքով, նաև Նոննոսին վերագրված առասպելարանական մեկնությունները (տե՛ս վերև § 3 և* **Гр. Халатьянц,** *Армянские Аршакиды):*

Ավելի հետաքրքիր են ու ուշագրավ Խորենացու Պատմության և «Աշխարհացոյց»-ի նման ու արտասովոր վերնագրերը:

Խորենացու Պատմության վերնագիրն է ըստ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի քննական հրատարակության՝ «Հայոց պատմութիւն յերից հատուածս ասացեալ Մովսիսի Խորենացւոյ ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ»: Ապա գալիս են պատմության երեք մասերի հետևյալ վերնագրերը՝ «Գիրք առաջին», «Գիրք երկրորդ» և «Հատած երրորդ»: Հիշյալ խորագրի մեջ սկզբնական բնագրում եղած պիտի լինի ըստ իս ո՛չ թե «յերից հատուածս», այլ «յերից հատածս», ինչպես ունեն bccf ձեռագրերները (տե՛ս Քննական հրատարակություն, Տփղիս, 1913, էջ 1), նաև Եվսերիոսը և Հունարան զպրոցի քերթողները: Իսկ Պատմության առաջին և երկրորդ մասերում,— այնտեղ՝ ուր գտնվում են այժմ «Գիրք առաջին» և «Գիրք երկրորդ» վերնագրերը,— բուն ձեռագիրն ունեցած պիտի լինի, հավանաբար, «Հատած առաջին» և «Հատած երկրորդ»:

Պատմության բաժանումը «Հատած»-ների մատնանշված է Հ. Կարենյանցի ունեցած երկրորդ ձեռագրի ոտանավոր հիշատակարանի հետևյալ տողերում (տե՛ս «Բազդատութիւն Պատմութեան Մովսիսի Խորենացւոյ տպագրելոյն ի Վենետիկ ընդ երկուց

ձեռագրաց», Թիֆլիս, 1858)՝

«Երրեակ հատած սոյն մատենի վիպագրութեան Հ Մովսիսի Խորենացւոյ գերայրական»:

*Որովհետև «Հատած»-ը խորթ և անսովոր բառ էր՝ Թովմա Արծրունու մոտ Խորենացու Պատմության մասերն անվանված են «Հատուածք» («վերադարձութեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին», տե՛ս **Թովմայի վարդ. Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց**», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 76), իսկ Բաղեշու Ամբրդոլու վանքի Խորենացու ձեռագրի հիշատակարանում՝ «հատոր» («տրոհեալ ի հատորս երից», տե՛ս **Միքայէլ, Խորենացու Պատմության ուսումնասիրութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 42):***

Միանգամայն պարզ է մնջ րնրված այս վկայություններից, որ Պատմության բաժանումը «Հատած»-ների անպայման Խորենացունն է:

Արդ՝ ուշագրավ է առանձնապես, որ խորթ ու արտասովոր նույն «Հատած» վերնագրերը, որ չեն հանդիպում մատենագրական մյուս հին երկերում, ունի նաև «Աշխարհացոյց»-ը՝ V. 590 – «Աշխարհագիր. Հատած երկրորդ», S. 18 – «Լիբիա. երկրորդ հատած աշխարհիս», S. 21 – «կատարեցաւ երկրորդ հատածն»:

Այս նմանությունը ևս, անշուշտ, պատահական չէ: Բանի որ վերև ցույց էր տրված արդեն, որ Պատմությունը և «Աշխարհացոյց»-ը միևնույն հեղինակի աշխատություններ են՝ ինքնըստինքյան հասկանալի են այժմ, թե՛ նրանց վերնագրերի այս նմանությունը և թե՛ վերոհիշյալ նրանց ազրյուրների նույնությունը:

*12. **Ե՞րբ է գրված Խորենացու «Աշխարհացոյց»-ը:** – «Աշխարհացոյց»-ի հորինման ժամանակը գիտնականները, ինչպես վերև տեսանք, ենթադրում են զանազան դարաշրջաններում: Ղ. Ինճիճյանը և Ա. Սուքրյանը՝ նրա գրվելու ժամանակը դնում էին V դարում, Յո. Սենտ-Կրուան՝ VII դարի վերջերում կամ VIII դարի սկզբում, Ա. Սեն-Մարտենը՝ IX դարի վերջերում կամ X դարի կեսում, Ք. Պատկանյանը՝ VII դարում, Ա. Գուտշմիդը՝ VII դարի կեսերին, և Յո. Մարկվարտը՝ ամենաքանուվը VII դարի վերջերում:*

Վենետիկի Մխիթարյանների հին կարծիքի վրա ավելորդ է

այժմ կանգ առնել, որովհետև Խորենացին, ինչպես վերը հիշեցինք, թե՛ իր Պատմության և թե՛ «Աշխարհացոյց»-ի մեջ օգտվել է ավելի ուշ ժամանակի աղբյուրներից և քաղել է նրանցից ավելի նոր ժամանակի աշխարհագրական տեղեկություններ: Կարող ենք անտես առնել նույնպես այն գիտնականների կարծիքները, որոնք «Աշխարհացոյց»-ը թյուրիմացաբար համարել են Անանիա Շիրակացու աշխատություն և նրա ժամանակը ննջադրել ըստ այդմ VII դարում:

Ժամանակի խնդիրը պետք է, ուրեմն, նորից քննել, մի կողմ դնելով նախապայմ այդ կարծիքները, և կանգ առնել բանասերների փաստական միայն դիտողությունների վրա, որ վերաբերվում են այս խնդրին:

Իրրև ապացույց, որ «Աշխարհացոյց»-ը գրված է VII դարի առաջին կեսում, Պատկանյանը բերում է հետևյալ իր դիտողությունները. նախ, որ այդ գրվածքում չեն նկատվում այն փոփոխություններն Առաջավոր Ասիայի վիճակում, որ առաջացած պիտի լինեին արաբների ժամանակ. ուստի և, նրա կարծիքով, «Աշխարհացոյց»-ի գրության ժամանակը կարելի է ճշտիվ որոշել մինչև արաբների մուտքը Հայաստան՝ պարսից Խոսրով II-ի ու նրա հաջորդների և Հերակլ կայսեր ժամանակաշրջանում: Երկրորդ, որ «Աշխարհացոյց»-ում մատնանշված են երեք Արաբիա, որոնք ունեցել են արաբական բնակչություն. իսկ այդ չէր կարող անել «Աշխարհացոյց»-ի հեղինակը, եթե նա ապրած լիներ արաբական նվաճումների ժամանակ: Երրորդ, որ Իրանի վաթսուն չրջանի աշխարհագրական անուններում չի նկատվում արաբական արտասանության աղղեցությունը և, բացի այդ, չկան նրանց մեջ զուտ արաբական անուններ, որոնք արագ կերպով տարածվել ու սովորական էին դառել Պարսկաստանում (տե՛ս «Армянская география», էջ XIII):

Ըստ իս այս դիտողություններից և ո՛չ մեկը համոզիչ չէ: Առաջին դիտողությունը պարզապես սխալ է, որովհետև «Աշխարհացոյց»-ի մեջ կան ակներև նշաններ այն փոփոխությունների, որոնք առաջ էին եկել արաբական տիրապետության ժամանակ. օրինակ՝ «Աշխարհացոյց»-ում հիշատակված է Բասրա քաղաքն «ամենալից վաճառօք» (V. 612, 7), Կուֆա կամ Ակողա քաղաքը՝ իրր «բնակեալ բանակ Տաճկաց» (S. 38, 16), «Արուաստան, որ կոչի Ասորեստան՝ այսինքն Մուծդ» (= Մոսուլ, տե՛ս V. 613, 8) և այլն: Երկրորդ դիտողությունը ճիշտ չէ և

անգամ անհասկանալի է, որովհետև երեք Արաբիան՝ «Ապառաժ, Անապատ և Երջանիկ»՝ գոյություն են ունեցել, անշուշտ, և արաբական աշխարհակալության ժամանակ և բնիկ ցեղերն էին այնտեղ զարձյալ արարները: Երրորդ դիտողությունը ևս հիմնավոր չէ, որովհետև Պարսկաստանի աշխարհագրական մասում «Աշխարհացոյց»-ի հեղինակն օգտվել է, ինչպես մատնացույց է արել Յո. Մարկվարտը («Ērānšahr», էջ 5), դիվանագիտական նկատողությունից, սակայն այդ մասում ևս միջանկյալ կերպով հիշատակված են նույնպես զուտ արաբական անուններ. օրինակ՝ Արտաստան — Ասորեստանի արաբական անունը՝ «Մուծդ» կամ Մոսուլ (V. 613, 8), Խուժաստան աշխարհի անունը՝ «Բծրա» կամ Բասրա (S. 41, 7) և այլն:

Մեր բերած առարկությունները ո՛չ միայն հերքում են Ք. Պատկանյանի սխալ ենթադրությունը, այլև ցույց են տալիս, որ «Աշխարհացոյց»-ը գրված է արաբական շրջանում:

Ք. Պատկանյանի դիտողություններից շատ ավելի կարևոր են Յո. Մարկվարտի փաստական ցուցումները նրա «Ērānšahr» ուսումնասիրության մեջ (էջ 5–6): Յո. Մարկվարտն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ Խորասանի երկրների ցուցակում նշանակված են «Աշխարհացոյց»-ի մեջ այնպիսի տեղեր, որոնք կամ երբեք չեն հիշատակված իբրև առանձին շրջաններ, կամ մասամբ են միայն հիշատակված՝ առաջին անգամ Արղա-իրն Տահիրի հարկացուցակում (գրված է հիջրայի 211/212 թվին = 826/7 — 827/8 թ.), և ծագում են մասամբ իրանական կլոսից և վահրամ Ջուբինի վկայից: Մասնավորապես ուշագրավ են Գճակ և Ասան տեղերը (S-ի մեջ 40, 17 «Գճակստան» ուղղելու է ըստ Մարկվարտի՝ «Գճակ, Ասան»), որոնցից վերջինը չի եղել երբեք առանձին վարչական շրջան: Այդ երկու տեղերը որոշ դեր էին խաղացել և հիշատակվել թուրք-արաբական այն մեծ կռվի վերաբերյալ հաղորդագրություններում, որն արևմտաթուրքերի Խաքանի դեմ տեղի էր ունեցել հիջրայի 119 թվին (= 737 թ. Ք. Հ.) Գոզկանում: Յո. Մարկվարտի կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ծանոթ եղած պիտի լիներ զրավոր այդ հաղորդագրություններին: Բայց այդ՝ Սկյութիան և Սարմատիան նկարագրելիս՝ նա օգտվել է մի սղբյուրից, որն իրազեկ է եղել ո՛չ միայն սլավոնների բալկանյան արշավանքներին մինչև Մակեդոնիա, Դաղմատիա ու Արայա, նաև բուլղարների գաղթին Ասպարհրուկի առաջնորդությամբ

(679 թ.), այլև հևթթաղների, ավարների մասին ու Սոգդիանայի առևտրի վերաբերյալ մանրամասն տեղեկություններին, որ հայտնի էին դառել թուրք-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունների ընթացքում Հուստինոս II և Մավրիկիոս կայսրերի ժամանակ:

Ելնելով այս փաստերից՝ Մարկվարտն «Աշխարհացոյց»-ի գրության terminus a quo որոշում է ամենավաղը VII դարի վերջերում: Սակայն ի նկատի առնելով Խորասանի նկարագրությունը, ինչպես և «Աշխարհացոյց»-ի հեղինակի իրազեկ լինելը 737 թվականի թուրք-արաբական կռիվներին՝ նա հնարավոր է համարում, որ «Աշխարհացոյց»-ը կարող է նաև գրված լինել այդ թվականից հետո՝ ամենավաղն առաջին Աբբասյանների ժամանակ:

Նորագույն իր աշխատություններում Մարկվարտը, ինչպես հիշեցինք, փոխել էր իր այս կարծիքը և «Աշխարհացոյց»-ը վերագրել՝ համաձայն Պատկանյանի սխալ ենթադրության՝ Անանիա Շիրակացուն:

Ա. Սեն-Մարտենը, ինչպես վերև տեսանք, «Աշխարհացոյց»-ի հորինման ժամանակը ենթադրում է IX դարի վերջերում կամ ավելի ուշ՝ X դարի կեսում: Այս ենթադրության փաստական միակ հիմքն է նրա հրատարակած բնագրի վկայությունը Դանուբ գետի մասին՝ «[մինչև] ցԴանոր գետ, որ է Յօղու ռուսաց» (տե՛ս «Mémoires», II, էջ 336): Փաստական այս հիմնավորումը միանգամայն կարևորությունից զուրկ է, որովհետև «որ է Յօղու ռուսաց» բացատրությունը չունեն «Աշխարհացոյց»-ի V. և S. հրատարակությունները: Պարզ է, որ այս բացատրությունն ակներև մի ընդմիջարկություն է:

Մնում են, ուրեմն, անխախտ միայն Յո. Մարկվարտի կարևոր դիտողությունները, որոնցից կարելի է հետևցնել, որ «Աշխարհացոյց»-ը գրված է VII դարից հետո:

«Աշխարհացոյց»-ի հորինման terminus post quem non կամ վերջին եղրը որոշված է Հյուբշմանի «Հին հայոց տեղւոյ անունները» աշխատության մեջ (թարգմ. Պիլոդիկճյանի, էջ 267): «Աշխարհացոյց»-ի մեջ Նախիջևանը համարվում է Վասպուրականի գավառ, իսկ հայտնի է Թովմա Արծրունու պատմությունից (Ս. Պետերբուրգ, 1887, էջ 240, 247, 252), որ 902 թվականին նա բաժանվել էր Վասպուրականից և միացվել Սյունիքի հետ: Հիմնվելով այս կարևոր փաստի վրա՝ Հյուբշմանն «Աշխարհա-

ցոյց»-ի գրության վերջին սահմանն իրավացի կերպով ընդունել է 902 թվականը: Որ «Աշխարհացոյց»-ը չէր կարող գրված լինել IX դարից հետո՝ այդ ավելի քան պարզ երևում է նաև անհերքելի այն փաստից, որ նա հիշատակված է Թումա Արծրունու Պատմության մեջ և ծառայել է Արծրունուն իբրև աղբյուր (տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց», 1887, էջ 27):

Այսպիսով «Աշխարհացոյց»-ի գրության ժամանակը որոշվում է կամ VIII և կամ IX դարում: Պարզվում է նաև այն, որ նրա հեղինակն ապրել է անպայման արաբական շրջանում: Իսկ այս եզրակացություններից ինքնին արդեն հետևում է, որ արաբական այն բառերը, որոնք հանդիպում են «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության բոլոր ձեռագրերում, իսկ հաճախ նաև ընդարձակ խմբագրության մեջ՝ պատկանում են, հավանորեն, նրա բուն ու իսկական հեղինակին և չեն կարող համարվել օտարամուտ ընդմիջարկություններ: Այդպիսի արաբական բառեր են, օրինակ՝ ***աղխունա*** *V. 612, 26 (= արար. axkūna, տե՛ս* ***Հր. Աճառյան,*** *Հայերեն արմատական բառարան),* ***դհունաղհունար*** *V. 612, ծան. 6,* ***հունաղհունար*** *S. 39, 30 (= արար. duhn-ulhinnâ, տե՛ս H. Hübschmann, Armenische Grammatik, էջ 269-270),* ***մաղապ*** *V. 612, 25, S. 39, 29 (= արար. malâb, տե՛ս «Arm. Gram.», էջ 270),* ***բալասան*** *V. 612, 27 (= արար. balasân, տե՛ս «Arm. Gram.», էջ 263) և այլն:*

Ուշադրության է արժանի նաև, որ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Քաղիրթ գետի մասին ասված է, թե արաբները նրան կոչում են Շիթիթմա.

> *S. 37, 27 – 38, 1՝ «նախ Քաղիրթ, որ բղխէ ի լերանց Սալնայ և Սանասնոյ... եւ կոչի այժմ Շիթիթմա, որ է արիւնարբու»:*
>
> *S. 30, 28-29՝ «զետն Քաղիրթ, զոր Շիթմա կոչեն Տաճիկք, այսինքն՝ արիւնարբու»:*

Քաղիրթ գետի անվան այս փոփոխությունը, ինձ թվում է, կարող էր տեղի ունեցած լինել VIII դարի վերջերում կամ IX դարում, երբ Հայաստանի հարավային մասերում հաստատվել էին արաբական զաղութները և հիմնվել էին այստեղ արաբական առանձին ամիրայություններ:

Կարելի է նույնպես հավանական համարել, որ նույն այս ժամանակներում ենթադրելու է նաև Փրանկ «հզօր ազգ»-ի հիշատակությունն «Աշխարհացոյց»-ում: Ֆրանկները, ինչպես

հայտնի է, արաբների դեմ հաղթական կռիվներ էին մղել Սպանիայում Կարլոս Մեծի ժամանակ (768-814): Նույն այս Կարլոս Մեծը բարեկամական հարաբերություններ է ունեցել Հարուն ալ-Ռաշիդի հետ: Հավանական է ըստ այսմ, որ «Աշխարհացոյց»-ը գրված պիտի լինի հենց այս ժամանակաշրջանից հետո, այսինքն՝ IX դարում:

Արդ՝ եթե «Աշխարհացոյց»-ի հեղինակը Մովսես Խորենացին է, իսկ այդ, ինչպես տեսանք, անվիճելի է ու անտարակուսելի՝ շատ սարդ է, որ Խորենացու ժամանակն իջնցվելու է IX դար: Այս եզրակացությամբ Խորենացու ժամանակի համար ստացվում է որոշ ու հաստատուն մի կռվան, որի օգնությամբ Խորենացու առեղծվածի լուծումը, ինձ թվում է, հաջողվելու է մեզ տալ սույն ուսումնասիրության երկրորդ մասում:

13. **«Մդոնաչափք»-ի գրության ժամանակը:** – Խորենացու և նրա «Աշխարհացոյց»-ի հետ կարող է որոշ կապ ունեցած լինել «Մդոնաչափք»-ը, որը տպագրված է «Ազուէսագրք»-ի հրատարակություններում՝ Ամստերդամում 1668 թվականին և Մարսիլիայում 1676 և 1683 թվականներին: Այդ գրվածքի ֆրանսերեն թարգմանությունը լույս է տեսել Ա. Սեն-Մարտենի «Mémoires historiques et géographiques sur l'Arménie» աշխատության մեջ (T. II, Paris, 1819, էջ 395-397), իսկ ռուսերեն թարգմանությունը՝ «О торговле и городах Армении» իմ գրքում (Эривань, 1930, էջ 171-173):

«Մդոնաչափք»-ը՝ որ առանձնապես կարևոր է առևտրական հին ճանապարհների որոշման և առևտրի պատմության համար, գրված է, անտարակույս, արաբական շրջանում՝ X դարից ո՛չ ուշ: Այդ միանգամայն պարզ է, որովհետև «Մդոնաչափք»-ի բնագիրն ունի Պետական կենտրոնական ձեռագրատան թիվ 2679 հոչակավոր հին ձեռագիրը (= Գևորգյան ցուցակ, թ. 102), որ գրված է 671-981 թվականներին: Հնագույն այդ բնագիրը շնորհակալությամբ ստացել եմ նորերս Սեբաստիայի Տեր-Հակոբյանից, որը բարեհաճել էր իր արտագրությամբ ուղարկել ինձ ամբողջ հատվածը, ուղղելով նրա ընթերցվածներից մեկը թիվ 1737 ձեռագրի համեմատությամբ:

«Մդոնաչափք»-ի հին բնագիրը, որ դեռևս հրատարակված չէ, ավելորդ չեմ համարում մեջ բերել ամբողջությամբ՝ դնելով դեմը նաև «Ազուէսագրք»-ի 1683 թվականի հրատարակության բնագիրը:

Ձեռ. 2679, թերթ 206a (ճշտվ. 208a)՝

«Վասն դիտութեան մղոնաչափաց:

Ասպարէզն ՃՀ քայլ է. քայլն Զ ոտն է, ոտն ԺԶ մատն է. մղոնն է ասպարէզ է. ըստ Պարսից ասպարէզն ՃՆԳ քայլ է, մղոնն Ռ քայլ է, հրաւահն Գ մղոն:

Ի Դունա ի կարին Մ մղոն.

Ի կարնա ի Փոսադուրա Ճ.

անտի ի Կոդոնիա Ղ.
անտի ի Նիկիա Ճ.
անտի յԱմասիա Զ.
անտի ի Գանգրա ՃԵ.
անտի յԱնգևրա Զ.
անտի ի Կոստնապաւղիս ՃԻ.
անտի ի Հռոմ Ղ:

Ի Դունա ի Խլաթ ՃՀ.
անտի ի Քղիսմար Զ.
անտի յՈւրհա ՃԶ.
անտի յԵփրատ գետ Խ.

«Աղուէսագիրք», Մարսիլիա, 1683, էջ 61–64՝

«Ահա կամիմ ղչալի աչխարհիս համառօտել մղոնախաղայ ոտնաչափութեամբ ուղղևկարար, ասպարիզաճեմ դրութեամբ:

Ի Դունայ մղոն 200 ի կարնոյ բաղաք:
անտի մղոն 120 ի փոս աչխարհն Հայոց և Յունաց.

անտի մղոն 90 ի Կոդոնիոյ բերդն.
անտի մղոն հարիւր ի Նիկիասր.
անտի մղոն 80 յԱմասիայ.
անտի մղոն 130 ի Գանգրայ[1].
անտի մղոն 80[2] յԱնկիւրիայ.
անտի մղոն 320[3] ի Կոստանդ.
անտի մղոն 6000[4] ի Հռոմ:

Ի Դունայ մղոն 170 ի Խլաթ.
անտի մղոն 80 ի Քղիսմար.
անտի մղոն 180[5] ի յՈւրհայ.
անտի մղոն 40 յԵփրատ գետ.

անտի մղոն 150 յԱմասիայ[6] (= Hemesa).

---

[1] Ա. Սեն-Մարտենը, որ բացի «Աղուէսագրքից» օգտվել է նաև մի այլ ձեռագրից՝ չունի տարածություններ Ամասիայից Գանգրա:

[2] Ա. Սեն-Մարտենը՝ «108 milles»:

[3] Նույնը՝ «300 milles»:

[4] Նույնը՝ «3000 milles»:

[5] Նույնը՝ «160 milles»:

[6] Ս. Մարտենն ուղղել է՝ «Èmèse»:

անտի ի Դամասկոս ճի.	անտի մղոն 100 ի Դամասկոս.
անտի ի Թավրէժ լեռն Ղ.	անտի մղոն 90 ի Թաւրէժ.
անտի յԵրուսաղէմ ճ:	անտի մղոն 100 ի քաղ. յԵրուսաղէմ:
ի Դունա ի Բևրդկունս կ.	ի Դունայ մղոն 60 ի Բևրթկունան.
անտի ի Պարտաւ ճկ.	անտի մղոն 160[1] ի Պարտաւ.
անտի ի ծովն Կասպից Ղ:	անտի մղոն 90[2] ի ծովն Կասպից:
ի Դունա ի Նախճևան Հ.	ի Դունայ մղոն 70 ի Նախչուան.
անտի ի Գանձակ Շահաստան ճի.	անտի մղոն 120 ի Գանձակ Շահաստան.
անտի ի Տիւրոն ՅՀ.	անտի մղոն 370 ի Տապօն.
անտի յԱկոռա Հ.	անտի մղոն 70 ի Յակորոն.
անտի ի Բսրա ճՄ.	անտի մղոն 140 ի Պասրայ.
անտի ի ծովն Պարսահանան[3] ի:	անտի մղոն 20 ի ծովն Պարսկային:
ի Գանձակէ ի Նինուէ ճի.	Դարձեալ ի Գանձակայ մղոն 100 ի Նինուէ.
անտի ի Մծրին ճի.	
անտի յԱրբհա ճՄ:	անտի մղոն 150 Յունհայ:
ի Նախճևանէ յԱրտևատ Մ.	
անտի ի Վարդանակերտ Հ.	
անտի ի Փայտակարան կ:	
անտի ի ծովն Կասպից կ:	
ի Դունա ի Կողբ Մ.	ի Դունայ մղոն 50 ի Կողբ.

[1] Ա. Սեն-Մարտենը՝ «140 milles»:

[2] Նույնը՝ «20 milles»:

[3] Թիվ 1737 ձեռագիրն ունի Պարսկային (72 ե):

անտի ի Կոտագեւդն ՃԻ.	անտի մղոն 105 ի Կոտ գեղ.
անտի ի Տփղիք ՃԼ.	անտի մղոն 140 ի Տպխա.
անտի ի Հունարակերտ Հ.	անտի[1] մղոն 70 ի Հունարակերտ.
անտի ի Պարտաւ Ճ:	անտի մղոն 100 ի Պարտաւ:
Յերուսաղէմէ յԱղկսանդր քաղաք Շ.	Յարձակ յերուսաղէմէ մղոն 500 յԱղեքսանդրիայ.
անտի ի Պենապաւդիս Ռ.	անտի մղոն 1000 ի Պենտապոդիս.
անտի ի Տուպաւդիս ՅՄ.	անտի մղոն 300 ի Տրապոլիս.
անտի յԱփրիկէ ՌՇ.	անտի մղոն 1030 յԱֆրիկայ.
անտի ի Տեփտ Զ.	անտի մղոն 900 ի Սեպտ.
անտի յՈվկիանոս Ս:	անտի մղոն 1000 յՈվկիանոս ծովն անծանօթ»:

Կատարեցաւ մղոնաչափս»:

Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ոուսերեն իմ աշխատության մեջ («О торговле и городах Армении», էջ 171) այս գրության ժամանակը ես ենթադրել էի արաբական չրջանի վերջին դարերում, բայց հնարավոր էի համարել, որ նա կարող է հորինված լինել և ավելի առաջ: Ղ. Ալիշանն «Այրարատ»-ում (էջ 412-413) «Մղոնաչափք»-ի ժամանակի մասին հայտնել է հետևյալ կարծիքը՝

> «Հեղինակն թվի Անանիա Շիրակացին, եթե չիցե հնագույն քան զնա ոք, զի գրի և ընդ գործս սորա և ընդ Աչխարհագրության Խորենացւո, և ընծայի ի հեղինակն առ երկասիրող ոմն ի գործս Պապպոս Աղեքսանդրացւո և Պորփյուրի և նմանյաց. ինքն միայն ղչափ մղոնից նղնալ է. հետո Սարգիս ոմն հավելյալ է և զասպարեզն, որ է $^{1}/_{5}$ մղոնի և զնետաձիգն որ է $^{1}/_{60}$ ասպարիզի. իսկ մղոն համարյալ է 1000 քայլ, քայլն 6 ոտն, ոտն՝ 6 մատն և այլն»:

Ալիշանի այս նկատողության մեջ հետաքրքիր է այն, որ նա իր ձեռքի տակ ունեցել է մատենագրական վկայություններ, որոնց

[1] Ա. Սեն-Մարտինի՝ «de Tovin à Hounaragerd»:

մեջ մատնանշված է նրկ «Մղոնաչափք»-ի կապը Խորենացու Աշխարհագրության և Պապոս Աղեքսանդրացու գրություննների հետ: Այդ ցուցումները ըստ իս ուշադրության արժանի են: Ավելի քան հավանական է, որ Խորենացու «Աշխարհացոյց»-ը և այս «Մղոնաչափք»-ը ժամանակակից երկեր են և որ երկուսն էլ միասին չեն կարող վերագրվել Անանիա Շիրակացուն:

«Մղոնաչափք»-ի աշխարհագրական տեղեկությունները ո՛չ միայն չեն հակասում «Աշխարհացոյց»-ի տեղեկություններին, այլև գրեթե միշտ նման են ու համեմաշխ միմյանց: Երկու դրվածքի մեջ էլ հիշատակված են «Ակոդա» և «Բասրա» քաղաքները, որոնք առևտրական խոշոր կենտրոններ էին դառել VII դարից հետո. արաբական Մոսուլն անվանված է նրանց մեջ «Նինուէ». արաբական Մադաինը երկուսն էլ չարունակում են անվանել «Տիսպոն»: Իսկ ամենից կարևորն այն է, որ «Մղոնաչափք»-ի մեջ բացի «Պենտապոլիս»-ից, «Տրապոլիս»-ից և «Ափրիկէ»-ից հիշված են նաև «Սելտէ»-ն և «Ովկիանոս ծովն անծանօթ», որոնք հայոց հին մատենագրության մեջ հանդիպում են միմիայն «Աշխարհացոյց»-ում և Հայաստանում կարող էին հայտնի եղած լինել, հավանորեն, Պապոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւն»-ից:

Եթե մեր այս դիտողությունները հավանություն գտնեն՝ այդ դեպքում կարելի է ենթադրել, որ «Մղոնաչափք»-ը գրված պիտի լինի «Աշխարհացոյց»-ից հետո կամ «Աշխարհացոյց»-ի հետ միասին ո՛չ թե Շիրակացու, այլ Խորենացու ժամանակաշրջանում: Անհնարին չէ, իհարկե, որ Խորենացին «Աշխարհացոյց»-ի հետ միասին կարող էր գրած լինել նաև «Մղոնաչափք»-ը, որն ընծայվել է, ինչպես տեսանք, «առ երկասիրող ոմն ի գործս Պապայ Աղեքսանդրացւոյ». սակայն այս վերջին ենթադրությունը կարոտ է դեռ դրական ու ավելի պարզ ապացույցների:

14. **«Աշխարհացոյց»-ը և Կեղծ-Կալիսթենեսի Աղեքսանդրի վարքը:** — Բանասերները նկատած կլինեն, որ «Հունաբան դպրոցը և նրա զարգացման չրջաններն» իմ ուսումնասիրության մեջ քննության չի առնված Աղեքսանդրի վեպը. քննության չի առնված ո՛չ նրա խմբակցությունը հունարան թարգմանությունների հետ և ո՛չ էլ նրա թարգմանման ժամանակը: Դրա պատճառն այն է, որ այս թարգմանությունը, թեև իր բառապաշարով հարում է հաճախ Փիլոնյան խմբին, սակայն, ընդհան-

բապես, ազատ է Հունարան հին թարգմանութիւնների լեզվաքերականական խրթին անհարթութիւններից և ունի յարաբերական ոճ և լեզու, որ միանգամայն տարբեր են Հունարան երեք խմբերի լեզվից:

Աղեքսանդրի վարքի հայերեն թարգմանութիւնը, ինչպես հայտնի է, մանրակրկիտ կերպով ու գիտական ամենամեծ հմտութեամբ ուսումնասիրել է Հ[այր] Հ. Տաշյանն իր «Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի» աշխատութեան մէջ (Վիեննա, 1892): Հ. Տաշյանը, ինչպես և նրանից առաջ բոլոր գրեթե հայ և օտարազգի գիտնականները, համարել է Կեղծ-Կալիսթենես Խորենացու թարգմանութիւն՝ գրված V դարում: Իր ուսումնասիրութեան մէջ նա հանգամանորեն ցույց է տվել նաև այդ թարգմանութեան կապը Խորենացու «Աշխարհացոյց»-ի հետ:

Որ «Աշխարհացոյց»-ի մէջ Խորենացին օգտվել է իր թարգմանած Կեղծ-Կալիսթենեսից՝ այդ երևում է, նրա ասելով, հետևյալ համեմատութիւններից.

1. Խորենացին,– գրում է Տաշյանը,– «կիսակէ գիրքը [«Աշխարհացոյց»-ը] սա դիտողութեամբ. «Բայց անտի յանծանոթ երկիրն որ ինչ պատմի՝ անհավատալի է. զգաստ անծանոթք մարդակերպք կիսանձեայք երկդիմիք վնցձևոնիք վոկոտունք վիշապատուռնք կիսահավք կիսանղամք անգլուխք» (տե՛ս V, էջ 616, 21-25): Խնդիր չկա՝ որ այստեղ Խորենացի կ'անկնարկէ Կալիսթենեսի ՄԹ. ՄԻԴ. եւ ՄԾԸ. հատվածները, ուր Կալիսթենես դԱղեքսանդրոս կը չրջեցընէ դննելու «անծանոթ երկիրն» սահմանները, և անհերքելի առասպել ու երևակայութեան ցնորք չի մնար՝ որ չկուտե այս կտորներուն մէջ: Խորենացու այս ակնարկութեան մէջ գործածած բառերեն ոմանք (այսպէս «վնցձևոնիք, վոկոտունք, անգլուխք») Կալիսթենեսի մէջ գործածված բնիկ բառերն են: Մնացյալը ակնարկութիւն են Կալիսթենեսի առասպելաց.. (տե՛ս «Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ», էջ 80):

2. «Հնդկաց վրայ գրածներուն մէջ [«Աշխարհացոյց»-ում] կա սա խոսքը. «Ոմանք ի նոցանէ մարդկերք են, եւ այլք վայրենակերք. ոմանք ազեւորք են, եւ այլք կարճահասակք, տափարիթք, լայներեսք, սպիտակք. եւ ոմանք մերկիմաստակք (երկու օր. «մերկիմաստք») որք գործս անիրաւս ոչ գործեն, եւ զմարմինս կենդանեաց ոչ ուտեն» (տե՛ս V. 615, 3-8): Այստեղ

ակնարկված են Կալիսթենեսի ՄԻԱ-ՄԻԳ հատվածները, ուր կը պատմուի Աղեքսանդրի արշավկն յՈկսիդարկաս եւ «Մերկիմաստասէր (γυμνοσοφισταὶ) Բրաբմանաց» հետ խօսակցիկն և այլն: Այս մերկիմաստակ կամ մերկիմաստասեր բառը Խորենացի նախ գործածած է, որչափ գիտենք, և ինքը կերտած է նոյնն ըստ հոյն բնագրին: Ձիչտ նոյն բառն կրգործածեն նաև Փիլոնի Վարք իմաստանոց գրոց Թարգմանութեան մէջ. «Հնդկաց մերկիմաստակացն՝ զոր ծերութեան խարոյկ կուտեալ՝ դիներևոս այրել» (տե՛ս «Ուսումնասիրութիւնք», էջ 82-83):

Ըստ իս Խորենացին այդ բառը ինքը չի կերտել, այլ առել է Փիլոնից, որի հայերեն հին Թարգմանութիւնները մեծ ազդեցութիւն են ունեցել Խորենացու լեզուի վրա:

3. «Ի վերջո կը հիչենք, – ասում է Տաչյանը,– օրինակ մ'ալ՝ որ անչուչտ կը ցուցընէ միանգամայն՝ թե Աչխարհագրութեան հնդինակն և Կալիսթենեսի Թարգմանիչը մի և նույն անձն է: Հոյնը պատմելեն ետքը անցլուխ մարդկան և այլ նմանյաց դևպերը և անոնց ծովեն ձուկ բռնել ծախելն Աղեքսանդրի զորաց՝ կը հավելու սա խոսքը (B միայն, C չունի). «Այլք (քաղևին) երկրեն վիչասունկ, որ ուներ լտերս քսան և հինգ»: Այս ὄδνον լատիներեն նույնպես hydnum կը կոչվի, և գաղղիերեն՝ hydne, որուն ուրիչ մեկ տեսակը urchin, rignache (hydnum repandum), և երկրորդ տեսակ մը՝ érinace (hydnum erinaceum) և գերմաներեն Stachelpilz (ասկե առյալ է «վիչասունկ»): Արդ այս բառը բոլորովին նոր բառով մը Թարգմաներ է Կալիսթենեսի հայ Թարգմանիչն, այսինքն՝ «գևրևրի». բառ մ'որ առաջին անգամ հոս կը գործածվի: Բայց ոչ միայն իրեն հատուկ է այս Թարգմանութիւնն, այլ և հավելված մ'ալ կգներ է Թարգմանիչը՝ թե այս «գևրևրին» յուր հայրենի երկրին մեջ կը գտնվի: Այս նչանակալից խոսքն է. «Եւ յերկիր (յերկրէ) գևրևրի՝ որ առ մեզս լինին, որ ունէր լտերս քսան և հինգ, քաղցին և ետուն մեզ» (տե՛ս «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ, 1842. ՄԹ, էջ 127): Թե ինչ տեղ կհասկնա հնդինակ-Թարգմանիչը «առ մեզս» ասութեամբ, կ'իմացնեն հետո, այսինքն՝ յուր Աչխարհագրութեան մեջ գրելով «Սիւնիք... լինի ի նմա մուրտ եւ գևրևրի եւ նուռն, եւ ամուր տեղիք» (V. 609, 12-13):

Հ. Տաչյանի այս դիտողութիւններից առաջինը ցույց է տալիս միայն, որ «Աչխարհացոյց»-ի հնդինակն օգտվել է Կալիսթենեսի հայերեն Թարգմանութենից, սակայն երրորդը հավանական մի նչան է, անչուչտ, որ այդ Թարգմանութեան հնդինակն է ինքը Խորենացին:

Ավելորդ չեմ համարում մնջ բերել նաև իմ նկատած մի քանի կարևոր նմանությունները:

1. Բացի Տաչյանի մատնանշած վերոհիշյալ բառերից ուշադրության արժանի են նաև հետևյալ հաղվագյուտ ու նման բառերը.

ա. «որնգեղջևր» V. 598, 11, «որնգեղջիւր» S. 20, 70 և «ըորնգննեղջևր» Կալիսթ. Միէ, էջ 150 (Վենետիկ, 1842), «որնկեղջևրք» ՄԻԴ, էջ 142.

բ. «ժամադիտական, ժամադիտակ» V. 587, 12: S. 6, 22, 28 և «ժամադէտ» Կալիսթ. Ը, էջ 5.

գ. «տեղագրութիւն» V. 589, 17. S. 7, 27 և «տեղագրեմ» Կալիսթ. ԶԱ, էջ 38 և ԶԵ, էջ 40.

դ. «Հաւք ճարակաւորք» S. 30, 4 և Կալիսթ. ԻԳ, էջ 12:

2. Յո. Մարկվարտի ասելով՝ «Աչխարհացոյց»-ի հեղինակը Խուժաստանի «Շուշանիկ» անունը (S. 41, 6) կերտել է ինքը «Շօշան» քաղաքի անունից, ի նկատի ունենալով հունարեն Σουσιανὴ և Σοῦσα անունները[1]: Հետաքրքիր է, անշուշտ, որ Կալիսթենեսի Աղեքսանդրի վարքում ևս նույն աչխարհաչրջանի համար գործ է ածված «Շուշանաստան» անունը (ՄՀԴ, էջ 180):

3. Հ. Տաչյանը մատնացույց է արել (տե՛ս «Ուսումնասիրութիւնք», էջ 189–190 և 224), որ Կալիսթենեսի թարգմանիչը պահել է երբեմն հունական հոլովման վերջավորությունները. օրինակի համար «զԹրասիլէոնտա», «զԱնտիփոնտա» և այլն (= Θρασιλέοντα, Ἀντιφῶντα հայցական): Նույն սխալները հանդիպում են երբեմն նաև «Աչխարհացոյց»-ի մեջ. օրինակ՝ «զՊղայիդա» (V. 586, 9. Հունար. τὴν Πλειάδα, հայցական):

Այս բոլոր համեմատությունները, միասին առնված, տպավորություն են ստեղծում, որ ո՛չ միայն «Աչխարհացոյց»-ը, այլև Աղեքսանդրի վարքի թարգմանությունը, հավանական է վերագրել միևնույն թարգմանչի:

Կարևոր այս ենթադրության դեմ հիմնական առարկությունը կարող է այն լինել, որ «Աչխարհացոյց»-ը վերև մենք համարեցինք IX դարի գրվածք, իսկ Աղեքսանդրի վարքը համարվում է V

[1] Տե՛ս «Ērānšchahr», էջ 144:

դարի երկ՝ Թարգմանված Սերեոսից և Փարպեցուց առաջ: Արդ՝ ճի՞շտ է արդյոք ընդհանրացած այդ կարծիքն Աղեքսանդրի վարքի Թարգմանման ժամանակի մասին: Ինձ թվում է, որ ճիշտ չէ:

Աղեքսանդրի վարքի հայերեն Թարգմանության մեջ Արածանի գետի մասին կա հետևյալ տեղեկությունը (ՃԾԸ, էջ 89)՝

> «և ընդ Արիակէ գնացեալ [Աղեքսանդր]՝ եկեալ հասանէր ի գետն Արածանի, որ հոսի ի Ծաղկաւէտ լերանցն Անդղայ զաւառին յակունէն եփրատայ հանդէպ լերինն Այրարատայ»:

Գերմանացի գիտնական Ա. Բաումգարտները մատնանշել է, որ Սերեոսը ևս ունի համապատասխան մի հատված, որն առնված է, նրա կարծիքով, կալիթենեսի հայերեն Թարգմանությունից (տե՛ս «Ueber das Buch die Chrie», ZDMG, 1886, III, էջ 504).

> «Ապա եկն Սենիտամ Խոսրով, և զաւրն յունաց գումարեալ նստան ի Ծաղկոտանն՝ մերձ ի գետն՝ որ կոչի Անգղն, ընդ որ անցանէ գետն Արածանի (Սերեոս, ԻԲ, էջ 74):

Այս հատվածները բերված են նաև Հ. Տաչյանի ուսումնասիրության մեջ, որը համամիտ է Բաումգարտներին և կարծում է նույնպես, որ «Սերեոսը կարղացեր է այս Թարգմանությունը» («Ուսումնասիրութիւնք», էջ 42-43): Սերեոսի մոտ Տաչյանը մատնացույց է արել բացի այդ նաև մի ուրիշ նման հատված: «Նույնպես չատ նման են, — ասում է Տաչյանը,— Սերեոսի հրովարտակի մը մեջ Խոսրովա բերան դրած խոսքերը Դարեհի առաջին նամակին առ Աղեքսանդր, այնպես որ կարծես Սերեոս այս վերջնույն համեմատ գունավորած է առաջինը» (տե՛ս Սերեոս, ԻՋ, էջ 90-91 և «Պատմ. Աղեքս.», ՃԳ, էջ 49-50):

Ա. Բաումգարտների և Տաչյանի այս դիտողությունները, որոնցով նրանք կամենում են ապացուցել, թե կալիթենեսի հայերեն Թարգմանությունը գրված է եղել Սերեոսից առաջ՝ ըստ իս ավելի քան կասկածելի են:

Բաումգարտների դիտողությունը մի պարզ նյութմացություն է, որովհետև Սերեոսի և Աղեքսանդրի վարքի «Ծաղկոտան» և «Անգղ»-ի մասին վերոհիշյալ տեղեկություններն իրենց բովանդակությամբ իրարից հիմնովին տարբեր են: Իսկ Տաչյանի

երկրորդ դիտողությունը, որ նա կարծիքարար է մեջ բերել, դուրկ է կարևորությունից, որովհետև մատնանշված հատվածների նմանությունները այնքան ազոտ են և աննշան, որ չեն կարող հիմք ծառայել նրբակացության:

Բանասերների երկրորդ առարկությունը, անչուշտ, այն է, որ Աղեքսանդրի վարքի թարգմանությունը պարզ ակնարկված է Ղազար Փարպեցու պատմության մեջ: Խոսելով վրաց Վախթանգ թագավորի խորամանկության մասին՝ Փարպեցին ասում է (Տփղիս, 1904, էջ 132-133)՝

> «Դարձեալ լրտես տայր արձակել արս ի գնդէն Վրաց և Հայոց. որք իջեալ ի տեղիս ինչ դաչտացն՝ տայր երևեցուցանել լոյս կրակաց բազմաց և կոճեղս ծառոց դիմեալս այրանմանս, ըստ խարէութեան Մակեդոնացւոյ Աղէքսանդրի»:

Այս ակնարկած տեղն է Կալիսթենեսի ՃՀԳ հատվածը (էջ 96)՝

> «քանզի որք անդ արածանէին հօտըն՝ կորզեալ և ի բաց ևհան արօտականս. և ի ծառոցն ոստս հատեալ կապեաց ի վերա չորքոտանեացն, և գէնի գօրականին գնային հօտըն, և ծառըն քարշէին ի վերայ երկրին և գհողն գամենայն ի վեր կոյս հոսեալ յուղէին սաստկութեամբ, և եղանէր փոշին մինչև ի լեառն յՈղիմպոս»:

Համառոտ խումրն ունի այստեղ նաև հետևյալ հավելվածը (էջ 96, ծան. 1)՝

> «կորովամիտն Աղեքսանդրոս ըմբռնեալ այծս բազումս և ջահ վառեալ յեղջերան ի գիշերի ցոյց առնէր ի բացեայ՝ կարծելով բազում գումարտակս լրտեսաց. և ի ցերեկի ըմբռնեալ գհօտն որ անդ արածանէին **յեվն**»:

Ընդարձակ խումրը ևս ունի այս հատվածը, սակայն ուրիշ տեղ՝ ՄԹ, էջ 122:

Հ. Տաշյանը Փարպեցու մոտ մատնացույց է արել նաև հետևյալ հատվածը, որը, նրա կարծիքով, կարող է քաղված լինել Աղեքսանդրի վարքից՝

> «բայց եթէ յորժամ մէր մչակք քաջ սուր մանգաղաւ և գերանդեաւ գխոտ հարկանիցեն (ԶԸ, էջ 159):

Համմտ. Կալիխթենես, ՃՁԸ, ԿՂ 105՝

> *«և պերանդիքն յընթանալ կատացն հնձվին պրազմահոծ պարսիկն որպէս յարտորայս գհասկս մչակքն հնձիցեն»:*

Մնջրերված հատվածների համեմատությունից երևում է, իրոք, որ Փարպեցին ծանոթ է եղել կամ Կալիխթենեսի հունարեն բնագրին և կամ նրա հայերեն թարգմանության: Դժվար չէ նաև կռահել, որ Կալիխթենեսի հնագույն այդ խմբագրությունը տարբեր է եղել այժմյան հայերեն խմբագրությունից:

Առաջին իսկ հայացքից նկատելի է, որ Փարպեցու վերոհիշյալ հատվածները հայտնապես զանազանվում են մեր ձեռքը հասած Կալիխթենեսի վկայություններից: Փարպեցու մոտ ասված է՝ «տայր երևեցուցանել լոյս կրակաց բազմաց», իսկ համառոտ խմբի բնագրում՝ «ջահ վառեալ յեղջերան ի գիշերի ցոյց առնէր ի բացեայ»: Փարպեցին ունի՝ «կոճեղս ծառոց դիննալս այրանմանս», իսկ հայերեն ընդարձակ բնագիրը՝ «եւ ի ծառոցն ոստս հատեալ կապեաց ի վերայ չորքոտաննացն»: Փարպեցին ունի՝ «յորժամ ժիր մչակք... զխոտ հարկանիցեն», իսկ այժմյան հայերենը՝ «որպէս յարտորայս գհասկս մչակքն հնձիցեն»: Այս տարբերություններն իսկ մի պարզ ակնարկ են, որ Փարպեցու հատվածները կարող են ծագած լինել ինչ որ այլ աղբյուրից:

Միանգամայն հնարավոր է ու հավանական ըստ իս, որ Փարպեցին կարդացած է եղել Կալիխթենեսի հունարեն բնագիրը և վերոհիշյալ նրա վկայությունները քաղված են ո՛չ թե V դարի Կալիխթենեսի հայերեն թարգմանությունից, այլ հունարեն բնագրից: Որ Փարպեցին իր ձեռքի տակ ունեցել է հունարեն երկը, որոնցից նա օգտվել է՝ այդ երևում է նրա Թղթի հետևյալ վկայությունից (տե՛ս «Ղազարայ Փարպեցւո, Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Տփղիս, 1904, ԿՂ 169)՝

> *«Զի անգամ և զհոռոմ գրեանդ ոչ եւոեն զկնի իմ. որք կան այդր ընկեցեալ ի կերակուր ցեցոյ. բայց արդեօք կարդացեալ լուսաւորիցի՞ն ի դոցանէ բնակեալքդ ի տեղւոջդ, և կամ դայլս լուսաւորիցե՞ն»:*

Հայր] Ն. Ակինյանի ենթադրությունը, որ «Հոռոմ գրեանք» այս հատվածում «ասացվածք մը կը թվի, որով կիմանային ժամանակակիցները Հունաստանեն ներածված հայ գրչագիր-

ներն ու թարգմանությունները» (տե՛ս «Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը», Վիեննա, 1932, էջ 63), մի թյուրիմացություն է, անուշադրություն, որ հակասում է Փարպեցու պարզ ու որոշ վկայության:

Որ Կղզծ-Կալիխենեսի Աղեքսանդրի վարքի մեր ձեռքը հասած թարգմանությունը չի կարող և ո՛չ մի դեպքում գրված լինել V դարում, ինչպես այդ ենթադրել են Տաչյանը և Ակինյանը՝ այդ պարզ երևում է նրա լեզվի մանրազնին քննությունից: Լեզվական իմ դիտողություններն անհրաժեշտ եմ համարում մեջբերել ընդարձակ կերպով, որովհետև նոր այս եղրակացությունը հիմնովին խախտում է ընդհանրացած հին կարծիքն Աղեքսանդրի վարքի թարգմանման ժամանակի մասին և խիստ կարևոր է հայոց լեզվի ու մատենագրության պատմության համար:

Լեզվական իմ նկատառումները հետևյալներն են.

ա. Աղեքսանդրի վարքի թարգմանը, ծանոթ լինելով Հունարան դպրոցի հնագույն երկերին, գլխավորապես, Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանություններին, մեծ չափով օգտվել է այդ թարգմանությունների հատուկ բառապաշարից: Այդ բառապաշարը, որ չի հանդիպում V դարի մատենագրական երկերում, այնքան շատ է Ալեքսանդրի վարքի թարգմանության մեջ, որ ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ այդ թարգմանությունը գրված է վերոհիշյալ թարգմանություններից հետո: Այդպիսի առանձնահատուկ բառեր են (տե՛ս «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ, 1842).

1. Վաւաչ, վաւաչամոլ 4. Նկս. ծն. և Խոր. Ա. 15. 17, էջ 48 և 55. վաւաչոտ, վաւաչոտական Պիտ. 566, Փիլ. իմաստն. Նոննոս 81, վաւաչոտութիւն Պիտ. 449, 467, վաւաչանալ Փիլ. իմաստն. Խոր., Բ. 63, էջ 195 և այլն.

2. վրդովել 13. 134. Փիլ. իմաստն. Խոր., Գ, 50 և 68. Ջրբ. կաթ. և այլն. վրդովումն, վրդովութիւն, Պիտ. 357. Փիլ. բագն. և իմաստն. Խոր., Հռիփսիմ. վրդովասէր Պիտ. 425, վրդով Թր. 21.

3. ամենագան 40. Պիտ. 343. 387. Փիլ. Խոր. Գ. 62, էջ 344.

4. չիչք 17. Փիլ. լին. Բ. 24, էջ 106.

5. տինա 33. Պիտ. 342. Փիլ. նկս. Բ, էջ 110. Փիլ. Լիւս., էջ 162. Իրենն. Հերձ., էջ 207, Ներ. Պորփ., էջ 234 և այլն.

6. չարահալած 43. Փիլ. լին. Գ, 10, էջ 182.

7. պոռոտախօս 57. 132. պոռոտող 132. պոռոտ. Փիլ. նկս. Բ. 77. պոռոտարան Գիրք. Թղթ. 39. պոռոտարան Արծր. II. Գ, էջ 87.

8. տաղ 45. 66. Թր. 2. Պետ. 359. Փիլ. լին. Դ. 2, էջ 245. Փիլ. տնտսակ. Դ-Պորփ. 253. Նոննոս 57 և այլն.

9. խաննչ 77. Փիլ. լին. Դ. 183. Պետ. 350. խաննչութիւն Պետ. 343. Ար. Առաք. 633. խաննչանալ Փիլ. լին. Դ, 52, էջ 287 և այլն.

10. արդարակ 122. Փիլ. կլ. Ա, 1. Պետ.

11. ճղփիւն 126, ճղփուման Փիլ. Լիւս., ճողփուման Փիլ. Յովն., ճողփիւն Արծր.

12. իշխագլխութիւն 151. Փիլ. կլ. Բ. 51. Փիլ. իմաստն., բազն և ժ բան.

13. վրիժակ 115. Պետ. 384. Փիլ. Լիւս., էջ 159. Փիլ. քհ. ժր.

14. մերկիմաստասէրք 135. 161. մերկիմաստակք Փիլ. իմաստն. Խոր. Աշխ. (Վենետիկ, 1843), էջ 615. մերկիմաստուն՝ Խոր. Աշխ. (Հրատ. Սուքրյանի), էջ 43.

15. նախահայր 42. 66. Պետ. 401, 415. Տիմոթ. 194. Փիլոն.

16. ամենապատիկ 45. Պետ. 423. Փիլ. Ած. աղբ. Խոր. Բ. 88, էջ 238.

17. քաջօրէն 48. Փիլ. իմաստն. Խոր. Գ, 26, էջ 287.

18. քաջալաւութիւն 106. Պետ. 357. Փիլ., քաջալաւագոյն Ած. աղբ. և այլն.

19. քաջախառնութիւն 44. Փիլ. իմաստն.

20. բարերախտիկ, բարերաստիկ 50. 137. 160. 167. Պետ. 349. Փիլ. Խոր. Գ. 48, էջ 319.

21. թմբիւն 160. Փիլ. իմաստն.

22. ճնմարան 68. Փիլ. լին. Գ. 16, էջ 188. Սահմ. 194. Դ-Պորփ. 280. Խոր. Գ. 61, էջ 343. Առ որս և այլն.

23. յանձնկալութիւն 83. Փիլ. լին.

24. օձուտ 89. Փիլ. այլար.

25. կարուիւն 96. Տիմոթ. 78. ՅՊէր. 533. Դ-Պորփ., անկարութիւն Պետ. 401, Փիլ. լին. Գ. 2, էջ 168. Փիլ. այլար. Ար. Ստ. 366. Վերլ. 575 և այլն.

26. պարսամ «ոստնուլ» 102. Փիլ. Յովն.

27. աւաղ 105. Խոր. Բ. 13, էջ 124. 125. Գ. 68. Պետ. աւաղական Թր. 33. աւաղումն Փիլ. լին. և այլն.

28. պապկայ 150. Փիլ. Լիւս. 128.

29. առնապատկեր 149. Փիլ. նկս., էջ 34. Խոր. Բ. 12, էջ 122, բայց անդրի, անդրիանդ Նոն. 24. 70. 71. այրաձև Ներ. Պորփ. 238.

30. արգելաւորութիւն 183. Փիլոն ստեպ.

31. նօնուղէչ 169. ուղէչ Պետ. 466. Փիլ. քաջուղէչ Փիլ. լին. Ա. 9. Պետ. 448.

32. այրասպան 1. Պիտ. 403. Փիլ. նկ. և լին. այրասպանել, այրասպանութիւն Փիլ. ժ բան և լին.

33. քաղաքավարութիւն 48. 81. Պիտ. 357, Փիլ. լին. Դ. 135, ԼՂ 347. Փիլ. նկ., ԼՂ 80. Սահմ. 172. Իր. Հնդ. 30. Տիմ. 248. Նոն. 18. Ար. Աչխ. 624 և այլն.

34. գեղեցկավայելուչ 11. Փիլ. լին. Դ. 15, Պիտ. և այլն.

35. երաժշտականութիւն 15. 71. Փիլ. լին. Գ, 3, ԼՂ 173. Փիլ. նկ. և այլար. Պիտ. Պէր. 545 և այլն.

36. ժամիմ փիս. ժպտիմ. 25. Փիլ. իմաստն.

37. ծամածուռ 47. ծամածռել ՅՀ. իմ. Պաւլ., անծամածուռ Փիլ. իմաստն.

38. վարկանեմ 49. 51. Խոր. ստեպ. Պիտ. 342. Փիլ. Գիրք Թղթ. 22. 33. Սահմ. 121. Նոն. 37. Առ որս և այլն.

39. խոխոջ 22. ըստ Նոր Հայկազեան բառարանի համապատասխանում է «կոկոզ» բառին. տե՛ս «կոկոզավիզ» Դավիթ Հց. իմ., «կոկոզանալ, կոկոզիլ» Փիլ. լին., տես. և Լիւս., «կոկոզարանել» Արծր.

40. աստուածազն 41. աստուածազան Տիմոթ. 63. 83 և այլն. Փիլ. Պիտ. Զքր. Կաթ. և այլն.

41. ամէնժողով 162. ամենաժողով Փիլ. ժ. բան և այլար.

42. դարանապետ 69. Փիլ. ստեպ.

43. արդեան 94. Պիտ. Փիլ. ժ. բան և եկ. Խոր. Գ, 48, ԼՂ 319.

44. յղկել 99. Փիլ. ստեպ. Առ որս և այլն.

45. նուագաւոր 65. Փիլ. Պիտ. և այլն, նուագաւորագոյն Փիլ. տեսակ.

46. նուագերգութիւն 71. Պիտ. 369. Առ որս. նուագերգեմ Պիտ. 537.

47. նախիմացութիւն 18. Փիլ. նկ. 12 և ստեպ. նախիմացական Փիլ. նկ. 12.

48. ծննդարան 5. ծննդարանեմ Փիլ. լին. Ա. 82. Նոն. 11. Խոր. Ա. 1, ԼՂ 7. ծննդարանութիւն Ած. յայտ. Շիր. և այլն.

49. մանկավարժ 15, Պիտ. 343. Փիլ. Լիւս. 151.

50. որակութիւն 105. Պիտ. 464. Իր. Հնդ. 171. Տիմոթ. 324. Սահմ. 168. Ներ. Պորփ. 235. Ար. Ստ. 386. Յամբ. Ստ. 410. Դ Պորփ. 324 և այլն:

Աղեքսանդրի վարքի թարգմանութեան մէջ այս հիսուն բառը, որ չեն հանդիպում V դարի երկերում և Փարպեցու մոտ, կազմում են Պիտոյից – Փիլոնյան խմբի բառապաշարի միայն մի մասը: Ելե-

վական մեր դիտողությունները, եթե անգամ նրանցից որևէ մեկն առարկելի համարվի, այնուամենայնիվ իրենց ամրողջությամբ բավարար կերպով լուծում են Աղեքսանդրի վարքի թարգմանության ժամանակագրական մութ խնդիրը և ապացուցում, որ այդ թարգմանության ժամանակը չի կարելի ննթադրել Փարպեցուց առաջ V դարում:

բ. Հունարան դպրոցի խորթ նախադրյալները և նորակերտ բարդությունները, ինչպես նկատել է այդ և Տաչյանը («Ուսումնասիրություններ Ստոյն-Կալիսթենեսայ», էջ 204), պատահում են նաև այս թարգմանության մեջ: Այդպիսի բարդություններ են՝

1. չաղկապեմ συνδέω 7. Թր. բերակ. 35. Պէր. 508. Ար. Աչխ. 624. չաղկապ σύνδεσμος Փիլ. նխ. Բ. էջ 83. Իրեն. Հերձ. 158. Պէր. 489. Դ-Պորփ. Վերլ. և այլն.

2. չաղապատեմ 36. Փիլ. լին. Դ. 19, էջ 259. Փիլ. Սամփս., էջ 567. 568. Իրեն. Հերձ. 67. 165 և այլն.

3. բացակուսր ἀπόκοπος «կուրտ» 14. տե՛ս Հ. Տաչյան, Ուսումնաս., էջ 200, ծան. 1.

4. Համիչխան ὁμοκράτωρ 19. Խոր. Գ. 66, էջ 353.

5. վերապրոթիեն 36. վերապրեմ Պիտ. 545. Փիլ. իմաստն. Իրեն. Հերձ. 37. Տիմոթ. 3. 299. Նոննոս 24. Խոր. Ա. 16, էջ 54. Գ. 51, էջ 323.

6. հակառակամարտ 72. 103. 134. Պիտ. 351. Փիլ. լին. Բ. 36, էջ 115. Սամփս., էջ 565. Էլիաս Ստ. 35.

7. անդրադարձութիեն 93. 116. Էլ. Ստ. 91. անդրադարձիլ Թր. բեր. 19. Պիտ. Սահմ. 144. Դ-Պորփ. 266.

8. արտահանեմ 159. Սահմ. 161. 165 և այլն.

9. գերազանցեմ 167. Պիտ. 347. Տիմ. 97. Յամբլ. Ստ. 417. Խոր. Գ. 67, էջ 356. գերազանցութիեն Փիլ. Եվ. Ա. 5, էջ 451 և այլն.

10. գերախանչ 174. Փիլ. լին. Գ. 25, էջ 196. Փիլ. Ժ. բան.

11. ներհակ 185. Տիմ. 160. Պէր. 475. Յամբլ. Ստոր. 413. 417. Նոննոս 64. Ար. Աչխ. 611. Ար. առ. 629. Էլ. Ստ. 103.

12. տարապատական 37. Գիրք. Թղթ. 22:

Աղեքսանդրի վարքի թարգմանությունն ունի նաև հետևյալ բազադրված բառերը, որոնք ինձ չեն հանդիպել ո՛չ միայն Հունարան դպրոցի թարգմանություններում, այլև մատենագրական մյուս երկերում.

13. չրջագրեմ, էջ 40.

14. ներքնագիր, էջ 42.

15. վերագալուստ, էջ 92.
16. ընդկանդնեմ, էջ 100. 106.
17. չրջաչափութիւն, չրջաչափումն, էջ 162, 168.
18. յարայիչելի, էջ 163:

Վերոհիշյալ հունարան նորակերտ բաղադրությունները մի պարզ ապացույց են, անշուշտ, որ Աղեքսանդրի վարքը չէր կարող թարգմանված լինել ո՛չ միայն V դարում, այլև VI դարի առաջին կեսում՝ Պիտոյից - Փլոնյան խմբի թարգմանությունների ժամանակաշրջանում: «Հունարան դպրոցը և նրա գարգացման չրջանները» իմ ուսումնասիրության մեջ (էջ 115) ես արդեն մատնացույց էի արել, որ «ներհակ» բառը կազմվել ու առաջին անգամ գործածվել է Պիտոյից-Փլոնյան խմբի թարգմանություններից հետո:

գ. Հ. Տաչյանի կարծիքով, Աղեքսանդրի վարքի թարգմանության մեջ մի չարք բառեր, որոնք գտնվում են միայն «Հետնոց քով» և կարող են թերևս կարծվել նորագույն բառեր — ինչպես «պիպուած բաստի» (էջ 25), «լորտու» (էջ 20), «ընդկողմնեալ» (էջ 101) և այլն — Կալիսթենեսի վկայությամբ ստանում են մեծ հնություն (տե՛ս «Ուսումնասիրութիւնք», էջ 202): Ինձ թվում է, որ այս ենթադրությունը հավանական չէ: Կալիսթենեսի թարգմանության մեջ թե՛ այդ և թե՛ նման բառերը, որոնք գործ են ածված, գլխավորապես, VII-IX դարերի մատենագրական երկերում, ըստ իս, հավանորեն, նոր են, ինչպես և ինքն այդ թարգմանությունը: Այդպիսի կասկածելի բառեր են՝

1. քուչտրնգեր 72. քուչտիկներ Վրդ. առ. 291. քուչտակիր Տաթև. տե՛ս Հր. Աճառյան, Արմատ. բառ.
2. սատակ 116. Սոկր. Ա. 36, էջ 103. Բ. 39, էջ 147 (= հուն. φιλός). Ոսկ. Հովհ. ր. 39. Թղթ. դաչ. և այլն.
3. ուժաւոր 97. Խոր. Ա. 10, էջ 33. ուժաւորութիւն Շիր.
4. աչտանակել «ցատքել և նստիլ ձիու վրա» 16. Խոր. Բ. 79, էջ 217 և Բ. 82, էջ 225, նաև Հովհ. Կաթ. «աչտանակել» վերոհիշյալ իմաստով չի հանդիպում IX դարից առաջ.
5. հանդիսել 25, գումարտակել 104 (ունի և Հովհ. Կաթ.) կարող են լինել նոր բառեր.
6. պատաջնեմ 125. Խոսր. 116. Նիւս. կազմ. տե՛ս Հր. Աճ., Արմ. բառ.:
7. խախանջեմ 125. չունի ՆՀԲ., տե՛ս «Արմ. բառ.».

8. աչխոյժութիւն 25. աչխոյժ. ՅՀ. իմ. պաւլ. Խոր. Գ, 8, ԼՂ 265. ունի նաև Պիտ. «բազդատութիւն մչակութեան և դինուորութեան» հատվածում (ԼՂ 485), որը, հավանորեն, հնագույն մասի վարժություններից չէ.

9. սրաւորնալ 110. մատենագրական հին երկերում չի հանդիպում անգամ «սրաւոր» բառը.

10. հարուստ «հետևակ». «տուեալ ամսոց ամսոյ առն հարստի ոսկիանակս երիս և հեծելոյ ոսկիանակս հինգ» 109. համմտ. Թովմա Արծր. Գ. 9, ԼՂ 174՝ «ունելով ընդ ինքեան զունդ հարուստ»: «Հարուստ» բառը «հետևակ» նշանակութեամբ, որ ուղիղ լուսաբանել է Տաչյանը («Ուսումն.», 192), չի հանդիպում հնագույն երկերում.

11. կիսախոզխոզ 28. 105. Խոր. Գ. 32, ԼՂ 296. Ասող. Գ. 7, ԼՂ 172.

12. բազմախոզխոզ 65. Խոր. Գ. 28, ԼՂ 290. Հովհ. Կաթ.

13. կոճ «վէգ». «տալով նրան ճակղարանս և կոճս, որով մակնդոնացւոց մանկունքն խաղան» 54. «կոճ» բառի իմաստը հնագույն երկերում տարբեր է.

14. ժամագէտ 5, ունի նաև Շիր. ժամագիտական, ժամագիտակ Խոր. Աչխ. (1843), ԼՂ 587. Սուքր. Հրատ., ԼՂ 6. նույն իմաստով գործ է ածվել հնում «ժամարաչխս» բառը, տե՛ս Վեցօր. ղ.

15. խաժակն 15. Դ Պորփ. 311. խաժակնութիւն Դ Պորփ. 309, իսկ «խաժ» Թրակացու քերականութեյան մեջ նշանակում է «հաստ, ստվար, թավ».

16. տեղագրեմ 38. 39. 40. Ասող. Բ. 1, ԼՂ 72, տեղագրութիւն Խոր. Աչխ. (1843), ԼՂ 589. Սուքր. Հրատ., ԼՂ 7.

17. պևևկ 102. «պևևկիւ» Ղևոնդ 14, ԼՂ 90.

18. նախկին 75. 157. Ար. Ստ. 363. Յամբդ. Ստ. 447. Պէր. 495. Ներ. Պորփ. 242. Խոսր. Սոկր. Հովհ. իմաստ. և այլն: Այս բառն ինձ չի հանդիպել հունարան երկրորդ չերտի թարգմանություններից առաջ.

19. Եոոտանի 63. Նոննոս, ԼՂ 10, իսկ «երևքոտնեան» Սոկր. Ա. 16, ԼՂ 44. «նռ» հունարան զպլորցի ածանց է և գործ է ածվել հաճախ ավելի ուշ չրջանի երկերում.

20. փրփրածին 67. ունի նաև Նոննոս, ԼՂ 7.

21. խծրծանք 90, թվում է ուշ չրջանի բառ. Հր. Աճառյանը սխալմամբ կարծում է, որ այս բառը գտնվում է միայն արդի գրականի մեջ. տե՛ս «Արմ. բառ.».

22. ջախեմ 91. Ղևոնդ. Հովհ. Կաթ. «ջախումն» Խոր. Բ. 46, ԼՂ

173. V դարի երկերն ունեն կրկնությամբ «ջախջախել».

23. ցուիարանութիւն 93. ցուիարան Շիր. Համամ առակ.

24. յոգնատարած 98. Անան. ևկ. Նար. մծր. «յոգն» առաջադիրը գրեթե չի հանդիպում V դարի երկերում.

25. գեղայարմար 108. ունի նաև Մագ. «գեղ» առաջդիրը հանդիպում է, գլխավորապես, հունարան և ավելի հաճախ հետագա երկերում.

26. ճախր. առնուլ — «զոր տեսեալ... զօրային Աղեքսանդրի, ճախր առեալ ճեմէին» 134. «քանդի հարեալ նիզակաւ՝ ճախր առեալ ի ներքուստ ի վեր առնոյր կաճեայն», Խոր., Դ, 9, էջ 267. «ճախր ի լեառն Վարագ» Թովմա Արծր., Գ. 20, էջ 254. «Հեծեալ ի ջորւոջ իւրում՝ ճախր առեալ ճեմէր» Հովհ. Կաթ.: Մատենագրական հնագույն երկերն ունեն «ճախրել».

27. լանջապան — «սոնապանօք և բարձրապանօք մորթեղինօք, և լանջապանօք զմարմինս իւրեանց պատէին» 140. լանջապահ Թովմա Արծր., Ա. 5, էջ 39. Հովհ. Կաթ. լանջապանակ Հովհ. Կաթ.: Հնագույն երկերում «լանջապան» և «բարձապան» բառերը չեն հանդիպում.

28. բարձրապան 145. տե՛ս նախորդ «լանջապան» բառը.

29. գաղանուտ 145. ունի նաև Խոր. Աշխ. (1843), էջ 597.

30. տաճարայարդար 27. ունի Անան, ևկեղ. այլն:

Եթե անգամ ապացուցվի, որ այս բառերից մի քանիսը գործ են ածվել հնագույն երկերում, թվում է ինձ, որ սրանց մեծագույն մասը համարվելու են մատենագրական հետին շրջանի բառեր, գլխավորապես, VII–IX դարերի:

դ. Աղեքսանդրի վարքի թարգմանության մեջ կան, ինչպես մատնացույց է արել Հ. Տաշյանը («Ուսումնասիր.», էջ 205–206), բազմաթիվ «ռամիկ ձևեր», որ նա համարում է հին և սովորական V դարի դրարարում: Ընդունելով սակայն, որ Աղեքսանդրի վարքն ուշ ժամանակվա թարգմանություն է և գրված է արաբական շրջանում՝ կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ ռամկարանութիւնները ո՛չ թե հին են, այլ արդյունք են, հավանորեն, լեզվի հետագա զարգացման:

և. Որ Աղեքսանդրի վարքը թարգմանված է արաբական շրջանում և ո՛չ V դարում՝ այդ երևում է ըստ իս, բացի վերոհիշյալ նկատառումներից, նաև այդ թարգմանության մի քանի հատվածներից, որոնց մեջ հանդիպում են արաբական բառեր: Այդ հատվածները՝ որ ուշագրության չեն առնվել՝ հետևյալներն են.

1. ՃՂԸ, ԿՂ 113՝ «Իսկ Աղկսանդրի բախտակից եղեալ և ի զուր զորովոյ չարժեալ լայր զառնապէս. և հրամայեաց Թափուտով [չորս օրինակ՝ Թարուտով կամ Թափուտով] բառնալ զմարմինն և Թաղել զնա որպէս պարտ էր զԹագաւոր Թաղել պարսկական օրինօք».

2. ՄՄԸ, ԿՂ 167՝ «և ոչ հաւատացեալ Թէ իցեն սեղմք կոածոյք [արձանքն Հերակլեայ], կամ եղև ինձ զոհս մատուցանել Հերակլի և ծակել զմի յարձանացն, և երևեցաւ ինձ համակ ոսկի. կամ եղև ինձ զարձյալ լնուլ զծակն, և զտաւ ծակուածն դի տարաւ ոսկիս հազար և հինգ հարիւր մտղալ [երկու օր. մԹխալ. երկու այլ մսղալ կամ մսխալ] որ Է դրամ մի»:

Առաջին հատվածի մեջ գործ Է ածված «Թափուտ» բառը, որը Տաչյանը համարում Է «հին ազատաղութիւն» հետևյալ իր բացատրության մեջ.

> *«Ուսումնասիրութիւնք», ԿՂ 247՝ «Այս բառն Է ոամկորէն (ճչղիվ ևս՝ արարերենի) «ԹափուԹ», որ զազաղ կը նշանակէ: Բաւական հին ազատաղութիւն մըն Է այս, այնպես որ նաև քիչ մ'ետքը (113,23) ուր Թ. 424 «դին» կ'ըսե, չորս օրինակը կը կրկնեն «ԹապուԹ» բառը»:*

Հր. Աճառյանն իր «Արմատական բառարանում» մատնացույց Է անում, որ Սեն-Մարտենը («Mémoires», II, ԿՂ 292) և Պատկանյանը («Матер.», I, 9) «Թափուտ» բառը մեկնել են իբրև փոխառություն արարերենից: Ինքը, սակայն կարծում Է, որ այդ «կարելի չէ, որովհետև հայ բառի գործածությունը հին Է». ուստի և նույն բառը նա համարում Է փոխառություն ո՛չ Թե արարերենից, այլ պարսկերենից (= պրս. tâbût, արար. tâbût «զազաղ»):

Հ. Տաչյանի ու Հր. Աճառյանի վերոհիշյալ բացատրությունների գլխավոր ու միակ հիմքը, անշուշտ, այն Է, որ նրանք Աղեքսանդրի վարքը ննԹադրել են հին Թարգմանություն: Ընդունելով այդ երկը նախարարական չրջանի Թարգմանություն՝ նրանք «Թափուտ»-ը համարելու էին, բնականաբար, կամ ընդմիջարկություն և կամ փոխառություն պարսկերենից:

Այս երկու կարծիքն Էլ ըստ իս ընդունելի չեն: Քանի որ լեզվական վերոհիշյալ մեր դիտողությունները վկայում են, որ

Աղեքսանդրի վարքը թարգմանված պիտի լինի արաբական չրջանում՝ միանգամայն հասկանալի է նրա մեջ արաբերեն «թավուտ» բառի գործածությունը: Այս բառը, որ պարսկերենում հանդիպում է նաև Ֆիրդուսու մոտ (I, 514, 1352, 1354, տե՛ս H. Hübschmann, Armenische Grammatik, էջ 153), թե՛ հայերենում և թե՛ պարսկերենում փոխառություն է, անշուշտ, արաբերենից, ինչպես այդ ճիշտ ենթադրել են Սեն-Մարտենը և Պատկանյանը:

Աղեքսանդրի վարքից վերև մեջ բերված երկրորդ հատվածն ունի, ինչպես տեսանք, «մտղալ» բառը, որ փոխառություն է դարձյալ արաբերենից և չի հանդիպում ո՛չ միայն մատենագրական հնագույն երկերում, այլև Անանիա Շիրակացու «Յաղագս կչռոց և չափուց» գրվածքում: Ավգերյանի վկայությամբ՝ Վենետիկի ձեռագրերներից Բ օրինակի հավելվածում միայն հիշվում է «մտղալ»-ը հետևյալ հատվածում՝ «մթխալն որ է դահեկան մի... մթխալն իղ կուտ է» (տե՛ս «Բացատրութիւն չափուց և կչռոց»), Վենետիկ, 1831, էջ 27 և 71): Այս հատվածը, անտարակույս, Շիրակացունը չէ, այլ ուշ ժամանակի հավելումն և ուրիշ գրչի: Որ «մտղալ»-ը կամ «մխթալ»-ը (= արար. miθqāl, տե՛ս Hübschmann, Arm. Gramm., էջ 271) արաբական բառ է՝ այդ անվիճելի է: Ըստ Աճառյանի (տե՛ս «Արմատական Բառարան») «մթխալ»-ը ծագում է արար. θql «ծանրութիւն» արմատից: Ուրեմն՝ այս բառի գործածությունը ևս Աղեքսանդրի վարքի թարգմանության մեջ հավանական մի նոր ապացույց է, որ այդ թարգմանությունը գրված է արաբական չրջանում:

Ուշադրության արժանի է նույն այս թարգմանության մեջ նաև հետևյալ հատվածը.

> Լե, էջ 18՝ «Զարմանք են դնախսիմացութեան վորձ առնուլ դՆեկտաներայ. զի այր եգիպտացի ի Մակեդոնիա նկնալ նյյաղական օրինօք պատանաց և թաղմամբ թաղեցաւ. և Աղեքսանդրոս որ մակեդոնացին էր, յեգիպտոս նկնալ մսրական թաղմամբ աստուածօրէն լինէր»:

Հ. Տաչյանը նկատել է, որ «մսրական թաղմամբ» խոսքերը չէին կարող գրված լինել V դարում: Նրա կարծիքով՝ «մսրական թաղմամբ» վիս. «եգիպտական» նոամուտ ոամկականութիւն է» («Ուսումնասիր.», էջ 216): Տաչյանի այս ենթադրությունն ևս ինձ թվում է վիճելի ու անհավանական: Ինչպես վերև մատ-

նանչված «Թավուտ» և «մտղալ» արաբական բառերը, նույնպես և «մարական» բառը, ո՛չ թե հետամուտ ընդմիջարկություններ են, այլ հավանական նշաններ, որ Աղեքսանդրի վարքը, ինչպես և Խորենացու «Աշխարհացույց»-ը, ուշ ժամանակի թարգմանություններ են:

Լեզվական վերոհիշյալ դիտողություններից անկախ հիշատակության արժանի է և այն, որ Աղեքսանդրի վարքը, ինչպես և Խորենացու «Աշխարհացույց»-ը և Պատմությունը, առաջին անգամ հիշվում են Թովմա Արծրունու Պատմության մեջ, որը հորինված է X դարի առաջին կեսում: Հակառակ բանասերների ենթադրության՝ ո՛չ Ղազար Փարպեցին և ո՛չ էլ Սերեոսը չէին կարող օգտված լինել Աղեքսանդրի հայերեն այժմյան վարքից, որովհետև այդ երկը, ինչպես տեսանք, ավելի ուշ շրջանի թարգմանություն է: Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն, հիմնվելով Խորենացու «Աշխարհացույց»-ի և Աղեքսանդրի վարքի վերև մատնանշված նմանությունների վրա, նաև ուշադրության առնելով այն սերտ կապը, որ ունի Կղզ-Կալիսթենեսը Խորենացու Պատմության հետ՝ կարող ենք միանգամայն հնարավոր ու անգամ հավանական համարել, որ Կալիսթենեսի մեր ձեռքը հասած հայերեն թարգմանությունը պատկանում է «Աշխարհացույց»-ի հեղինակ Մովսես Խորենացուն, որի Պատմությունը ևս գրված է, ինչպես կտեսնենք, IX դարում:

Բ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

15. Խորենացու Պատմությունը և «Աշխարհացոյց»-ը գրված են IX դարում՝ հայ վաճառականության զարգացման ու Հայաստանի տարանցիկ առևտրի վերակենդանացման շրջանում։ – *Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ռուսերեն իմ աշխատության մեջ մատնացույց է արված (տե՛ս «О торговле и городах Армении», էջ 133–140), որ արաբական տիրապետություն Հայաստանում, մինչև IX դարը, նպաստավոր չի եղել միջազգային տարանցիկ առևտրի զարգացման համար Հայաստանի վրայով։ Օմմայաննների և առաջին Աբբասյանների ժամանակ միջազգային առևտրական հարաբերությունները զարգանում էին մեծ չափերով բոլորովին այլ ուղղությամբ՝ ո՛չ թե Բյուզանդական կայսրության հետ Ասորիքի, Փոքր Ասիայի կամ Հայաստանի վրայով, այլ, գլխավորապես, Ջինաստանի, Հնդկաստանի, Սպանիայի և Հարավային Եվրոպայի հետ։*

Արաբական խալիֆայության ծաղկման ու բարգավաճման առաջին շրջանը, ինչպես ուղիղ դիտել է վ. Գուրկո-Կրյաժինը (տե՛ս В. Гурко-Кряжин, *Прошлое и настоящее Советской Армении, "Новый Восток", դիրք 16–17, էջ 206), համառ ու անվերջ կռիվների մի շրջան էր խալիֆայության արևմտյան՝ բյուզանդական սահմաններում։*

Այդ անդադար կռիվները և մշտական թշնամությունն անհնարին էին դարձնում Արևելքի առևտուրը Բյուզանդիայի հետ։

Հայաստանի տնտեսական բարեկեցության և տնտեսական զարգացման վրա միջազգային առևտրի այդ ընդհատումն ունենալու էր, անշուշտ, բացասական ազդեցություն, և հետաքրքիր է, որ արաբական տիրապետության սկզբնական շրջանում Հայաստանի տնտեսական կյանքում նկատելի է որոշ անչարժություն և անգամ հետընթաց։

Այս դրությունը սկսել էր փոխվել, ինչպես ցույց ենք տվել վերոհիշյալ մեր աշխատության մեջ, IX դարում։

774–775 թվերի նախաարաբական մեծ ապստամբությունից հետո, որ ազատալի հետևանքներ ունեցավ նախաարաբական Հա-

յաստանի համար, Բագրատունիներն հարկադրված էին թողնել իրենց հայրենի կալվածները Կոգովիտում և հեռանալ Հայաստանի լեռնային արևմտյան շրջանները: Այստեղ նրանք, դանվելով Բյուզանդիայի հովանավորության տակ, նորից զորեղացան, և IX դարի սկզբներում կարողացան հետզհետե տեր դառնալ ընդարձակ կալվածների ու նոր երկրների Հայաստանի ու Վրաստանի նաև դաշտային մասերում:

Բագրատունիների այս զորեղացմանը մեծապես նպաստում էին գահակալական կռիվները Հարուն ալ-Ռաշիդի մահից հետո, մահմեդական ամիրայությունների և աղանդավորների ապստամբությունները Հայաստանում և, մանավանդ, Բաբեկի մեծ ապստամբությունը 817–837 թվականներին: Խալիֆայության թուլացման և երկպառակությունների խոովահույզ հենց այս շրջանում, ինչպես վկայում է Վարդան պատմիչը, «Հանդիպեր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր տեղիս» (տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 77):

Նույն այս IX դարը միջազգային առևտրի զարգացման մի նոր շրջան էր Հայաստանում, որ սկիզբ էր դնում Բագրատունյաց Հայաստանի տնտեսական ու կուլտուրական բուռն և արագ վերակենդանացման:

Բագրատունիները, մնալով հավատարիմ արաբական խալիֆայության, ունեին միաժամանակ սերտ բարեկամական հարաբերություններ նաև Բյուզանդական կայսրության հետ: Նրանց երկիրը, որ Բարերդի ու Արտանուճի վրայով հաղորդակցություն ուներ բյուզանդական վաճառականական նավահանգիստների հետ, ո՛չ միայն խոշոր նշանակություն էր ստանում իբրև համաշխարհային առևտրի տարանցիկ ճանապարհ, այլև դառնում էր չեզոք մի կենտրոնավայր, տնտեսական մի բուֆեր, ուր խոշոր չափերով սկսում էր զարգանալ այդ առևտուրը:

Միջազգային այս առևտուրը խոշոր մի երևույթ էր, անչուշտ, որ չէր կարող չանդրադառնալ նախարարական Հայաստանի սոցիալական կազմակերպության, ինչպես և նրա կուլտուրական ու անգամ մտավոր կյանքի վրա: Ուշագրավ է այդ տեսակետից, որ հենց IX դարից սկսած կարելի է ննջաղրել ընդիկ հայ վաճառականության զորեղացումը, որն օտարազգիների հետ միասին գնակավարող դեր էր կատարում թե՛ տեղական և թե՛ համաշխարհային առևտրում:

Տնտեսական ու սոցիալական այս հեղաշրջումը կարևոր մի ազդակ էր ըստ իս, որ խթան էր հանդիսանում աշխարհագրության ընդլայնման և քաղաքական նոր ձգտումների ու նոր գաղափարախոսության առաջացման:

Ինձ թվում է, որ մատենագրության մեջ նոր այդ ձգտումները և գաղափարները բավական որոշ նկատելի են Մովսես Խորենացու երկերում, որը տագանդավոր արտահայտիչն է նաև Բագրատունյաց տոհմի իղձերի ու մտայնության:

Խորենացու «Աշխարհացոյց»-ը և վերոհիշյալ «Մղոնաչափք»-ը, որոնց մեջ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդված առևտրական ճանապարհների, նշանավոր վաճառատեղիների, դանադան երկրների բնական հարստությունների, արտահանվող ապրանքների ու անգամ նրանց գների մասին՝ իրենց բովանդակությամբ իսկ կապ ունեն միջազգային առևտրի հետ, որ Հայաստանում նորից սկսել էր զարգանալ IX դարում: «Աշխարհացոյց»-ի մեջ առաջին անգամ հիշատակված է նույնպես բնիկ հայ վաճառականությունը, որի մասին չկան հիշատակություններ նախորդ դարերի երկերում:

«Աշխարհացոյց»-ի այդ տեղեկություններից ավելորդ չեմ համարում մեջբերել հայ վաճառականության և նշանավոր վաճառատեղիների մասին հետևյալ հատվածները.

> ա. V. էջ 590, 4-6՝ — «Քանդի դյունականաւն և զկաստրականաւն մերոց իսկ արանց պատահաց չուրջ անցնալ. յորս վարկանիմ և հնդկայնոյն նոյնպէս լինել» (Հմմտ. նաև S. 8, 6-8).
>
> բ. S. 22, 12-14՝ — «Ունի [Բիւթանիա] եւ մայրաքաղաքս երկուս զՔաղկեդոն և զՆիկոմիդիա, որք ունին ընդ ինքեանս քաղաքս չորեքտասան, և եմպորիոնս բազումս, այսինքն քաղաքս ծովեզերայս, վաճառատեղիս» (Հմմտ. V. 600, 10-12).
>
> գ. S. 27, 29 — 28, 2՝ — «Ունի [Կողքիս, որ է Եգր] հինգ քաղաքս՝ Իանի, Կուտա, Ռոդիուպօլիս, Աթինա, Ռիզոն. եւ այլ բազում եմպորիոնս, այսինքն գեղաքաղաքս ծովեզերեայս, յորոց է Տրապիզոն (Հմմտ. V. 605).
>
> դ. S. 42, 28-31՝ — «Ունի [Սկիւթիա] աշխարհս հինգ, զՍոգդիանի՝ որ է Սագաստան, եւ զՍակէ. ընդ երկուսին են ազգ հնգետասան, հարուստք արուեստաւորք վաճառականք՝ որ բնակեն ի մէջ Թուրքստանի եւ Արեւից (առ)

Եմաւոն լևրամրն (Համմտ. V. 614, 23–25)».

Ն. V. 612, 6–8՝ – «Եւ Ն Պասրա ամննալից վաճառօք, և նկը նաւաց ի հնդկաց և յամննայն կողմանց արևելից».

Համմտ. նաև V. 612, 17–19. V. 616, 15–16. S. 46, 10–12 և այլն:

«Աչխարհացոյց»-ի թե՛ այս և թե՛ ուրիչ նման տեղեկութիւնները վերարերվում են ըստ իս բյուզանդա-արաբական առևտրին, որ սկսել էր զարգանալ IX դարում:

Թե ինչպիսի բարձր դիրք են ունեցել «Աչխարհացոյց»-ում հիշված հայ վաճառականները, նաև քաղաքացիները, Հայաստանի վերաբնակեցման այս շրջանում՝ այդ երևում Ն Խորենացու Պատմութեան հետևյալ հատվածից, որը կարևոր մի վկայութիւն Ն քաղաքացիների դրութեան մասին ո՛չ թե Վաղարչակ Թագավորի, այլ, հավանորեն, իր՝ Խորենացու ժամանակ.

> *«Հրաման տայ [Վաղարչակ], – վկայում Ն Խորենացին, – և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զզնդջկաց. և զնդջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի՛ կարի առ զնդջկօքն սկերճանալ, այլ նդրայրարար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ Ն չինութեան և խաղաղութեան կենաց պատճառք» (II, Ը, էջ 117–118):*

Ինչպես հայտնի Ն, Խորենացին իրրև պատմարան իր հմտութեամբ շատ ավելի բարձր Ն կանգնած, քան հնագույն հայ պատմիչները: Նա քննադատական վերարերմունք ունի դեպի հինը, պարսավում Ն հայոց նախկին թագավորների անիմաստութիւնը, անվանում Ն նրանց «անբան, թուլամիտ, վայրենի». նույնիսկ Սահակ-Մեսրոպյան շրջանի թարգմանչական արվեստը նա համարում Ն թերի ու անկատար: Խորենացու Պատմութեան քննադատական այս ուղղութիւնը, որ ունի բազմատեսակ արտահայտութիւններ, արդյունք Ն, հավանորեն, սոցիալական ու կուլտուրական այն հեղաշրջման, որ տեղի էր ունեցել IX դարում:

Լինելով փառաբանող ու հերոսացնող Բագրատունի իշխաններին՝ Խորենացին, ինչպես այդ պարզ երևում Ն նրա պատմութեան բովանդակութիւնից, ունի անտարակույս, հատուկ մի նպատակ՝ տրամադրութիւն ստեղծելու ի նպաստ նախարարական Հայաստանի միութեան և Բագրատունյաց թագավորութեան հաստատման: Քաղաքական նրա այս ձգտումն ու իղձը,

որ հակառակ էին նախաարարական կենտրոնախույս չրջաններին հակումներին, համապատասխանում են ըստ իս Բագրատունիների հովանավորության տակ դարգացող մեծ առևտրի չահերին: Այդ բազձանքները հասկանալի են, բնականաբար, վերակենդանացման IX դարում և միանգամայն անհավանական են Հայաստանի տնտեսական ու կուլտուրական հետաչրջման VII կամ VIII դարերում:

Խորենացու ուրույն աշխարհայացքը և նրա դաղափարախոսության կապը IX դարի վերածնության հետ այնքան կարևոր ու հետաքրքիր խնդիրներ են, որ կարող են նյութ ծառայել հատուկ ընդարձակ մենագրության: Մենք բավական ենք համարում այստեղ վերհիչյալ մի քանի նկատողություններ, որոնք ուչագրավ կովաններ են Խորենացու ժամանակի որոչման:

Ընդհանուր այս դիտողությունները, որոնք կարող են թվալ վիճելի կռահումներ, ինչպես կտեսնենք, հաստատվում են կարևոր նոր փաստերով, որոնք ուչադրության չեն առնվել նախորդ ուսումնասիրություններում.

16. **Խորենացու Պատմության IX դարի գործ լինելը ենթադրվել է նաև նախորդ հետազոտություններում:** *— Որ Խորենացու պատմությունը կարող է լինել IX դարի գործ՝ այդ ենթադրել են ինձանից առաջ ֆրանսական դիտնական Մ. Վ. Լակրոզը, Գ-ր. Խալաթյանցը, Ն. Ադոնցը, Ն. Մառը, իսկ վերջերս նաև Ն. Ակինյանը և Յո. Մարկվարտը:*

Դեռևս XVIII դարի առաջին կեսում Լա-Կրոզը միանգամայն ճիչտ կռահել էր, որ Խորենացու Պատմությունն ուչ ժամանակի գործ է: 1730 թվականի ապրիլի 24-ին Գուիլելմոս Վիտոնին գրած իր նամակում Խորենացու ժամանակի մասին նա հայտնել է հետևյալ կարծիքը՝

> *«Խորենացվո վրա իմ կարծիքս կ'ընթեռնուս ի ծանոթություն վիպասանական քերթվածի Կլայեցվոյն Ներսիսի: Միայն քանի մը խոսք ավելցնեմ: Կը համարիմ թե այդ Պատմությունը չարադրողը ապրած ըլլա ի միջոցի IX և X դարուց, հավուրս Բագրատունի իշխանաց, որ մեծ ազդեցություն ունեին հայնմ ժամանակի, և իշխանք էին բովանդակ Հայաստան աշխարհի» (տե՛ս* **Գ. Զարպհանալյան,** *Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության Արևմուտս), Վենետիկ, 1895, էջ 52. Համմ. «The saurus epistolici Lacrosiani», 1742-1746, հատ. III, էջ 281):*

Մ. Լա-Կրոզի այս կարծիքը չէր կարող հավանություն գտնել, որովհետև մինչև անցած դարի ութսունական թվականներն ընդհանուր տարածված համոզմունք էր, որ Խորենացին ապրել ու գրել է V դարում:

Ա. Գուտշմիդի և Ա. Կարիերի մերկացուցիչ ընույթ կրող նոր ուսումնասիրություններից հետո՝ Խորենացուն հնարավոր էր համարել իջեցնել IX դար նաև պրոֆ. Գր. Խալաթյանցը: Ռուսերեն լեզվով գրած իր ընդարձակ հետազոտության մեջ («Армянский эпос в истории Армении Моисея Хоренского», Москва, 1896, էջ 344) նա Խորենացու աղբյուր էր համարել Ղևոնդ Երեցի Պատմությունը և Խորենացու ժամանակը ննթադրել Ղևոնդից հետո՝ VIII դարի վերջերում կամ IX դարի սկզբում: Պետք է ասել, որ Խորենացու «բանագողություն»-ները Ղևոնդից հիմնված են նրա մոտ մի քանի սովորական բառերի կամ անուններն ու դարձվածքների նմանության վրա, ուստի և Խալաթյանցի թե՛ բոնաձիգ համեմատությունները և թե՛ նրա ընդհանուր եղրակացությունը վիճելի էին և կասկածելի:

Խորենացուն չատ ուշ ժամանակի մատենագիր էր ննթադրել նույնպես և պրոֆ. Ն. Ադոնցը հետաքրքիր իր մի հոդվածում, որ լույս էր տեսել 1901 թվականին (տե՛ս «Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского», «Визант. Времен.», 1901, հատ. VIII, №№ 1 և 2, էջ 41-42): Ադոնցի կարծիքով՝ Խորենացու Պատմությունը գրված է Բագրատունիների դորեղացման ժամանակ և Բագրատունյաց թագավորության հաստատումից առաջ: Այդ Պատմությունը, որ գերազանցապես քաղաքական է և նկարագրում է Հայկազանց և Արշակունիների թագավորության անցյալը, Ադոնցի ասելով, արդյունք է բարձր տրամադրության և քաղաքական մոտալուտ ազատության ակնկալման: Հիմնվելով իր այս դիտողությունների վրա՝ Ադոնցը Խորենացու Պատմության ժամանակը ննթադրում է VII դարից հետո և Բագրատունյաց թագավորության հաստատումից առաջ[1]:

Մովսես Խորենացու Պատմությունն IX դարի գործ է համարվում նաև վերջերս լույս տեսած Ակինյանի և Մարկվարտի ըն-

---

[1] Նույն կարծիքն է հայտնել նաև ակադ. Ն. Մառն իր «Кавказский культурный мир и Армения» աշխատության մեջ (Петроград, 1915) «взгляд Моисея Хоренского характеризует не реальность эпохи древнего царства,

դարձակ ուսումնասիրություններում (տե՛ս **Ն. Ակինյան**, *Մատենագրական հետազոտություններ, հատոր Գ., Վիեննա, 1930 և* **Jo. Markwart**, *Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar Abas und Ps. Moses Xorenathsi, Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930)։*

Ն. Ակինյանը վերոհիշյալ իր ուսումնասիրության երկրորդ մասը (էջ 127–291), ինչպես հայտնի է, նվիրել է Խորենացու և Ղևոնդ Երեցի նույնության հարցին։ Այդ հարցի մանրազնին քննությամբ նա հանգել է հետևյալ եզրակացությունների (տե՛ս էջ 286)՝

> *1. «Մովսես Խորենացի և Ղևոնդ մի և նույն անձնավորություններն են, ինչպես մի և նույն են Մովսես և Մար Արաս Կատինա»։*
>
> *2. Խորենացու «ուսումնասէր» և «բարձրագունից արժանաւոր գովութեանց» մեկնաբան այն Սահակ Բագրատունին է, որն «Անձևացյաց երկրին, այսինքն՝ Կորճայք նահանգին ընդարձակված սահմաններուն տերն էր 806–816 չրջանին»։*
>
> *3. «Մովսես ի գլուխ հանած յուր Պատմությունը Սահակ Բագրատունվո արքունիքը հավանորեն ի Կանգուար»։*
>
> *4. «Հայոց Պատմությունը հորինված է 806-ն ետքը, ոչ չատ ուշ քան 820, ուստի 810-ին մերձավորապես»։*

Ակինյանի այս ենթադրություններից և ո՛չ մեկը չի կարող ըստ իս համարվել հավանական և ընդունելի, որովհետև այդ ենթադրությունները չեն համապատասխանում այն կարևոր նոր մեր դիտողություններին, որ ներքև քննության են առնվելու։ Ակինյանի ուսումնասիրության մեջ ուշագրավ է միայն այն, որ նա ևս Խորենացու Պատմությունը համարում է չատ ուշ ժամանակի գործ։

Մարկվարտի ուսումնասիրության մեջ, որ նվիրված է, գլխավորապես, Բագրատունիների ճյուղագրության, չոչափված է նաև Մար Արասի և Խորենացու ժամանակի խնդիրը և նրանց ժամանակը որոշված է նույնպես IX դարում։

а современность историка, дающего идеализованное представление о первом аршакидском царе согласно национальным идеалам его времени, приблизительно VIII-IX-го века по Р. Хр.» (էջ 33).

Մարկվարտի դիտողություններն այս հատուկ խնդրի մասին, դժբախտաբար, բավարարաչափ հիմնավորված չեն, որովհետև հանգուցյալ հայագետը մտադիր է եղել վերադառնալ նույն խնդրին իր հաջորդ աշխատություններում (տե՛ս «Die Genealogie der Bagratiden», էջ 56 և 67):

Ինքնության ենթարկելով Մար Արասի և Խորենացու վկայությունները Բագրատունիների ճյուղագրության մասին՝ նա մատնացույց է արել այդ հեղինակների ժամանակը և մեջ է բերել հետևյալ իր եզրակացությունները:

1. Մար Արասի Պատմությունը գրված է Հակոբ Եղնացուց և Ղևոնդից հետո Տարոնում, «իշխանաց իշխան» Բագարատի արքունիքում, IX դարի առաջին կեսում (տե՛ս էջ 16 և 56):

2. Մար Արասը՝ Փառնավազյան Բագարատին նկարագրելիս՝ ի նկատի է ունեցել իրեն կաղապար «իշխանաց իշխան» այս Բագարատին:

3. Մար Արասի վկայությունը, որ Արշակ արքան Փառնավազյան Բագարատին նշանակել էր «իշխան և հրամանատար ամենայն թագաւորութեանն», համարում է միայն Տարոնի «իշխանաց իշխան» Բագարատին, որը Հովհաննես Կաթողիկոսի Պատմության մեջ ևս անվանված է «հրամանատար և իշխան իշխանացս Հայոց» (էջ 49):

4. Եթե Խորենացին, Մար Արասի վկայության հակառակ, Բագրատունիների նախահայր է համարում Շամրատ-Սմբատին՝ «զկոչեցեալն Բագարատ»՝ դրա պատճառն այն է, որ նա համակրում է Սմբատ Խոստովանողին և ատում Տարոնի հավատուրաց Բագարատին (էջ 67):

5. Խորենացու այս Շամրատ-Բագարատը նախատիպն է, ուրեմն, Սմբատ սպարապետի, որը 856 թվականին վանճանվել էր Սամառայում «վասն Քրիստոսի խոստովանութեանն» (էջ 65):

6. Խորենացին իր Պատմությունը գրել է այս Սմբատի որդու՝ «իշխանաց իշխան» Աշոտի արքունիքում՝ որպես մի հայելի հայկական պետության, որ նոր ստեղծվելու էր (էջ 67):

Յո. Մարկվարտը, ինչպես տեսնում ենք, Խորենացու ժամանակը որոշել է ճշգրիտ կերպով և իր կարծիքը հիմնավորել նաև

Խորենացու Շամբատ-Բագարատի վերաբերյալ ուշագրավ ու կարևոր իր դիտողություններով: Նրա սրամիտ այդ եզրակացությունները, որ նոր լույս են սփռում Խորենացու հարցի վրա, ինչպես և «Աշխարհացույց»-ի խնդրի մեր նոր լուսաբանությունը, կարևորագույն նկատումներն են բուն իսկ Խորենացու առնչվածի լուծման:

Ներքև մենք կտեսնենք, որ Մարկվարտի վերոհիշյալ դիտողությունները միանգամայն ճիշտ են և հաստատվում են այն նոր տվյալներով, որ մանրամասն քննելու ենք:

17. **Խորենացու Պատմությունը գրված է Բուզոյի արշավանքից հետո:** *– Ն. Ակինյանը վերոհիշյալ իր աշխատության մեջ մի ընդարձակ գլուխ է նվիրել Խորենացու «Ողբ»-ի քննության և իրեն այդ քննության արդյունք հանգել է հետևյալ եզրակացությունների (տե՛ս «Մատենագրական հետազոտություններ», էջ 180–181).*

> *ա. «Մովսես Խորենացվո «Հայոց Պատմության» վերջը (գլ. 68) գտնված Ողբը յուր բովանդակությամբը անհարիր է տեղվոյն և ժամանակին. այն չի կրնար «Հայոց Պատմության» վերջաբանը նկատվիլ»:*
>
> *բ. «Բնական երևույթներու, քաղաքական և բարոյական կյանքի հանգամանքներու մասին հաղորդված տեղեկությունները կ'ակնարկեն Ը դարու երկրորդ կեսին (750–774) դիպվածները, այնպես ինչպես նկարագրած են զանոնք Սուտն-Դիոնեսիոս Թել-Մահրեցի և Ղևոնդ Երեց: Ողբը գրված է 774-ին»:*
>
> *գ. «Ողբը սկզբնապես հորինված է իբրև վերջաբանություն Ղևոնդ Երեցի Պատմության առաջին մասին» (գլ. ԼԳ)... «790-ին, երբ Ղևոնդ յուր Պատմության կցեց 774–790 տարիներու դիպվածները, տեղափոխվեցավ Պատմության Բ մասին վերջը, դույզն փոփոխություններով»... և ապա «երկրորդ ձևոք մը Ղևոնդի Պատմության վերջաբանը փոխադրած է «Հայոց պատմության» վերջը: Այս փոխադրության ժամանակ մուծված են մանր փոփոխություններ և հավելվածներ, որոնք չոչափելի են»:*

Ն. Ակինյանի այս ենթադրություններից և ո՛չ մեկին մենք համամիտ չենք: Խորենացու «Ողբ»-ը գտնվում է ըստ իս իր իս-

կական տեղում, և իր լեզվով, ոճով ու բովանդակությամբ միանդամայն անհարազատ է Ղևոնդին և անբաժան մասն է, անշուշտ, ո՛չ թե Ղևոնդի, այլ Խորենացու Պատմության:

Ապացուցելու համար՝ որ «Ողբ»-ը գրված պիտի լինի 774 թվականին՝ Ակինյանը մանրամասն համեմատել է բնության արհավիրքների և քաղաքական, տնտեսական ու բարոյական կյանքի մասին «Ողբ»-ի մեջ հաղորդված մանրամասնություններն այն նման դիպվածների հետ, որոնք տեղի էին ունեցել Ասորական Միջագետքում VIII դարի երկրորդ կեսին, հատկապես 772-773 թվերին, և նկարագրված են Սուտ-Դիոնիսիոս Թել-Մահրեցու ժամանակագրության մեջ:

Այս համեմատություններից, ինձ թվում է, առարկելի են, նախ և առաջ, բնության արհավիրքների, նաև սովի և հիվանդությունների վերարերյալ նմանությունները: «Ողբ»-ի մեջ հիշված երաշտը, կարկուտը, ծանր ձմեռը, անժամանակ անձրևները անշուշտ, սովորական, երևույթներ են, որ պարբերաբար կրկնվել են Հայաստանում ո՛չ միայն հին, այլև նոր ժամանակներում: Ակինյանի ենթադրությունը, որ այդ արհավիրքները հազվադյուտ երևույթներ են և որ դրանք պետք է միաժամանակ զգացված լինեին Հայաստանում և սահմանակից Ասորական Միջագետքում՝ ավելի քան վիճելի է և անհավանական:

Համոզիչ չեն նաև քաղաքական պայմաններին վերաբերվող համեմատությունները: Պատերազմներ ու խռովություններ, թագավորների խստություններ, կեղեքումներ ու հալածանքներ, որ ակնարկված են «Ողբ»-ի մեջ, դարձյալ սովորական երևույթներ են և չեն կարող վերագրվել միայն այս ժամանակաշրջանին:

Շատ պարզ է, որ նման համեմատությունները չեն կարող նշանակություն ունենալ և ծառայել իրրև ելակետ «Ողբ»-ի ժամանակի որոշման:

Ն. Ակինյանի ուշադրությունից, զժբախտաբար, վրիպել են «Ողբ»-ի այն մանրամասնությունները, որոնք միանգամայն հակառակ են իր եզրակացության և պարզ ակնարկներ են, որ Խորենացու «Ողբ»-ը գրված է ո՛չ թե 774 թվին, այլ 852-855 թթ. Բուղայի արշավանքից հետո:

Ուշադրության արժանի են այդ տեսակետից «Ողբ»-ի հետևյալ ակնարկները.

1. Խորենացի III, 68, էջ 360, տող 10-16 (Տփղիս, 1913)՝

«Ի գերութիւն վարեցաւ Սեղեկիայ, և Ջօրաբաբէլ ո՛չ ուրեք

է, որ նորոգէ զպետութիւնն: Անտիոքոս բռնադատէ թողուլ զօրէնս հայրենիս, և Մատաթիայ ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ չուրջ պաշարէ, եւ Մակաբէ ոչ փրկէ: Այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք արտաքուստ. արհաւիրք ի հնձանոսաց և մարտք ի հնձածաղոց, և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ»:

2. Նույնը, III, 68, էջ 365, տող 9-366, տող 2՝

*«Զի թագաւորք տիրեալք խիստ և չարաչարք, բնութիւն բառնալով ծանուսն և դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս. վերակացուք անհարթարարք, անողորմք, սիրելիք դաւաճանեալք, և թշնամիք ղօրացեալք. **հաւատ վաճառեալ ընդ սնոտի կենցաղոյս: Հէնք եկեալ անհատք և յոլովից կողմանց, գերփումն տանց և յափշտակութիւն ստացուածոց. կապումն գլխաւորաց և բանտք յայտնեաց.** յօտարութիւն վտարումն ազատաց և անթիւ նեղութիւնք ոամկաց. առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց. աւերումն աւանաց և հրդեհումն չինուածոց. սուր անբաւ և հիւանդութիւնք և մահք բազմօրինակք. **աստուածպաշտութիւն մոռացեալ, և ակնկալութիւն գնհենի»:***

3. Նույնը, III, էջ 365, տող 5-6՝

*«Երկրի անբերութիւնք պտղոց և անաճելութիւնք կենդանեաց, այլ և **սասանմունք և դղրդմունք»:***

Խորենացու առաջին և երկրորդ վկայություններից երևում է, որ «Ողբ»-ը գրված է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ «Անտիոքոս»-ը բռնադատում էր «թողուլ զօրէնս հայրենիս» և «Մատաթիա»-ն չէր դիմադրում, երբ հավատը վաճառում էին «ընդ սնոտի կենցաղոյս» և «աստուածպաշտութիւն»-ը մոռացված էր: Պատմագրի այս ակնարկները, ինչպես տեսնում ենք, բռնի կրոնափոխության բացառիկ դեպքերի մասին չեն, այլ կրոնական լայն հալածանքների մասին: Ուշագրավ է նաև, որ այդ հալածանքների ժամանակ «Անտիոքոս»-ը հարկադրում էր թողնել հայրենի կրոնը, իսկ «Մատաթիա»-ն չէր դիմադրում:

Կրոնական այս հալածանքները և բարոյալքումը, որ բոլորովին անհասկանալի են VIII դարի երկրորդ կեսում, իմաստ են ստանում, երբ ի նկատի ենք առնում այն անցքերը, որ տեղի էին

ունեցել Բուղայի արշավանքների ընթացքում և նրանից հետո:

Արաբական խալիֆայությունը, ինչպես հայտնի է, կրոնական մոլեռանդ քաղաքականություն էր վարում Մուտավակկիլ ամիրապետի ժամանակ (847–861), որին հայկական աղբյուրներն անվանում են նաև Ջաֆար: Հենց այս Ջաֆարն է ըստ իս այն «Անտիոքոս»-ը, որը ստիպել էր հայերին ուրանալ իրենց հավատը:

Հայտնի է նույնպես, որ «իշխանաց իշխան» Բագարատը մյուս իշխանների հետ միասին ո՛չ միայն չէին «ընդդիմակայել», այլ գրեթե բոլորն ընդունել էին մահմեդականություն իրենց կյանքը փրկելու համար: Հասկանալի է, ուրեմն, թե ինչու «Ողբ»-ի հեղինակն առանձնապես չնչտել է հավատի վաճառումն «ընդ սնոտի կենցաղոյս» և «ակնկալութիւն»-ը «գնհենի»:

Արաբական տիրապետության միայն այս շրջանին կարող են վերաբերվել նաև «Ողբ»-ի հետևյալ ակնարկները՝ «հէնք եկեալ անհատք և յոտվից կողմանց. գերփումն տանց... կապումն գլխաւորաց և բանտք յայտնեաց»:

Բուղայի արշավանքի ժամանակ, ինչպես գիտենք, ավերածության էին մատնվել նախարարական Հայաստանի գրեթե բոլոր շրջանները. կալանավորվել ու Սամառա էին ուղարկվել Հայաստանի «գլխաւոր»-ներն իրենց ընտանիքներով և բանտարկվել էին նաև «իշխանաց իշխան» Բագարատը և Սմբատ սպարապետը:

Որ «Ողբ»-ի հեղինակն ի նկատի է ունեցել այս «գերփում»-ները, «կապում»-ները և բանտարկությունները՝ այդ ավելի քան հավանական է, որովհետև նախարարների բանտարկություններն արաբական տիրապետության նախորդ շրջաններում ունեցել են եղակի ու բացառիկ բնույթ:

«Ողբ»-ի մեջ հիշատակված են, ինչպես տեսանք, Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժները՝ «սասանմունք և դղրդմունք»:

Ն. Ակինյանը կարծում է, որ այս չարժերը տեղի էին ունեցել Հայաստանում VIII դարի երկրորդ կեսում: Իրրև ապացույց՝ նա մատնացույց է արել Սուտ-Դիոնիսիոս Թել-Մահրեցու հիշած երկրաշարժը, որ տեղի էր ունեցել 755 թվականին Միջագետքում (տե՛ս «Chronique de Denys de Tell Mahré», publ. par Chabot, Paris, 1895, էջ 63), և Միքայել Ասորու հիշատակած երկու մեծ երկրաշարժը՝ 764/765 թվականին Խորասանում և 768/769 թվականին (տե՛ս «Chronique de Michel le Syrien», éd. Chabot, II, էջ 524):

Ն. Ակինյանի այս հիմնավորումը, անշուշտ, թույլ է, որովհետև Խորասանում և Միջագետքում տեղի ունեցած երկրաշարժները չեն կարող ապացույց ծառայել, որ նման աղետներ պատահած պիտի լինեին նաև Հայաստանում: Եթե ճիշտ լիներ Ակինյանի կարծիքը, ինձ թվում է, այդ մասին որևէ հիշատակություն կլիներ Ղևոնդի Պատմության մեջ, որը ժամանակակից էր VIII դարի երկրորդ կեսի անցքերին:

Ահավոր և աղետալի շարժերը Հայաստանում հիշված են հայկական աղբյուրների մեջ ո՛չ թե այդ ժամանակներում, այլ IX դարի երկրորդ կեսում Բուղայի արշավանքից հետո: «Ոդր»-ի վերոհիշյալ ակնարկը վերաբերում է ըստ իս հենց այս շարժերին, որ մատնանշված են հետևյալ վկայություններում.

ա. «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 133՝

> «Բայց դայսու ժամանակաւ ահագին իմն շարժմանց եղելոց ի Դվին քաղաքի, բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դղրդումն առնոյր քաղաքն. այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր. և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին՝ մինչև ոչ ոք մնալ ընդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հաւնալ հառաչէին: Իսկ ցրտաչունչ սառնամանիք ձմեռայնւոյն առաւել բերէր ղչքացումն հնծութեան, դի յոլովք մսեալք և ծայրատևալք լինէին: Իսկ սուրբ հայրապետն Զաքարիա ուժգին աղօթիւք և պաղատանօք մչտնջենամուռչ և աղերսալի աղօթս առ բարեգութն Աստուած մատուցանէր նոյն»:
>
> Համմտ. նաև Թովմա Արծրունի, III, ԻԲ, էջ 231՝ «եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ է ամի գերութեանն Հայոց»:

բ. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, II, 2, էջ 110՝

> «Ի սորա աւուրս [Աշոտի որդւոյ Սմբատայ], յՅԺԲ թուականին ի քառասնորդս պահոց ի փոքրիկ չարաթուն եղև չարժումն ահագին և ղրագումս կոտորեաց և ղգեղեցիկ չինուածս տապալեաց. և տեւեաց մինչև ի ժամանակս երից ամսոց»:

Հմմտ. «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի պրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 95:

պ. «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, III, 21, էջ 267՝

> *«Եւ ի յերկիր հարիւր ութ և տասն թուականին Հայոց (համ տևառն 869) եղև անհնարին և հիացուցանող չարժն Դուռնայ, որ դամ մի ողջոյն դողայնալ խորասուղևաց յանդունդս անձինս իրրև երկոտասան բիւր մարդկան»:*
>
> *Հմմտ. **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 55:*

Այս վկայություններից մենք տեսնում ենք, որ IX դարի երրորդ քառորդը եղել է բացառիկ մի ժամանակաշրջան ահավոր ու աղետալի չարժերի, որոնք ակնարկված են Խորենացու «Ողբ»-ի մեջ:

Որ մեր պիտղությունները և «Ողբ»-ի վերոհիշյալ հատվածների նոր մեկնություն արժանի են ուշադրության՝ այդ կտեսնենք ներքև նաև ուրիշ՝ ավելի պարզ ու համոզիչ ապացույցներից, որոնք հաստատում են նույնպես, որ Խորենացու Պատմությունը գրված է Բուզայի արշավանքից հետո:

18. **«Ողբ»-ի մեջ հիշված «Հովիվ»-ը, հավանորեն, Ովայեցի Հովհաննես Ե կաթողիկոսն է:** — *«Ողբ»-ի ընդարձակագույն մասը նվիրված է, ինչպես հայտնի է, եկեղեցու «Հովուի» ու քահանայապետի մահվան, որի «Հայրենի վերակացութիւնն» դրկվել էր ողբերգուն: Եկեղեցու դրության և քահանայապետի մահվան մասին «Ողբ»-ի սկզբում հետևողական ոճով տրված են հետևյալ տեղեկությունները.*

Խորենացի III, 68, էջ 359 (Տփղիս, 1913)՝

> *«Երանի՛ առաջնոյ և երկրորդի վիճակմանն. **զի էր ինչ ժամանակ հնոանալոյ փեսային և փեսաւիրին,** և հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով, որպէս ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց: Դարձեալ **մինչ երբեմն ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստդ՝** և հարսնդ ոչ աղտեղացար. **թէպէտ և բռնութիւնն զփեսայն ի բաց վարեաց,** որդւոյն բարձրացելոյ անարգելով՝ գծնողն, համայն և խորհոցն լսատ արժանեացն գօտար հայրն և գևկամուտ յօրայն. սակայն դու*

և ոչ յայմ դքնդ ամայի բոլորիցն ցուցեր. զանդրէն քոյոյն յուսալով զարձ Հովուակցաւն, ոչ որպէս տայգերր, այլ որպէս նոյնազաւակ դուզահարր, զմանկունան վայվայեցեր: Իսկ յերրորդ հնոանալս ոչ է ակնկալութիւն զարձի, լուծնալ ի մարմնոյս ընկերաւն և գործակցաւն»:

Համարելով Խորենացու Պատմութիւնը V դարի աշխատութիւն՝ բանասերները եղել են սովորաբար այն կարծիքին, որ այս հատվածը վերաբերվում է Սահակ-Մաշտոցին և հայոց կաթողիկոսներին (տե՛ս **Կ. Բասմաջյան**, *Քննութիւն Ողբոյն Մովսիսի Խորենացւոյ, «Հանդես Ամսօրեայ», 1891 և* **Նորայր Բյուզանդացի**, *«Քննասէր», Պրակ Բ, 1888):*

Մենք տեսանք սակայն, որ «Ողբ»-ի մեջ ակնարկված են, իրապես, IX դարի քաղաքական դեպքերը և ընդհանուր բարոյալքումը Բուղայի արշավանքից հետո: Ուստի և անհավանական չի լինի ենթադրել, որ մեջ բերված հատվածում, որը գրված է իբր Սահակ-Մաշտոցի մահվան առիթով, կարող է նաև ակնարկված լինել Խորենացու ժամանակակից Ովայեցի Հովհաննես Ե կաթողիկոսը, որը վախճանվել էր 855 թվականին՝ Սմբատ սպարապետի Սամառա ուղարկվելուց առաջ:

Նման ակնարկումները, ինչպես ցույց է տվել Մարկվարտը, հատուկ ու սովորական մի ձև են Խորենացու պատմագրական չարադրութեան (տե՛ս «Die Genealogie der Bagratiden», էջ 64, 65, 67):

Որ այս ենթադրությունը հավանական է, այդ երևում է Հովհաննես Դրասխանակերտցու ուշագրավ մի վկայությունից, որ ուշադրության չի առնվել:

«Ողբ»-ի վերոհիշյալ խոսքերը՝ «ոմն սեղևսարար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստդ... և բռնութիւնն զինեսյն ի բաց վարեաց»՝ ինչպես երևում է Դրասխանակերտցու վկայությունից, կարող են իրրև ակնարկ վերաբերվել, իրոք, նաև «իշխանաց իշխան» Բագարատին, որի հատուկ կարգադրության ու «բռնության» պատճառով Հովհաննես Ովայեցին հրաժարվել էր կաթողիկոսական իր պաշտոնից:

Եկեղեցու երերուն ու խառնաշփոթ այս վիճակը մանրամասն նկարագրված է Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության հետևյալ հատվածում՝

«Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 115–117՝

*«Իսկ դկնի նորա [Դաւթի] յաջորդէ զաթոռ նորա Յովհաննէս ի զաւառէն Կոտայից ի գեղջէ Ովայից: Բայց յետ սկզբան ձեռնադրութեան նորա իրրև անցին ամք ութ, քիւք ոմանք չարաբանք ի նոյն ինքն յրնտանեաց տան կաթողիկոսարանին լեզուօք նենգաւորօք բանս ապիրատս բամբասանաց ի վերայ յօդէին սրբոյ Հայրապետին Յովհաննու... Եւ վասն դի. ի ժամանակին Բագարատ Բագրատունի Հրամանատար և իշխան իշխանացս Հայոց գտանէր առ նմա, ապա դիմեալ երթեալ չուէին չանարդագուրդ նանրալեզու Հայհոյիչք առն Աստուծոյ՝ դերկրաւ զլեզուս իւրեանց ածեալ և զօդանջեալ առաջի նորա: Իսկ նորա ի սատանայական պարթևսամաւի լեզուացն հրապուրեալ՝ և ախորժակս չիւր լսելիսն զպիղծ հայհոյութիւնսն ամբարեալ՝ զրկ հրովարտակ առ ամենեսեան, ի բաց կալ յընդունելոյ զհօտապետն. ի մտի եղեալ ա՛յլ ևս կացուցանել Հայրապետ ըստ իւրումն ձեռներիցութեան: Իսկ մեծի առնն Յովհաննու իմացեալ զլկանս սատանայականս իշխանին և հոգևոր հատոդական սրով զնա պաշարմամբք կապեալ, ինքն յարուցեալ գնաց ի բանակևտղ սրբոյն Սահակայ ի վանս այրից զօդևալ և լոիկ իմն անդ մչտնջենաւոր աղօթից պարապեալ: Զայն ապա իմացեալ սպարապետին մեծի Սմբատայ և Գրիգորի Սիւնեաց տեառնն և այլ ևս նախարարացն Հայոց, և համագունդ ի միասին եկեալք և ժողով եպիսկոպոսաց արարեալ և ստուգագէտ իմացուածիւ իմացեալ զ'ի նանիր իմաստից չբմանց չար հայհոյչացն ստութիւն՝ հաստատեն զարձեալ յաթոռն սրբութեան զայրն Աստուծոյ: Իսկ ապա այնուհետև եկեղեցիք Քրիստոսի, որ **երբեմն խրթնացեալն էր ի վարատմանէ փեսային՝ դարձեալ յինքն զփեսայն առազաստաւոր** նորոգապէս պայծառանայր: Բայց իշխանն Բագարատ ևս առաւել վասն այնորիկ զչարեալ լինէր, զի առանց կամաց նորա եղև Հայրապետին հաստատութիւն եւ ուր ոչ ընկալեալ զնա, խնդրէր ժամ դիպող՝ դայլ փոխանակ նորա կացուցանել»:*

Ամենից ուշագրավը և կարևորն այս վկայության մեջ այն է, որ Հովհաննես Դրասխանակերտցին, ինչպես երևում է վերև ընդգծված բառերից, «Ողբ»-ի խոսքերով հիշում է «խրթնացեալն ի վարատմանէ փեսային» եկեղեցին և այդ «փեսայի» մասին իր վկայությունը վերագրում պարզապես Ովայեցի Հովհաննես Ե Կաթողիկոսին:

Այս դուգադիպումն ըստ իս պատահական չէ, այլ հավանական մի ապացույց է, որ Խորենացու «Ողբ»-ի մեջ ակնարկված են ո՛չ միայն քաղաքական, այլև եկեղեցական այն իրական անցքերը, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում IX դարում Խորենացու ժամանակ:

Ավելի քան հավանական է թվում ինձ, բացի այդ, որ Հովհաննես Դրասխանակերտցին Խորենացու Պատմությունը, նաև «Ողբ»-ը, համարել է, ըստ երևույթին, ո՛չ թե V, այլ IX դարի աշխատություն՝ գրված Բուղայի արշավանքից հետո:

Որ նոր այս կռահումը հիմնավոր է՝ այդ երևում է ըստ իս Դրասխանակերտցու Պատմության այն վկայություններից, որոնք վերաբերվում են Խորենացու Պատմության:

*Ինչպես հայտնի է, X և XI դարերի հայ պատմագիրները Խորենացուն ննջեցրել են Սահակ-Մաշտոցի աշակերտ և առանձին պատկառանքով են հիշել նրա հռչակավոր Պատմությունը: Նրանց երկերում Խորենացին անվանվում է՝ «Մեծ Ֆերթողն Մովսէս» (**Թովմա Արծրունի**, 1887, I, Բ, էջ 24), «տիեզերահռչակեալ վարդապետ և Ֆերթող» (**Թովմա Արծրունի**, I, ժ, էջ 58), «Մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ Ֆերթողն» (**Թովմա Արծրունի**, I, ժԱ, էջ 75), «Ֆերթողահայրն Մովսէս» (**Մովսես Կաղանկատվացի**, 1860, I, Ը, էջ 10), «Մեծն Մովսէս, հանգոյն եւսեբեայ, որ քերթողացն անուանի հայր» (**Ասողիկ**, 1885, I, Ա, էջ 7), «Մեծ պատմագիր Մովսէս Տարօնեցի» (**Ասողիկ** I, Ե, էջ 53), «Մեծ վարդապետն Մովսէս Ֆերթողահայրն» (**Ասողիկ** II, Ա, էջ 77) և այլն:*

Հետաքրքիր է սակայն և ուշադրության արժանի, որ Խորենացու հանդեպ այս պատկառանքն ու ակնածությունը բացակայում են Դրասխանակերտցու մոտ: Այս պատմագիրն իր Պատմության առաջին գլուխներում, որ գրված են, գլխավորապես, Խորենացու Պատմությունից, կարևոր չէ համարել անգամ հիշելու «տիեզերահռչակեալ» Ֆերթողահոր անունը, այլ անորոշ կերպով ակնարկել է իր աղբյուրը հետևյալ հատվածներում.

> *ա. «Սորա [Արամայիսի] արիական քաջամասնութեան հանդիսք բազում կայ յառաջնոցն քան զիս մատենագրացն պատմի» (Թիֆլիս, 1912, էջ 16).*
>
> *բ. «Իսկ ես յայսմհետէ սակաւուք ինչ զթագաւորելն վաղարշակայ ի վերա մեր չարայարելոցից և որք յետ նորա ի նորին սերմանէ փոխանորդեցին զթագաւորութիւն, որք և*

Արշակունիք անուանեցան. և զաւելորդն՝ որ ***յայլոց ոմանց եղև պատմեալ*** *ի նոսա հրաւիրեցից զիտել, թէ պիտոյ է քեզ» (Թիֆլիս, 1912, էջ 23):*

Խորենացու Պատմութիւնը ծայրէ ի ծայր օգտագործելուց հետո՝ Դրասխանակերտցին միայն անցողակի կերպով հիշում է նրա անունը՝ առանց նրան անվանելու «Քերթողահայր» կամ «Մեծ պատմիչ»:

«Այլ երկոցունց սոցա [Խոսրովի և Արշակի]» զվարս և զկարգս և զարութիւնս և զանարութիւնս և զպատերազմունս՝ թէ պիտոյ է քեզ,— ասում է Դրասխանակերտցին,— բովանդակաբար ցուցցէ քեզ Պատմութիւնն Մովսեսի Խորենացւոյն (Թիֆլիս, 1912, էջ 52-53):

Թէ ինչո՛ւ վերոհիշյալ պատմիչներից Հովհաննես Կաթողիկոսին են միայն հայտնի եղել Խորենացու Պատմության ճիշտ ժամանակը և նրա «Ողբ»-ի ակնարկները՝ այդ ևս հասկանալի է:

Հովհաննես Դրասխանակերտցին ևս, ինչպես և Մովսես Խորենացին, Շիրակի Բագրատունիների պատմագիր էր և մոտ չփոում էր ունեցել Բագրատունի արքունիքի հետ: Լինելով ժամանակով Խորենացուն խիստ մոտ՝ նա սնվել ու դաստիարակվել էր միևնույն միջավայրում և ապրել IX դարի երկրորդ կեսում, երբ դեռ նոր էր հրապարակվել Խորենացու Պատմութիւնը:

Միանգամայն բնական է ըստ ինս, որ Խորենացու ժամանակն ավելի չուտ նրան կարող էր հայտնի լինել, քան Թովմա Արծրունուն, Մովսես Կաղանկատվացուն և Ասողիկին:

Իմ այս դիտողությունների դեմ կլինեն, անշուշտ, առարկություններ, սակայն, թվում է ինձ, որ այդ առարկությունները չեն կարողանալու խախտել ընդհանուր իմ եղրակացությունը,— որովհետև, Խորենացու ժամանակի որոշման համար կան նաև ուրիշ հենարաններ, որոնք նեցուկ են ծառայելու վերոհիշյալ կարևոր ենթադրության:

19. **Խորենացու հունասիրությունը հասկանալի է արաբական տիրապետության այս շրջանում:** *— Մովսես Խորենացին՝ որ իր Պատմությունը գրել է Բուղայի արշավանքից և Հովհաննես Ովայեցու մահվանից հետո, ինչպես կտեսնենք, եղել է այդ շրջանում ականավոր քերթող և հեղինակավոր հետևորդ հունարան դպրոցի:*

Նա համակրող է հունական գիտության և քաղաքակրթու-

թյան և նրա Պատմության մեջ առանձնապես չնչին ծավալ է նրա հունասիրությունը: Նա իր Պատմության հենց սկզբում ասում է, որ օգտվելու է, գլխավորապես, հույն պատմագիրներից և անտես է առնելու պարսկական ու քաղդեական աղբյուրները (տե՛ս I, 2, էջ 7): Նույն այս գլխում «բոլոր իսկ յոյն»-երին նա անվանում է «մայր կամ դայեակ իմաստից» (I, 2, էջ 9): Պարսից առասպելները Բյուրասպ Աժդահակի մասին համարում է «փծուն, անճոռնի և սուտ»՝ «անմիտ և անհանճար բանից յարմարանք» (տե՛ս I, հավելված Ա, էջ 89), իսկ հունաց առասպելները՝ «պերճ և ողորկ», «հանդերձ պատճառաւ»՝ «որք դճշմարտութիւն իրաց այլարանարար չինրևանս ունին թաքուցեալ» (էջ 90):

Խորենացու այս հունասիրությունը ցայտուն կերպով երևում է և նրա ուրիշ վկայություններում: Իսկ այս փաստը, ինչպես չատ ճիշտ նկատել են բանասերները, ունի որոշ նշանակություն և կարող է Խորենացու ժամանակի որոշման կուման ծառայել:

Այդ մասին ունի, օրինակ, ակադեմիկոս Ն. Մառն իր «Арабское извлечение из сирийской хроники Марибаса» ուսումնասիրության մեջ (տե՛ս ЗВО, XIV, 1902, էջ 81) հետևյալ ուղիղ դիտողությունը:

> *«Խորենացու ժամանակի որոշման համար,— ասում է նա,— յավագույն հիմքերն են նախ՝ նրա Պատմության ընդհանուր ոգին, որ պարզ ազգային է, երկրորդ՝ որ հեղինակը խորասես համակրում է հունական կրթությունը, և երրորդ՝ որ նա ընտրում է ասորական ծագում և ասորական մշակում ունեցող պատմական աղբյուրներ, որոնք մեծ չափով հիմք են կազմում նրա Պատմության: Այդպիսի երկը, հասկանալի է, չի կարող վերաբերվել V դարին, որ հայոց քրիստոնեական գրականության առաջին դարն էր, որ վերագրվելու է ավելի ուշ ժամանակի, երբ մյուս ասորական ուղղությունը հին ավանդության կարգն էր անցել, իսկ նրան փոխարինող կուլտուրական հնչեղնասիրությունը կարողացել էր գրականության մեջ առաջ բերել ազգային ուղղություն»:*

Ակադեմիկոս Ն. Մառի ընդհանուր այս դիտողությունը, ինչպես տեսանում ենք, կատարելապես հաստատվում է մեր այս ուսումնասիրությամբ:

Խորենացու Պատմության թե՛ ազգային ոգին և թե՛ նրա

Հունարան ու Հունասեր ուղղություններ միանգամայն բնական են ու հասկանալի Հայաստանի վերակենդանացման հետագա այս շրջանում:

Խորենացու Հունասիրությունը, որ այնքան վառ կերպով նկատվում է նրա Պատմության մեջ, հետևանք է ըստ իս իշխող դասի ու Բագրատունիների ընդհանուր մտայնության և, հատկապես, այն քաղաքական բյուզանդասեր հակումների, որոնք սկսել էին ուժեղանալ 775 թվականի նախարարական ապստամբությունից և, մանավանդ, Բուղայի արշավանքից հետո:

Խալիֆայության հարձակողական քաղաքականությունը հայ իշխանությունների հանդեպ և մեծ ազետները ու ավերածությունները, որոնց ենթարկվել էր Հայաստանը 775 և 852–855 թվականներին, ծայր աստիճան հուզելու և զրգռելու էին, բնականաբար, հայ նախարարներին ու, մասնավորապես, Բագրատունիներին՝ Արաբական խալիֆայության դեմ: Հալածված ու լքված հայ ազնվականությունը, տեղահանված մասամբ իր երկրից, ապաստան էր գտնում մերձ կամ հարևան Բյուզանդիայում և կամ կայսրության սահմանամերձ՝ Հայաստանի արևմտյան լեռնային շրջաններում: Բյուզանդական կայսրությունը, որ նորից սկսել էր զորեղանալ IX դարում, քաղաքական նկատառումներով կարևոր էր համարում նախարարական Հայաստանի պաշտպանությունը և վարում էր նախարարական իշխանությունների հանդեպ բարեհամ ու խնամատար քաղաքականություն:

Հենց այս IX դարում է, որ կայսրությունը սերտ ու բարեկամական հարաբերություններ ուներ Բագրատունիների և Արծրունիների հետ և առատ կերպով բաշխում էր նրանց դառնապան բարձր տիտղոսներ և անգամ կալվածներ:

Այդ մասին ուշագրավ են, օրինակ, հայ պատմագիրների հետևյալ վկայությունները.

1. Ղևոնդ, գլ. 42, էջ 168–169 (Ս. Պետերբուրգ, 1887)՝

«Իսկ ապա իբրև այնպէս թափուրք ի ստացուածոց մնային, մերկք և բոկք և սովամահք, և ոչ գտանէին ապրուստ անձանց՝ ղէմ եղեալ տարաղէմ գնացին վիրաստեայ յաշխարհն Յունաց. զորոց ասեն լինել զթիւ մարդկանն աւելի քան ԺԲՌ արանց հանդերձ կանամբք և մանկտեաւ. որոց առաջնորդք Շապուհ ի տոհմէ Ամատունեաց և Համամ որ-

դի նորա և այլք ի նախարարաց Հայոց և նոցին հնձելոց: ...Եւ իրրև անցին ընդ գետն [Ակամսիա]՝ վազվազակի ազդ եղև արքային Յունաց Կոստանդնի: Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ տայր պատիւ նախարարացն և նոցին հնձելոցն. և զայլ խառնիճաղանճան բնակեցուցանէր ի բարւոք և յարգաւանդ երկրի»:

2. ***Ասողիկ**, II, գլ. 6, էջ 144 (Ս. Պետերբուրգ, 1885)՝*
«Իսկ Թէոփիլոս [829-842] ... տուեալ զհիւպատաւսութիան պատիւն, այսինքն՝ ապուհիւպատ պատրկութիւն՝ Աչոտոյ որդւոյ Շապհոյ և Թոդու ի Սպեր գաւառ»:

3. ***Թովմա Արծրունի**, III, գլ. 13, էջ 194 (Ս. Պետերբուրգ, 1887)՝*
*«Իսկ թագաւորն [**Միքայել**, 842-867] զրէ առ զօրավարն Թեոփս կարասցէ հաւաննցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մնծաց պարգևաց և պատուի և զահու յառաջաձգութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն»:*

4. ***Թովմա Արծրունի**, III, գլ. 14, էջ 203՝*
«Եւ ի հասանելն նորա [Գուրգենի] ի Թէոդոսի քաղաքն ի կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանչան զրօշիւք ճոխասցի»:

5. *«Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 77՝*
«Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր իւր տեղիս: Եւ տայր իշխանն Իսմայելի Աչոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աչոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանել ինքեան. և կայսրն [Լևոն V, 813-820] առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան»:

Թե՛ այս և թե՛ նման ուրիշ փաստերը ցույց են տալիս, որ IX դարում և, գլխավորապես, Բուղայի արշավանքից հետո՝ նախարարական Հայաստանի և Բագրատունիների հարաբերություն-

ները Բյուզանդիայի հետ մտերիմ էին ու բարեկամական: Մերձեցումը կայսրության հետ առանձին կարևորություն էր ստանում, հատկապես այս շրջանում, որովհետև Բյուզանդիայի քաղաքական աջակցությունը նախարարական Հայաստանի ինքնապաշտպանության ամենազորեղ գործոններից մեկն էր:

Շատ բնական է, որ հայ ազնվականության քաղաքական հունասեր տրամադրություններն ունենալու էին իրենց արտահայտությունը նաև հայոց մատենագրություն մեջ: Ուստի և IX դարի հենց երկրորդ կեսում միանգամայն հասկանալի են Խորենացու հունասիրությունը և նրա հարգանքն ու սերը դեպի հունական կրթությունն ու ուսումը:

Բացի հունասիրությունից Խորենացու Պատմության մեջ, ինչպես մատնացույց են արել բանասերները, աչքի է ընկնում և այն, որ նրա մեջ ո՛չ մի հետք և ո՛չ մի ակնարկ չկա կրոնական-դավանական այն տարաձայնությունների ու վեճերի մասին, որոնք մշտական առիթ էին հակաքաղկեդոնական հայերի ու քաղկեդոնական հույների. մոլեռանդ ու անհաչտ թշնամության: Կրոնական նման խնդիրների նկատմամբ Խորենացու լուռ ու մունջ լինելը հասկանալի է դարձյալ նույն այս ժամանակաշրջանում:

Որ քաղաքական հունասեր այս շրջանում կրոնական հակամարտությունը և ատելությունը պետք է բավականաչափ մեղմացած ու դադարած լինեին, այդ ինքնըստինքյան հասկանալի է:

Ուշագրավ է առանձնապես, որ հենց այս ժամանակները, Բուղայի արշավանքից հետո, հատուկ բանակցություններ էին սկսվել, որոնց նպատակն էր վերականգնել Հունաց և Հայոց մեջ կրոնական նախկին միությունը: Այս բանակցությունները հայտնի են մեզ ո՛չ միայն բյուզանդական և հայկական մատենագրական աղբյուրներից, այլև Փոտ պատրիարքի և «Լչխանաց իշխան» Աշոտի միջև վոխանակված բարեկամական այն թղթակցությունից, որ պահպանվել է «Գիրք թղթոց»-ում (Թիֆլիս, 1901, էջ 279-282՝ «Պատճէն թղթոյն Հայրապետին Կոստանդնուպաւլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան», նաև էջ 283-294՝ «Պատասխանի թղթոյն Փոտայ, գրեալ Սահակայ Հայոց վարդապետի Հրամանաւ Աշոտայ Հայոց իշխանաց իշխանի»): Հայտնի է նույնպես, որ հենց այս բանակցությունների ժամանակ՝ IX դարի վերջավորական թվականներին՝ տալի էր

ունեցել Շիրակավանի ժողովը, որը գումարվել էր Աչոտի հրամանով և թննության էր առել բաժանված եկեղեցիների միացման խնդիրը:

Միանգամայն պարզ և հասկանալի է, ուրեմն, թե ինչո՛ւ Խորենացու Պատմությունը, որ գրված է Բուզայի արշավանքից հետո, չունի որևէ ակնարկ դավանարանական վեճերի մասին:

20. **Խորենացու ժամանակ Հայաստանում նշանավոր կենտրոնավայրը է եղել «Շիրակաչատ աւան»-ը, իսկ կարևոր ուսումնավայրը՝ Գեղարքունի գավառը:** *— Խորենացին իր «Աշխարհացոյց»-ի մեջ հիշում է «Շիրակաչատ աւան»-ը հետևյալ հատվածում (S. էջ 34)՝*

> *«յորոց [ի Շիրակայ և ի Վանանդայ] եկեալ գնան Ախուրէն՝ հանդերձ Մեծագետովն, անցանելով յելից կուսէ Մաւրիկոպաւլոսի, այսինքն՝ Շիրակաչատ աւանի եւ Մրենոյ եւ Երուանդաչատ քաղաքի, իջանէ յերասս»:*

Այս վկայության մեջ ուշագրավ է այն, որ «Շիրակաչատ աւան»-ը կոչված է «Մաւրիկոպաւլիս»: Շատ պարզ է, ուրեմն, որ այդ ավանը Խորենացու ժամանակ եղել է նշանավոր կենտրոնավայր: Իսկ այս կարևոր մի ակնարկ է դարձյալ, որ Խորենացու թե՛ «Աշխարհացոյց»-ը և թե՛ Պատմությունը գրված են Բագրատունիների իշխանության այն շրջանում, երբ «Երազգաւորք-Շիրակաւան»-ը գահանիստ կենտրոն էր դառել Շիրակի Բագրատունիների:

Ինչպես հայտնի է, 775 թվականի նախարարական ապստամբությունից հետո Աչոտ Մսակերն իր եղբոր Շապուհի հետ կարողացել էին մասամբ զրամով և մասամբ զենքով տիրանալ Տայքի, Արշարունիքի, Շիրակի և Աչոցքի:

IX դարի սկզբներին, Աչոտ Մսակերի ժամանակ, նոր գրավված այս երկրում Բագրատունիների այս ճյուղի աթոռանիստ կենտրոնն էր Բագարանը, իսկ Սմբատ սպարապետի և նրա որդու «իշխանաց իշխան» Աչոտի ժամանակ, գլխավորապես, «Երազգաւորք-Շիրակաւան»-ը:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ (Թիֆլիս, 1910, էջ 72)՝ Սմբատ սպարապետը, որին նա անվանում է Արլապաս, «չինէ զսուրբ քաւարանն մեծապայծառ զարդու յերազգաւորս, որ արդ՝ Շիրակաւանն կոչի»: Հովհաննես Դրասխանակերտցին հաղոր-

դում է (Թիֆլիս, 1912, էջ 127), որ այս Սմբատ սպարապետը «հրամայեալ ժողով եպիսկոպոսաց լինել ի քաղաքագիւղն Երազգաւորս՝ ձեռնադրեն ի հայրապետութիւն զՋաքարիայ ի կոտայս գաւառ ի գեղջ Զագայ»: Նույն այս կենտրոնում, Վարդան պատմիչի ասելով (Վենետիկ, 1862, էջ 82), IX դարի վարժաունական թվականների սկզբներին, «իշխանաց իշխան» Աշոտի ժամանակ, նորից ժողով էր գումարվել, որը քննելու էր Փոտ պատրիարքի թուղթը ու հույն և հայ եկեղեցիների կրոնա-դավանական միության խնդիրը:

Ուշագրավ է նաև, որ Հովհաննես Դրասխանակերտցին «Երազգաւորք-Շիրակաւանն» անվանում է «քաղաքագիւղն մեծ» (էջ 183), «սեպհական կալուած» Բագրատունիների տերության (էջ 144 և 218), և հիշում է «Երազգաւորքում» «արքունական ապարանքները» (էջ 197 և 207):

Դժվար չէ, ուրեմն, կռահել, թե ինչո՛ւ Խորենացին Արտաշատի ու Երվանդաշատի նմանությամբ «Երազգաւորք-Շիրակաւանն» անվանում է «Շիրակաչատ աւան» և «Մաւրիկոպաւլիս»:

Առանձնապես հետաքրքիր է Խորենացու «Աշխարհացոյց»-ի մեջ «Երազգաւորք-Շիրակաւան»-ի «Մաւրիկոպաւլիս» անունը, որ ուշադրության չի առնված բանասիրական ուսումնասիրություններում:

Որ «Շիրակաչատ աւան»-ը կարող էր Մավրիկիոս կայսեր անունով կոչված լինել «Մաւրիկոպաւլիս», այդ միանգամայն հնարավոր է և հավանական: «Աշխարհացոյց»-ի վկայությունից, որը դժվար է չինովի և անհիմն համարել, կարելի է ըստ իս կռահել, որ այդ ավանը եղել է կենտրոնավայր նաև VI դարի վերջերում և VII դարի սկզբներում Մավրիկիոս կայսեր ժամանակ (582–602):

Հենց այս ժամանակաշրջանում «Շիրակաւան»-ը հիշատակված է Սեբեոսի մոտ հետևյալ վկայություններում.

1. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, գլ. Բ, էջ 53՝

   «Ապա նկն ասպետն մեծ Պարթևն և Պահլաւն, և արար կռիւ մի ի Շիրակ աւանին և յաղթեաց».

2. Նույնը, գլ. ԻԲ, էջ 116–117՝

   «Եւ եղև ի գալ ամին միւսոյ մինչդեռ արքայ Խոսրով մարտնչէր ընդ Դարա քաղաքի. գումարեցաւ այլ գաւր

Պարսից ի կողմանս Հայոց, և Դատոյեան դաւրապլուխ նոցա: Եւ դաւրն Յունաց դումարեցան ի դաչտն Շիրակ և ի գևղն՝ որ կոչի Շիրակաւան»:

Այս վկայութիւններից կարևոր է երկրորդը, որից երևում է, որ 604–605 թվականներին «Շիրակաւան»-ը եղել է կայան ու բանակատեղի հունական զորքերի: Ըստ երևույթին, 591 թվականի Հայաստանի բաժանումից հետո, «Շիրակաւան»-ը համարվել է Հունահայաստանի գլխավոր կենտրոնավայրերից մեկը, և հենց այս ժամանակաշրջանում նա անվանվել է, հավանորեն, «Մաւրիկոպաւլիս»:

Իրրև նշանավոր ուսումնավայր ցույց է տրված Խորենացու Պատմության մեջ Գեղարքունի գավառը հետևյալ հատվածում.

***Խորենացի** II, ժ, էջ 120 (Տփղիս, 1913)՝*

*«Եւ վկայ բեղ ի մօտոյ երաչխաւորեսցէ, եկեալ ասել զիրք Եւսերի Կեսարացւոյ, զոր նա թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու: **Խնդիր արասցես ի Գեղարքունի, ի գաւառին Սիւնեաց,** և գտցես յառաջին հազնելգութեանն յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յեղեսիայ դիւանին լինել ամենայն զործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱրգար, և զկնի Արգարու մինչև ցԵրուանդ»:*

Հիմնվելով այս վկայության վրա՝ Ն. Ակինյանը ենթադրում է, որ Խորենացին Եվսեբիոսի եկեղեցական պատմությունը կարդացել է Գեղարքունիքում, և կարծում է, որ նրա դաստիարակության առաջին չրջանը պետք է ենթադրել այս կողմերը, հավանորեն, «ի Մաքենիս» (տե՛ս «Մատենագրական հետազոտություններ», հատ. Գ, էջ 185, ծան. 3):

Ն. Ակինյանի այս ենթադրությունը, որ ինձ ևս թվում է հավանական, խիստ կարևոր է դարձյալ Խորենացու ժամանակի որոշման համար:

Մաքենացոց վանքը, ինչպես հայտնի է Մովսես Կաղանկատվացու վկայությունից, այրված ու ոչնչացված է եղել Բարեկի արշավանքի ժամանակ 827 թվականին.

«Եւ անտի ի միւս տարին,— վկայում է Կաղանկատվացին,— էանց Բարան ի գաւառն Գեղարքունի և էարկ ի սուր զրնակիչսն ոզիս իրրև տասն և հինգ հազարս. և զմնձ

*Մաքենացոց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն ջրատացն և այլ ոչ ինչ. և էր Թիւն Հայոց երկուհարիւր եօթանասուն և վեց» (III, պյ. Ի, էջ 263, Մոսկվա, 1860. Համմտ. նաև **Ստեփ. Օրբելյան**, Թիֆլիս, 1911, ԼԳ, էջ 159):*

Մաքենին այնուհետև վերակառուցվել է Գնդարքունի գավառի իշխան Գրիգոր Ա Սուփանի ժամանակ († 852):

> *«Եւ տեղին անբնակ մնայր,— հաղորդում է Օրբելյանը,— ասպա յաւուրս Գրիգորի՝ Սիւնեաց տեառն, որ Սուփան կոչեցաւ, վերստին նորոգեցաւ և չիննեցաւ մեծ նկնդեցին. և պայծառագոյզ առաւել քան զառաւել» (տե՛ս Ստեփ. Օրբելյան, Թիֆլիս, 1911, ԼԳ, էջ 159):*

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ՝ «ի մեծ ուխտի կրօնաւորական կայանին Մաքենացոց» վախճանվել ու թաղվել է Հովհաննես Ոսկեբերանի կաթողիկոսը (834–855):

> *«Աստանօր ապա,– վկայում է Դրասխանակերտցին,— մեծ հայրապետն Յովհաննէս, վասն զի չրջէր ընդ վիճակեալ կողմանս գաւառին Գնդարքունւոյ, լցեալ զկէտ կենաց իւրոց՝ վախճանի ի մեծ ուխտի կրօնաւորական կայանին Մաքենացոց, եւ ի նմին ուխտի սրբոյ ի հանգիստ դնա վոխէին» (Թիֆլիս, 1912, էջ 126–127):*

Որ Մաքենացոց այս «կրօնաւորական կայան»-ը եղել է IX դարում նշանավոր ուսումնավայր և ունեցել է, անշուշտ, մեծ դրաղարան՝ այդ երևում է Ստեփանոս Օրբելյանի մի այլ վկայությունից, որի մեջ նա հաղորդում է, որ այս վանքում ստացել էր իր ուսումը Մաշտոց կաթողիկոսը (898–899):

> *«Յայսմ ժամանակի,— ասում է Օրբելյանը,— պայծառանայր երանելին Մաշտոց ի Սևան կղզին մեծահանդէս առաքինութեամբ. որ էր որդի աշխարհիկ երիցու մի Գրիգոր անուն Եղիվարդեցի. և նկնալ էր ի Սոթք գաւառ և պանդխտանայր անդ. որ և նա զՄաշտոց յաչակերտութիւն սուրբ Հօրն Մաքենացոց Ստեփաննոսի» (ԼԷ, էջ 173):*

Այս ցուցմունքները, ինչպես տեսնում ենք, հավանական կռվաններ են, որ Խորենացու վերոհիշյալ վկայության մեջ ակնարկված է Մաքենացոց վանքը, որը գտնվում էր Գնդար-

բունի գավառում և կրոնական նչանավոր կենտրոն էր IX դարում:

Արդ՝ պատահակա՞ն է միթե, որ Խորենացու «Աչխարհացոյց»-ի ու Պատմության մեջ մատնանչված են իրրև քաղաքական ու եկեղեցական կարևոր վայրեր «Մաւրիկոպալիա-Շիրակաչատ»-ը և Գնդարբունի գավառում, հավանորեն, Մաբենիսը, որոնք կենտրոններ էին, իրոք, Շիրակի Բագրատունիների զորեղացման ժամանակ:

Ինձ թվում է, որ այդ ո՛չ միայն պատահական չէ, այլ, ընդհակառակը, ուչագրավ մի նոր ապացույց է, որ Խորենացու ժամանակը պրվելու է Բագրատունիների իչխանության նույն այս չրջանում:

21. **Խորենացին, հավանորեն, այն «Մովսէս Քերթող»-ն է, որը Զաքարիա կաթողիկոսի հետ միասին գրել է «ի փոխումն Աստուածամաւրն եւ պատկերի նորին» ճառը:** — *Երուսաղեմի մատենադարանի թիվ 413 ձեռագրում գտնում է «Զաքարիայ կաթողիկոսի և Մովսեսի Քերթողի ի փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին» ճառը (տե՛ս* **Գ. Զարպհանալյան**, *Հայկական հին դպրության պատմություն, Վիեննա, 1897, էջ 503): Այս «Մովսէս Քերթող»-ը, որը Զաքարիա կաթողիկոսի (855–875) հետ միասին գրել էր այդ ճառը, հավանորեն, հենց հռչակավոր «Քերթողահայր» Մովսես Խորենացին է, որի Պատմությունը հորինված է, ինչպես վերև տեսանք, նույն այս ժամանակաչրջանում՝ Բուղայի արչավանքից հետո:*

Հետաքրքիր է ու հատուկ ուչադրության արժանի, որ «Վասն փոխման Աստուածածնի» մի գրվածք հայտնի է նաև Խորենացու անունով և տպագրված է Խորենացուն վերագրված «Մատենագրութիւնից» մեջ (Վիեննա, 1843, էջ 283–296) հետևյալ վերնագրով՝ «Պատասխանի Թղթոյն Սահակայ, յորում և բանք մարգարէականք եւ վասն փոխման Աստուածածնին թէ որպէս նգն կամ որպէս չնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի վայրն եւ թէ յոյր ձևոն եւ դինչ նգն պատճառք խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Հայս»:

Խորենացու նույն այս երկասիրության մասին, ինչպես հաղորդում է Զարպհանալյանը («Հայկական հին դպրության պատմություն», էջ 384), տասնումեկերորդ դարի մի գրչագիր տալիս է հետևյալ կարևոր տեղեկությունը՝

«Զայս ցանկալի պատմութիւնս՝ բազում լուծիւ և ցանկալի

յուզմամբ պտնալ մնձ հռետորն Մովսէս՝ որ կոչի Խորենացի՝ զրնաց ըստուգիւ հաւաստեաւ. և քանզի էր աղօտացնալ յաւադաց մերոց, և ուր ուրեք գտանէին. մինչև ի ձեռն կրօնաւորի միոջ գտնալ՝ որ էր յերկրէն Խոր Հայոց, ի գաւառէն որ կոչի Ձորոյ գետ, ի համբաւնալ ուխտէն Սանահին անուանեալ, պատահումն բարի իմն եղև. և հրամայեաց մնծն և բնաւն ի լաւս՝ Ատոմ, որդի Սենեքարիմայ, Հայոց նահանգի Վասպուրական կոչեցնալ. որոյ մասն վիրկութենան հաւատացնալ էր Ատոմայ՝ պատկեր մօր տնաւն ի բաժին Անձաւացնաց. հրամայեաց զրել մնծաւ յուսով և խնդութենամբ բազմաւ. որոյ անուամբ պարսպնալ եղիցի մնծաչուք իշխանութիւն նոցա, չորից հարազատ եղբարց՝ Դաւթի և Ատոմայ, Կոստանդիոյ և Համազասպայ, գեղեցիկ և չքնազարդ Բագրատուննաց»:

Խորննացուն վերագրված վերոհիշյալ գրվածքը, իբրև Սահակ Արծրունու Թղթի պատասխան, ինչպես ուղիղ նկատել է գերմանական գիտնական Պ. Ֆնտտկրը, անվավերական է և գրված է, հավանորեն, X կամ XI դարում (տե՛ս «Հայկական աչխատասիրութիյունք հայագետ Պ. Ֆնթթների», թարգմ. Հակ. Տաչյանի, Վիեննա, 1895, էջ 98–101):

Միանգամայն սակայն հավանական է, որ այդ Թղթում մեջ բերված Աստվածածնի պատկերի մասին տեղեկութիյունները քաղված են, իրոք, «Մովսես Քերթող»-ի, այսինքն՝ Խորննացու համապատասխան գրվածքից, որը նա գրել էր Զաքարիա կաթողիկոսի հետ միասին և որը հիշատակված է Երուսաղեմի թիվ 413 ձեռագրում:

Այս խնդիրը վերջնականապես պարզելու համար անհրաժեշտ է, իհարկե, համեմատել «Պատասխանի Թղթոյն Սահակայ» գրվածքը «ի վոխումն Աստուածամատրն և պատկերի նորին» վերոհիշյալ երկի հետ, որը գտնվում է Երուսաղեմի մատենադարանում:

Խորննացու ժամանակի որոշման համար նոր այս դիտողութիյունները, ինչպես տեսնում ենք, բավականաչափ հիմնավոր են ու համոզիչ:

Եթե Մովսես Խորննացին և «Մովսէս Քերթող»-ը ապրել են միևնույն ժամանակաշրջանում, երկուսն էլ ականավոր քերթողներ են, երկուսն էլ Մովսես են, երկուսն էլ ունեն գրվածքներ Հոգյաց վանքում գտնվող Աստվածածնի պատկերի մասին՝

ավելի քան հավանական է թուա թե, որ նրանք պետք է լինեն միևնույն անձը:

Այսպիսով, մեր քննության բոլոր եզրակացությունները հաստատվում են նաև կարևոր այս նոր դիտողությամբ: Խորենացու առեղծվածը լուծվում է միանգամայն բավարար կերպով: Նրա պատմության ժամանակը, որ վերև մենք ենթադրել էինք Բուզայի արշավանքից հետո, որոշվում է թուա թե այժմ IX դարի երրորդ քառորդում՝ Զաքարիա կաթողիկոսի ժամանակ (855-875), հավանորեն, սրա կաթողիկոսության սկզբնական տարիներում:

22. **Պիտոյից գրքի վերջաբանը հավանական է վերագրել Մովսես Խորենացուն:** — Պիտոյից գիրքը, ինչպես հայտնի է, թե՛ հայ և թե՛ օտար բանասերները համարել են Խորենացու աշխատություն: Նրանք հիմնվել են, գլխավորապես, Կիրակոս Գանձակեցու (Թիֆլիս, 1910, էջ 31) և Ասողիկի (Ս. Պետերբուրգ, 1885, II, Բ, էջ 79) վկայությունների, նաև Բաումգարտների ուսումնասիրության վրա («Ueber das Buch «die Chric», տե՛ս ZDMG, XL, 1886, էջ 457-515»): Բացի այդ՝ նրանք ի նկատի են ունեցել նաև Պիտոյից գրքի վերջաբանը, որ ունի հետևյալ վերնագիրը՝ «Մովսէսի Քերդողի, արարողի պիտոյիցս տաճի, իմաստարանութիւն յորդորական առ Թէոդորոս ոմն աշակերտ իւր՝ ներակրթիլ քաջուշիմն վարժիւք յիմաստս ճարտասանականս արհեստիս» (տե՛ս «Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 580):

«Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» իմ ուսումնասիրության մեջ (Վիեննա, 1928, էջ 105-115) ես մանրամասն քննել էի Պիտոյից գրքի հունարան լեզուն և հանգել էի ուշագրավ եզրակացության, որ այդ երկը, որի մեծագույն մասը թարգմանություն է հունարենից, իր բառամթերքով ու լեզվական առանձնահատկություններով խմբակից է Փիլոնի, Իրենեոսի և Թրակացու քերականության թարգմանություններին և թարգմանված է VI դարի առաջին կեսում:

Շատ պարզ է ուրեմն, որ Պիտոյից գիրքը չի կարող վերագրվել Խորենացուն, որը, ինչպես տեսանք, ապրել է IX դարում և իր պատմությունը գրել Բուզայի արշավանքից հետո:

Անժխտելի է սակայն, որ «Հայոց պատմութիւն»-ը և Պիտոյից գիրքը սերտ կապ ունեն իրար հետ և Խորենացին մեծ չափով օգտվել է, գլխավորապես, Պիտոյից գրքից: Եվ այդ հասկանալի է, որովհետև Խորենացին հետևող է պատմագրության հոետորա-

կան ուղղության և նրա Պատմության մեջ նամակները, ներբողները, պարսավները գրված են Պիտոյից գրքի կանոններով:

Մ. Արեղյանն իր «Հայ ժողովրդական առասպելները» (Վաղարշապատ, 1901) աշխատության մեջ մատնացույց է արել, օրինակ, որ Խորենացին Տիգրան I -ի ներբողը գրել է, հետևելով «Հիւսում Պիտոյից» աղբյուրի ճարտասանական պահանջներին:

Հայտնի է նույնպես, որ Խորենացու Պատմության բառապաշարի մեջ անչափ շատ են այն հազվագյուտ կամ հունարան բառերը, որոնք գործ են ածված Պիտոյից գրքի և Փիլոնի թարգմանություններում:

Որ Պիտոյից գիրքն է այն հնատորական ձեռնարկը, որից օգտվել է Խորենացին՝ այդ երևում է հենց իր Խորենացու հետևյալ վկայություններից.

1. «Եւ վասն առ ի Յունաց դրուցարանն դակնարկութիւն մերոյ պիտոյիցս առնելոյ՝ բաւական է այսչափ» (I, Բ, էջ 9).

2. «Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, կամ հաւաստի և կամ դոյդն ինչ կասնալ յարդարոյն՝ սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի հիւսման պատմութենէ Պիտոյից» (I, ԺԹ, էջ 57):

Պետք է ասել, որ IX դարը և, մասնավորապես, նրա երկրորդ կեսը, որ մի նոր դարագլուխ էր նախարարական Հայաստանի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական վերակենդանացման՝ կարևոր մի չրջան էր նաև հին հունարան դպրոցի վերածնության: Պիտոյից գիրքը, ինչպես և հունարան դպրոցի իմաստասիրական ու քերականական հնագույն երկերը, ծառայել են այս չրջանում իրրև դպրոցական դասավանդման ձեռնարկներ: Եվ Խորենացու մատնանչած «արուեստ»-ը, որ նա ավելի բարձր էր գնահատում, քան Սահակ-Մեսրոպի թարգմանչական հմտությունը (տե՛ս III, ԿԱ, էջ 343), պետք է հասկանալ այն իմաստով, որ նա իրրև «քերթող» մոտ ծանոթ է եղել հունարան դպրոցի ուսմունքներին:

Պիտոյից գրքի մեջ, որ դարերի ընթացքում գործ էր ածվում իրրև դասագիրք, ինչպես Հայտնի է, բացի բուն տեսություններից և հնագույն վարժություններից կան նաև հետագայում ավելացված վարժություններ, որ գրել են Դավիթ Հարքացին, Խոսրովիկը և ուրիշները:

Ըստ երևույթին, այդ ձեռնարկը վերստին խմբագրվել ու որոշ փոփոխությունների է ենթարկվել նաև IX դարում:

Մի նոր հավելում և նրա մեջ, իմ կարծիքով, այն վերջաբանը, որ բանասերները վերագրում են բուն Թարգմանչին:

Ուշագրավ է ամենից առաջ, որ ձեռագրերի մի մասը չունեն այդ վերջաբանը. օրինակ՝ Էջմիածնի մատենադարանի թիվ 1807 (= Կար. ցուց. Թ. 1764), 1810 (= Կար. ցուց. 1767) և 1820 (= Կար. ցուց. 1777) ձեռագրերը: Բացի այդ՝ միանգամայն անհավանական է ըստ իս, որ գրքի սկզբնական վերնագիրը լիներ «Պիտոյից տառ», ինչպես այդ ունի Մովսես Խորենացի վերջաբանը:

Ինչպես հայտնի է, Պիտոյից գիրքը հոնտորական արվեստի ընդարձակ մի ձեռնարկ է, որը պարունակում է իր մեջ տեսություններ և վարժություններ ո՛չ միայն «պիտոյից», այլև հռետորական ուրիշ ձևերի մասին: Քննության առնված մյուս ձևերն են բացի «պէտք»-ից՝ «խրատ», «եղծումն», «հասարակ տեղի», «ներբողեան», «պարսաւ», «բազդատութիւն», «բարեառնութիւն», «արտասանութիւն» և «դրութիւն»:

Ավելի քան հավանական է, որ այս ընդարձակ գրքի նախնական թարգմանությունն ունեցել է տարբեր վերնագիր և հետին դարերում միայն նա անվանվել է «Պէտք» կամ Պիտոյից գիրք՝ առաջին գլխի «Յաղագս պիտոյից» վերնագրի համաձայն:

Վիճելի է թվում ինձ նաև Պիտոյից գրքի թարգմանչի «ներդող» մակդիրը:

Այս մակդիրը, որ հունարեն ποιητής բառի թարգմանությունն է, թեև գործ է ածվել հունարան առաջին չերտի թարգմանություններում (տե՛ս «Թր. քեր.», հրատար. Ն. Ադոնցի, էջ 1. Պետ., էջ 359. Փիլ. նախ. Բ, էջ 153. Փիլ. տես.), սակայն հնագույն այս շրջանում նոր կերտված «ներդող» բառը պետք է լիներ խիստ անսովոր ու օտարոտի: Թրակացու քերականության մի ուրիշ հատվածում հունարեն նույն ποιητής բառը թարգմանված է նաև «արարող» (էջ 27):

Հունարան մատենագրության ավելի ուշ շրջանում միայն խորթ ու չինծու «ներդող» բառը հարազատ էր դառել և գործածվում էր հետզհետե ո՛չ միայն բանաստեղծի, այլև հոգևոր գիտնականի, քերականի, թարգմանչի և, ընդհանրապես, մատենագրի իմաստով:

Պիտոյից գրքի թարգմանիչը, որ հունարան առաջին չերտի մատենագիրներից էր, չէր կարող ըստ իս անվանվել «ներդող» նոր ու անսովոր այս բառի կերտման շրջանում:

Որ վերոհիշյալ մեր դիտողությունները հավանական են և որ

Պիտոյից գրքի թարգմանությունն անկարելի է վերագրել վերջարանի հեղինակ «Մովսէս Քերդող»-ին՝ այդ երևում է նաև վերջարանի լեզվից, որը դգալի չափով տարբեր է հունարան հնագույն թարգմանությունների լեզվից:

Պիտոյից գրքի վերջարանը երկու էջ է. ընդամենը՝ 69 տող:

Արդ՝ լեզվական ուշադիր քննությամբ այդ երկու էջի մեջ կարելի է մատնացույց անել բազմաթիվ բառեր, որոնք բնավ չեն հանդիպում Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանություններում և որոնք առաջին անգամ գործ են ածվել կամ հունարան դպրոցի երկրորդ և երրորդ խմբերի և կամ ավելի ուշ շրջանի երկերում:

Նոր այս եզրակացությունը հիմնավորելու համար կարևոր են թվում ինձ լեզվական հետևյալ դիտողությունները:

ա. «Մովսէս Քերդող»-ը չի կարող լինել Պիտոյից գրքի թարգմանիչը, որովհետև նա, բացի Պիտոյից-Փիլոնյան խմբի բառերից (տատ, խրատարանութիւն, ներակրթել, գեղապարեմ, պարերգակ, ճեմարան, հարատաւանեմ, սարաս, երկասիրարար և այլն), ունի նաև հունարան մյուս երկու խմբերի բառերը: Ուշագրավ է նաև, որ այդ բառապաշարի մեծագույն մասը սովորական էր Խորենացու ժամանակ Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում:

Այդպիսի բառեր են կամ դարձվածքներ՝

1. «ի ներ անձինդ», «ներանձիցն» 580, 32 և 581, 13. Համմտ. «արդ են ներ ձայնոջքն ներ անձինցն ախտիցն նչանակք» Պէր. 462. Ներանձնական Դ Պորփ., էջ 258, Տիմ., էջ 62. Ներանձնաւոր Յամրդ. Պէր. 514. Վերլ. 568. Տիմ. 31. Թէոդոր. ի Ծաչն, էջ 161. Ներանձնեան Թէոդ. ի կոյս. էջ 172[1].

2. «ննթակայս իրի» 580, 27-28. Համմտ. «սահման պրնութիւն ննթակայ իրին յայտնէ» Դ Պորփ. 260. «սահման է բան կարճառօտ՝ յայտնիչ բնութեան ննթակայ իրի» սահմ. 136.

3. վերաթևեմ — «աստուստ ի բարձրագոյնս վերաթևելով» 580, 7. «և տեսանէ զինքն ոչ երբէք ի լաւագոյնն վերաթևեալ»

---

[1] Նկատում կանեննք, որ «Ներբողեան ի Ս. Խաչն» և «Գովեստ ի Ս. Աստուածածինն» ճառերը (տե՛ս «Մատենագրութիւնք նախնեաց. Յոհան Իմաստասէր և այլն», Վիեննա, 1833, էջ 159-171 և 172-182), որ վերագրվել են Թեոդորոս Քոթենավորին, պատկանում են, իրոք, Թեոդորոս Միայնակեցին, որ «Մովսէս քերդող»-ի աշակերտն էր:

Սահմ. 167. տե՛ս նաև ՅՀ. իմ. ատ. և նրև. Զաք. կաթ. Յովհ. կաթ., էջ 35 և այլն.

4. Երզարանեմ 580, 9. Տիմ. 160. 240. ՅՀ. իմ. ատ., Երզարանութիւն Թէոդոր. ի կոյսն 172.

5. գովասանական 580, 17. Շար. Կիւրդ. խչ. և այլն, գովասանութիւն Նոննոս 16, Ստեփ. մեկն. քեր., էջ 185, Արծր. Դ. 13, էջ 193 և Դ. 2, էջ 273:

6. Ներագրեմ 580, 21. էլ. Ստ. 20, Ներագրաւոր էլ. Ստ. 30.

7. արտադատեմ 580, 22. Տիմ. 20. Սհմ. 130. ԴՊորփ. 316. էլ. Ստ. 86. արտադատութիւն Խոր., Բ. 70, էջ 206.

8. առագրեմ 580, 33. Յամրդ. Ստ. 427. Յամրդ. Պէր. 497. Վեր. 582. ԴՊորփ. 271. Սահմ. 164, նաև Թէոդոր. ի խաչն 168 և այլն.

9. Հրատարակեմ 581, 3. Նոննոս 26. Անյ. բարձ. Թէոդ. ի խաչն 159. 165 և այլն.

10. Համատոհմնայք 580, 24. Պիտ. 393 (կասկածելի հատուածներից մեկում). Խոր. Բ. 67, էջ 202:

Ո՛չ ոսկեղարյան երկերում և ո՛չ էլ Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանութիւններում չկան նաև հետևյալ բառերը, որ հանդիպում են միմիայն վերջարանում՝

> *Իմաստաճեմն 580, 11. բննադն 580, 15. քահանայազարդ 580, 19. ազատերամ 580, 19. իրախոյդ 580, 22. պետաւոր 581, 4. համաչուեմ 581, 8. թևահերձ 581, 9. հոմներամ 581, 9. բոլորակամ 581, 14, արտաքաղեմ 581, 17. հոմադն 581, 29. իրեանցասարաս 581, 31. մօտադդաց 581, 32. իրադիտող 581, 32. արտուստ 581, 34:*

Ընդունելով անգամ, որ այս բառերի մի մասը կարող է թերևս գտնվել հնագույն երկերում՝ կարծում եմ, այնուամենայնիվ, որ սրանց մեծագույն մասը մատենագրական հետին չրջանի բառեր են:

բ. Որ վերջարանը չի կարող գրված լինել Պիտոյից գրքի և կամ հունարան մյուս երկու խմբերի թարգմանության չրջանում, այլ նա հորինված պիտի լինի Խորենացու ժամանակ IX դարում՝ այդ ևս հաստատվում է ըստ իս նրա լեզվի քննությամբ: Բացի հունարան երեք խումբ թարգմանութիւնների նախկին բառապաշարից՝ կան նրա մեջ և այնպիսի բառեր, որոնք գործածական ու սովորական էին ավելի ուշ ժամանակի, գլխավորապես, Բագրատունյաց չրջանի մատենագրական երկերում:

Այդպիսի բառեր են թվում ինձ.

1. Երաստ – «ի բոլոր ազատերամն երաստից երանաւէտ ձայնիս բարերանեսցիս» 580, 19-20. այս բառը, որ նշանակում է «դաս, կարգ, համախմբութիւն, ժողով, աստեան», բացի վերջաբանից հանդիպում է մխիթար Գանձակեցու և Հովհաննես Կաթողիկոսի մոտ. տե՛ս Հովհ. Կաթ. (Թիֆլիս, 1912), էջ 26՝ «որոշէ [Վաղարշակ] և ժամս յարքունիս մտանելու, և ժամանակս խորհրդոց և երաստից և խրախճանութեանց պատրաստէ». Գանձակեցի է, էջ 20՝ «տեսին և գկարգաւորութիւն հրեշտակակերպ դասուց քահանայական երաստուց». վերջաբանն ունի նաև «ծաղրերաստ» 581, 35.

2. սաղապակ 581, 2. Տիմոթեոս Կուղի Հակաճառութիւնը, թեև ունի մեկ անգամ «առաջադապել» (էջ 108, 34. տե՛ս **Հր. Աճառյան,** *Արմատ. բառարան), սակայն «սաղապ» և «սաղապեմ» հազվագյուտ բառերը գործ են ածվել այնուհետև, գլխավորապես, Բագրատունյաց չրջանի մատենագրական երկերում, սաղապ Հովհ. Կաթ., էջ 121, 180, 216, Ոսկ. Յհ. Բ. յիչ., էջ 960. սաղապեցուցանեմ Խոր. Գ. 55, էջ 330. սաղապահեմ Խոր. Գ, 62, էջ 344. անսաղապ Հովհ. Կաթ. 291.*

3. բանապաճոյճ 580, 10. ունի նաև Հովհ. Կաթ. 3. «պաճոյճ» արմատը թեև ոսկեդարյան է, սակայն նրանից կազմված բաղադրություններն անչափ չատ են Բագրատունյաց չրջանի երկերում. օրինակ՝ գեղապաճոյճ Հովհ. Կաթ., էջ 111 և Արծր. Դ, 7, էջ 295. պճնապաճոյճ, ճոխապաճոյճ, պերճապաճոյճ, պայծառապաճոյճ Հովհ. Կաթ., 103, 252, 336, 91 և այլն.

4. կրթականութիւն 580, 13. կրթարան 580, 27 և 581, 1. «կիրթ», «կրթել», «կրթութիւն», անչուչտ, ոսկեդարյան են, սակայն «կրթական», «կրթականութիւն» և «կրթարան», որ չեն հանդիպում հնագույն երկերում, կարող են լինել Բագրատունյաց չրջանի նոր բառակազմություններ. կրթական Նիւս. ըն. Հովհ. Կաթ., էջ 101 և 334. Արծր. Ա. 10, էջ 58. կրթականութիւն Նար., իսկ էլ. Ստ., էջ 32՝ կրթելութիւն. կրթարան Արծր. Գ. 26, էջ 243 և Դ. 11, էջ 304.

5. ընթերցասէր 580, 12. Խոր. Ա. 5, էջ 17 և 20. Սոկր. 494. Արծր. Ա. 6, էջ 44. ընթերցասիրեմ Խոր. Ա. 3, էջ 10. Հովհ. Կաթ., էջ 12.

6. Հոգևծաղիկ 580, 31. Հովհ. Կաթ., էջ 182, Անան. Նկեղ.

7. օդապար 581, 3. օդապարիկ Հովհ. Կաթ., էջ 147, 198, 211, 244, 321, Շար. և այլն.

8. լոգարան 581, 10. «լոգացուցանեմ» ունի Բուզ. Ե. 7, ԼՀ 212, սակայն «լոգարան» հնագույն «բաղանիք»-ի կամ «լուսալիք»-ի իմաստով, հավանարար, նոր բառ է. նաև նույն այս բառն ունեն նաև Պոմ. Աղեքս., ԼՀ 69 և 88, որի թարգմանությունը մենք վերևում վերագրեցինք Խորենացուն, նաև Անան. Նկեղ. և Երզն. Մաթ.

9. բիւրակերպ 581, 19. Ոսկ. ՅՀ. ա. 28. Նար. և այլն. բիւրակերպական Խոր. վրդվ., ԼՀ 327 (Հրատ. 1843 թվականի).

10. բոցավայլիմ 581, 22. Խոր. Հոխխա. բոցավայլ Անան. Նկեղ.:

Եթե ցույց տրվի անգամ, որ այս բառերից մի քանիսը հին են, այնուամենայնիվ, հավանական կարելի է համարել, որ սրանց մեծագույն մասը առանձնահատուկ են եղել, բուն Նրևուքին, Բագրատունյաց չրջանի մատենագրության:

Արդ՝ ընդունելով, որ «Մովսէս Քերդող»-ի վերջաբանը գրված է IX դարում՝ կարող ենք նաև ենթադրել, որ ինքը Պիտոյից գիրքը, որը պարունակում է իր մեջ VII և VIII դարերում գրված Դավիթ Հարքացու «յաղագս չան», Խոսրովիկի «արուեստաւթիւն միայնամարտութեան Դաւթի և Գողիաթու» և դանազան այլ նորագույն վարժություններ վերստին խմբագրված պիտի լինի նույն այդ IX դարում և նրա խմբագրողն և վերջաբանի հեղինակ «Մովսէս Քերդող»-ը:

Վերջաբանի վերնագրում «արարողի պիտոյից տաւի» խոսքերը պետք է հասկանալ, հավանորեն, այն իմաստով, որ Պիտոյից գրքում մի քանի վարժություններ գրել է ինքը «Մովսէս Քերդող»-ը: Դժվար չէ նաև եզրակացնել, որ այս հեղինակն այն «Մովսէս Քերթողն» է, որը Զաքարիա կաթողիկոսի հետ միասին գրել էր «ի վոխումն Աստուածամատուն» ճառը:

Իսկ այս «Մովսէս Քերթող»-ը, ինչպես վերը տեսանք, հավանորեն, հենց այն հռչակավոր «Քերդողահայր» Մովսես Խորենացին է, որի պատմությունը հորինված էր նույն այս ժամանակաշրջանում Բուզայի արշավանքից հետո:

Վերջաբանի հեղինակի մասին վերոհիշյալ դիտողությունները պետք է ճիշտ լինեն, որովհետև մեր այդ նոր լուսաբանությամբ որոշվում է նաև, թե ով է Մովսես Քերդողի Թեոդորոս աշակերտը, որի համար չարադրված էր վերջաբանը իբրև «խրատաբանութիւն յորդորական»:

Միանգամայն պարզ է ու ավելի քան հավանական, որ «Մովսէս Քերդող»-ի աշակերտը «Մաբենոցք կրօնաւորանին մեջ

գտնվող» այն «Թէոդորոս անունով միանձն» է, որը հիշատակված է Զարպհանալեանի մոտ և որին նա համարում է Մաշտոց կաթողիկոսի ուսուցիչ (տե՛ս «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Վենետիկ, 1897, էջ 506):

Թովմա Արծրունու ասելով՝ Մաշտոց կաթողիկոսը «ուսումնական բանզիտութեանն քաջահմտագոյն» էր (III, ԻԶ, էջ 243) և, ինչպես հայտնի է, սա ևս իր հերթին ուսուցիչն էր Հովհաննես Դրասխանակերտցու, որին հին հայ պատմագիրներն անվանում են «ճարտասան» և «մեծ հռետոր»:

Կարելի է մեթոդական համարել կարևոր այն փաստը, որ «Մովսէս Խորենացու» աշակերտին մենք գտնում ենք նույն այն Գնդարքունի գավառում, որ Խորենացու Պատմության մեջ մատնացույց է արված իբրև նշանավոր ուսումնավայր, ուր աշակերտել էր, հավանորեն, Խորենացին, և կարդացել Եվսերիոսի եկեղեցական պատմությունը:

Վերհիշյալ Թեոդորոսը, որին ես համարում եմ Մովսես Խորենացու աշակերտ, հունարան «Քերդող» էր և նշանավոր մատենագիր IX դարի երկրորդ կեսում:

Բանասերները ըստ իս աչքաթող են արել, որ «Ներբողեան ի Ս. Խաչն» և «Գովեստ ի Սուրբ Աստուածինն» ճառերը, որոնք տպագրված են Հովհաննու Իմաստասիրի «մատենագրութեանց» վերջում (Վենետիկ, 1833, էջ 159–171 և 172–182) և ենթարդրվել են իբրև Թեոդորոս Քոթենավորի երկեր, վերագրվելու են, իրապես, այս Թեոդորոսին: Հրատարակված երեք ճառերից Քոթենավորի աշխատությունն է միմիայն առաջին ճառը՝ «Երանելւոյն Թեոդորոսի ընդդէմ Մայրագոմացւոյն» (էջ 148–158): Մյուս երկու ճառը, որոնց վերնագրերի մեջ նրանց հեղինակն անվանված է «Թէոդորոս ճգնաւոր միայնակեաց եւ վարդապետ» և կամ «Թէոդորոս Միայնակեաց», հայտնապես տարբեր են իրենց լեզվով առաջին ճառից և չեն կարող լինել Քոթենավորի երկեր:

«Գովեստ ի սուրբ Աստուածինն» ճառի նկատմամբ հենց հրատարակիչն ինքը նկատել է լեզվի այդ անհաչտելի տարբերությունը և կարևոր է համարել ներքևում դնել հետևյալ ծանոթությունը՝

> «Թէպէտ և զառաջիկայս ճառ զտանք մակագրեալ յանուն Թէոդորոսի, բայց երկրայիմք թէ խառնեալ իցէ ընդ ոճ բանից Թադէոսի ուրումն, որ սիրէ կազմել ստէպ բառս նոաբարդս և բառաբարդս, և ածանցս ծանրալուրս. զի

դիւրաւ մարթին չվոխել անուանքս Թադէոս և Թէոդորոս»:

Ավելորդ եմ համարում կանգ առնել լեզվական խնդիրների վրա, որովհետև հիշյալ ճառերն IX դարի Թեոդորոս Միայնակեցին վերագրելու համար կարելի է բերել ուրիշ բավարար ու համոզիչ ապացույցներ:

Թեոդորոսի «ի Սուրբ Աստուածածինն» գովեստը չարադրված է Աստվածածնի անունը կրող նորակառույց մի եկեղեցու շինության առթիվ:

> *«Վասն դի այսօր,— վկայում է գովեստի հեղինակը,— աւարտագործեալ կատարաշինեցաւ լրումն եկեղեցւոյ» (տե՛ս էջ 174):*

Արդ՝ Ստեփանոս Օրբելյանի կարևոր մի վկայությունից հայտնի է, որ 874 թվականին Թեոդորոսի աշակերտ Մաշտոցի նախաձեռնությամբ Սևանի կղզում կառուցված էր, իրոք, եկեղեցի «յանուն տիրուհւոյ Աստուածածնի»:

> *«Եւ անտի գնայ [Մաշտոց],— վկայում է Օրբելյանը,— մտանէ ի Սևան կղզին: Եւ յետ բազում ճգանց հրաման առնու ի տեսլեան չինել եկեղեցի յանուն երկոտասան առաքելոց, և սահմանել միաբանակեացս. յաղագս որոյ և գային առ նա երկոտասանք ի վերայ ծովուն յանուրջս. և նչանակէին զտեղի եկեղեցւոյն:*
>
> *Ահա սոյն երևմամբ վերին ազդեցութեամբ չարժնալ մնծ Թագուհին Մարիամ՝ ամուսին Վասակայ Սիւնւոյ, գայ առ սուրբն Մաշտոց. և բազում թախանձանօք ի հաւան ածնալ զնա ձեռն ի գործ արկնալ չինեն զգեղազարհոյճ եկեղեցիան յանուն սուրբ առաքելոց, և **զմիւսն, յանուն տիրուհւոյ Աստուածածնին.** և զարդարնալ մնծամնծ սպասուք կանգնեն զնա տուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց յ323 թուականին Հայոց» («Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, Լէ, էջ 173–174):*

Հավանական է, սրևմն, որ Թեոդորոս Միայնակեցն «ի Սուրբ Աստուածածինն» գովեստը գրել է 874 թվին հենց այս եկեղեցու կառուցման առթիվ:

Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ վկայության չարունակությունից պարզվում է նաև, որ «իշխանաց իշխան» Աշոտը նվիրել

էր Սևանի նորակառույց եկեղեցիներին «գիրկական նչանն աստուածընկալ խաչին»:

> *«Բայց Մաչտոց եղիր սահման վանիցն,— չարունակում է Օրբելյանը,— և պայծառացոյց երկնաբատակ կարգօր. յորմէ համբառոյ մեարանեալ Աչոտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտին՝ գայ ի տեսութիւն սուրբ Հօրն. և **ընծայէ գիրկական նչանն աստուածընկալ խաչին»:***

Այս նվիրատվության առիթով է հորինված, ըստ երևույթին, նաև Թևոդորոսի «Ի Սուրբ Խաչն» ներբողը, որը գրված պիտի լինի, ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ գովեստից, այսինքն՝ 874 թվականից, մի քանի տարի հետո:

Նոր այս եղրակացությունները Թևոդորոսի, նրա գրական երկերի և անգամ այդ երկերի ժամանակագրության մասին, արժանի են ըստ իս լուրջ ուշադրության:

Եթե ճիշտ են վերոհիշյալ իմ դիտողությունները, որ այս Թևոդորոս Միայնակեցն աշակերտն էր Պիտույից գրքի վերջարանի հեղինակ Մովսես Քերթող Խորենացու, այդ դեպքում՝ Խորենացու ուսուցչական ու գրական գործունեության ժամանակը, որոշվում է, իրոք, IX դարի յոթանասնական թվականներից առաջ, գլխավորապես, Զաքարիա կաթողիկոսի ժամանակ:

Հունարան դպրոցի հետևորդների վերոհիշյալ հաջորդականությունը՝ Մովսես Քերթող – Թևոդորոս – Մաչտոց – Հովհաննես Դրասխանակերտցի՝ ինչպես տեսնում ենք, ուշագրավ մի նոր կովան է դարձյալ մեր այն եղրակացության, որի համաձայն Խորենացու Պատմության ժամանակը մենք որոշել էինք Բուզայի արշավանքից ու մեծ երկրաշարժից հետո, Զաքարիա կաթողիկոսի ժամանակ:

23. **«Հայոց պատմութեան» վերնագրում «Մովսէս Խորենացի» անունը հեղինակի իսկական անունն է: — Ն. Ակինյանը,** *ենթադրելով, որ «Հայոց պատմութեան» հեղինակը նույնն է Ղևոնդ Երեցի հետ՝ Պատմության վերնագրում «Մովսէս Խորենացի» անունը համարում է, բնականաբար, կեղծիք և հավելված «երկրորդ գրչի մը» (տե՛ս «Մատենագրական հետազոտություններ», հատոր Գ, Վիեննա, 1930, էջ 287–291):*

Իր այս կարծիքը նա հավանական է համարում նաև հետևյալ նկատառումներով՝

«Բայց Մովսես անունը,— ասում է նա,— կարող է նկատվիլ

կեղծիք, վասնզի կեղծված է անոր ժամանակն ալ, գրութեան ձևն ալ: Ժամանակակից մը Թ դարու առաջին տասնյակին պիտի չհամարձակեր սնափառական անվամբ լույս ընծայել պատմութիւն մը, ուր ինքզինքը կը կեղծեր աշակերտ Սահակի և Մաշտոցի: Եվ որովհետև «Մովսէս» յուր գրութեան մեջ նախնաբար դիտում չէ ունեցած կեղծելու իր ժամանակը, պիտի ենթադրենք, թե կեղծողը Երկրորդ գրիչ մրն է, որ հեղինակին մահվենն ետքը հավատալի և հեղինակավոր ընծայելու համար անոր խոսքերը, կարևոր տեսած է կեղծել ժամանակն ալ, անունն ալ, այս ձանապարհով Հայոց հնագրական պատմութիւնը իբրև նորագյուտ աշխատութիւն պիտի դտներ ընդունելութիւն և պիտի առթեր հետաքրքրութիւն և սքանչանք» (էջ 289):

Ն. Ակինյանի այս դիտողութիւնները, թեև թվում են բավականաչափ հիմնավոր ու համոզիչ, սակայն չեն ճշտվում մեր նոր ուսումնասիրութեամբ և չեն կարող ըստ իս համարվել ընդունելի:

Վերև մենք տեսանք, որ «Աչխարհացոյց»-ը Մովսես Խորենացու աշխատութիւնն է, որ նույն այս հեղինակը Զաքարիա կաթողիկոսի աշխատակցութեամբ գրել է, հավանորեն, Աստվածածնի պատկերի մասին վերոհիշյալ երկը և որ Խորենացուն պետք է վերագրել, հավանորեն, Պիտոյից գրքի վերջարանը: Խորենացու այս աշխատութիւնների վերնագրերն են՝

*1. **«Աչխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ»,***

*2. **«Զաքարիայի կաթողիկոսի և Մովսեսի Քերթողի ի փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին»** և*

*3. **«Մովսեսի Քերդողի արարողի պիտոյիցս տառի խրատաբանութիւն յորդորական...»:***

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս գրվածքների վերնագրերում նրանց հեղինակը և ո՛չ մի պատճառ չուներ կեղծելու կամ թաքցնելու իր անունը: Ուրեմն՝ առանց երկար ու ձիզ ապացույցների իսկ պարզ է, որ «Մովսէս» անունը «Հայոց Պատմութեան» հեղինակի իսկական անունն է:

Արդ՝ ինչպես բացատրել այն փաստը, որ Խորենացին՝ իր Պատմութիւնը գրած լինելով սեփական իր անունով՝ նրա մեջ բացահայտ կերպով վկայում է իր մասին, որ ինքը Սահակ-Մեսրոպի աշակերտ է:

Ն. Ակինյանի կարծիքով՝ Պատմության հեղինակը «նախնադար դիտում չէ ունեցած կեղծելու իր ժամանակը», ուստի և նա ենթադրում է, որ «կեղծողը երկրորդ դրիչ մըն է»: Ակինյանի այս ենթադրությունը մանրամասն լուսաբանված է «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes» հանդեսում (1930, № 37, էջ 204–217), որը, դժբախտաբար, չհաջողվեց ինձ ստանալ արտասահմանից:

Ինձ թվում է սակայն, որ ընդմիջարկությունների մասին այս ենթադրությունը, ինչ չափով որ նույն կռահումը մեջ է բերված նաև «Մատենագրական հետազոտություններում» (էջ 171–172, 179–181 և 289), թեև հետաքրքիր է ու ուշագրավ, սակայն, ո՛չ միայն վիճելի է, այլև անհավանական:

Եթե ուղիղ լիներ Ակինյանի ենթադրությունը, այդ դեպքում՝ երկրորդ դրչի հավելում պետք է համարվեր նաև Խորենացու երրորդ դրքի «ի վարդապետսն, յինքն եւ ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդու» ամբողջ գլուխը, որի հորինման հետևողական ձևը և ոճը հատուկ են և հարազատ Խորենացուն: Այդ վերնագիրը, ինչպես տեսնում ենք, գրած պետի լինի ո՛չ թե ինքը ճանապարհորդող, այլ մի ուրիշ հեղինակ: Այս վերջին հեղինակը, հավանորեն, հենց ինքը Խորենացին է, որն իր Պատմությունը հորինել է, թեև իր սեփական անունով, սակայն հետևողական «բարառնութեան» ձևով, վերագրելով այն Սահակ-Մեսրոպի աշակերտ համանուն «Մովսէս»-ին:

Վերոհիշյալ վերնագիրը, որ ըստ իս իր՝ Խորենացունն է, հետաքրքիր է այն տեսակետից, որ Խորենացին բնավ իսկ չի թաքցնում, որ ճանապարհորդության հետևողական նկարագրությունը չի պատկանում Սահակ-Մեսրոպի աշակերտին: Շատ պարզ է, որ ինքն այդ աշակերտը չէր կարող իր ճանապարհորդության վերնագիրը դրած լինել «ի վարդապետսն, **յինքն** եւ ի ճանապարհորդութիւն ուսմանն, **օրինակաւ երկնային զարդու**»:

Խորենացու Պատմությունը, որ այժմ թվում է մեզ կեղծված ու խարդախված, ըստ երևույթին, գրված է պատմագրության հետևողական բացառիկ ու հատուկ ձևով, որը կարող էր թերևս հանդուրժելի համարվել Խորենացու ժամանակ:

Գրության այդ ձևը հասկանալի է հետևողական աբոլաստիկայի վերածնության այս շրջանում՝ IX և X դարերում՝ երբ մատենագրական սովորական ձևեր էին «բարառնութիւն»-ները, «զիմառնութիւն»-ները և «կերպարանառնութիւն»-ները, որ հորինվում էին Պետոյից գրքի կանոններով:

Բագրատունյաց իշխանության ժամանակ՝ Հունարան նույն դպրոցի հետևորդությամբ՝ գրված են, իմ կարծիքով, նաև այն արվեստական նամակները, որոնք կևդծ են, անչուշտ, և չինծու, օրինակ՝ «Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի առ Լրանելի վարդապետն Մովսէս Խորենացի», «Պատասխանի Թղթոյն Սահակայ» (տե՛ս «Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 281–282 և 283–296), «Թուղթ Գիւտայ առ Դաւիթ» և Դավթի պատասխանը (տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անհաղթի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 101–102) և ուրիշ նման գրվածքներ:

Խորենացու քննադատները պետք է լուռ իմ նկատի ունենան Հունարան սրոյաստիկայի այն միջավայրը, որի մեջ անվել ու դաստիարակվել էր Խորենացին և չարադրել իր Պատմությունը: Խորենացու Պատմության ամենախոցելի ու թույլ կողմը հենց այն պատմագիտական հոետորական ուղղությունն էր և այն «ամենիմաստ արուեստ»-ը, որին նա հետևել էր իբրև ականավոր «քերդող» ու հոետոր-պատմաբան:

Պատմագրական նրա այդ ուղղությունը կարևոր մի խնդիր է սակայն, որը կարոտ է հատուկ ու ընդարձակ ուսումնասիրության: Խորենացու Պատմության ժամանակի որոշումը Բուզայի արշավանքից հետո և Զաքարիայի կաթողիկոսության շրջանում (855–875), կարծում եմ, մեծապես նպաստելու է և այս խնդրի պարզաբանման:

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Մովսես Խորենացու Պատմության լեզուն, ինչպես հայտնի է, ի նկատի է առնվել բանասիրական բազմաթիվ աշխատություններում: Այն բանասերները, որոնք Խորենացուն ենթադրել են V դարի պատմագիր, բնականաբար, և նրա լեզուն համարել են «երկրորդ կարգի թարգմանչաց» լեզու, թեև ո՛չ բոլոր ամենայնի դասական, սակայն հին և վսեմ: Իսկ այն բանասերները, որոնք Խորենացուն ենթադրել են ավելի ուշ ժամանակի մատենագիր՝ հիմնվել են գործայլ նաև նրա լեզվի վրա, որը, նրանց կարծիքով, հետնադարյան է և միանգամայն անհարազատ V դարին:

Այս կարծիքները, որոնք հիմնավորված չեն փաստական տվյալներով, արտահայտված են սոսկ իբրև ընդհանուր տպավորություններ: Եվ այդ հասկանալի է, Խորենացու լեզուն, անտարակույս, հունարան լեզու է, իսկ հունարան լեզուն, ինչպես հայտնի է, մութ ու խրթին մի խնդիր էր, որը դեռևս չէր ենթարկվել գիտական մանրակրկիտ ուսումնասիրության:

Առաջին անգամ Հունարան դպրոցի ծագումը և հունարան լեզվով հնագույն թարգմանությունները քննության են առնված իմ «Հունարան դպրոցը և նրա գործոցման շրջանները» աշխատության մեջ (Վիեննա, 1928). ուստի այժմ միայն, հիմնվելով այդ ուսումնասիրության նոր եզրակացությունների վրա, հնարավոր է լուսաբանել Խորենացու Պատմության լեզուն, գլխավորապես, նրա բառապաշարը, և վճռականորեն որոշել նաև նրա ժամանակը:

Արդ՝ հաստատվում է արդյոք մեր եզրակացությունը Խորենացու ժամանակի մասին նրա լեզվի քննությամբ:

Ըստ իս բանասերներին խիստ դժվար պիտի լինի ինձ առարկել, հիմք ընդունելով Խորենացու լեզուն, որովհետև այդ լեզվի քննությամբ ևս հաստատվում է, որ Խորենացին Բագրատունյաց շրջանի և IX դարի պատմագիր է: Պետք է սակայն չնչտել, որ լեզվական իմ դիտողությունները համոզիչ կլինեն միայն նրանց համար, որոնք ուշադիր կերպով կարդացել են իմ «Հունարան դպրոցը»:

Այդ ուսումնասիրության մեջ ես արդեն ցույց եմ տվել, որ Հունարան լեզուն՝ իր բառամթերքով ու քերականական առանձնահատկություններով՝ միևնույնը չի եղել Հունարան մատենագրության դանադան խմբերում, այլ նա կազմվել է աստիճանարար ու հաջորդաբար և հետզհետե կրել է զգալի փոփոխություններ: VI և VII դարերում նա ունեցել է զարգացման երեք շրջաններ և բաժանվում է երեք խմբերի, որոնք իրարից տարբերվում են թե՛ իրենց բառամթերքով և թե՛ քերականական առանձնահատկություններով:

Արդ՝ Խորենացու Պատմության լեզվի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ նրա մեջ գործ են ածված ո՛չ միայն Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանությունների և Հունարան մյուս երկու խմբերի հատուկ բառերը, այլև այնպիսի հետնագույն բառեր, որոնք չեն հանդիպում ո՛չ սրանց և ո՛չ էլ ոսկեդարյան անվանված լեզվի մեջ, բայց սովորական են VIII և IX դարերի. մատենագրական երկերում:

Խորենացու Պատմության Հունարան կամ Հետնադարյան այդ բառապաշարը, որը կարող է թերևս նյութ ծառայել Հայոց լեզվի պատմական քերականության, մեջ ենք բերում ընդարձակ կերպով:

ա. Խորենացու Պատմության մեջ անչափ շատ են, նախ և առաջ, Պիտոյից-Փիլոնյան խմբի այն առանձնահատուկ բառերը, որոնք չեն պատահում Հին և Նոր կտակարանների թարգմանություններում, ո՛չ էլ ոսկեղեն անվանված V դարի մյուս երկերում: Եվ այդ շատ բնական է, որովհետև Խորենացին իրրև քերթող ու հռետորական ուղղության պատմագիր ուսումնասիրել էր Պիտոյից գիրքը, որ դպրոցական ձեռնարկ էր ճարտասանության, և, ինչպես հայտնի է, ծանոթ էր և օգտվել էր նաև Փիլոնյան թարգմանություններից:

Նրա Պատմության մեջ Պիտոյից-Փիլոնյան խմբի հատուկ բառեր են, օրինակ՝

*1. **ընծուիլ** Խոր. Գ. 62, էջ 343 և 344. Փիլ. Ել. Ա. 22. Բ. 104, էջ 535. Փիլ. քՀ. և այլն.*

*2. **կաղաղ** Բ. 77, էջ 216. Փիլ. նախ. Բ. 113 և լին. Իր. Յ., էջ 44. **կաղաղանալ** Փիլ. Լիուս. Տիմ., էջ 93.*

*3. Հագնելդութիւն Ա. 21, էջ 65. Բ. 10, էջ 120. Բ. 92, էջ 246. Փիլ. Հնս., էջ 10. Թրաք. 4 և այլն. ԴՊ. 253. Նոննոս 60 և 61. **Հագնելգաբար** Խոր. Գ. 52, էջ 326.*

4. Հիկէն Գ. 62, Կ 344. Փիլ. այլար. Ար. Ստ., Կ 372. Ներ. Պորփ., Կ 229 և այլն.

*5. **ներբողական** Ա. 3, Կ 10. Պիտ. 353, 433. 451. Փիլ. Նոն. 24. **ներբողեմ** Փիլ. իմաստն. Պիտ. 363, 413. Նոն. 14. **ներբողեան** Փիլ. Սամփս., Կ 554. Փիլ. Յովն., Կ 607, Պիտ. 413. Տիմ. 22 և այլն.*

*6. **չեչտ** Ա. 11, Կ 36. Թր. քեր. 3. Փիլ. այլար., Կ 106. **չեչտուհի** Խոր. Ա. 12, Կ 39. **չեչտել** Հովհ. Կաթ. և այլն.*

*7. **սաղարթ** Ա. 20, Կ 64. Գ. 37, Կ 303. Պիտ. 426. **սաղարթաթափ** Փիլ. լին. Ա. 9. Պիտ. 424. **սաղարթանալ** Նոն. 81 և այլն.*

*8. **սարաս** Գ. 67, Կ 357. Պիտ. 348, 458. **սարասել** Պիտ. 435. Տիմ. 320.*

*9. **վարկանել** Ա. 4, Կ 14. Բ. 8, Կ 118. Բ. 83, Կ 227 և այլն. Պիտ. 342. Փիլ. Գիլք Թղթ. 22. 33. Սահմ. 121. Նոննոս 37. Առ որս. Պտմ. Ադ. 49. 51 և այլն.*

*10. **վաւաչանալ** Բ. 63, Կ 195. Փիլ. իմաստն. վաւաչ. Խոր. Ա. 15. 17, Կ 48 և 55. Պտմ. Ադ. 4. **վաւաչոտ, վաւաչոտական** Պիտ. 566. Փիլ. իմաստն. Նոն. 81 և այլն.*

*11. **վրդովիլ** Գ. 50, Կ 321 և 68, Կ 358. Պատմ. Ադ. 13. 134. Ջքր. կաթ. ևն. **վրդովումն, վրդովութիւն** Պիտ. 357, Փիլ. բազն. և իմաստն. Խոր. Հոխոս. վրդով. Թր. 21 և այլն.*

*12. **ամենազան** Գ. 62, Կ 344. Պիտ. 343. 387. Պտմ. Ադ. 40. Փիլ. և այլն.*

*13. **ամենապատիկ** Բ. 88, Կ 238. Պիտ. 423. Փիլ. Աճ. աղք. Պտմ. Ադ. 45 և այլն.*

*14. **աշխարհավարիլ** Բ. 80, Կ 220. Փիլ. Կլ. **աշխարհավար** Պիտ. 390. **աշխարհավարութիւն** Պիտ. 553.*

*15. **աստեղաբանութիւն** Ա. Հավկվ. ր, Կ 91. Շիր. **աստեղաբանակ** Փիլ. նկս. Ա.*

*16. **առնապատկեր** Բ. 12, Կ 122. Փիլ. նկս., Կ 34. Պտմ. Ադ. 149, բայց **անդրի, անադրիանդ** Նոն. 24. 70. 71, այրաձև Ներ. Պորփ. 238.*

*17. **առիկողեալ** – «սակաւ ինչ առիկողեալ ի հիւսիսոյ» Ա. 16, Կ 51. «ընդկողմաննալ և զառիկողեալ» Փիլ. լին. Ա. 99. «բնակութիւն ունի սա... և յապառաժ զառիկոդս» Պիտ. 465. «զառիկող տեղիսն հասեալ կայան» Պտմ. Աղբս.*

*18. **ատակել** Գ. 1, Կ 257. Փիլ. Յովն.*

19. ***արգաւանդահող*** *Բ. 9, Կ 119. Գ. 59, Կ 338. Պատ. 351. 452. Փիլ. ժ. բան և իմաստն.*

20. ***առձեռնպատրաստ*** *Ա. 4, Կ 15. Գ. 53, Կ 327. Պատ. 351. Փիլ. նխ. Բ. 86. Անյ. բարձր. Առ որս և այլն.*

21. ***արդարաբան*** *Ա. 19, Կ 57.* ***արդարաբանութիւն*** *Փիլ. Յովն.*

22. ***աւաղ*** *Բ. 13, Կ 124, 125. Պատ.* ***աւաղական*** *Թր. բեր. 33.* ***աւաղումն*** *Փիլ. լին.* ***աւաղել*** *Խոր. Բ. 63, Կ 195. Ոսկ. Յհ. ա. 40 և այլն.*

23. ***արփի*** *Գ. 62, Կ 344. Պատ. 427. Փիլ. նախ. 11.* ***արփայազնաց լինել*** *Խոր. Գ. 55, Կ 331.* ***արփային*** *Խոր. Գ. 62, Կ 344. Փիլ. ժ. բան. լին. և կլ.*

24. ***աւելագործ*** *Բ. 68, Կ 205. Փիլ. լին. Դ. 240.*

25. ***բազմաչքութիւն*** *Ա. 30, Կ 83. Խոր. Աչխ. 589. Սուքր. Հրտր. 7.* ***բազմաչքումն*** *Փիլ. տեսակ.*

26. ***բարեզարդութիւն*** *Գ. 68, Կ 358. Պատ. 342. 343. Փիլ. լին. և այլն.*

27. ***բարեյարմար*** *Գ. 62, Կ 344. Թր. բեր. 41. Սահմ. 139.*

28. ***բարեբախտ, բարեբախտիկ, բարեբաստիկ*** *Գ. 29, Կ 291. Գ. 48, Կ 319. Գ. 56, Կ 332. Պատ. 343. 349 և այլն. Փիլ. ժ. բան. նախ. Բ. և այլն. Նոննոս 33. Պտմ. Ագք. 50. 137. 160. 167.* ***բարեբախտութիւն*** *Խոր. Ա. 29, Կ 82. Բ. 13, Կ 125. Փիլ. Ար. առաք. 630 և այլն.*

29. ***բերանանալ*** *Բ. 42, Կ 167. Փիլ. լին. Ա. 12. Եղ. ը. Շիր. Թղ. խչ.*

30. ***բնաբար*** *Գ. 20, Կ 279. Դբեր. 79. Փիլ. լին. Յամրտ. Ստոր. 445 և այլն.*

31. ***գծագրութիւն*** *Գ. 52, Կ 326. Կլ. Ստոր. 80.* ***գծագրեմ*** *Պատ. 438. Փիլ. այլաբ. Խոր. Աչխ. 589. Սուքր. Հրտր. 7.*

32. ***գործառնութիւն*** *Ա. 3, Կ 10. Պատ. 467. 485. Պկր. 507. Դբեր. 79 և այլն.*

33. ***գրաւորական*** *Գ. 61, Կ 342. Պատ. 419. 434. Փիլ. Տիմ. 219. 320.*

34. ***եռայարկ*** *Ա. 16, Կ 53. Փիլ. լին. Բ. 7.*

35. ***սարաս*** *Գ. 67, Կ 357. Պատ. 348. 435. 458. Տիմ. 320. Արծր. և այլն.*

36. ***զուգահաւասար*** *Գ. 64, Կ 348. Պատ. 349. 364. 428. Դբեր. 84 և այլն.*

37. ***ընդդիմաբանել*** *Գ. 65, Կ 351. Պատ. 555. Դ Պօրփ. 277.* ***ընդ-***

դիմաբանութիւն Փիլ. նկս. Բ. 120. Իր. Հերձ. 149. Տիմ. 195 և այլն.

38. ընդդիմամարտ Գ. 39, Կ 307. Խոր. Հոխոս. Փիլ. Լիւս. 127. Պետ. 367. 450 և այլն.

39. թշնամական Գ. 64, Կ 349. Փիլ. նկս. Բ.

40. ինքնահաճ Գ. 68, Կ 363. Փիլ. բագն. ինքնահաճոյ Խոր. Ա. 4, Կ 15. Պտմ. Ադբս. 51, 77. Թղոդոր. խչ. Հովհ. Կաթ. և այլն.

41. ինքնասիրութիւն Գ. 64, Կ 349. Փիլ. լին. Դ. 66, Կ 298. Փիլ. ժ. բան.

42. իրագործել Ա. 5, Կ 21. Պետ. 431. Շիր. իրագործութիւն Խոր. Ա. 13, Կ 44. Պետ. 439, Իր. Հերձ. 7. Նոննոս 80 և այլն.

43. լինելութիւն Բ. 74, Կ 212. Պետ. 353. Փիլ. նկս. ժ. Իր. Հերձ. 43. Ար. Ստոր. 449. Յամբղ. Պկր. 507. Դ Պորփ. 270 և այլն և այլն.

44. խելագարիլ Գ. 17. Կ 276. Փիլ. լին. Դ. 16, Կ 257 և այլն. խելագարութիւն Պետ. 388, 325. Առ որս և այլն. խելագարանք Խոր. Բ. 61, Կ 191.

45. ծննդաբանել Ա. 1, Կ 7. Փիլ. լին. Ա. 82. Նոն. 11. ծննդաբան Պտմ. Ադբս. 5. ծննդաբանութիւն Խոր. Ա. 20, Կ 58. Աճ. յայտ. Շիր. և այլն.

46. կատակերգութիւն Գ. 68, Կ 364. Թր. քեր. 2. Նոն. 58. կատակերգակ Պետ. 366. Նոն. 37. և այլն.

47. կարեկցութիւն Գ. 65, Կ 353. Պետ. 388. 392. 461. Դքեր. 105 և այլն.

48. կենդանագրութիւն Բ. 32, Կ 150. Փիլ. նախ. Բ. Պետ. 438. Առ որս. կենդանագրել Խոր. Հոխոս. Նոն. 65. Էլ. Ստ. 80 և այլն.

49. կենցաղ Ա. 24, Կ 73. Գ. 68, Կ 365. Պետ. 341, 345, Նոն. 5. Սահմ. 132. Պտմ. Ադբս. 114. կենցաղական Խոր. Բ. 3, Կ 104. Սահմ. 120. Էլ. Ստ. 11 և այլն.

50. կենցաղօգուտ Գ. 68, Կ 362. Պետ. 344. 353 և այլն. Փիլ. նախ. Բ. Դքեր. 105 և այլն.

51. համաբարոյ Գ. 68, Կ 364. Փիլ. Կլ. Բ. 43, Կ 499.

52. համաբնակ Գ. 34, Կ 299. Պետ. 441. Փիլ. լին. Բ. 38, Կ 116.

53. համանգամայն Գ. 61, Կ 342. Պետ. 346. 351 և այլն. Տիմ. 55. Ար. Ստ. 376. Դ Պորփ. 311. Ար. Աչխ. 607. Նոննոս 18. 24. 26 և այլն.

54. համապատիւ Գ. 64, Կ 348. Պետ. 379. Առ որս և այլն. համապատուաբար Էլ. Ստ. 69 և այլն.

55. ամբարտակ Ա. 9, Կ 32. Ա. 16, Կ 52. Բ. 56, Կ 186. համբարտակ Պետ. 350. Փիլ. լին. Բ. 82.

56. Համեստ Բ. 82, ՀՀ 224. Գ. 65, ՀՀ 351. Փիլ. տես. և քՀ. Պիտ. Եղ. ը. և այլն. Համեստանալ Գ. 20, ՀՀ 280. Եղ. ը.

57. Հարցասիրութիւն Ա. 9, ՀՀ 31. Ա. 32, ՀՀ 87. Հարցասէր Փիլ. լին. Սահմ. 190. ՅՀ. իմ. աստ.

58. Հաւ առնելով Ա. 6, ՀՀ 23. Հաւել Պիտ. 414. Հաւանալ Թր. քեր. 10. 12 և այլն.

59. Հետահոյզ (Նաև «Հետախոյզ» տե՛ս Հրատր. 1913) Բ. 37, ՀՀ 163. Հետախոյզ Փիլ. իմաստն. Հետախուզել Փիլ. տեսակ.

60. Հետևակել Բ. 13, ՀՀ 126. Փիլ. տեսակ.

61. Ձիավարել Բ. 79, ՀՀ 217. Գ. 13, ՀՀ 271. Պիտ. Ձիավարական Պտմ. Ազբս. 25. Ձիավարութիւն Պիտ. 435. Նիւս Երգ. և այլն.

62. Ձիընթացք Բ. 79, ՀՀ 218. Բ. 88, ՀՀ 238. Ձիընթացարան Փիլ. նախս. Բ.

63. Ճեմարան Գ. 61, ՀՀ 343. Փիլ. լին. Գ. 16, ՀՀ 188. Սահմ. 194. Դ Պորփ. 280. Պտմ. Ազբս. 68 և այլն.

64. Մականական Գ. 55, ՀՀ 331. Մական Փիլ. Սամփս. Նիւս. կազմ. Մականաբար Փիլ. իմաստ. Մականել Թևոդ. Մայրագոմ.

65. Մաշարայական Գ. 46, ՀՀ 316. Մաշարական Փիլ. նախս. Բ, ՀՀ 68.

66. Մերձազաւակ Գ. 65, ՀՀ 353. Փիլ. Կլ. Բ. 6, ՀՀ 472.

67. Միապետել Ա. 10, ՀՀ 32. Փիլ. ժ. բան. Միապետական, Միապետութիւն Պիտ. Փիլ. ժ. բան և այլն.

68. Մօտասեր Գ. 65, ՀՀ 353. Փիլ. Լիւս., ՀՀ 148. Կլ. Բ. 6, ՀՀ 472.

69. Յառաջամասն Գ. 65, ՀՀ 352, Փիլ. Կլ. Բ. 27. Յառաջամասնութիւն Փիլ. Կլ. Բ. 43, ՀՀ 500.

70. Յաւետախաղաց Գ. 62, ՀՀ 344. Պիտ. 359. Փիլ. լին. Դ. 59, ՀՀ 293. Իր. Հերձ. 178. Պկր. 533. Տիմ. 7 և այլն.

71. Յոգնական Բ. 79, ՀՀ 225. Թր. քեր. 16. 17 և այլն. Յոգնակի, Յոքնակի Պիտ. 399. Փիլ. լին. Ա, ՀՀ 12. Վերլ. 581 և այլն.

72. Նախաչաւիղ Բ. 92, ՀՀ 246. Պիտ. 399. 413. 445.

73. Նախասել Ա. 30, ՀՀ 83. Ա. Հավելվ. ր, ՀՀ 92. Փիլ. նախս. Բ. և Լիւս. Տիմ. 52. Յամրդ. Ստ. 450. Սահմ. 148. Դ Պորփ. 332 և այլն.

74. Նոյնասերմանք Գ. 65, ՀՀ 353. Փիլ. Կլ. Բ. 6, ՀՀ 472.

75. Չատաջուր Գ. 59, ՀՀ 338, Փիլ. իմաստն.

76. Ողբերգութիւն Գ. 68, ՀՀ 362. Թր. 2. Պիտ. 369. 411. Նոն. 37. Ողբերգակ Փիլ. լին. Դ. 211, ՀՀ 413. Ողբերգական Խոր. Բ. 92, ՀՀ 245. Իր. Հերձ. 182 և այլն.

77. Որպիսութիւն Ա. 16, ՀՀ 54. Բ. 28, ՀՀ 146. Փիլ. ժ. բան. Նոն. 11. Դ-քեր. 110 և այլն.

78. ոսոխասէր Գ. 64, էջ 349. ոսոխասիրութիւն Փիլ. նախ. Ա.

79. ուռճանալ Գ. 62, էջ 344. Փիլ. եկ. Ա. 9. Պիտ. 383. 414. Խոր. ատ Արծր. և այլն.

80. չափաբերապէս Գ. 62, էջ 343. չափաբեր Փիլ. նախ. Բ. չափաբերական Նոն. 48. չափաբերութիւն Փիլ. լին. Դ. 19 և այլն.

81. պատկանաւոր Ա. 1, էջ 6. Թր. քեր. 3. Փիլ. լին. Բ. 3. Իր. Հնրժ. 139. Յամրդ. Պէր. 499. Էլ. Ստ. 33. Դրեր 115 և այլն.

82. պատուասիրել Գ. 68, էջ 361. Նոն. 78. պատուասէր Խոր. Գ. 68, էջ 364. Փիլ. Լիւս. և ժ. բան. պատուասիրութիւն Փիլ. Լիւս. Դ Պորփ. 252. Նոն. 50. 81.

83. սականջնել Գ. 65, էջ 351. չականջել Փիլ. տե՛ս, էջ 28. չականջանել Փիլ. ժ. բան. 234.

84. սկզբնատիպ Ա. 1. էջ 6. Փիլ. Աճար. ծն. և ատ որս և այլն.

85. ստորնակայ Գ. 65, էջ 352. ստորնակ Փիլ. եկ. Բ. 117. 119. ստորակայ Փիլ. լին. Ա. 37. Փիլ. Սամփս., էջ 558. Պիտ. 357 և այլն.

86. վարար Բ. 37, էջ 162. Նոննոս 13. վարարել Փիլ. Լիւս.

87. տրոհումն Գ. 62, էջ 344, տրոհութիւն Թր. քեր. 2. Փիլ. այլար. Պղր. 491 ևն. տրոհել Խոր. Բ. 62, էջ 193. Սահմ. 127. Յամրդ. Պէր. 492. Դրեր. 88 և այլն.

88. փարթամացուցիչ Գ. 68, էջ 362. փարթամ Թր. քեր. 18. փարթամանալ Պիտ. 347. փարթամութիւն Պիտ. 345. 432. Աո որս և այլն. բազմափարթամ Պտմ. Աղքս. և այլն.

89. փառամոլ Գ. 63, էջ 347, Ոսկ. ՅՀ. ա. 40. փառամոլիլ Պիտ. 451. փառամոլութիւն Խոր. Բ. 92, էջ 248.

90. փորագրել Գ. 68, էջ 363. Փիլ. ժ. բան.

91. քաջախոհ Ա. 19, էջ 57. Փիլ. նախ. Բ.

92. քաջամատն Գ. 55, էջ 331. Փիլ. եկ. Բ. 34.

93. քաջամարտիկ Ա. 11, էջ 37. Ա. 15, էջ 49. Պիտ. 357. 398.

94. քաջօրէն Գ. 26, էջ 287. Փիլ. յմաստն. Պտմ. Աղքս., էջ 48.

95. քաջափառութիւն Գ. 48, էջ 319. Պիտ. 346. 438. Փիլ. նախ. Բ. և յմաստն.

96. քերթող Գ. 65, էջ 353. Փիլ. լին. Գ. 16, էջ 187. Փիլ. Լիւս. 148. Պիտ. 359. Թր. քեր. 1. Սահմ. 151. Դ Պորփ. 324. Նոն. 22. Ար. Աչխ. 619 և այլն և այլն.

97. արդեան Գ. 48, էջ 319. Փիլ. ժ. բան. և եկ. Պիտ. Պտմ. Աղք. 94.

98. Հրաչափառագոյն Բ. 92, էջ 245. Գ. 67, էջ 355. Պիտ. 421. 482. Աճար. մկրտ. և ատ որս.

99. Հաստղութիւն Ա. 7, էջ 28. Ա. 9, էջ 30. Սահմ. 182. Հաստումն Սահմ. 126. Պիտ. 496. Փիլ. տեսակ. և այլն.

100. Երկաբանչիւր Գ. 12, էջ 270. Գ. 29. էջ 291. Պիտ. 441. Փիլ. նիւս. րն. և այլն:

բ. Խորենացու Պատմութեան քննութեունից երևում է, որ նա ո՛չ միայն ծանոթ է, եղել Պոտայից-Փիլոնյան խմբի թարգմանութեուններին, այլև Արիստոտելյան երկերին ու նրանց մեկնութեուններին, որոնցից երկրորդ խմբի թարգմանման ժամանակը ևս որոշել էի VI դարի յոթանասնական թվականներին, իսկ երրորդ խմբինը, գլխավորապես, VII դարում (տե՛ս «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները», էջ 136–142 և էջ 202–208):

Ուշագրավ է, օրինակ, Խորենացու Պատմության հետևյալ հատվածը, որ թարգմած է, հավանորեն, Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի համապատասխան մի վկայութենից, որը մատնացույց էր արված Գարուստ Տեր-Մկրտչյանի «Հայկականք»-ում (Վաղարշապատ, 1894, տե՛ս նաև նույն հեղինակի «Դիատրութեուն» վերնագրով հոդվածը «Հանդես Ամսօրյա»-ում, 1892, դեկտեմբեր, էջ 372):

> *Խորեն. Ա. 2, էջ 9՝ «և ուրեք ուրեք գտանել աշխատութեամբ, հատաբնել փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱ (= պատուպարաշխութեուն) առ Բ (= քաղղէացիս) և զԹ (= պիտականութեուն) առ Փ (= փիւնիկեցիս) և զԿ (= զերկրաչափութեուն) առ Ե (= եգիպտացիս) և զԾ (= դերաժշտութեուն) առ Թ (= թրակացիս): Եւ ժողովեալ զայսոսիկ ապանց, զորոց և մեք զանուանան հավաստի գիտեմք՝ նուիրեցին ի փառս Հելլենացւոց աշխարհին»[1]:*
>
> *Սահմ. խմաստ., գլ. Ժէ, էջ 199՝ «Եւ պարտ է գիտել, եթէ պիտականն փիւնիկեցիք զտին, որպէս վաճառականք զոյով և թուականութեան պէտս ունելով առ ի համարել. իսկ դերաժշտականն թրակացիք. վասն զի անտի էր Որփևս, զորմէ ասեն նախ գտանել դերաժշտականն. իսկ զաստե-*

[1] Այս հատվածն առաջին անգամ ուղիղ մեկնել էր S. Սավալանյանցը (տե՛ս «Աբչպայա Արարատեան», 1878, 29 ապր. № 1091): Պրոֆ. Լևոն Մսերյանցի նախադրութեամբ՝ որ այս հատվածը կարող է թարգմած լինել Եվսեբիոս Կեսարացու «Praeparatio evangelica» աշխատութեունից (տե՛ս «Ученые записки», II, Ранион, Москва, 1930, էջ 156–168)՝ դժվար է ընդունել, որովհետև Praeparatio-ի մեջ չեն հիշատակված «թուականութեուն»-ը և «երաժշտութեուն»-ը:

դարաչխականն քաղղկացիք. վասն դի անամպ և հանապատ ջինջ գոլով օդոցն՝ դիւրաւ կարացին ըմբռնել զչարժմունս աստղաց. իսկ դերկրաչափականն նկիպտացիք զամն ի հարկէ»:

Պատմության առաջին գլխում «առաքինութիւն բանականին և խոհականութիւն» Խորենացու խոսքերը (Ա. 1, էջ 6) առնված են, հավանորեն, Արիստոտելին վերագրված «Յաղագս առաքինութեանց» երկի հայերեն թարգմանությունից (տե՛ս էջ 628՝ «և է խոհեմութիւն առաքինութիւն բանականին»): Որ Խորենացին օգտվել է նաև Նոննոսի հայերեն թարգմանությունից՝ այդ մատնանշված է, ինչպես հայտնի է, Գր. Խալաթյանցի «Армянские Аршакиды» աշխատության մեջ:

Հավանական է, ուրեմն, որ իրեն ականավոր «երդող» Խորենացին ուսումնասիրած է եղել բացի Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանություններից նաև հունարան թարգմանությունների մյուս երկու խմբերը:

Որ այս ենթադրությունը հիմնավոր է և ուշադրության արժանի, այդ երևում է դարձյալ Խորենացու լեզվի քննությունից: Պատմության մեջ պատահում են, իրոք, այն հատուկ և, գլխավորապես, հունարան բառերը, որոնք առաջին անգամ գործ են ածվել հունարան այս խմբերում և չեն հանդիպում ո՛չ դասական անվանված հնագույն երկերում, ո՛չ էլ Պիտոյից-Փիլոնյան խմբի թարգմանություններում:

Այդպիսի հետին բառեր են թվում ինձ, օրինակ՝

*1. **հետևանամ** վխ. **հետևեմ** – «և միակն ըստ կարգի հետևանայ ի թագաւորութիւն» Բ. 1, էջ 101. «իսկ յետ այսորիկ զայլսն զամենայն՝ որ հետևանան» Յամրդ. Պկր. 488. տե՛ս նաև Յամրդ. Ստոր. 411. Տիմ. 9. 40. 78. և այլն. Անան. քեր. 146 և այլն.*

*2. **հանուր** Ա. 4, էջ 13. Գ. 68. էջ 358. Սահմ. 126. Դ Պորփ. 14. Վերլ. 572 և այլն.*

*3. **յարահետևիմ** – «յարահետևողք իմաստասիրացն» Գ. 62, էջ 343. «առաջին սահմանն յարահետևի ամենեցունց առընչիցն» Ար. Ստոր. 384. «յարուցողին յարահետևիմք» Համամ. քերակ. 268.*

*4. **անբանութիւն** – «այլ ասես՝ մեզ պատճառն տալ անբանութեան նոցա» Ա. Հավկվ. ա, էջ 90. «իսկ անասուն. որ է տար-*

բերութիւն, պիտակարար ասաց, որ է անբանութիւն», տե՛ս նաև էլ. Ստոր., էջ 96.

*5. **ապազայ** Գ. 66, էջ 354. Գ. 68, էջ 362. Պիտ. 516 (Նորագույն Հատվածներից մեկում). Դրկր. 81. Անյ. բարձ. և այլն.*

*6. **բարձրայօնութիւն** Բ. 92, էջ 246. **բարձրայօն** Մովս. բերդ. տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 27. նաև Հովհ. կաթ. և այլն. **բարձրայօնակ** Սիւն. առ Գերմ.*

*7. **կենցաղավարութիւն** Ա. 21, էջ 65. Սահմ. 209. Դրկր. 89. Ոսկ. ՅՀ. բ. 2 և այլն. **կենցաղավարել** Խոր. Գ. 67, էջ 355. Նոննոս 33. 76. Ստ. քեր. 193. Ոսկ. ՅՀ. ա. 27 և այլն.*

*8. **կիսակտուր** – «արարեալ սուսերաւ կիսակտուր զգլուխ նորա» Գ. 39, էջ 307. «զթա՛ ո՛վ թագաւոր, ի կիսակտուր չնականս» Սահմ. 160. ունեն նաև Հովհ. կաթ., Ասող. և այլն.*

*9. **մոլեխինդ** – «տան նմա արրումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն» Բ. 92. էջ 247. «յաղագս մոլեխանդին Սոկրատայ» Նոննոս 30. ունեն նաև Նիւս կազմ. Մեսր. Եր. Հովհ. կաթ. և այլն.*

*10. **պարաճածկել** Ա. 24, էջ 72. Գ. 9, էջ 267. էլ. Ստոր. 32. Ար. Աչխ. 626. Զաքր. կաթ. և այլն. պարաճածուկ Մամբրէ.*

*11. **վերաբանութիւն** – «ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան» Գ. 61, էջ 343. «խօսակակից անհամեմատելի վերաբանութեան» Պիտ. 572 (Նորագույն հատվածներից մեկում). «զանազանի փոխարերութիւն վերաբանութեան» (ἀναλογίας) էլ. Ստոր. 49.*

*12. **փոխարկել** Ա. 2, էջ 8. Գ. 29, էջ 291 և այլն. Տիմ. 62. Նոննոս 74. 80. էլ. Ստոր. 132. «Գիրք Թղթոց» 38. 155. 213 և այլն.*

*13. **ընդդիմակայեմ** Գ. 68, էջ 360. **ընդդիմակայութիւն** Սահմ. 124. **ընդդիմակայք** գոն էլ. Ստոր. 12.*

*14. **քաղաքական** – «և քաղաքականս ուսանել կարգս» Ա. 3, էջ 10. «ի քաղաքական չարագրութենանց մի դիտաւորութիւն ունին Արիստոտէլ և Պղատոն. վասն զի իւրաքանչիւրոք ի զոյգանէ ասէ՝ թէ զիա՞րդ պարտ է կարգաւորիլ քաղաքի» Սահմ. 210. ԴՊորփ. 254. Նոննոս և այլն. (Նոր են, հավանորեն, ըստ իրենց հատուկ իմաստի):*

գ. Խորենացու Պատմությունը, որ գրված է ըստ իս հունարան երեք խումբ հնագույն թարգմանություններից հետո, ունի, բնականաբար, այդ թարգմանություններում գործածված այն խորհ ու արվեստական բարդությունները, որոնք կազմված են, գլխա-

վորապես, նորակերտ նախդիրների օգնությամբ: Ուշադրության արժանի է սակայն, որ նրա մեջ պատահում են երբեմն և այնպիսի նորաձև բարդություններ, որոնք չեն հանդիպում այդ թարգմանություններում և կարող են կազմված լինել ավելի ուշ շրջանում:

Հետևյալ նման բառակազմություններ են, օրինակ՝

1. առարկութիւն Ա. 4, էջ 14. Ա. 21, էջ 65. Բ. 13, էջ 123. Փիլ. Սամփս., էջ 566. Իր. Հերձ. 109. Տիմ. 149. Յամրդ. Պէր. 487 և այլն.

2. արտաքստութիւն Բ. 70, էջ 206. արտաքստել Տիմ. 20. Սահմ. 130. Դ-Պորփ. 316. էլ. Ստոր. 86. Պիտ. 580 (վերջաբան).

3. արտահալածեմ Ա. 24, էջ 72. Ձրր. Կաթ. և այլն. արտալածեմ Պիտ. 452 և այլն, բայց արտահալած ունի նաև Ոսկ. Փիլիպ., որ համարվում է ոսկեդարյան թարգմանություն.

4. արտաչէկ Գ. 37, էջ 305. արտաչիկացեալք Իր. Հերձ. 223. Փիլ. լին. Բ. 59, էջ 143. Փիլ. Եւ. Ա. 16, էջ 460. արտաչիկապոյն Անյ. բարձր. և նոր. արտաչիկանամ Փիլ. Հաճախ Ձրր. Կաթ. և այլն.

5. արտասահմանեմ Ա. 4, էջ 15. Բ. 90, էջ 240. Գ. 29, էջ 293 և այլն. Իր. Հերձ. 60. Տիմ. 147. Վարք Ոսկ. Ձրր. Կաթ. և այլն. արտասահման Պիտ. 573 (նոր հատվածներից մեկում).

6. արտասանութիւն Բ. 92, էջ 246. Պիտ. 529. 533 ևն. արտասել, արտասանել Պիտ. 529. Ար. Ստոր. 364. Պէր. 522. Նոն. 23. Թէոդ. Խչ. և այլն.

7. բաղդատեմ Բ. 13, էջ 124. Փիլ. լին. Դ. 209, էջ 412. Պիտ. 386. Իր. Հերձ. 116. Յամրդ. Ստ. 420. Սահմ. 130. էլ. Ստոր. 109 և այլն.

8. բացակամ Ա. 19, էջ 57 (տե՛ս ծանոթ. 11). Տիմ. 236. էլ. Ստոր. 89 և այլն.

9. բացափայլեմ Բ. 92, էջ 246. Տիմ. 51 և այլն. Խոր. Վրդվ. բացափայլ Պիտ. 531. Փիլ. նախ. Բ, էջ 44. լին. Դ. 181. էջ 383. Տիմ. 82. Ձաքր. Կաթ. և այլն.

10. գերազանցեմ Գ. 67, էջ 356. Փիլ. Պիտ. 345. Տիմ. 97. Յամրդ. Ստ. 417 և այլն. գերազանցօրէն Խոր. Գ. 65, էջ 352.

11. գերապանծ Բ. 70, էջ 207. ՅՀ. իմ. և այլն. գերապանծութիւն Փիլ. բազն.

12. հակամիտեմ Բ. 75, էջ 213. Պիտ. 451. ՅՀ. իմ. Երև. և այլն. հակամէտ Փիլ. այլաբան. Ղևոնդ, Հովհ. Կաթ. և այլն. հակառակամէտ Փիլ. Յովն.

13. Հոմանուն Բ. 65, էջ 199. Փիլ. Լիւս., էջ 139 և այլն. Թր. քեր.

17. 19. Յամրդ. ՊԼր. 498. Սահմ. 124. Դ-Պորփ. 252. Էլ. Ստոր. 41 և այլն.

14. **մակագրութիւն** Գ. 62, ԼՂ 343. Տիմ. 63. Յամրդ. Ստ. 445. Սահմ. 210. Դ-Պորփ. 251. Վևրդ. 562. Էլ. Ստ. 36. **մակագրել** Թր. քեր. 4. Փիլ. իմաստն. և այլն.

15. **յարահետևիմ** Գ. 62, ԼՂ 343. Ար. Ստոր. 384. Համ. քեր. 268.

16. **նախագահ** Բ. 86, ԼՂ 231 և այլն. Պիտ. 492. Տիմ. 162. Դ-քեր. 115, **նախագահութիւն** Խոր. Բ. 11, ԼՂ 121. Բ. 19, ԼՂ 132. Տիմ. 42. Դ-քեր. 117. ՅՀ. իմ. Փոտ աո Զքր. Կաթ. և այլն.

17. **ներքողական** Ա. 3, ԼՂ 10. Պիտ. 353. 433 և այլն. Փիլ. Նոննոս 24 և այլն.

18. **չարագրեմ** Ա. 6, ԼՂ 22. Բ. 92, ԼՂ 246. Փիլ. նախ. Բ, ԼՂ 64 և այլն. Տիմ. 144. 256. Դ-Պորփ. 252. Էլ. Ստ. 37. Նոն. 53 և այլն. ունի նաև Փարպ. **յառաջաբան**, ԼՂ 2. **չարագրութիւն** Ա. 32, ԼՂ 88. Գ. 1, ԼՂ 257. Պիտ. 379. 380. Տիմ. 19. Նոննոս 55. Վևրդ. 561 և այլն.

19. **չարադասեմ** Ա. 9, ԼՂ 31. Փիլ. լին. Դ. 117, ԼՂ 336. Պիտ. 418. Իրևն. Հևրժ. 236. ՊԼր. 507. Յամրդ. Ստ. 457. Վևրդ. 571. Ար. Աչխ. 610. Նոննոս 37.

20. **չարադրութիւն** Ա. 32, ԼՂ 88. Թր. քեր. 12. Փիլ. լին. Գ. 38, ԼՂ 206 և այլն. Տիմ. 178. ՊԼր. 491. Սահմ. 139. Դ-Պորփ. 334. Վևրդ. 561.

21. **պարածածկեմ** Ա. 24, ԼՂ 72. Գ. 9, ԼՂ 267. Էլ. Ստոր. 32. Ար. Աչխ. 326. Զքր. Կաթ. և այլն.

22. **պարունակեմ** Բ. 83, ԼՂ 226. Գ. 62, ԼՂ 344. Փիլ. լին. Բ. 41, ԼՂ 119. Պիտ. 415. Իր. Հևրժ. 14 և այլն. Տիմ. 83. Յամրդ. Ստ. 413. Դ-Պորփ. 279. Սահմ. 122. Ար. Աչխ. 605. Նոննոս 57. Խոր. Աչխ. 590. Սուքր. Հրատ. 8.

23. **պարայածեմ** Գ. 62, ԼՂ 344. Փիլ. Կլ. Բ. 81, ԼՂ 524. Հովհ. Կաթ. **պարայածումն** Փիլ. Կլ. Բ. 79, ԼՂ 522.

24. **ստորագրութիւն** Ա. Հավկլվ. Բ., ԼՂ 90. Տիմ. 36. Իրևն. Հևրժ. 7. Դ-Պորփ. 284. Էլ. Ստ. 42. Սահմ. 125. Խոր. Աչխ. 587. Սուքր. Հրատ. 6. **ստորագիր** Խոր. Բ. 88.

25. **ստորնակայ** Գ. 65, ԼՂ 352. **ստորակայ** Փիլ. լին. Ա. 37, Փիլ. Սամփրս., ԼՂ 558. Պիտ. 357 և այլն.

26. **վերագրեմ** Ա. 16, ԼՂ 54. Գ. 51, ԼՂ 323. Պիտ. 545. Փիլ. իմ. Տիմ. 3 և այլն. Իր. Հևրժ. 37. Նոն. 24. Զաքր. Կաթ. և այլն. **վերնագիր** Խոր. Ա. 9, ԼՂ 30. Պիտ. 531 և այլն.

27. **վերադէտ** Գ. 51, ԼՂ 322. **վերադիտեմ** Պիտ. 445. 448. Տիմ. 58. **վերադիտող** Փոտ աո Զքր.

*28. **վերծանութիւն** Գ. 61, էջ 342. Թր. բեր. 1. 2. Արծր. և այլն. **վերծանել** Տիմ. 100. Պէր. 508 և այլն.*

*29. **փոխադրեմ** Բ. 10, էջ 120. Պատ. 353. Տիմ. 41. Պէր. 476. Սահմ. 141. Նոն. 28 և այլն.*

*30. **փոխարկեմ** Ա. 2, էջ 8. Գ. 29, էջ 291 ևն. Տիմ. 62. Նոննոս 74. 80. Էլ. Ստ. 132. «Գիրք Թղթոց», 38. 155 և այլն.*

Ներքև բերված են հունարան նախադրներով կազմված այն նորաձև բառերը, որոնք չեն հանդիպում հունարան վերոհիշյալ թարգմանութիւններում:

Այդ բառերը, որ մասամբ գործ են ածված Սոկրատի եկեղեցական պատմութեան ու Սեպրեատրոսի վարքի հայերեն թարգմանութիւններում, կարող են լուսաբանել մի՛շ լոկորը, գեթ մեծագոյն մասը՝ կազմված լինել հայոց մատենագրութեան սկզբի ոչ չրջաններում:

*31. **արտաճառեմ** Գ. 65, էջ 351. Պատմ. վարուց Սեպր., էջ 691. Ջրբ. Կաթ. Ան. եկեղ.*

*32. **արտափայլեմ** Գ. 67, էջ 657. Վարք Սեպրեատ. Ա. էջ 699. Ջրբ. Կաթ. Հովհ. Կաթ. և այլն.*

*33. **գերապայծառ** Բ. 85, էջ 238. Վարք Սեպր. Ե. էջ 715. Խոր. Հոխտ. և այլն. **գերապայծառաբար** Վարք Սեպր. Զ. էջ 720.*

*34. **Համաթիւ** Բ. 82, էջ 225. Շն. մտթ. Պետրոսի-Փիլոնյան խորհրդ թարգմանութիւններր գործ են ածել նոյն իմաստով «պատգամիս» բառը, տե՛ս Փիլ. այլար. և եկ. Բ. 19. Պատ. 375.*

*35. **Հակառակաթոռ** Գ. 65, էջ 350. Արծր., Ա. 11, էջ 73.*

*36. **Հոմիչեան** Գ. 66, էջ 353. Պատ. Ագրս., էջ 19. Նար.*

*37. **պարականան** Գ. 3, էջ 259.*

*38. **վերահասու** Բ. 78, էջ 217. Գ. 57, էջ 335. Ջրբ. կաթ. և այլն.*

*39. **վերահայեցող** Գ. 62, էջ 343. **վերահայեաց** Թղտր. կուս. **վերահայեցութիւն** Դիոն. երկն. և եկեղ. և այլն. **վերահայիմ** Ջրբ. Կաթ. խչ.*

*40. **փոխանակաբանել** Գ. 31, էջ 295.*

դ. Որ Խորենացու Պատմութեան գրված պիտի լինի հունարան վերոհիշյալ թարգմանութիւններից և անգամ VIII դարից հետո՝ այդ երևում է նրա բառապաշարի նաև այն չերտի քննութիւնից, որը թեև հունարան չէ, սակայն թվում է նոր, որովհետև առաջին անգամ գործ է ածվել VII, VIII և կամ IX դարերի

մատենագրական երկերում: Ես ընդունում եմ, իհարկե, որ նկրթև նշանակված բառերի մի մասը կարող է հին լինել և գտնվել հետագայում հայոց մատենագրության հնագույն անտիպ երկերում, սակայն հավանական եմ համարում, որ այդ բառերի մեծագույն մասը միջին շրջանի բառեր են և կարևոր են ուշագրավ հայոց լեզվի պատմական քերականության համար, որը, ժամանակաբար, չատ քիչ է զբաղվել այս խնդրի գիտական քննությամբ:

Այդպիսի հետևյալ բառերը են թվում ինձ, օրինակ՝

1. **ախտարմող, ախտարմաղ կամ ախտարմախ** – «բանդի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառաջսկսն... և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քաղևայք» Բ. 70, էջ 206. «ոմանք ի հնձանոսաց պարուց ընդ մեզ վիճին, թէ զոն մարդիկ ախտարմաղք, որ զլուսին իջուցանեն յերկիր» Շիր.

2. **այրեցած** Ա. 30, էջ 84. Շիր. Խոր. Աշխ. 585. Սուբբ. Հրատ. 5. **այրեցական գօտի** Շիր., էջ 39. **այրեցանող** Շիր., էջ 65. 66.

3. **աչտանակել** «ցատկել և նստել ձիու վրա» Բ. 79, էջ 217. Բ. 82, էջ 225. Պատմ. Ադրս., էջ 16. Հովհ. Կաթ. **«աչտանակել»** վերոհիշյալ իմաստով թվում է ինձ նոր.

4. **աչխոյժ** Գ. 8, էջ 265. ՅՀ. իմ. պատկ. Պետ., էջ 485 (նորագույն վարժություններից մեկում). **աչխոյժութիւն** Պատմ. Ադրս. 25.

5. **անխոնարհելի** – «և ամրարձ զձևոս իւր յերկինս, անխոնարհելի պահելով ի խնդրուածս» Գ. 37, էջ 304. «յիրմէ հաստատուն և յանխոնարհելի խորհրդոցն», Ղևոնդ ԼԴ, էջ 142. **«խոնարհել»** (= «խոնարհեցուցանել»), որից կազմված է «անխոնարհելի», թվում է ինձ նոր. համմտ. **Ն. Ակինյան,** Մատենադ. հետազ., III, էջ 189.

6. **աջակցել** – «որ և կիւրոսի աջակցեալ» Ա. 24, էջ 71. «և ապա այլոցն ևս մարտակցացն աջակցեալ Գէորգայ» Հովհ. Կաթ., էջ 357. **աջակից** ունի Սամ. Եր. «աջակցել» բայը, որ հանդիպում է միայն Խորենացու և Հովհաննես Կաթողիկոսի մոտ, ըստ Երևույթին, միջին շրջանի բառ է.

7. **արժանահաւատ** Բ. 90, էջ 240. Նիւս կազմ. Ոսկ. ՅՀ. և այլն. **արժանապատ** Խոր. Ա. 1, էջ 7. «արժան» առաջադիրով կազմված բարդությունները, որ պատահում են նաև Պիտոյից-Փիլոնյան թարգմանություններում, սովորական են, գլխավորապես, Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում.

8. **բազմախողխող** Գ. 28, էջ 290. Հովհ. Կաթ. Պատմ. Ադրս. 65.

կիսախողխող Խոր. Գ. 32, ԿՂ 292. Պտմ. Ագթ. 28. 105. Ասող. Գ. 7, ԿՂ 172. Թվում են հետևյալ բառերը.

9. **բեմասացութիւն** Գ. 65, ԿՂ 351. Սոկր. Ջ 5, ԿՂ 502 և այլն.

10. **դեղձան** Բ. 63, ԿՂ 195. Ախտարք և այլն.

11. **դիպաձգութիւն** Ա. 12, ԿՂ 42. **դիպաղեղն** – «պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք» Ա. 24, ԿՂ 72. «արք քաջք, կորովագինք և դիպաղեղունք» Արծ. Ա. 8, ԿՂ 54. Փիլոնի հնագույն թարգմանությունն ունի «դիպարան». Փիլ. լին. Բ. 79, ԿՂ 163.

12. **եկաւորութիւն** Բ. 74, ԿՂ 211. Ջքր. Կաթ. Նար. և այլն. Եկաւորեմ Վարք Սեղր., ԿՂ 694. 728. Ջքր. Կաթ. և այլն.

13. **երեսաւոր** – «երեսաւորք ի սիրտ և ի պատրաստութիւն պատերազմի» Ա. 16, ԿՂ 43. «և ի մարտս երեսաւոր» Ա. 21, ԿՂ 65. «պանձնագեղս և երեսաւորս» Հովհ. Կաթ. **երեսանալ** – «մինչ հանդիպ երեսանալ Աղեքսանդրու ի յանդուգն դիմացուածին» Արծր. Ա. 6, ԿՂ 41.

14. **ընթերցասէր** Ա. 5, ԿՂ 17 և 20. Սոկր. 494. Պիտ. վերջար., ԿՂ 580. Արծր. Ա. 6, ԿՂ 44. **ընթերցասիրեմ** Խոր. Ա. 3, ԿՂ 10. Հովհ. Կաթ., ԿՂ 12.

15. **թիկնապահ** – «եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ» Բ. 7, ԿՂ 110. «տասնակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սոնապանս, զլխապանս» Արծր. Ա. 5, ԿՂ 39. «ի թիկնապահ և լանջապահ պղնձի տախտակացն». Հովհ. Կաթ. ուշագրավ է, որ Խորենացին, Արծրունին, Հովհաննես Կաթողիկոսը, ինչպես և Աղեքսանդրի վարքի թարգմանը, գործ են ածում հաճախ կենցաղային-ռազմական նման բառեր, որոնք չեն հանդիպում մատենագրական հնագույն երկերում, օրինակ՝ **աչտանակել, հարուստ, լանջապան, բարձապան, կիսախողխող, բազմախողխող** և այլն.

16. **խորտաբորտ** «խորթուրորթ» – «արչաւել ընդ խորտաբորտս և ընդ վիմուտ տեղիս» Գ. 55, ԿՂ 330. ըստ Եվսեբիոսի, ուշ չրջանի բառ է.

17. **խրթնանամ** – «ևկևկեցի Հայաստանեայց՝ խրթնացեալ ի բարեզարդութենէ բնմին» Գ. 68, ԿՂ 358. Հովհ. Կաթ. Շն. Նար. և այլն. **խրթնի** – «այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան» Արծր. Բ. 7, ԿՂ 121. «խրթնի» «մթին» իմաստով ունի Փիլ. լին. Ա. 7 **խրթնագիտ.** Թէոդոր. Մայրագոմ., ԿՂ 147.

18. **խաքան** Բ. 87, ԿՂ 235. Բ. 89, ԿՂ 239. Ղևոնդ ԺԲ, ԿՂ 41. ԺԸ,

ԼՂ 101. Խոր. Աչխ. 605. Սուբր. Հրատ. 27.

19. **կայկայիմ** – «կայկայեցաւ տզիւտութեամբ չարափառութիւն» Գ. 68, ԼՂ 358. «կակայելին որդիք աղախնոց» Արծր. Գ. 5, ԼՂ 289. գործ Լ ածված մէյն Խորենացու և Արծրունու մոտ.

20. **կապան** – «անցանել ընդ կապանն ճորայ» Բ. 65, ԼՂ 200. «Լին արտաբս քան զկապանն ճորայ» Գ. 12, ԼՂ 270. «զի Լ կապանք երկաթի և բանտից և Լ կապանք քարեայ (այսինքն լերանց), որ ասի՝ կիրճս ճանապարհի» Երզն. բեր. «անցանելին ընդ նեղ և ընդ դժուար կապանսն լերանց» Ուռհ. «կապան»-ը հատուկ այս իմաստով, ըստ երևոյթին, մինչին չրջանի բառ Լ.

21. **կոպտարանձն** Բ. 8. ԼՂ 114. կոպտաձև Վրդն. պատմ. ըստ Աճառյանի («Արմ. բառ.»)՝ «կոպիտ» արմատը. որ այս բարդութիւնների առաջադիրն Լ, գործ Լ ածվել մինչին հայերենում.

22. **հարսնանալ** – «զի հարսնացի արբայի» Բ. 83, ԼՂ 226. հարսնացուցանել Խոր. Հովիս. Զբր. Կաթ. և այլն. կարող են լինել հետին չրջանի բառեր.

23. **մարդադաւ** Բ. 39, ԼՂ 165. մարդադաւութիւն Բ. 6, ԼՂ 109. ունեն նաև Հովհ. Կաթ., ԼՂ 140. Կաղանկ. Ա. 4. Ասողիկ Գ. 17, ԼՂ 196. կան մէյն վերոհիչյալ երկերում.

24. **չղոմարար** – «զայր չոյտ և չղոմարար և սուտակասպաս» Բ. 60, ԼՂ 190. չողոմարար, չղոմարար և չղումարար – «հրապուրեցայ ի չողոմարար չոգմոգնալ բանից մերոց Թագաւորացն» Հովհ. Կաթ. «չղոմարար հպատակութեամբ վարկր առ Թագաւորն» Արծր. Ա. 8, ԼՂ 55. «մնոանի անձամբ ընդ այլ չղոմարասն» Արծր. Ա. 8, ԼՂ 56. «ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ չղումարար հաճութեամբ Թագաւորիդ յանձն առնուլ» Արծր. Բ. 2. ԼՂ 82. «չողոմ» արմատն ունեն Ոսկ. Հոովմ. 415 և Նոննոս 45 (տե՛ս **Հր. Աճառյան**. Արմ. բառ.), սակայն «չղոմարար» բառը, որ չի հանդիպում հնագոյն երկերում, սովորական ու ընդհանուր տարածված բառ Լ եղել, հավանորեն, Բագրատունյաց չրջանում:

25. **ուղղախօսանմ** – «անուանելին հինք աչխարհին՝ Մաժար, որպէս ոչ կարելով ուղղախօսել» Ա. 14, ԼՂ 46-47. «դայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորոց՝ կոչեցին Արդաւազ» Բ. 26, ԼՂ 143. «երկարակեցութեամբ դմինեանս աւանդութեամբ ուսուցանելին ուղղախօսել» Ստ. բեր. ԼՂ 183. ունի նաև Մագ. Թղթ. (1910), ԼՂ 131. ուղղախօսութիւն Ստ. բեր., ԼՂ 183. Մագ.:

26. **պատել** – «պչրանօք և պատելով կևայր զօրհանապազ» Բ. 63, ԼՂ 194. «կայր դյօնսն պղտևայ, կոկոդարանէր լի յոխոր-

տանօր» Արծր. Գ. 6, էջ 154. ունեն նաև Վրդ. սաղմ. Կիր. պտմ. չի հանդիպում հնագույն երկերում.

27. ***ջալոտ*** *– «Հրամայեաց ջալոտիւք հարկանել յերկար» Գ. 14, էջ 272. «Հարեալ ջալոտիւք պիծկունս նորա՝ սաստկագոյնս տանջէին» Ղևոնդ Խ, էջ 164. ունեն նաև Սիսական. Սուիերք ԺԲ, էջ 33. Հայսմ. և այլն. առաջին անգամ հիշատակված է Ղևոնդի Պատմութեան մեջ.*

28. ***ջախումն*** *– «և այսպիսի ջախմամբ վախճանեցաւ» Բ. 46, էջ 173.* ***ջախել*** *– «որք միանգամ ելին ընդդէմ նոցա պատերազմել՝ ջախեցին մանր իրրև գիւղի» Ղևոնդ Լէ. էջ 156. «Կզարկ զիմագն Աղեքսանդրի եւ ջախեաց զսպազաւարտ նորա» Պտմ. Աղբս., էջ 91. նաև Հովհ. Կաթ. Հնագույն երկերն ունեն կրկնութեամբ «ջախջախել».*

29. ***սաղապեցուցանել*** *Գ. 55, էջ 330.* ***սաղապաճեմ*** *Գ. 62, էջ 344.* ***սաղապեմ*** *Պիտ. վերջար., էջ 581. սաղապ Հովհ. Կաթ., էջ 121, 180. 216. Ոսկ. ՅՀ. Բ. յիչ., էջ 960. անսաղապ Հովհ. Կաթ. 291. Թեև «սոսաղապել» ունի մեկ անգամ նաև Տիմ., էջ 108 (տե՛ս* ***Հր. Աճառյան****, Արմատ. բառար.), սակայն «սաղապ» և «սաղապել» սովորական ու ընդհանուր գործածական բառեր էին, հավանորեն, Բագրատունյաց շրջանում.*

30. ***վերջոտնիլ*** *– «ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ եղանէր» Ա. 11, էջ 36. «որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով դնետին տեղին» Արծր. Ա. 11, էջ 76. «բայց Աչոտ վերջոտնեալ հանդերձ վահանաւ՝ նկն եհաս խաղաղութեամբ... յերկիր իւր» Արծ. Գ. 16. էջ 212. ունեն նաև Նանայ. Սկևռ. և այլն. կարող է լինել միջին շրջանի բառ.*

31. ***վիթխարի*** *Ա. 9, էջ 31. Բ. 8, էջ 114, ունեն նաև Հովհ. Իմ պատ. Հովհ. Կաթ. և այլն. վիթխարանալ Մագ. վիթխարութիւն Նար. «վիթխար» արմատը և այս բառերից և ո՛չ մեկը չեն պատահում հնագույն երկերում.*

32. ***վսեմանալ*** *Գ. 68, էջ 363. վսեմական Հովհ. Կաթ., էջ 265. Անան. նկ. և այլն. վսեմապես Արծր. Գ. 29, էջ 248. վսեմախոհութիւն Պտմ. Աղբս., էջ 129. վսամ Կաղանկ. Բ. 29, էջ 68. վսեմարփի Թլոդ. խչ. վսեմաբանութիւն Թլոդ. մայրագ. «վսեմ» կամ «վսամ» արմատը, ինչպես և նրանից կազմված բարդութիւնները, համարվելու են, հավանորեն, հետին շրջանի բառեր, հմմտ.* ***Հր. Աճառյան****, Արմատ. բառ.*

33. ***քարտուղար*** *Բ. 67, էջ 202. Գ. 47, էջ 316. Գ. 52, էջ 325.*

քարտուղարութիւն Բ. 60, էջ 190. ունէն նաև Հովհ. կաթ. և Խոսր. ուշագրաւ է, որ այս բառը հնները չէն գործածել.

34. **օթանոց** — «ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց» Բ. 92, էջ 248. «սկսան մտանել ի քուն յանձնիւր օթանոցն» Արծր. Գ. 20, էջ 224. ունի նաև Սակր. օթարան Խոր. Բ. 74, էջ 212. Շար. Յս. որդի և այլն. հնագոյն երկերն ունէն միմիայն «օթևան».

35. Խորենացու Պատմութեան մէջ կան բազմաթիւ բարդ բառեր, որոնց երկրորդ բաղադրիչ մասն է «բան» կամ «բանութիւն»: Այդ բառերից համեմատաբար հին են՝ ագգարանեմ, ագգարանութիւն, առասպելարանեմ, աստղարանութիւն, արդարարան, ծննդարանեմ, ծննդարանութիւն և դուգարան: Կարող են սակայն նոր լինել հետևեալ բարդութիւնները, որոնք չեն պատահում հնագոյն երկերում՝ ա) արագարանութիւն Ա. 32, էջ 87. ունի նաև Հովհ. կաթ. բ) աւարտարանութիւն Գ, էջ 257 (վերնագիր). գ) հանճարարանութիւն Բ. 70, էջ 206. դ) դրուցարան Ա. 2, էջ 9. դրուցարանութիւն Ա. 9, էջ 32. ունի նաև Արծր. ե) ողջարանութիւն Ա. 9, էջ 32. զ) պերճարան Ա. 24, էջ 73. պերճարանութիւն Գ. 1, էջ 258. ունի նաև Հովհ. Իմ. աստ. է) սիրարան Բ. 75, էջ 214:

Պատմութեան բառապաշարի այս քննութիւնը, ինչպես տեսնում ենք, տարբեր է լեզվական այն ընդհանուր դիտողութիւններից, որ մէջ են բերված բանասիրական նախկին աշխատութիւններում: Խորենացու երկերի լեզվա-բերականական հետազոտութիւնը, որ հայոց լեզվի պատմական քերականութեան հերթական խնդիրներից մեկն է լինելու, անհրաժեշտ է, անշուշտ, ավելի ևս խորացնել համեմատական ուսումնասիրութեան այն նոր եղանակով, որը վերը կիրարկված է: Մինչ այդ՝ կարծում եմ, որ վերոհիշյալ դիտողութիւններն իսկ հիմք են տալիս ենթադրելու, որ Խորենացու Պատմութիւնն անպայման ուշ ժամանակի գրվածք է:

Որ Խորենացու հունարան լեզուն անկարելի է իջեցնել V դար՝ այդ այնքան պարզ է, որ ըստ ինքյան չի կարող այլևս լինել վեճի առարկա: Միանգամայն պարզ է նույնպես, որ Պատմութեան բառապաշարի վրա որոշ ազդեցութիւն են ունեցել, բացի Պիտոյից-Փիլոնյան թարգմանութիւններից, նաև հունարան թարգմանութիւնների մյուս երկու խումբը: Իսկ ամենից կարևորն այն է, որ նույն այդ բառապաշարի մէջ նկատելի են անդամ ավելի ուշ

չրջանի բառեր, որոնք չեն հանդիպում VIII դարից առաջ և սովորական են ու ընդհանուր տարածված Բագրատունյաց չրջանի մէջին Հայերենում:

Ուրեմն՝ Խորենացու Պատմութեան լեզվի քննութիւնը ո՛չ միայն խոչընդոտ չի նրա ժամանակի մեր որոշման, այլև ուշագրավ մի նոր ապացույց է, որը հաստատում է իր հերթին Խորենացու առեղծվածի վերոհիշյալ լուծումը:

ՆՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ

Հազար ինն հարյուր երեսունչորս թվականին լույս էր տեսել իմ «Խորենացու առնգծվածի լուծումը» ուսումնասիրությունը, որի վերջում, հատուկ հավելվածում, քննության էր առնված Խորենացու Պատմության լեզուն: Այդ հավելվածում մանրամասն ցույց էր տրված, որ Խորենացու բառապաշարի մեջ պարզ նկատելի են ոչ միայն Պիտոյից-Փիլոնյան խմբի և հունարան մյուս երկու խմբերի՝ VI և VII դարերի թարգմանությունների՝ հատուկ բառերը, այլ մինչև իսկ այնպիսի հետաքրքրական բառեր, որոնք սովորական էին VIII և IX դարերի մատենագրական երկերում:

Թեև այս նոր լեզվական դիտողությունները վերջնականապես հաստատում էին, որ Խորենացու հունարան լեզուն անկարելի է իջեցնել V դար, այնուամենայնիվ, մի քանի բանասերներ համոզիչ չհամարեցին իմ բերած ապացույցները: Մասնավորապես, Ստ. Մալխասյանցը, առանց մտնելու ըստ էության «առանձին բառերի քննության մեջ», Խորենացու «լեզվի ընդհանուր նկարագրից» եզրակացրեց, որ նրա «հունարանության չափավորությունն ըստ քանակի և որակի ապացույց է, թե Հայոց Պատմությունը գրված է հունարանության սկզբնական շրջանում, այն է V դարի վերջերում»[1]:

Ապացուցելու համար, որ Խորենացին ծանոթ է եղել Արիստոտելյան երկերին ու նրանց մեկնություններին, որոնք թարգմանված էին VI–VII դարերում, ես մեջ էի բերել, իբրև օրինակ, Խորենացու Պատմության հայտնի հատվածը «աստեղարաշխությեան», «թուականութեան», «երկրաչափութեան» և «երաժշտութեան» դպրոցների մասին, որին աղբյուր էր ծառայել Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի համապատասխան մի վկայությունը, ու նաև Խորենացու խոսքերը՝ «առաքինութիւն բնականին է իսհականութիւն», որ առնված են դարձյալ VII դարի հունարան թարգմանություններից:

---

[1] Ստ. Մալխասյանց, Խորենացու առնգծվածի չուրջը, Երևան, 1940, էջ 77, 81 և 84:

Ստ. Մալխասյանցը սխալ է համարում նաև իմ այս ցուցումը և կարծում, որ այդ հատվածներից առաջինը Խորենացու Պատմության մեջ մի սովորական ընդմիջարկություն է, իսկ երկրորդ հատվածը Խորենացին, որ հունական վիկիսուիայությանը ծանոթացել էր Աղեքսանդրիայում, մեջ է բերել իր սեփական թարգմանությամբ[1]:

Իմ նպատակը չէ այստեղ քննել Մալխասյանցի վերոհիշյալ առարկությունները, որ ես համարում եմ սխալ: Առայժմ ես միայն կուզենայի հիմնավորել ու հաստատել իմ նախորդ եզրակացությունները կարևոր նոր դիտողություններով, որ թվում են ինձ ուշադրության արժանի:

Ի լրացումն իմ նախորդ ապացույցների, որ Խորենացու Պատմության մեջ գործ է ածված հունարան ուչ չրջանի երկերի հետնաղարյան բառապաշարը՝ ես կարևոր եմ համարում այժմ նաև մանրամասն ցույց տալ, որ VI–VII դարերի հունարան թարգմանություններից Խորենացին օգտվել է ավելի մեծ չափով, քան այդ սովորաբար ենթադրում են:

Ներքև մենք բերում ենք Խորենացու Պատմությունից տասներկու հատված, որոնք պարզ կերպով ապացուցում են Խորենացու կախումը VI–VII դարերի հունարան թարգմանություններից.

1) Խորենացի[2], Ա, 1, էջ 6. – «Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի պատկեր Աստուծոյ, և դարձեալ՝ Առաքինութիւն բանականին է խոհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն՝ ապա ուրեմն զնղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն՝ զարդարես զբանն»:

Համեմատե՝ Սահմանք իմաստասիրութեան, Վենետիկ, 1833, էջ 173. – «Վասն դի պարտ է զնուրաքանչիւր մասն հոգւոյ՝ իւրականն զարդարել առաքինութեամբ. ուստի բան խոհականութեամբ զարդարեալ գոյ»:

Նույնն ունի նաև Արիստոտելի Յաղագս առաքլոյց, Վենետիկ, 1833, էջ 629. – Բանականին առաքինութիւն խոհեմութիւն է:

---

[1] **Ստ. Մալխասյանց,** Խորենացու առնչվածի չուրջը, էջ 84–86:

[2] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխ., **Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան,** Տփղիս, 1913:

2) Խորենացի, Ա, 1, էջ 6. – «ի ձեռն որոյ և զայսոսիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել, զեղեցիկ և չափաւոր մոլութեամբ յայսոսիկ մոլեալ և զակատեալ»:

Համեմատե՝ Սահմանք իմաստասիրութեան, Վենետիկ, 1833, էջ 120. – «Ողջախոհ իմն մոլութեամբ առ այսոսիկ վարեալք բերին»:

3) Խորենացի, Ա, 1, էջ 6. – «Յանմահ յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քո գալոց են ազգք»:

Համեմատե՝ Սահմանք իմաստասիրութեան, տե՛ս H. Марр, К критике истории Моисея Хоренского, СПб., 1898, էջ 13, ծան. 1. «Զի կացցէ և մնասցէ անջնջելի յիշատակ զկնի ազգաց նկելոց»:

4) Խորենացի, Ա, 1, էջ 27. – «Եւ ընդէ՞ր սա (Հեփեստոս – Հ. Մ.) գտակ հրոյ. և կամ Պրոմեթէոս գողացեալ առ ի յաստուածոցն զհուր և չնորհեալ մարդկան,– որ է այլաբանութիւն,– ոչ բերէ ասել կարգ բանիս»:

Համեմատե՝ Սահմանք իմաստասիրութեան, Բ, էջ 134. – «Եւ պարտ է գիտել՝ եթէ որք առասպելարանեն ասեն, թէ Պրոմիթեւս գողացաւ երբեմն յաստուածոցն հուր՝ և չնորհեաց մարդկան. որ է այլաբանութիւն: Քանզի նախ և առաջին Պրոմիթեւս եգիտ զրաժանողական հնարս. քանզի բաժանողական հնարն համեմատի հրոյ. վասն այսորիկ ասեն զնմանէ չնորհել հուր մարդկան»:

Տե՛ս նաև Նոննոս, IV, ԼԹ, էջ 77. – «Պրոմեթեւս այս ասի, թէ գողացաւ զհուր յաստուածոցն և չնորհեաց մարդկան»:

Մեջ բերված այս չորս հատվածը մատնացույց է արել Ն. Մառը[1], որը իրավացի կերպով ենթադրում է, որ Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» երկը, որի հայերեն թարգմանության ժամանակը, ինչպես մենք ցույց ենք տվել[2], պետք է դրվի VII դարում կամ ամենավաղը՝ VI դարի երկրորդ կեսում՝ անպայման, աղբյուր է ծառայել Խորենացու Պատմության:

5) Խորենացի, Ա, 2, էջ 9. – «Եւ ուրեք ուրեք գտանել աչխա-

---

[1] Տե՛ս H. Марр, К критике истории М. Хоренского, СПб., 1898, էջ 12–13:

[2] Տե՛ս իմ աշխատությունը՝ «Հունարան զարոցը և նրա զարգացման չրջանները», Վիեննա, 1928, էջ 143:

տուԹեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱ (= զատեղարաչխուԹիւն) առ Ր (= Ռադղէացիս) և զԹ (= զԹուականուԹիւն) առ Փ (= Փիւնիկեցիս) և զԿ (= զկերկրաչափուԹիւն) առ Ե (= Եգիպտացիս) և զՇ (= զերաժշտուԹիւն) առ Թ (= Թրակացիս): Եւ ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց և մեք զանուանան հաւաստի գիտեմք՝ նուիրեցին ի փառս Հելլենացւոց աշխարհին»:

Համեմատե՝ Սահմանք իմաստասիրուԹեան, գլ. Ժէ, էջ 199. — «Եւ պարտ է գիտել, ԹԷ զԹուականն Փիւնիկեցիք գտին, որպէս վաճառականք գոլով և ԹուականուԹեան սկիզբ ունելով առ ի համարել. իսկ զերաժշտականն Թրակացիք. վասն զի անտի էր Որփեայ, զորմէ ասեն նախ գտանել զերաժշտականն. իսկ դաստեղարաչխականն Ռադղէացիք. վասն զի անամպ և հանապազ ջինջ գոլով օդոյն՝ դիւրաւ կարացին ըմբռնել զչարժմունս աստեղաց. իսկ զերկրաչափականն Եգիպտացիք ի հարկէ»:

Խորենացու այս հատուածն առաջին անգամ ուղիղ մեկնել էր Տ. Սալալեանյանցը[1]:

Պրոֆ. Լևոն Մանրյանցի ենԹադրուԹիւնը[2], որ այս հատուածը կարող է քաղված լինել Եվսեբիոս Կեսարացու «Praeparatio evangelica» աշխատուԹիւնից՝ դժվար է ընդունել, որովհետև «Praeparatio evangelica»-ի մեջ չեն հիշատակված «ԹուականուԹիւն»-ը և «երաժշտուԹիւն»-ը:

6) Խորենացի, Ա, 6, էջ 22 (վերնագիր). — «Յաղագս Ոլիմպիոդորայ փիլիսոփայի անգիր հին գրուացոյն»:

Նույնը, Ա, 6, էջ 25. — «Իսկ որ կատարելագոյնն էր ի նոսա, Ոլիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. «Պատմեցից ձեզ, ասէ, և գրոյցս անգիրս յաւանդուԹենէ ի մեզ հասեալ, դորս և բազումք ի գեղջկաց գրուցեն մինչև ցայժմ»:

Նույնը, Բ, 74, էջ 212. — «Եւ աստ ասեմ գրոյց զպանչելի ծնրոյն որ ասէր, ԹԷ «ի նախնեաց ունիմ սովորուԹիւն, որդի ի հօրէ առնելով գյիշատակ գրուացս այսոցիկ», որպէս Ոլիմպիոդորայն յաղագս Տարօնոյ և Սիմն կոչեցեալ լերինն»:

Մեջ բերված այս վկայուԹյունների մեջ հիշատակված Օլիմ-

---

[1] Տե՛ս «Արշալոյս Արարատեան», 1878, 29 ապրիլի, № 1091:

[2] Տե՛ս «Ученые записки», II, Москва, 1930, էջ 156–168.

պիոդորոսը, որն անվանված է «փիլիսոփայ», ինչպես մատնանշել եմ իմ «Հունարան դպրոցը» աշխատության մեջ[1], V դարի պատմագիր Օլիմպիոդորոսը չէ, այլ, ամենայն հավանականությամբ, VI դարի նոր-պղատոնական մեկնիչ կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփան է: Սա է այն «կատարելագոյն» փիլիսոփան, որ մեծ հռչակ ուներ Հայաստանում: Փիլիսոփայության պատմությունից հայտնի է, որ զանազան ազգերի դրույցները հավաքում և այլաբանորեն մեկնում էին, հատկապես նոր-պղատոնական իմաստասերները:

7) Խորենացի, Ա, 21, էջ 65. – «Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ճառից. զորոց մեղէն իսկ զհիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք ի չորս հագներգութիւնս, զարտասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ և ի մեջ իմաստնոց իմաստնագունին»:

Այս վկայության մեջ հիշատակված «Ջորս հագներգութիւնք» բանաստեղծական երկի հեղինակը, ինչպես մատնացույց եմ արել դարձյալ «Հունարան դպրոցը» իմ աշխատության մեջ[2], ամենայն հավանականությամբ, VII դարի Պողոս մեկնիչի ուսուցիչ «Նոա-մեծ Դաւթի փիլիսոփայ»-ն է, որի երկից Խորենացին քաղել է Երվանդյան Տիգրանի և Աժդահակի պատմությունը:

Ստ. Մալխասյանցի կարծիքը[3], որ այդ հայ հեղինակը Դավիթ Անհաղթ փիլիսոփան էր, Մովսես Խորենացու քրոջ որդին, պարզապես սխալ է:

8) Խորենացի, Ա, 22, էջ 69. – «Քանզի և զվերջին երեւանդ և զՏիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ արդեօք. ոչ կարի հեռագոյն զոլով ժամանակին, յիշեաց ոք զանուանս զայսոսիկ»:

Համեմատե՛ «Մեկնութիւն ստորոգութեանց Արիստոտելի» (տե՛ս «Հունարան դպրոցը», էջ 290). – Հոմանունութիւն լինի ըստ երկուս յեղանակս՝ ըստ պատահման կամ մտածութեան. մտածութիւն՝ ըստ պատուոյ, ըստ յիշատակի, ըստ յուսոյ, ըստ աղօթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեան»:

---

[1] «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928, էջ 41-42:

[2] Տե՛ս նույնը, էջ 9-10 և 220-222:

[3] Տե՛ս «Մովսես Խորենացի», աշխարհաբար թարգմանություն, Երևան, 1940, էջ 270, ծան. 69:

Տե՛ս նաև «Մեկնութիւն ստորոգութեանց Արիստոտէլի, ընծայեալ Էլիասի», Ս. Պետերբուրգ, 1911, էջ 49. – «Իսկ ոմանք՝ ըստ յուսում», որպէս յորժամ որ անուանիցէ զիւր որդի Պղատոն, յուսալով լինել այնպիսի»:

Մեջ բերված Խորենացու այս վկայությունը, որին ապրյուր են ծառայել Արիստոտելյան մեկնությունները, Ստ. Մալխասյանցը համարում է մութ և անհասկանալի[1]: Ըստ իս Խորենացու վկայությունը միանգամայն պարզ է: Նա ուզում է ասել, որ Երվանդ Վերջինին և մյուս Տիգրանին անվանել են այդպես, հույս ունենալով, որ նրանք ևս կլինեն մեծ թագավորներ, ինչպես Երվանդ Սակավակյացը և Տիգրան Երվանդյանը:

9) Խորենացի, Ա, 1, էջ 7. – «Իսկ զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն զուստն և զղիարդն յայտնելով համառօտ և հաւաստի, որպէս ի յունականս ոմանս կայ ի պատմութիւնս»:

Նույնը, Ա, 6, էջ 22. – «Զհաւաստին որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանից»:

Նույնը, Բ, 13, էջ 126. – «Արդ՝ ես հաւատարմութեան արժանի համարիմ զայսոսիկ պատմութիւնս»:

Նույնը, Բ, 70, էջ 207. – «Այլ մեք ասասցուք միայն զստոյգն, որ ինչ զճշմարտութեանն վայել է պատմութիւն»:

Տե՛ս նաև Ա, 5, էջ 17, 20. 6, էջ 24. 22, էջ 68, 31, էջ 85. 32, էջ 87. Բ, 7, էջ 109. 59, էջ 188. 64, էջ 198. 68, էջ 205. 82, էջ 224 և այլն:

Համեմատե՝ Թեոն, էջ 70.– «եւ առաքինութիւնք պատմութեան երեք՝ հաւաստութիւն, համառօտութիւն, հաւանութիւն»:

Մենք արդեն Թեոնի հրատարակության առաջաբանում (Երևան, 1938, էջ ԼԷ-ԼԸ) պարզել ենք, որ Խորենացին ունեցել է իր ձեռքի տակ VI դարի երկրորդ կեսի Թեոնի հայերեն թարգմանությունը, որի ճարտասանական ցուցումներն առաջնորդող ուղեցույցներ են եղել հռետորական ուղղությամբ գրված նրա Պատմության: Խորենացին իր Պատմության մեջ, ինչպես տեսնում ենք, չարունակ չեչտում է, որ պատմության ու պատմական նկարագրությունների գլխավոր արժանիքներն են նրանց «հաւաստիութիւն»-ը, «համառօտութիւն»-ը և «հաւանութիւն»-ը:

---

[1] Տե՛ս **«Մովսես Խորենացի»**, աշխարհաբար թարգմանություն, էջ 44 և 271, ծան. 74:

10) Խորենացի, Բ, 2, էջ 104.– «եւ Արչակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութենանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն, որ յաղագս բաժանելոյ զերոյր երկիրս յերիս մասունս, և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Լիբիէ, և զոմն Ասիայ, որում և տիրեաց Արչակ»:

Համեմատ՝ Թևոն, էջ 20.– «եւ յիրականացն պատմութենանց են ինչ, զորս և ի Հերոդոտայ առնուլ, որպէս զայն որ ի չորրորդէն յաղագս բաժանելոյն զերոյր երկիր յերիս մասունս և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Ասիա և զոմն Լիբիա»:

11) Խորենացի, Բ, 92, էջ 247.– «Իսկ ի չհաւանել սրոյն՝ տան նմա արքունն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն»:

Համեմատ՝ Նոննոս, III, ԺԳ, էջ 30.– «Յաղագս մոլեխնդին Սոկրատայ: Սովկրատէս այս էր ազգաւ աթենացի իմաստասէր հրահանգաւ: Զսա, իբր դև ինչ մուծանող ի քաղաքավարութիւն՝ Անիտոս և Մելիտոս հայեցին ի սպանդ. և դատապարտեալ եղև վասն ապականելոյ զհամրական մեռանիլ, ըմպելով կոնիոն. և արբեալ մահացաւ»:

12) Խորենացի, Գ, 19, էջ 278.– «Քաջ և արի երևեալ (Արչակ– Հ. Մ.)» քան զԱբիլլեվս, իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կաղի և սրագլխոյ»:

Համեմատ՝ Թևոն, էջ 116.– «եւ զյաղագս Թերսիտեայն.– Լեպեչտի էր և սրագլուխ և կաղ ի միոջէ ոտանէ»:

Տե՛ս նաև Նոննոս, IV, Ի և ԻԱ, էջ 72.– «Հոմերոս ի ներքս մուծանէ զայր ոմն Թերսիտէս, որ էր կաղ, և խեղ աչաւք, կորով և լեպեչտի, լերկ և սրագլուխ, և յառաջախաւս»:

Մովսես Խորենացին, ինչպես ցույց է տրված Թևոնի իմ առաջարանում[1], օգտված է եղել ոչ Թևոնի հունարեն բնագրից, ինչպես այդ ենթադրել էր գերմանական գիտնական Ադոլֆ Բաումգարտները[2], այլ հայերեն թարգմանությունից: Հակառակ Բաումգարտների ենթադրության, Գր. Խալաթյանցը Խորենացու

---

[1] Տե՛ս **«Թէովնայ, Յաղագս ճարտասանական կրթութենանց»**, աշխատությամբ պրոֆ. Հ. Մանանդյանի, Երևան, 1938, էջ Լե-Լջ:

[2] **Adolf Baumgartner,** Ueber das Buch „die Chrie", Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, 13, Bd. 40, Leipzig, 1886, էջ 513-514.

Պատմության աղբյուր է համարում Նոննոսի հատվածը[1]*: Խորենացուն, ինչպես երևում է մեր այս ուսումնասիրությունից, հայտնի են եղել հայերեն թարգմանությունները թե՛ Թևոնի և թե՛ Նոննոսի:*

Ինչպես տեսնում ենք, մեջ բերված տառերկու այս համեմատությունները պարզ ու վերջնական կերպով ապացուցում են, որ Խորենացին, բացի Պիտոյից-Փիլոնյան երկերից, ծանոթ է եղել նաև VI–VII դարերի հունարան թարգմանություններին: Միանգամայն հասկանալի է, ուրեմն, թե ինչու նրա բառապաշարի մեջ հանդիպում են բառեր հունարան երեք խումբ թարգմանություններից:

Մյուս իմ նոր դիտողությունը վերաբերում է Խորենացու Պատմության բառապաշարի այն չերտին, որը թեև հունարան չէ, սակայն ուշ շրջանի է և գործ է ածվել կամ VI ու VII դարերի երկերում և կամ, առավելապես, VIII և IX դարերի Բագրատունյաց շրջանի մատենագրության մեջ:

Դեռևս 1934 թվականի նոյեմբերի 9-ին Խորենացու լեզվի վերոհիշյալ իմ ուսումնասիրության առթիվ հատուկ դեկուցում էր կարդացել ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտում Թ. Ավդալբեգյանը: Նրա դեկուցման հիմնական եղրակացությունները, որոնք մեքենագրված ու հրապարակված էին, հետևյալներն են.

«Բերված բառապաշարի 9/10-ը ճիշտ ընդունելու դեպքում անգամ՝ կարող էր մաքսիմում լոկ այն ապացուցված լինել, որ Խորենացին V դարի հեղինակ չէ, այլ VI–VII դարերի:

Խորենացու IX դարի մատենագիր լինելու դրույթը պաշտպանելու համար բերված բառացանկը հաղիվ մեկ-երկու տասնյակ բառից է կազմված: Բայց այս բառապաշարը մեր կողմից բանասիրական և ժամանակագրական ճշգրտումների և ուղղումների ենթարկվելուց հետո մնում է մի տասնյակ բառ միայն, որոնցից ոչ մեկը լեզվա-պատմական ու իդեոլոգիական տեսակետից հատկանշական չէ՝ համոզելու, թե Խորենացու առեղծվածը լուծված է նաև բառապաշարի տվյալներով»:

Թ. Ավդալբեգյանի քննադատությունը, դժբախտարար, հնարավոր չէ մանրամասն քննել, որովհետև նրա դեկուցումը տպագրված չէ: Նրա գլխավոր առարկությունը, ինչպես երևում է

[1] Տե՛ս Гр. Халатьянц, Армянские Аршакиды, Москва, 1903, էջ 238.

վերև մեջ բերված նրա թեղիսներից, այն է, որ Խորենացու բառապաշարի մեջ իմ մատնանշած հետին բառերը քիչ են ըստ բանակի:

Ցույց տալու համար, որ նրա այս առարկությունը հիմնավոր ու համոզիչ չէ՝ ես այժմ կարող եմ բերել Խորենացու Պատմության մեջ գործածված ոչ թե 34, այլ 105 բառ, որոնք պատահում են հետին շրջանի երկերում, նաև 60 այլ կասկածելի բառ, որ կարուտ են հատուկ քննության:

Ես ընդունում եմ, իհարկե, որ ներքև նշանակված բառերի մի մասը կարող են թերևս հին լինել և գտնվել V դարի երկերում, բայց խորապես համոզված եմ, որ նրանց մեծագույն մասը համարվելու են ուշ շրջանի բառեր, որոնցից որոշ մասը սովորական էին ու ընդհանուր Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում:

Այդպիսի հետին բառեր են թվում ինձ, օրինակ՝

1) **Աթոռակալ, աթոռակալութիւն.**— «Իսկ նախարարքն մեր խնդրէին ի Վռամայ այլ աթոռակալ», Խորենացի, Գ, 64, տե՛ս նաև Խորենացի, Գ, 65, Հովհաննես Կաթողիկոս, Նար. և այլն.

«Յաղագս աթոռակալութեան Սահակայ», Խորենացի, Գ, 39, տե՛ս նաև Հովհաննես Կաթողիկոս, էջ 93 (1912), Թովմա Արծրունի, I ժԱ, II Բ, Նար. և այլն. կարող են լինել ուշ շրջանի բառեր:

2) **Ախտարմող, ախտարմաղ** կամ **ախտարմախ.**— «Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն... և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քաւղևայք», Խորենացի, Բ, 70. «Ոմանք ի հեթանոսաց պարուց ընդ մեզ վիճին՝ եթէ գոն մարդիկ ախտարմախք որ դյուսին իջուցանեն յերկիր դիւթեալ վհկաւ», Անանիա Շիրակացի, Տիեզերական, Ե, էջ 22 (1940 թ.), ունեն վերոհիշյալ երկու հեղինակը. Խորենացու վկայությունը կարող է քաղված լինել Շիրակացու աշխատությունից:

3) **Աղեբեկ.**— «Աղերեկ ծայրիւ հերաց Երուանդևանս Տիգրան», Խորենացի, Ա, 24, էջ 72. «Զաղէրեկ ծաղկեալ մօրուսն ոսկեփունջ կազմեալ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 102: Մատենագրական հնագույն երկերում, այս բառը չի հանդիպում:

4) **Այրասիրտ.**— «Այրասիրտն այն և կաթոտն Շամիրամ», Խորենացի, Ա, 16, էջ 52. Արծրունի, Գ, 29, էջ 428՝ «Մինչև տացէ ինձ Աստուած յորդւոց իմոց այրասիրտ նման հօր իւրոյ». կան միայն վերոհիշյալ երկերում:

5) **Այրեցած.**— «Յայրեցածէն մինչև ցՔիմիւռոն», Խորենացի,

Ա, 30, էջ 84. «ի վերայ այրեցածին ասին երկոտասան աստղատունքն», Շիրակացի, «Քանզի որ ի վերայ այրեցածին բերին կենդանատեսակքն», Խորենացի, Աշխարհացոյց, էջ 586 (Վենետիկ, 1843) և էջ 5 (Վենետիկ, 1881). «այրեցական գօտի», «այրեցանող գօտի», Շիրակացի, էջ 39, 65, 66 (Ս. Պետերբուրգ, 1877), հանդիպում են միայն Շիրակացու և Խորենացու երկերում:

*6) **Անզառնալի**.– «Զմիանդական անզառնալի», Խորենացի, Բ, 8, էջ 116. «Իբրև նետս բռնաւորն դանզառնալի միտան», Արծրունի, Գ, 2, էջ 217. «Անզառնալի գնային ի կամս անձանց», Հովհաննես Կաթողիկոս, էջ 219, Մեսրոպ Երեց, Լաստիվերտցի և այլն, այս բառը ինձ չի հանդիպել դասական հին երկերում:*

*7) **Անխոնարհելի**.– «Ամբարձ զձեռս իւր յերկինս, անխոնարհելի պահելով ի խնդրուածս», Խորենացի, Գ, 37, էջ 304. «Շարժելայ յիւրմէ հաստատուն և յանխոնարհելի խորհրդոցն», Ղևոնդ, գլ. 34, էջ 142. «Համբարձեալ զսուրբ ձեռս իւր յերկինս անխոնարհելի յաղօթս կայր առ Աստուած», Մեսրոպ Երեց, ԺԱ, էջ 73. «պարանոցն անխոնարհելի», Մեսրոպ Երեց, ԺԴ, 113, «անխոնարհելի մնացեալ», Արծրունի, Գ, 20, էջ 365. Հավանորեն ուշ չրջանի բառ է. համեմատ **Ն. Ակինյան**, Մատենագրական հետազոտություններ, III, էջ 189:*

*8) **Անձնագեղ**.– «Ամենայն բազմութիւն հրապարակին անձնագեղացն Պարսից», Խորենացի, Գ. 65, էջ 351, «Զանձնագեղս և զերևսաւորս և զգուննանս արտաքոյ այլոցն տրոհեալ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 119. «զանձնագեղ և զլարեվայելուչ երիտասարդն զԱչոտ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 194. այս բառը չի պատահում հնագույն երկերում:*

*9) **Անձնեայ**.– «Այժմ իսկ է տեսանել ի զարմս Ամատուննայց, քանզի անձնեայք և բարեձևք», Խորենացի, Բ, 57, էջ 187. «Վարազդատ էր տիրովք մանուկ, սրտեայ, անձնեայ, ուժեղ», Խորենացի, Գ, 40, էջ 308. «Ըստ նմանութեան ցլու զօրաւոր և անձնեալ է», Շիրակացի, Տիեզերական, էջ 20. «Քաջահասակ էր նա և անձնեայ և թիկնաւէտ և զուարթերես», Հովհաննես Կաթողիկոս, էջ 137. «Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս», Արծրունի, Գ, 6, էջ 256. հնագույն երկերն ունեն «անձնեղ»:*

*10) **Աչխոյժ**.– «Ոչ զհոգւոյն խափանէր աչխոյժս», Խորենացի, Գ, 8, էջ 265, Հովհաննես Իմաստասեր, Պաւլ. Պիտոյի, էջ 485 (նո-*

բագոյն վարժութիւններից մնկում). «աչխոյժութիւն», Պատմութիւն Ալեքսանդրի, 25. «աչխոյժագնեայք», Մովսես Կաղանկատվացի, Բ, 36, էջ 263. V դարի երկերում չի հանդիպում:

11) **Աչտանակեմ.**– «Նախ ի մանկութենեան յերիվար կամակար աչտանակեալ», Խորենացի, Բ, 79, էջ 217. «արիաբար աչտանակէր», Խորենացի, Բ, 82, էջ 225. «յերիվարս ահիպարանոցս աչտանակեալք», Հովհաննես Կաթողիկոս, էջ 160. «աչտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին». Արծրունի, Գ, 16, էջ 342. Համեմատեա նաև Պատմութիւն Ագևբանդրի, էջ 16, Հովհաննես Կաթողիկոս, էջ 236 և 357. Մովսես Կաղանկատվացի, Բ, 1, էջ 124. «աչտանակել», որ այս հատվածներում նչանակում է «ցատքել և նստել ուղղաձիգ ձիու վրա»՝ իր այս նոր իմաստով թվում է ինձ Բագրատունյաց չրջանի բառ:

12) **Ապրսամ.**– «բալասան», «բալսամոն», տե՛ս Խորենացի, Բ, 15, էջ 130. Նիւս Կազմ. հերձ. 129 և այլն. Թեև ըստ իր ձևի այս բառը թվում է հին փոխառութիւն ասորերենից, սակայն հայ մատենագրական երկերում, որքան ինձ հայտնի է, նա հանդիպում է VII դարից հետո:

13) **Աջակցեմ.**– «Որ և կիւրոսի աջակցեալ», Խորենացի, Ա, 24, էջ 71. «Որ և աջակցեալ իակ եղբօր իւրում Աչոտոյ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 135. «Եւ ապա այլոցն ևս մարտակցացն աջակցեալ Գևորգայ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 357. «աջակից» ունի նաև Սամու. երէց. «աջակցել» բառը, ըստ Երևույթին, միջին չրջանի բառ է:

14) **Ասպազէն.**– «Հաննալ յասպազինէն գնորդեալ քեմխտասլատ պարանն, Խորենացի, Բ, 85. այս բառը, որ պատահում է նաև Ագաթանգեղոսի Պատմութեան մեջ՝ սովորական է Բագրատունյաց չրջանի հեղինակների երկերում. տե՛ս Հովհաննես Կաթողիկոս, էջ 296, 356. Արծրունի, Ա, 6, էջ 79, Բ, 2, էջ 146, Գ, 9, էջ 284. 14, էջ 335. 17, էջ 344. 20, էջ 358. 28, էջ 395. Դ, 7, էջ 483. 9, էջ 492 և այլն. «ասպազինել», Արծրունի, 8, 5, էջ 76, Ա. 10, էջ 118 և այլն:

15) **Արագաբանութիւն.**– Ունեն Խորենացի, Ա, 32, էջ 87 և Հովհաննես Կաթողիկոս, էջ 23. կարող են լինել ուչ չրջանի բառեր:

16) **Արտաճառեմ.**– «զընդդիմաբանել անմիտ հայհոյութենեանցն արտաճառելոց», Խորենացի, Գ, 65, էջ 351. տե՛ս նաև Պատմութեան վարուց Սեղբեստրոսի, էջ 691, Զաքարիա Կաթողիկոս, Ան. Եկեղեցի, այս բառը կարող է կազմված լինել ուչ չրջանում:

17) **Արտափայլեմ.**– «մարմնով արտափայլեալ, սարսափ ան-ճառ», Խորենացի, Գ, 67, էջ 357. «Մարմնով արտափայլեալ, սարսափ անճառ», Պատմութիւն վարուց Սեղբեստրոսի, էջ 699, տե՛ս նաև Հովհաննես Կաթողիկոս, էջ 39 և 255. Զարարիա կաթողիկոս և այլն: Խորենացու համապատասխան հատվածը, ինչպես հայտնի է, քաղված է Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից:

18) **Բազէակիր, բազէակալ.**– «Ասեմ... և դՀաւունիսդ՝ բազէակիրս և բազէակալս», Խորենացի, Բ, 7, էջ 111. «Եւ ասպա մատռուակս և արծուաձակիրս և բազէակիրս», Հովհաննես Կաթողիկոս, էջ 26:

19) **Բազմաբիւրաւոր.**– «Հայկազինն բազմաբիւրաւորի», Խորենացի, Ա, 25, էջ 74, համեմատե նաև Խորենացի, Բ, 8, էջ 113. «Բազմաբիւր զանձիւք», Արծրունի, Գ, 3, էջ 470: Այս բառը ևս չի հանդիպում հնագույն երկերում:

20) **Բազմախողխող.**– «զբազմախողխող երկաթն», Խորենացի, Գ, 28, էջ 290. Հովհաննես Կաթողիկոս, էջ 8, 110, 223, 226, 241, 276. Պատմութիւն Ագևթսանդրի, 65. «կիսախողխող»– «Սուսերս հաննալ կիսախողխող զբարչոդսն առնէին», Խորենացի, Գ, 32, էջ 296. Պատմութիւն Ագևթսանդրի, 28, 105. Ասողիկ, Գ, 7, էջ 172. Թվում են հետևյալ բառերը:

21) **Բարձրագագաթ.**– «ի բարձրագագաթանց պարսպեալ լերանց», Խորենացի, Ա, 12, էջ 38. «Պարսպեալ իմն է բարձրագագաթն սպիտակափառ լերամբք», Հովհաննես Կաթողիկոս, էջ 16. «Զմեծ լեառն Մասիք կոչելով բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ», Արծրունի, Ա, 8, էջ 97. «զբարձրագագաթունս լերանցն», Արծրունի, Դ, 3, էջ 458: Այս բառը, որքան ինձ հայտնի է, հանդիպում է Բագրատունյաց չրջանի մատենագրական երկերում:

22) **Բարձրայօնութիւն.**– «Բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն», Խորենացի, Բ, 92, էջ 246. «արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն», Արծրունի, Գ, 26, էջ 391. «բարձրայօն» – «ամբարտաւանս և բարձրայօնս վիպայր», Հովհաննես Կաթողիկոս, էջ 300. «բարձրայաւն նազանացն» Մովսես Խարթողահայր, Թուղթ, էջ 27, ունեն նաև Նարեկացի և Սրգ. «բարձրայօնակ» – «ոչինչ բարձրայօնակ վարժից ներհունք» Սյունեցի, առ գերմ. նաև Գր. Տղայ առ Տուտ.: Վերոհիշյալ բառերը հանդիպում են սկսած VII դարից,

23) **Բեմասացութիւն.**– «ի բեմասացութեան ձևի», Խորենացի, Գ, 65, էջ 351. «ճառևայն ի նմանէ բեմասացութեամբ», Սոկրատ, Զ, 5, էջ 502. նաև Խոսր. պտգ. Շնորհալի և այլն: Այս բառը, հավանորեն, առաջին անգամ գործ է ածված Սոկր. Սբոլ. մոտ:

24) **Բերեմ.**– «Ո՞րպէս զանոտ հանդուրժելոյ բերել», Խորենացի, Գ, 68, էջ 360. «Արդ ո՞վ ոք առանց արտասուաց բերիցէ զանհնարին ազէտսն», Ղևոնդ. է, էջ 21. «զնային վախճանական վասն ոչ բերելոյ զծանրութիւն ազետիցն», Ղևոնդ. ԽԲ, էջ 168: «Բերել» – «համբերել, տոկալ» իմաստով, հավանորեն ուշ չրջանի բառ է: Տե՛ս **Ն. Ակինյան**, Մատենագրական հետազոտութիւններ, Գ, էջ 190:

25) **Բոցակնագոյն.**– «Սա հրաչեայ կոչի վասն առաւել պայծառութեանն և բոցակնագոյն իմն լինելոյ», Խոր., Ա, 22, էջ 68. «եւ բոցակնագոյն նա տեսողացն երևիր», Հովհաննես Կաթողիկոս, էջ 20.

26) **Գեղաւոր.**– «Տղեղագոյնքն իրրև զգեղաւորս երևիլն սպանչելիք», Խորենացի, Ա, 24, էջ 72. «զեղաւոր կուսից», Խորենացի, Բ, 42, էջ 167, ունի նաև Շնորհալի «Գեղաւորացն արուեստն» Ոսկերերան Եփ. Մէ (իմաստը տարբեր է):

27) **Գեղեցկադիմակ, գեղեցկադիտակ.**– «Բայց կոյս մի գեղեցկադիմակ (գեղեցկադիտակ)», Խորենացի, Բ, 78, էջ 217. «զուարթագին երեսօք էին և գեղեցկադիտակք», Հովհաննես Կաթողիկոս, էջ 123:

28) **Գերապայծառ.** – «Գերապայծառս իմն առնելով չինուածս», Խորենացի, Բ, 88, էջ 238: Ունեն նաև Վարք Սեղբեստրոսի, Ե, էջ 715. Խորենացի, Հոխոս. չար., Շնորհալի, եզես. և այլն: «Գերապայծառարար» – Վարք Սեղբեստրոսի, Զ, էջ 720: Այս բառը կազմված է, ըստ երևույթին, հայոց մատենագրության ուշ չրջաններում:

29) **Գլխանոց.**– «Եւ՝ ինքն գլխանոց ագուցեալ երկաթի», Խորենացի, Ա, 11, էջ 35. «զագուցեալ գլխանոցն երկաթի վաղերր պիսկեցուցեալ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 303, «Գլխապան» – Արծրունի, Ա, 5, էջ 76: Ջի հանդիպում հնագույն երկերում:

30) **Գունեան.**– «Երեսօք գունեան և մեղուակն», Խորենացի, Ա, 24, էջ 73. «Գունեան այրն և թիկնաւէտ առ ամիրապետն մատանէր», Հովհաննես Կաթողիկոս, էջ 102. «զանձնագեղս, գեղեցուսուրս և զգունեանս», Հովհաննես Կաթողիկոս, էջ 119: Ըստ երևույթին ուշ չրջանի բառ է:

31) **Դառնահոտ.**– «ի դառնահոտ վիչմանէ հիւսիսոյ», Խորենացի, Բ, 39, էջ 165: Այս բառը գործ է ածված ուշ չրջանի երկերում՝ Կիմ., Շար.:

32) **Դեղձան.**– «Կարևայ դղեղձան հերան», Խորենացի, Գ, 63. էջ 195. նաև Ախտարք. Ոսկեփորիկ և այլն: Թվում է, որ ուշ չրջանի բառ է:

33) **Դժուարամուտ.**– «Դժուարամուտս ոմանս և դժոխեանելիս ի նմա յօրինէ չինուածս արքայանիստս», Խորենացի, Ա, 16, էջ 54. «դժուարամուտ դրամբք», Հովհաննես Կաթողիկոս, էջ 286:

34) **Դիպաձգութիւն, դիպաղեղն.**– «Դիպաձգութեամբ նետից կորովի», Խորենացի, Ա, 12, էջ 42. «Պարսաւորքն առհասարակ դիպաղեղունք», Խորենացի, Ա, 24, էջ 72. «Արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք», Արծրունի, Ա, 8, էջ 100: Թվում են հետին բառեր:

35) **Դիւրամուտ.**– «Դիւրամուտ ի հայս լեալ Արչակ Մեծ», Խորենացի, Ա, 31, էջ 87. «Դիւրամուտ եղև յաչխարհս Շապուհ», Խորենացի, Գ, 55, էջ 330. «Դիւրամուտ զօտարածինն ի բնակութիւն իւրեանց առնէին», Հովհաննես Կաթողիկոս, էջ 23. ունեն նաև Խոսրով, Դիոնիսոս, Երկն. և այլն: Ձի հանդիպում հնագույն երկերում:

36) **Դրակոնտիկոն.**– «Որպէս դրակոնտիկոն ի վերայ ոսկւոյ», Խորենացի, Բ, 52, էջ 181. «Որպէս դրակոնտիկոն չարամանարար մակ ոսկւոյ մածեալ», Մագիստրոս Թղթոց, էջ 203. նաև տե՛ս Պղատ. Տիմոթեոս, էջ 89: Ըստ Երևույթին, ուշ չրջանի բառ է:

37) **Եկաւորութիւն.**– «Զկարիննացն կարծեցեալ նկաւորութիւն», Խորենացի, Բ, 74, էջ 211. ունեն նաև Զաքարիա Կաթողիկոս, Նարեկացի, Սկևռ. և այլն, «նկաւորել» – Վարք Սեղբեստրոսի, էջ 694, 724. «նկք» – Խորենացի, Աչխարհացոյց, էջ 25 (Սուքրյան), Մովսես Կաղանկատվացի, Ա, 1, էջ 11: Բոլոր այս բառերը հանդիպում են ուշ չրջանի երկերում:

38) **Եղեփանդական.**– «Ինքն եղեփանդական բորոտութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ», Խորենացի, Բ, 83, էջ 226. «Ինքն ապա եղեփանտական բորոտութիւն ըստ բոլորն ընկալեալ մարմնոյ վիրաւորեցաւ», Վարք Սեղբեստրոսի, էջ 722. «Յայնժամ եղեփանտական բորոտութիւն զբոլոր մարմին թագաւորին Կոստանդինոսի ապականէր», Վարք Սեղբեստրոսի, էջ 722 (գլ. Ը): Խորենացուն, անտարակույս, աղբյուր է ծառայել Սեղբեստրոսի Վարքը:

39) **Եպարքոս, եպարքի.**– «Եւ ոմն պատերազմ ընդ Բուփոսի եպարքոսի», Խորենացի, Բ, 60, էջ 189, ունեն նաև Ոսկերևրան Հովհաննես, Ա, 37, Վարք Հրդ. ԺԴ. «Կոչէ զնա երրորդ Հայք և առնէ զնա եպարքի» Հովհաննես Կաթողիկոսի, էջ 68: Այս բառերը փոխառված են հունարենից համեմատաբար ուշ ժամանակաշրջանում:

40) **Երևաւոր.**– «Երևաւորք ի սիրտ և ի պաշտպանութիւն պատերազմի», Խորենացի Ա, 13, էջ 43. «և ի մարտս երևաւոր» Խորենացի, Ա, 21, էջ 65. «զանձնագեղս և զերևաւորս», Հովհաննես Կաթողիկոս, էջ 119. «արս երևաւորս ի սիրտս և ի պատրաստութիւն զինուց», Հովհաննես Կաթողիկոս, էջ 114. «երևանալ» – «Մինչ հանդէպ երևանալ Աղեքսանդրու ի յանդուգն դիմացուածին», Արծրունի, Ա 6, էջ 79. Համեմատեն նաև Պատմութիւն Ալեքսանդրի և Վարք Ոսկերևրանի: Ըստ երևույթին, հետին շրջանի բառեր են:

41) **Եօթնապարիսպեան.**– «Բայց Տրդատայ իւր հաստատեալ զեօթնապարիսպեանն եկրատան», Խորենացի, Բ, 87, էջ 236. «Եւթն պարիսպքն՝ այնք որ յեկրատանոն» Թեոն, էջ 22: Թեոնի հայերեն թարգմանութեան հրատարակութեան առաջաբանում ես արդեն ցույց եմ տվել, որ Խորենացին օգտվել է VI դարի այս թարգմանութեունից, տե՛ս «Թէովննայ Յաղագս ճարտասանական կրթութեանց», Երևան, 1938, էջ ԼԵ-ԼԸ:

42) **Զրուցարան.**– «Եւ վասն առ ի Յունաց զրուցարանսն», Խորենացի, Ա, 2, էջ 9. «զրուցարանութիւն» – Եւ այս կարգ զրուցարանութեան դադարումն առցէ, «Խորենացի, Ա, 9, էջ 32. Համեմատեն նաև Խորենացի, Ա, 8, էջ 28. «որպէս Յովսեպոս մեզ զրուցարանէ», Արծրունի, Ա, 6, էջ 89. «Համբաւէր ի լսելիս նորա զպղուցարանութիւն հնոյն թագաւորաց», Արծրունի, Դ, 3, էջ 464:

43) **Ընթերցասէր, ընթերցասիրութիւն, ընթերցասիրեմ.**– «Ով ուշիմ ընթերցասէրդ», Խորենացի, Ա, 5, էջ 17. «Յորժամ զայսպիսիս ընթերցասիրիցեմք իմաստութեան ճաւս», Խորենացի, Ա, 3, էջ 10. «զոր ընթերցասէրն Պտղոմէոս զրեալ», Արծրունի, Ա, 6, էջ 84. «Ամենեցուն իսկ ընթերցասիրաց յայտնի են», Արծրունի, Դ, 6, էջ 474. «ով ընթերցասէրդ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 12. «որ է այր ընթերցասէր և ուսումնասէր», Հովհաննես Կաթողիկոս, էջ 88. «և ընթերցասէր աստուածային զրոց» Սոկրատ Սքոլաստիկոս, Զ, 3, էջ 494: Կարող են լինել ուշ շրջանի բառեր:

44) **Կաճեայ.**– «Ճաւար առնոյր կաճեայն», Խորենացի, Գ, 9, էջ

267. «վառնայ Թադի կաճնայ», Մովսես Կաղանկատվացի, Ա, 12, ԼՂ 38:

45) **Թիկնապահ.**– «եւ Թիկնապահս իւր, պինու հանդերձ, ի դաւակացն Խոռայ Հայկազնոյ», Խորենացի, Բ, 7, ԼՂ 110. «Ասպա դգեցուցանօղս արքայի և Թիկնապահս», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 26 (նաև ԼՂ 312 և 342). «եւ Վահրամ Սևպուհ Թիկնապահ իշխանին», Արծրունի, Գ, 2, ԼՂ 218 (նաև Ա, 5, ԼՂ 79, Գ, 2, ԼՂ 224. Գ, 29, ԼՂ 426). Մովսես Կաղանկատվացի, Բ, 11, ԼՂ 156, Բ, 13, ԼՂ 167: Ուշագրավ է, որ Խորենացին, Հովհաննես Կաթողիկոսը և Թովմա Արծրունին գործ են ածում հաճախ կենցաղային-ռազմական նման բառեր, որոնք չեն հանդիպում մատենագրական հնագույն երկերում. օրինակ՝ այտանակել, դիպապեղն, երնաւոր, պահպանակ, տիգաւոր, կիսախոզխոզ, բաղմախոզխոզ և այլն:

46) **Թիկնաւէտ.**– «երուանդևանս Տիգրան, երևսօք գունեան և մեղուական, անձնեայն և Թիկնաւէտն», Խորենացի, Ա, 24, ԼՂ 73. «Այնպէս ապա գունեան այրն և Թիկնաւէտ առ ամիրայն մտանէր», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 102. «որ էր այր քաջանձնեայ և Թիկնաւէտ», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 135. «Քաջահասակ էր նա և անձնեայ և Թիկնաւէտ», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 137:

47) **Ինքնահաճոյ.**– «Այլ և յինքնահաճոյ արդարև գործս», Խորենացի, Ա, 4, ԼՂ 15. ունեն նաև Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 12, Պատմութիւն Աղեքսանդրի, ԼՂ 51, 74, Թղոդ, խչ. և այլն:

48) **Իրական.**– «Որպէս յիրականացն պատմութենանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն», Խորենացի, Բ, 2, ԼՂ 104. «եւ յիրականացն պատմութենանց են ինչ, զորս և ի Հերոդոտայ առնուլ, որպէս զայն որ ի չորրորդէն»: Խորենացին, ինչպես տեսնում ենք, օգտվել է պարզապես Թեոնի հայերեն թարգմանութիւնից:

49) **Լայնատարած.**– «Ի լուռ ընդ լայնատարած և խորայատակն անցանէր ընդ Եփրատ», Խորենացի, Բ, 79, ԼՂ 219. «Դաչտ յոյժ մեծանիստ, լայնատարած», Արծրունի, Ա, 8, ԼՂ 60. «Նչանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին», Արծրունի, Գ, 10, ԼՂ 180. Համեմատե նաև Մովսես Կաղանկատվացի, Բ, 27, ԼՂ 221. Բ, 34, ԼՂ 225. Համամ. Մեկնութիւն քերականի. (Հրատ. Ն. Ադոնցի, 1915), ԼՂ 264. «տարած» հնոտաղիրով կազմված բարդութիւնները սովորական են, գլխավորապես, Բագրատունյաց չրջանի մատենագրական երկերում. տե՛ս օրինակ «Համատարած»,

Հովհաննես Կաթողիկոս, էջ 18. «պայծառատարած», Հովհաննես Կաթողիկոս, էջ 61. «բազկատարած» Մովսես Կաղանկատվացի, Բ, 29, էջ 232 և այլն:

50) **Լծաղիր.**— «Լծաղիրս և հարկապահանջս կացոյց բազմաց», Խորենացի, Ա, 24, էջ 72. «Ամենեցունց նոցա լծաղիր և հարկապահանջ լինէր», Հովհաննես Կաթողիկոս, էջ 22:

51) **Լորդու.**— «Պաշտօն տանել լորտուաց և աթերաց առնել բաշխումն», Խորենացի, Գ, 62, էջ 345. «Եւ պաշտօն կրել լորտուացն, որ խնամ տանին տանն, և բաշխումն առնել աթերացն», Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 41: Խորենացու Պատմութեան մէջ, ինչպես հայտնի է, բազմաձորէն գործ են ածված հաճախ բազմաթիվ բառեր Ագեքսանդրի վարքի հայերեն թարգմանութենից, որն անտարակոյս, մատենագրական հետին չրջանի երկ է: Այդպիսի բառեր են, օրինակ՝ «Հոմիչխան», Խորենացի, Գ, 66, էջ 353. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 19. «Խնդամիտ», Խորենացի, Գ, 68, էջ 361. «բռնամարտիկ», Խորենացի, Գ, 40, էջ 308, Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 24. «ձիավարել», Խորենացի, Գ, 13, էջ 271, Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 25. «ձիարձակարան», Խորենացի, Գ, 55, էջ 331. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 26. «տուրի» Խորենացի, Գ, 62, էջ 345. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 41, 186. «վիշապազն», Խորենացի, Ա, 30, էջ 84. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 41. «բևնաբարձ», Խորենացի, Գ 62, էջ 345, Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 41. «հինգակատար», Խորենացի, Գ, 62, էջ 345. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 41. «Հանգոյց ի հանգուցէ», Խորենացի, Բ, 46, էջ 172. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 58. «նգաճարճար», Խորենացի, Գ, 28, էջ 280. Պատմութիւն Ալեքսանդրի, էջ 64. «թուլամտութիւն», Խորենացի, Ա, 21. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 96. «ուժաւոր», Խորենացի, Ա, 10, էջ 33. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 97. «առնապատկեր», Խորենացի, Բ, 12, էջ 122. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 149. «վիմուտ», Խորենացի, Գ, 55, էջ 330. Պատմութիւն Ագեքսանդրի, էջ 154 և այլն և այլն:

52) **Խան.**— «Ելանել ի խանս կարգելոյ ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր». Խորենացի, Բ, 46, էջ 172: Ըստ Երևույթին, ամկական ուշ չրջանի բառ է:

53) **Խաքան.**— Տե՛ս Խորենացի, Բ, 87, էջ 235. Բ, 89, էջ 239. Սերեոս, գլ. Ը, էջ 33, ԻԶ, էջ 67, ԻԷ, էջ 68 և 69. Ղևոնդ, ԺԲ, էջ 41. ԺԸ, էջ 101. Խորենացի, Աշխարհացոյց, էջ 605. Սուքրյան Հրատ., էջ 27:

*54) **Խորտաբորտ.**– «Արչաւել ընդ խորտաբորտս և ընդ վիմատ տեղիս», Խորենացի, Գ, 55, Լ 330: Ըստ Աբեղյանի, ուշ չրջանի բառ է:*

*55) **Խրթնանամ.**– «Եկեղեցի Հայաստանեայց՝ խրթնացեալ է ի բարեզարդութենէ բեմին», Խորենացի, Գ, 68, Լ 358. «Զի սուրբ Եկեղեցին խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմին», Ղևոնդ, է, Լ 21. ունի նաև Հովհաննես Կաթողիկոս, Լ 58, 110, 116. տե՛ս նաև Խոսրով, Շնորհալի, Նարեկացի: «Խրթնի» – «Այնքան խրթնի անծանօթքն պատահէն առ մխմանաս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան», Արծրունի, Բ, 7, Լ 121: «Խրթնի» «մթին» իմաստով ունի Փիլոն լին., Ա, 7. Համեմատ. նաև Հովհաննես Կաթողիկոս, Լ 74, 80: «Խրթնադգեստ», Թեոդոր, Մայրագոմ., Լ 147. «խրթնութիւն», Ստեփանոս Սյունեցի, Մեկնութիւն քերականի, Լ 207 (Հրատ. Ն. Ադոնցի, 1915 թ.):*

*56) **Կայկայիմ.**– «Կայկայեցու տպիտութենամբ չարափառութիւն», Խորենացի, Գ, 68, Լ 358. «Կայկայէին որդիք ազախնաց», Արծրունի, Դ, 5, Լ 473, գործ է ածված Խորենացու և Արծրունու մոտ:*

*57) **Կապան.**– «Անցանէ ընդ կապանն ձորայ», Խորենացի, Բ, 65, Լ 200. «Ելին արտաքս քան զկապանն ձորայ», Խորենացի, Գ, 12, Լ 270. «Զոգան հասին ի կապանս ձորայ», Սեբեոս, ԽԹ, Լ 151. «Զի է կապանք երկաթի և բանտից և կապանք քարեայ (այսինքն՝ լերանց), որ ասի՝ կիրճս ճանապարհի», Երզնկացի քեր. «Անցանէին ընդ նեղ և ընդ դժուար կապանս լերանց», Ուռհայեցի, «Կապան»-ը հատուկ այս իմաստով, ըստ Աբեղյանի, հետին չրջանի բառ է:*

*58) **Կիսակտուր.**– «Արարեալ սուսերաւ կիսակտուր զգլուխ նորա», Խորենացի, Գ, 39, Լ 307. «Գիա ով Թագաւոր, ի կիսակտուր չինականս», Սահմանք, Թ, Լ 166. «Ոչ Թողով կիսակտուր զբանիցն ոճ», Հովհաննես Կաթողիկոս, Լ 228. «Զիա՞րդ եթէ Աստուած կիսակտուրն և ի կապէն զոդացեալն», Արծրունի, Ա, 3, Լ 64:*

*59) **Կղիմայ.**– «Վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պոռոին Արմենիան» Խորենացի, Ա, 14, Լ 46. «Եւ զի զկղիմայն զայն» Հովհաննես Կաթողիկոս, Լ 18. նաև Վարդ. վրդ., Ոսկեփ. և այլն:*

*60) **Կողմնակալ.**– «Եւ վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մնծաց կողմնակալաց», Խորենացի, Ա, 21, Լ 66. Բ, 7,*

էջ 109, Բ, 8, էջ 113. տե՛ս նաև Հովհաննես Կաթողիկոս, էջ 26. Արծրունի, Բ, 5, էջ 184, Բ, 6, էջ 197, Գ, 1, էջ 209, Դ, 2, էջ 223. Մովսես Կաղանկատվացի, Ա, 4, էջ 14. «կոդմնակալութիւն» – Խորենացի, Բ, 8, էջ 113, Բ, 11, էջ 121: Այս բառերը չեն հանդիպում հնագույն երկերում:

*61) **Կոպտարանձն.**– «Զայս խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաբերի, խորակն և դժնահայեաց», Խորենացի, Բ, 8, էջ 114. «կոպտառձև» Վարպանանց պատմութիւն: Ըստ Հր. Աճառյանի («Արմատական բառարան»)՝ «կոպիտ» արմատը, որ այս բարդութիւնների առաջադիրն է, գործ է ածվել մի ջին հայերենում:*

*62) **Հակառակաթոռ.**– «Զի լիցի ընդդիմամիտ մեծին Սահակայ և հակառակաթոռ», Խորենացի, Գ, 65, էջ 350. «Սակայն հակառակաթոռ զոլով», Հովհաննես Կաթողիկոս, էջ 73. «Եւ կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ դՍուրմակ մոլի», Արծրունի, Ա, 129: «Հակառակաթոռ» բառը, որքան ինձ հայտնի է, չի հանդիպում հնագույն երկերում:*

*63) **Հարսնանամ.**– «Զի հարսնասցի արքային», Խորենացի, Բ, 83, էջ 226. տե՛ս նաև Պատմութիւն Հոիփ., էջ 298, 307 (Վենետիկ, 1843), Ջաքարիա Կաթողիկոս, Վրդ. ծն., Լամբրոնացի և այլն: Կարող է լինել հետին չրջանի բառ:*

*64) **Հաւանողական.**– «Իսկ նուաճել հաւանողական կամ բռնաւորական բանիւ», Խորենացի, Բ, 92, էջ 245. «Զոմանս հաւանողականաւ, իսկ զոմանս բռնաւորականաւ կարգաւ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 41. նաև Նարեկացի, ԺԷ:*

*65) **Հաւասարասէր.**– «Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի», Խորենացի, Ա, 24, էջ 73. «Այլ և ի հաւասարասիրութիւն առ ամենեսեան դինքն կշռադատեալ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 22:*

*66) **Հնգամամբ լինել.**– «Վասն որոյ հնգամամբ եղև յիւրոց սննեկապետաց», Խորենացի, Գ, 22, էջ 283. «Եւ այնպէս հնգամամբ վճարէին ի կենաց», Ղևոնդ, Ը, էջ 25. ունեն նաև Ջաքարիա Կաթողիկոս, Մովսես Կաղանկատվացի, Տե՛ս **Ն. Ակինյան,** Մատենագրական հետազոտութիւններ, III, էջ 197:*

*67) **Հնախօսութիւն.**– «Ոչ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս», Խորենացի, Գ, 1, էջ 257. «Եւ որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից», Խորենացի, Բ, 75, էջ 214. «Ի հնախօս չարադրական մատեանս», Արծրունի, Ա, 1, էջ 24:*

68) **Հրընկեց, հրընկեցութիւն.**— «Ամպք հրընկեցք», Խորենացի, Գ, 68, էջ 365. «Հրընկեց բարկութիւն», ունի Պատմութիւն Աղեքսանդրի:

69) **Հրէշ.**— «Անբաւութիւն յամուրաց և հրէշից», Խորենացի, Բ, 18, էջ 223. «Ունի և հրէշ և մուշկ և սիրամարգ չատ», Խորենացի, Աշխարհացոյց (Վենետիկ, 1843), էջ 616. «Եւ ունի հրէշ, և մուշկ, և սիրամարգ չատ», Խորենացի, Աշխարհացոյց (Հրատ. Սուքրյան), էջ 46: Այս բառը առաջին անգամ գործ է ածված Աշխարհացոյցի մէջ, որ ուշ չրջանի երկ է:

70) **Ճախր առնում.**— «Ճախր առնոյր կաճնայն», Խորենացի, Գ, 9, էջ 267. «Ճախր առնայ ճահոդարար», Պետրոս Սյունեցի, էջ 14 (Վաղարշապատ, 1902). «Ճախր առնայ ճնմէր յասպարիսի անդ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 176. «Եթէ դինուք հարկանիմ՝ ոչ գործէր, այլ ճախր առնոյր», Մովսես Կաղանկատվացի, Ա, 12, էջ 38. «Ընդ հովիտս դաչտացն ճագր առնայ», Մովսես Կաղանկատվացի, Բ, 36, էջ 263. ունի նաև Պատմութիւն Աղեքսանդրի, էջ 134. «Ճախրնայ», Արծրունի, Գ, 29, էջ 412. «Ճախրասլացք», Մովսես Կաղանկատվացի, Բ, 28, էջ 229: «Ճախր առնում» բառը սովորական է ուշ չրջանի երկերում:

71) **Մարդադաւ, մարդադաւութիւն.**— «Իսկ միսն գիչերային և մարդադաւաց», Խորենացի, Բ, 39, էջ 165. «Եւ զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց», Խորենացի, Բ, 6, էջ 109. «Ի բաց քեցել յանձանց դաւադակութիւնն և զմարդադաւութիւն», Հովհաննես Կաթողիկոս, էջ 25. «Ի բաց ի նոցանէ հերքելով դաւադակութիւն մարդադաւութեան», Հովհաննես Կաթողիկոս, էջ 140. «Պատուէր առնէր՝ դաւադակութիւն և զմարդադաւութիւն Թողուլ», Մովսես Կաղանկատվացի, Ա, 4, էջ 14. «Երարձ նա յաչխարհէն իւրմէ դաւադակութիւն» Ասողիկ, Գ, 17, էջ 196. «Մարդադաւութիւն» բառը հանդիպում է միայն ուշ չրջանի երկերում:

72) **Մեծահասակ.**— «Զանասնոց պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս», Խորենացի, Բ, 59, էջ 338. «ուժեղ և մեծահասակ լինի, և հնազանդ և գործունեայ», Շիրակացի, Տիեզերական, էջ 20 (Երևան, 1940). «Եւ էր նա մեծահասակ և վայելուչ երեսօք», Մեսրոպ Երեց, էջ 19:

73) **Մեծիմաստ.**— «Մեծիմաստ և պերճաբան», Խորենացի, Ա, 24, էջ 73. «Մեծիմաստ և պարկեչտ և մեծաջան», Հովհաննես Կաթողիկոս, էջ 137 և 292. «կարգեալ էր և զօրագլուխ մի մեծիմաստ և յառաջատես», Արծրունի, Գ, 3, էջ 460: «Մեծիմաստ» բառը հանդիպում է ուշ չրջանի երկերում:

74) **Միջակտուր.**— «Միջակտուր յայնպիսի ահաւոր բադկէ լեալ», Խորենացի, Բ, 85, էջ 231. «Սրախողխող միջակտուր արարեալ» Արծրունի, Գ, 25. էջ 387. «Ինքն լինի միջակտուր ի նմանէն», Մովսես Կաղանկատուացի, Ա, 12, էջ 87. ունեն նաև Մխ. առակք, Ասողիկ և այլն:

78) **Միջներկրեայ.**— «Եւ քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ դՄաժաք և դհոգս Միջներկրեայցն», Խորենացի, Բ, 14, էջ 127, տե՛ս նաև Խորենացի, Բ, 25, էջ 142. Գ, 5, էջ 261. 12, էջ 270 և 19, էջ 278. ունեն նաև Խորենացի. Աշխարհացոյց. էջ 592, 600 և այլն և Սուքրյանի Հրատ. էջ 6, 21 և այլն. «Աշխարհն Միսիպիոն, որ Թարգմանի Միջներկրեայք», Ղևոնդ, ԺԹ, էջ 103: «Միջներկրեայք» վերոհիշյալ իմաստով առաջին անգամ գործ է ածված Ղևոնդի Պատմության մեջ:

76) **Մոլեխինդ.**— «Տան նմա արբուն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն», Խորենացի, Բ, 92, էջ 247. «Յաղագս մոլեխնդին Սովկրատայ», Նոննոս, III, ԺԳ, էջ 30. ունեն նաև Հովհաննես Կաթողիկոս, էջ 261. Նիւս. կազմ. Մեսրոպ երից և ուրիշներ: Խորենացին, հավանորեն, օգտվել է Նոննոսի հայերեն Թարգմանությունից:

77) **Մրրկալից.**— «Զմեռն սաստկասաւոյց, մրրկալից. յերկարացեալ», Խորենացի, Գ, 68, էջ 365. «Իբրև ձմեռն ընդմիջեցաւ և օդն խստացաւ Թանձրացաւ միգախառն մրրկալից», Արծրունի, Բ, 7, էջ 200. «Զկոհական մրրկալից դադարեցուցին», Արծրունի, Գ, 5, էջ 247. «Ի բռնութենէ մրրկալից հողմոյն», Արծրունի, Գ, 7, էջ 269:

78) **Յայտարարութիւն.**— «Եւ անտի դյայտարարութիւն մերոյ ազգարանութենանս խոստացաք», Խորենացի, Ա, 2, էջ 7, «Յայտարարութիւն սակաւուք», Խորենացի, Ա, 7, էջ 27. ունեն նաև Հովհաննես Կաթողիկոս, էջ 10, 12, Արծրունի Ա, 10, էջ 106, Ա, 11, էջ 134, Դ, 7, էջ 293. Մովսես Քերթողահայր, տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 22 և Հովհաննես Եպիսկոպոսապետ, տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 32: Այս բառը սովորական էր ուշ շրջանի երկերում:

79) **Յաջողաձեռն, յաջողաձեռնութիւն.**— «Նորատիպ և հարուստ յոյժ և յաջողաձեռնութիւն խակ», Խորենացի, Ա, 13, էջ 43. «Եւ ի սուսեր աջողաձեռնագոյն», Խորենացի Ա, 21, էջ 65. «աջողաձեռնութենամբ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 137. «յաջողաձեռն», Հովհաննես Կաթողիկոս, էջ 336. «աջողաձեռնարար», Հովհաննես Կաթողիկոս էջ 114. «յաջողաձեռնական», Հովհաննես Կաթողիկոս, էջ 120:

80) **Նաւակամուրջ.**— «եւ զօրացն Պարսից կոյմնապահաց հատնել զչուանս նաւակամրջին Եփրատու», Խորենացի, Գ, 13, ԼՂ 271. «Խնդրէր գինքն կարգել պահապան նաւակամրջացն», Ղևոնդ, Դ, ԼՂ 13. «Հատանել զլարս նաւակամրջացն», Սեբեոս, ԼԷ, ԼՂ 95: «Նաւակամուրջ» բառը, որքան ինձ հայտնի է, առաջին անգամ հիշատակված է Սեբեոսի Պատմության մեջ:

81) **Շղոմարար.**— «Զայր չոյտ և չղոմարար և սուտակասպաս», Խորենացի, Բ, 60, ԼՂ 190. «Հրապուրեցայ ի չոդոմարար չոդոմգեալ բանից մերոց Թագաւորեացն», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 288. «Շղոմարար հպատակութեամբ վարէր առ Թագաւորն», Արծրունի, Ա, 8, ԼՂ 101. «Մեռանի անձամբ ընդ այլ չղոմարարսն», Արծրունի, Ա, 8, ԼՂ 102, «Ոչ կարեմք վոյթ ընդ վոյթ չղոմարար հաճութեամբ Թագաւորիդ յանձն առնուլ», Արծրունի, Բ, 2, ԼՂ 143. «չոդմոգէր, չոդոմութեամբ», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 252: «Շոդոմ» արմատն ունեն Ոսկերևրան Հոռվմ., 415 և Նոննոս, 45, սակայն «չոդոմարար» բառը, որ չի հանդիպում հնագույն երկերում, սովորական ու ընդհանուր տարածված բառ է եղել, հավանորեն, Բագրատունյաց շրջանում:

82) **Ուղղախօսեմ.**— «Անուանէին հինք աչխարհին՝ «Մաժաք, որպէս ոչ կարելով «ուղղախօսել», Խորենացի, Ա, 14, ԼՂ 46-47. «Զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորւոց՝ կոչեցին Արգաբոս», Խորենացի, Բ, 26, ԼՂ 143. «Երկաբակեցութեամբ զմիմեանս աւանդութեամբ ուսուցանէին ուղղախօսել», Ստորոգութեանց քերականութիւն, ԼՂ 183 (Հրատ. Ն. Ադոնցի). «Ըստ մերումս լեզուի ոչ բաւեալ ուղղախօսել», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 32. ունի նաև Մագիստրոս Թղթոց (1910), ԼՂ 131. «ուղղախօսութիւն», Ստորոգութեանց քերականութիւն, ԼՂ 183. Մագիստրոս:

83) **Զափաբերապէս.**— «Վերահայեցողք չափաբերապէս մակագրութեանց», Խորենացի, Գ, 62, ԼՂ 343. «Զաւ ի ծերուննացն անցեալ բան ի պարզագունից չափարերապէս հանդիպեցայց», Հովհաննես Կաթողիկոս, ԼՂ 131. «չափարերութիւն», «չափարերեալ» — «ի չափարերութիւն անհատից մարդկային սևռից», Արծրունի առաջարան, ԼՂ 18. «Տարաժամ լրմամբ ժամանակի չափարերեալ կննացն Աչոտի», Արծրունի, Գ, 29, ԼՂ 400: Մատնանչված այս բառերը չեն հանդիպում հայ մատենագրության հնագույն երկերում:

84) **Պահպանակ.**— «Եւ պահպանակս բարձից և բազկաց»,

Խորենացի, Ա, 11, էջ 36. տե՛ս նաև Խորենացի, Ա, 24, էջ 72, Բ, 85, էջ 230. Գ, 37, էջ 303. «Լեգէօն պահպանակ թիկնոցաց», Հովհաննես Կաթողիկոս, էջ 26. «ի պահպանակացն բարձից և բազկացն», Հովհաննես Կաթողիկոս, էջ 312:

*85) **Պատել**.– «Պչրանօք և պոստկով կևայր զօրհանապազ», Խորենացի, Բ, 63, էջ 194. «Կայր պյօնան պոզտևալ». Արծրունի, Գ, 6, էջ 254. Գ, 15, էջ 340. ունեն նաև Վրդ. սղմ., Կիր. պատմութիւն: Հնագույն երկերում չի հանդիպում:*

*86) **Ջալոտ**.– «Հրամայեաց ջալոտիւք հարկանել յերկար». Խորենացի, Գ, 14, էջ 272. «Հարևալ ջալոտիւք դիմիկունս նորա՝ սաստկագոյնս տանջէին», Ղևոնդ, Խ, էջ 164. ունեն նաև Սիսական. Սուիերք ժԲ, էջ 33. Յայսմաւուրք և այլն: Առաջին անգամ հիշատակված է Ղևոնդի Պատմութեան մեջ:*

*87) **Ջախումն**.– «Եւ այսպիսի ջախմամբ վախճանեցաւ», Խորենացի, Բ, 46, էջ 173. «Ջախել» կամ «Ջաղխել» – «Որք միանգամ կրին ընդդեմ նոցա պատերազմել՝ ջախեցին մանր իբրև դփոչի», Ղևոնդ, ԼԷ, էջ 156. «Եզարկ դիմացն Աղեքսանդրի և ջախեաց զսպազաւարս նորա», Պատմութիւն Աղեքսանդրի, էջ 91. «Եւ բոլոր անդամք նորա ջախեալ ջախջախեալ» Հովհաննես Կաթողիկոս, էջ 117. «Մնծամնծա փքայր ընդկ ջարդել ջաղխել», Հովհաննես Կաթողիկոս, էջ 289: Հնագույն երկերն ունեն կրկնութեամբ «ջախջախել»:*

*88) **Սաղապեցուցանել**.– «Ի դէն մաղդեղանց սաղապեցուցանել», Խորենացի, Գ, 55, էջ 330. «Եւ այնպիսեաւ սաղապաճեմիւ մտաք յեզիպտոս», Խորենացի, Գ, էջ 344. «սաղապել» Պիտոյից վերջարան, էջ 581, «սաղապ» – «Զսաղապ և զսնոտի միտս նորա յինքն յանկուցեալ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 121. տե՛ս նաև Հովհաննես Կաթողիկոս, էջ 180, 216. Ոսկերերան, Հովհաննես Բ յիշ., էջ 960. «անսաղապ» Հովհաննես Կաթողիկոս, էջ 291: Թեև «առսաղապել» ունի մեկ անգամ նաև Տիմոթեոս, էջ 108 (տե՛ս **Հր. Աճառյան**, Արմատական բառարան), սակայն «սաղապ» և «սաղապել» սովորական ու ընդհանուր գործածական բառեր էին, հավանորեն, Բագրատունյաց շրջանում:*

*89) **Սաստկասառոյց**.– «Ձմեռն սաստկասառոյց մրրկալից», Խորենացի, Գ, 68, էջ 365. «Զարչարէին դնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան», Արծրունի, Բ, 6, էջ 200:*

*90) **Սմբակակոխ առնել**.– «Սմբակակոխ արարեալ զսահմանս Հայոց», Խորենացի, Ա, 13, էջ 44. «Եւ բաղում արեան ճապաղիս*

ի նոցանէ հնգուին ամբակակոխ արարեալ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 114. «Բաղմութիւնք ամարկակոխ ձիոցն», Մովսես Կաղանկատվացի, Ա, 21, էջ 81. «Ամբակակոխ» բառը ևս չի հանդիպում հնագույն երկերում:

*91) **Սրագլուխ.**— «Իսկ արդեամբ Թերսխտեայ նմաննեալ կապի և սրագլխոյ», Խորենացի, Գ, 10, էջ 278. «Լևսնչտի էր [Թերսխտես] և սրագլուխ և կապ ի միջէ ոտանէ», Թևոն, էջ 116. Նոննոս, IV, 20, 21, էջ 72 («Թերսխտէս, որ էր կապ. և խնդ աչաւք, կորովի և լևսնչտի, լերկ և սրագլուխ և յառաջախուռս»): Խորենացին օգտվել է Թևոնի կամ Նոննոսի հայերեն թարգմանություններից:*

*92) **Սրտեայ.**— «Այր սրտեայ և ուժեղ», Խորենացի, Բ, 63, էջ 194. «Միհրդատ, այր սրտեայ և աջողաձեռն» Ջուանշ., էջ 73, «Զի էր այր սրտեայ և ուժեղ», Արծրունի, Բ, 1, էջ 138:*

*93) **Վերահասու.**— «Եղև վերահասու» Խորենացի, Բ, 78, էջ 217. «Վերահասու եղաք զրկլոցս առ ի քէն», Խորենացի, Գ, 57, էջ 335. «Որչափ մեք եղաք վերահասու», Խորենացի, Բ, 36, էջ 161. «Վերահասուցեալ» — Սոկրատ, Աբոլ., Ա, 8, էջ 23, ունեն նաև Զաքարիա Կաթողիկոս, Սանահն. և այլն:*

*94) **Վերահայեցող.**— «Վերահայեցողք չափարերապէս մակագրութեանց», Խորենացի, Գ, 62, էջ 343. «վերհայիմ» — Զաքարիա Կաթողիկոս, խչ. «վերահայեաց» Թեոդոր. Կուս. Համբրոնացի, պատարագ, «վերահայեցողութիւն» — Դիոնիսիոս, երկն. և նկեղ. Շնորհալի, Համբրոնացի և այլն:*

*95) **Վերջոտնկել.**— «Ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ եւանէր», Խորենացի, Ա, 11, էջ 36. «Որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով դնետին տեղին», Արծրունի, Ա, 11, էջ 134. «Բայց Աչոտ վերջոտնեալ հանդերձ վահանաւ՝ նկն նհաս խաղաղութեամբ», Արծրունի, Գ, 16, էջ 343. «Վերջոտնեալ նկն բանակեցաւ յԱրտաչեսեան ավանին», Արծրունի, Գ, 18, էջ 348. ունեն նաև Նանայ. Սկևռ. և այլն: «Վերջոտնկ» կարող է լինել ուշ շրջանի բառ:*

*96) **Վիթխարի.**— «Յաղթանդամք մարմնով և վիթխարիք», Խորենացի, Ա, 9, էջ 31. «Վիթխարի հասակաւ և ուժով», Խորենացի, Բ, 8, էջ 114. «Ընդ վիթխարի սկայիցն միակամեալ», Հովհաննես Կաթողիկոս, էջ 14. ունեն նաև Հովհաննես Իմաստասեր Պավլ. և այլն: «Վիթխար» արմատը չի պատահում հնագույն երկերում:*

*97) **Վսեմանալ.**— «Զմիտան վսեմացնալոյս», Խորենացի, Գ, 69, էջ 363. «վսեմական» — Հովհաննես Կաթողիկոս, էջ 265. ունեն*

նաև Անանիա Նկ. և այլն. «վսեմապետ» – Արծրունի, Գ, 29, էջ 399. «վսեմախոհութիւն» – Պատմութիւն Ազկբսանդրի, էջ 129. «վսամ» – Մովսես Կաղանկատվացի, Ա, 26, էջ 102. «վսեմարփի» – Թլոդ. խչ. «վսեմազոյն» – «Գիրք թղթոց», էջ 381: «Վսեմ» կամ «վսամ» արմատը, ինչպես և նրանից կազմված բարդութիւնները, համարվելու են, հավանորեն, հետին շրջանի բառեր. Համեմատե **Հր. Աճառյան,** Արմատական բառարան:

98) **Տափակաքիթ.**– «Կոպտարանձն և տափակաքիթ (տափաքիթ)», Խորենացի, Բ, 8, էջ 114. «տափաքիթք, լայներնսք», Խորենացի, Աշխարհացոյց, էջ 615 (Վենետիկ, 1843) «Տափաքիթ», հավանորեն, ուշ շրջանի բառ է:

99) **Տիեզերակալ, տիեզերակալութիւն.**– «Որպէս տիեզերակալին Ազկբսանդրի Մակեդոնացւոյ», Խորենացի, Բ, 88, էջ 238, «Վկայութիւնք տիեզերակալութենէն Արտաչիսի», Խորենացի, Բ, 13, էջ 123. «Ազկբսանդր Փիլիպպեայ տիեզերակալեալ բազմաց», Հովհաննես Կաթողիկոս, էջ 23. «եւ վասն դի տիեզերակալութեամբ իմն ձեռներէց լինէր [Արշակ քաջ]» Հովհաննես Կաթողիկոս, էջ 24. «Թագաւորեալ Ազկբսանդր Մակեդոնացի տիեզերակալութեամբ», Արծրունի, Ա, 6, էջ 79. «Համօրէն տիեզերակալեաց ամս է», Արծրունի, Ա, 6, էջ 80. ունեն նաև Վարք, Ածար., Լամբրոնացի և այլն: Մատնանշված այս բառերը չեն հանդիպում հնագույն երկերում:

100) **Քաջազգի.**– «Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց», Խորենացի, Բ, 50, էջ 178. «ախոյանարձակ քաջազգի», Արծրունի, Գ, 29, էջ 427. «Բարեխնամող քաջագնեայ, յաւետարարգաւաճ դօրաւոր ապուհի պատրիկ տէր Ջիւանչիր», Մովսես Կաղանկատվացի, Բ, 30, էջ 239:

101) **Քարտուղար, քարտուղարութիւն.**– ունեն Խորենացի, Բ, 67, էջ 202, Բ, 60, էջ 190. Գ, 47, էջ 316. Գ, 52, էջ 325. Հովհաննես Կաթողիկոս, էջ 53, 193, 203, 204. Պատմութիւն Հոփսիմ., էջ 297. Պատմութիւն Ներսես, էջ 28 և այլն: Ուշագրավ է, որ այս բառերը հները չեն գործածել:

102) **Քուաւոր.**– «եւ ի վերուստ պաղանձաւ քուաւոր», Խորենացի, Գ, 45, էջ 314. «Հասեալ ի տեղի ապառաժ քուաւոր», Արծրունի, Ա, 1, էջ 46:

103) **Օթանոց.**– «Ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց», Խորենացի, Բ, 92, էջ 248. «Սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն», Արծրունի, Գ, 20, էջ 361. ունի նաև

Սոկրատ, «օթոց» – «Նորա ննջեին յիւրաքանչիւր վրանաց օթոցի», Արծրունի, Գ, 11, էջ 310. «ի տեղւոջ օթոցին», Արծրունի, Գ, 16, էջ 341. «օթարան»- Խորենացի, Բ, 74, էջ 212. ունեն նաև Շնորհալի Յս. Որդի և այլն: Հնագոյն երկերում գործ է ածված «օթևան» բառը:

*104) **Օտարանոց**.– «Սահմանէ և յամենայն գիւղս վանս չինել, գի լինիցին օտարանոցք», Խորենացի, Գ, 20, էջ 280. «Կարգէ և վանորայս և օտարանոցս և հիւրանոցս և տնանկանոցս», Հովհաննես Կաթողիկոս, էջ 46. «Այլ հրամայեաց գվանորայն քակել և զօտարանոցսն», Մեսրոպ Երէց, էջ 116:*

*105) **Շատխօսութիւն**.– «Շատխօսութեանն հոսանք», Խորենացի, Բ, 92, էջ 249. ունի նաև Արծրունի, Գ, 10, էջ 292:*

Բացի վերև մէջ բերված բառերից, որոնց մեծագոյն մասը համարվելու են մատենագրական ուշ շրջանի բառեր՝ կասկածելի են, իմ կարծիքով, և կարոտ են հատուկ քննութեան նաև մի ստվար մասը Խորենացու Պատմութեան մէջ գործածված հետևեալ բառերի.

1. «արագարանութիւն» Ա, 32, էջ 87: – 2. «արդարախօսող» Ա, 6, էջ 23: – 3. «աւարտարանութիւն» (վերնագիր), էջ 257: – «բարձրահասակ» Ա, 26, էջ 75: – 5. «բքարար», «բքարեր», Գ, 68, էջ 365: – 6. «գիաճութիւն» Գ, 57, էջ 333:– 7. «գառնահոտ» Բ, 39, էջ 165: – 8. «գնդակուր» Բ, 87, էջ 235:– 9. «գործարհաւաք» Ա, 5, էջ 17: – 10. «գիւանագիրք» Ա, 3, էջ 10: – 11. «երգարան» Ա, 3, էջ 11: – 12. «երկարոգի» Գ, 54, էջ 328: – 13. «երկայնանիստ» Ա, 10, էջ 33: – 14. «երեւելութիւն» Ա, 15, էջ 49: – 15. «էչ» (պատերազմական մեքենա) Գ, 28, էջ 290: – 16. «ընդվզիլ» Բ, 79, էջ 218 (նույն այս բառի հնագոյն իմաստը տարբեր է): – 17. «թուլասրտութիւն» Գ, 9, էջ 266: – 18. «լայքա» Բ, 50, էջ 179: – 19. «լաւակամ» Գ, 67, էջ 356: – 20. «կականումն» Բ, 83: - էջ 227: – 21. «կծլիք» Գ, 68, էջ 364: – 22. «կծծի» Գ, 68, էջ 364: –23. «կողմնապետ» Ա, 14, էջ 46. 17, էջ 55: – 24. «համաթիւ» Բ, 82, էջ 225: – 25. «համբերողական» Գ, 67, էջ 357: – 26. «համբաւատուէչ» Գ, 62, էջ 344: – 27. «հայրենասէր» Ա, 13, էջ 43: – 28. «հարկապահանջ» Ա, 24, էջ 72: – 29. «հարկեցուցանեմ» Գ, 65, էջ 353: – 30. «հարստի» Բ, 37, էջ 162: – 31. «հնարաւորութիւն» Ա, 27, էջ 78: – 32. «հնգապատիկ» Բ, 88, էջ 238: – 33. «ձիւնակիր» Բ, 7, էջ 111: – 34. «ձևոնտուութիւն» Բ, 7, էջ 110: –

35. «մետաքսագործ» Բ, 33, էջ 152: – 36. «նախագլուխ» Բ, 19, էջ 278: – 37. «նորատի», Ա. 13, էջ 43: – 38. «չամփրեմ» Ա, 30, էջ 82: – 39. «չատակեր» Ա, 12, էջ 39: – 40. « չատահանճար» Ա, 20, էջ 63: – 41. «ոստչիմ» Բ, 37, էջ 304: – 42. «ուսումնատնաց» Բ, 92, էջ 248: – 43. «չարարանիմ» Գ, 64, էջ 348: – 44. «պտուտիմ» Բ, 37, էջ 304: – 45. «պասքումիան» Գ, 68, էջ 363: – 46. «պատատաքաղ» Բ, 47, էջ 174: – 47. «պետանամ» Գ, 36, էջ 302: – 48. «ջերմահոտ» («ջերմահովիտ» ?) Բ, 6, էջ 108: – 49. «ջրաւոր» Բ, 7, էջ 264 (հնագույն իմաստը տարբեր է): – 50. «սեաղգնստ» Բ, 60, էջ 191: – 51. «սիւգնոն» Բ, 83, էջ 226: – 52. «սպուղէլ» Գ, 49, էջ 320: – 53. «ստրատելատ» Գ, 36, էջ 302. 48, էջ 317, 57, էջ 335. 58, էջ 337 և այլն: – 54. «սերտիմ» Բ, 91, էջ 244: – 55. «վատթարագղի» Բ, 63, էջ 195: – 56. «տարգալ» Բ, 47, էջ 174: – 57. «տմարղի» Գ, 68, էջ 364: – 58. «փառամոլ», «փառամոլութիւն» Գ, 63, էջ 347. Բ, 92, էջ 347. Բ, 92, էջ 248: – 59. «քարագագաթն» Բ, 4, էջ 106: – 60. «քարակտուր» Բ, 39, էջ 165:

ԱՐՄԱՎԻՐԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ[1]

XX դարի առաջին տասնամյակներին Հայաստանում արված հնագիտական դյուտերը պատմական գիտությունը հարստացրին բացառիկ նշանակություն ունեցող վավերագրերով: 1911 թվականին Արմավիրի բլրի հարավային լանջի վրա, Արմավիրից Շահրիար տանող մի ջորեղյա ճանապարհի մոտ, գտնվել էր մի մեծ քար երեք հունարեն արձանագրություններով: Ակադեմիկոս Ն. Մառի հանձնարարությամբ, որն այդ ժամանակ աշխատում էր Անիում, այդ արձանագրությունները լուսանկարել էին Ն. Լ. Օկունևը և Ն. Պ. Սիչևը: Նրանք միաժամանակ գծել էին այդ արձանագրությունների նաև ձևագիր պատճենները:

Այնուհետև նոր գտնված այս արձանագրությունների ընթերցմամբ զբաղվել էր երկար ժամանակ ակադեմիկոս Յ. Ի. Սմիրնովը, որը սակայն չէր կարողացել ավարտել իր աշխատանքը և չէր հանգել վերջնական եզրակացության: Սմիրնովի աշխատության սևագրությունները, որոնք Հ. Ա. Օրբելին տվել էր Ա. Ի. Բոլտունովային նախապատրաստելու տպագրության համար՝ դժբախտարար, մինչև այժմ դեռ հրատարակված չեն[2]:

1927 թվականին Մուրմելնական ակադեմիայի Կովկասյան Պատմա-հնագիտական ինստիտուտի և Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի համատեղ գիտարշավի ժամանակ հայտնաբերվել էր մի ուրիշ մեծ քար՝ չորս հունարեն ար-

---

[1] Զեկուցված է ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովի հոբելյանական նիստում, 1945 թվականի նոյեմբերի 22-ին:

[2] Տե՛ս А. И. Болтунова, Греческие надписи Армавира, «Տեղեկագիր» ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, Երևան, 1942, № 1-2 (15-16), էջ 35-37. նաև С. В. Тер-Аветисян, Археологическое обследование городища и крепости «Древний Армавир», Արմֆանի «Գիտական ժողովածու», նվիրված Հայաստանում խորհրդային իշխանության Հաստատման 20-ամյակին, Երևան, 1941, էջ 61:

ձանագրություններով: Այս երկրորդ քարը գտնվում էր առաջին քարից ոչ հեռու՝ մոտ 12 մետր հեռավորության վրա դրանից դեպի արևելք:

1932 թվի աշնանը Միութենական ակադեմիայի Անդրկովկասյան ֆիլիալի հանձնարարությամբ այս նոր գտնված չորս հունարեն արձանագրությունները հետաքննել էր տեղում Ա. Ի. Բոլտունովան, որն այնուհետև ուսումնասիրել էր այդ արձանագրությունները, հիմնվելով էքսպեդիցիայի ժամանակ իր հանած լուսանկարների և ձեռագիր պատճենների վրա:

1935 թվականին Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի հրատարակած «Նյութեր Հին Հայաստանի պատմության» ժողովածուի մեջ լույս էր տեսել Ս. Տեր-Հակոբյանի մի փոքր հոդվածը՝ «Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը» վերնագրով: Սրա մեջ առաջին անգամ հրապարակված էին 1927 թվականին գտնված երկրորդ քարի լուսանկարը և այդ քարի վրայի առաջին երկու արձանագրությունների ձեռագիր պատճենները (էջ 146 և 149):

Իսկ մոտ ժամանակներում՝ 1942 թվականին, Արմավիրում գտնված հունարեն բոլոր արձանագրությունների մասին ընդարձակ մի հոդված տպել էր Արմֆանի «Տեղեկագրում» Ա. Ի. Բոլտունովան (№ 1–2, 1942, Երևան):

Իր այս հոդվածում Բոլտունովան մանրամասն լուսաբանում է բոլոր արձանագրությունների բովանդակությունը և առանձնապես մատնանշում է, որ իր հաղորդումը նախնական է և, որ նա հուշարձանների վերջնական հրապարակումը հետաձգում է և կտա հետագայում, երբ հնարավորություն կունենա նորից գնալու Արմավիր և շարունակելու իր աշխատանքները բուն օրինակների վրա:


Բոլտունովայի հոդվածի բնագրին կցված են վեց արձանագրությունների գծագրական ընդօրինակումները, իսկ յոթներորդ արձանագրությունը մեջ է բերված միայն հունարեն տառադարձությամբ: Պետք է ասել, որ արձանագրությունների մեծագույն մասը վատ է պահպանված, ուստի և Բոլտունովայի վերականգնած տեքստերը շատ հաճախ վիճելի են կամ անհաջող: Այնուամենայնիվ, ուշադիր կերպով քննարկելով նրա գծած ձեռագիր պատճենները՝ դժվար չէ եզրակացնել, որ տեքստերի ընթերցանությունը նրա մոտ ընդհանուր առմամբ որոշված է ճիշտ և միայն մանավոր կետերում որոշ ընթերցումներ կարող

ևն վերաբերության և ուղղման հետագա աշխատություններում:

Երկար ու մանրակրկիտ այս աշխատանքը բուն արձանագրությունների վրա պետք է, իհարկե, չարունակվի հենց ամենամոտ ժամանակներում: Ես կուզենայի սակայն ներկայացնել արդեն այժմ մասնագետների ուշադրությանը արձանագրությունների լավանդակության նոր իմ լուսաբանությունը և կցանկայի մասնանշել, որ իմ առաջարկած նոր մեկնությունը լիովին հաստատվում է հին հայկական աղբյուրների գրական վկայություններով[1]:

***

1911 թվականին գտնված հունարեն արձանագրություններով քարն ունի երեք առանձին տեքստ, որ դետեղված են քարի վերևի մասում: Առաջին տեքստը, որի պատճենը մեջ է բերված Բոլտունովայի հոդվածում (նկար 1)՝ պարունակում է ութ տող ոտանավոր հատված, որի առաջին երկու տողում հիշատակված են «Գործեր և օրեր» էպատական պոեմի հեղինակի, Հեսիոդոսի, և նրա եղբոր՝ Պերսեսի անունները:



Նկար 1.

[1] Նախքան բերված հունարեն տեքստերը Ա. Ի. Բոլտունովայի գծած պատճեններն են:

Ա. Բոլտունովան կարծում է, որ այս արձանագրության իմաստը խրատական է և որ իրը թև հոդվածի մեջ հակադրվում են իրար հին և նորը: Սակայն, իրապես, թեև արձանագրության իմաստը, իսկապես, խրատական է, սակայն բոլորովին այլ է:

Այս արձանագրության իմաստը լուսաբանելիս՝ պետք է, ինչպես կարծում եմ ես, ի նկատի ունենալ հին աղբյուրների հաղորդած կենսագրական տեղեկությունները Հեսիոդոսի և նրա եղբոր՝ Պերսեսի մասին: Ինչպես հայտնի է, Պերսեսը, կաշառելով դատավորներին՝ զրկել էր իր եղբայր Հեսիոդոսին նրան հասնող հայրենական ժառանգության բաժնից: Բայց այնուհետև նա ինքը ընկել էր աղետալի դրության մեջ և հարկադրված էր օգնություն խնդրել եղբորից:

Ինձ թվում է, որ արձանագրության մեջ խոսքը հենց այդ մասին է: «Երբեմնի հռչակավոր Հեսիոդոսը», ասված է նրա մեջ, երբ զրկվեց հողից (χῶρος) և հայրենական ժառանգությունից (τὰ πατρῷα), նաև ինքը Պերսեսը՝ քաջալերեց (παρήνεσεν) սրան, ինչպես այդ պատչաճում է կրտսեր եղբայրներին:

Արձանագրությունը գրված է ակնհայտորեն խրատական նպատակով: Նա դատապարտում է ժառանգական գույքի անարդար բաժանումը և խրատում է մոտիկ ազգականներին ապրել խաղաղ ու համերաչխ և աջակցել ու օգնել միմյանց:


Երկրորդ տեքստը (տե՛ս նկար 2), որ բաղկացած է 12 տողից և գտնվում է առաջին տեքստի աջ կողմում, ինչպես երևում է նրա վերջին տողերից, գրված է նույնպես կալվածների ու գույքի բաժանման առթիվ: Թեև և այս արձանագրությունը, ինչպես և նախորդը, չատ վատ է պահպանված, սակայն նրա մոտավոր իմաստը վերականգնվում է զոհացուցիչ հավանականությամբ: Նա բովանդակում է, հավանորեն, Արտեմիս աստվածուհու դիմումն իր հոտին: Արտեմիսը պահանջում է, որ գույքի բաժանումը և կալվածների սահմանատումը կատարվի արդարացի կերպով:

Արձանագրության երկրորդ տողը, ինչպես չատ ճիշտ մատնանշել է Բոլտունովան, կարդացվում է բավական պարզ՝

> οὐκ ἔστι δ'οὔ πολὺ πολεμικώτερα θεος, այսինքն՝ «չկա որևէ տեղ ավելի ռազմատենչ աստվածուհի»:

Այս «ռազմատենչ աստվածուհին», ակնհայտորեն, հունական Արտեմիսն է, որը Հին Հայաստանում նույնացվել է Անահիտ

աստվածուհու հետ: Արմավիրում, ինչպես նկրվե կտեսնենք, գտնվում էր հունական տաճարը Արտեմիսի և Ապոլլոնի:



Նկար 2.

Արձանագրության հետևյալ տասը տողերի մեջ, ինչպես ճիշտ մատնանշել է Բոլտունովան, աստվածուհին խոսում է ինքն անձամբ: Բոլտունովայի տված երրորդ, չորրորդ և հինգերորդ տողերի թարգմանությունը մեծ կասկածների տեղիք չի տալիս: Աստվածուհին ասում է, որ նա ինքն ահ ու սարսափ կառաջացնի, և որ իր խոսքերն ինքնապարծություն չեն, այլ ճիշտ են:

Երրորդ տողի մեջ անհասկանալի է λυσι բառը: Բոլտունովայի ենթադրությունը, որ այդ բառը պետք է ուղղել և կարդալ [Ν]ύσι[α] «նիսիական»[1] համոզիչ չէ:

Անհաջող է, բայի այդ, նրա մեկնությունը երեք մյուս տողերի: Յոթներորդ տողի մեջ Բոլտունովան առաջարկում է առաջին բառը կարդալ [λ]ύ[ω], ուստի և կարծում է, որ աստվածուհին, ինչպես ինքն է ասում, վերացնում էր «մարդկանց ինչ որ սուտ զվրախատությունը, նաև ապտեղարանությունն ու նախանձը»: Դժվար չէ, սակայն նկատել, որ թույլ է և համոզիչ չէ նաև նրա այս մեկնությունը: Կարելի է, ընդհակառակը, ենթադրել, որ վե-

ցներորդ, յոթներորդ և ութերորդ տողերի բովանդակությունը կապ ունի իններորդ և տասներորդ տողերի բովանդակության հետ, որոնց մեջ խոսքը ոչ թե այն մարդկանց մասին է, որոնք «անարդարացի և վատ սկզբունքների» են հետևում, ինչպես այդ սխալ ենթադրում է Բոլտունովան, այլ կալվածների արդարացի բաժանման մասին է:

Իններորդ և տասներորդ տողերը կարդացվում են բավական պարզ: Այդ տողերը, թեև Բոլտունովան մոտավորապես ճիշտ է վերականգնել, սակայն թարգմանել է անհաջող:

[ὁ μὴ] δικαίως μὴ καλῶς ὡρισμένος
[α]ὐτὸν καθ' αὑτὸν τύμβον [εἰσ]δύνει δόμος

Ես առաջարկում եմ թարգմանել այսպես՝ «այն տունը, որ վատ ու անարդար կերպով է սահմանազատում՝ ինքն իրեն փորում է գերեզման»:

Տասնմեկերորդ և տասներկուերորդ տողերում խոսքն այն մասին է, հավանորեն, որ տանջանքը և աստծու առաքած դժբախտությունը չեն պատահելու միայն նրանց, որոնք լսում են աստվածուհուն:

Առաջին քարի երկրորդ տեքստի իմ նոր այս մեկնությունը հաստատվում է ըստ իս նրանով, որ Ապոլլոնի քույր Արտեմիսն աստվածուհին էր, ինչպես հայտնի է, գույքի ու կալվածների արդարացի բաժանման և սահմանազատման: Իբրև սեփականության պահապան՝ նա հիշատակված է յուղիական մի արձանագրության մեջ, որ գտնված է Սարդևսում: Հինգտողանի այդ արձանագրության թարգմանությունը մեջ է բերված Պ. Ն. Ուչակովի «Լյուդիայի արձանագրական հուշարձանները» հոդվածում[1]:


> «Սա դամբարանն է,— ասված է արձանագրության մեջ,— Տիվդայան Ատտալի Տարվչեցի, մինչև ուր նա տարածվում է. աջ կողմում Սիվամի մասն է, իսկ ձախ կողմում՝ Մելինը: Եվ ով որ մարմարև իմ պատկերը կամ իմ կալվածը բռնությամբ հավիշտակե՝ նրա տունը և ամբողջ գույքը թող ոչնչացնեն Արտեմիսը»:

Հունարեն երրորդ արձանագրությունը, որ պահպանվել է 1911 թվականին Երևան բերված քարի վրա՝ գտնվում է այդ

[1] Տե՛ս «Вестник древней истории», 1940, № 3-4 (12-13), էջ 53:

քարի հարթ կողմի աջ մասում և բովանդակում է հինգ տողից բաղկացած տեքստ (տե՛ս նկար 3):

Այս արձանագրությունը, ինչպես մատնանշել է Բոլտունովան, ունի նվիրարերական բնույթ: Նա բոլորովին պարզ կարդացվում է և բովանդակում է նվիրված ընծաների թվարկումը՝ չորս ձիերի և կառքի, որ նվեր էր տվել Եվտիխարմիդեսը, և մի փոքր պատկերի, որ նվիրել էր Պելամիդեսը: Չորս ձիերը և կառքը, ինչպես միանգամայն ճիշտ ենթադրում է Բոլտունովան, կարող են առնչություն ունենալ Արևի աստծու պաշտամունքի հետ, որին պաշտում էին իրրև հունական Ապոլլոնի:



Նկար 3.

Քարի տեղադրության մասին, որի վրա փորագրված էին վերև մեջ բերված արձանագրությունները՝ դեռևս ակադեմիկոս Յ. Ի. Սմիրնովը ենթադրություն էր արել, որ այդ քարը, ինչպես երևում է վերջին արձանագրությունից, որի մեջ թվարկված են աստվածության ընծայաբերված նվերները՝ գտնվել է, ըստ երևույթին, սրբավայրում[1]:

Այս ենթադրությունը, անշուշտ, ճիշտ է: Սակայն սրբավայրի էության մասին, որ Բոլտունովան և, ըստ երևույթին, նաև Սմիրնովը, համարում են «կենտրոնավայր հին հայկական սրբու-

[1] Տե՛ս **А. И. Болтунова,** Греческие надписи Армавира, էջ 53:

թյուններին»՝ նրանց ենթադրությունը, ինչպես կտեսնենք, վիճելի է: Այս սրբավայրը, ինչպես դժվար չէ հետևցնել արձանագրությունների բովանդակությունից, նաև նույն այս տաճարի մասին հին հայկական աղբյուրների վկայություններից՝ հունական տաճար էր Ապոլլոնի և Արտեմիսի:

Պետք է ամենից առաջ, ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ վերև քննության առնված երրորդ արձանագրության մեջ հիշատակվում են Ապոլլոնին նվեր տվողները՝ Եվտիխարմիդեսը և Պևամիդեսը, որոնք, անշուշտ, ոչ թե բնիկ տեղացիներ էին, այլ հելլենական գաղթականներ: Կարելի է, ամենայն հավանականությամբ, նաև անկասկածելի համարել, որ նույնպես և գույքի ու կալվածների բաժանման և սահմանատման մասին երկու մյուս արձանագրությունները, որոնցից առաջինում հիշատակված են Հեսիոդոսը և նրա եղբայր Պերսեսը՝ պարունակում են դիմումներ, իհարկե, ոչ թե տեղական, այլ հելլենական բնակչության, որն այն ժամանակ ապրում էր, ըստ երևույթին, Արմավիրի շրջանում:

Վերև քննված հունական արձանագրությունները, որ 1911 թվականին գտնված էին Արմավիրում, ինչպես տեսնում ենք ունեն կուլտուրական-պատմական շատ մեծ նշանակություն: Նրանք հարստացնում են մեր գիտելիքները Հայաստանի III–II դարերի (Ք. ա.) պատմության մասին նոր հետաքրքրական տվյալներով: Դրանք ցույց են տալիս, որ Սելևկյան ժամանակաշրջանում հելլենիզմի ազդեցությունը զգալի է եղել ոչ միայն Մոփքում, ինչպես այդ նշված էր «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» իմ աշխատության մեջ[1], այլև Մեծ Հայաստանում, որն այն ժամանակ գտնվում էր Օրոնտիդների, այսինքն՝ Երվանդյանների իշխանության տակ:

Վերոհիշյալ արձանագրությունների մեր լուսաբանության չնորհիվ մենք հանդում ենք շատ հետաքրքրական եղրակացության, որ Արմավիրում, Երվանդյանների նստավայրում, գոյություն է ունեցել հունական տաճար, որի քուրմերը եղել են, ըստ երևույթին, առավելապես հույներ: Կարելի է, բացի այդ, նույնիսկ ենթադրել, որ Արմավիրի շրջանում ապրել են, հավանորեն, նաև հելլենական գաղթականներ, որոնք այնտեղ ունեցել են հողամասեր:

---

[1] Տե՛ս Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930, էջ 53:

Անհրաժեշտ է նշել, որ իմ կարծիքը վերոհիշյալ արձանագրությունների թվականների մասին, ինչպես և երկու առաջին արձանագրությունների բովանդակության իմ բացատրությունը, խիստ տարբեր են Յ. Ի. Սմիրնովի և Ա. Ի. Բոլտունովայի նպատակացություններից: Դրանք ենթադրում են, որ երկու ոտանավոր արձանագրությունների հեղինակը կարող էր լինել Տիգրան Մեծի որդին, Հայոց թագավոր Արտավազդ II-ը (56–34) որը, ինչպես վկայում է Պլուտարքոսը, գրած է եղել հունարեն լեզվով զանազան երկեր[1]:

Այս ենթադրությունը, իմ կարծիքով, բացահայտորեն սխալ է: Ընդօրինակել քարի վրա, բոլորովին անմիտ և աննպատակ կերպով, Հայոց Արտավազդ II թագավորի ոտանավորներից և ողբերգություններից մի քանի տող հատվածներ, իհարկե, չէր կարող ունենալ բանական որևէ իմաստ:

Դժվար է նաև համաձայնել Սմիրնովի և Բոլտունովայի կարծիքի հետ այդ արձանագրությունների թվականի մասին, որ նրանք ենթադրում են Արտավազդ II թագավորի ժամանակ, այսինքն՝ առաջին դարի երկրորդ կեսում Ք. թվականությունից առաջ: Իրապես, ինչպես կտեսանենք, թե այդ և թե՛ 1927 թվականին գտնված արձանագրությունների ժամանակը պետք է ենթադրել միևնույն դարաշրջանում, այն է՝ երրորդ դարի վերջերում կամ երկրորդ դարի սկզբներում Ք. թվականությունից առաջ, երբ Արմավիրը Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոնն էր:

***

Խիստ հետաքրքրական է, որ՝ Ապոլլոնի և Արտեմիսի տաճարի գոյությունն Արմավիրում, որ բավարար ստուգությամբ վկայում են մեր քննած հունական արձանագրությունները՝ լիովին հաստատվում է նաև նույն տաճարի մասին Մովսես Խորենացու վկայություններով: Իմ նոր աշխատություններում ես արդեն առիթ եմ ունեցել բազմիցս նշելու բացառիկ կարևորությունը Խորենացու պատմական երկի առաջին մասերի, որոնց հորինման համար Պատմահայրը օգտվել էր, բացի գրավոր աղբյուրներից, նաև անգիր բանահյուսությունից, գլխավորապես, ժողովրդական հին վեպից:

[1] Plut., Crassus, XXXIII.

Խորենացու համապատասխան վկայությունները, որ կարոտ են հատուկ քննության՝ մեջ եմ բերում ամբողջության համար:

1. ***Մովսես Խորենացի,*** *Ա, գլ. 20, էջ 63–64 (Տփղիս, 1913)՝*

«Արայան Արան մեռնում է պատերազմում Շամիրամի հետ, թողնելով արու զավակ ամենահզոր և գործով ու խոսքով մեծահանճար՝ Անուշավան Սոսանվերին, որն այդպես էր կոչվում, որովհետև նվիրված էր պաշտամունքի համաձայն Արամանեակի սոսի ծառերին, որ Արմավիրում էին: Սրանց տերևների խշխշոցից, օդի հանդարտ կամ սաստիկ չարժվելու պատճառով, և կամ չարժման ուղղությունից՝ հայկազանց մեր աշխարհում սովոր էին գուշակություններ անել և անում էին այդ շատ ժամանակ:

Այս Անուշավանը, բավական ժամանակ արհամարհանք կրելով Ջամնսից՝ տառապում էր արքունի դռանը. հետո նա բարեկամների օգնությամբ ստացավ մեր աշխարհի մի մասը՝ խնամելու համար որպես հարկատու, իսկ ապա նաև ամբողջը»:

[«Արայեանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմին, թողլով արու զավակ ամենահարուստ և չատահանճար յիր և ի բան՝ զԱնուշաւանն Սօսանուէր: Քանզի ձօնեալ էր ըստ սպաշտամանց ի սօսիսն Արամանեկայ որ յԱրմաւիր. զորոց զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն, և թէ ուստի չարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, և այս ցրազում ժամանակս:

Այս Անուշաւան բաւական ժամանակս արհամարհութիւն կրեալ ի Ջամնսեայ՝ տուայտի ի դրանն արքունի. իսկ օգնեալ ի բարեկամաց՝ չահի զմասն ինչ աշխարհիս, հարկահանութեամբ խնամել, զկնի ապա և զրոլորս»]:

2. ***Նույնը,*** *Բ, գլ. 8, էջ 117 (Տփղիս, 1913)՝*

«Այս բոլորից հետո Արմավիրում նա [Վաղարշակը] մնհյան է չինում և արձաններ է կանգնեցնում Արեգակին, Լուսնին և իր նախնիքներին»:

[«Իսկ յետ այսր ամենայնի մնհեան չինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեացն»]:

3. ***Նույնը,*** *Բ, գլ. 12, էջ 122՝*

«Այնուհետև նա [Արտաշեսը] գնում է դեպի արևմուտք և ձերբակալում է Լյուդիացիների Կրեսոս թագավորին: Եվ գտնելով Ասիայում Արտեմիսի, Հերակլեսի և Ապոլլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները՝ բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում: Քրմապետները, որ վահունիների

տոհմից էին՝ առան Ապոլլոնի և Արտեմիսի արձանները և կանգնեցրին Արմավիրում, իսկ Հերակլեսի արձանը, որ Սկյուդեսի և Կրետացի Դիպինոսի գործն էր, համարելով իրենց նախնու՝ Վահագնի պատկերը՝ Արտաշեսի մահից հետո կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աչտիշատ գյուղում»:

[«Եւ խաղայ այնուհետեւ յարեւմուտ, և ձերբակալ առնէ զԿրիւսոս Թագաւոր Լիւդացւոց:

Եւ գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդնայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տայ բերել յաչխարհս մեր, զի կանգնեցցեն յԱրմաւիր: Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգէն Վահունեաց՝ զԱպողոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայն զառնապատկերն, որ արարեալ էր ի Սկիւդեայ և ի Դիպինոսէ Կրետացւոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական գիւղն յԱչտիշատ, յետ մահուանն Արտաշիսի»]:

*4. **Նույնը**, Բ, գլ. 40, էջ 166՝*

«Բայց Երվանդը, չիննելով իր քաղաքը՝ Արմավիրից փոխադրեց այնտեղ ամեն ինչ բացի կուռքերից, որոնց նա իր քաղաքը տեղափոխելը օգտակար չհամարեց, որ մի գուցե քաղաքը զգուշությամբ չպահվի ժողովրդի այնտեղ գալու և դոհ բերելու ժամանակ: Ուստի նրանից հետու, մոտ քառասուն ասպարեզ դնալի հյուսիս՝ Ախուրյան գետի վրա չինեց նման իր քաղաքին մի փոքր քաղաք և կոչեց Բագարան, այսինքն՝ Թև բազիների կառուցումները նրա մեջ են չինված, և փոխադրեց այնտեղ Արմավիրում եղած բոլոր կուռքերը: Նա չինեց նաև մեհյաններ և իր եղբոր՝ Երվազին նշանակեց քրմապետ»:

[«Բայց Երուանդայ չինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կոոցն, զոր ոչ օգուտ իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի՛ ի զալ և ի զոհել անդ աշխարհի՝ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հնոագոյն ի նմանէ իւրոյ քառասուն ասպարիսաւ զՀիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին չինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան, այս ինքն Թէ ի նմա զրագնաց յօրինեալ է զկազմութիւն. և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս չինեալ՝ զեղբայր իւր զերուազ քրմապետ կացուցանէր»]:

*5. **Նույնը**, Բ, գլ. 49, էջ 176–177՝*

«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ խառնվում են Երասխը

և Մեծամորը, և, հավանելով բլրին՝ չինում է քաղաք և իր անունով կոչում է Արտաչատ: Նրան օգնում է Երասխն անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ կերպով չինում է քաղաքը և նրա մեջ մնհյան է կառուցում և Բագարանից փոխադրում է այնտեղ Արտեմիսի արձանը և բոլոր հայրենի կուռքերը: Բայց Ապոլլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, ճանապարհին մոտ»:

(«Երթեալ Արտաչիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն՝ չինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաչատ: Զնոնտու լինի նմա և Երասխ վայտիւք մայրևաց. վասն որոյ անաչխատ և երազ չինեալ՝ կանգնէ ի նմա մնհհան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիզեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն»):

Մեջբերված Խորենացու այս վկայություններում, ինչպես տեսնում ենք, հիշատակված են ո՛չ միայն Արմավիրը, իբրև Երվանդյանների հին նստավայրը, այլ նաև այնտեղ գտնվող Արևի ու Լուսնի՝ Ապոլլոնի և Արտեմիսի տաճարը: Խորենացու այս վկայությունները ճիշտ ու ճիշտ համապատասխանում են հունական վերոհիշյալ արձանագրությունների մեջ պարունակվող տվյալներին: Ուստի և բոլորովին պարզ է, որ դրանց վավերականությունը չի կարող կասկածի ենթարկվել:

«Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» իմ աշխատության մեջ[1] մանրամասն ցույց էր տրված, որ՝ Խորենացու գլխավոր պակասությունը նրա պատմական սխալ հետանկարն է, և անունների ու դեպքերի չփոթումները, որ՝ նրա երկում անհաջող ու արհեստական կերպով իրար են հյուսված, համաձայն՝ ժամանակագրական նրա սխալ սխեմայի: Ուստի միանգամայն հասկանալի է, որ նա, չիմանալով որ Հայաստանում գոյություն է ունեցել Երվանդյանների – Օրոնտիդների թագավորական դինաստիան՝ Արևի և Լուսնի, այսինքն՝ Ապոլլոնի և Արտեմիսի տաճարի կառուցումը սխալմամբ վերագրում է Արշակունի Վաղարշակ I-ին, հայ Արշակունիների նախահորը (տե՛ս վերև վկայություն 2):

Իսկ, իրապես, այդ տաճարի կառուցումը, ինչպես մենք այժմ տեսնում ենք վերև քննած հունարեն արձանագրությունների բո-

[1] Я. А. Манандян, О торговле и городах Армении, էջ 96-97:

վանդակությունից՝ պետք է վերագրել ո՛չ թե Արշակունիների դարաշրջանին, այլ Երվանդյանների, այսինքն՝ III–II դդ. Ք. թվականությունից առաջ: Խալաթյանցի ենթադրությունը[1], որ Խորենացու վկայությունները տաճարի և հունական աստվածների արձանների մասին Արմավիրում պատմահոր անձնական հերյուրանքներն են, ինչպես տեսնում ենք, չի կարող համարվել ճիշտ:

Հաղիվ թե կարելի լինի վիճելի համարել, հակառակ Խալաթյանցի կարծիքին[2], նույնպես և Խորենացու հաղորդած տեղեկությունը սոսինների մասին Արմավիրում և գուշակությունների մասին ըստ նրանց տերևների խշխշոցի և ըստ նրանց երերումների (տե՛ս վերև վկայություն 1): Այդ գուշակությունները, ինչպես հաղորդում է XI դարի հայ հեղինակ Գրիգոր Մագիստրոսը[3], տեղի էին ունենում Ապոլլոնի տաճարում: Եվ, իսկապես, Ապոլլոնին հույները վերագրում էին մարգարեական չնորհք, և, ինչպես հայտնի է, քրմերը գուշակություններ էին անում նրա տաճարներում: Խորենացու վերևում մեջ բերված հաղորդագրության կապակցությամբ՝ առանձին ուշադրության է արժանի, հարկավ, սրբազան կաղնու պատվումը Դոդոնայում, ուր քրմերն ըստ նրա տերևների խշխշոցի գուշակում էին աստվածների կամքը:

Վերոհիշյալ երրորդ մեջբերման մեջ (տե՛ս վերև վկայություն 3) կարելի է միանգամայն հավանական համարել նաև Խորենացու հաղորդագրությունն այն մասին, որ «Արտեմիսի և Ապոլլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները» բերված էին Արմավիր՝ Փոքր Ասիայից: Սակայն նրա սխալ մատնանշումն այն մասին, որ իբր թե այդ տեղի էր ունեցել Կրեսոսի և Արտաշես Աչխարհակալի ժամանակ, անշուշտ, անձնական ենթադրությունն է:

Վերև մեջբերված Խորենացու չորրորդ վկայության մեջ որոշակի ասված է, որ Երվանդն Արմավիրից փոխադրել էր իր նորակառույց Երվանդաշատ մայրաքաղաքը ամեն ինչ բացի Ապոլլոնի և Արտեմիսի արձաններից, որոնց համար նա Ավստրյանի ափին կառուցել էր Բագարան փոքր քաղաքը: Մենք ներքև

---

[1] Տե՛ս Гр. Халатьянц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896, էջ 280–299:

[2] Նույնը, էջ 164–197:

[3] Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», հրատ. Կ. Կոստանյանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 219:

կտեսնենք սակայն, որ 1927 թվականին Արմավիրում գտնված երկրորդ քարի արձանագրությունները ո՛չ միայն չեն հաստատում, այլ պարզապես ժխտում են Խորենացու այդ վկայությունները: Հունարեն այս արձանագրությունների բովանդակությունից երևում է, որ, հակառակ Խորենացու ցուցման, Երվանդյանների մայրաքաղաքն Արմավիրից Երվանդաշատ փոխադրելուց հետո էլ՝ իրրև Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոն մնում էր գարձյալ Արմավիրը, և որ հենց այնտեղ, և ո՛չ թե Բագարանում, թաղված էր Երվանդ Վերջինը, Արտաշես I-ի նախորդը:

Խորենացու Բագարանի մասին այս վկայության առթիվ, ըստ երևույթին, ուղիղ է Գր. Խալաթյանցի կարծիքը, որը Խորենացու Պատմության մեջ Արշարունիքում գտնվող Բագարանի հիշատակությունը համարում է անախրոնիզմ[1]: Այս խնդրի վրա ես մանրամասն կանգ եմ առնելու իմ մի ուրիշ ուսումնասիրության մեջ, որ նվիրված է լինելու Խորենացու Հայոց պատմության քննությանը:

Պետք է պարզաբանել նաև Խորենացու վերև մեջբերված վերջին վկայությունը (վկայություն 5): Այդ վկայության մեջ Խորենացին հաղորդում է, որ Արտաշես I-ը, որը հիմնել էր նոր մայրաքաղաք Արտաշատը՝ նրա մեջ կառուցել էր տաճար և փոխադրել էր այնտեղ Արտեմիսի արձանը: Իսկ Ապոլլոնի արձանը նա կանգնեցրել էր քաղաքից դուրս՝ մեծ ճանապարհի մոտ:

Ինձ թվում է, որ Խորենացու և այս վկայությունն անուղղակի կերպով հաստատում են Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունները: Հաստատվում է այդ նույնպես և Ագաթանգեղոսի վկայությամբ[2], որը մատնանշում է, որ չորրորդ դարի սկզբին (Ք. Թվ. հ.), Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ժամանակ, Արտաշատում էր գտնվում Անահիտ աստվածուհու, այսինքն՝ Արտեմիսի արձանը, իսկ Տիր աստծու, այսինքն՝ հունական Ապոլլոնի արձանը գտնվում էր Արտաշատից ոչ հեռու, մեծ ճանապարհի մոտ:

---

[1] Տե՛ս **Гр. Халатьянц**, Армянский эпос, էջ 219-221 և «Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского», Москва, 1903, էջ 377:

[2] Տե՛ս «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 396 (պլ. 108, § 778):

Այսպիսով, ինչպես դժվար չէ համոզվել, Մովսես Խորենացու վկայությունների մանրամասն քննությամբ ո՛չ միայն հաստատվում է վերև մեջբերված հունարեն արձանագրությունների բովանդակությունը, այլ նաև զգալի չափով լրացվում է: Միաժամանակ հայտնաբերվում են և պարզաբանվում են ամենայն հավանականությամբ նոր փաստեր, որ կարելի է մի քանի հետևյալ դրույթների:

1. Արմավիրում, որ Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոնն էր, գոյություն է ունեցել հունական տաճար Արտեմիսի և Ապոլլոնի արձաններով, որոնք բերված էին այնտեղ, ըստ երևույթին, Փոքր Ասիայից:

2. Այս տաճարի սպասավորներն ու սպասավորուհիները, հավանորեն, հելլեններ էին կամ հելլենացված տեղացիներ. և կարելի է նաև ենթադրել, որ հունարեն արձանագրությունների հեղինակներ կարող էին լինել տաճարի քուրմերը:

3. Արմավիրի շրջանում, բացի այդ քրմերից և տաճարասպասավորներից («հիերոդուլներից»), հավանորեն, ապրել են նաև հելլենական այլ զաղթականներ:

4. Արմավիրում, ինչպես և հունական Դոդոնայում, մենք գտնում ենք ծառերի պաշտամունքի վերապրուկներ: Այստեղ եղել է սոսիների սրբազան մի ծառաստան, որի տերևների խշշոցի համեմատ արվում էին գուշակություններ:

5. Երվանդյանների թագավորության անկումից հետո Արտաշես I-ը, որը հիմնել էր նոր մայրաքաղաք Արտաշատը՝ Արմավիրից տեղափոխել էր այնտեղ Արտեմիսի արձանը, որն Ագաթանգեղոսի մոտ անվանված է Անահիտ: Իսկ Ապոլլոնի արձանը, որին Ագաթանգեղոսն անվանում է Տիր՝ Արտաշեսը Արմավիրից փոխադրել էր և կանգնեցրել էր ո՛չ թե Արտաշատում, այլ քաղաքից դուրս՝ մեծ ճանապարհի մոտ:

6. 1911 թվականին Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունների ծագման ժամանակը պետք է ենթադրել երրորդ դարի վերջում կամ երկրորդ դարի սկզբներում Ք. թվականությունից առաջ, այսինքն՝ այն դարաշրջանում, երբ Արմավիրը եղել է Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոնը:


***

Հին Հայաստանի քաղաքական պատմության համար բացառիկ նշանակություն ունի Արմավիրում 1927 թվականին

դտնված երկրորդ քարը հունարեն չորս արձանագրությունները:

Այս քարի երեսի առաջին արձանագրությունը, որը տեղավորված է քարի վերևում արհեստականորեն պատրաստված խոռոչի մեջ՝ բաղկացած է 11 տողից (տե՛ս նկար 4): Արձանագրության առաջին իննը տողը կարդացվում է բավական պարզ: Նրա բովանդակությունն է Միհրաս թագավորի դիմումը երվանդ թագավորին, որին Միհրասը մաղթում է առողջություն և արևչատություն:

Բոլտունովան այս արձանագրության իմաստը թեև ընդհանրապես ճիշտ է հասկացել, սակայն նրա էական կետերը մեկնել է անհաջող: Նա սխալմամբ կարծում է, որ դիմումն ուղղված է Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես I թագավորի կողմից ինչ-որ երվանդի:



Նկար 4.

Պետք է ասել, որ Արտաշես անունն արձանագրության մեջ բնավ չի հիշված: Այս անունը կամայականորեն վերականգնել է ինքը Բոլտունովան, կարծելով, որ արձանագրության առաջին տողի վերջում պահպանված երկու տառը՝ αρ պետք է լրացնել և կարդալ Ἀρ[τάξιας]: Բոլտունովան առանց որևէ հիմքի նե-

Թագրում է նաև, որ Արտաշես Ա-ն կրում էր բազադրյալ բարդ անուն Ἀρτάξιας Μαδοείρων Μίθρας.

Ի հակադրություն այս մեկնության նույն արձանագրության ևս տալիս եմ բոլորովին այլ լուսարանում:

Արձանագրության առաջին չորս տողերը, ինչպես ևս կարծում եմ, վերականգնվում են պարզ ու որոշակի հետևյալ բովանդակությամբ՝ ὁ βασιλεὺς Ἀρμαϝοείρων Μίθρας Ἑβρόντη βασιλεῖ χαίρειν, այսինքն՝ «Արմավիրցիների թագավոր Միթրասը բարև է ուղարկում Երվանդ թագավորին»:

Ἀρμαϝοείρων բառի մեջ հինգերորդ տառը դժվարընթեռնելի է: Բոլոտնովան այդ տառը կարդում է Δ: Սակայն ուշադիր կերպով ծանոթանալով արձանագրության լուսանկարի հետ՝ դժվար չէ համոզվել, որ այդ տառը Δ չէ, այլ Ϝ: Ἀρμαϝοείρων հոգնակի սեռական հոլովը պետք է, ըստ երևույթին, թարգմանել ո՛չ թե «Արմավիրի», այլ «Արմավիրցիների»: Հին Արմավիրը հիշատակված է նաև Պտղոմեոսի Աշխարհագրության մեջ, որն այդ քաղաքն անվանում է Ἀρμαουίρα և կամ Ἀρμαουρία (տե՛ս 1901 թվականի հրատ., էջ 941):

Արձանագրության մյուս հինգ տողերում Միթրաս թագավորը ցանկություն է հայտնում, որ առողջ լինի ինչպես ինքը՝ Երվանդը, նույնպես և նրա սերունդը, և որ թագավորն իր թագավորությունը բոլորն բարևհաջող կերպով:

Մեջբերված արձանագրությունը, ինչպես տեսնում ենք, ոչ մի կապ չունի Արտաշես I-ի հետ: Նա վերաբերում է, ինչպես դժվար չէ որոշել, նախորդ Երվանդյան դինաստիայի ժամանակին, երբ Հայաստանում թագավորում էր Արտաշես Ա-ին նախորդող Երվանդ Վերջինը, որն իր գահանիստը փոխադրել էր Արմավիրից Երվանդաշատ: Նույն այդ ժամանակ Արմավիրում իշխում էր, ինչպես երևում է արձանագրության և Խորենացու Պատմության վկայություններից՝ զերազույն քուրմ Միթրասը, ըստ երևույթին, Երվանդ Վերջինի եղբայրը, որը Խորենացու մոտ անվանված է Երվադ:

Հայաստանում տեղի ունեցած զևպքերը Երվանդյանների թագավորության այս շրջանում, ինչպես հայտնի է, մանրամասն նկարագրված են Խորենացու մոտ: Սրա պատմական երկում, ինչպես մենք տեսանք, պահպանվել են թանկարժեք տեղեկություններ, որ նա քաղել էր հնագույն աղբյուրներից, որոնք մեր ձեռքը չեն հասել:

Խորենացու Պատմության այդ տեղեկությունները, որոնք լույս են սփռում վերևում բերված հունարեն արձանագրության վրա՝ ես անհրաժեշտ եմ համարում, նկատի առնելով նրանց կարևորությունը՝ մեջ բերել ամբողջությամբ առանց կրճատումների:

*1. **Մովսես Խորենացի**, Բ, գլ. 39, էջ 165 (Տփղիս, 1913)՝*

«Սրա [Երվանդի] ժամանակ արքունիքը Արմավիր կոչված բլրից տեղափոխվում է, որովհետև Երասխ գետը հեռացել էր և, ձմեռը երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում՝ վտակը բոլորովին սառչում էր և չէր կարելի բավական ջուր ունենալ թագավորանիստ տեղի համար: Նեղվելով սրանից, նաև ավելի ամուր տեղ փնտրելով, Երվանդը տեղափոխում է արքունիքը դեպի արևմուտք, ապառաժոտ մի բլրի վրա, որի չորքը պտտում էր Երասխը, իսկ դեմից հոսում էր Ախուրյան գետը: Նա պարսպապատում է բլուրը, իսկ պարսպից ներս չատ տեղերում կտրում է քարերը մինչև բլրի հատակը գետին հավասար, որպեսզի գետի ջրերը հոսեն փորված տեղերը և խմելու ջուր հայթայթեն: Միջնարերդն ամրացնում է բարձր պարիսպներով և պարիսպների մեջ պղնձե դռներ է չինում և երկաթե սանդուխքներ ներքևից վեր մինչև դուռը»:

[«Յաւուրս սորա [Երուանդայ] փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և ի յերկարել ձմեռայնոյն, և ի դառնահոտ փչմանէ հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն՝ ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղւոյ ելեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ: Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բաղում տեղիս կտրեալ զքարինան մինչև ի յատակս բլրոյն հավասար գետոյն, մինչև զիմել ջուրց գետոյն ի փորուածն, յրմպկլեաց պատրաստութիւն: Զմիջնարերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և զրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռնն»]:

*2. **Նույնը**, Բ, գլ. 40, էջ 106՝*

«Բայց Երվանդը, չինելով իր քաղաքը՝ Արմավիրից փոխադրեց այնտեղ ամեն ինչ բացի կուռքերից, որոնց նա իր քաղաքը տեղափոխելը օգտակար չհամարեց, որ մի գուցե քաղաքը պղուչությամբ չպահվի ժողովրդի այնտեղ գալու և դոհ բերելու ժա-

մանակ: Ուստի նրանից հետո, մոտ քառասուն ասպարեզ դնալի հյուսիս՝ Ախուրյան գետի վրա չինեց նման իր քաղաքին մի փոքր քաղաք և կոչեց Բագարան, այսինքն՝ Թե բազինների կառուցումները նրա մեջ են չինված, և փոխադրեց այնտեղ Արմավիրում եղած բոլոր կուռքերը: Նա չինեց նաև մեհյաններ և իր եղբոր՝ Երվազին նշանակեց քրմապետ»[1]:

Խորենացու այս վկայությունների մեջ անհավաստի է, ինչպես վերև ասվեց, նրա հաղորդագրությունը կուռքերի փոխադրման մասին Արմավիրից Բագարան, որը, ըստ երևույթին, Բագրատունիները վերակառուցել էին VIII դարի վերջում կամ IX դարի սկզբներում, և նրանց տոհմական հանգստարանն էր:

Մեր քննած արձանագրությունները վկայում են, ընդհակառակը, որ Երվանդ Վերջինի ձեռով զահանիստ Արմավիրից սրա նոր հիմնած Երվանդաշատ քաղաքը փոխադրելուց հետո, Արմավիրում իշխում էր Միհրասը, որն արձանագրության մեջ իրեն անվանում է «Արմավիրցիների թագավոր»: Այս Միհրասը, ըստ Խորենացու Երվազը, ինչպես դժվար չէ հետևեցնել Մովսես Խորենացու անմիջական ցուցումներից և Ստրաբոնի հաղորդած անուղղակի տեղեկություններից իր ժամանակաշրջանի քուրմերի ու քրմության մասին՝ Երվանդի եղբայրն էր, և վերջինիս կողմից նշանակված էր քրմապետ Արմավիրում: Նկարագրելով Կապադովկիայի Կոմանա քաղաքը և Մա աստվածուհու տաճարը՝ Ստրաբոնը որոշակի վկայում է[2], որ թագավորից հետո՝ բարձրագույն քուրմն ըստ իր պատվի երկրորդ անձն էր Կապադովկիայում և որ բարձրագույն քուրմերն ու թագավորները միևնույն տոհմից էին լինում: Ստրաբոնի նույն այդ հաղորդագրության մեջ ասված է նաև, որ հանդիսավոր թափորների ժամանակ բարձրագույն քուրմն իր գլխին դնում էր արքայական թագ: Նա, ինչպես երևում է, իրեն համարում էր ո՛չ միայն քուրմ, այլև թագավոր:

Հետաքրքրական է, որ նույնպիսի բարձր դիրք ունեցել են բարձրագույն քրմերը, ինչպես երևում է մեջբերված հունարեն արձանագրության բովանդակությունից և Խորենացու վկայու-

---

[1] Գրաբար տեքստն ավելորդ եմ համարում բերել, որովհետև Խորենացու այս վկայությունը գրաբար տեքստի հետ միասին մեջ է բերված նաև վերև:

[2] Տե՛ս Strabo, XII, 2, 3 (535).

թյուններից՝ նմանապես և Հին Հայաստանում թե՛ Երվանդյանների և թե՛ Արտաշեսյանների ժամանակ: Երկրորդ քարի հունարեն վերոհիշյալ արձանագրությունը, ինչպես տեսնում ենք, որոշակի վկայում է, որ Երվանդյան Հայաստանում թագավոր կամ բասիլևս է համարվել, բացի Երվանդից, նաև նրա եղբայրը, բարձրագույն քուրմ Միհրասը, որն իշխում էր Արմավիրում:


Կուլտուրական-պատմական նշանակություն նույն այս արձանագրության, անկասկած, շատ մեծ է: Նա վավերական կերպով հաստատում է հունարեն լեզվի գործածությունը Երվանդյան Հայաստանի հասարակական բարձր խավերում: Այդ պարզ երևում է նրանից, որ իր եղբոր՝ Երվանդին արևշատություն մաղթող Միհրասի դիմումը գրված է հունարեն լեզվով:

Ինչպես տեսնում ենք, Հելլենիզմի թափանցումը Մեծ Հայաստանի ներքին շրջանները տեղի էր ունեցել դեռևս Երվանդյանների ժամանակ: Ազդակցություն հաստատելով ամուսնությունների միջոցով, հավանորեն, Սելևկյանների հետ՝ Երվանդյաններն արդեն երրորդ դարի վերջում Ք. թվականությունից առաջ մեծ չափով ենթարկվել էին հելլենիզմի ազդեցության: Թե որքան մեծ է եղել այստեղ այդ ազդեցությունը՝ այդ, ի միջի այլոց, երևում է նրանից, որ՝ բարձրագույն քուրմն Արմավիրի Ապոլլոնի և Արտեմիսի տաճարի, որի սպասավորները եղել են հույն քուրմերը և հիերոդուլները, Երվանդ թագավորի եղբայր Միհրասն էր:

Մեր վերև քննած արձանագրությունը պարզում է, բացի այդ, որ հունական սրբարանների կառուցումը Հին Հայաստանում, և հունական արձանների փոխադրումն այստեղ, ինչպես և տեղական աստվածների միաձուլումը հունականների հետ, պետք է ենթադրել ո՛չ թե Տիգրան Մեծի թագավորության շրջանում (95-56/55 Ք. ա.), ինչպես այդ սովորաբար ենթադրվել է գիտական նախորդ երկերում, այլ ավելի վաղ՝ Երվանդյանների տիրապետության ժամանակ Մեծ Հայաստանում:

***

Երկրորդ հունարեն արձանագրությունը, որը գտնվում է առաջինից դեպի աջ՝ բաղկացած է 13 տողից (տե՛ս նկար 5): Նրա մեջ իրար են հաջորդում աստրա-մակեդոնական օրացույցի ամիսների անունները՝ Dios, Apellaios, Audynaios, Peritios, Dystros, Xandikos, Artemisios, Daisios, Panemos, Loos, Gorpiaios, Hyperberetaios.



Նկար 5.

Տասներկրորդ տողում Φαρνάχη բառից հետո նորից առողջություն է մաղթված մի ինչ-որ անձնավորության:

Բոլտունովայի կարծիքով, այդ տողում հիշատակված Փառնակի տակ պետք է հասկանալ պոնտական թագավոր Փառնակին, որն իշխում էր 190 թվականից մինչև 169 թվականը Ք. թվականությունից առաջ: Բոլտունովան ենթադրում է, որ արձանագրության մեջ ցանկություն է հայտնված, որ Փառնակն առողջ լինի տարվա 12 ամիսների ընթացքում, այսինքն՝ ամբողջ տարին:

Դժվար չէ սակայն տեսնել, որ սխալ է և անընդունելի Բոլտունովայի նաև այս ենթադրությունը:

Մեջբերված արձանագրության բովանդակության լուսաբանման ժամանակ պետք է նկատի առնել, որ ասորա-մակեդոնական օրացույցը բաղկացած էր 12 ամսից, յուրաքանչյուրը 30-ական օրից, և, բացի այդ, նաև տասներկրորդ ամսից, որն ուներ հինգ կամ վեց «հավելյալ օրեր» (epagomenai)[1]: Միանգամայն բնական է ըստ այսմ, որ ամբողջ տարվա համար արևչատություն

[1] Տե՛ս **W. Kubitschek**, Grundriss der antiken Zeitrechnung, München, 1927, էջ 148 և 151:

մաղթելիս՝ անհրաժեշտ էր լսել ասորա-մակեդոնական օրացույցի թվով տարվա ոչ թե 12, այլ բոլոր 13 ամիսները: Կարելի է, հետևաբար, վստահորեն ենթադրել, որ վերոհիշյալ Φαρνάκη բառի տակ պետք է հասկանալ ոչ թե պոնտական Փառնակ թագավորի, այլ տասներեքերորդ ամսի անունը, այսինքն՝ տարվա այն «հավելյալ օրերի» անունը, որ կոչվում էին epagomenai: Ինչպես հայտնի է, Փառնակ անունը եղել է լուսնի մակդիրը[1], և շատ հետաքրքրական է, որ վերև բերված արձանագրության մեջ այդ անունն ունի հատուկ նոր իմաստ, և գործ է ածված որպես անուն ասորա-մակեդոնական օրացույցի տասներեքերորդ ամսվա:

Ուշադիր կերպով ուսումնասիրելով արձանագրությունը՝ դժվար չէ, բացի այդ, կռահել, որ այս արձանագրությունը, որը գտնվում է առաջին արձանագրության կողքին՝ վերջինիս շարունակությունն է, և նրա մեջ բարձրագույն թուրմ Միթրասը նորից բարեմաղթում է, որ Երվանդ Թագավորը ողջ-առողջ լինի տարվա բոլոր 13 ամիսների ընթացքում:

Ա. Ի. Բոլտունովայի ենթադրությունը, որ արձանագրության մեջ Փառնակին առողջություն է բարեմաղթված 179 թվականի (Ք. ա.) խաղաղության պայմանագիրն Արտաշես I-ի հետ ստորագրելու առթիվ՝ անընդունելի է, նախ և առաջ, այն պատճառով, որ Արմավիրի հունարեն արձանագրությունները, որոնք գտնված են Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոնում, Փառնակի և Արտաշես I-ի ժամանակաշրջանից չեն, այլ վերագրվելու են նախընթաց Երվանդյան շրջանին:

Երրորդ արձանագրությունը գտնվում է մեջբերված երկրորդ արձանագրության տակ, և նրանից կարելի է նչմարել ընդամենը չորս տող (տե՛ս նկար 6):


Արձանագրությունը վատ է պահպանվել, և նրա իմաստը որոշ չէ: Նրա մեջ հիշատակված է մի ինչ-որ տեղից նկած Նումենիոս հեղինի անունը:

Չորրորդ արձանագրությունը Բոլտունովայի նախնական դնկուցման մեջբերված է միայն տառադարձությամբ: Նա գտնվում է երրորդ արձանագրության տակ արհեստականորեն պատրաստված խոռոչի մեջ: Տողերի մի մասն ալ կողմից ջարդված են, և մի քանի տողեր անձրևի ջրից լվացված ու մաշված և հազիվ-հազ են նկատվում: Ընդամենը պահպանվել է 11 տող[2]:

---

[1] Տե՛ս Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, էջ 241:

[2] Տե՛ս Ա. Ի. Բոլտունովայի հոդվածը՝ «Греческие надписи Армавира», էջ 46:



Նկար 6.

Բերում եմ արձանագրության տեքստը, որ ևս ընթացքում վերականգնել է Ա. Ի. Բոլտունովան:

1 Τῆι Φιλαδέλφωι Νουμήνιος [εἶ]πε [φο]νεύει
τοῦτ' ἔπος, ἀμείβω δ' οὐδὲν ἔκων ἀκλεές.
Ἀλλά μιν ὁπλοφορο[ῦντα] λίπεν θ[υ]μός, κατάκειται
[δὴ] μαλ' αὠτησμῶι (?) τὸν δὲ . . καίνάπολι[ν]
5 χῶρον Ἀρμενί[ην] κατε[ἶχ]εν .....
ἀλλ' ἐγὼ οὐ .....
καὶ [κα]λὸν Ἀρμενίη[ν] χῶρον ἐπίκρατε.....
οὔλοιᾶς (?) δ' ἕνεκεν φυλόπιδος πολέμου.....
οἱ στρατιῶται ἐπέφνου .....
10 χαριζ .....
πενθεῖ δ' ἀμφι .....

Թեև այս արձանագրությունը թերի է և հետագայում անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով շարունակել աշխատանքը սկզբնագրի վրա՝ բայց և այնպես, արձանագրության ընդհանուր իմաստը հաջողվում է լուսաբանել ամենայն հավաստիությամբ:

Պետք է սակայն նշել, որ անհաջող է Բոլտունովայի մոտ նաև այս արձանագրության լուսաբանությունը: Համարելով արձանագրությունը 163–162 թվականներին (Ք. ա.) գրված՝ Բոլ-

տունովան կարծում է, որ խոսքը արձանագրության մեջ վերաբերում է Անտիոքոս IV Եպիփանեսի հաղթական հայկական արշավանքին ու նաև այն մասին է, որ Անտիոքոս IV-ին, որը նվաճել էր «գեղեցիկ Հայաստան երկիրը»՝ սպանել էին իր զինվորները: Բոլտունովայի ենթադրությամբ, արձանագրության մեջ Միգենայի նախկին կառավարիչ Նումենիոսը դիմում է Անտիոքոս IV-ի կնոջը, Լաոդիկեին, և կսկծալի լուր է հաղորդում նրա ամուսնու մահվան մասին:

Բոլտունովայի այս լուսաբանությունը բոլորովին անհամոզիչ է ու անհավանական, նախ և առաջ, այն պատճառով, որ Անտիոքոս IV-ի ողբերգական մահվան կսկծալի լուրը, որ հաղորդել էր Լաոդիկեին Նումենիոսը, իմաստ ուներ և նպատակահարմար էր գծագրել տալ քարի վրա ո՛չ թե Արմավիրում, այլ Սելևկյանների որևէ կենտրոնական նստավայրում: Հայտնի է, բացի այդ, որ Անտիոքոս IV Եպիփանեսը չէր սպանվել, այլ ծանր հիվանդացել էր ու մեռել էլամում: Միանգամայն պարզ է, ուրեմն, որ այն անձը, որը «զենքը ձեռքին կռվելով» սպանվել էր իր զինվորներից՝ չի կարող նույնացվել սելևկյան թագավոր Անտիոքոս IV-ի հետ:

Մենք բերված արձանագրությունը, որ խիստ հետաքրքիր ու կարևոր է Երվանդյան Հայաստանի պատմության համար, ինչպես դժվար չէ համոզվել, պարունակում է տխուր լուր մահվան մասին ո՛չ թե Անտիոքոս IV Եպիփանեսի, այլ Արտաշես I-ին նախորդող Երվանդ Վերջին թագավորի:

Երվանդի մասին այդ տխուր լուրը հաղորդում է Փիլադելփիային (τῇ Φιλαδέλφῳ), ըստ երևույթին, Երվանդի քույր-թագուհուն, Նումենիոսը: Նումենիոսի հաղորդագրության մեջ, չնայած որ Բոլտունովայի վերականգնած բնագրում մի քանի հատվածներ վիճելի են, հաջողվում է կարդալ, որ Երվանդի մասին տխուր լուրը «չէ պարունակում ոչ մի անփառունակ բան» (οὐδὲν ἔχων ἀκλεές), որ նրան «սպանել են զինվորները» (οἱ στρατιῶται ἔπεφνον) և որ նա «չունչը փչել է զենքը ձեռին» (ὁπλοφοροῦντα λίπεν θυμός), ըստ որում «նորագահանիստ Հայաստան երկրին տիրապետել են» թշնամիները:

Որ քննարկվող արձանագրության մեր նոր լուսաբանությունը չի կարող կասկածանքի ենթարկվել՝ այդ հաստատում են դարձյալ Մովսես Խորենացու Պատմության թանկարժեք վկայությունները, որոնք, ինչպես կտեսնենք, իրենք ևս իրենց բացատրությունն են ստանում հունարեն արձանագրության վկայությունների օգնությամբ:

***

Ինչպես վերև ասվեց, Մովսես Խորենացու ընդարձակ հաղորդագրություններում Երվանդի ու Արտաշեսի մասին (Բ, գլ. 37–62) պահպանվել են արժանահավատ տեղեկություններ III դարի վերջերի և II դարի սկզբների դեպքերի մասին Ք. առաջ, որ ինքը Պատմահայրը սխալմամբ ենթադրել է I դարի դեպքեր Ք. հետո: Խորենացու հիշատակած Երվանդը, ինչպես երևում է Ստրաբոնի վկայություններից[1], Երվանդյան տոհմի վերջին թագավորն էր, և նրան գահընկեց էր արել Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես I-ը: Երվանդի գահընկեցությունը տեղի էր ունեցել, ինչպես մանրամասն հաղորդում է Խորենացին[2], ծանր պատերազմից հետո, որի վերջնական հետևանքը եղավ Երվանդ Վերջինի պարտությունը Երվանդավանի ճակատամարտում, նրա փախուստը, նորակառույց Երվանդաշատ մայրաքաղաքի առումը, և Երվանդի մահը, որին սպանել էր դինվորներից մեկը:

Հունարեն արձանագրության դադոնիքը բացվում է այսպիսով առանց դժվարության: Նրա մեջ խոսքը հայտնապես վերաբերում է Երվանդյաններին պատահած դառնակսկիծ անցքերին, և Երվանդ Վերջինի ողբերգական մահին: Որ Երվանդին, իրապես, սպանել էր դինվորներից մեկը՝ այդ, համապատասխան հունարեն արձանագրության, մանրամասն վկայում է Խորենացին հետևյալ հատվածում.

***Մովսես Խորենացի**, Բ, գլ. 46, էջ 173 (Տփղիս, 1913)՝*

«Բայց Սմբատը, որը զինքով Երվանդի նետից էր ևկել վոքրաթիվ վաչտով՝ քաղաքի [Երվանդաշատի] դուռը պահում էր, մինչև որ Արտաշեսը և բոլոր զորքերը նկան: Եվ երբ քաջերը սկսեցին ամրոցի դեմ մարտնչել՝ ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը բացին: Իսկ դինվորներից մեկը ներս մտնելով՝ խփեց վաղրով Երվանդի գլխին, և ուղեղը ցրվեց տան հատակի վրա: Եվ այսպես ջախջախվելով՝ մեռավ Երվանդը քսան տարի թագավորելուց հետո: Իսկ Արտաշեսը հիշելով, որ Երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ է՝ հրամայում է նրա մարմինը թաղել և մահարձան դնել»:

[«Բայց Սմբատայ զինչերայն դհետ երուանդայ նկնալ սակաւ

[1] Strabo, II, 14, 15:

[2] Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. 43–46:

վաչտկանաւ՝ ղղուն քաղաքին պահէր մինչև ի գալն Արտաշիսի և զօրացն ամննցուն: Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնատուրք եղեն մարդիկ ամրոցին, և բացին ղղուն քաղաքին: Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ ևհար վաղերը զգլուխն երուանդայ, և ցրուեաց զուղիւղն ի յատակս տանն. և այսպիսի ջախամամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան: Բայց Արտաշիսի յիշեալ, թէ խառնուած Արշակունւոյ է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք»]:

Խորենացու հաղորդած այս տեղեկութիւնները ո՛չ միայն հաստատում են արձանագրութեան մեր լուսաբանութեան ճշտութիւնը, այլ, միևնոյն ժամանակ, ինչպես կարծում եմ, նրևան են հանում նաև արձանագրութեան ծագման բուն գաղտնիքը:

Սպանված Երվանդ թագավորի դիակը, ինչպես երևում է Խորենացու հաղորդագրութեյան վերջին մասից, Արտաշես I-ը հրամայել էր թաղել, և սպանված թագավորի դերեզմանի վրա դնել էր տվել մահարձան: Խորենացու այս հետաքրքիր վկայութիւնը հատուկ ուշադրութեյան է արժանի, որովհետև, Երվանդի մահը նկարագրելիս՝ նա ունեցել է իր ձեռքի տակ արժանահավատ ու կարևոր աղբյուրներ: Հիմնվելով նրա վկայութեյան վրա՝ կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ վերև բերված հունարեն արձանագրութեյունը, որն ազդարարում է կսկծալի լուրը Երվանդի ողբերգական մահվան մասին, ըստ երևույթին, տապանագիր է: Կարելի է նաև հավանական համարել, որ արձանագրական այդ հուշարձանը գտնվել է Երվանդի դամբարանի մոտ, որը թաղված է եղել Արմավիրում արքայական հանգստարանում:

Որ Արմավիրի բլրում եղել է, իրոք, մի ինչ-որ դամբարան՝ այդ մասին հետաքրքիր տեղեկութեյուն տալիս է Ս. Տեր-Հակոբյանը «Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրութեյունը» վերոհիշյալ իր հոդվածում[1]: Այդ հոդվածի մեջ նա հաղորդում է, ի միջի այլոց, որ դեռևս մոտ տարիներում Արմավիրի բլրից փոխադրել են Թափա-Դիրի գյուղը դամբարանական մի կոթող:

Եզրափակելով մեր բոլոր ասածները Արմավիրի երկրորդ քարի չորս արձանագրութեյունների մասին՝ մենք տեսնում ենք, որ այս արձանագրութեյունների լուսաբանութեյունը, որ հաստատվում է Խորենացու Պատմութեյան համապատասխան վկայու-

[1] Տե՛ս «Նյութեր Հին Հայաստանի պատմութեյան», Երևան, 1935, էջ 150:

թյուններին չնորհիվ՝ հնարավորություն է տալիս անելու մի շարք կարևոր ու հետաքրքրական եզրակացություններ, որոնք կարելի է համախմբել հետևյալ կետերում:

1. Երրորդ դարի վերջերում և երկրորդ դարի սկզբներում Ք. թվականությունից առաջ Մեծ Հայաստանում իշխում էր Երվանդ Վերջին թագավորը, որի ժամանակ թագավորական նստավայրը, ինչպես միանգամայն ճիշտ վկայում է Մովսես Խորենացին, փոխադրվել էր Արմավիրից նորակառույց Երվանդաշատ մայրաքաղաքը[1]:

2. Մայրաքաղաքը Արմավիրից Երվանդաշատ փոխադրելուց հետո՝ Արմավիրն առաջվա պես համարվում էր Երվանդյան Հայաստանի կրոնական կենտրոն, և նրա մեջ իշխում էր իրրև գերագույն քուրմ և թագավոր Երվանդ Վերջինի եղբայր Միթրասը:

3. Երվանդյան թագավորության անկումից առաջ տեղի էր ունեցել պատերազմ Երվանդ Վերջինի և Արտաշես I-ի միջև, որի հետևանքը եղավ պարտությունը և ողբերգական մահը Երվանդի, որին սպանել էր Երվանդաշատում զինվորներից մեկը:

4. Երվանդյան Հայաստանը հունարեն արձանագրության մեջ անվանված է «նորագահանխատ երկիր», որովհետև թագավորական նստավայրը Երվանդ Վերջինը տեղափոխել էր Արմավիրից նոր մայրաքաղաք Երվանդաշատ:

5. Երվանդ Վերջինի դիակը թաղված էր Արմավիրում և նրա գերեզմանի վրա կառուցված էր մահարձան, որի տեղը պետք է ենթադրել Արմավիրի բլրի հարավային լանջի վրա՝ Ապոլոնի և Արտեմիսի տաճարի մոտ:

6. 1927 թվականին հայտնաբերված հունարեն արձանագրություններով քարը, որի վրա փորագրված է Երվանդ Վերջինի ողբերգական մահվան մասին մանրամասն տեղեկությունը, ըստ երևույթին, գտնվել է Երվանդի դամբարանի մոտ և, հավանորեն, եղել է այդ հուշարձանի բաղադրիչ մասը:

7. Երկրորդ քարի վրա եղած հունարեն արձանագրությունների ծագման ժամանակը պետք է ենթադրել երկրորդ դարի սկզբներում Ք. թվականությունից առաջ:

---

[1] Համեմատ. իմ աշխատությունը «О торговле и городах Армении», էջ 96-98:

***

Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունները, որ նոր լույս են սփռում Երվանդյան Հայաստանի պատմական անցյալի վրա՝ պատմական քննության համար առաջադրում են մի չարք նոր խնդիրներ, որոնք մինչև այժմ մութ են մնացել և անբացատրելի:

Ես այստեղ համառոտ կերպով կանգ կառնեմ այդ տեսակ երկու խնդիրների վրա, որոնք դեռևս չեն ստացել բավարար բացատրություն:

Ինչպես հայտնի է, Երվանդի ու Արտաշեսի պատմությունը և նրանց ժամանակաշրջանի անցքերը չարաղրելիս՝ Խորենացին, ինչպես ինքն է հայտնում (Բ, գլ. 48), օգտվել է ուրիշ աղբյուրների թվում նաև Հանիի Ուդյուպ կամ Ոդյումպ քուրմի «Մեհենական պատմությունից»: Ենթադրում են, որ Խորենացու վկայության մեջ հիշատակված Հանին Դարանագի գավառի Անի ամրոցն է, որը սրբավայրն էր զերագույն Արամազդ աստծու: Գիտնականների մեծագույն մասը կարծում են մինչև այժմ, որ ինչպես Հանիի տաճարի քուրմի անձնավորությունը, նույնպես և նրան վերագրված պատմությունը, չինծու տեղեկություններ են և իր՝ Խորենացու հերյուրանքներն են:

Սակայն, հակառակ այս պնդումներին, Արմավիրի հունարեն արձանագրությունների հայտնաբերմամբ, ինչպես տեսնում ենք, վավերական կերպով հաստատվում է, որ Երվանդյան Հայաստանում գոյություն են ունեցել ո՛չ միայն հունական տաճարներ և հույն քրմեր, այլ նույնիսկ մեհենական հունարեն արձանագրություններ: Հետևապես, միանգամայն հնարավոր է, որ Ոդյումպ քուրմի «Մեհենական պատմությունը» կարող էր Խորենացուն աղբյուր ծառայած լինել, ինչպես այդ վկայում է ինքը Պատմահայրը: Այս խնդիրը, ինչպես տեսնում ենք, պետք է վերանայվի Արմավիրի հունարեն արձանագրությունների նոր տվյալների կապակցությամբ:

Մյուս խնդիրը, որն առաջնակարգ նշանակություն ունի Հին Հայաստանի նյութական մշակույթն ուսումնասիրող մասնագետների համար՝ վերաբերում է Հայաստանում հունական տիպի տաճարների առաջացման ժամանակի պրոբլեմին: Արմավիրի հունարեն արձանագրությունների մեր նոր լուսաբանությունը մեզ որոշակի ցույց է տալիս, որ դեռևս III դարի վերջերում Ք. թվականությունից առաջ Արմավիրում՝ Երվանդյան Հայաստանի

կրոնական կենտրոնում, գոյություն է ունեցել հեթանոսական տաճար, ականավոր, հունական տիպի, որի մեջ էին Ապոլլոնի և Արտեմիսի արձանները: Այս փաստն արժանի է հատուկ ուշադրության:

Ինչպես հայտնի է, Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակի խնդիրը դեռ մինչև այժմ՝ չնայած այդ նյութին վերաբերող մի շարք աշխատությունների՝ վերջնականապես որոշված չէ: Անհնարին չէ, որ մեր հայտնաբերած նոր փաստերը կարող են որևէ չափով կապ ունենալ և այդ խնդրի հետ: Շատ դրավիչ կլիներ ենթադրել, որ Գառնիի տաճարի չինությունը վերագրվելու է ո՛չ թե Արշակունյան շրջանին, ինչպես մինչև այժմ կարծվել է, այլ կամ Արտաշեսյան և կամ Երվանդյան շրջանին: Այս նոր խնդիրը, որը զուրկ չէ որոշ հիմքից, պետք է լուծենք, հարկավ, մասնագետ արվեստագետներն այդ հուշարձանի հնագիտական-ճարտարապետական ուսումնասիրության միջոցով:

Այս խնդիրն ուսումնասիրելիս՝ պետք է նկատի ունենալ, որ վերջերս Գառնիում գտնված հունարեն արձանագրության բովանդակությունը բնավ չի կարող խոչընդոտ հանդիսանալ պրորլեմի նոր լուծման: Նորագյուտ արձանագրության մեջ հիշատակված Տրդատին, ինչպես մանրամասն ցույց եմ տալու իմ հետագա աշխատություններից մեկում՝ պետք է վերագրել Գառնիի տաճարի ո՛չ թե կառուցումը, այլ վերանորոգումը:

Արմավիրի հունարեն արձանագրությունները, ինչպես տեսնում ենք, պետք է գրավեն գիտնականների ուշադրությունն իրենց առանձնապես հետաքրքիր բովանդակությամբ և, իհարկե, խիստ ցանկալի են ինչպես դրանց տեքստերի ճշտման հետագա աշխատանքները, նույնպես և դրանց գիտական պատշաճ հրատարակումը:

ԳԱՌՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՌՆԻԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ[1]

Ինչպես օրաթերթերի հոդվածներից արդեն հայտնի է, 1945 թվականի հուլիս ամսվա կեսերին ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը և դյուղատնտես Յոլակ Դավթյանը, Գառնիի գերեզմանատանը չրջելիս՝ տապանաքարերից մեկի վրա նկատել էին հունական տառերով ընդարձակ մի արձանագրություն: Այդ քարը, ինչպես նրանք հարցուփորձ անելով պարզել էին՝ համեմատաբար մոտ ժամանակներում տեղափոխված է գերեզմանոց մերձակա ջրադայից, և ղրվել է դյուղի ննջեցյալի գերեզմանի վրա:

Այս կարևոր դյուտից հետո՝ Գառնի մեկնած Հայկական ԽՍՀ Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի հատուկ հանձնաժողովն ականատես է եղել հետաքրքիր փաստերի:

> *«Տարիների ընթացքում,— հաղորդում է այդ կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Հարությունյանը[2],— Գառնիի բնակիչներն ամրոցից գերեզմանատուն են տեղափոխել մեծ քանակությամբ բազալտե տաշված քարեր, որպես գերեզմանաքարեր: Այդ քարերի մեծ մասը պատկանում են ամրոցի պարիսպին: Կան մի քանի քանդակազարդ քարեր, որոնք պատկանում են տաճարին: Այդպիսի քարեր կան նաև դյուղի մի չարք շենքերի պատերին»:*

Նորագյուտ հունարեն արձանագրությունը, ինչպես իրավացի կերպով ենթադրում են այդ հուշարձանը ուսումնողները, փոխադրված է եղել ջրադաց՝ ամրոցի միջից, և պատկանում է ներսում կառուցված շենքին:

---

[1] Զեկուցված է Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետհամալսարանի 25-ամյա հոբելյանական-գիտական սեսիայի պլենար նիստում, 1946 թվականի ապրիլի 22-ին:

[2] Տե՛ս «Սովետական Հայաստան», օրաթերթ, 1945, 31 օգոստոս, № 181:

Գտնված թարն ունի 1,3 մետր երկարություն, 0,8 մետր լայնություն և 0,6 մետր բարձրություն: Արձանագրությունը փորագրված է սալաթարի աջ կողմում և բաղկացած է ընդամենն իննը տողից: Ամեն մի տողի երկարությունն է մոտ 1 մետր, իսկ տառերի բարձրությունն է — առաջին տողում՝ 0,05, իսկ վերջին տողում՝ 0,025 մետր:

Քարի աջակողմյան եզրերը, նաև վերևը ու ներքևի աջ կողմի անկյունը, ջարդված են: Սակայն պահպանված մասերի օգնությամբ հնարավոր է ենթադրարար լրացնել պակաս վանկերը: Օդի և անձրևի ազդեցությամբ ջնջվել են և դժվարությամբ են կարդացվում նաև մի քանի տառեր հինգերորդ, վեցերորդ և ութերորդ տողերում: Այս տառերը ևս դժվարացնում են արձանագրության ընթերցումը և նրանց վերականգնումը հնարավոր է նույնպես միմիայն ենթադրորեն:

Պրոֆ. Ստ. Լիսիցյանը «Սովետական Հայաստան»-ում տպած իր հոդվածում[1] մատնանշել է, որ իրր թև հունարեն տառերի ձևերից կարելի է եզրակացնել, որ արձանագրությունը փորագրել են երկու տարբեր ձեռք: Նրա կարծիքով՝ առաջին ձեռքը չատ թերի է իմացել հունարեն լեզուն, ուստի և երկրորդ ձեռքը հարկադրված է եղել նրա սխալներն ուղղել և իր կողմից ավելացրել է μετὰ τοῦ μαρτυρίου բառերը՝ չատ ավելի ուշ ժամանակվա տառերով:

Պրոֆ. Լիսիցյանի այս ենթադրությունը, ինձ թվում է, ճիշտ չէ: Թևև արձանագրության մեջ հունարեն ε տառը փորագրված է երբեմն E և երբեմն Є, սակայն դժվար չէ համոզվել, որ այդ երկու տարբեր գրության ձևն էլ վերագրվելու են միևնույն փորագրչին, որովհետև նույն տողերի մեջ հանդիպում են թև E և թև՝ Є գրությունները: Իսկ արձանագրության վերջում τοῦ μαρτυρίου խոսքերը պարզապես չարունակությունն են արձանագրության և չեն կարող համարվել երկրորդ ձեռքի և ուշ ժամանակվա հավելված:

Արձանագրության բնագրի ընթերցման համար ևս ունենի ձեռքիս տակ երեք լուսանկար՝ երկու մեծ և մեկ փոքր:

Համաձայն չլինելով պրոֆ. Լիսիցյանի «Սովետական Հայաս-

[1] «Գառնիի տաճարի հունարեն արձանագրությունը», տե՛ս «Սովետական Հայաստան», 1945, 23 սեպտեմբեր, № 201:

տան» թերթում տպած հունարէն բնագրի ընթերցման և նրա առաջարկած թարգմանութեան[1] *արժանագրութիւնը ևս կարդում եմ ու թարգմանում բոլորովին այլ կերպ:*

1. ΗΛΙΟΣ |ΤΙΡΙΔΑΤΗΣ ΒΑΣΙΛΕΥΣ|
   Էլիոս |Տիրիդատես թագավոր|
2. ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΑΝΑ|ΣΣΩΝ|
   Մեծ Արմենիայի իշխելով
3. ΩΕ ΔΒΣΠΟΤΗΣ Α|Υ|ΚΤΙΣΕ ΝΑ|ΟΝ|
   որպես զերագոյն տեր վերստին կառուցեց տաճարը
4. ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α ΤΟΝ ΑΝΙΚΗΤΟΝ ΚΑΣ|ΕΙ|
   արքայադստեր (համար) անհաղթելին քրոջ
5. Α|Υ|ΤΟΥ Ε|Ξ| ΑΝΤΗΣ ΤΗΣ ΒΑΣΙΛΕΙ|ΑΣ|
   իր ի խնդրո թագուհուն
6. ΜΕ|ΓΑΛ|Ε(Ι)ΑΣ. ΥΠΟ Ε|Ξ|ΟΥΣ ΙΑ ΣΤΕ|Γ|ΑΝ|ΟΥ|
   մեծաչուք. ներքո հովանու չենքի
7. ΛΙΤΟΥΡΓΟΣ ΤΩ ΜΕΓΑΛΩ Σ|ΕΜΝΩ|(?)
   ադոթողը մեծն սրբին (?)
8. ΜΕ|ΛΕ|Α ΜΑΤΗ|Τ|Ω ΚΑΙ ΕΥΧ|ΑΡΙΣΤΙΑΝ|
   երկար թող խորհ և գոհություն
9. ΤΟΥ ΜΑΡΤΥΡΙΟΥ.
   ավետարանման (համար):

Առաջին տողի մեջ պարզ կարդացվում է միայն ΗΛΙΟΣ *բառը, իսկ Տիրիդատես անունը, որից պահպանվել են տառերի ներքևի ծայրերը, վերականգնվում է ենթադրորեն:* ΗΛΙΟΣ *բառը կարող է նշանակել արև, բայց կարող է նաև հասկացվել իբրև էլիոս (Aclius) անձնական անուն, որ գործածական էր հռոմեական ժամանակաշրջանում:*

---

[1] Պրոփ. Լիսիցյանի թարգմանությունը հետևյալն է՝ «Արև Տիրիդատես, Մեծ Արմենիայի անարժան պետ կառուցեց տուն (տաճար)» թագուհու համար՝ անպարտելի (հզոր)՝ հարազատ եղբոր կողմից՝ վեր մեծ թագավորական ապարանքից, աստվածների հովանու ներքո, աչխարհիկ (քաղաքականցաղ), պոլեք ուղղող մեծ քարայրին... դվարճագրոս»:

Ներքև մենք կտեսնենք, որ Հունարեն այս արձանագրությունը վերագրվելու է Տրդատ Մեծին, որին մանուկ հասակում փախցրել էին հռոմայեցոց կողմը և որը սնվել ու մեծացել էր նրանց մոտ: Ուստի և միանգամայն հնարավոր է, որ իր Aelius մականունը նա կարող էր ստացած լինել հռոմեական երկրում: Ինչպես հայտնի է, նաև Հայաստանի Բակուր Թագավորը (մոտավորապես), որը զահազուրկ էր արվել, Հռոմ էր տարվել և այնտեղ իր եղբորը մահարձան էր կանգնեցրել՝ Հռոմում հայտնաբերված այդ տապանագրի վրա անվանված է «**Ավրելիոս** Բակորոս Թագավոր Մեծ Հայաստանի»[1]:

Առաջին տողի վերջում «Տիրիդատես» անունից հետո նկատելի են մի այլ բառի ազոտ հետքերը, որը, նկատի առնելով տարածությունը մինչև տողավերջ, կարող էր լինել ΒΑΣΙΛΕΥΣ: Այդ ավելի քան հավանական է, որովհետև արձանագրության սկզբում պետք է գրված լիներ Տրդատի պաշտոնական տիտղոսը՝ «Էլիոս Տիրիդատես Թագավոր Մեծ Արմենիայի»: Հենց այս տիտղոսը, ինչպես մատնացույց է արել Ռոստովցևը[2], կրում են Բակուրը վերոհիշյալ արձանագրության մեջ ու, նաև ինքը Տրդատ Մեծը Ագաթանգեղոսի պատմական երկում[3]:

Երկրորդ տողի վերջում պակաս տառերը կարելի է լրացնել տարբեր կերպով: Ես առաջարկում եմ կարդալ այդ տառերը, ΑΝΑ[ΣΣΩΝ], այսինքն՝ «իշխելով»: Ուշագրավ է, որ Տրդատ Մեծի պաշտոնական տիտղոսից հետո կարևոր է համարվել հիշատակել, որ նա Գառնիի տաճարը վերստին կառուցել է, իշխելով երկրում «որպես գերագույն տեր» (δεσπότης): Ինձ թվում է, որ Տրդատ Մեծի սուվերեն իրավասության այս հիշատակումը կարող է մի ակնարկ լինել, որ Գառնիի չրջանը նրա ժամանակ չէ եղել արքունի երկրի մաս, այլ գտնվել է նրա վասալներից որևէ մեկի իշխանության տակ: Գառնիի նկատմամբ, որը նշանավոր բերդ էր, ըստ երևույթին, նա տիրակալական հատուկ իրավունք է ունեցել, որը չեչված է արձանագրության մեջ:

---

[1] Տե՛ս Corpus Inscr. Graec. 6559=Dittenberger Or. 382.

[2] М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб., 1911, էջ 16.

[3] Տե՛ս Paul de Lagarde, Agathangelus, Göttingen, 1887, 14, 30 և այլն:

Երրորդ տողի մեջ երրորդ և չորրորդ բառերը պետք է կարդալ ո՛չ թե ΑΙΚΤΙΣΕ[1]*, որ անիմաստ է, այլ* ΑΥ ΚΤΙΣΕ *«վերստին կառուցեց»*[2]*: Ուշադրության արժանի է, որ «*ΕΚΤΙΣΕ *անորոշ անցյալն արձանագրության մեջ գործ է ածված առանց* Ε *հավելման, ինչպես որ այդ սովորական էր Հոմերոսի մոտ և բանաստեղծական այլ երկերում: Երրորդ տողի վերջում, ինչպես ճիշտ որոշել է Լիսիցյանը*[3]*, պետք է լրացնել երկու պակաս տառերը՝* ΝΑ[ΟΝ] *«տաճար»:*

Չորրորդ և հինգերորդ տողերում ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α *և* ΒΑΣΙΛΕΙΑ *բառերը, որ նշանակում են «թագուհի, իշխանուհի, արքայադուստր», ևս թարգմանում եմ տարբեր իմաստով՝* ΒΑΣΙΛΙΣ(Σ)Α *«արքայադուստր» և* ΒΑΣΙΛΕΙΑ *«թագուհի»: Ընդունելով, որ արձանագրությունը վերագրվելու է, ինչպես այդ ճիշտ վկայում է Խորենացին, Տրդատ Մեծին՝ ևս հավանական եմ համարում, որ վերջինս վերակառուցել էր ամրոցն իր Խոսրովդուխտ քրոջ համար Աչխեն թագուհու խնդրանքով: Չորրորդ տողի վերջում պակաս է երկու տառ* ΚΑΣ[ΕΙ] *«քրոջ»: Նաև հինգերորդ տողի վերջին տառերը վերականգնվում են առանց դժվարության՝* ΒΑΣΙΛΕΙ[ΑΣ]*:*

Պետք է ասել, որ Ստ. Լիսիցյանն իր վերոհիշյալ հոդվածում Ε[Ξ] ΑΝΤΗΣ ΒΑΣΙΛΕΙ[ΑΣ] *կարդում է* Ε[Ξ]ΑΝ ΤΗΣ ΒΑΣΙΛΕΙ[ΑΣ] *և թարգմանում է «վեր թագավորական ապարանքից»: Այս թարգմանությունը, անտարակույս, սխալ է, որովհետև հունարենում* Ε[Ξ]ΑΝ *բառ գոյություն չունի, իսկ* ΒΑΣΙΛΕΙΑ *նշանակում է ոչ թե «ապարանք», այլ «թագուհի, իշխանուհի, արքայադուստր» և կամ «թագավորություն, թագավորական իշխանություն»*[4]*:*

Վեցերորդ տողը, որի մեջ կան ավերված և պակաս տառեր՝ պետք է կարդալ, իմ կարծիքով, այսպես՝

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1945, 23 սեպտեմբեր, № 201:

[2] Որ Տրդատ Մեծը, հավանորեն, վերանորոգողը պիտի լինի Գառնիի տաճարի՝ այդ ուղիղ մատնանշել է Ղ. Ալիշանը, տե՛ս «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 363:

[3] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1945 թ. № 201:

[4] Պարոլ կերպով սխալ է և անընդունելի նաև Ստ. Լիսիցյանի թարգմանությունն արձանագրության 6–9 տողերի: Ուստի ներքև տալու եմ միայն իմ լուսաբանությունը:

ΜΕ|ΓΑΛ|Ε(Ι)ΑΣ. ΥΠΟ Ε|Ξ|ΟΥΣΙΑ ΣΤΕ|Γ|ΑΝΟΥ.

Լիսիցյանի ընթերցումը՝ ΥΠΟ ΘΕΟΥΣΙ ΑΣΤΕΙΑΝ *ճիշտ չէ։ Յոթներորդ տողի վերջին բառը ևս ենթադրաբար լրացնում եմ և կարդում* Σ|ΕΜΝΩ|(?) *«սրբին»։ Լիսիցյանի ընթերցումը* Σ|ΙΗ| *«քարայրին, անձավին» թեև հնարավոր է, բայց հավանական չէ։ Եթե ճիշտ համարելու լիներ նրա ընթերցումը՝ պետք է ենթադրենք, որ Այրիվանքը դադարել է ունեցել իրեն քրիստոնեական սրբավայր դեռևս Տրդատ Մեծի ժամանակ։*

Ութերորդ տողում առաջին երկու բառը խիստ վնասված են և դժվար են կարդացվում։ Այդ բառերը, ինչպես ես եմ ենթադրում հնարավոր է թերևս կարդալ ΜΕ|ΛΕ|Α ΜΑΤΗ|ΤΩ|, *ենթադրելով երկրորդ բառը հրամայական եղանակի երրորդ դեմք,* μετέο μάτημι, *բայի, որ նշանակում է «որոնեմ, խորհեմ, հետամտեմ»։*

Յոթներորդ, ութերորդ, իններորդ տողերում λίτουργος *«սպասավոր, պաշտոնյա, ադոթող»,* εὐχαριστία *«գոհություն, շնորհակալություն» և* μαρτύριον *«վկայություն, ավետում, քարոզություն» բառերի գործածությունը, որ սովորական էին ուշ շրջանի քրիստոնեական-կրոնական երկերում՝ մի պարզ նշան է, որ արձանագրությունը գրված է ո՛չ թե Տրդատ I-ի, այլ Տրդատ Մեծի ժամանակ, ինչպես այդ ճիշտ մատնանշել է Խորենացին։* ΜΑΡΤΥΡΙΟΝ *բառը, հավանորեն, նշանակում է այստեղ, ինչպես և Նոր Կտակարանում, «ավետում, ավետարանություն, քարոզումն Ավետարանի»*[1]*։*

Արձանագրության հունարեն բնագրի բոլոր այս ճշտումներն ու լրացումները, որ հավանական են թվում, թեև տեղ-տեղ կարող են առարկելի համարվել, սակայն հնարավոր այդ առարկությունները չեն կարող ըստ իս փոխել արձանագրության ընդհանուր իմաստը, որն իմ նոր լուսաբանությամբ, ինչպես տեսնում ենք, ունի հետևյալ բովանդակությունը.

> *«Էլիոս Տիրիդատես թագավորը Մեծ Հայաստանի, իշխելով որպես գերագույն տեր՝ վերստին կառուցեց տաճարը, անհաղթելին, իր քրոջ արքայադստեր համար մեծաչուք թագուհու խնդիրքով։ Շենքի հովանու ներքո սպասավորող թող երգեր խորհեն մեծ սրբին, նաև գոհություն ավետարանման համար»։*

[1] Տե՛ս «Griechisch Deutsches Schulwörterbuch», von Dr. G. E. Benseler, Achte Auflage, Leipzig, 1886, էջ 518։

***

Նորագյուտ արձանագրության մեր նոր լուսաբանությունը, ինչպես տեսնում ենք, ճշտիվ համապատասխանում է Խորենացու ցուցմանը, որ Գառնիի հունարեն արձանագրությունը պատկանում է Տրդատ Մեծին: Պատմահոր այդ կարևոր վկայությունը, որ կարոտ է մանրամասն քննության, մենք եմ բերում աչխարհաբար թարգմանությամբ և գրարար:

> ***Խորենացի**, գիրք II, գլ. Ղ, էջ 241-242 (Տփղիս, 1913)՝*
> *«Այս ժամանակ [Արիստակեսի Նիկիայից վերադառնալուց հետո] Տրդատը վերջացնում է Գառնիի չինությունը, որը որձաքար ու տաչած քարերից էր, որոնք իրար էին կպցրած երկաթե գամերով և կապարով: Նրա մեջ նա չիներց նաև տուն հովանոց՝ մահարձաններով, սքանչելի դրվագներով ու բարձրաքանդակներով՝ իր Խոսրովիդուխտ քրոջ համար. և նրա վրա գրեց իրեն հիշատակը հունարեն գրերով»:*
> *[«Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զչինուած ամրոցին Գառնւոյ զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթադամ և կապարով մածուցեալ, յորում չինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով»]:*

Խորենացու այս վկայություններից, որոնց մեջ կարևոր ու ճշգրիտ տեղեկություններ են հաղորդված Գառնիի ամրոցի և նրա մեջ գտնվող շենքի մասին՝ դժվար չէ կռահել, որ Պատմահայրն ինքն անձամբ եղել է Գառնիում և տեսել է ու կարդացել հունարեն արձանագրությունը: Նա միանգամայն ճիշտ է որոշել, որ իր տեսած հունարեն արձանագրությունը, որը պարզապես այժմյան նորագյուտ արձանագրությունն է՝ պատկանում է Տրդատ Մեծի ժամանակին: Նա նմանապես ուղիղ է մատնանշել, որ վերջինս Գառնիի ամրոցը կառուցել էր իր քրոջ համար, որին ինքը, հավանական ևթաղրություն անելով՝ նույնացրել է Ագաթանգեղոսի մոտ հիշատակված Խոսրովիդուխտի հետ: Սակայն, ինչպես այժմ արձանագրության մեր ընթերցումից երևում է, Խորենացու ուշադրությունից վրիպել է, որ Գառնիի ամրոցը և նրա մեջ գտնվող տաճարը կառուցված են եղել Տրդատ Մեծից առաջ, և որ վերջինս, ինչպես ասված է արձանագրության մեջ՝ այդ չինությունները՝ միայն վերանորոգել էր:

Խորենացու հատվածի մեջ ուշագրավ է նրա վկայությունը «տուն Հովանոց»-ի «մահարձան»-ների մասին, որ էմինը թարգմանել է «колонны» (1893 թ., էջ 138), Խորեն Ստեփաննե՝ «սյուներ» (էջ 224) և Մալխասյանցը՝ «արձաններ» (էջ 163): Իրապես, Խորենացու վկայությունը, ըստ երևույթին, վերաբերում է ո՛չ թե Գառնիի տաճարի սյուներին, այլ երիտասարդների բարձրաքանդակ պատկերներին, որոնք գտնվում էին տաճարի մուտքի աստիճանների երկու կողմում: Այս «մահարձան»-ները, ինչպես և տաճարի մյուս զարդերը, Խորենացին տեսած է եղել, ամենայն հավանականությամբ, ինքն իր աչքերով:

Տարբեր կարծիքներ են հայտնված նաև Խորենացու հատվածում հիշատակված «տուն Հովանոց»-ի նշանակության մասին: Էմինը «տուն Հովանոց» թարգմանել է «вилла» (էջ 138), Խորեն Ստեփաննե՝ «ամառնային տուն, Հովանոց» (էջ 224), իսկ Մալխասյանցը՝ անորոշ կերպով «Հովանոց» (էջ 163): Բոլորովին այլ մեկնություն է տալիս «Հովանոց» բառին Թ. Թորամանյանը:

> *«Հովանոց բառը, մեր կարծիքով, հոմանիշ պետք է լինի,— ասում է Թորամանյանը,— խորաններ՝ գործածության նպատակի տեսակետով, միայն ձևով տարբեր էր: Ամենայն հավանականությամբ, խորանները բոլորակ կամ բազմանկյունի էին, իսկ Հովանոցները՝ քառակուսի: Գագիկ Արծրունիի չինել տված խորանները, ըստ Թովմայի, անկյունավոր էին, իսկ Խորենացու՝ Տրդատին վերապրված Հովանոցը Գառնիի մեջ՝ քառակուսի է: Հովանոցները, ըստ երևույթին, միշտ քարաշեն եղած են. փայտաշենի մասին վկայություն չեմ տեսած ոչ մի տեղ, բայց կարող էր նաև փայտաշեն ալ չինվել, նայելով իր հատկության: Ինձ կթվի, թե Հովանոցներ եթե ընդհանրապես ապարանքի մուտք կամ հեռուն անջատ կչինվեին, այնուամենայնիվ, երբեմն անորոշ ակնարկներ կան, որ կարծել կուտան, թե ապարանքի չենքերու որևէ մասերու վրա ալ Հովանոցներ չինած են»[1]:*

Թ. Թորամանյանի լուսաբանությունը, ինչպես տեսնում ենք, տարբեր է էմինի, Ստեփաննի և Մալխասյանցի վերոհիշյալ

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետական պատմության, Երևան, 1942, էջ 357:

Թարգմանություններից: Թորամանյանը «տուն Հովանոց» համարում է ասպարանքի մաս, այսինքն՝ «քառանկյունի քարաշեն խորան», իսկ Թարգմանիչները՝ «Հովոցային տուն» կամ «ամարանոց»: Ճիշտ է, ըստ երևույթին, Թարգմանիչների տված լուսաբանությունը: Ինչպես հայտնի է, Խորենացու մոտ «ամարանոցի» իմաստով գործ է ածված «Հովանոց» բառը նաև նրա Պատմության մի այլ հատվածում: Խոսելով այն մասին, թե ինչպես Վաղարշակ Թագավորը բարեկարգում էր Հայաստանը՝ Խորենացին հաղորդում էր, որ

> *«[Վաղարշակը] գեղեցիկ կերպով կարգավորեց իր երկիրը և թե՛ լեռնային և թե՛ ջերմային տեղերը հավասար կերպով դարձրեց իր թագավորության վայելչության համար բարեխառն ու նման գեղեցկությամբ վայրեր. նա պատրաստեց ամառային ժամանակի համար Հովանոցներ, երբ չրջելու լիներ հյուսիսի կողմերը»:*
> *[«Գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հաւասարելով զլեռնայինն և զջերմահոտն ի բարեխառն և ի գուգագեղեցիկ վայելչութիւն իւրոյ թագաւորութեանն. ամառային ժամանակին հովանոցս պատրաստելով, յորժամ զհյուսիսեան երթիցէ»][1]:*

Պարզ է, ուրեմն, որ Խորենացին Գառնիի ամրոցը համարել է ամառանոց, որ Տրդատ III-ը կառուցել էր իր քրոջ Խոսրովիդուխտի համար:

Գտնվելով Խորենացու վկայության ազդեցության տակ՝ Թորամանյանը նույնպես կարծում է, որ իրը թե հաստատ տվյալներ կան, որ Գառնիի ամրոցի մեջ գտնվող չենքը «ընավ կռապաշտական տաճար չէ, այլ արքայական ընդունելության դահլիճ է, և կամ, ինչպես Խորենացին է ասում, Հովանոց է»[2]:

Նորագյուտ Հունարեն արձանագրության ընթերցումը այժմ, ինչպես տեսնում ենք, մեզ ցույց է տալիս, որ այդ Հուշարձանը կառուցված է եղել Տրդատ Մեծից շատ և շատ առաջ, և չէր կարող համարվել Խոսրովիդուխտի «Հովանոց», ինչպես այդ ենթադրել է Խորենացին: Ճիշտ պետք է համարել, ըստ երևույ-

---

[1] Տե՛ս Մովսես Խորենացի, II, գլ. Զ, էջ 108 (Տփղիս, 1913):

[2] Տե՛ս «Նյութեր», էջ 282:

թին, այն դիտնականների և ճարտարապետների կարծիքը, որոնք նույն այդ չնչերը համարում են հնթանոսական տաճար, մևհյան[1]:

***

Նորագյուտ արձանագրության մեջ հիշատակված են, համաձայն իմ առաջարկած նոր ընթերցման, Տրդատ Մեծի քույրը և նրա կինը, որն անվանված է «մեծաչուք թագուհի»: Դժվար չէ ըստ այսմ համոզվել, որ սրանցից առաջինն Ագաթանգեղոսի մոտ հիշատակված «մեծ օրիորդ Խոսրովիդուխտն» է, որը հայաստանում ականավոր դեր էր կատարել քրիստոնեության տարածման ընթացքում, իսկ երկրորդը՝ թագավորի կին Աչխեն տիկինն է:

Տրդատ Մեծի քրոջ և կնոջ հիշատակությունն արձանագրության մեջ կարևոր մի մատնանշումն է, անուշտ, որը ցույց է տալիս, որ Խոսրովիդուխտի և Աչխենի մասին Ագաթանգեղոսի ու Խորենացու վկայությունները, ըստ էության, պատմական են և ոչ վիպական:

Այս խնդրի վրա անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել, որովհետև վերջերս Մ. Արեղյանն իր «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորում խիստ նվաստացրել է Ագաթանգեղոսի պատմական արժեքը, և աշխատել է ցույց տալ, որ Մեծն Խոսրով անունով հայ թագավոր III դարում գոյություն չի ունեցել, և որ հայկական աղբյուրներում հիշատակված Խոսրով Մեծը վիպական ստեղծական անձ է[2]: Նրա նոր այս կարծիքը, որ մանրամասն պատճառաբանված է վերոհիշյալ աշխատության չորրորդ հավելվածում՝ իմ կարծիքով, սխալ է և անընդունելի: Հայ և օտար աղբյուրների ուշադիր քննությամբ պարզվում է, ընդհակառակը, որ III դարում Խոսրով թագավորի գոյությունը բնավ մեջտեղից չի վերանում:

Այդ դարում Հայաստանում գոյություն են ունեցել Խոսրով անունով նույնիսկ երկու թագավոր՝ Վաղարշի որդի Խոսրով I-ը և Տրդատ մեծի հայրը՝ Խոսրով II-ն: Արեղյանի մատնանշած

---

[1] Տե՛ս J. Morier, A second journey hrough Persia, Armenia and Asia Minor, London, 1818, էջ 339: Համեմատեն նաև Н. Я. Марр, Кавказ и памятники его духовной культуры, Петроград, 1919, էջ 15:

[2] Տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», գիրք առաջին, Երևան, 1944, էջ 166 և 591-603:

պատմական ու բանասիրական երկերում խառնաչփոթումները առաջ են եկել մասամբ այն պատճառով, որ սխալ էր հասկացվել Կասսիուս Դիոնի վկայությունը Սանատրուկի որդի Վաղարշի մասին:

Հայտնի է այժմ, որ վերջինս թագավորել էր Հայաստանում ո՛չ թե 196–215 կամ 194–216 թվականներին, ինչպես սովորաբար ենթադրվել է, այլ չուրջ 117–140 թվականներին: Այդ սխալն է եղել, անշուշտ, հիմնական պատճառը, որ հայ բանասերներն, ու պատմագետները, ինչպես և ինքը Արեղյանը, չեն կարողացել որոշել, որ Անտոնինոս Կարակալլա կայսեր ժամանակ (212–217) Հայաստանում թագավորում էր, ինչպես միանգամայն ճիշտ վկայում է Խորենացին, հիմնվելով Եղնսացի Բարդածանի (154–222) պատմական երկի վրա՝ Վաղարշի որդին՝ Խոսրովը, որը Տրդատ II-ի հայր Խոսրով I-ն է:

Սակայն Սերեոսի և Խորենացու պատմական երկերում այս Խոսրով I-ը, ըստ երևույթին, Ագաթանգեղոսի Պատմության ժամանակագրական սխալների ազդեցությամբ, թյուրիմացաբար նույնացվել է Տրդատ III-ի հոր՝ Խոսրով II-ի հետ, որը թագավորում էր Հայաստանում, ինչպես այժմ պարզվում է, III դարի երկրորդ կեսում: Այդ ակներև սխալի պատճառով է, որ Սերեոսը և Խորենացին III դարում ենթադրում են միայն երկու հայ թագավոր՝ Խոսրով Մեծ և Տրդատ Մեծ[1], մինչդեռ այդ դարում, ինչպես այժմ պարզվում է, Հայաստանում իշխել են հինգ թագավոր հետևյալ հաջորդականությամբ՝ Խոսրով I, Տրդատ II, Արտավազդ, Խոսրով II և Տրդատ III:

Արեղյանի կարծիքը, որ Հայաստանում Խոսրով Կոտակից առաջ ուրիշ Խոսրով թագավոր գոյություն չի ունեցել, ինչպես տեսնում ենք, բոլորովին անհիմն է:

Կարող ենք ուրեմն, վստահությամբ եզրակացնել, որ Հունարեն արձանագրության մեջ հիշատակված Տրդատ III-ի քույրը, որը Խոսրով II-ի դուստրն էր, անվանվել է, իրոք, ինչպես վկայում են Ագաթանգեղոսը և Խորենացին, «Խոսրովիդուխտ», այսինքն՝ «դուստր Խոսրովի»:

---

[1] Տե՛ս **Մովսես Խորենացի**, աշխ. թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940. Սինխրոնիկ աղյուսակ. էջ 361–365:

***

Անհրաժեշտ է մեզ այժմ նաև որոշել, թե Տրդատ Մեծի թագավորության ո՛ր չրջանում և մոտավորապես ո՛ր թվականներին է գրված արձանագրությունը: Այս խնդիրը լուսաբանելիս՝ հենակետ է ծառայում այն, որ արձանագրությունը գրված է եղել, ինչպես վերև տեսանք, Տրդատ Մեծի քրիստոնեության ընդունելուց հետո: Ուրեմն՝ պետք է պարզել, թե որ թվին Տրդատ III-ը և հայերը ընդունել էին քրիստոնեությունը:

Այս խնդիրը, դժբախտաբար, վերջնականապես դեռ որոշված չէ:

Դեռևս Մ. Զամչյանի ժամանակներից սկսած այդ մասին գերիշխող կարծիքն այն է եղել, որ Հայերի քրիստոնեության դարձը տեղի էր ունեցել 301-304 թվականներին: Բայց կան նաև զանազան այլ ենթադրություններ: Ֆ. Տուրներիզը, որը մանրամասն քննել է այս խնդիրը իր «Histoire politique et religieuse de l'Armenie» գրքի հատուկ հավելվածում՝[1] մեջ է բերում հայերի դարձի մասին ականավոր եվրոպացի և հայ գիտնականների նաև այլ կարծիքներ: Ըստ այդ ենթադրությունների քրիստոնեությունն ընդունվել էր Հայաստանում որպես պետական կրոն կամ 276 թվականին կամ 285-295 ու կամ 305-311 թվականների միջև:

Վերջերս լույս տեսավ նույն խնդրի մասին «Էջմիածին» ամսագրում Ստ. Մալխասյանցի հոդվածը[2]: Վերջինս, հիմք ընդունելով Խորենացու Պատմության ժամանակագրական ցուցումները, որոնք համարում է հայերի դարձի թվականի ճշտման միակ ապահով աղբյուրը՝ քրիստոնեության հաստատումը Հայաստանում որոշել է 279 թվականին:

Վերոհիշյալ բոլոր կարծիքները, գլխավորապես, հիմնված են Ագաթանգեղոսի, Խորենացու և պատմական մյուս հայ աղբյուրների խառնաչփոթ տեղեկությունների վրա, որոնք վերաբերում են III դարի պատմական անցքերին: Բացի այդ, պատմագետների ու բանասերների մեծագույն մասը սխալ են

---

[1] Տե՛ս Appendice I, «Etude sur la conversion de L'Armenie au christiansime», Paris, 1910, էջ 407-552:

[2] **Ստ. Մալխասյանց,** Երբ են հայերն ընդունել քրիստոնեություն, տե՛ս «Էջմիածին», 1944, № 1, էջ 22-26:

Հասկացել Եվսերիոս Կեսարացու Հայտնի վկայությունը Մաքսիմիանոս Դայայի արշավանքի մասին քրիստոնյա Հայերի դեմ: Նրանք կարծում են, որ Մաքսիմիանոս Կեսարը 311/312 թվականներին պատերազմել էր քրիստոնեություն ընդունած Մեծ Հայաստանի դեմ, և կամեցել էր վերահաստատել այստեղ հնթանոսությունը: Սակայն, իրապես, ինչպես Հայտնի է այժմ[1], նա պատերազմ էր մղել ո՛չ թե քրիստոնեության դեմ Մեծ Հայաստանի, այլ Հռոմեական Հայաստանի, այսինքն՝ Անդրտիգրիսյան երկրներից, մեկի դեմ, որ Դիոկղետիանոսի զորավար Գալերիոսի 297 թվականի հաղթությունից հետո միացվել էր կայսրությանն:

Միանգամայն պարզ է, հետևաբար, որ Եվսերիոսի վկայությունն այս պատերազմի մասին՝ չէր կարող կովան ծառայել Տրդատ Մեծի ու նրա երկրի քրիստոնեության դարձի թվականը որոշելու համար:

Իմ «Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության» ուսումնական աշխատության մեջ[2] ես մատնանշել էի, որ Տրդատ Մեծի ժամանակ Մեծ Հայաստանը սերտ կերպով միացված էր Հռոմեական կայսրությանը, ուստի չնորհիվ հենց այդ կապի քրիստոնեությունը, որը կայսրության մեջ հայտարարվել էր պետական կրոն՝ հաստատվել էր իրրև պաշտոնական կրոն նաև Հայաստանում[3]: Ագաթանգեղոսի Պատմության վկայությունների քննությունը պարզ ցույց է տալիս, որ հալածանքները քրիստոնեության դեմ Մեծ Հայաստանում արձագանք էին հալածանքների, որ տեղի էին ունեցել Հռոմեական կայսրության մեջ[4] Դիոկղետիանոս կայսեր ժամանակ (284-305)՝ նրա իշխանության վերջին տարիներում: Վերարերմունքը դեպի քրիստոնյաները Հայաստանում ևս, հավանարար, փոխվել էր 313 թվականից հետո, երբ Համաձայն Միլանի հրովարտակի քրիս-

---

[1] Տե՛ս F. Tournebize, Histoire politique et religieuse de l'Armenie, էջ 443, նաև ուրիշ:

[2] Տե՛ս «Краткий обзор истории древней Армении», Москва, 1943, էջ 29: Համեմատե նաև իմ աշխատությունը՝ «Месроп Маштоц», Ереван, 1941, էջ 5, ծան. 1:

[3] Առանձնապես հետաքրքիր է, որ Ագաթանգեղոսի մոտ Մեծ Հայաստանն անվանված է «պատսակիրտ կայսերաց», տե՛ս պլ. ԺԲ, 127, էջ 73 (1909):

[4] Տե՛ս Ագաթանգեղոս, Գ, 38, էջ 25, ԺԲ, 129, էջ 75. ԺԴ, 154, էջ 87 և ԺԵ, 161, էջ 90:

տոննությունը ճանաչվել էր Հռոմեական պետության մեջ որպես ազատ և իրավահավասար կրոն:

Ըստ այս դիտողությունների՝ կարող է թերևս ճիշտ լինել Խորենացու Պատմության մեջ պահպանված ավանդությունը[1], որ՝ Գրիգոր Լուսավորիչը քահանայապետ էր կարգվել, և Սուրբ Թադեոս առաքյալի աթոռն էր նստել Տրդատի թագավորության (298–330) 17-րդ տարում, այսինքն՝ ճիշտ և ճիշտ Միլանի հրովարտակից անմիջապես հետո [298+ 17] = 314/315 թվականին: Նույն այս ավանդությունը պահպանվել է նաև «Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթևի» գրվածքում, որի մեջ Լուսավորչի քահանայապետ կարգվելը ցույց է տրված Տրդատ Մեծի թագավորության ոչ թե տասնյոթներորդ, այլ տասնութերորդ տարում, այսինքն՝ [298+18] = 315/316 թվականներին[2]:

Մենք տեսանք, վերև, որ Գառնիի հունարեն արձանագրությունը վերագրվելու է Տրդատ Մեծին, և գրված պիտի լինի նրա թագավորության այն ժամանակաշրջանում, երբ Հայաստանում հաստատվել էր արդեն քրիստոնեությունը, և ինքը Տրդատն ընդունել էր նոր կրոնը: Արդ՝ Տրդատ Մեծի և հայերի քրիստոնեության դարձը դնելով 313 թվականից հետո՝ արձանագրության ժամանակը կարելի է ենթադրել 315–330 թվականների միջոցում: Ուշագրավ է, որ Մովսես Խորենացին նույնպես վկայում է (II, 90), որ Տրդատ Մեծի «հելլենացի գրով» արձանագրությունը գրված է եղել մոտավորապես այն ժամանակներում, երբ Գրիգոր Լուսավորչի Արիստակես որդին վերադարձել էր Նիկիայի ժողովից:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, Գառնիի հունարեն արձանագրության ժամանակը որոշվում է ըստ վերոհիշյալ մեր դիտողությունների 314/315 թվականից հետո, և Տրդատ Մեծի մահից՝ մոտավորապես 330 թվից առաջ:

***

Գառնիի արձանագրության մեր նոր ընթերցումը, ինչպես և Արմավիրի հունարեն արձանագրությունների մեր նոր լուսաբանությունը, ինձ թվում է, կարող են նպաստել ուշադիր նոր քննության, թե ո՞րը են կատարվել Գառնիի ամրոցը և նրա մեջ գտնվող հնթանոսական տաճարը:

---

[1] Գիրք II, գլ. ՂԱ, էջ 242:

[2] Տե՛ս «Սովորք Հայկականք», Զ. Վենետիկ, 1853, էջ 9:

Այս խնդրի վրա, որ բացառիկ մեծ կարևորություն ունի հայկական արվեստի ու ճարտարապետության պատմության համար՝ անհրաժեշտ է մանրամասն կանգ առնել, որովհետև այդ մասին մինչ այժմ եղած ենթադրությունները, ինչպես կտեսնենք, վիճելի են ու անբավարար:

Ինչպես հայտնի է, դեռևս, XIX դարի առաջին կեսում Հայաստան այցելած եվրոպական ճանապարհորդները՝ Ջեյմս Մորիները[1], Ռ. Կեր-Պորտերը[2] և Ֆ. Դյուբուան[3] նկարագրել են Գառնիի ամրոցի ավերակները և իրենց հիացմունքն են հայտնել նրանց քանդակազարդ սքանչելի բեկորների առթիվ: Այս ճանապարհորդների նկարագրություններից երևում է, որ բացի հեթանոսական տաճարից Գառնիի ամրոցի մեջ եղել են նաև արքունի պալատը ու գուցե և այլ շենքեր[4]:

Ճանապարհորդները միանգամայն ճիշտ էին որոշել, որ Գառնիի սյունաշարքով շրջապատված շենքը հեթանոսական տաճար է: Թորամանյանի կարծիքը, որ այդ շենքը «արքայական ընդունելության դահլիճ է... կամ հովանոց», ինչպես վերև ասացինք, հավանական չէ: Առանձնապես հետաքրքիր է տաճարի վերականգնման Դյուբուայի փորձը, որը մատնանշել էր, որ հիմնվելով եղած բեկորների վրա՝ հնարավոր էր տաճարը վերակառուցել առանց անտեսելու նրա որևէ կարևոր մասը (III, էջ 687): Եվ, իրավի, նա հենց ինքը կարողացել էր մոտավորապես ուրվագծել տաճարի իր վերակազմած արտաքին ձևակերտը[5]:

Նոր ժամանակներում Գառնիի ամրոցի, հատկապես, նրա մեջ գտնվող հեթանոսական տաճարի ավերակների վայրում լուրջ

---

[1] J. Morier, A Second journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople (1810–1816), London, 1818.

[2] R. Ker-Porter, Travels in Georgia, Persia, Armenia, ancient Babylonia, etc. (1817–1820), 2 vol., London, 1821–1822 (Գառնիի մասին երկրորդ հատորը):

[3] F. Dubois de Montrereux, Voyage autour du Caucase (1833–1834). Paris, 1839–43, vol. 6 (Գառնիի նկարագրություներ գտնվում է երրորդ հատորում):

[4] Գառնիի ամրոցի մեջ գտնվող արքունի պալատական շենքերը հիշատակում է նաև Ն. Բունիաթյանը, տե՛ս «Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնիի ամրոցում», Երևան, 1933, էջ 3, 4, 12:

[5] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 364:

գիտական աշխատանք են կատարել ակադ. Ն. Մառը մասնակցությամբ ակադ. Յ. Ի. Սմիրնովի և ճարտարապետ-արվեստագետ Կ. Կ. Ռոմանովի: 1910–1911 թվականներին նրանք այստեղ կատարել են պեղումներ, բաց են արել կիսով չափ հողի տակ թաղված տաճարը և կատարել են հուշարձանների բնկորների հաշվառում ու գրանցում: Մառը և Սմիրնովը ևս, ինչպես և Մորիերն ու Դյուբուան, այդ շենքը համարել են անտիկ հեթանոսական տաճար և ենթադրել են, որ նա հռոմեական շինություն է և կառուցված է Ք. թվականության II կամ III դարում, այսինքն՝ հայ Արշակունիների իշխանության ժամանակ[1]:

Ավելի մոտ ժամանակներում Թորամանյանը, որը տրամադիր էր համարելու Գառնիի տաճարը «արքայական բնդունելության դահլիճ... կամ հովանոց», սրա շինության ու շինողի մասին հայտնել է հակասական կարծիքներ: Իր հնագույն աշխատություններում նա հակված էր, համաձայն Խորենացու վկայության, այս շենքը վերագրելու Տրդատ Մեծին[2], սակայն իր ավելի ուշ չրջանի գրվածքներում նա հավանական էր համարում, որ Գառնիի թե՛ ամրոցը և թե՛ հովանոցը չինել էր Տրդատ Ա-ն Հռոմից բերած ճարտարապետներով[3]:

Ինչպես հայտնի է, վերջին այս կարծիքն աշխատել էր հիմնավորել ու ապացուցել նաև Ն. Բունիաթյանը հուշարձանի հնագիտական-ճարտարապետական ուսումնասիրությամբ:

> «Հուշարձանի էլ ավելի ուշադիր քննումը,— ասում է Բունիաթյանը,— մեզ բերում է այն եզրակացության, որ տաճարի ընդհանուր կառուցվածքը և մանրամասնությունների մշակումը բավականաչափ ճիշտ կերպով որոշում են հուշարձանի ժամանակը ոչ ուշ քան առաջին դարը Ք. թվ.»[4]:

Բունիաթյանի կարծիքով, Գառնիի կառուցվածքների չինողը

---

[1] Տե՛ս Н. Я. Марр, Кавказ и памятники его духовной культуры, Петроград, 1919, էջ 15. նաև նույնի՝ «Ани», Ленинград-Москва, 1934, էջ 49:

[2] Տե՛ս «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երևան, 1942, էջ 167, 174:

[3] Տե՛ս նույնը, էջ 85 և 282:

[4] Տե՛ս Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում, էջ 5:

ո՛չ թե Տրդատ Մեծն էր, այլ Տրդատ I-ը, որը Հռոմից իր հետ բերել էր քարագործ վարպետներ[1]:

Նույն այս ենթադրությունը վերջին ժամանակները տիրող է Հանդիստանում նաև Գառնիի նորագյուտ հունարեն արձանագրության առթիվ գրված հոդվածներում, որոնք լույս են տեսել Հայաստանի պարբերական մամուլում:

Արդ՝ ճի՞շտ է արդյոք հնագետների և ճարտարապետների ընդհանուր այդ համոզումը, որ Գառնիի կառուցվածքները Արշակունյաց շրջանի և, հավանորեն, Ք. թվականության առաջին դարի գործ են և չինված են հռոմեական ճարտարապետական արվեստի ոճով ու Հռոմից բերված վարպետների ձեռքով:

Իմ «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանության մեջ» դնկուցման վերջում ես նոր ենթադրություն էի արել, որ Գառնիի հեթանոսական տաճարի չինության վերագրվելու է ո՛չ թե Արշակունյաց շրջանին, այլ Արտաշեսյան կամ Երվանդյան: Նույն դնկուցման մեջ ես մատնանշել էի, որ այս կարևոր խնդիրը պետք է լուծեն մասնագետ արվեստագետները հուշարձանի հնագիտական-ճարտարապետական մանրազնին քննության:

Սակայն ավելի մոտ ծանոթանալով այս խնդրին՝ ես համոզվեցի, որ Գառնիի ամրոցի ու տաճարի չինության ժամանակաշրջանի լուսաբանության համար անհրաժեշտ է, ամենից առաջ, լավ տեղյակ լինել հայ ժողովրդի պատմությանը և, գլխավորապես, քննական-պատմական այն նոր ուսումնասիրություններին, որոնք լույս են տեսել վերջին տասնամյակներում:

Մենք կտեսնենք ներքև, որ վերաքննության ենթարկելով Գառնիի հուշարձաններին վերաբերող հնագիտական-ճարտարապետական ուսումնասիրությունները պատմական տեսանկյունով՝ ո՛չ միայն պարզվում է այդ հուշարձանների չինության ժամանակը, այլ նաև պարզ որոշվում է Հայաստանի ճարտարապետական արվեստի այն փառահեղ հին ժամանակաշրջանը, որն անտեսվել է թե՛ հին և թե՛ նոր հնագիտական ու պատմական-ճարտարապետական աշխատություններում:

---

[1] Տե՛ս Ն. Բունիաթյան, էջ 4-6:

***

Խիստ տարօրինակ է, որ հնագետները, որոնք Գառնիի ամրոցը և տաճարը կառուցված են համարում հայ Արշակունիների ժամանակ՝ աչքաթող են արել, որ այդ ամրոցը գոյություն է ունեցել, ինչպես պարզորոշ վկայում է Տակիտոսը, Արշակունիների Հայաստանում հաստատվելուց առաջ: Դեռևս Ք. Թվականության 51 թվականին, երբ վրաց Փարասման թագավորի որդին՝ Հռադամիզդը, կռիվ էր սկսել Հայաստանի թագավոր Միհրդատ Վրացու դեմ՝ վերջինս, պատմում է Տակիտոսը[1], հանկարծակի ներխուժումից ահաբեկված՝ փախել ու պատսպարվել էր Գառնի ամրոցում (in castellum Gorneas):

Տակիտոսի վկայություններից դժվար չէ հետևցնել, որ Գառնին արդեն այն ժամանակ անմատույց բերդ էր՝ շրջապատված անառիկ պարիսպով: Դժվար չէ նաև կռահել, որ նույն այդ ժամանակ, I դարի առաջին կեսում (Ք. Թվ. հետո), գոյություն են ունեցել, բացի Գառնիի ամրոցի պարիսպներից, նաև նրա մեջ գտնվող պալատական շենքերը և հեթանոսական տաճարը: Այս պարզ երևում է նրանից, որ, ինչպես ամրոցի պարիսպները, նույնպես և արքունի պալատն ու տաճարը, միևնույն չինարարական տեխնիկայի ու ժամանակի կառուցումներ են, և չինված են մեծազանգված սրբատաշ որձաքարերով՝ կապված միմյանց հետ երկաթե կապերով[2]:

Շատ պարզ է, իհարկե, որ Գառնիի մոնումենտալ հուշարձանների կառուցումը միանգամայն անհավանական կլիներ ենթադրել օտարազգի թագավորների անկայուն իշխանության ժամանակ Հայաստանում (I դարի առաջին կեսում Ք. Թվ. հետո) և կամ Արտաշեսյանների թագավորության խռովահույզ և երերուն շրջանում (I դարի երկրորդ կեսում Ք. Թվ. ա.): Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն, ավելի քան հավանական կարելի է համարել, որ Գառնիի վերոհիշյալ կառուցվածքները ոչ մի կապ չունեն հռոմեական ճարտարապետության և հռոմեական արվեստի հետ: Նրանք, հավանորեն, Հայաստան մուտք գործած հելլենիստական կուլտուրայի մի մնացորդ են, և վերագրվելու են

---

[1] Tacitus, Ann., XII, 15.

[2] Համեմատեի Թ. Թորամանյան, Նյութեր, էջ 136, 145 և 282:

կամ Առաջին Արտաշեսյանների և կամ Երվանդյանների թագավորության ժամանակաշրջանին:

Պետք է ասել, որ Բունիաթյանը, համարելով Գառնիի տաճարը հռոմեական տիպի տաճար՝ աշխատել է իր այս պնդումը հիմնավորել չնչի հնագիտական-ճարտարապետական քննությամբ: Սակայն, իրապես, ինչպես դժվար չէ տեսնել, նրա քննությունը հաստատում է, ընդհակառակը, որ հուշարձանը կառուցված է ո՛չ թե հռոմեական, այլ հելլենիստական ոճով:

Ուշագրավ են այդ տեսակետից նրա հետևյալ դիտողությունները.

> *1. Հունական տաճարները,— ասում է Բունիաթյանը,— կանգնած էին բոլորովին առանձնացած և տեսանելի էին բոլոր կողմերից. մինչդեռ հռոմեական տաճարները նայում էին, գլխավորապես, ֆորումի կամ հրապարակի կողմից, ուր դրանք դուրս էին գալիս իրենց արտաքին ճակատով: **Այս տեսակետից մեր հուշարձանը մոտենում է հունական ձևերին**[1]:*
>
> *2. «Տաճարն [Գառնիի] իր պլանի բնույթով կարելի է վերագրել **հունական** այսպես կոչված «հելլենիստիկյան (հարյուրոճյան) պերիպտեր»-ների տիպին, այսինքն տաճար, որ բոլոր կողմերից շրջապատված է սյունաշարքով և ունի պորտիք 6-ական սյուներով՝ ծայրի (տորցերի) ֆասադներից յուրաքանչյուրում»*[2]*:*
>
> .....
>
> *«Հռոմայեցոց մոտ ամբողջ չնչը շրջապատող կոլոննադի և անբնդհատ աստիճանավոր ստիլոբատի բացակայությունը որոշ չափով զրկում է տաճարներն այն ամբողջությունից, որ մենք տեսնում ենք **հունական տաճարներում**»*[3]*:*

*3. «Տաճարի օրղները **հոնիական** է: Հռոմայեցոց տաճարներում այդ օրդները գործադրվում էր հազվագյուտ դեպքերում»*[4]*:*

4. «Խարիսխն աչքի է ընկնում զուգեցիկ և ճաշակավոր պրոֆիլով (պատկ. 23, 29, 86)», թեկուզ և նա չի պարունակում շատ

---

1 Տե՛ս Բունիաթյան, Հնձանոսական տաճար.... էջ 6:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 Նույնը, էջ 8:

մանր մասեր, որոնք խորթ են հասարակ օրդներներին: Նրան կարելի է նմանեցնել այսպես կոչված «Ատտիկյան բազաներին»[1]:

*5. «Առաստաղի այսպիսի նուրբ զարգացումը հիշեցնում է **հունական ծածկերը**»*[2]:

Գառնիի տաճարի ճարտարապետական ոճի այս առանձնահատկությունները, ինչպես տեսնում ենք, բնավ չեն կարող ապացույց ծառայել, որ այդ հուշարձանն իրր թե պատկանում է հռոմեական արվեստի վաղագույն շրջանին:

Պետք է ասել, որ հուշարձանի ճարտարապետական ոճի նկատմամբ Բունիաթյանին համամիտ է նաև Թորամանյանը: Սակայն նրա դիտողությունները ևս հուշարձանի հռոմեական ոճի մասին չեն կարող համոզիչ համարվել:

Ենթադրելով, որ

> *«Հռոմի մեջ դաստիարակություն ստացող Տրդատը միայն կարող էր այս ճաշակը ունենալ և անոր ոճն ընդհանրացնելու ձգտիլ Հայաստանի մեջ»*[3]:

Թորամանյանը միաժամանակ ինքը չատ ճիշտ մատնացույց է արել, որ Տրդատի կառուցած չենքի քանդակները միանգամայն օտար են հռոմեական արվեստին:

> *«Երբ քանդակներու մասերն առանձին քննենք,— ասում է նա,— մեծ մասամբ հռոմեական արվեստին օտար կգտնենք. և ինչ մասեր որ Հռոմի արվեստին կպատկանին, անոնք ալ թե՛ համաչափություններով, և թե՛ քանդակագործական ոճով դարձյալ տեղական ոճին ենթարկված բոնի նմանություններ են»*[4]:

Մեր այս թռուցիկ դիտողություններից անգամ երևում է, որ Գառնիի հեթանոսական տաճարի ճարտարապետական ոճի խնդիրը կարոտ է նոր ու ավելի ուշիմ քննության: Այդ տաճարի տիպը և ճարտարապետական ձևերը, ինչպես ասացինք, հռոմեական չեն, և համարվելու են հելլենիստական:

---

[1] Տե՛ս **Ն. Բունիաթյան**, Հեթանոսական տաճար..., էջ 9:

[2] Նույնը, էջ 13:

[3] Տե՛ս **Թ. Թորամանյան**, Նյութեր..., էջ 174:

[4] Նույն տեղում:

***

Գառնիի կառուցվածքների չինության ժամանակի խնդիրը վերաբննելիս՝ հնագետներն ու ճարտարապետները, նախ և առաջ, պետք է նկատի առնեն այն նոր լուսաբանությունները, որոնք ես տվել էի իմ նախորդ աշխատություններում Երվանդյան Հայաստանի և Երվանդաշատի ու Արմավիրի մասին:

Դեռևս 1930 թվականին «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» իմ աշխատության մեջ ես մատնացույց էի արել, որ Երվանդաշատ քաղաքը հիմնել էր III դարի վերջերում կամ II դարի սկզբում Ք. թվականությունից առաջ Երվանդ Վերջինը, որն իր աթոռանիստ կենտրոնն Արմավիրից փոխադրել էր Երվանդաշատ[1]:

Արմավիրի հունարեն արձանագրությունների իմ նոր լուսաբանությունը, որ արդեն լույս է տեսել, վերջնականապես հաստատում է նոր այդ հետևությունը, և միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս Երվանդյան Հայաստանի մասին աննելու կարևոր ու հետաքրքրական նոր եղրակացություններ:

Արձանագրությունների ընթերցմամբ պարզվեց, որ Արմավիրում, որը Երվանդյանների կրոնական կենտրոնն էր՝ գոյություն է ունեցել հունական տաճար, որի սպասավորները եղել են հելլեններ կամ հելլենացած տեղացիներ: Նաև հայտնի եղավ, որ Երվանդյանների մայրաքաղաքը Արմավիրից Երվանդաշատ փոխադրվելուց հետո, այս վերջինում իշխում էր Երվանդ Վերջինի եղբայր Միթրասը, որը զերազույն քուրմն էր այս կրոնական կենտրոնի: Արմավիրի հունարեն արձանագրությունները, բացի այդ, ցույց են տալիս, որ հելլենիզմը մուտք էր գործել և տարածվել Երվանդյան Հայաստանում դեռևս սելևկյանների ժամանակ III դարում Ք. թվականությունից առաջ, և որ այնտեղ գոյություն են ունեցել հունական տիպի տաճարներ:

Հելլենիստական կուլտուրայի գոյությունն Այրարատում և Շիրակում Երվանդյանների իշխանության ժամանակ՝ բացառիկ կարևոր մի փաստ է, անշուշտ, որ այսուհետև պետք է միշտ նկատի ունենան ո՛չ միայն պատմագետները, այլև հնագետները և արվեստագետները: Այս վերջինները, գտնվելով Խորենացու ու ավանդական հայ պատմության ազդեցության տակ, և համարե-

---

[1] Տե՛ս Я. А. Манандян, О торговле и городах Армении, էջ 96-98:

յով Երվանդաշատի հիմնադիր Երվանդ Վերջինին՝ Արշակունյաց ցեղից՝ թյուրիմացաբար կարծել են, որ Երվանդյան շրջանի հայկական հնությունները վերաբերում են Ք. թվականության I դարին, այսինքն՝ Արշակունյաց ժամանակաշրջանին: Այս հիմնական սխալն է պատճառը, որ Թորամանյանը խիստ հազվադեպ համարելով նախաքրիստոնեական շենքերի գոյությունը Հայաստանում՝ հայկական ճարտարապետության հնագույն շրջանը ենթադրում է Ք. թվականության I դարերից մինչև V դարը[1]:

Իրապես, ինչպես այժմ պարզվում է, հայկական ճարտարապետության ու արվեստի վաղագույն շրջանի հուշարձանները, որ անտեսել են հնագետները, պետք է ընդունել Երվանդաշատի, Երվանդակերտի, Արմավիրի, Գառնիի և նրանց ժամանակակից այլ տեղերի հնությունները: Այս վաղագույն ժամանակների ճարտարապետության բնորոշ ու հիմնական հատկանիշն է եղել կառուցումների նման չինկակերպը՝ նրանց առանձնահատուկ շինարարական տեխնիկան:

Հայտնի է, որ ինչպես Գառնիի ամրոցի ու տաճարի, նույնպես և Երվանդյան Հայաստանի մյուս կենտրոնավայրերի պարիսպները ու շենքերը շինված են եղել, մեծ մասամբ, մեծադանդված որձաքարերից, որոնք միմյանց միաձուլված են եղել երկաթով ու կապարով: Գուցե հենց այս է եղել պատճառը, որ հնագույն այդ հուշարձանները, անվնաս մնալով հաղարամյակների ավերիչ ազդեցությունից՝ պահպանվել են մինչև մեր օրերը:

Թորամանյանի հաղորդած տեղեկություններից երևում է, որ Երվանդաշատի ու Գառնիի որմնաշինության տեխնիկայի տարբերությունը միայն այն է, որ Երվանդաշատի մեծադանդված քարերն անտաշ են[2], իսկ Գառնինը՝ սրբատաշ: Եթե Թորամանյանի այս ցուցումը հաստատվի Երվանդաշատի ավերակների նոր հետազոտությամբ, այդ դեպքում՝ կարելի կլինի ենթադրել, որ Գառնիի որմնաշինությունը զարգացած ձևն է Երվանդաշատի շինարարության: Այս զարգացած ձևի ժամանակը հավանական կլինի ենթադրել կամ նույն Երվանդյան ժամանակաշրջանում, կամ թերևս սրան հաջորդող Արտաշեսյան շրջանի առաջին կեսում, երբ Հայաստանում Տիգրան-Արտավազդի ժամանակ ուժգին կերպով զարգանում էր հելլենիստական կուլտուրան:

---

[1] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., էջ 84:

[2] Նույնը, էջ 145:

Ինձ ավելի հավանական է թվում առաջին ենթադրությունը, որովհետև, ինչպես ներքև կտեսնենք, հենց երվանդյանների ժամանակ Գառնիի չենքերի սրբատաշ քարերով կառուցված է եղել նաև Արմավիրի պարիսպը:

Թորամանյանը, թեև չի կարողացել որոշել վերոհիշյալ հուշարձանների ժամանակը, սակայն միանգամայն ճիշտ մատնանշել է, որ նախաքրիստոնեական ժամանակներում կառուցված Հայաստանի բերդերը, որոնք չինված են մեծաղանգված տաշված որձաքարերով՝ չարունակությունն են ու զարգացումը Հայաստանի մեջ նախապես գոյություն ունեցած բազմաթիվ կիկլոպյան շինությունների[1]:

Թորամանյանի այս դիտողությունն արժանի է հատուկ ուշադրության: Իմ «Ֆիննական տեսություն հայ ժողովրդի պատմության» առաջին հատորում և իմ «Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության» ռուսերեն աշխատության մեջ նույնպես մատնացույց էր արված, որ հին հայերի կուլտուրական զարգացման հիմքը և պատվանդանը կազմել է Ուրարտուի բարձր կուլտուրան, և որ հայերն իրենց հարեթական նախահայրերից և, մասնավորապես, ուրարտացիներից ժառանգել էին մետաղագործությունը և արհեստները[2]: Արդ՝ խիստ ուշագրավ է, որ նրանք իրենց պատմական անցյալի հնագույն շրջանում ժառանգել էին ուրարտացիներից նաև սրանց քարաշինական բարձր տեխնիկան:

***

Մեր այս նոր դիտողությունները կարող են, ինչպես տեսնում ենք, բոլորովին նոր ընթացք տալ հայկական ճարտարապետության հնագույն շրջանի հետագա ուսումնասիրություններին: Ուստի ավելորդ չեմ համարում հիշատակել ավելի ընդարձակ կերպով Երվանդաշատի ու այլ վայրերի հուշարձանները, որոնց չինարարական տեխնիկան կապ ունի Գառնիի ամրոցի ու տաճարի չինարարության հետ:

Բացի Գառնիի ամրոցից ու տաճարից, որ չինված էին երկաթե

---

[1] Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., էջ 85:

[2] Տե՛ս Հ. Հ. Մանանդյան, Ֆիննական տեսություն, հատ. Ա, Երևան, 1944, էջ 34 և «Краткий обзор истории древней Армении», Москва-Ленинград, 1943, էջ 5-6:

կապերով միմյանց միացված մեծազանգված ու մաքուր տաշված պինդ որձաքարերով՝ Թորամանյանի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» ժողովածուի մեջ մատնանշված են նաև համապատասխան հետևյալ հուշարձանները.

1. «Նյութեր...», էջ 283՝

«Այս տարվան ուղևորությանս վերջին սահմանը եղավ Երվանդաշատ և Երվանդակերտ ըսված երկու հին քաղաքներու ավերակները, որոնք, ըստ Խորենացիի, կգտնվին Ախուրյան գետի աջ ու ձախ ափերուն վրա, Արաքս գետի խառնարանին մոտ:

*Ճանապարհս Բագարանն էր, ուստի առաջին անգամ հասա Ախուրյանի աջ ափը, ուր սկսաք է գտնվեր Երվանդաշատը: Առաջնորդներս մի քանի ցիրուցան ավերակներ, ցույց տվին գետեղրին մոտիկ: ... Ասոնցմե քիչ հեռու, դեպի հյուսիս-արևմուտք կնշմարվի մի ուրիշ չինություն, որ իսկապես բազմաղարյան հնության դրոշմն ունի իր վրա. **որձաքարի մեծամեծ զանգվածներով չինված են պատերը, որ ըստինքյան հայ չինություններուն ամենահին չրջանին կվերաբերին»:***

2. Նույնը, էջ 284՝

*«Երբ անցա Ախուրյանի ձախ ափը, արդեն ամեն բան կերպարանափոխ եղավ, ամեն քայլափոխին կնկատվեն մեծամեծ չինությանց հետքեր՝ ցրված մինչև Հաջի-Բայրամ գյուղի ստորին սահմանները: Գետեղրի հետ միասին մինչև Հաջի-Բայրամ ձգվող բարձր սարն այսօր ալ ինքնին մի մեծ բերդ կարելի է համարել, և ամեն հարմարություններ կներկայացնեն ի հնումն բոլորովին անառիկ դարձնելու: Արդեն կատարին վրա ամբողջ երկայնությամբ կերևին **որձաքարերով հյուսված ահավոր պարիսպներու մնացորդները,** որոնք տեղ տեղ 4-5 մետր բարձրությամբ կերևին:*

*Բացի սարը վերևեն չրջապատող պարիսպներեն, նաև կերևին առանձին մեծ բերդամասերու բաժանումներ՝ լանջի զառիվայրեն ցած ձգված, **որոնց մի տեսակ նմանություններն են Անիի միջնաբերդի ստորոտի բաժանումները Ղզղ-Ղալայի հանդեպ»:***

3. Նույնը, էջ 285՝

*«Գյուղը [Հաջի-Բայրամը], կարելի է ըսել, ամբողջովին չրջապատված է պարտեզներով ու բանջարանոցներով, ասոնց բոլորտիքը իրրև չրջանակ չարված են հին չինություններե քանդված **մեծազանգված քարեր, որոնց վրա պահված են տակավին երկաթի կապերու տեղերը** գրեթե նույն ձևով, ինչպես որ*

Անիի մեջ գոյություն ունի Միջնարերդի՝ Ծաղկոցաձորի կողմի դռան քառակուսի բուրգերու վրա»:

4. Նույնը, էջ 330՝

*«Հսկա որձաքարերով բերդեր, պարիսպներ և ուրիշ դանադան շենքեր շինելու սովորությունը շատ հին է հայոց մեջ, գոնե առնվազն V դարեն անդին պետք է փնտրել առանց կրաշաղախի որձաքարերով շենքեր կառուցելու սովորությունը: V դարեն մեղի հասած հրաբխային սրբատաշ քարերով կրաշաղախ շինվածքներու օրինակներ քիչ չեն: Նույնիսկ III և IV դարերուն ալ գտնվելուն մեծ հավանականություն կա, այս պատճառով ալ ինձի հավանական կթվի, որ **Տեզորի, Բագարանի և Երվանդակերտի առանց շաղախի հսկա որձաքարերով շինված բերդերը նախաքրիստոնեական դարերուն կպատկանին»:***

5. Նույնը, էջ 84-85՝

*«Քարի գործածության սովորությունը, ինչպես երևում է, ժառանգություն մնացել է մասամբ պարսիկներեն, բայց առավելապես ուրարտացիներեն: Այս վերջիններիս շինությանց մնացորդները, որ դեռ գոյություն ունին մեր օրերուն, շինված են տաշված ու կոկված բազալտ քարերով (բացառությամբ ամրոցների պատերի): Այս օրվան մեր թանգարաններում պահվող բոլոր բևեռաձև արձանագրությունները՝ հղկված բազալտի վրա փորագրված լինելն զատ, կան նաև շինությանց կարևոր մնացորդներ, որոնք ցույց են տալիս, թե մասնավոր շենքեր ևս շինվում էին բազալտի մնծածավալ հղկված քարերով: **Այս մնացորդները կարելի է տեսնել Արմավիրում, Արտաշատի տեղում, Դվինում, նույնիսկ Անիում, ուր նախաքրիստոնեական ժամանակի շինված բերդերը տաշված որձաքարով են շինված: Անշուշտ, այս երևույթը պետք է համարել Հայաստանի մեջ նախապես գոյություն ունեցող բազմաթիվ կիկլոպյան շինությանց շարունակությունը և նրանց զարգացումը»:***

Թ. Թորամանյանի այս նկարագրությունները և դիտողությունները, անշուշտ, խիստ կարևոր են, որովհետև նա հայկական հին ճարտարապետությունն ուսումնասիրել է քննական-համեմատական եղանակով, և Հայաստանի հուշարձանների մասին տալիս է միշտ հմտալից ու արժեքավոր բացատրություններ: Սակայն նա, անիրազեկ լինելով քննական հայ պատմագիտական նորագույն նվաճումներին՝ չի կարողացել որոշել Երվանդաշատի

և Երվանդակերտի Հնությունների ճշգրիտ ժամանակը, և ենթադրել է, որ դրանք նախաքրիստոնեական ժամանակի և Արշակունյաց շրջանի հնություններ են: Իրապես, ինչպես վերև տեսանք, Երվանդաշատի ու Երվանդակերտի բերդերն ու շենքերը կառուցել էր Երվանդ Վերջինը՝ III դարի վերջերում կամ II դարի սկզբներում Ք. թվականութիւնից առաջ:

Առանձին ուշադրութեան արժանի են Թորամանեանի դիտողութիւնները երկաթի գործածութեան մասին Երվանդաշատի ու Գառնիի բերդերի ու շենքերի կառուցման ժամանակ, որ ավելորդ չեմ համարում մենք բերել ամբողջութեամբ:

1. **Նյութեր**, էջ 145–146՝

«Հայաստանում երկաթի բաղմակողմանի գործածութեան մասին տեղեկութիւններ շատ կան գրական աղբյուրներում: Հնագիտական հետազոտութիւնները ևս պարզել են, որ երկաթը շատ է գործածված եղել Հին Հայաստանում. այդ տեղեկութիւններից մի քանի կարևորագույնների մասին կհիշատակեմ այստեղ: Ըստ Մովսես Խորենացու, առաջին դարում, Երվանդաշատի բերդի կառուցման ժամանակ, Երվանդը չինել տվեց երկաթե սանդուխներ, որոնց չինութեան կերպերը թեև այժմ մեզ հայտնի չեն, բայց պետք է որ այն ժամանակի երկաթագործութիւնը զարգացման որոշ աստիճանի հասած լիներ: Խորենացին գովեստով է խոսում այդ սանդուխների ճարտարորեն չինված լինելու մասին: Սակայն **ես ինքս տեսել եմ Երվանդաշատի բերդի մեջ պարիսպներից թափված քարերի վրա երկաթե կապի նշանները:** Երվանդաշատի բերդը չինված էր հնագույն պարիսպների նման, **մեծազանգված որձաքարի անտաշ քարերով, որոնք միմյանց մոտ լավ ամրացնելու համար, կպցված էին երկաթե կապերով,** թեև այժմ երկաթները հանված են, սակայն կապի տեղերը փորված մնում են քարերի վրա: Հաջիբայրամ գյուղում շատ կարելի է տեսնել այս քարերից, որոնք ցած են գլորվել բերդից, և գյուղացիք, օգտվելով մեծ զանգվածներից, գլորել, բերել են ու իրենց մզգաստաններին և այգիների չուրջը պարիսպ չինել:

Նույն երկաթե կապի հետքեր այժմ կարելի է տեսնել Գառնիի Տրդատա բերդի ավերակների մեջ: Այս բերդն ու նրա մեջ հոնական ոճով կառուցված գեղեցիկ հովանոցը չինված են

մեծազանգված սրբատաշ որձաքարով ու կրաշաղախով[1], *այնուամենայնիվ բոլոր քարերը միացած են երկաթե կապերով: Ոչ միայն պատերից բանդված քարերի, այլև կանգուն մնացած պարիսպների վրա, քարերի միացման տեղում, **նկատվում են երկաթե կապերի գոյության ապացույցները**»:*

*2. **Նույնը**, էջ 355՝*

«Արարատյան դավառներու մեջ, բացի Գառնիեն և Երվանդաշատեն, ուրիշ ոչ մի տեղ հին հիշատակարաններու մեջ չեմ տեսած երկաթի գործածություն: Ասոնք ալ հազիվ հասնեն մինչև IV դար: Անիի մեջ ալ կան թեև երկաթի գործածության հետքեր, անոնք ալ կպատկանին չատ հին դարերու՝ հավանաբար կամսարականներու տիրապետության չրջանեն ավելի առաջ»:

Թորամանյանի այս վկայությունները երկաթե կապերով միացված քարերի մասին Երվանդաշատում, Գառնիում և Անիում, թեև չատ կարևո՛ր են ու հետաքրքիր, սակայն նրա այս վկայություններին մեջ երկաթի գործածությունը հայկական ճարտարապետության հին չրջանում թյուրիմացարար ցույց է տրված Ք. թվականության IV դարում: Մենք տեսանք սակայն վերև, որ Երվանդաշատ քաղաքը և նրա ամրություններն ու պարիսպները կառուցել էր, ինչպես չատ ճիչտ վկայում է Խորենացին, Արտաշեսյան դինաստիայի հիմնադրի, Արտաշես Ա-ին, նախորդը՝ Երվանդ Վերջինը: Շատ պարզ է, ուրեմն, որ Երվանդաշատում և, ամենայն հավանականությամբ, նաև Գառնիում ու Անիում՝ քարերի կապումն իրար երկաթե կապերով՝ որմնաշինության հատուկ եղանակ է, որը գործածական է եղել Հայաստանում Թորամանյանի մատնանչած ժամանակից ավելի քան հինգհարյուր տարի առաջ՝ Երվանդյանների իչխանության ժամանակաչրջանում:

***

Երվանդաշատի կառուցման ժամանակի ճչտումը կարող է թերևս ելակետ ծառայել որոչելու, բացի Գառնիի ամրոցի ու տաճարի, նաև մեծազանգված որձաքարերով չինված և երկաթե

---

[1] Թ. Թորամանյանի այս տեղեկությունը կարուո է ստուգման, որովհետև Ն. Բունիաթյանը, որը չափագրել է Գառնիի հուչարձանները, վկայում է, որ չնքերի պատերը սրբատաչ քարերով էին առանց չաղախի, տե՛ս «Հեթանոսական տաճարը...», էջ 7:

կապերով ամրացված Արմավիրի ու Անիի նախնական չինուԹյունների ժամանակը:

1880 Թվականին Արմավիրում պնդումներ Լին կատարել Ա. Դ. Երիցյանը և Ա. Ս. Ուվարովը: Վերջինս տվել է Արմավիրի բլրի գագաԹի վրա գտնվող բերդապարիսպի ու նրա աչտարակի հետևյալ նկարագրուԹյունը[1].

«Ինչպես ուղիղ պարիսպները, նույնպես և աչտարակի պատերը՝ ունեն միևնույն լայնուԹյուններ — մոտ 4 արշին: Ներսի ու դրսի կողմից նրանք երեսապատված են քառակուսի մեծ քարերով սև-կապտավուն բազալտի լավայից, որոնք չորս կողմից ուղիղ տաշված են: Այդ քարերն ունեն երկու արշին հաստուԹյուն և դրանց կողքերում նկատելի են փոսեր՝ ինչ-որ մետաղյա պահանգակապեր ամրացնելու համար: Մակերևսի վրա չրջապատը տաշված է ուղղաձիգ երիզավոր ձևով, իսկ ամբող միջին մասը դուրս է ցցված դարավանդի (bossage) նման: Այսպիսով քարերը, դարսված լինելով միասին՝ չրջագծում են իրենց ակոսիկով ամբողջ քառանկյուն մակերեսը, ուստի և դարավանդը լավ աչքի է ընկնում: .....

«Պատերի այսպիսի որմածքը,— ասում է Ուվարովը, — ինչպես ես հետո ցույց եմ տալու՝ նույնանման է հայկական IV դարի ուրիչ հուչարձանի [Գառնիի] որմածքին և, հետևապես, սրանք հին Արմավիրի ավերակները չեն, այլ ինչ որ բերդի նույն IV դարի Քրիստոսից հետո»:

Ս. Ուվարովը, ինչպես տեսնում ենք, համարում է Արմավիրի ու Գառնիի իր հետաքննած հուչարձանները տեխնիկական միևնույն չինելակերպի կառուցվածքներ և, կարծելով ըստ Խորենացու, որ Գառնիի ամրոցը չինված է եղել Ք. ԹվականուԹյան IV դարում՝ ենԹադրում է, բնականաբար, որ նաև Արմավիրի բլրի գագաԹի պարիսպը սկսբ է կառուցված լիներ նույնպես IV դարում:

Ուվարովի ժամանակագրական այս որոշումը հարկավ թյուրիմացուԹյան արդյունք է: Սակայն նրա դիտողուԹյունը

---

[1] Տե՛ս **А. С. Уваров**, Исследование местности, на которой предполагались развалины Армавира. Протоколы Подготовительного комитета V Арх. съезда в Тифлисе, Москва, 1882, էջ 443 և 444:

հուշարձանների տեխնիկական-շինարարական համանմանության մասին արժանի է հատուկ ուշադրության:

Համաձայն մեր վերոհիշյալ դիտողությունների, ինձ թվում է, կարելի է միանգամայն հնարավոր ու հավանական համարել, որ Արմավիրում, որը հնագույն ժամանակներում ուրարտական բերդաքաղաք էր և հետագայում աթոռանիստը և կրոնական կենտրոնն էր դառել Երվանդյան Հայաստանի՝ նոր պարիսպներ կարող էին վերստին կառուցված լինել III դարում Ք. թվականությունից առաջ: Որ Արմավիրի պարիսպները, ինչպես մատնանշել է Մ. Նիկոլսկին[1], ուրարտական ժամանակվա քարատաշվածք և ռուստովկա (bossage, рустовка) են ունեցել՝ այդ չէ կարող խոչընդոտ լինել մեր ենթադրության, որովհետև, ինչպես վերև ասացինք, Երվանդյան շրջանի շինարարությունը շարունակությունն էր և զարգացումը ուրարտացիների շինարարական տեխնիկայի:

Այս խնդիրը կարոտ է, համենայն դեպս, հատուկ քննության հնագետների ու ճարտարապետ-արվեստագետների կողմից, որոնք պետք է միաժամանակ պարզեն, թե արդյոք քարերի իրար միացումը երկաթով ու կապարով գործադրվել է միմիայն Երվանդյա՞ն Հայաստանում, թե նաև Ուրարտուում:

Պետք է ասել, որ Երվանդյան ժամանակաշրջանի հուշարձանների սխալ ժամանակադրումը հիմք է ծառայել ո՛չ միայն Ուվարովի անընդունելի ենթադրության, այլ նաև Կ. Տրևվերի: Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի պատմությունն ու կուլտուրան» աշխատության առթիվ գրված իր գրախոսականում Կ. Վ. Տրևվերը շատ հետաքրքիր մի դիտողություն է արել[2], որ Մուսասիրի ուրարտական տաճարի և Գառնիի տաճարի շինություններն ունեն, ըստ երևույթին, որոշ գենետիկ կապ, և որ նրանք երկուսն էլ շինված են, հավանորեն, ընդհանուր միևնույն նախագծով, որովհետև երկքիոք կտուրներով են, որոնց ճակատները պահվում է սյուներով, և ունեն մուտք աստիճաններով: Տրևվերը կարծում է, որ ուրարտական առանձնահատկություններ ունեցող Գառնիի տաճարը հայերը ստացել էին Հռոմի միջնորդությամբ դրսից, Ք. թվականության II դարում:

---

[1] Տե՛ս **М. В. Никольский**, Материалы по археологии Кавказа, V, էջ 57:

[2] Տե՛ս «Известия» Академии Наук СССР, серия истории и философии, т. II, № 2, 1945, էջ 120:

Այս խնդիրը ևս ստանում է այժմ բոլորովին այլ լուսաբանություն: Եթե ճիշտ համարվեն Տրևկերի դիտողությունները Գառնիի տաճարի ուրարտական պլանի մասին, այդ դեպքում՝ միանգամայն հավանական կլինի ենթադրել, որ այդ առանձնահատկությունը ևս, ինչպես և քարաշինական վերոհիշյալ տեխնիկան, Երվանդյան Հայաստանը ժառանգել էր անմիջապես ուրարտական նախորդ ժամանակաշրջանից, և ոչ Հռոմից:

***

Վերաքննության կարոտ է, իմ կարծիքով, նաև Անիում գտնված խորանարդաձև մեծադանդված որձաքարերի խնդիրը, որոնք նույնպես ունեն՝ Երվանդաշատի, Արմավիրի և Գառնիի վերոհիշյալ որմնաքարերի նման՝ երկաթե կապերի հետքեր: Անիի խորանարդաձև վիթխարի քարերը մանրամասն հիշատակված են և նկարագրված ակադ. Ն. Մառի «Անի» աշխատության մեջ[1]: Այդ քարերը, ինչպես ենթադրում է Մառը, պահպանվել են Անիում, հավանորեն, ուրարտական հնագույն ժամանակաշրջանից:

«Միայն [դրանց] պատրաստման մի մանրամասնությունը,— ասում է Մառը,— հատկապես, փոսերը՝ այսպես կոչվող ծիծևնակի պոչերը, որոնք, անտարակույս, ծառայում էին որմածքի ամրացման համար, մնտադով՝ կարող են թևրևս մինչ ներչնչել, թե արդյոք այդ նույն արխալիկ մատերիալից չէի՞ն օգտվել դեռ առաջ հայ Արշակունի թագավորները բերդապարիսպներ կառուցելու համար: Խորանարդաձև քարերը նման եղանակով Հայաստանում ամրապնդելն առայժմ նկատված է Գառնիում ևեղված II կամ III դարի հեթանոսական տաճարում, այսինքն՝ հին հայկական թագավորության ժամանակաշրջանին: Խնդրի լրացուցիչ քննարկման համար պետք է ուշադրության առնել նաև զանազան ավելի ուշ շրջանի որմածքները, նմանապես և Վանա ժայռի բերդապարիսպների խալդական, եթե ոչ ուրարտական (?) շինվածքները»[2]:

Անիում գտնված այս հուշարձանների մասին ուշագրավ դիտողություններ է արել նույնպես և Թ. Թորամանյանը, որ ավելորդ չեմ համարում մեջ բերել մանրամասն կերպով:

---

[1] Տե՛ս Н. Я. Марр, Ани, Ленинград-Москва, 1934, էջ 15 և 49:

[2] Նույն տեղում, էջ 49:

1. Նյութեր, էջ 146՝

«Անիում տակավին գոյություն ունեն հին պալատներից կամ պարիսպներից քանդված սրբատաշ որձաքարեր, որոնք բերված են մի նոր պարսպի շինության համար. սա այն պարիսպն է, որ պալատն անջատում էր բերդից կամ պարսպապատ քաղաքից: Այս պարսպի վրա նույնպես պարզորոշ նկատվում են քարերի վրայի երկաթե կապերի նշանները, և ցույց են տալիս, որ նախկին պարիսպը հավանորեն VI կամ VII դարերում շինված էր երկաթակապ որձաքարերով»:

2. Նույնը, էջ 331՝

«Քանի որ մեզի հայտնի են V–VII դարերու կամսարական տոհմի հիշատակարաններ, որոնք շինված են կրաշաղախ, հրաբխային սրբատաշ ավազաքարերով, նաև այդ դարերեն սկսած բնավ չեն գտնվիր որձաքարև հին ոճով շինված պատեր ամբողջ Հայաստանի մեջ, բնականաբար պետք է հետևցնել, որ Անիի մեջ այսօրվան մեր տեսած երկաթյա կապերու նշաններով սրբատաշ որձաքարերը, եթե ոչ նախակամսարական, գոնե IV դարու կամսարականաց այնտեղ շինած շենքերուն կվերաբերին»:

Մեջբերված Ն. Մառի և Թ. Թորամանյանի դիտողություններից երևում է, որ նրանք երկուսն էլ տարակուսանքի մեջ են եղել և չեն կարողացել հաստատուն կերպով որոշել Անիի մեջ եղած մեծազանգված որձաքարերի ժամանակը:

Ն. Մառը, որը Գառնիի տաճարը համարել է Արշակունյաց շրջանի՝ II կամ III դարերի շենք, ենթադրել է, որ երկաթե կապերի նշաններ ունեցող որձաքարերը, ըստ երևույթին, շարունակել են գործածվել նաև հայ Արշակունիների ժամանակ: Իսկ Թորամանյանը այս մասին արել է տարբեր ենթադրություններ: Վերև բերված առաջին վկայության մեջ նա մատնանշում է, որ երկաթակապ որձաքարերը գործածվել են Անիում, հավանորեն, կամսարականների ժամանակ VI կամ VII դարերում, իսկ երկրորդ վկայության մեջ, ընդհակառակը, մատնացույց է անում, որ այդ որձաքարերը վերաբերում են ե՛թե ո՛չ նախակամսարական, գոնե IV դարի կամսարականների շենքերին:

Իմ կարծիքով, վերոհիշյալ մեր նոր եղրակացությունները Երվանդաշատի, Երվանդակերտի, Արմավիրի և Գառնիի հուշարձանների մասին կարող են նոր լույս սփռել նաև Անիի

Կամսարականյան կոչվող պարսպի Հնագույն որմածքի վրա: Այս վերջինը ևս, ինչպես և Արմավիրի վերոհիշյալ պարիսպներն ու աշտարակը, վերաբերում են, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին, այսինքն՝ III դարին կամ II դարի սկզբներին Ք. թվականությունից առաջ:

Ճիշտ է, ուրարտական ժամանակներում ևս սովորական էր մեծաղանգված տաշված որձաքարերի գործածությունը, սակայն Ուրարտուի չինություններում այդ որձաքարերը, որքան մեզ հայտնի է, եղել են առանց երկաթեն կապերի: Կարելի է հուսալ, որ այս խնդրի վերջնական պարզաբանումը կտան, հիմնվելով ուրարտական և դրան հաջորդող հայկական հուշարձանների նոր քննության վրա՝ հնագետները:

***

Մեր նոր դիտողությունները Երվանդյան Հայաստանի ճարտարապետական մնացորդների մասին, ինչպես տեսնում ենք, հնարավորություն են տալիս ենթադրելու, որ բացի Երվանդաշատից, Երվանդակերտից և Արմավիրից նույն այս հնագույն ժամանակաշրջանի ամրացրած կենտրոնավայրեր են եղել նաև Գառնին և Անին:

Հարկավ, ավելի քան հավանական կարելի է համարել, որ Երվանդյան Հայաստանի կուլտուրային մնացորդներ կգտնվեն նաև այլ վայրերում: Արդ՝ նկատի առնելով հնագետների կողմից անտեսված վաղագույն այդ կուլտուրայի բացառիկ կարևորությունը՝ ավելորդ չեմ համարում տալ Երվանդյանների մասին մի քանի կարևոր տեղեկություններ, որ հայտնի են օտար աղբյուրներից:

Իմ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» առաջին հատորում արդեն մանրամասն հիշատակված էր, որ Երվանդյանների ժառանգական իշխանությունը հաստատվել էր պատմական Հայաստանի մեծագույն մասում դեռևս Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ: Ինչպես հայտնի է, Քսենոփոնի ու Տասը Հազար Հույն զորքի նահանջի ժամանակ (401-400 թթ. նախքան Ք. թվ.) Արմենիայի սատրապն էր Օրոնտասը կամ Երվանդը, որը պարսկական բարձր աղնվականության՝ Վիդարնայի սերնդից էր: Այս տոհմը շարունակել էր իշխել Մեծ Հայքում նաև Աղեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդների ժամանակ IV դարի երկրորդ կեսում (Ք. թվ. ա.):

Սելևկյանների ժամանակ, ըստ Ներսէսին, III դարում, Երվանդյանները, որոնք այդ ժամանակ միաձուլվել էին, հավանորեն, արմեննների հետ՝ զրավել էին Արարատյան դաշտը և այստեղ նախ Արմավիրը, ու ապա Երվանդաշատը դառել էին նրանց թագավորության ամրոանիստ կենտրոնները: Սրանց իշխանությունը, որ տևել էր Մեծ Հայքում մոտ երեք դար՝ վերջ էր դրել II դարի սկզբներում (Ք. Թվ. ա.) Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես I-ը[1]:

Իմ նույն աշխատության մեջ ես նաև մատնացույց էի արել, որ Երվանդյան այս թագավորությունն է այն հին Արարատյան թագավորությունը, որի մասին աղոտ հիշողություններ են պահպանված Խորենացու Պատմության մեջ:

Ըստ Խորենացու և Հովհաննես Կաթողիկոսի վկայությունների[2] Հայկ Նահապետի որդին ու հաջորդը, Արմենակը, հոր մահից հետո գաղթում է հյուսիս-արևելք, գրավում է Արարատյան դաշտը և, բնակություն հաստատելով այս դաշտի հյուսիսակողմի մի բարձր լեռան ստորոտում՝ լեռն իր անունով կոչում է Արագած, իսկ կալվածն՝ Արագածոտն:

Սրա որդին և հաջորդը, Արամայիսը, այս նույն դաշտում, Երասխ գետի ափին, մի բլրի վրա պինդ և մեծ քարերից չինում է իր համար բնակավայր, որն իր անունով կոչում է Արմավիր:

Արամայիսի որդին, Ամասիան, բնակվում է նույնպես Արմավիրում, որը քաղաքական կենտրոնն է դառնում Հայկազյան նահապետների և ապա թագավորների: Սա ունենում է երեք որդի՝ Գեղամ, Փառոս և Յոլակ: Թողնելով Գեղամին Արմավիրում՝ Ամասիան գնում է Մասիս լեռների կողմը և չինում է այնտեղ երկու բնակատեղի, մեկը արևելակողմում, լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների մոտ, իսկ մյուսը՝ այդ տեղից դեպի արևմուտք ու նրանից հեռու՝ հետևակ մարդի մեկ ու կես մեծ օրվա ճանապարհի չափ[3]: Նա տալիս է այս բնակատեղերը իր երկու որդիների՝ Փառոսին և Յոլակին, որոնք բնակություն են հաստատում այնտեղ և այս տեղերը կոչում են իրենց անունով Փառավոտ ու Յոլակերտ:

---

[1] Տե՛ս «Իննական տեսություն...», Երևան, 1944, էջ 64, 97, 104 և 126:

[2] Մովսես Խորենացի, I, ԺԲ ու Ի և Հովհաննես Կաթողիկոս, Թիֆլիս, 1912, էջ 16-19:

[3] Տե՛ս իմ աշխատությունը «Հին Հայաստանի կլիմավոր ճանապարհները», Երևան, 1936, էջ 29-30 և այլն:

Հետևելով իր հոր օրինակին՝ Գեղամը ևս թողնում է Արմավիրում իր որդուն՝ Հարմային, և ինքը գնում է մի ուրիշ լեռան արևելյան-հյուսիսային կողմերը և այնտեղ, ծովակի ափին, չինում է նոր բնակավայր, որ կոչում է իր անունով Գեղարքունի: Այստեղից նա իջնում է դաշտը և չինում է ամուր ձորակի մեջ մի ձեռակերտ և իր անունով կոչում է Գեղամի, որ հետո նրա թոռան՝ Գառնիկի անունով կոչվում է Գառնի:

Գեղամի որդուն՝ Հարմային հաջորդում են Արմավիրում որդեցորդի՝ Արամը, Արա Գեղեցիկը, Արան, Անուշավանը և սրա հաջորդները: Այն Անուշավանը, ինչպես վկայում է Խորենացին, կոչվում է Սոսանվեր, որովհետև նա նվիրված էր Արմավիր քաղաքում Արմենակի սոսի ծառերին, որոնց տերևների խշխշոցի և երերումների համեմատ հայկազանց աշխարհում արվում էին գուշակություններ:

Խորենացու այս վկայությունները Արմենակի ու նրա սերնդի տարածման ու գաղթավայրերի մասին Այրարատում հայագետներից չատերը համարել են հնարված ուշ ժամանակներում և զուրկ պատմական նշանակությունից[1]: Այս տեսակետը, ինչպես պարզված է այժմ, ընդունելի չէ:

Թեև հայկազանց նահապետների անունները վերոհիշյալ վկայություններում, մեծ մասամբ, կազմված են արվեստական կերպով, սակայն Խորենացու հաղորդած տեղեկությունների հիմքը պատմական է և նրանց մեջ պահված են հայ ժողովրդի Արարատյան դաշտ մտնելու և այնտեղ տարածվելու հիշողությունները:

Իմ նորագույն աշխատությունները ևս և, մասնավորապես, Արմավիրի հունարեն արձանագրությունների իմ նոր լուսաբանությունը նույնպես հաստատում են, որ Արմավիրը եղել է, իրապես, Հին Հայաստանի հնագույն աթոռանիստ կենտրոնն Այրարատում, և որ նրա մեջ, Ապոլոնի ու Արտեմիսի տաճարում, կարող էին, իրոք, սոսիների սրբազան ծառաստանի տերևների խշխշոցից զանազան գուշակություններ արվել, ինչպես այդ վկայում է Մովսես Խորենացին:

Պատմահոր մոտ սխալ է հարկավ Հայկազունների ժամանակագրությունը, որ նա կազմել է արվեստական կերպով երբա-

[1] Տե՛ս Ա. Մ. Գարագաշյան, Փիլոսական պատմություն Հայոց, Կ. Պոլիս, 1880, էջ 146 և այլն: Гр. Халатьянц, Армянский эпос..., Москва, 1896, էջ 122–125 և ուրիշ.:

յկղինների, քաղղևացիների նահապետների և մարաց Թագավորների ցանկերի համեմատ: Իսկ, իրապես, նրա Պատմության Հայկազյան Արմեննակի ու սրա հաջորդների մասին հիշողությունները վերարերում են, ինչպես դժվար չէ կռահել, III դարի անցքերին Ք. Թվականությունից առաջ, երբ արմենները երվանդյանների առաջնորդությամբ գրավել էին Արարատյան դաշտը և Արմավիրը դարձրել էին նոր իշխանության ամրոնանիստ կենտրոնը:

Արդ՝ մեր այս եզրակացությունը Հայկազանց ու Երվանդյան իշխանությունների նույնը լինելու մասին, անուշտ, խիստ կարևոր է ու հետաքրքիր: Ընդունելով, որ Խորենացու վերոհիշյալ վկայություններն իրենց որոշ մանրամասնություններով պատմական հիշողություններ են՝ կարելի է աննել նաև այլ ուշագրավ կռահումներ:

Խորենացին, ինչպես վերև տեսանք, վկայում է միաժամանակ, որ Հայկազունների ժամանակ Այրարատում հիմնված են եղել, բացի Արմավիրից, նաև Գառնին, Յոլակերտը և Փառախոտը: Ես կարծում եմ, որ դուրկ չէ պատմական հիմունքից Խորենացու նաև այս վկայությունը: Եվ, իրավի, նրա այս վկայությանը կարող է այժմ նեցուկ ծառայել մեր նոր հետևությունը Գառնիի ամրոցի ու տաճարի կառուցման մասին Երվանդյանների ժամանակ, որոնք Խորենացու մոտ անվանված են Հայկազուններ:

Խորենացու հաղորդած տեղեկությունները կարևոր են, բացի այդ, մի այլ տեսակետից: Վերև մենք նշեցինք, որ Երվանդաշատի, Գառնիի և, հավանորեն, նաև Արմավիրի ու Անիի մեր նշած հուշարձանները վերաբերում են Երվանդյան ժամանակաշրջանի չինարարությանը: Արդ՝ ուշագրավ է, որ Խորենացու վկայություններից կարելի է ամենայն հավանականությամբ նույնպես հետևցնել, որ նույն այս վաղագույն ժամանակաշրջանին կարող են վերագրվել ո՛չ միայն այդ տեղերի հուշարձանները, այլև Զողկերտ-Յոլակերտի և Փառախոտի, որոնց տեղադրությունը մանրամասն քննված ու որոշված էր իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ[1]:

Անուշտ, այս երկու վայրերի հնագիտական մնացորդների հաստատուն ու հիմնավորված ուսումնասիրությունները ևս պետք է տան հնագիտական մեր հիմնարկները, ուղարկելով այդ վայրերը դիտական հատուկ արշավախմբեր:

[1] Երևան, 1936, էջ 23–31:

***

Երվանդյանների կամ Հայկազուններ ժամանակաշրջանի պատմական հուշարձանները, ինչպես վերև տեսանք, հանդիսանում են հայկական կուլտուրայի հնագույն մնացորդներ և ունեն, անշուշտ, բացառիկ կարևոր նշանակություն:

Իմ ներկա ուսումնասիրության նոր տվյալները, ինչպես ես համոզված եմ, կուան ու խթան են ծառայելու հայկական ճարտարապետության ամենահին շրջանի ուշադիր հետազոտման և հարկադրելու են հնագետներին ու արվեստագետներին վերաքննության ենթարկելու վերոհիշյալ հուշարձանների մասին մինչև այժմ եղած ենթադրությունները:

Այդ հուշարձանների մեջ ամենանշանավոր ճարտարապետական կոթողն է, անշուշտ, Գառնիի չքնաղագեղ տաճարը, որը, ըստ մեր նոր լուսաբանության, սերտ կապ ունի ո՛չ թե հռոմեական, այլ հելլենիստական արվեստի, ու նաև ուրարտական հին չինարարության հետ: Այս վերին աստիճանի գեղարվեստական ու գեղեցիկ շենքը, որ հելլենիստական-հայկական կուլտուրայի եզակի նմուշն է ողջ Խորհրդային Միության մեջ, ինչպես ճիշտ մատնանշել է Թորամանյանը, իր բոլոր կատարելություններով կարող է համարվել Հայաստանի գեղարվեստի թագուհին:

Հայկական մեծ անցյալի այս փառահեղ մնացորդը հայ ժողովուրդը պետք է պահի ամենամեծ խնամքով: Եվ ես չեմ կասկածում, որ վաղ թե ուշ մեր գիտական հիմնարկներն ամեն ջանք գործ կդնեն, որ կարող ու ձեռնհաս արվեստագետները տան նրա մանրամասն ու ճշգրիտ վերակազմությունը: Իսկ այդ, ինչպես վերև տեսանք, միանգամայն հնարավոր է համարում լուրջ ու ձեռնհաս մասնագետ Ֆ. Դյուբուան:

Ուստի կարելի է հուսալ, որ կգա մի օր, երբ վերակառուցված Գառնիի տաճարը կդառնա Խորհրդային Հայաստանի հոյակապ զարդերից մեկը:

ՄԱՐ-ԱԲԱՍԻ «ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ը

(Սերեոսի, Մովսես Խորենացու և Պրոկոպիոս Կեսարացու աղբյուրների հարցի առթիվ)

Չնայած «Հայոց նախնական պատմության» մասին դգալի գրականության առկայությանը, այս գործի ժամանակի և հեղինակի հարցը մինչ այժմ վիճելի և անհասկանալի է մնում: Սա բացատրելի է նրանով, որ այս հուշարձանի մասին մեր տվյալները լոկ ուշ չրջանի՝ Սերեոսի և Մովսես Խորենացու երկերից են, որ կամ խառնիխուռն կամ անճանաչելիության աստիճան աղճատված են: Այդ տեղեկությունների անբավարարությունն ու աղճատվածությունն են հենց պատճառ հանդիսացել, որ պայմանականորեն Մար-Արաս Մծուրանցուն վերագրված «Հայոց նախնական պատմություն» երկի քննադատությունը չատ հաճախ հասցվել է ծայրահեղության և վերածվել գերքննադատության:

Քննադատության այդ սխալ ուղղվածությունը հատկապես վառ է երևում գերմանացի հայտնի գիտնական Ա. Գուտչմիդի և ֆրանսիացի հայագետ Ա. Կարիերի գործերում[1]: Բայց եթե Մովսես Խորենացու Պատմության կապակցությամբ նրանց քննադատությունը առաջադիմական քայլ էր ուսումնասիրման առումով, ապա Մար-Արասի հասցեին նրանց ծայրահեղ հոռետեսությունը և պնդումը, իբրև թե «Հայոց նախնական պատմության» հեղինակը հենց ինքը Մովսես Խորենացին էր, ինչպես կտեսնենք, բացարձակապես սխալ էին:

Մար-Արասի մասին առավել հիմնավոր ու բեղուն էին Ն. Մառի և Ն. Ադոնցի ուսումնասիրությունները[2]:

---

[1] A. Gutschmid, Uber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren. Berichte de kön. Sächsischen Gesellsch, der Wissenisch. zu Leipzig, phil.-hist. Klasse, Bd. XXIII, 1876. A. Karrière. Moïse de Khoren et les genealogies patriarcales, Paris, 1891.

[2] Н. Я. Марр, О начальной истории Армении Анонима. «Виз. временник», т. I, вып. 2, 1894. Н. Адонц. «Начальная история Армении» у Себеоса в

Ներկա հետազոտության նպատակն է վերանայել Մար-Արասին առնչվող հարցը և հիմնականում նոր լուսաբանում տալ այդ խնդրին:

***

Ամենից առաջ ծանոթանանք «Հայոց նախնական պատմության» պարունակած նյութին:

Ինչպես հայտնի է, Սերեոսի «Պատմության» առաջին գլխի սկզբում հիշատակվում է Հայոց և Պարթև Արշակունի առաջին թագավորների մասին արձանագրությունը: Սերեոսի պատմածի համաձայն այս արձանագրության մասին Մար-Արաս Մծուրանցի փիլիսոփայի գրքում տեղեկություն է եղել, որ վկայել է, որ արձանագրությունը հայտնաբերվել է Մծբինում, Սանատրուկ թագավորի պալատի ավերակներում, պալատի դարպասների դիմաց՝ մի սյան վրա, ուր այն գտել է ինքը՝ Մար-Արասը: Երբ այդ ապարանքի սյուներն անհրաժեշտ էին Պարսից արքայի պալատի կառուցման համար, ավերակները պեղվեցին, և հենց այդ ժամանակ էլ պատահաբար հայտնաբերվեց հիշյալ հունարեն արձանագրությունը:

Ինչպես նշված է Սերեոսի մոտ, արձանագրության վերնագիրը հետևյալն էր. «Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առնել ի դիւանէ արքունի»: Այնուհետև Սերեոսը մանրամասնությամբ բերում է իրենց նահապետների մասին վիպելու հայերի դունաղարդված և վիպական ոճը:

Աչտարակաչինությունից և լեզուների խառնումից հետո, ինչպես հաղորդում է «Հայոց նախնական պատմությունը», Բաբելոնում տիրեց Տիտանյան Բելը, որը պահանջում էր, որ իրեն ննթարկվի ամբողջ մարդկային ցեղը: Սակայն Հայոց նահապետ «[Հզաւր զաւրութեամբ եւ բարի անձամբ] Հայկն Հարեւթածին ոչ կամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բէլայ արքայի. արհամարհեաց զնա աստուած կոչել: Անդ Բէլ ի վերայ Հայկին

отношениях к трудам Моисея Хоренского и Фавста Византийского, «Виз. временник», 1901, т. VIII, вып. 1 и 2:

յարձակեալ մարտիս, իսկ Հայկն արի՝ ազեղամբ հալածեաց զնա [եւ զաւրբ նորա վախստական լինելն]»*:

Տարած հաղթանակից հետո Հայկն իր ազգով բնակվում է Հայաստանի հարավում: Հայկի որդին և ժառանգորդը՝ Արմենակը, հոր վախճանից հետո նախ ապրում է Հարքում, իսկ հետո գնում հյուսիս-արևելք և դրաղևցնում Արարատյան դաշտավայրը: Նրա սերունդները հետզհետե տարածվեցին այդ դաշտավայրում և մերձակա չրջաններում:

Արմենակի որդին և ժառանգորդը՝ Արամայիսը, իր համար բնակատեղի կառուցեց Արտքսի ափին և այն իր անվամբ կոչեց Արմավիր: Նրանից հետո տիրեցին. իր որդին՝ Ամասիան, Ամասիայի որդին՝ Գեղամը, Գեղամի որդին՝ Հարման, Հարմայի որդին՝ Արամը և Արամի որդին՝ Արա Գեղեցիկը:

Վերջինիս մասին «Հայոց նախնական պատմության» հեղինակը մի առասպել է բերում, ուր պատմվել է, թե Ասորեստանի թագուհի Շամիրամը վավաչոտ կերպով սիրահարված էր Արային, և երբ Արան հրաժարվում է մնկնել նրա մոտ՝ Նինվե, նա մեծաքանակ զորքի գլուխ անցած ներխուժում է Հայաստան, ջարդում Արայի զորքն ու մարտի ժամանակ սպանում նրան: Արայի պարտությունից հետո Հայաստանում տիրում էին ասորեստանցի թագավորները մինչև Սենեքերիմ արքայի (705-688) մահը: Հենց այդ ժամանակ է, որ ապստամբած հայերը դուրս նկան ասորեստանցիների իշխանության տակից և Հայաստանում տիրեց Հայկյան Ջարևհը, որի տոհմը կառավարեց մինչև Նաբուզոդոնոսորի ժամանակները: Դրանից հետո հայերը ենթարկվեցին Բաբելոնին և Մեդիային, իսկ հետո նկավ մակեդոնական տիրապետությունը, որ ձգվեց մինչև Արշակունիներ:

Ինչպես հիշատակված է Սերեոսի մոտ, Հայկյան Ջարևհի սերունդներն էին՝ «Արմոզ. ապա Սարհանդ. ապա Շաւաշ. ապա Փառնաւազ»: Այստեղ հպանցիկ հիշատակվում է Բագրատունիների ծագումնաբանությունը:

---

* [Այստեղ ռուսերեն մեջբերումն ավարտվում է «...и войско его обратилось в бегство», տողով, որ ոչ թե Սերեոսի բերվող հատվածից է, այլ հանդիպում է մի փոքր ավելի ուշ: Նույն կերպ նաև ռուսերեն մեջբերման սկզբում՝ «могучий силой и статный» կապակցությունը, որ վերաբերում է Հայկին, նս վերցված է Սերեոսի ավելի ներքևում տված խոսքերից, ուստի ավելացնում ենք ուղղանկյուն փակագծերով (Թարգմ.)]:

Սերեոսի պատմության երկրորդ գլխում, որին ևս հիմնական աղբյուր է ծառայել Մար-Աբասի «Հայոց նախնական պատմություն»-ը, նկարագրվում է Արշակ Մեծի օրոք պարթևների ապստամբությունն ու աղատագրումը մակեդոնացիների իշխանությունից: Արշակ Մեծն իր իշխանության ենթարկեց աստրնստանցիներին, բարելացիներին, պարսիկներին, մեդացիներին և Հայոց երկիրը:

Հաջորդիվ՝ նույն գլխում, տեղեկություն է տրվում, որ իր կյանքի 129-րդ տարում և վախճանից մեկ տարի առաջ Արշակ Մեծը Հայաստանի թագավոր է նշանակում իր որդուն՝ Արշակ Կրտսերին: Հայաստանում վերջինիս ընդառաջ է նլնում «Բագարատն Փառաղևան... պսակէ զնա ի թագ հայրենի... եւ տայ նմա զդուստր իւր ի կնութիևան»: Եւ քանի որ Բագարատը կամավոր հանձնեց իր իշխանությունը, Արշակը նրան Հայոց երկրի ասպետ է նշանակում, այսինքն՝ իշխան և հրամանատար:

Երկրորդ գլխի վերջին մասում բերված են պարթև արքաների՝ մինչև Արտավան (Ք. հ. 224 թ.) և Հայոց Արշակունիների՝ մինչև Պապ (374) ցուցակները:

Հարկ է նշել, որ Մար-Աբասի գրքից քաղվածներ պարունակող Սերեոսի «Պատմությունը» մեզ է հասել միայն մեկ՝ ծայրահեղ վատ պահպանված ձեռագրով: Այս է պատճառը, որ մեզ հետաքրքրող հուշարձանը խիստ եղծված է և բացթողումներ ու անհասկանալի տեղեր ունի, որոնք հիմնականում բացատրելի են նրանով, որ վնասված ձեռագրից օգտվող գրիչը, թերթերը չփոթելով, արտագրել է ինչպես պատահի:

Ինչպես ճիշտ նշում է Ն. Մառը, հուշարձանի վերջին մասը խստորեն տուժել է նաև Խորենացու Պատմությունից, որից նույնիսկ ամբողջական կապակցություններ են մտցվել երկի մեջ[1]:

Մար-Աբասի երկն իբրև Հայաստանի մասին հնագույն աղբյուր օգտագործվել է ոչ միայն Սերեոսի «Պատմության» առաջին երկու գլուխներում, այլ նաև Մովսես Խորենացու «Պատմության» առաջին երկու գրքերի չատ գլուխներում: Ինչպես բազմիցս նչվել է՝ Խորենացու մոտ հանդիպող քաղվածները Մար-Աբասի երկի ծավալուն և հիմնավոր կերպով մշակված տարրերակներն են: Սերեոսի մոտ չնայած հանդիպում ենք

[1] Ն. Մառ, նչվ. աշխ., էջ 282:

սկզբնական և ավելի ճշգրիտ, սակայն Լապես կրճատված տարբերակն, ընդ որում՝ նոծված և թերություններով լի:

Մար-Արասի «Հայոց նախնական պատմության» մեջ, ինչպես երևում է Խորենացու վկայություններից, ոչ միայն Սերեոսի բերած Հայկի ու Արմենակի պատմությունները են եղել, այլ բացի դրանցից նաև վիպական ավանդազրույցներ Արամի մասին, որոնցում պատկերանում էին հնագույն շրջանի հայոց ռազմական քաջագործությունները:

Ինչպես մանրամասնորեն հայտնելիս է եղել Մար-Արասի գիրքը, Արմենակի սերունդներից հատկապես փառավորվել է Արամը՝ Հարմայի որդին, որ Հայաստանի սահմանները բոլոր կողմերից ընդլայնեց: Արևելքում նա հարձակվեց մեդացի Նյուբար Մագևսի վրա, որ երկու տարի չարունակ Հայաստանն իր տիրապետության ներքո էր պահում, և բռնելով նրան՝ բերեց Արմավիր և հրամայեց դամել աչտարակի ծայրին: Նա փառաբանվեց նաև հարավում՝ Ասորեստանի սահմաններին, ուր սպանեց իր երկրի հարստահարիչ, դյուցազուն Բարշամին: Սրանից հետո նա ամբողջ զորքով ուղղվեց արևմուտք և այնտեղ ջախջախեց Տիտանյան Պայապես Քաադյային, որ տիրում էր Պոնտոսի և Միջերկրական ծովի միջև եղած հողերին: Նոր գրավված երկրում նա կառավարելու թողեց իր ազգական Մշակին, որ այնտեղ քաղաք հիմնեց՝ Մաժաքը, որ հետագայում Կեսարիա անվանվեց:

«Հայոց նախնական պատմության» հետ անգամ թուցիկ ծանոթության դեպքում նկատելի է, որ Մար-Արասի երկը մտացածին չէ, այլ Հայոց պատմության հնագույն գրավոր հուշարձանն է: Ինչպես երևում է վերորևէյալ հատվածներից, այս երկն իր մեջ ներառելիս է եղել առասպելական պատումներ Հայոց անցյալի մասին և, դրանից բացի, մասամբ հիմնված է եղել աստվածաշնչյան և այլ աղբյուրների վրա, մասամբ էլ Սանատրուկ Թագավորի պալատի պեղումներից բացված հունարեն արձանագրության, որում տեղեկություններ են եղել Հայոց և Պարթև Արշակունիների մասին:

Այս «Նախնական պատմության» հեղինակը կամեցել է պարզել, թե ինչպես է ծագել հայ ժողովուրդը և ինչպես է սփռվել հին Հայաստանի տարածքով: Առաջնորդվելով հին ժամանակագիրների սկզբունքով՝ նա իր ժամանակակից մատենագիրների հեռատեսությամբ կարծում էր, թե աշխարհի բոլոր ազգերը

ծագել են Նոյի երեք որդիների սերունդներից: Այս իսկ պատճառով Հայոց նահապետ Հայկին նա Նոյի Հարեթ որդու սերունդներից է համարում:

Խիստ հետաքրքրական է, որ, ինչպեսև պետք էր սպասել, «Նախնական պատմության» վրա առավել մեծ ազդեցություն են գործել իրենց իսկ՝ հայերի վիպական պատմությունները: Այս ավանդությունների արժեքը կայանում է նրանում, որ դրանք պատմական հիմք ունեն և համահունչ են խեթական, ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունների վկայությանը և օգնում են հայերի ծագումնաբանության պարզմանը:

***

Հայագիտական գրականության մեջ երկար ժամանակ կայուն էր այն կարծիքը, թե «Նախնական պատմությունը» Սեբեոսի «Պատմության» հետ ոչ մի կապ չունի և ներմուծվել է վերջինիս մեջ պատահարար: Եվ այսու գիտնականների մեծամասնությունը կարծում էր, թե Սեբեոսի «Պատմության» առաջին երկու բաժինը մի այլ անծանոթ հեղինակի՝ Անանունի, մեկնաբանական ընդմիջարկություն է (բանաքաղություն):

Այս կարծիքը, որ առաջինն արտահայտել է պրոֆ. Ֆ. Պատկանյանը Սեբեոսի «Պատմության» ռուսերեն իր թարգմանության առաջաբանում[1], վստահություամբ է ընդունվել գերմանացի գիտնական Ա. Գուտչմիդի, Ն. Մառի և այլ հետազոտողների կողմից: Գուտչմիդը նույնիսկ հնարավոր էր համարում պնդել, որ «Նախնական պատմության» հեղինակը ոչ թե Անանունն էր, այլ Մովսես Խորենացին: Նրա կարծիքով Սեբեոսի մոտ եղած հատվածն առաջին՝ փորձնական գրառումն էր (Entwurf*), որը հետագայում «Հայոց պատմության» մեջ մշակել է Խորենացին[2]:

Ա. Բաումգարտները, որ նույնպես Պատկանյանի կարծիքի կողմնակից էր, «Գիրք պիտոյից»-ի իր հետազոտության մեջ փորձում էր ապացուցել (մեզ թվում է առանց բավարար

---

[1] К. П. Патканян, История Себеоса, СПб., 1862, стр. VI–X.

* [Entwurf կարծում ենք խոսքը Entwurf-ի (գերմ.) մասին է՝ նախագիծ, ուրվագիծ (Թարգմ.)]:

[2] A. Gutschmid, նշվ. աշխ., էջ 38:

հիմքերի), որ պատմագիր Հովհաննես Կաթողիկոսի ժամանակ Սերեոսի մատյանում դեռևս չի եղել Անանունի «Նախնական պատմությունը»[1]:

Անանունի մասին բերված կարծիքները ներկայումս սխալ և անընդունելի են համարվում:

Դեռևս Սերեոսի «Պատմության» դրարար բնագրի հրատարակիչ Տ. Միհրդատյանը, նկատի առնելով, որ իր օգտագործած ձեռագրերում «Նախնական պատմությունը» Սերեոսի երկի անբակտելի մասն է կազմում, այն համարել է անձամբ Սերեոսի կատարած բանաքաղություն[2]: Հենց նույն եզրահանգման էր եկել նաև Ա. Տեր-Միրեյանը՝ Սամուել Անեցու աշխատության դրարար բնագրի իր հրատարակության մեջ: Նա հիմնվում էր Սերեոսի Պատմության առաջին չորս գլուխների (Պատկանյանի հրատարակության մեջ «Առաջին» և «Երկրորդ» բաժինների) մի շարք հատվածների բովանդակության հետազոտման, ինչպեսև այդ գլուխների և բուն սերեոսյան պատմության մասերի լեզվաոճական նմանությունների վրա[3]:

Գր. Խալաթյանցի կարծիքով «այդ նմանությունը, որ հաճախ կատարյալ նույնության է հասնում, նկատելի է երկու ստեղծագործությունների ոճում և շարադրանքում, խոսքի կառուցման ձևերում՝ ոչ միայն շարահյուսական-քերականական առումով, այլ նաև միայն այդ երկուսին հատուկ աշխարհագրական և ազգագրական եղրույթների ամբողջության»[4]: Սակայն, հարկ է ընդգծել, որ Խալաթյանցը «Նախնական պատմությունը» ավելի ուշ՝ VIII–IX դդ. անվավերական համարելով, իր նկատած համընկնումները ոչ թե Սերեոսի և Անանունի նույնականու-

---

[1] **A. Baumgartner**, Ueber das Buch «Die Chrie». Zeitschr. Der Deutsch. Morgenl. Gesellsch., Bd. XL, 1886, էջ 466–467, ծան. 1:

[2] «Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն ի Հերակլն», Հրատ. Տ. Միհրդատեան, Կ. Պոլիս, 1851, նախաբան:

[3] **Սամուէլ Անեցի**, Հատուածք ի պրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ: Յառաջարանով եւ ծանոթութիւններով Ա. Տէր-Միքէլեան, Վաղարշապատ, 1893, էջ 253–254, ծան. 4:

[4] **Гр. Халатьянц**. Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, М., 1896, էջ 68 և հջ.:

թյամբ էր բացատրում, այլ Սերեոսի՝ Անանունի վրա ունեցած աղդեցությամբ:

Հակառակ Գր. Խալաթյանցի կարծիքին, Ստ. Մալխասյանցը[1] համաձայնում է Տեր-Միքելյանի տեսակետի հետ և համոզիչ կերպով ապացուցում, որ Սերեոսի «Պատմության» ներածական մասը, որ իր մեջ ընդգրկում էր Հայոց կարճառոտ պատմությունը, սկսած առասպելական ժամանակներից, գրված է հենց Սերեոսի կողմից: Ինչպես արդարացի կերպով նշում են Տեր-Միքելյանն ու Ստ. Մալխասյանցը, «Պատմության» հենց սկզբում՝ առաջին իսկ տողերում, ասկա է Սերեոսի մատնանշումը, որ իր «Պատմությունը» ներառում է Հայոց պատմության երեք պատմափուլ՝ հերոսական կամ առասպելական ժամանակները, դրանց հաջորդած ժամանակաշրջանը և հեղինակի օրերի «աղետալի» ժամանակները:

«Եւ եղեւ ոչ ի կամայական սիտոյից,-ասում է հեղինակը,- վարժ խուզակի դանստորագրեալ ժամանակ եւ դնախնի քաջացն ձեռնարկելով դրոչմել վիպասանութիւնս, դիմն յիշատակել դառասպելս, եւ ի նոյն չարադրելով ասացից դառ ի յապայն եղելոյ. եւ ցուցից համառաւտիւք դարդեաց ժամանակացս դաղէտից վերարերութիւն դամս եւ դաւուրս հին թադաւորացն յիշատակելով»:

Եվ իսկապես, խոստմանը հարազատ, Սերեոսը հերոսական ժամանակը չարադրել է Ա գլխում, պատմական անցյալը՝ Բ-է գլուխներում, իսկ իր ժամանակի աղետները Ը-Ժ գլուխներում:

Ինչպես տեսանում ենք Սերեոսի և Անանունի նույնականության մասին Մալխասյանցի տեսակետը կարելի է հիմնավորված և համոզիչ համարել: Ինչպես նշվում է Ն. Ադոնցի և Ն. Ակինյանի ավելի ուշ աշխատություններում, հարցի այսպիսի լուծման օգտին խոսող փաստարկները լուրջ հիմնավորումներ ունեն և կարող են ավելի ուժեղացվել նոր ապացույցներով[2]:

Հետևաբար կարելի է վստահորեն եզրահանգել, որ ընդհանրապես ոչ մի Անանուն էլ չի եղել, և Անանունն ինքը Սերեոսն

---

[1] **Ստ. Մալխասյանց,** Սերեոսի պատմությունը և Մ[ովսես] Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 73:

[2] **Ն. Ադոնց,** նշվ. աշխ., էջ 6 (առանձնատիպ). **Ն. Ակինյան,** Սերեոս Եպիսկոպոս Բագրատունին և նրա Պատմությունը Հերակլին, Վիեննա, 1924, էջ 48 և 64:

է: Լիովին բացահայտ է նաև, որ «Նախնական պատմության» հեղինակը ոչ թե ինքը Սերեոսն էր, այլ ասորի Մար-Աբաս Մծուրանցին, որի երկն ինչպես Սերեոսի «Պատմության» այնպես էլ Խորենացու «Պատմության» սկզբնաղբյուրներից մեկն է նկել:

***

«Նախնական պատմության» ժամանակի և ծագման մասին Խորենացին և Սերեոսը տարբեր տեղեկություններ են հաղորդում:

Խորենացին հայտնում է, որ Հայաստանում Արշակունի հարստության հիմնադիր Վաղարշակը, կամենալով իմանալ այս երկրի անցյալը, զուտավ պիտնական ասորուն՝ Մար-Աբաս Կատինային, իմաստուն և քաղդեական ու հունական դպրությանը վարժ մի մարդու, և Հայաստանի մասին հավաստի տեղեկություններ հավաքելու հանձնարարությամբ նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծ Պարթև արքայի մոտ, Նինվեի արքայական դիվանը Մար-Աբասի համար բացելու խնդրանքով: Մար-Աբասը, այնտեղ նայելով ձեռագրերը, մի անհայտ հեղինակի մատյան է գտնում, որ Ալեքսանդր Մեծի հրամանով քաղդեերենից հունարեն էր թարգմանվել: Խորենացին գրում է, որ այդ գրքից Մար-Աբասը քաղում է Հայոց հավաստի պատմությունը և բերում Վաղարշակ թագավորին, որն այն ստանալով պահում է արքունիքում մեծ ղգուշությամբ և հրամայում մատյանից մի հատված արձանագրել այսն վրա[1]:

Ք. ա. II դարում Պարթև Արշակունիների մայրաքաղաք Նինվեում Մար-Աբասի հայտնաբերած քաղդեական մատյանի մասին բերված պատմությունը, ինչպես արդեն պարզվել է, ոչ մի քննադատության չի դիմանում և ուսումնասիրողների կարծիքով հենց Խորենացու հորինածն է:

«Նախնական պատմության» հեղինակի մասին բոլորովին այլ, առավել ճշմարտանման տեղեկություններ է հայտնում Սերեոսը: Եվ նրան ոչ թե Մար-Աբաս «Կատինա» (=λεπτος «задах», հայ. ուշիմ) է անվանում, այլ «Մարաբա փիլիսոփա Մծուրանցի» և մատնանշում, որ այս գիտնականն ասորի է:

---

[1] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գիրք Ա, գլ. ը և թ, Թիֆլիս, 1913:

Մծբինում ներկա գտնվելով Սանատրուկ Թագավորի պալատի պեղումներին՝ նա ապարանքի փլատակներում պատահաբար գտել է հունարեն արձանագրություն Հայոց և Պարթև Արշակունի արքաների մասին, որ Տրդատ արքայի հրամանով դրոշմել էր Ագաթանգեղոսը:

Մծբինում գտնված հունարեն արձանագրության մասին տեղեկությունը մինչև վերջերս գրեթե բոլոր գիտնականները միատեսակ հնարանք էին համարում: Սակայն Ն. Ակինյանը շատ համոզիչ կերպով ցույց տվեց, որ այն բոլորովին էլ հերյուրված անվավերական չէ, այլ պատմական հավաստի վկայություն: Նա գտնում է, թե պալատը, որի ավերակներում հայտնաբերվել է հունարեն արձանագրությամբ այտուր, ոչ թե Մծբինում է եղել, ինչպես սխալ մատնանշված է Սերեոսի և Խորենացու մոտ, այլ Մծուրնում, որ Սանատրուկ Թագավորն է կառուցել: Հին Հայաստանում Մծուրն քաղաքի դերության մասին չիմացող հիշյալ պատմագիրների մոլորությունը կարելի է հեշտությամբ բացատրել, քանի որ ընդունելի է Մծբին-Մծուրն այլընթերցումը[1]:

Ք. հ. I–II դարերում Հայաստանում Թագավորած Սանատրուկի կողմից Մծուրնի հիմնադրման մասին, ինչպես նշված է իմ աշխատություններից մեկում[2], լոկ պատահական գրառում կա Փավստոսի «Պատմության» մեջ: «Ապա գնայր Մարզպետն Հայր ի սուրբ տեղեացն եւ էջ յափն գետոյն Հոսանացն Եփրատու, Հովիտսն Թանձրախուռն անտառին, ի գետախառնունսն երկուց գետոցն ի Թաւուէ խարձիցն մամխեացն, որ ի տեղւոջն ի Հնոցն իմն չինած քաղաք՝ զոր չիննալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչի»[3]:

Մծբինում, այսինքն՝ Մծուրնում, գտնված հունարեն արձանագրության մասին սերեոսյան Մար-Արասի հաղորդումների

---

[1] **Ն. Ակինյան**, Նշվ. աշխ., էջ 80 և հջ.:

[2] **Я. А. Манандян**, О торговле и городах Армении, Эривань, 1930, էջ 89–91, տե՛ս նաև Ք հրատ., Երևան, 1954, էջ 112–113:

[3] **Фавстос Бузанд.**, История Армении, гл. XIV. Перевод под редакцией С. Т. Еремяна, Ереван, 1953, стр. 90 [Բերում ենք բառ՝ «Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց», բնագիրը Ք. Պատկանյանի աշխատասիրությամբ, Երևան, 1987, էջ 180 (թարգմ.)]:

առնչությամբ վերը ասվածից ելնելով կարելի է ենթադրել, որ դեռևս Ք. հ. IV դարի սկզբներին Մծուրնը եղել է հին Հայաստանի քաղաքային կենտրոններից մեկը, և այնտեղ՝ Սանատրուկի պալատում է այն վրա փորագրվել հունարեն արձանագրությունը՝ «Հրամանատ քաջին Տրդատայ», որ հավանորեն Տրդատ III-ն է: Փաստորեն վկայությամբ այդ քաղաքն ավերվել է մինչև V հարյուրամյակը. հնարավոր է IV դարի երկրորդ կեսին: Ինչպես տեսանք՝ իր «Պատմության» առաջին գլուխում Սերեոսը Մար-Արաս փիլիսոփային Մծուրանցի է անվանում, դրանով իսկ վկայելով, որ «Նախնական պատմության» կազմողը ծագումով Մծուրնից էր:

Բերված վկայությունները հնարավորություն են տալիս կարծելու, թե Մծուրն քաղաքից սերող Մար-Արասը, որ ներկա է եղել Սանատրուկ թագավորի պալատի պեղումներին և նկարագրել է Տրդատ III-ի ժամանակվա, այսինքն՝ IV դարի սկզբի, հունարեն արձանագրությունը, ապրել է ոչ թե Ք. ա. II դարում, ինչպես պնդում է Խորենացին, այլ Ք. հ. IV դարում: Եվ իսկապես, դեռևս Ե. Կատրմերն է ուշադրություն դարձրել այն բանի վրա, որ Մար-Արաս անունն ասորոց մոտ կարող էր հայտնվել միայն քրիստոնեական ժամանակներում, երբ հոգևոր գործչի անվան սկզբում ավելացնում էին Մար կոչումը, որ նշանակելիս է եղել Տեր[1]*:*

Գիտնականները մատնանշում են նաև, թե հենց Սերեոսի քաղած «Նախնական պատմության» մեջ տվյալներ կան, որ սահմանում են դրա գրության ժամանակը, որովհետև Հայ Արշակունիների ցուցակում վերջինը հիշվում է Արշակ II-ի որդի Պապ թագավորը (368-374): Հիմնվելով այս վերջին ժամանակագրական հիշատակության վրա և Մար-Արասի երկը վերագրելով IV կամ V դարերին՝ Ն. Մառն անկասկած էր համարում, որ «Նախնական պատմության» հեղինակին ծանոթ էին բիբլիական ավանդությունները, և որ նրա «Պատմությունը» Հայաստանում ասորաքրիստոնեական մշակույթի կերադողության արդյունք է:

Հարկ է նշել, որ ինչպես Մառը այնպես էլ Պ. Ֆեստերը, մատնանշելով Մար-Արասի երկի ասորական ծագումը, հակված էին

---

[1] E. Quatremère, Observations sur la ville de Ninve, troizieme article. «Journ. des Savants», 1850, էջ 365:

այն մտքին, որ «Նախնական պատմության» սկզբնական բնագիրը գրվել է ասորերեն[1]: Սակայն Խորենացու և Սերեոսի օգտագործած այդ հուշարձանի զրարար տեքստերին մանրամասն ծանոթությունը հիմք է տալիս կարծելու, որ «Նախնական պատմության» զրարար թարգմանությունը արվել է հունարեն բնագրից, որովհետև Մար-Արաս, Կադմոս, Կարդոս անունները հունականացված ձև ունեն, իսկ հունարեն անունները՝ Κρονος Τιταν Ιαπετος սխալմամբ թարգմանվել են Զրվան և Տիտան, Իապետոսթէ (փոխանակ Զրուան և Տիտան, Յապետոսթէ)[2]:

Ըստ այդմ կարելի է հնարավոր համարել, որ Պրոկոպիոս Կեսարացին ուղղակիորեն կամ ընդմիջարկված կերպով (նրա համար կարող էր աղբյուր ծառայել Փավստոսի «Պատմության» առաջին գիրքը)[3] չի օգտվել Մար-Արասի «Նախնական պատմության» զրարար բնագրից, ինչպես կարծում են ոմանք[4], այլ հունականից:

Բերենք Պրոկոպիոսի համապատասխան հատվածը «Կառուցումների մասին» գրքից.

«Հայերը հնում ունեցել են թագավոր իրենց ցեղից: Այդ մասին հիշատակություններ կան հին պատմությունը չարադրող հեղինակների մոտ: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին գահընկեց արեց պարսից արքային, պարսիկները խոնարհաբար տանում էին ստրկական լուծը, բայց պարթևները մակեդոնացիների դեմ ապստամբություն բարձրացնելով և հաղթանակ տանելով, դուրս չպրտեցին նրանց և գրավեցին մինչև Տիգրիս գետն ընկած տարածությունը: Դրանից հետո հինգ հարյուր տարվա ընթացքում պարսից պետությունը գտնվում էր նրանց ձեռքում, մինչև այն ժամանակ, երբ Հռոմայեցիների կայսր դարձավ Մամայայի որդի Ալեքսանդրը: Այն ժամանակ էր, որ պարթևական արքաներից մեկը, իր Արշակ անունով եղբորը հաստատեց Հայոց թագավոր, ինչպես այդ մասին հիշատակում է Հայոց պատ-

[1] **Ն. Մառ,** նշվ. աշխ., էջ 299, 302 և այլն: **P. Vetter,** Das Buch der Mar Abas von Nisibis, Festgruss. Dr. Prof. Rud. V.Roth sum 50 jährigen Doktorjubiläum, Stuttgart, 1893, էջ 88:

[2] **Մովսես Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Ա, գլ. Թ., էջ 31-32:

[3] **Ն. Ադոնց,** նշվ. աշխ., էջ 3 (առանձնատիպ):

[4] **Մ. Աբեղյան,** Հայոց հին գրականության պատմություն, հատ. 1, Երևան, 1944, էջ 168:

մությունը: Ոչ որ ահա չկարծեն, որ Արշակունիները հայկական ծագում ունեն: Եվ այսպես [հայերի] և [պարթևների] միջև հինգ հարյուր տարվա ընթացքում խաղաղություն կր տիրում, որը պայմանավորված կր [իշխող] հարստությունների ազգակցական կապերի առկայությամբ»[1]:

Պրոկոպիոսից բերված հատվածը, ինչպես ճիշտ նշում է Ն. Ադոնցը, գրեթե ամբողջությամբ վերցված է «Նախնական պատմությունից», որովհետև միայն այդ պատմության մեջ է Պարթև արքաների թագավորության քաղաքների թիվը հասցվում 500-ի և միայն դրա մեջ է հայ Արշակունիների նահապետ համարվում Արշակը[2]:

Ի մի բերելով ամբողջ ասվածը՝ մենք կարող ենք վստահորեն եզրակացնել, որ Մար-Աբասի երկը հայ պատմագրության հնագույն հուշարձանն է՝ գրված հունարեն Ք. հ. IV դարի վերջում:

Իմ հիշյալ աշխատանքում[3] *ես ընդգծել էի, որ Արշակունիների ժամանակվա Հայաստանի մշակութային-տնտեսական կյանքում մեծ դեր են խաղացել հելլենականացած քաղաքարնակները՝ ասորիները ու հրեաները: Այնտեղ նշված էր նաև, որ դեռևս Ք. հ. III դարում Արտաշատ քաղաքում ապրել է հելլենականացած մատենագիր Յամբղիքոսը, որ գրել է 35 գլխից բաղկացած «Babyloniaka»-ն*[4]: *Ըստ ամենայնի այդպիսի մի հելլենականացված ասորի է եղել և Մար-Աբաս վիպասանը, որ ծնվել է Մծուրնում նրա ավերումից քիչ առաջ:*

Մծուրն քաղաքը, ինչպես պարզել է Յո. Մարկվարտը, տարածվելիս է եղել Արածանիի և նրա ձախ վտակ Կարասուի միջև և առևտրային առումով շատ հարմար դիրք է զբաղեցրել. այն գտնվում էր Տարոնի հարուստ և բերրի դաշտավայրում՝ առևտրային ճանապարհների խաչմերուկում[5]: *Մար-Աբասի ծննդավայրն անկասկած հետաքրքրություն է ներկայացնում,*

[1] **Procopii Caesariensis**, De Aedificüs, III, 1, 4-7, Русский перевод С. П. Кондратьева, ВДИ, 1939, № 4 (9), стр. 241-242 [Բերում ենք ըստ՝ «Ծտար ազգությունները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 5-րդ գրքի. Պրոկոպիոս Կեսարացի, Թարգմ. Հր. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 189 (Թարգմ.)]:

[2] **Ն. Ադոնց**, նշվ. աշխ., էջ 20 և 31 (առանձնատիպ)

[3] **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 69, 2-րդ հրատ., էջ 84-85:

[4] **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 40, 2-րդ հրատ., էջ 51:

[5] **J. Markwart**, Untersuchungen zur Geschichte von Eran. Philol. Supplementband, X, H. 1, էջ 235 և հջ.:

բանդի դրանով իսկ պարզվում է, որ Հին Հայոց Հակատագրի մասին խոսող, հիմնականում ժողովրդական ասքերի վրա հիմնված «Նախնական պատմությունը» ձևավորվել է ոչ թե Եփրատի վերին հոսանքների մոտ և Դարանագի և Եկեղյաց գավառներում, ինչպես սխալմամբ կարծում էր Ն. Ադոնցը[1], այլ հյուսիսից Հարքին հարող Տարոնի հյուսիսարևելյան ծայրամասերում:

Այսպիսով պարզվում է, որ Մար-Աբաս Մծուրանցին ապրել է Հին Հայաստանի այն մասում, որ պահվել է իր բոլոր ժողովրդական վեպում հիշատակված «Հարք լեռնադաշտի» հենց հարևանությամբ: Այս գավառակապը Հայկյանների հիմնական տարածքն է, և, ինչպես հայտնի է Խորենացին, այն կոչվել է Հարք («Հայրեր») այնտեղ բնակված Հայոց նահապետների պատվին: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ Մար-Աբասի երկն իր հիմնական մասով ներկայացնում է իրենց երկրի անցյալի մասին պատմող Տարոնի և Հարքի ժողովրդական ավանդապրույցներից բնկորներ:

* * *

Սերեոսի մոտ եղած «Նախնական պատմությունից» Մովսես Խորենացու «Պատմության» կազմվածության հարցը, անշուշտ մեծ նշանակություն ունի ինչպես Մար-Աբասից արված սերեոսյան քաղվածքի համեմատական հետության պարզման, այնպես էլ Խորենացու պատմագրական երկի ժամանակի և հայ մատենագրության հուշարձանների շարքում դրած տեղի հարցում:

Դեռևս 1894 թ. Ն. Մառի վերնչյալ հոդվածում համոզիչ կերպով ցույց էր տրված, որ Մովսես Խորենացին ծանոթ է եղել Սերեոսի հիշատակած Մար-Աբասի երկին և Արշակունիների ժամանակագրությունը կազմելիս անմիջականորեն օգտվել է Սերեոսի «Պատմության» սկզբնական գլուխներից: Ի հակադրություն այս կարծիքին, Ստ. Մալխասյանցն իր «Սերեոսի պատմությունը և Մովսես Խորենացին» (Թիֆլիս, 1899) հետազոտության մեջ փորձում էր ապացուցել, որ Սերեոսն է օգտվել Խորենացու «Պատմությունից», և ոչ թե հակառակը[2]:

---

[1] **Ն. Ադոնց**, նշվ. աշխ., էջ 33 (առանձնատիպ):

[2] **С. С. Малхасянц**. Историк Себеос, см. «Византийский временник», М., 1949, т. II (XXVII) էջ 99 և հջ.:

Մալխասյանցը հնարավոր էր համարում այսօրվա հետևություն անել, որ Խորենացու «Պատմությունը» կար և հայտնի էր մինչ 661 թվականին գրված Սեբեոսի «Պատմությունը»:

Ի հիմնավորում իր կարծիքի Մալխասյանցը բերում է Սեբեոսի նշումը և հիմնվում նրա «Պատմության» Գ գլխի վրա, որ հետևյալ սկսվածքն ունի՝

«Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսէսի Խորենացւոյ եւ Ստեփանոսի Տարաւնացւոյ, հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հարէ ճանաչել»:

Այնուհետև ըստ Խորենացու և Ստեփանոս Ասողիկի բերվում է Պարթև Արշակունիների ցուցակը մինչև Արտավան, և հիշատակվում են Արտաշիր Սասանյանն ու իր հետնորդները, իսկ ապա, Մամիկոնյանների ծագման մասին պատմությունից հետո, հաջորդում է հայ, պարսիկ և բյուզանդացի թագավորների համաժամանակյա աղյուսակը՝ սկսյալ Խոսրով Մեծից մինչև Վռամշապուհ և հայ Արշակունիների հարստության ավարտ:

Հարկ է նշել, որ Սեբեոսի Գ գլխի առնչությամբ հայագիտության մեջ լուրջ տարաձայնություններ կան: Դեռևս Ն. Մառն էր շատ ճիշտ ընդգծում, որ Սեբեոսի երկի Բ գլխի վերջի հայ Արշակունիների ցուցակը «մեզ հասած տեսքով խիստ տուժել է Խորենացու հետագա աղղեցությունից, որից, բացի ժամանակագրությունից, ներմուծվել են նաև առանձին արտահայտություններ»[1]: Հայ պատմագրության տեսանկյունից Արշակունիների ժամանակագրության առումով վերջին խոսքն ասած Մովսես Խորենացուց հետո, հայ մատենագիրները լոկ զրաղվել են հեղինակավոր ուսուցչի կրկնությամբ[2]:

Ն. Մառի կարծիքին շատ մոտ են Աղոնցը և Խալաթյանցը: Նրանք վիճարկում են Սեբեոսի «Պատմության» Գ գլխի սկզբի վավերականության հարցը, որ քաղվածներ ունի Մովսես Խորենացու և Ստեփանոս Ասողիկի պատմագրական երկերից, և կարծում են, որ Գ գլխի այդ մասը ընդմիջարկություն է և ուշ շրջանի գրչի միջամտություն[3]: Աղոնցի կարծիքով Սեբեոսի «Պատմության» գրչագրողը կարևոր է համարել ըստ «Հաւաստի եւ

---

[1] Ն. Մառ, նշվ. աշխ., էջ 282:

[2] Անդ, էջ 283–284:

[3] Ն. Աղոնց, նշվ աշխ., էջ 5–6: Գր. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 58 և այլն:

ճչմարիտ մատենագրաց» բերել Արշակունի արքաների ցուցակը, նկատի ունենալով երկրորդ գրքի նախորդ արքայացանկի թերիները:

Ստեփանոս Տարոնեցուն հին հեղինակների չարքը դասող Մալխասյանցի տեսակետն Ադոնցն անհիմն էր համարում: Ստեփանոս Տարոնեցին, բստ Ադոնցի, XI դարի պատմիչ էր, Ասողիկ մականվամբ, որովհետև Գ գլխի սկզբում դրված պարսից Արշակունիների ցուցակը «բառ առ բառ, տառ առ տառ վերցված է Ասողիկից»: «Բայց տրամաբանական է ենթադրել, որ չնկարագրված ժամանակը և հին հերոսների սխրանքները նկարագրել» պատրաստվող ճանաչեր Խորենացուն»[1]: Խորենացու «Պատմութեան» Սերեոսի ծանոթ լինելու մասին Մալխասյանցի կարծիքը դժվար թե ճիշտ լինի նաև այլ նկատառումներով: Ինչպես հայտնի է, Խորենացու և Սերեոսի «Պատմութեան» առաջին չորս գլուխներում եղած ժամանակագրական տվյալների համեմատական հետազոտման եղանակով հենց Ադոնցն էր համոզիչ կերպով պարզել, որ ոչ թե Խորենացու երկն էր աղբյուր հանդիսացել Սերեոսին, այլ ընդհակառակը, Մովսես Խորենացին է օգտվել Սերեոսի սկզբնական գլուխներից՝ Արշակունիների և Սասանյանների ժամանակագրութիւնը կազմելիս[2]:

Այս դիրքորոշումը ճիշտ է նաև, ինչպես նշում է Ադոնցը, Մամիկոնյանների ծագման մասին պատմության առումով, որովհետև «Խորենացու երկում նրա ավելի բարդ և ակնհայտորեն ածանցյալ բնույթը չի խանգարի ցանկացած բանասերի» նրան կասկածի տակ դնելու Սերեոսի Գ գլխից[3]:

Ինչպես տեսնում ենք Սերեոսից Խորենացու կախված լինելու հարցում կասկածներ չեն կարող լինել: Սակայն Մալխասյանցը հնարավոր համարեց իր նախկին տեսակետի պաշտպանութիւնը և փորձում էր իր կարծիքը հիմնավորել նոր փաստարկով, այն է՝ «Տիտան», «Բել» և «Զրուան» անունների մեկնութեամբ: Նա կարծում է, թե այս բառերը մտցրել է Խորենացին, և դրանով փորձում է ապացուցել, որ Խորենացու երկը աղբյուր է հանդիսացել ոչ միայն Սերեոսի, այլև Սերեոսի հիշատակած

---

[1] **Ն. Ադոնց**, նշվ. աշխ., էջ 6:

[2] Անդ, էջ 6–26:

[3] Անդ, էջ 26:

Մար-Արասի համար, որի մոտ կան Խորենացու նշած վերոբերյալ անունները[1]: «Տիտաննեան Բել», «արքայն Տիտաննեան», «Տիտան» որոշիչները, նչում է նա, Սերևոսին ծանոթ Մար-Արասի մոտ բերվում են իրրև պատրաստի անուններ, առանց մեկնաբանության, մինչդեռ Խորենացու մոտ դրանք «լիովին բացատրված ու մեկնարանված են»: Մալխասյանցի կարծիքով, Բերոսյան Սիբիլլայի վկայությունը՝ «Զրուանն եւ Տիտանն եւ Յապետոսիմ լինելին իշխանք երկրի», Խորենացին այլաբանորեն է մեկնում, կարծելով, որ այդ եղբայրների տակ պատկերացվել են Նոյի որդիները, այսինքն՝ Սեմը, Քամը, Հարեթը: Մալխասյանցը սրանից եզրակացնում է, որ այլաբանական Տիտանյանը Խորենացու մոտ համարժեք է «Քամեանին», իսկ «Տիտաննեան Բել» այլաբանության տակ հասկացվում է «Քամեան Ներրովիը»: Իր փաստարկը նա ավարտում է այն պնդմամբ, որ «Տիտաննեան» և «Բել» եղբայրների ստեղծողը հենց Մովսես Խորենացին է:

Սակայն Մալխասյանցի բերած նկատառումներն անհիմն են: «Տիտաննեան Բել», «արքայն Տիտաննեան» կապակցությունները Խորենացու Պատմության մեջ կան լոկ այն հատվածներում, որոնք վերցված են, ինչպես ինքն է նչում, Մար-Արաս Կատինայի մատյանից:

Այսպես. նրա Պատմության Ա գրքի ԺԱ գլխի ամենասկզբում կարդում ենք.

*«Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ, թէ ի հաստատել Տիտաննեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, զալ նմա ի հնազանդութիւն եւ կնալ խաղաղութեամբ»**:

Հենց այդ՝ Հայկի և Բելի պատերազմի մասին գլխում, որի համար աղբյուր է հանդիսացել Մար-Արաս Կատինայի երկը, ևս մի քանի անգամ Բելը հիշատակվում է իրրև «Տիտաննեան Բել», «արքայն Տիտաննեան» կամ «ճոխացեալն Տիտաննեան»[2]:

---

1 Ստ. Մալխասյանց, նչվ աշխ., էջ 102–105:

* [Հ. Մանանդյանը հատվածը բերում է Մ. Էմինի թարգմանությունից (Моисей Хоренский, История Армении. Русский перевод Н. О. Эмина, М., 1893, стр. 17): Դնում ենք Մովսես Խորենացու գրաբար բնագիրը (Թարգմ.)]:

2 Моисей Хоренский, История Армении. Русский перевод Н. О. Эмина, стр. 17–19.

Անչուշտ դժվար չէ տեսնել, որ «Բելը», «Տիտանեան Բելը» բոլորովին էլ Խորենացու ստեղծած այլաբանութիւնները չեն: Լիովին պարզ է, որ այս անունները կիրառվել են Խորենացու օգտագործած Մար-Արաս Կատինայի մասյանում: Խորենացուց անկախ դրանք եղել են և՛ Մար-Արասի և՛ Սերեոսի մոտ:

Ստ. Մալխասյանցն իր կարծիքի օգտին խոսող երկրորդ փաստարկ է համարում «Զրվան» անունը: Այս բառը հանդիպում է Սերեոսի մոտ եղած Մար-Արասի հետևյալ վկայութեան մեջ.

«Զի չունայ խաղայ դնայ Հայկն ի Բարելոնէ կնան եւ որդովքն եւ ամենայն ազխին հանդերձ, եւ չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ ի լեռնոտինն, որ դառաջինն չիննայ էր Զրուանայ՝ հարրն եւ եղբարրքն հանդերձ»[1]:

Ստ. Մալխասյանցը համեմատում է այս չարադրանքը Մովսես Խորենացու Պատմութեան հետ, ուր բերված են Օլիմպիոդորոս փիլիսոփայի պատմութիւնները Քսերսեսի մասին[2]:

«Յետ նաւելոյն Քսերսեսայ ի Հայս եւ դիպելոյ ցամարի, գնայ, ասէ, մի յորդւոց նորա կոչեցեալն Սեմ բնդ արեւմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն, եւ դիպեալ դաչտի միում փորու առ երկայնանստիւ միով լերամբ, գնաւոյ բնդ մէջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի, զազարէ առ գնաւոն երկրաւոնեայ աւուրս, եւ անուանէ յանուն իւր գլեառնն Սիմ, եւ զառնայ անդրէն յարեւելս հարաւոյ, ուստի եկն: Իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա Տարրան անուն, երեսուն ուստերօք եւ հնգետասան դստերօք եւ նոցին արամբք մնկննալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեղի, յորոյ անուն եւ զգաւառն անուանէ Տարան, եւ զանուն տեղւոյն ուր բնակեցաւն՝ կոչէ Յրօնս. զի անդ զառաջինն սկիզբն եղեւ բաժանելոյ որդւոց նորա ի նմանէ: -Նորին զարձեալ եւ առ եղերբ սահմանացն Բակտրիացւոց ասէին բնակել սակաւ աւուրս, մնացեալ եւ մի ումն յորդւոց նորա անդ: Քանզի կողմանք արեւելից Զրուան զՍեմ կոչեն, եւ Զարուանդ զգաւառն անուանեալ ասեն մինչեւ ցայժմ»[3]:

---

[1] «Պատմութիւն Սերէոսի», էջ 12:

[2] Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 104:

[3] Моисей Хоренский, История Армении, стр. 12 (1,6) (դնում ենք Մովսես Խորենացու գրարար բնագիրը՝ Ա, պլ. դ, էջ 26 (Թարգմ.)):

Խորենացու այս պատմությունից, նշում է Մալխասյանցը, Սերեոսի հիշատակած Մար-Արասին առնչվող բոլոր վերոբերյալ հանելուկները պարզվում են: «Զրվանը,- գրում է Մալխասյանցը,- Նոյի որդի Սեմի հեթանոսական անունն է, ըստ որի Հաղիպսեցին՝ Սիմն է (կամ Տավրոսը), գետը, որ հոսում է դաշտով՝ Եփրատն է, բնակատեղին, որ Տարրանը կառուցում է Եղրայրների հետ, հայերի գետափնյա առաջին բնակատեղին է, որ հին Տարոն գավառի անունն է կրում»[1]:

Ստ. Մալխասյանցի բերված դիտարկումներն ու եզրահանգումները բավարար համոզիչ չեն:

Ինչպես հայտնի է՝ դեռևս ոչ հեռու անցյալում ներկա հարցի մասին Յո. Մարկվարտն ամրողջովին հակառակ կարծիք էր արտահայտել: Նա համոզիչ կերպով ցույց էր տվել, որ Զրվանի մասին Մար-Արասի վկայությունը Խորենացու Պատմության մեջ [է]: Եվ իսկապես, այդ վկայությունը, ինչպես դժվար չէ տեսնել, Խորենացու հաղորդածի հետ բացահայտ հակասության մեջ է:*

Օլիմպիոդորոս փիլիսոփայի պատմածի վրա հիմնված Խորենացու այդ չարաղբանքում ասված է, որ Քսերսեսի (իմա՝ Նոյի) որդի Սեմի կամ Զրվանի բնակավայրը Սիմ լեռան մոտերքում էր, այսինքն՝ Հայկական Տավրոսի կողմերում էր, իսկ սերեոսյան Մար-Արասի վկայության մեջ Զրվանի բնակատեղին ցույց է տրվում «ի սանն որ ի լեռնոտինն», որ փոված էր «յերկիրն Արարադայ»: Մալխասյանցի ուշադրությունից վրիպել է, որ, ինչպես ճշգրիտ հաստատված է պատմագիտական երկերում[2], աստրական արձանագրությունների Ուրուատրիին համապատասխանող «Արարատի երկիր» ասելով պետք է հասկանալ ոչ թե «Սիմ»-ի լեռնային շրջանը, այսինքն Սասունն ու Խութը, այլ Կորդվաց աշխարհը, ուր «ի լերինս Արարատայ» (Մննդ. Ը. 4) կանգնեց Նոյյան տապանը: Ուստի ակնհայտ է, որ Մար-Արասի աղբյուրը Զրվանի վերաբերյալ Սերեոսի Պատմությունում չէր կարող աղբյուր հանդիսանալ՝ Զրվանի մասին Խորենացու Պատ-

---

[1] Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 105:

* [Ռուսերեն նախադասությունն բնդհանրապես իմաստ չի արտահայտում և, հավանաբար, բացթողում կա (Թարգմ.)]:

[2] К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии. Журн. Мин. нар. просв., 1874-1881, էջ 69-104. V. Inglisian, Armenien in der Bibel, Wien, էջ 23-33 և այլն:

մության վերաբերյալ հաղորդումը, ինչպես այնտում է Մալխասյանցը: Այս երկու աղբյուրների վկայությունները թոթովին տարբեր տեղեկություններ են պահպանել Խոսրովի՝ Նոյի որդի Զրվանի բնակատեղիի մասին: Սերեոսի մոտ Մար-Աբասը համաշխարհային ջրհեղեղի մասին լեգենդը կապում է Կորդվաց՝ նրկայիս Զուդի, լեռների հետ, իսկ Խորենացու պատումը Հայկական Տավրոսի, այսինքն՝ Սասունի և Մութի հետ:

Ինչպես տեսանում ենք, Խորենացին չէր կարող հնարել Տիտանյան, Բել և Զրվան անունները: Հենց Խորենացու հաղորդումից (Գիրք Ա, գլ. ը) մեզ հայտնի է, որ Զրվան անունը եղել է Մար-Աբասի դրքում: Մար-Աբասի մատյանի նեոպլատոնական մասում թեոգոնիական [աստվածածնական] պատմություններ կային «Զրուանի, Տիտանի և Յապետոսի» մասին, ընդ որում «Զրուանը» կամ «ժամանակը» համապատասխանում էր հունական «Քրոնոսին»:

Հարկ է ընդգծել, որ Զրվանին, իբրև «Տիտանների ժամանակակից», հիշատակում է հայ հին մատենագիրներից նաև Եղնիկը, որի երկը[1] գրված է Մովսես Խորենացու Պատմությունից առաջ: Այսպիսով, դժվար չէ նկատել, որ Զրվանի մասին ինչպես Եղնիկի, այնպես էլ Սերեոսի հիշատակած Մար-Աբասի հաղորդումների համար աղբյուր է հանդիսացել ոչ թե Մովսես Խորենացու Պատմությունը, այլ, ըստ երևույթին, մեզ անհայտ ասորի գնոստիկի երկը:

* * *

Մեր նյութին առնչվող մյուս հարցը Մար-Աբաս Մծուրանցու երկում՝ Բագրատունիների ծագման և Արշակ Կրտսերի, Հայոց առաջին Արշակունի արքայի ժամանակ նրանց խաղացած բացառիկ դերի մասին է:

Ինչպես հայտնի է, «Նախնական պատմության» հենց այս մասն է մի շարք գիտնականների առիթ տվել Մար-Աբաս Մծուրանցու երկը VII-IX դարերում արված կևդծ ընթերան համարելու:

Այս տեսակետն առանձնակի վճռականությամբ էին պաշտպանում Գր. Խալաթյանցը և Յո. Մարկվարտը[2]:

---

[1] **Եղնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 122:

[2] **Գր. Խալաթյանց**, նշվ. աշխ., էջ 83-85 և 97-102; **J. Markwart**, Die Genealogie der Bagratiden und das Zeitalter der Mar-Abas und Ps. Moses Horenaci, «Caucasica», Fasc. 6, 2 Teil, Leipzig, էջ 10-77:

Նկատի առնելով այս հարցի կարևորությունը՝ անհրաժեշտ եմ համարում Բագրատունիների մասին «Նախնական պատմության» հատվածները բերել ամբողջությամբ:

«Նախնական պատմության» մեջ ասված է, որ Հայոց ապստամբելուց և ասորեստանցոց իշխանությունից ազատվելուց հետո՝

«Եւ տիրէ ի վերայ նոցա Ջարեհ որդի որդւոյ Արամննակայ, այր դաւրաւոր եւ կորովի աղեղամբ. ապա Արմոգ. ապա Սարհանդ. ապա Շաւաչ. ապա Փառնաւազ:

Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. եւ Բագարատ ծնաւ զԲիւրատ. եւ Բիւրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից. այս ինքն է Անգեղտուն. վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին:

Այս Փառնաւազ հնազանդեալ Նարուզոդոնոսորայ արքայի ի Բաբելոն: Եւ ապա յայնմհետէ Բաբելացւոց եւ Մարաց թագաւորքն տիրեցին մինչեւ ցԱղեքսանդր Մակեդոնացի, որ զամենայն տիեզերս հնազանդեցոյց ի ծառայութիւն»[2]:

Անհրաժեշտ է բերել նաև «Նախնական պատմության» հիշատակությունը Հայոց առաջին Արշակունի արքայի՝ Արշակ Կրտսերի և Բագրատունյաց՝ «Բագարատ Փառազանի» դատեր ամուսնության մասին:

«Եւ յուզարկէ զնա ի Մրծանայ ընդ յարեւմուտս զաւրու մեծաւ եւթանասուն հազարաց սպառազինաց. եւ մեծամեծ իշխանաւք նախարարաց հազարաց բիւրաւորաց, որում ոչ ոք կարէր զդէմ ունել պատերազմաւ: Սմա ընդ առաջ ելանէ Բագարատն Փառազան յորդւոցն Արամննակայ նախարար մեծ հանդերձ զաւրու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի եւ արծաթ. եւ զարդարէ զնա ի սնդր (?) եւ ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի. եւ նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ գահոյիցն. եւ տայ նմա զդուստր իւր ի կնութեան:*

---

[1] «Պատմութիւն Սերէոսի», էջ 15 (պլ. Ա):

* [Հ. Մանանդյանի հարցականն անհասկանալի է. խոսքը, ինչպես երևում է հաջորդող վակաս բառից, «սնդոն»-ի կամ «սնդու»-ի մասին է՝ «բարակ» կամ «մետաքսե» կտավ. տե՛ս «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865 (թարգմ.)]:

Զսա արար Արչակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան եւ հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, եւ հայր արքային, եւ եղբայր. որումետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ»[1]:

Հիմնվելով բերյալ հատվածների վրա, Խալաթյանցը հետեւություն է անում, որ «Նախնական պատմության» հեղինակը, ցանկանալով բարձրացնել Բագրատուններին, խոսում է նրանց իշխանական տոհմի հին ծագման մասին, որն իբրև մինչև Նարուգոդոնոսորի ժամանակներն է հասնում, և հատուկ ընդգծում է այն բացառիկ դիրքը, որ իբր այս տոհմը զբաղեցնում էր դեռևս Հայկյանների և Արչակունիների ժամանակներում:

Գր. Խալաթյանցն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ Բագրատուններին վերագրյալ պատիվ է մատուցվում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ոչ մի ուրիշ իշխանական տոհմի մասին հիշատակություն անգամ չկա: «Արդյո՞ք սա է անկողմնակալ երկը»,- բացականչում է նա:

Նրա կարծիքով Բագարատ Փառազյանի և Արչակ Կրտսերի ազգակցական կապի մասին սերեոսյան Մար-Արասի վկայության մեջ ակնարկ կա մյուս նախարարական տոհմերի նկատմամբ Բագրատունիների առավելության և Արչակունիներից հետո հայոց գահը ժառանգելու իրավունքի մասին, ինչին նրանք իսկապես ձգտում էին և ուշ դարերում՝ իրենց նպատակին հասան 887 թվականին[2]*: Սերեոսյան Մար-Արասի հատվածի կազմությունը, ինչպես կարծում է Խալաթյանցը, պետք է որոնել VIII դարի կեսերին և IX դարի վերջերին*[3]*:*

«Նախնական պատմության» հեղինակի ժամանակաշրջանի մասին ավելի որոշակի է արտահայտվում Յո. Մարկվարտը: Նրա կարծիքով Բագրատունիների՝ վերևում բերված անունները՝ Զարեհ, Բագամ, Շավաշ և Անգեղ, հիմնված են ոչ թե ժողովրդական ավանդությունների վրա, այլ արհեստականորեն ստեղծվել են Զարեհավան, Բագավան, Շավարչան և Անգղ տեղանուններից, որոնք գտնվում էին հին Հայաստանի Բագրեւանդ, Ծաղկոտն և Արտազ գավառներում: Բագրատունյաց նահապետների այս արհեստական տոհմարանությունը, որ

[1] «Պատմութիւն Սերէոսի», էջ 9-10 (գլուխ Բ):

[2] Գր. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 97-98:

[3] Անդ, էջ 102:

կապված է ուշ դարերում նրանց դրաղեցրած տարածքների հետ, ինչպես կարծում է Յո. Մարկվարտը, ցույց է տալիս, որ Մար-Արասի «Նախնական պատմությունը» չէր կարող կազմված լինել Կոգովիտում (Կոգայովիտ) Բագրատունիների տիրելուց առաջ: Ինչպես պնդում է Յո. Մարկվարտը, այն գրված է IX դարի սկզբներին Տարոնում, Բագարատ Բագրատունու պալատում[1]:

Մար-Արասի ժամանակի մասին Խալաթյանցի և Մարկվարտի կարծիքները մենք մանրամասնորեն քաղեցինք, որովհետև նրանց հետևություններն ամբողջովին հակասում են Մառի, Ադոնցի և այլ գիտնականների՝ մար-արասյան երկասիրության վավերականության և հնության մասին վերևում բերված կարծիքներին:

Պետք է ասել, որ Բագրատունիների տոհմաբանության VIII-IX դդ. ծագած լինելու օգտին Խալաթյանցի և Մարկվարտի առաջ քաշած փաստարկները, որոշ բացառություններով, բավական համոզիչ են:

1913 թ. Վիեննայում լույս տեսավ Ա. Մատիկյանի «Անանունը կամ Կեղծ Սերեոսը» մենագրությունը: Այս ուսումնասիրության մեջ հեղինակը շատ համոզիչ կերպով ցույց է տվել, որ Բագրատունիների տոհմաբանությունը բոլորովին էլ Մար-Արասի «Նախնական պատմության» վավերական մաս չի կազմում: Ինչպես նա է կարծում, դա նկատելի է այդ հատվածի լեզվի և չարագրանքի մանրամասն քննությունից, որ, ի հավելումն, նաև գրեթե կապված չէ Մար-Արասի վավերական տեքստի հետ[2]: Բագրատունիներին վերաբերող և նրանց ծագումը Հայկից բխեցնող այս հատվածը, ըստ Մատիկյանի, ներմուծել է Մար-Արասի երկի խմբագրողը, որ ապրել է այդ նախարարության հզորության և վերելքի օրերին[3]:

Վերևում բերված երկրորդ հատվածը, ուր հիշատակվում են Բագարատ Փառպյանը և նրա դստեր ու Արշակ Կրտսերի ամուսնությունը, ինչպես դժվար չէ նկատել, պետք է նույնպես ուշ շրջանի ընդմիջարկություն համարվի: Այս պատմությունը, ինչպես կարծում են Գր. Խալաթյանցն ու Յո. Մարկվարտը[4],

---

[1] J. Markwart. Die Genealogie der Bagratiden..., էջ 14, 18 և հջ.:

[2] Ա. Մատիկյան, Անանունը կամ Կեղծ Սերեոսը, Վիեննա, 1913, էջ 48-49:

[3] Անդ, էջ 48:

[4] Գր. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ 97-98: J. Markwart, Die Genealogie der Bagratiden..., էջ 148:

իրական դեպքի հուշարտացոլում է՝ IV դարավերջի Թագավոր Վաղարշակի և Ասպետ Բագրատունու դատեր ամուսնության:

Այսպիսով Գ-ր. Խալաթյանցի և Յո. Մարկվարտի՝ Բագրատունիններին առնչվող սերեոսյան Մար-Արասի հատվածների ժամանակի մասին վերևում բերված փաստարկները, քանի որ ըստ էության ուղղված են «Նախնական պատմության» պատմական վավերականության դեմ, իրենց վերջնական եզրահանգումներով երերուն են և ոչ համոզիչ: Մար-Արասի քննադատներն անշուշտ ճիշտ են, երբ խոսքը «Նախնական պատմության» մեջ Բագրատունիններին վերաբերող մասերի կողմնակալ փոփոխումների մասին է: Սակայն նրանց փաստարկները բոլորովին անհիմն են Մար-Արասի պատմագրական երկի հիմնական մասի առնչությամբ, որի վավերականությունը պարզվում է բավարար որոշակիությամբ:

* * *

Եվ այսպես, Մար-Արասի «Նախնական պատմության» վիճահարույց խնդրի ուսումնասիրումը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին.

1. Վերևում ասվածից կարելի է եզրակացնել, որ դեռևս Ք. հ. IV դարի վերջին Մար-Արաս Մծուրանցի փիլիսոփան, որ Խորենացու մոտ կոչված է Մար-Արաս Կատինա (=λεπτός, ságax, հայ.՝ ուշիմ), հունարենով գրել է «Նախնական պատմություն Հայոց»-ը, որն այնուհետև թարգմանվել է հին հայերեն:

2. Մար-Արասի երկն իր հիմնական մասով կազմված է իրենց երկրի անցյալի մասին պատմող ժողովրդական հուշերից:

3. Մար-Արասի երկը ինչպես Սերեոսի «Պատմության», այնպեսև Խորենացու «Պատմության» հիմնական աղբյուրներից մեկն է հանդիսացել:

4. Ո՛չ Սերեոսը և ո՛չ, առավել ևս, Սերեոսի երկում հիշատակված Մար-Արասը չեն ճանաչել Մովսես Խորենացուն և չեն օգտվել նրա «Պատմությունից», այլ հակառակը, ինչպես ճիշտ են մատնանշում Ն. Մառն ու Ն. Ադոնցը, Սերեոսի «Պատմությունն» էր Մովսես Խորենացու աղբյուրը:

5. Բագրատունյաց նախնիների մասին Սերեոսի «Պատմության» հատվածները ուշ ընդմիջարկություններ են և չեն կարող «Նախնական պատմության» անվավերականության ապացույց հանդիսանալ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՎՍԵՍ ՈՒՏԵՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ԿԱՂԱՆԿԱՏՎԱԾ)

(Լ֊ 7)

Գրված է Ենայի համալսարանում ուսանելու տարիներին և որպես դոկտորական ատենախոսություն պաշտպանվել 1897 թվականին: Նույն թվականին լույս է տեսել «Beiträge zur albanischen Geschichte» խորագրի ներքո (Leipzig, 1897, 49 s.):

Հայերեն թարգմանությունը (Աչոտ Հայրունի) կատարվել է այս հրատարակությունից:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ – ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՆՆԻՆՍԿԻ. ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ, ՕԴԵՍԱ, 1899

(Լ֊ 37)

Գրված է 1900 թ. Վաղարշապատում: Լույս է տեսել «Արարատ» ամսագրում (1900, № 2, Լ֊ 85-86, ստորագր.՝ Հ. Մ.):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ – ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՆՆԻՆՍԿԻ. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐ), ՔԻՇՆԵՎ, 1900

(Լ֊ 40)

Գրված է 1902 թ. Վաղարշապատում: Լույս է տեսել «Արարատ» ամսագրում (1902, № 3-4, Լ֊ 335-342):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԽՆԴԻՐԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ
(Մատենագրական հետազոտություն)

(Լ՚ 49)

Գրված է 1904 թ. Վաղարշապատում: «Ուսումնասիրություն Դավիթ Հարքացի վիկիտուիային վերագրված իմաստասիրական երկերի» խորագրի ներքո լույս է տեսել «Արարատ» ամսագրում (1904, № 2, էջ 158-171, № 6, էջ 564-577, № 7-8, էջ 649-657): Նույն թվականին լույս է տեսել նաև առանձին գրքով, սակայն այլ խորագրի ներքո (Վաղարշապատ, 1904, 39 էջ):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՔՐՈՆԻԿՈՆԻՑ ՄԻ ՀԻՆ ՁԵՌԱԳՐՈՒՄ

(Լ՚ 80)

Գրված է Վաղարշապատում 1904 թ. նոյեմբերի 20-ին: Լույս է տեսել «Հանդես ամսօրյա» ամսագրում (Վիեննա, 1905, № 1, էջ 15-19):

Հրատարակվել է նաև առանձին (Վիեննա, 1905, 15 էջ):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(Է՚ 92)

Գրված է 1927-1928 թթ. Երևանում: Լույս է տեսել «Հանդես ամսօրյա» ամսագրում (Վիեննա, 1928, № 3-4, էջ 135-146, № 5-6, էջ 214-223): Զետեղվել է «Հունարան դպրոցը և նրա գարգացման չրջանները» մենագրությունում որպես հավելված (էջ 259-293):

Արտատպվում է այս վերջին հրատարակությունից:

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

(Լ Ջ 113)

Գրված է Երևանում 1925-1928 թվականներին: Նախապես լույս է տեսել «Հանդես ամսօրյա» ամսագրում (Վիեննա, 1925, № 5-6, էջ 225-232, № 7-8, էջ 347-354, № 11-12, էջ 539-548: 1926, № 1-2, էջ 15-23, № 3-4, էջ 121-129, № 5-6, էջ 209-216, № 7-8, էջ 305-313, № 9-10, էջ 437-445, № 11-12, էջ 525-533: 1927, № 3-4, էջ 109-116, № 6, էջ 289-301, № 8, էջ 417-425, № 10, էջ 559-569: 1928, № 1-2, էջ 25-30, № 3-4, էջ 109-120, № 5-6, էջ 205-213, № 7-8, էջ 303-310, № 9-10, էջ 401-407): Լույս է տեսել նաև առանձին գրքով՝ «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները: Քննական ուսումնասիրություն» (Ազգային մատենադարան, № 119), Վիեննա, 1928, 299 էջ:

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

(Լ Ջ 269)

Գրված է 1934 թ. Երևանում: Նախապես լույս են տեսել թեզիսները՝ «Խորենացու առեղծվածի լուծումը»: (Թեզիսներ Կուլտուրայի պատմության ինստիտուտում կարդացված զեկուցման: Զեկուցման հիմնական թեզիսները հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով), Երևան, 1933, 21 էջ: Նույնը, «Անահիտ», ամսագիր, Փարիզ, Դ տարի, նոյեմբեր 1932 - ապրիլ 1933, № 3-6, էջ 182-185: «Խորենացու առեղծվածի լուծումը» խորագրի ներքո լույս է տեսել առանձին գրքով (Երևան, 1934, 231 էջ):

Այս աշխատության հիմնական տեսակետները Հ. Մանանդյանը չարադրել է «Когда и кем была составлена "Армянская география", приписываемая Моисею Хоренскому» հոդվածում (տե՛ս «Византийский временник», т. 1(26), Москва, 1947, стр. 127-143):

Արտատպվում է 1934 թ. հրատարակությունից:

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

(Հ. 387)

Գրված է 1930-ական թվականների սկզբներին Երևանում: Լույս է տեսել «Խորենացու առնդծվածի յուծումը» երկասիրությունում (Երևան, 1934) որպես հավելված (Հ. 179–207):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ՆՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ

(Հ. 407)

Գրված է 1940-ական թվականներին Երևանում: Լույս է տեսել «Էջմիածին» ամսագրում (1955, № 5, Հ. 29–35, № 6, Հ. 20–26): Հրատարակության է պատրաստել Արսեն Մանանդյանը:

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԱՐՄԱՎԻՐԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

(Հ. 435)

Գրված է 1945 թվականին, Երևանում: Զեկուցված է ԳԱ ընդհանուր ժողովի հորելյանական նիստում 1945 թվականի նոյեմբերի 22-ին:

Առանձին գրքով լույս է տեսել 1946 թվականին (58 Հ., բնագիրը հայերեն և ռուսերեն):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԳԱՌՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՌՆԻԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

(Հ. 465)

Գրված է 1946 թվականին, Երևանում: Զեկուցված է 1946 թ. ապրիլի 22-ին՝ Երևանի պետական համալսարանի 25-ամյակին

ամփրված հորելյանական-գիտական սեսիայի պլենար նիստում:

Առանձին գրքով լույս է տեսել 1946 թվականին (59 էջ, համառոտ բովանդակությունը ռուսերեն):

Արտատպվում է այս հրատարակությունից:

1951 թ. Հ. Մանանդյանը վերստին անդրադառնում է Գառնիի հունարեն արձանագրությանը և հրատարակում «Новые заметки о греческой надписи на языческом храме Гарни» («Տեղեկագիր», ՀԽՍՀ ԳԱ Հասարակ. գիտ., 1951, № 4, էջ 9-35) հոդվածը, որը կրկնում է «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» ուսումնասիրության հիմնական բովանդակությունը: Հ. Մանանդյանն այստեղ անդրադառնում է արձանագրության իր նախորդ ընթերցման առանձին բառերի վերծանման ճշգրտմանը: Հետևաբար, նպատակահարմար չհամարեցինք այս հոդվածի զետեղումը պատմարանի երկերի սույն 7-րդ հատորում:

ՄԱՐ-ԱԲԱՍԻ «ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ը
(Սեբեոսի, Մովսես Խորենացու և Պրոկոպիոս Կեսարացու աղբյուրների հարցի առթիվ)

(էջ 501)

Գրված է 1940-ական թվականների երկրորդ կեսին Երևանում: Լույս է տեսել Հ. Մանանդյանի մահվանից հետո [«Начальная история Армении» Мар-Абаса. (К вопросу об источниках Себеоса, Моисея Хоренского и Прокопия Кесарийского), տե՛ս «Палестинский сборник», вып. 2 (64-65), М.-Л., 1956, էջ 69-86]:

Հայերեն թարգմանությունը (Գ. Ա. Մաղոյան) կատարվել է այս հրատարակությունից:

ՅԱՆԿԵՐ *

*կազմեց Ա. Ա. Ութուջյանը:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ

Արաս, Աղվանից կաթողիկոս - 16, 33, 34
Արբայաններ, արքայատոհմ - 364
Արգար(իոս), Թագավոր - 28, 370, 402, 428
Արղիչո, ասորաց երից - 172
Արղլա իրն-Տահիր, մատենագիր - 322
Արեղյան Մ. - 116, 249, 319, 375, 408, 474, 475, 512
Արլապաս - 368, տե՛ս նաև Սմբատ սպարապետ
Արյուղենոս, մատենագիր - 89, 90, 285, 286, 316
Աբրահամ, Աստվածաշնչ. - 183
Աբրահամ Ա Աղբաթանեցի, Հայոց կաթողիկոս - 25, 34, 35, 170, 251
Աբրահամ Հռետոր - 243, 244
Ագաթանգեղոս, պատմագիր - 37, 38, 44, 417, 448, 449, 468, 471, 474-477, 502, 510
Ադոնց Ն. - 118, 178, 184, 185, 188, 193, 201, 202, 208, 221-223, 241-247, 252, 256, 261, 263, 312, 350, 351, 376, 422, 424, 428, 501, 508, 512-516, 523, 524
Ադոնտես, իմաստասեր - 144, 145
Աթենա Կույս, դից. - 73, 76
Աթով, դից. - 76
Աժդահակ, առասպ. - 318, 411
Ալեքսանդր, Հռոմի կայսր - 512
Ալեքսանդր (Աղեքսանդրոս) Մեծ Մակեդոնացի - 97, 98, 106, 110, 132, 230, 271, 272, 285, 286, 318, 319, 329-334, 336, 339, 340, 342-345, 401, 403, 417, 418, 421-423, 426, 429, 431, 496, 509, 512, 521
Ալիշան Ղ. - 44, 328, 469, 479
Ալփ Իլթիվեր, Հոնաց իշխան - 35
Ակինյան Ն. - 81, 170-174, 254, 255, 258, 261, 263-265, 335, 336, 350-352, 354, 355, 357, 358, 370, 383-385, 400, 416, 419, 425, 508, 510
Աղբալյան Ն. - 247, 252
Աղեքսանդր Բաղմավեպ, պատմագիր - 82, 86, 89
Աղեքսանդրոս, մեկնիչ - 53, 67, 68, 70, 71, 158
Աղեքսանդրոս Ափրուդիսեցի - 53, 70, 160
Ամատյան Հր. - 324, 340, 341, 343, 344, 379, 402, 403, 425, 429, 431
Ամասիա, նահապետ - 497, 503

Ամատունյաց տոհմ - 312
Ամբլիքոս (Ամղիքոս) - 150, 159, տե՛ս նաև Յամբղիքոս
Ամելախոս (Ամելախոյս, Ամելավխոս, Ամիլավխույս), մեկնիչ - 54, 154, 159-165, 168
Ամմիանոս Մարկելինոս, պատմագիր - 27, 39
Ամմոնիոս, անձնանուն - 54
Ամմոնիոս, մեկնիչ - 54, 64, 67-69, 71, 148, 149, 152, 153
Այտընյան Ա. - 120
Անահիտ, դից. - 438, 448, 449
Անանիա Մոկացի, Հայոց կաթողիկոս - 23-25, 34, 35
Անանիա Շիրակացի, մաթեմատիկոս, իմաստասեր - 44, 58, 167, 169, 230-235, 286, 290-293, 295, 299, 300, 306-309, 321, 323, 328, 329, 340, 341, 344, 415, 416, 426
Անանիա Շիրակունի, տե՛ս Անանիա Շիրակացի
Անանուն Հեղինակ - 53
Անանուն մեկնիչ - 52-54, 117, 144-148, 153, 174, 175, 217-219, 241, 244, 246, 248, 249
Անանուն պատմագիր - 506-508, 523
Անաստաս Ա Ակոռեցի, Հայոց կաթողիկոս - 34, 235, 251
Անաստասիոս, կայսր - 33, 264
Անաստոլիոս, ուսուցիչ - 163, 164
Անդրոնիկոս, իմաստասեր - 117
Անգեղ, առասպ. - 521
Անգեղ Բագրատունի - 522
Անիտոս, ոմն - 413
Անհայտ մեկնիչ - 53
Աննինսկի Ա. - 37-46, 525
Անտիոքոս IV Եպիփանես, Սելևկյան թագավոր - 356, 458
Անտոնիոս Էրմիա - 54, 154, 157, 163
Անտոնինոս Կարակալլա, կայսր - 475
Անուչ, թագուհի - 293
Անուչավան Սոսանվեր, նահապետ - 444, 498
Աչխեն, Հայոց թագուհի - 469, 474
Աչոտ Արծրունի - 403, 428, 430
Աչոտ Բագրատունի, Ատրներսեհի հայր - 366
Աչոտ Բագրատունի, իշխանաց իշխան - 272, 358, 367-369, 382, 383, 416, 417
Աչոտ Բագրատունի (կույր) - 366
Աչոտ Բագրատունի, Շապուհի հայր - 366
Աչոտ Բագրատունի, պատրիկ - 251
Ապոլլոն, դից. - 439-449, 454
Ապողղոդորոս, ոմն - 83
Առան, կողմնապահ - 26
Առավեղյաններ, տոհմ - 296
Ասողիկ (Ստեփանոս Տարոնեցի), պատմագիր - 59, 115, 250, 251, 358, 362, 363, 366, 374, 402, 418, 426, 427, 515, 516
Ասպանղնատ, դից. - 35, տե՛ս Թանգրիթ խան
Ասպատ Փառնավազյան - 521
Ասպարհրուկ, բուլղարաց առաջնորդ - 322

Ասպետ Բագրատունի - 524
Ս. Աստվածածին, Ս. Աստվածամայր - 372, 373, 377, 381, 382, 384
Ավգերյանց Մ. - 81-83, 86, 89-91, 177, 179, 344
Ավդալբեգյան Թ. - 414
Ավվաս, Եփրեմ Ասորու աչակներտ - 38
Ավրելիոս Բակորոս, Հայոց թագավոր - 468, տե՛ս նաև Բակուր, Հայոց թագավոր
Ատոմ Արծրունի - 373
Ատրներսեհ Բագրատունի, Վասակի որդի - 366
Արա Գեղեցիկ, նահապետ - 444, 498, 503, տե՛ս նաև Արայան Արա
Արամ, նահապետ - 292, 293, 498, 503, 505
Արամազդ, դից. - 73, 75, 76, 86, 91, 462
Արամայել Միհրական - 17
Արամայիս, նահապետ - 362, 497, 503
Արայան Արա - 498, տե՛ս Արա Գեղեցիկ
Արիստակես Ա Պարթև, Հայոց կաթողիկոս - 471, 478
Արիստակես Լաստիվերտցի, պատմագիր - 416
Արիստիպպոս Իդդոնիկևցի, իմաստասեր - 144, 218
Արիստոտել, իմաստասեր - 6, 50-54, 56-58, 61, 62, 66, 77, 78, 94, 97-99, 106, 109-111, 115, 116, 118, 122-124, 126, 127, 129, 131, 133, 138, 144, 146-148, 153-162, 164-166, 169, 186, 189, 190, 194-199, 202-208, 211, 217-219, 224, 225, 229-231, 235, 240, 244, 261-263, 267, 268, 285, 294, 395, 396, 408, 411, 412
Արիտ Ստագիրացի, Նիկոմաքոսի որդի - 97
Արծրունիներ, տոհմ - 365
Արմենակ (Արամենակ) Հայկյան - 444, 497-499, 503, 505, 521
Արմոզ Հայկյան - 503, 521
Արչակ Կրտսեր, Հայոց թագավոր - 353, 504, 513, 520-523
Արչակ Մեծ, պարթևաց թագավոր - 310, 312, 413, 420, 504, 509
Արչակ Փոջ, պարթևաց թագավոր - 431, 512
Արչակ II, Հայոց թագավոր - 363, 511
Արչակունիներ (Հայ) - 29, 37, 286, 351. 363, 446, 447, 459, 460, 463. 480-482, 490, 494, 495, 502-505, 509-511, 513-516, 520-522
Արչակունիներ (պարթև) - 310, 502, 505, 509, 510, 513, 515
Արտաշես I, Հայոց թագավոր - 294-296, 303, 305, 312, 318, 431, 445, 447-451, 456, 458-462, 491, 497
Արտաշես Աչխարհակալ - 447, տե՛ս նաև Արտաշես I
Արտաշեսյաններ, արքայատոհմ -

450, 454, 459, 463, 481-483, 486, 491, 497
Արտաշիր Սասանյան, պարսից թագավոր - 310, 311, 515
Արտավազդ II, Հայոց թագավոր - 443, 486, 515
Արտավան V, պարթևաց թագավոր - 504
Արտեմիա, դից. - 438-440, 442-449, 454, 461, 463, 498
Արքսերդիս (Ասքերդիս), ոմն - 91
Արևելյայցս Լուսավորիչ, տե՛ս Ս. Եղիա
Աքիլլևս, դից. - 413

Բաբայան Լ. Հ. - 5
Բաբան, տե՛ս Բարևկ
Բաբևկ, Հրոսակ - 347, 370
Բաբկևն Ա Ողմսևցի, Հայոց կաթողիկոս - 33, 365
Բագամ Փառնավազյան - 521, 522
Բագարատ Բագրատունի, իշխանաց իշխան - 353, 354, 357, 360, 361, 523
Բագարատ Փառնավազյան (Փառազյան), թագադիր - 353, 504, 521-523
Բագրատունիններ, տոհմ - 347-353, 363, 365, 366, 368, 369, 372, 453, 503, 520-524
Բակուր, Հայոց թագավոր - 468
Բասմաջյան Կ. - 360
Բարդածան Եղեսացի, մատենագիր - 475
Բարդուղիմեոս, առաքյալ - 45
Բարթիկյան Հր. Մ. - 513
Բարչամ, առասպ. - 503
Բարսեղ Կեսարացի, մեծրոպոլիտ - 251
Բաումգարտներ Ա. - 221, 333, 374, 413, 506
Բել, առասպ. - 516-518, 520, տե՛ս նաև Տիտանյան Բել
Բերեսոս, մատենագիր - 82
Բերոսյան Սիբիլլա - 517
Բյուրասպի Աժդահակ, առասպ. - 364
Բյուրատ Փառնավազյան - 521
Բնդո, պարսից թագավորի ազգական - 16
Բնոտ, վանական - 34
Բոլտունովա Ա. Ի. - 435-441, 443, 450, 451, 455-458
Բորև Է. - 8, 9, 12
Բրանդիս Ա. - 61
Բրոսսե Մ. - 9, 13, 22, 23
Բուզա, դորավար - 272, 354, 355, 357-360, 362, 363, 365-368, 372, 374, 380, 383, 386
Բունիաթյան Ն. - 479, 480, 483, 484, 491
Բուսսե Ա. - 124, 126-134, 138-143, 161, 199

Գագիկ, Աղվանից կաթողիկոս - 24
Գագիկ Արծրունի - 472
Գալերիոս, դորավար - 477
Գառնիկ, նահապետ - 498
Գարագաշյան Ա. Մ. - 498
Գևլցևր Հ. - 42
Գեղամ, նահապետ - 302, 503

Գևորգ, իշխան - 417
Տ. Գևրմանոս, կ. Պոլսի պատրիարք - 239
Գյուլբենկյան Գալուստ - 5
Գյուտ, եպիսկոպոս - 28
Գյուտ Ա Արահեղացի, Հայոց կաթողիկոս - 59, 386
Գողիաթ, Աստվածաշնչ. - 183, 386
Գրիգոր, գրիչ - 108, 111
Գրիգոր, Հովհան Որոտնեցու աշակերտ - 156
Գրիգոր, վարդապետ - 95
Գրիգոր, քերթող - 169-171
Գրիգոր Աստվածարան - 57, 73, 78, 81, 258
Գրիգոր Եղիվարդեցի - 371
Գրիգոր Լուսավորիչ - 23, 27, 28, 34, 35, 448, 478
Գրիգոր Մագիստրոս - 117, 136-138, 140, 141, 234, 420, 428, 447
Գրիգոր Մամիկոնյան - 17
Գրիգոր Նարեկացի - 42, 418, 420, 424, 425
Գրիգոր Նյուսացի - 109
Գրիգոր Սուփան - 361, 371
Գրիգոր Տաթևացի - 133
Գրիգոր Տղա - 418
Գրիգոր Բարունապետ - 107
Գրիգոր Քերդող - 170, 251
Գրիգորիս Գ Պահլավունի, Հայոց կաթողիկոս - 96
Գրիգորիս, վրաց և աղվանից եպիսկոպոս - 28, 29
Գոլիկլմոս Վիատոն - 350
Գուչար Հայկազն - 304
Գուտշմիդ Ա. - 42, 290-293, 299, 320, 351, 501, 506
Գուրգեն Ապուսկճ - 366
Գուրկո-Կրյաժին Վ. - 346
Գևորգ Պալատեցի Հովհաննիսյան - 80
Գևորգ վարդապետ - 107

Դավիթ, անձնանուն - 72, 249
Դավիթ, Աղվանից կաթողիկոս - 23
Դավիթ, Աստվածաշնչ. - 183, 243, 380
Դավիթ, եպիսկոպոս - 18
Դավիթ, նորպղատոնական մեկնիչ - 58-62, 64, 70-73, 75, 77, 78, 125, 126, 137, 145, 148, 158, 165, 199, 200, 209, 212, 214, 238, 247, տե՛ս նաև Դավիթ Անհաղթ, Դավիթ Ներգինացի
Դավիթ Անհաղթ, իմաստասեր, մեկնիչ - 48-60, 63-67, 69-75, 78,79, 92, 93, 96, 103-105, 108, 110, 113, 118, 121-129, 131, 137, 139-146, 148, 149, 152-155, 157-161, 164-166, 175, 182, 189-192, 195-202, 205-207, 209-211, 215-217, 219, 220, 222, 225-231, 233, 234, 236-238, 240-249, 251, 252, 386, 394, 407, 409, 411, 526, տե՛ս նաև Դավիթ Ներգինացի, Դավիթ նոր պղատոնական մեկնիչ
Դավիթ Բագրատունի - 373
Դավիթ Բագրևանդցի, իմաս-

տասներ - 249, 251
Դավիթ Բ Կակաղեցի, Հայոց կաթողիկոս - 361
Դավիթ Հարքացի, իմաստասեր - 49, 59-62, 72, 117, 126, 178, 183, 235, 249, 251, 375, 380, 526, տե՛ս նաև Դավիթ Հերոսանացի
Դավիթ Հերոսանացի (Հերոսնացի) - 59, տե՛ս նաև Դավիթ Հարքացի
Դավիթ Մագիստրոս - 23
Դավիթ մանկնիչ - 226, 247, 249
Դավիթ Մեծ, տե՛ս Դավիթ Անհաղթ
Դավիթ Ներկինացի, իմաստասեր - 59, 92, 95-97, 99, 103, 105, 106, 108, 110, 124, 125, 154, 155, 157, 197, տե՛ս նաև Դավիթ Անհաղթ
Դավիթ Ներջունացի (Ներքինացի), իմաստասեր - 59
Դավիթ Տարոնացի, Թարգման - 249, 251
Դավիթ փիլիսոփա (VII դ.) - 214, 215, 411
Դավիթ Քևրական - 230, 246-248, 263
Դավիթ Քևրթող - 118, 248, 249
Դավթյան Յ. - 465
Դաղյան Խաչիկ վրդ. - 11, 25
Դարևհ III, պարսից Թագավոր - 304, 333
Դևմոս, ոմն քևրական - 53, 160
Դևպինոս Կրետացի, քանդակագործ - 445
Դիադոխոս, իմաստասեր - 161
Դիոկղետիանոս, կայսր - 39, 284, 477
Դիոն Կասսիոս, պատմագիր - 27, 475
Դիոնիս, դից. - 91, 214
Դիոնիսիոս (Դիովնիսիոս) Թրակացի, քևրական - 78, 79, 115, 116, 118, 167, 177, 178, 180-188, 191, 193, 200-202, 205, 206, 208, 219, 221-224, 232, 233, 241-249, 252, 255, 256, 259-261, 263, 374, 376, 430
Դիոսկորոս, եպիսկոպոսապետ - 172-174
Դյուրուա Ֆ. - 479, 480, 500

Եղնիկ, մատենագիր - 520
Եղրաս Անգեղացի - 115, 250
Եկավյան Զ. - 5
Եղիա, վանական - 34
Եղիա Ա Արճիշեցի, Հայոց կաթողիկոս - 19, 20, 24
Եղիա մարգարե - 183
Եղիազար, Աղվանից կաթողիկոս - 18
Եղիշա, Աղվանից երկրի Լուսավորիչ - 27, 28
Եղիշե, պատմագիր - 12, 22, 31, 32, 177, 178
Եպիկուրոս, իմաստասեր - 144
Եսվաղևն (Արսվաղ, Արսվաղև, Էսվաղևն), Աղվանից Թագավոր - 30
Եվագրոս Պոնտացի - 120
Եվագիոս, մանկնիչ - 67, 68
Եվդեմոս, մատենագիր - 160
Եվսեբիոս Կեսարացի, մատենագիր - 39, 80-82, 286, 319, 362, 370, 381, 394, 410, 477, 526

Եվտիխեարմիոնս, նվիրատու - 441, 442
Եվտոկիոս Ասկալոնացի Ասորի, մատենագիր - 68-71
Եվրիպիոնս (Յուրիպիոնս) Աթենացի - 240
Եվրիպոս, իմաստասեր - 285
Երակղիտոս, իմաստասեր - 147
Երեմիա, Ադվանից եպիսկոպոս - 30
Երեմյան Ս. Տ. - 5
Երեքթեոս, մատենագիր - 263
Երիցյան Ա. Դ. - 492
Երվադ, թրմապետ - 445, 453
Երվանդ, ոմն - 450
Երվանդ I Սակավակյաց, Հայոց թագավոր - 412
Երվանդ II, Հայաստանի սատրապ - 496
Երվանդ III, Հայոց թագավոր - 496
Երվանդ IV Վերջին, Հայոց թագավոր - 411, 412, 445, 447, 448, 451-454, 456, 458-462, 485, 486, 490, 491
Երվանդյաններ (Երվանդուններ), արքայատոհմ - 442, 443, 446-449, 451, 454, 456, 459, 463, 481, 483, 485, 486, 491, 496, 497, 499, 500
Եփիաղտես (Եփիաղտես), Մողոնի որդի - 76, 77
Եփրեմ Ասորի, մատենագիր - 38

Ջամես, թագավոր - 444
Ջարեհ Հայկյան (Բագրատունի) - 503, 521, 522
Ջարպհանալյան Գ. - 10, 22, 59, 258, 275, 350, 372, 381
Ջաբարիա Ա Ջագեցի, Հայոց կաթողիկոս - 172, 358, 369, 372-374, 380, 383, 384, 386, 417, 418, 420, 425, 430
Ջևնոր Գլակ, պատմագիր - 37, 38
Ջևնոն, Բյուզանդիայի կայսր - 33, 264
Ջևնոն Ստոիկ, իմաստասեր - 6
Ջոսիմոս Միայնակյաց - 318
Ջորաբարել, Աստվածաշնչ. - 355
Ջրվան, աստված. - 512, 516-520

Էլիաս, իմաստասեր, մեկնիչ - 72, 121, 123, 124, 127-130, 133-149, 151-153, 158-161, 164-166, 168, 176, 177, 189-192, 200, 202-206, 208, 210, 214-218, 222-225, 227, 240, 262, 339, 412
Էլիոս, դից. - 467
Էմին Մ. - 9, 310, 472, 517

Թաղեոս, առաքյալ - 478
Թադեոս (Ղևրեոս), առաքյալ - 27, 28, 45
Թաղեոս, ոմն - 381, 382
Թանգրիթ խան, դից. - 35, տե՛ս Ասպանդեատ
Թևանով, պիթագորուհի - 77
Թեմիստրոս, Մաքսիմոսի ուսուցիչ - 150
Թեոդնիս, դից. - 220
Թեոդոս Մեծ, կայսր - 284
Թեոդորոս, Մոպսես Քերթողի աշակերտ - 374, 377, 378, 380, 381

Թեոդորոս, փիլիսոփայասեր - 250
Թեոդորոս Ձգնավոր - 381
Թեոդորոս Միայնակյաց (Միանձն) - 377, 381-383, տե՛ս նաև Թեոդորոս Ձգնավոր
Թեոդորոս Ֆոթինավոր - 377, 381, 382
Թևոն Աղեքսանդրիացի, իմաստասեր - 7, 412-414, 421, 422, 430
Թեոփիլոս, կայսր - 366
Թերսիտես, դից. - 413, 430
Թոմաս, վանական - 34
Թոռնյան Թ. - 120
Թովմա, առաքյալ - 45
Թովմա Արծրունի, պատմագիր - 22, 320, 323, 324, 341, 342, 345, 358, 362, 363, 366, 381, 401, 402, 415-419, 421, 422, 424-432, 472
Թորամանյան Թ. - 472, 473, 479, 480, 482, 484, 486-491, 494, 495, 500

Իլաս, վանական - 34
Իրն ալ-Աթիր, պատմագիր - 23
Իրն-Ռոչտ (Ավեռոես), մեկնիչ - 164, 165
Ինճիճյան Ղ. - 289, 299, 320
Իսրայել, Աղվանից եպիսկոպոս - 17, 35, 36
Իրեննեոս, իմաստասեր - 122, 123, 167, 253-256, 259, 260, 262, 374

Լա-Կրոզ Մ. Վ. - 351
Լաոդիկե, Անտիոքոս IV-ի կին - 458
Լիսիցյան Ստ. - 466, 467, 469, 470
Լևոն Ա, պապ - 33, 264
Լևոն V, կայսր - 366

Խալաթյանց Գր. - 38, 282, 292-296, 298, 299, 310, 350, 351, 395, 413, 447, 448, 507, 508, 515, 520, 522-524
Խաչիկ Ա Արչարունեցի, Հայոց կաթողիկոս - 25
Խաբան, խաղրաց թագավոր - 298
Խոռն Հայկազն - 401, 422
Խոստիկյան Մ. - 126, 127, 143, 196, 197
Խոսրով I, Հայոց թագավոր - 316, 474, 475
Խոսրով II Մեծ, Հայոց թագավոր - 296, 474, 475, 515
Խոսրով III Կոտակ, Հայոց թագավոր - 363, 475
Խոսրով I Նուշիրվան, պարսից թագավոր - 288, 369
Խոսրով II Փարվեզ, պարսից թագավոր - 15-17, 36, 321
Խոսրովիդուխտ, Մեծ օրիորդ - 469, 471, 473, 474
Խոսրովիկ Թարգմանիչ - 117, 167-169, 183, 236, 237, 239, 375, 380, 424
Խորեն Ստեփանե - 472
Խուդրադ, բուլղարաց ցեղապետ - 296

Կաղմոս, Հայկ Նահապետի թոռ. - 512
Կալիմախոս, իմաստասեր - 114, 117, 138, 146, 218, 258
Կալիսթենես, մատենագիր - 330-335, 340
Կամսարականներ, տոհմ - 491, 495
Կառլոս Մեծ, թագավոր - 325
Կատրմեր Ե. - 511
Կարղոս Հայկյան - 512
Կարենյանց Հ. - 258, 319
Կարիեր Ա. - 28, 38, 319, 351, 501
Կեղծ-Կալիսթենես, մատենագիր - 286, 319, 329, 336, 345
Կեղծ-Մովսես Խորենացի - 298, 299
Կեղծ-Նոննոս - 72
Կեղծ-Սեբեոս - 523
Կեր-Պորտըր Ռ. - 479
Կիպերտ Հ. - 290
Կիրակոս Գանձակեցի, պատմագիր - 22, 26, 197, 198, 368, 374, 429
Կլավդիոս Պտղոմեոս, աշխարհագետ, տե՛ս Պտղոմեոս
Կղեոմբրոտոս (Կղեոմբրատոս) Ամբրակեացի (Ամբրակիացի), իմաստասեր - 76, 138
Կղեմես Գալանոս - 43
Կյուրեղ Աղեքսանդրացի, եպիսկոպոս - 182, 184
Կյուրիոն, վրաց կաթողիկոս - 34, 115, 171
Կյուրոս Մեծ, պարսից թագավոր - 400
Կոմբեֆիս, պատմաբան - 34
Կոմիտաս Ա Աղցեցի, Հայոց կաթողիկոս - 25, 34
Կոնիրեր Ֆ. - 50, 51, 61, 64, 123, 190, 196, 231, 233, 252, 254
Կոսմաս Հնդկաչու, մատենագիր - 285, 291
Կոստանդ II, կայսր - 251
Կոստանդին Անտիոքացի - 285, 291
Կոստանդին Բագրատունի - 273
Կոստանդին V, կայսր - 366
Կոստանդինոս I Մեծ, կայսր - 420
Կոստանյանց Կ. - 136, 234, 447
Կորյուն Վարդապետ, պատմագիր - 30, 75, 120, 123, 386
Կրեսոս, թագավոր - 444, 445
Կրումբախեր Կ. - 64, 275, 285

Հարեթ, Նոյի որդի - 315, 353, 506, 517
Հազկերտ, Վաչե թագավորի եղբայր - 32
Հազկերտ II, պարսից թագավոր - 30, 31
Հազկերտ III, պարսից թագավոր - 17
Ս. Հակոբ, Փրկչի եղբայր - 27
Հակոբ Ղրիմեցի - 96, 99
Հակոբյան Վ. Ա. - 5
Համազասպ Բագրատունի - 373
Համամ Արևելցի - 243, 365, 395, 422
Հայկ Նահապետ (Հարեթածին) - 497, 502, 503, 505, 506, 517, 518, 523
Հայկազյան Արամ - 315, տե՛ս

Արամ Նահապետ
Հայկազյան Արմենակ, տե՛ս Արմենակ Նահապետ
Հայկազյաններ (Հայկազուններ, Հայկյաններ), տոհմ - 351, 497-500, 514, 522
Հայր Մարդպետ - 510
Հայրապետ, քահանա - 107
Հայրունի Ա. Ն. - 525
Հարմա, Նահապետ - 498, 503, 505
Հարությունյան Ս. - 319, 408
Հարությունյան Վ. - 465
Հարուն ալ-Ռաշիդ, խալիփա - 325, 347
Հելիաս, մենծիչ - 71
Հեսիոդոս, բանաստեղծ - 437, 438, 442
Հեսու Իչող, քահանա - 110
Հերակլ I, կայսր - 11, 321, 369, 507, 508
Հերակլեա, դից. - 91, 343, 444, 445
Հերակլիտոս (Երակղիտոս), իմաստասեր - 147
Հերմես Եռամեծ, իմաստասեր - 6
Հերմիաս, մենծիչ - 54, 64, 68, 69
Հերմինոս, մենծիչ - 158, 160
Հերոդոտոս, պատմագիր - 413, 422
Հեփեստոս, դից. - 409
Հիսուս Քրիստոս - 30, 96, 97, 101, 102, 104, 160, 172, 173, 239, 243, 264, 265, 268, 287, 353, 361, 492
Հյուբշման Հ. - 7, 300-305, 309, 323
Հոմելեսոս, տե՛ս Ամելեսոս
Հոմերոս, բանաստեղծ - 413, 469
Հովել, եպիսկոպոս - 18
Հովհան(ես), եպիսկոպոսապետ - 123, 170, 263, 264-266, 427
Հովհան, Կարինի քաղաքացի - 254, 255
Հովհան Մայրագոմեցի - 381
Հովհան Ա Մանդակունի, Հայոց կաթողիկոս - 59, 265, 267
Հովհան Ոսկեբերան, Կ. Պոլսի պատրիարք - 24, 104, 419, 421, 428, 429
Հովհան(ես) Որոտնեցի, իմաստասեր - 133-138, 140, 141, 155-157
Հովհան Գ Օձնեցի, Հայոց կաթողիկոս - 42
Հովհաննես գրիչ, քահանա - 92, 93, 102
Հովհաննես, ստացող - 104
Հովհաննես Բ Գարեղինացի, Հայոց կաթողիկոս - 33, 196, 198, 199, 264, 429
Հովհաննես Ե Դրասխանակերտցի, Հայոց կաթողիկոս - 22, 340-342, 353, 358-363, 368, 369, 371, 379, 381, 383, 400, 401, 415-432, 497, 507
Հովհաննես Գոգահոտցի, Հակաթոռ կաթողիկոս - 22
Հովհաննես Երզնկացի - 424
Հովհաննես Իմաստասեր, մատենագիր - 377, 381, 416, 430
Հովհաննես Մալալաս, ժամանակագիր - 74, 285, 319
Հովհաննես Պետրիցոնելի, մա-

տեննապիր - 157
Հովհաննես-Սենեքերիմ, Սևադայի որդի - 33
Հովհաննես Փիլոպոնոս, մեկնիչ - 141, 143
Հովսեպոս Երբայեցի, մատենագիր - 421
Հովսեփ, գրիչ - 74
Հովսեփյան Գ. - 117, 167, 178, 183, 235, 251
Հռաղամիզդ, Հայոց թագավոր - 482
Հուլիանոս (Ուլիանոս), կայսր - 150,159, 260
Հուստինիանոս I, կայսր - 285
Հուստինիանոս II, կայսր - 323

Ղազար, վարդապետ - 95, 104
Ղազար Փարպեցի, պատմագիր - 22, 114, 250, 265, 333-336, 338, 339, 345
Ղևոնդ, պատմագիր - 22, 289, 341, 351-355, 358, 365, 379, 383, 401, 403, 416, 418, 423-425, 427-429

Մա, ղից. - 453
Մաղոյան Գ. Ա. - 529
Մաթևոսյան Ռ. Խ. - 5
Մալխասյանց Ստ. - 38, 335, 407, 408, 411, 412, 472, 475, 476, 508, 514-520
Մակարն, Աստվածաչնչ. - 356
Մամայա, Ալեքսանդր կայսեր հայր - 512
Մամբրե Վերծանող - 59, 75, 96, 101, 102, 123, 177, 243, 244, 386, 396
Մամերդին, մատենագիր - 39
Մամիկոնյաններ, տոհմ - 252, 515, 516
Մանանդյան Ա. Հ. - 528
Մանանդյան Հ. Հ. - 5, 6, 36, 148, 272, 273, 413, 487, 513, 517, 521, 525, 527-529
Մաշտոց Ա Եղիվարդեցի, Հայոց կաթողիկոս - 371, 381-383
Մառ Ն. Յա. - 117, 350, 351, 364, 409, 435, 480, 494, 495, 501, 504, 506, 511, 512, 514, 515, 523, 524
Մասուդի, մատենագիր - 288
Մավրիկիոս, կայսր - 16, 25, 34, 35, 323, 369
Մատաթիա, Աստվածաչնչ. - 356
Մատթեոս, ավետարանիչ - 104
Մատթեոս Ուռհայեցի, պատմագիր - 424
Մատիկյան Ա. - 523
Մար-Աբաս (Իրաս) Կատինա (Մծուրնացի), մատենագիր - 37, 38, 501, 502, 504, 505, 509-514, 516-520, 522-524, 529
Մարաս, Եփրեմ Ասորու աշակերտ - 38
Մարիամ, Աչոտ I-ի դուստր - 382
Մարկվարտ Յո. - 272, 278, 279, 285, 286, 292, 295-300, 320, 322, 323, 332, 350-354, 360, 513, 519, 520, 522-524
Մաքսիմիանոս Դայա, կայսր - 477
Մաքսիմոս Ուռհայեցի, մեկնիչ - 74, 150,159

Մկրտիսեղ, վարդապետ - 96
Մկրտուժան, եպիսկոպոս - 46
Մկոիտոս, ոմն - 413
Մնսրոպ, սարկավագ - 102, 104
Մնսրոպ Երից Վայոցձորեցի - 416, 426, 432
Մնսրոպ Մաչտոց - 18, 113, 136, 241, 349, 360, 362, 370, 375, 384, 385, տե՛ս նաև Մնսրոպ Մեծ
Մնսրոպ Մեծ - 30, տե՛ս նաև Մնսրոպ Մաչտոց
Միաբան, տե՛ս Տեր-Մկրտչյան Գ.
Միհրաս, գերագույն քուրմ - 485
Միհրաս, թագավոր - 450, 451, 453, 454, 456, 461
Միհրան, պարսիկ մեծատոհմիկ - 15-17
Միհրանական տոհմ - 11, 15-17, 19, 20
Միհրդատ, Դարևհի նախարար - 304
Միհրդատ, ոմն - 430
Միհրդատ Պոնտացի - 295
Միհրդատ, Տիգրանի քեռայր - 427
Միհրդատ Վրացի, Հայոց թագավոր - 482
Միհրդատյան Տ. - 507
Միքայել, կայսր, Թեոփիլոսի որդի - 366
Միքայել Ասորի, մատենագիր - 357
Մխիթար, Ամարասի եպիսկոպոս - 12
Մխիթար Այրիվանեցի - 21-23, 26, 359
Մխիթար Գոչ - 427
Մխիթար Սկևռացի - 430
Մխիթարյաններ - 80, 276, 290, 299, 309, 313, 318, 320, 336
Մչակ, կոյմնապետ - 293, 505
Մնեսարքոս, Պիթագորասի Հայր - 98
Մողոն, Ռոսոսի Հայր - 76
Մոմպեն Թ. - 80, 81
Տ. Մովսես, Աղվանից կաթողիկոս - 23
Մովսես, Բագրեւանդի եպիսկոպոս -115, 250
Մովսես, Եպիսկոպոս, ճարտասան - 250
Մովսես, մարգարե - 98
Մովսես, փիլիսոփա - 114, 250, 265, 267
Մովսես Աղվանացի - 22, 23, տե՛ս Մովսես Կաղանկատվացի
Մովսես Բ Եղիվարդեցի, Հայոց կաթողիկոս - 25, 34, 250
Մովսես Խորենացի, Պատմահայր - 6, 8, 12, 20-22, 28, 37-39, 44, 45, 59, 71, 116, 118, 137, 138, 177, 178, 196, 241, 243, 244, 248, 249, 253, 258, 260, 263, 269, 271-273, 275-277, 281, 282, 286-305, 309-321, 325, 328-331, 336-341, 345, 346, 348-356, 359, 360, 362-365, 367-375, 377, 378, 380, 381, 383-388, 394-396, 399, 400, 402, 404, 405, 407-432, 443, 444, 446-449, 451-453, 458-462, 469-476, 478, 480, 485,

488, 490-492, 497-499, 501, 504, 506, 508-512, 514-520, 524, 527-529
Մովսես Կաղանկատվացի, պատմագիր - 7-13, 15-23, 25-27, 29, 31-36, 250, 359, 362, 363, 370, 417, 420, 422, 423, 425-427, 430, 431, 525, տե՛ս նաև Մովսես Աղվանացի, Մովսես Ուտեցի, Մովսես Կաղանկատունի
Մովսես Կաղկանտունի - 9, տե՛ս Մովսես Կաղանկատվացի
Մովսես Տարոնացի, տե՛ս Մովսես Խորենացի
Մովսես Ուտեցի - 7, տե՛ս Մովսես Կաղանկատվացի
Մովսես Քերթող (Քերդող, Քերթողահայր) - 58, 123, 170, 241, 244, 263, 265-268, 300, 372-374, 376, 377, 380-382, 418, 427
Մորիեր Ջեյմս - 479, 480
Մսերյանց Լ. - 394, 410
Մրվան, խալիֆա - 289
Մուտավակկիլ, խալիֆա - 357
Մօսիս Կաղանկատացի, տե՛ս Մովսես Կաղանկատվացի

Յամբղիքոս, մեկնիչ - 158-165, 176, 177, 182, 186-190, 192, 194, 195, 197-200, 202, 205, 206, 208, 209, 224, 245
Յամբղիքոս, պատմագիր - 513
Յամնլախոս, տե՛ս Ամնլախոս
Յապետոստան (Իապետոսթե) - 512, 517, 520
Յնդուտ Խոսրով, Վարազ Գրիգորի որդի - 17
Յոմնլախոս, տե՛ս Ամնլախոս

Նարուգողոնոսոր, թագավոր - 503, 521, 522
Նանա Ասորի - 403, 430
Նեկտաներ, ոմն - 344
Նեստոր, հերձվածող - 264
Ներսեհ, պարսից թագավոր - 39
Ներսես Ա Պարթև, Հայոց կաթողիկոս - 478
Ներսես Բ Բագրեւանդցի (Աշտարակեցի), Հայոց կաթողիկոս - 34, 108, 172, 194, 251
Ներսես Դ Շնորհալի (Կլայեցի), Հայոց կաթողիկոս - 96, 99, 111, 350, 419, 424, 430, 432
Ներսես Լամբրոնացի - 425, 430, 431
Նիկիտաս Դավիթ Պափլագոն - 60
Նիկոլսկի Ն. - 493
Նիկոմաքոս, ոմն - 97
Նյուքար Մաղնս, թագավոր - 505
Նոմնլախոս (Նումելախոս), մեկնիչ - 155-157
Նոյ Նահապետ - 506, 517, 519, 520
Նոյման Կ. Ֆ. - 7, 9
Նոննոս, իմաստասեր - 57, 71, 73-81, 115, 122, 126, 167, 183, 205, 207, 210, 211, 257-263, 285, 319, 336, 337, 341, 378, 388-391, 395, 396, 398, 399, 402, 413, 414, 427, 428, 430

Նորայր Բյուզանդացի - 120, 170, 171, 360
Նումեննիոս, գավառի կառավարիչ - 456, 458

Նաթ, խաղարաց արբայորդի - 13, 14, 18
Նահխաթունյան Հովհ. - 8
Նահնազարյան Կ. - 9, 10, 12, 13, 15, 21, 22
Նամբատ-Սմբատ, Բագրատունյաց նախահայր - 353, 354
Նամիրամ, Թագուհի - 415, 444, 503
Նապուհ Ամատունի - 365
Նապուհ Բագրատունի, Աչոտ Մսակերի եղբայր - 368
Նապուհ Բագրատունի, ապուհյուպատ պատրիկ - 366
Նապուհ II, պարսից Թագավոր - 22, 30
Նապուհ Սասանյան, Հայոց Թագավոր - 420
Նավաչ Հայկյան - 503, 522
Նարա, նահապետ - 295, 304
Նուչիկ տիկին - 17
Նուփսպիչո, Պարտավի արքեպիսկոպոս - 33

Ողյումպ (Ուդյուպ), քուրմ - 462
Ոլիմպոս, տե՛ս Ամպոս
Ոսոս (Ոլոսոս), Սողոսի որդի - 76
Որմիզդ III, պարսից Թագավոր - 16, 31
Որվենա, դից. - 394

Ջամչյան Մ. - 7, 43, 175

Պապ Արշակունի. Հայոց Թագավոր - 30, 504, 511
Պապպոս Աղեքսանդրացի, աշխարհագիր - 71, 283, 284, 316, 317, 328, 329
Պասիլ, իմաստասեր - 144-146
Պատկանյան Ք. - 10, 12-15, 21, 169, 275, 277, 284-286, 290-293, 295-298, 300, 306, 313, 320-323, 343, 344, 506, 507, 510
Պատմահայր, տե՛ս Մովսես Խորենացի
Պատցիզ Էդվին - 74, 77
Պելամիդես, Նվիրատու - 441, 442
Պենտաս, տե՛ս Պետրոս, Աղվանից կաթողիկոս
Պեռիսղիադա (Փեռիսղիադա), Արիտի մայր - 97
Պետրոս, Աղվանից կաթողիկոս - 23
Պետրոս, անձնանուն - 239, 240
Պետրոս, եպիսկոպոս - 170
Պետրոս, վրդ. Ս. Նչանի - 92, 93
Պետրոս Անտիոքացի - 264
Պետրոս Թափիչ, պատրիարք - 170
Պետրոս Քերթող, Սյունյաց եպիսկոպոս, մեկնիչ - 12, 21, 58, 170, 171, 234, 250, 252, 426
Պերոզ, պարսից Թագավոր - 28, 31, 32
Պերսես, Հեսիոդոսի եղբայր - 437, 438, 442
Պիլեպիկյան Բ. - 300, 305, 323, 493

Պիհոան (Պյուհոն), իմաստասէր - 57, 92, 93, 96, 103, 105, 108, 125
Պլախատրատոս, պիւց. - 214
Պյուտարքոս, պատմագիր - 443
Պղատոն, իմաստասեր - 52, 53, 65, 66, 69, 76-79, 97, 98, 127, 129, 138, 158, 159, 162, 195, 212, 216, 218, 228, 396, 412
Պյութագորը, իմաստասեր, մաթեմատիկոս - 147
Պյութիա, ոմն - 159
Պողոս, անձնանուն - 239, 240
Պողոս, առաքյալ - 101, 243
Պողոս, Դավիթ Անհաղթի ընկերակից - 118, 243
Պողոս, մեկնիչ - 243, 244, 246, 248, 411
Պորփյուր(ոս), Յամբղիքոսի ուսուցիչ, մեկնիչ - 158-160
Պորփյուր Փյունիկեցի, իմաստասեր - 49-51, 53, 54, 56-58, 62, 67-70, 97, 99, 100, 105, 106, 108, 111, 116, 123-126, 128-130, 138, 146, 153, 158, 159, 164, 166, 168, 182, 186, 189, 193, 197, 198, 200, 201, 206, 207, 210-215, 219, 225-227, 229, 234-236, 238, 248, 262, 328, 337-339, 341, 377
Պտղոմեոս, աչխարհագետ - 147, 279, 282-284, 294, 296, 297, 310, 315, 421, 451
Պրորոս, կայսր - 39
Պրոկլ Դիադոխոս, իմաստասեր - 69, 157, 161
Պրոկոպիոս Կեսարացի, մատենագիր - 501, 512, 513, 529
Պրոհերեսիոս, հռետոր - 50
Պրոմեթեոս (Պռիմիթեվս, Պրոմյութեևս), պիւց. - 75, 89, 317, 409

Ջափր, ամիրապետ - 357, տե՛ս Մուտավակկիլ
Ջերու խաքան - 13
Ջվանչիր, Աղվանից մեծ իչխան - 15-19, 21, 431
Ջուանչեր, մատենագիր - 430

Ռենան Է. - 164, 165
Ռոմանով Կ. Կ. - 480
Ռոստովցև Մ. - 468

Սաթենիկ, Հայոց թագուհի - 227, 296
Սալմանասար III, Ասորեստանի թագավոր - 44
Սահակ Արծրունի - 372, 373, 386
Սահակ Բագրատունի, մեկենաս - 319, 352
Սահակ Ա Պարթև, Հայոց կաթողիկոս - 113, 136, 241, 349, 360-362, 367, 375, 384, 385, 415, 425
Սահակ Բ Ուղկեցի, Հայոց կաթողիկոս - 239, 250
Սահակ Գ Ձորոփորեցի, Հայոց կաթողիկոս - 17, 35
Սամուել Աննեցի, պատմագիր - 263, 267, 369, 507
Սանատրուկ, Հայոց թագավոր - 27, 475, 502, 510, 511
Սանատրուկ (Սանեսան), մասա-

գետների թագավոր - 29
Սասանյաններ, արքայատոհմ - 516
Սավալանյան Տ. - 394, 410
Սարգիս, ոմն - 328
Սարգիս Նպ. Արարացի - 196
Սարգիս վրդ., Գրիգոր Մագիստրոսի հաացնատեր - 117, 136, 234
Սարգսյան Գ. Խ. - 5
Սարդանապաղդոս, Ասորեստանի թագավոր - 91
Սարհանդ Հայկյան - 503, 521
Սարյան Մ. Ս. - 465
Սերևոս, պատմագիր - 7, 22, 178, 251, 311, 333, 345, 369, 423, 424, 428, 475, 501-512, 514-520, 522, 524, 529
Սերևոս Նպ. Բագրատունի, տե՛ս Սերևոս
Սեղևկիա, Աստվածաչնչ. - 355
Սելևկյաններ, արքայատոհմ - 454, 458, 497
Սեկևնդոնա, ոմն - 173
Սեղբեստրոս, պապ - 399, 417-420
Սեմ, Աստվածաչնչ. - 315, 517-519
Սեն-Մարտեն Ա. Ժ.- 8, 276, 277, 284, 285, 287-291, 320, 323, 325, 326, 328, 343, 344
Սեն-Մարտեն Վիվյեն դը - 8
Սեննեքերիբ (Սիննեքերիբ), Ասորեստանի թագավոր - 90, տե՛ս Սեննեքերիմ
Սեննեքերիմ, Ատովմի հայր - 373
Սեննեքերիմ, թագավոր - 503
Սենտ-Կրուա Յո. - 287, 290, 291, 320
Սենտիմ Խոսրով, դորավար - 333
Սեվերոս, կայսր - 264
Սիկորիոս Պրորոս, բանագնաց - 39
Սիմեոն, կրոնավոր - 157
Սիմեոն Ջուղայեցի - 196
Սիմոն, սոկրատական - 208, 209
Սիմպլիկիուս, մեկնիչ - 161
Սիչևվ Ն. Պ. - 435
Սկյութես, թանդակագործ - 445
Սկյութոս, ոմն - 220
Սմբատ Բագրատունի, Արտաշես I-ի դորավար - 296, 303, 459
Սմբատ Բագրատունի Խոստովանող - 353, 357, 360, 361, 368, 369
Սմբատ I Բագրատունի, Հայոց թագավոր - 358
Սմբատ Բագրատունի, Վրկանի մարզպան - 115
Սմիրնով Յ. Ի. - 435, 441, 443, 480
Սոզոմենոս, մատենագիր - 38, 39
Սոկրատ(ես) Իմաստասեր - 218, 228, 396, 399, 432
Սոկրատ Սքոլաստիկոս, պատմագիր - 419, 421, 427, 430
Սոմալ Ս. - 7, 10
Սորմենոս, ստրատելատ - 114
Սպևսիպոս, ոմն - 129
Ստեփանոս, գծող - 99
Ստեփանոս, գրիչ - 99, 100
Ստեփանոս, սիրող իմաստության - 108
Ստեփանոս, վարդապետ - 258
Ստեփանոս, քահանա - 96, 102, 107

Ստեփանոս Սյունեցի, մեկնիչ, քնրական - 42, 239, 240, 244, 424
Ստեփանոս վրդ., Մաքենոցաց վանահայր - 371
Ստեփանոս վրդ. Ջուղայեցի - 103, 104
Ստեփանոս Տարոնեցի, տե՛ս Ասողիկ
Ստեփանոս Օրբելյան, պատմագիր - 19, 24, 371, 382, 383
Ստրաբոն, աշխարհագետ - 45, 297, 453, 459
Սրվանձտյանց Գ. - 195, 196
Սուիդաս, մատենագիր - 160
Սուլլա, զորավար - 295
Սուտ-Դիոննսիոս Թել-Մահրեցի, մատենագիր - 354, 355, 357
Սուտ-Կալիսթեննես, մատենագիր - 319, 330, 339, տե՛ս Կեղծ Կալիսթեննես
Սուտ-Մովսես Խորենացի - 277
Սուրմակ, Հակաթոռ կաթողիկոս - 425
Սուքրյան Ա. - 80, 81, 278, 279, 284, 285, 290, 295, 296, 299, 300, 313, 320, 337, 341, 420, 423, 425-427
Սևադա, Աղվանից թագավոր - 23

Վախթանգ, վրաց թագավոր - 334
Վահազն, դից. - 445
Վահան Արծրունի - 403, 430
Վահան Մամիկոնյան, Հայոց տանուտեր - 335
Վահրամ Ջուբին - 322
Վահրամ սպարուհ - 422
Վահունիներ, տոհմ - 444
Վաղարշ I, Հայոց թագավոր - 297, 475
Վաղարշ II, Հայոց թագավոր - 316
Վաղարշ Սասանյան, պարսից թագավոր - 32
Վաղարշակ, Հայոց ավանդական թագավոր - 26, 295, 304, 349, 362, 379, 444, 446, 473, 509
Վաղարշակ, Հայոց թագավոր, Պապ Արշակունու որդի - 524
Վաչագան Բարեպաշտ, Աղվանից թագավոր - 13, 20, 27, 28, 32, 36, 234, 237
Վաչագան Քաջ, Աղվանից թագավոր - 20, 26, 29
Վաչե, Աղվանից թագավոր - 28, 29, 31, 32
Վասակ Բագրատունի - 366
Վասակ Սյունի - 382
Վարաղ-Գրիգոր, Աղվանից իշխան - 17
Վարաղ-Փերոժ, Ջվանչիրի եղբայր - 17
Վարազդատ, Հայոց թագավոր - 416
Վարազման, Ջվանչիրի եղբայր - 17
Վարդ, Արամայելի որդի - 17
Վարդ, Վարդան Քաջի որդի - 17
Վարդան, պատմիչ - 347, 366, 369, 424, 429
Վարդան Մամիկոնյան, Հայոց սպարապետ - 31, 54

Վարդան Քաջ, Աղվանից իշխան - 17
Վարդանյան Ա. - 253-255
Վահիկ, տեսիլի հեղինակ - 16
Վիղարնա, պարսիկ աղնվատոհմիկ - 496
Վինդելբանդ Վ. - 68, 160
Վիտոն եղբայրներ - 276
Վիրո, Աղվանից կաթողիկոս - 12-17, 21
Վղընդուր Բուլղար - 295
Վնասեպ Սուրհապ, թագավոր - 297
Վռամ V, պարսից թագավոր - 415
Վռամշապուհ, Հայոց թագավոր - 515
Վստամ, պարսից թագավորի աղգական - 16
Վրթանես Ա, Հայոց կաթողիկոս - 28
Վրթանես Քերթող, մատենագիր - 114, 251, 254, 255, 264

Տակիտոս, Հռոմի կայսր - 311
Տակիտոս, պատմիչ - 482
Տաչյան Հ. - 38, 42, 49, 54, 81, 156-158, 292, 319, 330-334, 336, 339-344, 373
Տարբան, Սեմի որդի - 518, 519
Տեր-Հակոբյան Ս. - 325, 436, 460
Տեր-Մինասյան Ե. - 171, 253
Տեր-Միքելյան Ա. - 263, 507, 508
Տեր-Մկրտչյան Գ. - 58, 60, 169, 172-174, 230-232, 234, 235, 237, 250, 265-267, 320, 335, 394
Տեր-Մկրտչյան Կ. - 171, 253, 264-266
Տիգրան, ոմն - 62
Տիգրան Երվանդյան, Հայոց թագավոր - 116, 118, 248, 249, 293, 375, 411, 415, 422
Տիգրան II Մեծ, Հայոց թագավոր - 5, 62, 63, 248, 249, 412, 443, 454, 486
Տիգրանուհի, Հայոց արքայադուստր - 118
Տիմիքտա Թևանով, պյութագորուհի - 76
Տիմոթեոս Կուդ, պատրիարք, աստվածաբան - 119, 122, 123, 167, 171-175, 178, 182, 183, 187, 189-195, 198, 199, 205, 206, 227, 229, 232, 233, 237, 255, 257, 263-266, 268, 379, 429
Տիվղայան Ատտալի Տարվչեցի - 440
Տիտան, դից. - 512, 516, 517, 520
Տիտանյան Բել - 502, 517, 518, տե՛ս նաև Բել
Տիտանյան Պայապիս Քաաղյա - 505
Տիր, դից. - 448, 449
Տիրիդատես, անձնանուն - 467
Տիրիդատես, Հայոց թագավոր - 467, տե՛ս Տրդատ I
Տրդատ I, Հայոց թագավոր - 463, 470, 480, 481, 502
Տրդատ II, Հայոց թագավոր - 475
Տրդատ III Մեծ, Հայոց թագավոր - 28, 39, 296, 298, 421, 448, 468-471, 473-478, 480,

481, 484, 510, 511
Տրնվեր Կ. Վ. - 493, 494
Տրիտուր, գրիչ - 108, 111
Տուրներիզ Ֆ. - 476

Րուփոս, եպարքոս - 421

Ցոլակ, նահապետ - 497

Ուխտաննես, Աղվանից կաթողիկոս - 18
Ուխտաննես, պատմագիր - 12, 22, 25, 26, 170
Ուչակով Պ. Ն. - 440
Ուռնայր, Աղվանից թագավոր - 28, 30
Ուվարով Ա. Ս. - 492, 493

Փառնակ, ամսանուն - 455, 456
Փառնակ, Պոնտոսի թագավոր - 455, 456
Փառնավազ Հայկյան - 503, 521
Փառոս, նահապետ - 497
Փավստոս Բուզանդ, պատմագիր - 29, 37, 38, 301-303, 510-512
Փարասման, թագավոր - 482
Փեղոն (Փեսրոս), իմաստասեր - 65, 112, 216
Փիլադելփիա, Հայոց թագուհի - 458
Փիլադելփոս (Փյուլադելփյուս), թագավոր - 147
Փիլիպպոս, Ալեքսանդր Մակեդոնացու Հայր - 431
Փիլոն, իմաստասեր - 60, 122, 167, 177-188, 191-193, 200, 201, 210, 229, 233, 245, 253-262, 331, 336-339, 374-376, 401, 424
Փիլոպոնոսոս, մատենագիր - 130
Փիլոքսենիոս, մատենագիր - 17.
Փիլիպպոս (Փիլիպպոս), թագավոր - 82
Փլվոս, վիլիսոփա - 443-445
Փոտ, Կոստանդնուպոլսի պատրիարք - 172, 174, 175, 367, 369, 398
Ս. Փրկիչ - 27, 251

Քամ, Աստվածաչնչ. - 315, 517
Քամյան Ներրովթ - 517
Քչկան, Վրթանես Քերթողի Հայր - 114
Քսենոփոն Աթենացի, պատմագիր - 496
Քրիստափոր Ա Տիրառիջցի, Հայոց կաթողիկոս - 115, 250
Քսիսութրեոս - 518-520, տե՛ս նաև Նոյ
Քրոնոս, առասպել. - 520

Օլավմրիադորոս - 134, տե՛ս Օլիմպիոդորոս մեկնիչ
Օլիմպիոդորոս, Էլիասի ուսուցիչ - 200
Օլիմպիոդորոս (Ողոմպիոդորոս), իմաստասեր - 130, 139, 140, 142, 152, 156, 410 411, 518, 519,
Օլիմպիոդորոս, պատմագիր - 137, 138
Օլիմպիոդորոս Կրտսեր - 64-72, 126, 141, 143, 200, 411

Օլիմպիոդորոս Մեկնիչ - 133, 134, 136, 137, 140-146, 148, 149, 152, 156, 164-166, 195, 200, 202, 205-207, 209-211, 215, 217, 219, 220, 225, 226, 228, 230, 233, 234, 236, 237, 240, 245, 247, 248, 251, 252
Օկունև Ն. Լ. - 435
Օմար, խալիֆա - 287
Օմմայաններ, արքայատոհմ - 346
Օրբելի Հ. Ա. - 435
Օրոնտաս, սատրապ - 496, տե՛ս նաև Երվանդ II
Օրոնտիդներ, արքայատոհմ - 442, 446, տե՛ս նաև Երվանդյաններ

Ֆեստեր Պ. - 42, 373, 511
Ֆիրդուսի, բանաստեղծ - 344

Aelius, Տրդատ III-ի մականուն - 468
Agathangelos - 468
Ammoni, մեկնիչ - 149-151
Aphthonios, մատենագիր - 71

Bardenhewer O. - 173
Baumgartner A. - 178, 413, 507
Benseler G. E. - 470
Boré E. - 9
Brandis Aug. - 61
Brosset M. - 17, 25
Busse A. - 124-127, 130, 131, 139-142, 150, 202

Carrière A. - 46
Chabot J. B.- 357
Christ, պրակնապետ - 284
Conybeare F. C. - 49, 229
Crassus - 443

David der Philosoph - 126, 143, 195, 196
Davidis Prolegomena - 49, 124-126, 131, 139, 140, 142, 199, 202, 220, 221
Denys de Tell Mahré - 357
Dorn, պատմաբան - 23
Dubois F. - 179

Elias - 124, 127, 128, 130, 131, 138, 139, 141, 152, 158
Eusebius - 80, 82

Gelzer H. - 38, 44, 46
Georgii Cyprii - 302
Gregor von Nazianz - 73, 74, 257
Günther S. - 68, 69
Gutschmid A. - 501, 506

Hermes Trismegistos - 72
Horn, ուսումնասիրող - 83
Hübschmann H. - 7, 324, 344

Inglisian V. - 519
Irenäus, խմաստասեր - 253

Jamblichi - 161

Karrière A. - 501
Ker-Porter R. - 479
Khostikian M. - 126, 195, 196

Kiracos de Gantzac - 25
Krumbacher K. - 58, 64, 68, 72, 141, 275
Kubitschek W. - 455

Lagarde Paul de - 468

Manandian H. - 257
Mar Abas, Mar Abas von Nisbis - 352, 512, 520
Markwart (Marquart) Jo. - 279, 292, 303, 310, 352, 513, 520, 523
Meillet A. - 84
Michel le Syrien - 357
Migne J. P. - 172
Mithridate Eupator - 295, 456
Mlaker K. - 279
Moïse Corène, Moïse de Corène, Moses von Choren, Moyse de Chorène, Moïse de Khoren, Moyse de Khoren, Moses von Khoren - 10, 46, 284, 287, 290, 295, 296, 501
Morier J. - 474, 479

Neumann C. F. - 8, 49
Niketas David Paphlagon - 58, 59, 73, 126
Nonnos - 73, 257, 285

Olimpiodori Prolegomena - 141, 150, 151
Oukhtanès d' Ourha - 25

Papes W. - 221
Patzig Ed. - 74
Petermann H. - 82
Plinius - 35
Porphyri Isagogen - 124, 125, 127, 129-131, 138, 139, 199
Probus, կայսր - 39
Procopii Caesarien - 513
Ps. Moses Chorenatsi, Ps. Moses Xorenathsi, Ps. Moses Horenaci - 279, 352, 520
Ptolémée - 284

Quatremère E. - 511

Reinach Th. - 295, 456

Schöne A. - 81, 82, 84-86, 89-91
Sainte-Croix J. - 287
Sebëos - 7
Somal S. - 258
Strabo - 453, 459
Suidas, բառարանագիր - 283

Tacitus - 482
Tanner P. - 68, 69
Tournebize F. - 477
Tzetzes, մատենագիր - 74

Ueberweg Fr. - 56

Vetter P. - 512
Vopiscus, մատենագիր -39

Wallies Ed. M. - 149
Windelband W. - 69, 161

Аверроэс - 164
Адонц Н. - 501

Аннинский А. - 37, 40
Аноним - 501

Болтунова А. И. - 435, 441

Вардан, մատենագիր - 275

Еремян С. Т. - 501, 510

Иоанн Петрицский - 117, 157

Кондратьев С. П. - 513

Малхасьянц С. С. - 514
Манандян Я. А. - 442, 446, 485, 510
Мар-Абас, Марибас - 364, 529
Марр Н. - 117, 157, 275, 409, 474, 480, 494, 501
Месроп Маштоц - 477
Моисей Хоренский - 275, 292, 298, 310, 351, 409, 447, 448, 502, 507, 517, 518, 527, 529

Никольский М. В. - 483

Патканов К. - 275, 506, 519
Прокопий Кесарийский - 529

Ренан Э. - 164
Ростовцев М. - 468

Себеос - 351, 501, 506, 514, 529

Тер-Аветисян С. В. - 435

Уваров А. С. - 492

Халатьянц Гр. - 292, 310, 319, 414, 447, 448, 498, 507

Фауст Византийский, Фавстос Бузанд - 351, 502, 510

Эмин Н. О. - 517

Юстиниан I - 312

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ

Աղատ, գետ - 304, 305
Աթենք, քաղաք - 58, 70, 71, 105, 146, 147, 218
Աթինա, քաղաք - 348
Աթլ, գետ - 297
Ալանաց աշխարհ - 296
Ալբանիա, երկիր - 8, 285, տե՛ս նաև Աղվանք
Ալեքսանդրապոլ, քաղաք - 117, 136, 234, 447
Ալիս, գետ - 293, 312
Ալկի, բնակավայր - 303
Ախուրյան, գետ - 368, 445, 447, 452, 453, 488
Ակաղաղի, աշխարհ - 289, տե՛ս Կողա
Ակամսիս, գետ - 366
Ակոլա, քաղաք - 291
Ակողա, քաղաք - 321, 327, 329, տե՛ս նաև Յակողոն
Ահմաղան, գավառ - 311, 312
Աղեքսանդրիա, քաղաք - 64, 69-72, 126, 173, 199, 264, 265, 328, 408
Աղեքսանդրյան դպրոց - 70, 160
Աղձնիք, նահանգ - 302, 303
Աղվանից տուն - 16, 26, տե՛ս նաև Աղվանք
Աղվանք, երկիր, աշխարհ - 7, 8, 11, 13, 16, 18-20, 23, 24, 26-36, 316, տե՛ս նաև Աղվանից տուն
Աղվեն, բնակավայր - 33, 36
Ամասիա, քաղաք - 326
Ամարաս, գյուղ - 29
Ամարաս, վանք - 12
Ամբրդոլու վանք - 320
Ամստերդամ, քաղաք - 275, 276, 325
Այրարատ (Արարատ), լեռ - 333
Այրարատ, նահանգ - 301, 304, 479, 485, 498, 499
Այրեցած (Այրյալ), երկրամաս - 282
Այրիվանք, վանք - 470
Անապատ Արարիա, երկրամաս - 281, 322
Անգեղտուն, գավառ - 302, 521
Անգերա, քաղաք - 326
Անգղ, ամրոց - 522
Անգղ, գավառ - 333
Անդրկովկաս - 179
Անդրտիգրիսյան երկրներ - 477
Անի, ամրոց, քաղաք - 435, 462, 489, 491, 492, 494-496, 499
Անկյուրիա, քաղաք - 326, տե՛ս նաև Անգերա
Անձիտ, գավառ - 301

Անձևացյաց Երկիր - 352
Անտիոք, քաղաք - 170
Անտիտոնտա, Երկրամաս - 332
Անփայտ Բասեն, գավառակ - 295
Աչոցք, գավառ - 304, 365
Աչտիզոր, աղդազավառ - 297
Աչտիչատ, ավան - 445
Ասպառաժ Արարիա, Երկրամաս - 289, 322
Ասպարխական դաչտ - 18
Ապոլլոնի տաճար - 461, 463, 498
Առաջավոր Ասիա - 118, 275, 321
Առաջին Հայք, նահանգ - 281, 292, 293, 310
Առգևոս, լեռ - 293
Ասան, բնակավայր - 322
Ասիա - 280, 284, 285, 287, 294, 413, 444
Ասորական Միջագետք - 355
Ասորեստան, Երկիր - 44, 312, 503, 505, 518, տե՛ս նաև Աղուանստան
Ասորիք, Երկրամաս - 346
Ասպիս, ծով - 307, տե՛ս նաև Կասպից ծով
Ս. Աստվածածին, եկեղեցի (Սևանա կղզի) - 382
Ասփալղևս (Ասփաղտիտես), ծովակ - 307, տե՛ս նաև Մեռյալ ծով
Ավազ, անապատ - 105, 107
Ատալանդ, կղզի - 294
Ատտիկե, Երկրամաս - 294
Ատրպատական, Երկիր - 312
Արաբական խալիֆաթ - 346, 357, 365
Արարիա, Արաբացվոց աշխարհ - 307, 321
Արագած, լեռ - 497
Արագածոտն, գավառ - 302, 497
Արածանի, գետ - 315, 333, 513
Արաբաղի Երկիր - 518, 519
Արաբատ, լեռ - 519
Արաբատյան գավառներ - 491
Արաբատյան դաչտավայր - 497, 499, 503
Արաբատյան թագավորություն - 497
Արաքս, գետ - 304, 488, 503
Արգունի, աղդազավառ - 297
Արդող, գավառ - 297, 310
Արևաց աշխարհ 310, 312, 315, 348, տե՛ս նաև Պարսկաստան
Արիակե, Երկրամաս - 333
Արիստոտելիկոս, տեղավայր - 98
Արիք, Երկրամաս - 311, տե՛ս նաև Խորասան
Արձն, Երկիր - 303
Արմավիր, քաղաք, Հնավայր - 435, 436, 439, 442-449, 451-454, 456, 458, 460-462, 478, 481, 485-487, 489, 492-499, 503, 505, 528
Արմավիրի բլուր - 461
Արմենիա - 467, 496
Արմն, գետ - 297
Արչամունիք, գավառ - 302
Արչարունիք, գավառ - 368, 448
Արտաղ, գավառ - 27, 296, 297, 310, 522
Արտանուճ, քաղաք - 347
Արտաչատ, քաղաք - 296, 304,

305, 369, 446, 448, 449, 489, 513
Արտաչեայան ավան - 430
Արտեվատ, քաղաք - 327
Արուաստան, երկիր - 281, 312, 321, տե՛ս նաև Ասորեստան
Ափրիկե - 328, 329
Աքայա, երկրամաս - 322
Արևմտյան Պարսկաստան - 496
Արևելից կողմանք - 21, տե՛ս նաև Աղվանք

Բարելոն, երկիր - 44, 82, 83, 88-90, 502, 503, 522
Բարելոն, քաղաք - 347, 518
Բագավան, դիցավան - 522
Բագարան, բերդաքաղաք - 368, 445-448, 453, 488, 489
Բագրավան, գյուղ - 251
Բագրատունյաց թագավորություն - 349, 351
Բագրատունյաց Հայաստան - 347
Բագրևանդ, գավառ - 250-252, 522
Բահլ, քաղաք - 310
Բահլ Առավոտին, քաղաք - 310
Բահլ Արևելյան, քաղաք - 310
Բահլի-Բամիկը, քաղաք - 310, տե՛ս Բահլ Առավոտին
Բաղկչ, քաղաք - 320
Բաղկչի կիրճ - 303
Բասրա, քաղաք - 287, 291, 321, 322, 329
Բարձր Հայք, նահանգ - 301
Բաքու, քաղաք - 230
Բևոլին, քաղաք - 56, 61, 127, 141, 199, 327
Բղնունյաց ծով - 306, 307
Բիրով, տեղավայր - 76, 77
Բծրա, տե՛ս Բասրա
Բյուզանդիա, Բյուզանդական կայսրություն - 116, 302, 346, 347, 365, 367
Բյուզանտիոն, քաղաք - 80, 81
Բյութանիա, երկիր - 348
Բրիտանացվոցն Ալուիոն, կղզի - 279, 280

Գալիլևա (Գալիլիա), երկիր - 312, 313
Գալիուս, լեռներ - 280
Գաղղիա (Գաղղիուս, Գալլիուս, Գալիուս), երկիր - 280, 288, 313
Գանզրա, քաղաք - 173, 326
Գանձակ, քաղաք - 327
Գանձակ Շահաստան, քաղաք - 327
Գանձասար, վանք - 24
Գառնի, ամրոց - 463, 465, 471, 473, 478, 479, 481, 482, 484, 486, 487, 490, 491, 494-496, 499
Գառնի, գյուղ - 465, 468, 486, 491, 498
Գառնի, տաճար - 463, 466, 468, 469, 471, 472, 479-484, 486, 487, 492-495, 499, 500, 528, 529
Գարդմանի բերդ - 17
Գեղ, լեռնագագաթ - 305
Գեղարքունի(ք), գավառ - 368, 370-372, 381, 498

Գերմանիա, երկիր - 280, 288
Գիս, գյուղ - 18, 27
Գճակ, տեղավայր - 322
Գոդկան, երկրամաս - 322
Գորեք, գավառ - 302
Գոռավ, կողմ - 298
Գուգարք, նահանգ - 304

Դաղմատիա, երկրամաս - 322
Դամասկոս, քաղաք - 327
Դանուբ (Դանոր), գետ - 280, 323
Դարա, քաղաք - 369
Դարանաղի, գավառ - 462, 514
Դնգիք, գավառ - 302
Դոդոնա, տաճար - 447, 449
Դվին, քաղաք - 25, 34, 114, 172, 250, 251, 305, 326, 327, 358, 359, 489
Դուչի Բուլկար, աղգազավառ - 295
Դուռն Ճորա, ամրոց - 297

Եգեր, աչխարհ - 311
Եգիպտոս, երկիր - 307, 344, 429
Եգր, աչխարհ - 348, տե՛ս նաև Կողբիս
Եղնսիա, քաղաք - 370
Ելյադա (Եղղադա), երկիր - 313
Եկրատան, քաղաք - 421
Եկեղյայց, գավառ - 514
Եմաթ, գետ - 315
Եմավոն, լեռ - 349
Ենա, քաղաք - 525
Եվրիու, կղզի - 294
Եվռոպոս, դղյակ - 294
Եվրոպա - 123, 284, 413
Ետնա, լեռ - 79
Երաղզավորք (Երաղզավորս), գյուղաքաղաք - 368, 369, տե՛ս Շիրակավան
Երասխ, գետ - 304, 305, 368, 445, 446, 452, 497, տե՛ս նաև Արաքս
Երիցո վանք - 19
Երկրորդ Հայք, նահանգ - 281, 293
Երջանիկ Արաբիա, երկրամաս - 322
Երվանդակերտ, քաղաք - 486, 488-490, 495, 496
Երվանդաչատ, քաղաք - 368, 447, 448, 451, 459, 461, 485-491, 494-497
Երղանդյան Հայաստան - 454, 458, 461, 462, 485, 486, 493, 494, 496
Երրորդ Հայք, նահանգ - 293, 421
Երուսաղեմ, քաղաք - 27, 96, 101, 102, 327, 328, 372, 373
Երևան - 407, 411-413, 421, 426, 435, 436, 460, 465, 472, 474, 475, 480, 487, 497, 499, 510, 512, 513, 527-529
Եփեսոս, քաղաք - 264
Եփրատ, գետ - 293, 315, 326, 333, 422, 428, 510, 514, 519

Զերգունի դաչտ - 27
Զարեհավան, քաղաք - 522
Զարվանդ, գավառ - 518

Էլամ, երկիր - 458
Էջմիածին - 8, 11, 53, 58, 62, 73,

74, 79-82, 84, 86, 89-92, 95, 102, 104, 108, 122, 125, 127, 133, 134, 144, 154, 155, 162, 168, 171, 176, 183, 196, 197, 234, 235, 244, 257, 265, 275, 376, 526
Էջմիածնի մատենադարան - 8, 59

Թարոր (Թավոր), լեռ - 327
Թափա - Դիրի, գյուղ - 460
Թեոդոսի քաղաք - 366, տե՛ս Թեոդոսուպոլիս
Թիֆլիս, քաղաք - 240, 320, 358, 360, 362, 363, 367-369, 371, 374, 379, 382, 448, 497, 508, 509, 514, տե՛ս նաև Տփղիս
Թոխաթ, քաղաք - 80, 82
Թրակիա, երկրամաս - 97
Թրասիլեոնտա, երկրամաս - 332
Թուլիս, կղզի - 279
Թուրքեստան, երկիր - 348

Իանի, քաղաք - 348
Իրեռնիա, երկրամաս - 279
Իլիմացվոց անապատ - 280
Իսպանիա, երկիր - 283
Իրան, երկիր - 278, 279, 321
Լիբիա, աչխարհամաս - 284, 320, 413
Լիսարոն, քաղաք - 5
Լիվոռնո, քաղաք - 275
Լյուդիա, երկիր - 440
Լոնդոն, քաղաք - 276
Լփինք, երկիր - 16, 33, 35

Խաղխաղ, քաղաք - 31
Խաղտիք, գավառ - 311
Խերուբք, աղգազավառ - 297
Խլաթ, քաղաք - 326
Խոր Հայք, երկրամաս - 373
Խորասան, երկրամաս - 311, 322, 323, 357, 358, տե՛ս նաև Արիք
Խորհրդային Հայաստան - 500
Խորհրդային Միություն - 500
Խրիմ, Թերակղզի - 288
Խութ, գավառակ - 519, 520
Խուժաստան, երկրամաս - 287, 311, 332

Ծաղկավետ, լեռներ - 333
Ծաղկոտն, գավառ - 302, 333, 522
Ծաղկոցաձոր, գետակ - 489
Ծոր, գավառ - 304
Ծորոփոր, գավառ - 301
Ծովք, նահանգ - 302, 442

Կաղանկատուք, գյուղ - 26
Կամսարականյան պարիսպ (Անի) - 496
Կանգարք, գավառ - 304
Կանգուար, ամրոց - 352
Կապադովկիա, երկիր - 281, 293, 453
Կապանն ձորա, ամրություն - 402, 424
Կասխա, լեռ - 298
Կասպից ծով - 27, 307, 327
Կարասու, գետ - 513
Կարին, գավառ - 366
Կարին, քաղաք - 95, 250, 252, 254, 326
Կեսարիա, քաղաք - 293, 505

Կիլիկիա, երկրամաս - 100
Կղնսուր, գավառ - 303
Կյուղնոս (Կիղնոս), գետ - 90
Կոգովիտ (Կոգայովիտ), գավառ - 302, 347, 523
Կոլոնիա, քաղաք - 326
Կողա (Ակողա), աշխարհ - 289
Կողր, գավառ - 301, 304, 327
Կողրովոր, գավառ - 302
Կողբիս, երկրամաս - 348, տե՛ս նաև Եգր
Կոմանա, քաղաք - 453
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս) - 104, 195, 196, 264, 275, 326, 367, 498, 507
Կովկաս, լեռ - 304
Կովկասյան լեռներ - 288, 297
Կոտա, քաղաք - 348
Կոտազեղ (Կոտ գեղ) - 328
Կոտայք, գավառ - 361, 369
Կորդիք (Կոդրիք, Կորդրիք), գավառ - 303
Կորդվաց աշխարհ - 519
Կորդվաց (Կորդվացվոց) լեռինք - 88, 520
Կորդուք, գավառ - 303
Կորճայք (Կորճեք), նահանգ - 301, 352
Կրման, երկիր - 310
Կուր, գետ - 29, 297
Կուպի Բուլղար, տեղավայր - 295
Կուփա, քաղաք - 291, 321, տե՛ս նաև Ակողա

Հարանդ, գավառ - 29
Հաղբատ, վանք - 92
Հայաստան, Հայոց աշխարհ, Հայոց երկիր - 5, 24, 27-30, 37, 43-46, 88, 93, 105, 118, 137, 194, 252, 275, 286, 287, 289, 296, 300, 301, 305, 306, 312, 315, 321, 324, 326, 328, 329, 346-350, 355, 357, 358, 362, 365-367, 370, 375, 435, 436, 438, 442, 446, 449, 451, 454, 458, 460, 462, 468, 473-479, 481, 482, 484-487, 489-491, 494-496, 498-500, 503-505, 509-511, 513, 514, 522, տե՛ս նաև Հայք
Հայկազյանց աշխարհ, տե՛ս Հայաստան
Հայկական ԽՍՀ - 465
Հայկական պետություն - 353
Հայկական Տավրոս, լեռնաշղթա - 519, 520
Հայք - 293, տե՛ս Հայաստան
Հանի, սրբավայր - 462, տե՛ս Անի
Հանձիթ, գավառ - 301
Հաջի-Բայրամ, գյուղ - 488, 490
Հարավային Եվրոպա - 346
Հարք, գավառ - 58, 59, 503, 514
Հարք, լեռնաղաչտ - 514
Հելլենացվոց աշխարհ - 410
Հերեթ (Հերյան), գյուղ - 58, 59
Հյուրկանիա, ծով - 302, տե՛ս Կասպից ծով
Հնարակերտ, ամրոց - 304
Հնդկաստան - 346
Հնդկաց ծով - 307
Հոգյաց վանք, մենաստան - 373
Հոմենք, բնակավայր - 27
Հոների երկիր - 31, 35, 36
Հռոմ (Հռովմ), պետություն, քա-

դաք - 5, 28, 160, 294, 326, 468, 481, 484, 493, 494
Հռոմեական կայսրություն - 33, 477, 478
Հռոմեական Հայաստան - 25, 34, 477
Հրեաստան, երկիր - 306, 307
Հունահայաստան - 370
Հունաստան - 335
Հունարակերտ, ամրոց - 304, 328
Հունաց աշխարհ - 326, 365
Հունաց ծով - 280, 307

Ձագ, գյուղ - 369
Ձիական լեռներ - 296
Ձողակերտ, բերդաքաղաք - 499
Ձոր, գավառ - 304
Ձորո գետ, գավառ - 373
Ձորուփոր, գավառ - 302, 304

Ղըզ-Ղալա, ամրոց - 488

Ճաննեթ, երկրամաս - 311
Ճանիվք, գավառ - 311
Ճանյուք, երկրամաս - 311
Ճննաց աշխարհ (Ճննաստան) - 298, 299
Ճիղրերի երկիր - 35

Մաղախն, քաղաք - 329
Մաղքութենների երկիր - 27
Մաժաք, քաղաք - 293, 402, 427, 428, 505
Մակեդոնիա, երկրամաս - 322, 344
Մասիս, լեռ - 296, 418, 497, տե՛ս նաև Արարատ
Մավրիկոպոլիս, քաղաք - 368, 370, 372
Մարբուրգ, քաղաք -75
Մարղաղի գավառ - 302
Մարևա, լիճ - 315
Մարսել (Մարսիլիա), քաղաք - 275, 276, 325, 326
Մարք, երկրամաս -311
Մաքննացոց վանք - 370, 371
Մեդիա, երկիր - 503
Մելին, գյուղ - 440
Մեծ Արմենիա - 467, 468
Մեծ Ծովք, գավառ - 302, 303
Մեծ Հայաստան - 442, 454, 461, 468, 470, 477
Մեծ Հայք - 496, 497
Մեծագետ, գետ - 368
Մեծամոր, գետ - 304. 305, 446
Մեծկողմանք, գավառ - 18
Մեոյալ ծով - 307, տե՛ս Ասփալտոս ծովակ
Մեքքա, քաղաք - 289
Մընձուր, գավառ - 302
Մթին, լեռ - 304
Միղննա, գավառ - 458
Միլան, քաղաք - 477
Միջագետք - 312, 315, 357, 358
Միջերկրական ծով - 505
Միջերկրայք - 312, 427
Միջին Կորդրիս, գավառ - 303
Մծբին, քաղաք - 312, 502, 510
Մծուրն, քաղաք - 510, 511, 513, 521
Մծուրք, տե՛ս Մծուրն
Մյուսիզիոն, աշխարհ - 427
Մոսկվա - 9, 22, 23, 26, 359, 371

Մոսուլ (Մուծղ), քաղաք - 321, 322, 329
Մրեն, գյուղ - 368
Մուսասիր, տաճար - 493

Յակոդոն, քաղաք - 327, տե՛ս նաև Ակողա
Յողու Ռուսաց, գետ - 288, տե՛ս Դանոր

Նախիջևան, գավառ - 323
Նախճվան, քաղաք - 327
Ներգյուն, ավան - 59
Ներսմիհրի վանք - 27
Ներքին Կորդրիս, գավառ - 303
Նիկիա, քաղաք - 326, 471, 478, տե՛ս Նիկսար
Նիկոմիդիա, քաղաք - 348
Նիկսար, քաղաք - 326, տե՛ս Նիկիա
Նինվե, քաղաք - 311, 312, 327, 329, 503, 509
Ս. Նշան, Եկեղեցի (Հաղբատ) - 92, 105,107
Նփրկերտ, գավառ - 303
Նփրկերտ, քաղաք - 302

Շաղախ, գավառակ - 288
Շահրիար, գյուղ - 435
Շավարշական, գավառ - 296
Շավարշան, ավան - 522
Շիթիթմա, գետ - 324, տե՛ս Քադիրթ
Շիրակ, ավան - 369
Շիրակ գավառ - 363, 368, 485
Շիրակ, դաշտ - 370
Շիրակաչատ, ավան - 368, 369, 372
Շիրակավան, քաղաքապյուղ - 368-370, տե՛ս Երազգավորք
Շոչան (Շոչանիկ), երկրամաս - 332
Շոչան (Շոչանաստան, Շոչանիկ), քաղաք - 287
Շրվանք (Շրվնաք, Շրվան), ադդադավառ - 288

Ողկոնտոր Բյկար, բնակավայր - 295
Ոկսիդարկաս, երկրամաս - 331
Ողիմպոս (Ողյումպիոս), լեռ - 76, 77, 334
Ոնորիա, երկրամաս - 281
Ոսա (Ովս), լեռ - 76, 77
Ոստան Հայոց - 305
Ովա, գյուղ - 361
Ովկիանոս (Հնդկական) - 280, 282, 283, 294, 308, 328
Ովկիանոս, ծովն անծանոթ - 329
Ոտն Արագածո, գավառ - 302

Զղար Բոլկար, աղգագավառ - 295
Զինաստան - 346
Զղալսյան Հովիտ - 18
Զող, երկիր - 16, 27, 33, 34
Զորրորդ Հայք, նահանգ - 293, 301, 303

Պահլավ, բուն երկիր Արշակունյայց - 310
Պաղեստին, երկիր - 307
Պամպիղիա, երկրամաս - 281

Պասրա (Բսրա), քաղաք - 291, 327, 349
Պարթևաց աշխարհ - 310, 315
Պարսկահայք, նահանգ - 301
Պարսկային ծով - 327
Պարսկաստան (Պարսից աշխարհ, տերություն) - 17, 27, 30, 32, 285, 311, 321, 322
Պարսկք, երկրամաս - 311
Պարտավ, քաղաք - 9, 16, 21, 23, 33, 34, 327, 328
Պենտապոլիս, քաղաք - 328, 329
Ս. Պետերբուրգ - 10, 22, 59, 115, 124, 127, 169, 250, 251, 289, 306, 320, 323, 358, 365, 366, 374, 412, 416, տե՛ս նաև Պետրոգրադ
Պետրոգրադ - 118, 178
Ս. Պետրոսի վանք - 33
Պղայիղա, երկրամաս - 332
Պոնտական Կապադովկիա - 281
Պոնտոս, ծով - 505
Պռոտին Արմենիա, երկրամաս - 293, 424

Ջավախք, գավառ - 304
Ջրվչտիկ, վանք - 27
Ջուղի լեռներ - 520

Ռավանիտենիա, լիճ - 315
Ռիղոն, քաղաք - 348
Ռոստակ, գավառ - 18
Ռուդյուպոլիս, քաղաք - 348

Սապաստան - 348, տե՛ս նաև Սոգդիանա
Սալնա, լեռնաշխարհ - 324
Սախուրակ, ամառանոց - 305
Սակն, երկիր - 348
Սահառ, քաղաք - 27
Սամառա, քաղաք - 353, 357, 360
Սանահին, վանք - 373
Սասուն, գավառ - 324, 519, 520
Սարդես, քաղաք - 440
Սարմատիա, երկիր - 285, 288, 297, 322
Սեգառոս, լեռ - 315
Սեպտե (Տեփտե), քաղաք - 328, 329
Սերբինիդիա, ծովակ - 307
Սիլվին, երկրամաս - 35
Սիկիղիա, կղզի - 78, 79
Սիմ, լեռ - 303, 410, 518, 519
Սիսական, նահանգ - 382
Սիսիան, գավառ - 403
Սիվամ, երկրանուն - 440
Սկյութիա, երկիր - 322, 348
Սյունիք, նահանգ - 323, 331, 370
Սոգդիանա, երկրամաս - 323, 348, տե՛ս նաև Սապաստան
Սոթք, գավառ - 371
Սպանիա, երկիր - 281, 325, 346
Սպեր, գավառ - 366
Ստրաբեն, դաշտավայր - 280
Սև կղզի - 297
Սևանա կղզի - 371, 382, 383

Վաղարշապատ, քաղաք - 26, 33, 113, 116, 125, 167, 169, 172, 230, 234, 249, 250, 263, 265, 320, 359, 375, 394, 426, 507, 525, 526
Վան, քաղաք - 494
Վանանդ, գավառ - 310, 368

Վասպուրական, նահանգ - 301, 323, 373, 397
Վարագ, լեռ - 342
Վարաչան, քաղաք - 35
Վարդանակերտ, գյուղ - 327
Վեննետիկ, քաղաք - 7, 10, 31, 44, 51-53, 55, 56, 59, 62, 65, 67, 70, 71, 73, 75, 80, 82, 92, 94, 95, 99, 101, 122-125, 127-129, 137, 154, 156, 162, 167, 168, 179, 188, 197, 202, 230, 237, 258, 260, 276-279, 289, 290, 299, 309, 313, 318-320, 331, 332, 336, 337, 344, 347, 350, 366, 369, 372, 374, 377, 381, 386, 408, 409, 416, 425, 426, 431, 469, 478, 479, 520, 521
Վերիա (Վեռիա), երկիր - 313
Վերին Բասեն, գավառ - 295
Վերին Կորդիս, գավառ - 303
Վիեննա, քաղաք - 38, 49, 54, 154, 156, 157, 163, 253, 292, 330, 336, 352, 373, 374, 383, 387, 411, 508, 523, 526, 527
Վիրք, երկիր - 313, տե՛ս Վրաստան
Վրաստան, Վրաց երկիր - 285, 347, 366
Վրկան, երկիր - 310
Վրականից ծով - 307, տե՛ս Կասպից ծով

Տաճկաստան, Տաճկաց երկիր - 289
Տաճկաց Մաքա, քաղաք - 289, տե՛ս նաև Մեքքա
Տայք, նահանգ - 368
Տաչիրք, գավառ - 304
Տառա, գետ - 315
Տավրոս, լեռ - 303, 519
Տարոն, գավառ - 38, 59, 252, 353, 410, 445, 513, 514, 518, 519, 523
Տեգոր, տաճար - 489
Տիգրիս, գետ - 512
Տիսրոն, քաղաք - 327, 329
Տիրառիճ, գյուղ - 250
Տմորիք, նահանգ - 303
Տրապիզոն, քաղաք - 348
Տրապոսիս, քաղաք - 328, 329
Տրդատա բերդ - 490, տե՛ս Գառնի
Տրտու, գետ - 18
Տունն Աբրահամու - 289, տե՛ս Մեքքա
Տուրուբերան, նահանգ - 301, 307
Տփղիս, քաղաք - 14, 137, 249, 282, 292-295, 296-298, 305, 310-312, 319, 328, 334, 335, 355, 359, 408, 444, 452, 459, 471, 473, տե՛ս նաև Թիֆլիս
Տփղիք, տե՛ս Տփղիս

Յոլակերտ, ավան - 497, 499
Յրի, քաղաք - 29
Յրոնք, գյուղ - 252, 518

Ուռնկան, գյուղ - 27
Ուռհա, քաղաք - 312, 326
Ուտի, գավառ - 18, 26, 27, 33, 281, 301
Ուտիք, նահանգ - 11
Ուրարտու, երկիր - 44, 493, 496, 497

Ուրուատրի, ցեղային միու-
թյուն - 519

Փայտակարան, նահանգ - 281,
301, 327
Փառախառ, բնակավայր - 497,
499
Փառան, ավան - 289
Փառնիտիա (Փառանիտաև), եր-
կիր - 289, տե՛ս Տունն Արրա-
համու
Փարիզ - 8, 9, 28, 527
Փռատդուռ, ամրոց - 326
Փոքր Ասիա - 312, 346, 447, 449

Քարաուռն (Խարոր), լիճ - 315
Քաղափիդ, բնակավայր - 218
Քաղիրթ, գետ - 324, տե՛ս Շի-
թիթմա
Քաղկեդոն, քաղաք - 33, 41, 46,
171, 172, 264, 265, 348
Քաղկիթ, գավառ - 97, 98
Քամչկիթ, գավառ - 110
Քեռան, քաղաք - 288
Քիմյուռն, երկրամաս - 282, 294
Քիչնև, քաղաք - 525
Քղիմար (Քղիսմար), քաղաք -
326
Քութայիս, երկիր - 289
Քութեռք, աղզազավառ - 297
Քուչանաց աշխարհ - 310

Օդեսա, քաղաք - 37, 525

Akoula - 289
Armenia, Arménie - 10, 46, 474
Asia Minor - 474

Bahli damik - 310
Berlin - 56, 124, 125, 278, 290,
295
Bern - 126, 195
Berolini - 61, 82, 124, 127, 141,
149, 150

Corneas - 482

Ērānšchahr - 278, 285, 310

Göttingen - 468

Halys - 312
Hemesa - 226
Hounaragerd - 328

Iran - 278

Koufah - 289

Leipzig, Lipsiae - 7, 74, 178, 253,
302, 352, 413, 470, 501, 520,
525
London - 474, 479

Marburg - 73, 80, 257, 285
München - 8, 9, 58, 64, 69, 141,
161, 275, 284, 455

Ninve - 511

Paris - 8, 46, 49, 276, 287, 325,
357, 456, 476, 479, 501
Persia - 474

St. Pétersburg - 9, 17

Schriwan - 288
Sophanene - 302, 303
Stuttgart - 512

Tabaristan - 23
Tovin - 328

Venezia, Venise - 7, 10, 258, 284

Wien - 286, 292, 519

Oxford - 49, 123, 190

Ани - 480, 494
Армавир - 435, 441, 456, 492
Армения - 346, 351, 442, 446
Гарни - 529
Ереван - 477, 510
Кавказ - 474, 493
Киев - 164
Кишинев - 40
Ленинград - 480, 487, 494
Москва - 282, 292, 295, 310, 312, 351, 394, 410, 414, 447, 448, 477, 480, 487, 492, 494, 498, 507, 514, 517, 527, 529
Одесса - 37
С. Петербург - 117, 172, 275, 277, 312, 409, 468, 506
Петроград - 351, 474, 480
Советская Армения - 346
Тифлис - 492
Эривань - 325, 442, 510

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 5

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՎՍԵՍ ՈՒՏԵՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ) (թարգմ. Ա. Ն. Հայրունի) 7

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - **Александр Аннинский.** Древние армянские историки, как исторические источники. Одесса, 1899, 133 стр.

Ալեքսանդր Աննինսկի. Հայոց հին պատմիչները որպես պատմության աղբյուր, Օդեսա, 1899 37

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - **Александр Аннинский.** История армянской церкви (до XIX века). Кишинев, 1900, XI + 306 + VI стр. 40

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԽՆԴԻՐԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԻԹ ՀԱՐՔԱՑԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

§ 1. Դավթի մասին նախկին հետազոտությունները 49
§ 2. Ֆ. Կոնիբերի կարծիքը 49
§ 3. Բանասիրական ուսումնասիրության ո՞ր եղանակով կարելի է հաստատուն եզրա կացություններ ստանալ 50
§ 4. Սահմանք իմաստասիրութեանը, Պորփյուրի Ներածութեան մեկնությունը և Արիստոտելի Վերլուծականքի մեկնության հատվածը միևնույն հեղինակի՝ Դավիթ փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» և «Սոփոզութեանց» հայերեն մեկնությունները Դավթինը չեն 51
§ 5. Դավթի իմաստասիրական երկերը 54
§ 6. Զանազան կարծիքներ Դավթի անձի մասին և դրա քննությունը 58
§ 7. Սահմանք իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու

Վերլուծականքի մեկնութիւնները թարգմանված են Հունարէնից 61
§ 8. Նորպղատոնական Դավիթ մեկնիչը Աղեքսանդրիայում ուսած VI դարի մատենագիր է 64
§ 9. Նորպղատոնական Դավիթ մեկնիչը քրիստոնյա է 72
§ 10. Նոննոսին վերագրված առասպելարանական մեկնութիւնների հեղինակը Դավիթ մեկնիչը չէ 73

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՔՐՈՆԻԿՈՆԻՑ ՄԻ ՀԻՆ ՁԵՌԱԳՐՈՒՄ 80

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ 92

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՎ ՆՐԱ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ 113

Ա. Ներածութիւն

§ 1. Հունարան դպրոցի ու լեզվի խնդիրը մութ ու խրթին մի առեղծված է 113
§ 2. Հունարան ուղղության ընդհանուր բնորոշումը 114
§ 3. «Արտաքին դրոց» թարգմանութիւնները և դրանց ազդեցութիւնը հայոց հին մատենագրության լեզվի, ոճի և բովանդակության վրա 115
§ 4. Հելլենասեր ուղղութիւնը, որպես խթան աշխարհահայեցողության ընդլայնման և աշխարհիկ գրականության զարգացման 117
§ 5. «Արտաքին դրոց» բառապաշարը աշխարհաբար հայերենի մեջ և նրա ուսումնասիրության կարևորությունը հայոց լեզվի պատմական քերականության համար 118
§ 6. Հունարան լեզվի ուսումնասիրությունը, որպես միջոց մատենագրական երկերի ժամանակագրական ու խմբակցական պատավորման 120
§ 7. «Արտաքին դրոց» վերաբերյալ առաջիկա ուսումնասիրության բովանդակությունը և նպատակը 121

Բ. Դավիթ Անհաղթին ու Էլիասին վերագրված մեկնութիւնների հեղինակները

§ 8. Արիստոտելի յմաստասիրական երկերի, Պորփյուրի Ներածութեան և դրանց վերաբերյալ մեկնութիւնների հայերեն թարգմանութիւնները 123

§ 9. Դավիթ Անհաղթի ու նրա երկերի մասին իմ նախկին
նպրակացությունները 125
§ 10. Էջմիածնի մատենադարանի թիվ 1939 ձեռագրում գտնված
Ստորոգութենանց նոր մեկնությունները 127
§ 11. Ա. Բուսանի կարծիքով, Ստորոգութենանց մեկնության
հեղինակը Դավիթը չէ 128
§ 12. Ա. Բուսանի կարծիքով, Նեղածութենան և Ստորոգութենանց
վերոհիշյալ մեկնությունների հեղինակն Էլիսա մեկնիչն է 130
§ 13. Հայ մատենագրական ավանդությունը Էլիսային վերագրված
Ստորոգութենանց մեկնության հեղինակ համարել է
Օլիմպիոդորոս մեկնիչին 133
§ 14. Օլիմպիոդորոսին վերագրված հատվածները Որոտնեցու
Ստորոգութենանց լուծմունքի մեջ 134
§ 15. Գրիգոր Մագիստրոսի վկայությունը Օլիմպիոդորոսի ինչ-որ
աշխատության հայերեն թարգմանության մասին 136
§ 16. Դավիթ մեկնիչի Էլիսային ընծայված Նեղածութենան
մեկնությունը հայտնի է եղել իբրև Օլիմպիոդորոսի
աշխատություն 138
§ 17. Հայ մատենագրական ավանդության և Ա. Բուսանի
նպրակացության հակասությունները կարելի է վերացնել,
ենթադրելով Էլիսա Օլիմպիոդորոսին միևնույն անձը 140
§ 18. Օլիմպիոդորոս-Էլիսային միևնույն անձն ընդունելով՝ հարթվում
են մի չարք վիճելի խնդիրներ 142
§ 19. Ստորոգութենանց մեկնության հատվածը, որ տպագրված է
Էլիսայի հայերեն հրատարակության վերջում, անհայտ
մեկնիչի աշխատություն է Օլիմպիոդորոս-Էլիսայի դպրոցից 143
§ 20. Անանունի Ստորոգութենանց մեկնության հատվածը
Դավթի աշխատությունը չէ 145
§ 21. Անանունը քրիստոնյա մեկնիչ է, տգետ ու թերուս
իմաստասիրական հարցերում 146
§ 22. Նոր դիտողություններ Արիստոտելի Վերլուծականքի
մեկնության ու նրա հեղինակի մասին 148
§ 23. Վերլուծականքի մեկնության համեմատությունը Դավթի,
Ամմոնիոսի և Օլիմպիոդորոս-Էլիսայի մեկնությունների
հետ 149
§ 24. Վերլուծականքի մեկնությունն ավելի հավանական է ընդու-
նել Օլիմպիոդորոս-Էլիսայի աշխատություն, քան Դավթի 152
§ 25. Դավիթ Անհաղթին վերագրվող Ստորոգութենանց և Յաղագս
մեկնութեան գրոց մեկնությունները և դրանց վերնագրերը
հնագույն ձեռագրերում 154

§ 26. Հովհաննես Որոտնեցու վկայությունները Նոմնլախոս մեկնիչի մասին 155
§ 27. Դավիթ Անհաղթին վերագրվող Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոց հեղինակի «Ամնլախոյս» անունը աղճատումն է հունական Ἰάμβλιχος անվան 157
§ 28. Յամրղիքոսի հիշատակությունը Դավթի ու Էլիասի մեկնություններում 158
§ 29. Որ «Ամնլախոյսը» և Էլիասի հիշատակած «Յամրղիքոսը» միևնույն անձն են, այդ երևում է նաև Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոց մեկնությունների բովանդակությունից 159
§ 30. Մի քանի դիտողություններ «Ամնլախոյս» - Յամրղիքոսի մեկնությունների բովանդակության մասին 161
§ 31. Վիեննայի թիվ 112 ձեռագրում հիշված «Անտոնիոս էրմիսը», կարելի է ենթադրել, որ Յամրղիքոսի ուսուցիչ Անատոլիոսն է 162
§ 32. Նյութի դասավորությունը և մեկնության ձևն ու կարգն Ամնլախոյս-Յամրղիքոսի մեկնություններում 164

Գ. Հունաբան հնագույն թարգմանությունների երեք տարբեր շրջանները

§ 33. Իմաստասիրական հնագույն մեկնությունները թարգմանված են հունարենից 165
§ 34. Ուսումնասիրության ինչ նպատակով հնարավոր պիտի լինի հետզհետե որոշել հունաբան հնագույն թարգմանությունների ժամանակը 166
§ 35. Իմաստասիրական թարգմանությունների հետքերը Խոսրովիկ թարգմանչի կրոնա-դավանաբանական գրվածքներում 167
§ 36. Անանիա Շիրակացին օգտվել է Արիստոտելյան իմաստասիրության հնագույն հայ թարգմանություններից ... 169
§ 37. «Գիրք թղթոց»-ի հնագույն մասում Պետրոսի և Գրիգոր Երեցողի թղթերը գրված են հունաբան լեզվով 169
§ 38. Տիմոթեոս Կուղի Հակաճառութիւնը թարգմանված է հայերենի 552-564 թվականների ժամանակամիջոցում 171
§ 39. «Արտաքին գրոց» հնագույն երկերը թարգմանված են հայերենի զանազան թարգմանների աշխատությամբ և տարբեր ժամանակաշրջաններում 175
§ 40. Թրակացու քերականության, Փիլոնի և Պիտոյից գրքի

թարգմանությունները կազմում են Հունարան թարգմանությունների հնագույն շերտը 177
§ 41. Փիլոնը և Պիսոյից դիրքը թարգմանված են Թրակացու քերականությունից հետո 183
§ 42. Տիմոթեոս Կուղի Հակաճառութիւնը, Արիստոտելի Յաղագս մեկնութեան և Սոփոդոսթեանց թարգմանությունները, Յամբղիքոսի մեկնությունների հետ միասին, համաձայն են ու ժամանակակից և կազմում են Հունարան թարգմանությունների երկրորդ շերտը 189
§ 43. «Էակաց դրքի» Հայտնի հիշատակարանը վերաբերում է Յամբղիքյան խմբի Արիստոտելի Սոփոդոսթեանց և Յաղագս մեկնութեան գրոց թարգմանությանը 195
§ 44. Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի իմաստասիրական մեկնությունները թարգմանված պիտի լինեն Հունարան երկրորդ շերտի թարգմանություններից հետո 199
§ 45. Դավիթ-Օլիմպիոդորոս խմբի Հայերեն մեկնությունները չեն կարող բոլորն էլ միասին համարվել միևնույն թարգմանչի աշխատություն 211
§ 46. Հունարեն համանման հատվածների թարգմանությունը Հունարան զանազան շրջանների թարգմանություններում ... 220
§ 47. Պորփյուրի Ներածութեան, ընագրի Հայերեն թարգմանությունը թվում է թե ավելի հին է, քան Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի թարգմանությունները 225
§ 48. Արիստոտելի «Պատմութիւն յաղագս աշխարհի» դրվածքի Հայերեն թարգմանության ժամանակաշրջանը 230
§ 49. Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունների թարգմանության մոտավոր ժամանակաշրջանը 233
§ 50. Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի մեկնությունները թարգմանված են, ըստ երևույթին, երկարնակ Հայերի միջավայրում և, ամենայն հավանականությամբ, ութերորդ դարից առաջ 237
§ 51. Թրակացու քերականության Դավթի ու Անանունի մեկնությունները, նրանց հենակները և ծագման դարաշրջանը 241
§ 52. Հունարան դպրոցի զարգացման հարաւև ընթացքը հաստատվում է Հայոց մատենագրության մի շարք կողմնակի վկայություններով 249
§ 53. Իրենեոսի «Ցույցք առաքելական քարոզութեանն» և «Ընդդէմ հերձուածոց» երկերը թարգմանված են Հունարան թարգմանությունների առաջին շրջանում 253
§ 54. Նոննոսի մեկնությունների Հայերեն թարգմանության ժամանակաշրջանը 257

§ 55. Մովսես Քերթողահոր թուղթը և Հովհաննու եպիսկոպոսապետի Ապացոյցը գրված են հունարան երկրորդ չերտի թարգմանություններից հետո 263

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

ԱՌԱՋԱԲԱՆ 271

Ա. «Աչխարհացոյց»-ը և Մովսես Խորենացին

§ 1. «Աչխարհացոյց»-ի հրատարակությունները և դրանց թերությունները 275
§ 2. «Աչխարհացոյց»-ի նախնական բնագիրը, որից ծագել են վերոհիչյալ խմբագրությունները 278
§ 3. «Աչխարհացոյց»-ի նախնական բնագիրը կազմված է եղել բաղվածորեն զանազան աղբյուրներից 283
§ 4. Յո. Սենտ-Կրուայի և Ա. Սեն-Մարտենի կարծիքով՝ «Աչխարհացոյց»-ի հեղինակը Մովսես Խորենացին չէ 287
§ 5. Ֆ. Պատկանյանը Խորենացուն վերագրված «Աչխարհացոյց»-ը համարում է Անանիա Շիրակացու աշխատություն 290
§ 6. «Աչխարհացոյց»-ի և Խորենացու Պատմության կարևոր նմանությունները, որ ցույց են տրված Գր. Խալաթյանցի և Յո. Մարկվարտի աշխատություններում 292
§ 7. «Աչխարհացոյց»-ի և Խորենացու Պատմության անհամանությունները, որոնք ցույց են տրված Հ. Հյուբշմանի մոտ, խիստ բռնաձիգ են ու միանգամայն անհավանական 300
§ 8. Ընդհանրացված այն կարծիքը, որ «Աչխարհացոյց»-ի հեղինակն Անանիա Շիրակացին է՝ ճիշտ չէ 306
§ 9. Աչխարհագրական տեղեկությունների նմանությունները, որ նկատվում են Խորենացու Պատմության և «Աչխարհացոյց»-ի մեջ 309
§ 10. Որ «Աչխարհացոյց»-ն անպայման Խորենացունն է՝ այդ երևում է նրա ոճից, բազմաթիվ դարձվածքներից ու մատենագրելու բնորոշ ձևից, որ հատուկ են միայն Խորենացուն 313
§ 11. Խորենացու Պատմության և «Աչխարհացոյց»-ի վերնագրերը 319
§ 12. Ե՞րբ է գրված Խորենացու «Աչխարհացոյց»-ը 320
§ 13. «Մդոնաչափք»-ի դրության ժամանակը 325
§ 14. «Աչխարհացոյց»-ը և Կևդ-Կալաթինեան Ալեքսանդրի վարքը 329

Բ. Խորենացու առեղծվածի լուծումը

§ 15. Խորենացու Պատմությունը և «Աշխարհացույց»-ը գրված են IX դարում՝ հայ վաճառականության զարգացման ու Հայաստանի տարանցիկ առևտրի վերակենդանացման շրջանում 346
§ 16. Խորենացու Պատմության IX դարի գործ լինելը ևս թաղրվել է նաև նախորդ հետազոտություններում 350
§ 17. Խորենացու Պատմությունը գրված է Բուզոյի արշավանքից հետո 354
§ 18. «Ողբ»-ի մեջ հիշված «հովիվ»-ը, հավանորեն, Ովայեցի Հովհաննես եպիսկոպոսն է 359
§ 19. Խորենացու հունասիրությունը հասկանալի է արաբական տիրապետության այս շրջանում 363
§ 20. Խորենացու ժամանակ Հայաստանում նշանավոր կենտրոնավայրը եղել է «Շիրակաչատ աւան»-ը, իսկ կարևոր ուսումնավայրը՝ Գեղարդունի գավառը 368
§ 21. Խորենացին հավանորեն, այն «Մովսէս Քերթող»-ն է, որը Զաքարիա կաթողիկոսի հետ միասին գրել է «ի փոխումն Աստուածամատեան եւ պատկերի նորին» ճառը 372
§ 22. Պիտոյից գրքի վերջարանը հավանական է վերագրել Մովսես Խորենացուն 374
§ 23. «Հայոց պատմութեան» վերնագրում «Մովսէս Խորենացի» անունը հեղինակի իսկական անունն է 383

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ 387

ՆՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ 407

ԱՐՄԱՎԻՐԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ 435

ԳԱՌՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՌՆԻԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ 465

ՄԱՐ-ԱԲԱՍԻ «ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ը
(Սեբեոսի, Մովսես Խորենացու և Պրոկոպիոս Կեսարացու աղբյուրների հարցի առթիվ) (Թարգմ. Գ. Ա. Մաղոյան) 501

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 525

ՑԱՆԿԵՐ 531

ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԵՐԿԵՐ
Է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սրբագրիչ՝ **Վ. Դերձյան**
Համ. շարվածք և ձևավորում՝ **Մ. Գասպարյանի**

Ստորագրված է տպագրության 09.03.2010 թ.:
Չափսը՝ 60x90 1/16: Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Հրատ. 35.2 մամուլ, տպագր. 36.25 մամուլ + 1 ներդիր:
Պատվեր՝ 5:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հովանավորությամբ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել հետևյալ գրքերը

1. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտություն-ների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»):
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, եր., 2001 թ.:
8. Շարական (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին **Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը,** 2001 թ.:
9. **Հրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. **Բաբկեն Հարությունյան** - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. **Վարդան Արևելցի** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. **Գևորգ Աբգարյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. **Փայլակ Անթապյան** - Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարստ** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաթևոսյան** - Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բադիկյան** - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր

մշակույթը, 2003 թ.:

22. **Հրաչյա Աճառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Գևորգյան** - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. **Հայնրիխ Հյուբշման** - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Հայնրիխ Հյուբշման** - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Չևաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգաձե** - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Հրաչյա Աճառյան** - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր** - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. **Սանդրո Սարդարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. **Կարէն Իւզբաշեան** - Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Հարություն Դելլալյան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Հովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Անանյան** - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր–Ղևոնդյան** – Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփանյան** – Երգնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Հրաչյա Աճառյան** - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաքննություն, Շարահյուսություն, 2005 թ.:
41. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**, 2005 թ.:
42. **Սահակ Բազյան** - Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:
43. **Ռամազ Գորգաձե** - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:

44. **Պավել Շարաբխանյան** - Հանգաբանություն, 2005 թ.:
45. **Ռուբէն Ղազարեան** - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ **Ալբերտ Շարուրեանի**, 2006 թ.:
47. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ:
48. **Հ. Պօղոս Գոճանեան** - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, 2006 թ.:
49. **Հայկազ Ժամկոչյան** - Հայ ժողովրդի պատմություն, 2006 թ.:
50. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ: Աշխատությամբ **Ս. Հարությունյանի**, 2006 թ.:
51. **Սաթենիկ Գեջյան** - Անի: Մատենագիտություն, 2006 թ.:
52. **Հարություն Մ. Վենետիկյան, Ջերալդ Ա. Ուորֆիլդ** - Համաշխարհային առևտրի ֆինանսավորում, 2006 թ.:
53. **Շահէ Արքեպիսկոպոս Ածէմեան**, Հայերէն Աստուածաշունչը, 2006 թ.:
54. LA MINIATURE ARMENIENNE - Collection du Matenadaran, 2006 թ., «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ
55. Արևելագիտության հարցեր (Հոդվածների ժողովածու, հատոր VI), 2006 թ.:
56. **Հակոբ Սիմոնյան** - Վերին նավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.:
57. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, 2006 թ.:
58. **Լիլիթ Զաքարյան** - Աղջոց սուրբ Ստեփանոս, 2007 թ.:
59. **Ալբերտ Խառատյան** - Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), 2007 թ.:
60. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Ջ հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
61. Մատենագիրք Հայոց - մատենաշար, է հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
62. Մատենագիրք Հայոց, մատենաշար, Ը հատոր, Շարական, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
63. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թվականը), հատ. 1, 2007 թ.:
64. **Ռուբեն Ղազարեան, Հենրիկ Ավետիսեան** - Նորայայտ բառեր գրաբարում, 2007 թ.:
65. **Ֆելիքս Հայրապետյան** - Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, 2007 թ.:
66. **Արմէն Մալխասեան** (կազմող) - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Գ, 2007 թ.:
67. **Դենի դը Ռուժմոն** - Սերը և Արևմուտքը (թարգմ. **Ալ. Թոփչյանի**), 2007 թ.
68. **Սերոբ Ղազարյան** - Հայոց լեզվի պատմություն, 2007 թ.:
69. **Լաւրենտի Յովհաննիսեան** - Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (V դար), Ազգային Մատենադարան, հ. ՄՆ, 2007 թ.:
70. **Համաստեղ** - Մոռացված էջեր, հատոր Դ, 2007 թ.:

71. **Գրիգոր Միքայելյան** - Կիլիկիայի հայկական պետության պատմություն, 2007 թ.:
72. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, 2008 թ:
73. **Ալիտա Դոլուխանյան** - Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, 2008 թ.:
74. **Ստեփան Պողոսյան** - Պատմագիտական ուսումնասիրություններ, 2008 թ.:
75. **Ժիրայր Անանյան** - Պիեսներ, Ընտրանի, 2008 թ.:
76. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Թ հատոր, Թ դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
77. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԲ հատոր, Ժ դար Գրիգոր Նարեկացի, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
78. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԳ հատոր, Գանձեր I մաս, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
79. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԴ հատոր, Գանձեր II մաս, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
80. **Խաչիկյան Լևոն** - Աշխատություններ, հատոր Գ, («Նաիրի» հրատարակչության հետ համատեղ), 2008 թ.:
81. **Հարությունյան Հ. Մ.** - Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., 2008 թ.:
82. **Գրիգոր Ղափանցյան** - Արմատական բառարանի առթիվ դիտողություններ, Ара Прекрасный мифотворческий образ у армян, 2008 թ.:
83. **Բաբկեն Հարությունյան** - Խորհրդահայ թատրոնի տարեգրություն, հատոր III, 2008 թ.:
84. **Վահրամ Ղարախանյան** - «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006 թթ., 2008 թ.:
85. **Ավետիք Իսահակյան** - Երկերի լիակատար ժողովածու, հատոր IV - Պոեմներ, 2008 թ.:
86. **Հրաչյա Հարությունյան** - Շուշի, XVIII-XIX դդ. տապանագրեր, 2008 թ.:
87. **Գառնիկ Ստեփանյան** - Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, Գիրք 2, Ամերիկահայ թատրոնի պատմություն, 2008 թ.:
88. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Դ., 2008 թ.:
89. **Ալեքսեզեան Նարեկ եպս.** - Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ պատասխանները ոչ-ուղղափառ առարկութիւններու, 2009 թ.:
90. **Հրաչիկ Սիմոնյան** - Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), 2009 թ.:
91. **Ստեփան Տ. Մելիք-Բախշյան** - Հայոց պաշտամունքային վայրեր, 2009 թ.:
92. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»), երկրորդ հրատարակություն, 2009 թ.:

93. **Ստեփան Պողոսյան** - Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2, 2009 թ.:
94. **Պերճ Զեյթունցյան** - Ապրենք տասը պատվիրաններով, 2009 թ.:
95. **Հակոբ Չոլաքյան** - Քեսապի բարբառը, 2009 թ.:
96. **Հրանտ Թամրազյան** - Երկեր, հ. 2, 2009 թ.:
97. **Արամ Բարլեզիզյան** - Հայերեն - ֆրանսերեն բառարան, 2009 թ.
98. **Հրաչիկ Սիմոնյան** - Ազատագրական պայքարի ուղիներում, 2009 թ.
99. **Գառնիկ Ստեփանյան** - Մղձավանջային օրեր, 2009 թ.
100. **Արամ Սիմոնյան** - Զանգեզուրի գոյամարտը, 2009 թ.:
101. **Գուրգեն Մահարի** - Սիբիրական, 2009 թ.:
102. **Ռուբեն Ղազարյան, Հենրիկ Ավետիսյան** - Միջին հայերենի բառարան, երկրորդ հրատարակություն, 2009 թ.:
103. **Հրաչյա Աճառյան** - Պոլսահայ անգիր բանահյուսություն, 2009 թ.:
104. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Ժ հատոր, Նարեկյան դպրոց, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2009 թ.:
105. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր հինգ հատորով, հատոր Դ, 2009 թ.:
106. **Հակոբ Մանանդյան** - Երկեր, հատոր է, Բանասիրական ուսումնասիրություններ, 2010 թ.:

A II 96000